Ա.-Գ 0

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ

ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

(1905 1906 թ.)

(ՓԱՍՏԱԿԱՆ, ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ, ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ):

ԵՐԵՒԱՆ

Տպարան Այվազեանց և Նազարեանց

1907 *(3)*

ՅԱՆԿ

Երկու խօսք 1
Դրութիւնը Կովկասում նախ քան հայ-թուրքական ընդհարումը 9
ԲԱԳՈՒԻ ՆԱՀԱՆԳ 12
Բագու 13
Առաջին կոտորածը Բագուում 14
Երկրորդ » » 32
Երրորդ » » 38
ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳ 43
Երեւան 47
Առաջին ընդհարումը Երեւանում 49
Երկրորդ » եւ 53
Երրորդ » 59
Չորրորդ » » 61
Նախիջեւանի գաւառ 64
Կոտորածը և կողոպուտը Նախիջեւանում 68
Աւերումները Նախիջեւան գետի ստորին հովտում 75
» Ջահրի գետի հովտում 79
» Նախիջեւան գետի վերին հովտում 85
» Ալինջա գետի հովտում 92
» Շուռուռ և Գիլան գետերի հովտում 94
Նախիջեւանի գաւառի աւերուած գիւղերի ցուցակները 100
Շարուր-Դարալագեազի գաւառ 106
Աւերումները Շարուրի գաւառամասում 108
» Դարալագեազի » 114
Շարուր-Դարալագեազի աւերուած գիւղերի ցուցակը 120
Ընդհարումները Երեւանի գաւառում 122
Երեւանի գաւառի աւերուած գիւղերի ցուցակը 129
Ընդհարումները Էջմիածնի գաւառում 130

Էջմիածնի գաւառի աւերուած գիւղերի ցուցակը 136
Ընդհարումները Սուրմալուի գաւառում 137
ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳ 143
Շուշի . 147
Առաջին ընդհարումը Շուշում 150
Երկրորդ » » 159
Շուշու գաւառ . . 168
Ընդհարումները Կառկառ գետի վերին հովտում . 173
» Խօջալու և Խնձորեստան գետերի հովտում . 179
Ընդհարումները Բեհնդալան գետի հովտում 181
» Քէչզ-Զայ և Խոնաշէն գետերի հովիտներում . . 185
Ընդհարումներն Ասկէրանում և Կառկառ գետի ստորին հովտում . 190
Շուշու գաւառի աւերուած գիւղերի ցուցակները 203
Ջիւանշիրի գաւառ . . 208
Ընդհարումները Խաչէնի ձորակում կամ Խաչէն գետի հովտում . 211
Ընդհարումները Մարդակերտի կամ Աղդարայի շրջանում . . 217
Ընդհարումները Թարթար գետի հովտում . 223
Ջիւանշիրի գաւառի աւերուած գիւղերի ցուցակը 229
Ջիբրայիլի գաւառ . 230
Ընդհարումները Ղուզէ գիւղերի շրջանում 233
» Հադրութի ձորակի » 237
» Բանագուրի » » 239
» Սարի գիւղերի » 241
Ջիբրայիլի գաւառի աւերուած գիւղերի ցուցակը 243
Զանգեզուրի գաւառ . 244
Ընդհարումները Բուն Զանգեզուրում 249
» Գօրիսի շրջանում 250
Կոտորածը Մինքէնդում . 255
Ընդհարումներն ու աւերումները Խոզնավար, Խնածախ, Զէյվա, Ալիղուլի և Հարար գիւղերում 261

Երկու Զէյթիմլուների աւերումը 267
Ղարաղշլայի ընդհարումները 269
Ընդհարումները Տաթեւի շրջանում 273
» Սիսիանում մինչև յունվար 1906 թ. 276
Կոտորածը Դարաբասում. . 282
Ընդհարումները Սիսիանում յունվարից յետոյ 1906 թ. 286
Ընդհարումները Ղափանում 289
» Ագարակ-Ուժէնիսի շրջանում 290
» հանքերի կամ Անդրաջանանի շրջ. . 293
» Օխչիի ձորում կամ Օխչի գետի հովտում 297
Ընդհարումները Բասուտ գետի հովտում 300
Զանգեզուրի գաւառի աւերուած գիւղերի ցուցակը . 305
Գանձակ . 307
Աւերն ու կոտորածը Գանձակում 309
Գանձակի գաւառ . 325
Ընդհարումները Ղարա-Զայ գետի հովտում 327
» Քիւրակ-Զայ » » 330
» Գանձակ » » 335
» Արթօնաջուր կամ Ղուշղարա գետի հովտում 336
Ընդհարումները Շամքոր գետի հովտում . 340
Բաղդաչէնդ-Գետաբէկի կամ բարբարոսութիւնների . շրջան. . . 343
Գանձակի գաւառի աւերուած գիւղերի ցուցակը 356
Ղազախի գաւառ . . . 357
Կոտոպուտն ու հրդեհը Ղազախ քաղաքում և Թօուզ, Թայթլի, Աղստաֆա կայարաններում 360
Կրկէն գիւղի աւերումը . . . 363
Ընդհարումները Հասան-Սու, Թօուզ և Խնձորկոտ գետերի հովիտներում. . . 366
Ընդհարումները Բաշքէնդ և Ճամբարաք գիւղերի շուրջը 371
» Աղստաֆա և Կունէն գետերի հովիտներում 373
Ղազախի գաւառի աւերուած գիւղերի ցուցակը 378
Ընդհարումները Արէշի գաւառում. 380

Արէշի գաւառի աւերուած գիւղերի ցուցակը 385
Նուխու գաւառ. . 386
ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳ 388
Թիֆլիս . 390
Ընդհարումները Թիֆլիսում 392
Կողոպուտները Բօրչալուի գաւառում 398
Բօրչալուի գաւառի աւերուած գիւղերի ցուցակը 401
Աւերուած գիւղերի ընդհանուր ցուցակը . 402
Ռմբակոծութիւն և էկզեկուցիա . 403
Հայ-Թուրքական համագումարը 410
Դառը խոստովանութիւններ . 412
Հ. Յ. Դաշնակցութիւնը ինքնապաշտպանութեան գործում . . 417
Հետևանք 420
Սպանուածների անուանացուցակը . 423

ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԵՐԵՍ	ՏՈՂ.	ՏՊԻԱԾ Է	ՊԷՏՔ Է ԼԻՆԻ
38	1 ցածից	2 դեմոկրատներ	2 սոցիալ-դեմոկրատներ
61	14 ցածից	մէնէր	մէկն էր
67	7	10	20
79	6 ցածից	230	250
102	15 ցածից	12, 13, 31	14, 30, 31
106	4 ցածից	21%	28%
108	13	գիղեերով	գիւղերով
126	15	արք	շարք
176	5 ցածից	դանձաւ	դարձաւ
245	14 ցածից	Քարահուջ	Քարահունջ
248	2	Քաշարանց	Քաջարանց
307	7	գետի աջ ափը	գետի ձախ ափը
»	8	իսկ ձախ ափը	իսկ աջ ափը
334	12	տաշարեց	պաշարեւից
336	2	գետերի	գետի
342	1	գեի հոր հեռաւոր-վիտներից	գետի հեռաւոր հովիտ-ներից
384	12 ցածից	Դեոյ-Բուլաղ	Գէյ-Բուլաղ
»	11 ցածից	Աղփլաքան	Աղրլաքէնդ
402	13	317	817
404	5	1905 թ.	1906 թ.
421	6 ցածից	զոհեր	շահեր

Մեր մտադրուած և գրքի մէջ ակնարկած քարտէզները ծախքերի պատճառով անկարող եղանք պատրաստել տալ և կցել գրքին, չը նայած մեր բուռն ցանկութեան։

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այն, ինչ որ տեղի ունեցաւ հայ-թուրքական ընդհարումներ-ի անուան տակ Կովկասում, սկսած 1905 թւի փետրվարի 6-ից մինչև 1906 թւի սեպտեմբերը, մի ահռելի պատկեր է, որի դիմաց քարանում է մարդու միտքը և դադարում ուղեղը գործելուց։ Հետևէք դէպքերին ուշադրութեամբ, քրքրէք փաստերը մի առ մի և կը տեսնէք թէ ինչպէս աւերակների ժխորի դիմաց մթնում է մարդու ամենախոլ երևակայութիւնն անգամ։

Այդ փաստերը, ահա, մենք փորձում ենք ամփոփել այս գրքում, քաղելով մեր տեղեկագիրներից, յատուկ այդ նպատակի համար ճանապարհորդելով 1905 թւի յուլիս ամսին Երևանեան նահանգի Շարուրի և Նախիջևանի գաւառները տեղի ունեցած ընդհարումներից յետոյ. իսկ ներկայ 1906 թւի հոկտեմբերին Գանձակն ու Շուշին և Գանձակի նահանգի չորս գլխաւոր գաւառները իրենց գաւառամասերով, այնէ. պատմական Գիւլիստանը, Զրաբերդը, Խաչէնը, Վարանդան, բուն Զանգեզուրը, Սիսիանն ու Ղափանը, ուր տեղի էին ունեցել խոշոր ընդհարումներ դեռ մօտիկ անցեալում։

Փաստերը կարելիին չափ լրիւ դարձնելու համար, մենք դիմեցինք մի շարք անձանց, դիմեցինք նաև պարբերական մամուլին, մանաւանդ այն տեղերի նկատմամբ, ուր մենք ճանապարհորդել չը կարողացանք։ Այդ տեղերից մէկն է Բագուն, ընդհարումների աւազանը, ուր տեղի ունեցող սոսկալի դէպքերին առանձին կարևորութիւն տալով առաջ ենք բերում նրանց ականատեսների խօսքերով։

Չը նայած այս բոլորին, այնուամենայնիւ, չենք կարող ասել, որ մեր գործը լրիւ է և ազատ սխալներից. դրանք անխուսափելի են մի այսպիսի գործում. թերևս մէկ ուրիշը, աւելի ձեռնհաս մարդ, կը տայ աւելին, քան մերն է։

Նախ քան բուն խնդրին անցնելը, երկու խօսք կը նուիրենք հայ-

թուրքական ընդհարումները առաջ մղող պատճառներին։

Այն պատճառները, որոնք մի անասելի թափով Կովկասի թուրք տարրերին հանեցին հայ ժողովրդի դէմ, տարբեր խաւերի և տեսակէտների մարդիկ տարբեր կերպով են լուսաբանում։

Այսպէս, մտածողների մի խոշոր թիւ հայ-թուրքական ընդհարումները բացատրում է ցեղային թշնամութեամբ և ատելութեամբ, այդ երևոյթի արմատը փնտռելով դարերի պատմութեան մէջ, ուր սակաւ չեն եղել նման ընդհարումներ։

Մտածողների մի այլ կարգ այդ ընդհարումները բացատրում է թուրք տարրի ցեղային բնազդով, քանդելու, կործանելու հակումներով և քաղաքակրթելու միանգամայն անընդունակութեամբ, նման երևոյթները գտնելով հնարաւոր նաև ապագայում և այդ համարելով թուրք տարրի հոգեկան ձգտումների մի անհրաժեշտութիւն։

Հայ կոմիտէտները եղան այդ ընդհարման պատճառ, պնդում են մի գլուխ թուրք առաջաւորները, նրանց հետ միասին նաև մի կարգի հայակեր հրապարակախօսներ, որոնք օրգանական ատելութիւն են տածում դէպի հայ տարրը։

Կայ մի չորրորդ կարծիք ևս, այդ այն է, որ միմիայն և միմիայն տնտեսական անհաւասարութեամբ, թուրք տարրի հայ բուրժուա դասակարգից կեղեքւած և հարստահարւած լինելով է բացատրում հայ-թուրքական ընդհարումը, միանգամայն աչք փակելով այն երևոյթի առաջ, թէ ինչպէս բէկերից և աղալարներից կեղեքւած, հարստահարւած թուրք գիւղացին յարձակւում, կողոպտում, սպանում էր իրեն պէս հարստահարւած հայ գիւղացուն, հրդեհում, ոչնչացնում նրա գոյքը։

Միմեանց հակասական այս կարծիքները, արտայայտւած մասամբ երևոյթների անըմբռնողութեամբ, մասամբ կանխակալ ու միտումաւոր տենչերի ուժով, չը պարզաբանելով խնդիրը հանդերձ, աւելի ևս մթացրել են նրա լուսաբանութիւնը։

Այդ կարծիքներից առաջին երկուսը միակողմանի են, անհիմն, անտես առնելով այն պատճառները, որոնք կրում են այժմէութեան բնաւորութիւն. նրանք չեն ուզում խնդիրը քննել մօտից, ներկայ բարդ քաղաքական պայմանների մէջ, որով միայն հնարաւոր է լուսաբանել հարցը։

Երրորդ կարծիքը ցածէ որևէ կրիտիկայից, կրելով բացար-

ձակ պրովակացիայի ընաւորութիւն քօղարկելու այն այլանդակ դերը, որ խաղացել են նոյն այդ մարդիկ հայ-թուրքական ընդհարման մէջ։

Չորրորդ կարծիքը թերևս ամենաընդունելին լինէր, եթէ վերաբերէր եզակի երևոյթներին, առանձնապէս քաղաքներում տեղի ունեցած։ Սակայն վերցնել ընդհարումների ամբողջ շարքը, լինի նա քաղաքում բռնկուած թէ յետին գաւառում, ուր եթէ կեղեքումն կայ, այդ միմիայն և միմիայն բէկական ու կաղուածատիրական կարգերի շնորհիւ ծանրացած համահաւասար կերպով և թուրք գիւղացու և հայ գիւղացու վրա և լուսաբանել տնտեսական ֆորմուլաներով առնւազն միամտութիւն կը լինէր։

Հայ-թուրքական ընդհարումների պատճառները աւելի մօտիկից լուսաբանելու համար պէտք է կանգ առնել մի խոշոր երևոյթի վրա, — երևոյթ, որը թէև չարտայայտւեց իր ամբողջ էութեամբ, սակայն նա ցցուած Կովկասի քաղաքական հորիզոնի վրա, մինչև այժմ էլ մնում է որպէս մի ահաւոր սպառնալիք տիրող կարգերի դէմ։ Այդ թուրք տարրի դժգոհութիւնն էր, որը անխուսափելի կերպով պիտի զար ձայնակցելու եղած դժգոհութիւններին, առաջ եկած շարժումներին Կովկասում։

Կովկասի շարժումները արձագանք էին ռուսական մեծ շարժման, որի դրդիչ ներկայանում էր ինքը իրականութիւնը։

Տնտեսական քայքայուն դրութիւնը և իրաւական աննօրմալ վիճակը հանդիսացան այն երկու ֆակտորները, որոնց վրա ծնունդ առաւ ռուսական շարժումը, մի շարժում, որի տարերային ահաւորութեան վրա այժմ, բնականօրէն, դարձուած է ամբողջ աշխարհի ուշադրութիւնը։

Ռուսահպատակը տնտեսապէս քայքայւել է, ապրուստի միջոցներից զրկւել. նրա աշխատանքը, նրա վաստակը խլում են նրա ձեռքից և նա այսօր մատնուած է քաղցի ու սովի։

Ռուսահպատակը միևնոյն ժամանակ իրաւազուրկ է, համր։ Նա իրաւունք չունի խօսել, բողոքել, իր իրաւունքները պաշտպանել։ Նա իրաւունք չունի արտայայտելու իր վշտերը, իր զգացմունքները, իր ցանկութիւնները։

Ահա Ռուսաստանի իրականութիւնը, Ռուսաստանի շարժման դրդիչը։

Կովկասի շարժումը Ռուսաստանի շարժումից անկախ, ան-

ջատ շարժում չէ, այլ նրա մի արտայայտութիւնը, մի արձագանքը։ Նոյն տնտեսական դրութիւնը, աննօրմալ իրաւական վիճակը մղել են կովկասցուն դէպի ընդհանուր շարժումը։ Կովկասը ազատ մնալ այդ շարժումից չէր կարող, մանաւանդ Կովկասը, որը որպէս ծայրագաւառ աւելի ևս ենթակայ էր բացառիկ օրէնքների խստութիւններին և բիրտ ու կոպիտ ադմինիստրատօրների հալածանքներին։

Կովկասում ապրում են հայեր, վրացիներ, լեռնականներ և թուրքեր։ Տնտեսական և իրաւական պայմանները ամենքի համար էլ նոյնն են, այլ խօսքով բոլորն էլ համահաւասար կերպով ենթակայ են զրկանքների, հալածանքների. բնականօրէն դժգոհութիւնը հող կը գտնէր ամենքի մէջ էլ, լինէր նա հայ, վրացի, լեռնական թէ թուրք, միմիայն մի տարբերութեամբ, այն տարբերութեամբ, որ մէկը աւելի վաղ կը գիտակցէր իր ծանր կացութիւնը և վաղ կը շարժէր, քան միւսը, ինչպէս և տեղի ունեցաւ։

Հայերը շարժեցին աւելի վաղ. առիթը շատ տեղին էր։ Կալւածների բռնութեան հասած գրաւման ձևը դուրս քաշեց հայ ժողովրդի սրտում կուտակուած տարիների, տասնեակ տարիների ընթացքում կրկնուող հալածանքների ցասումը և նա բողոքեց անիրաւութեան ու բռնութեան դէմ իր մասսային շարժումներով։ Այդ շարժման թոյլ արտայայտութիւնը մենք տեսանք 1896 թւին ծխական դպրոցները փակելու ժամանակ, երբ փոքրիկ մանուկներին դպրոցների շէնքերից դուրս վռնտելու համար կարիք եղաւ շաբաւոր պաշտօնեաների։

Ապա շարժեցին վրացիները. սոսկալի հալածանքների ենթարկուած այդ մարտիրոս ժողովուրդը մինչև այսօր էլ աղմկում է, սակայն առանց որևէ թեթևութիւն ձեռք բերելու։

Թուրքերը չէին շարժում, բայց այդ չէր նշանակում, որ չը պիտի շարժուեն, ընդհակառակը նշանները պարզ երևում էին։ Հայոց կալւածական շարժումից յետոյ թուրքերը յամառ կերպով արծարծում էին իրենց վակուֆների կալւածները վերադարձնելու հարցը։ Թուրքերը սկսում էին հետաքրքրուել հասարակական խնդիրներով։ Ռուսաստանում և Կովկասում տեղի ունեցող ցոյցերը համակրանք էին գտնում թուրք տարրի մէջ, նրանք սկսում էին գիտակցել իրենց շահը այդ շարժումների մէջ։ Այս կը հաստատի նա, ով եղել է հայ ու թուրք խառը ազգաբնակութիւն

ունեցող մեր գաւառական քաղաքներում և առիթ է ունեցել շրջ-
ել Թուրք տարրերի հետ նախ քան հայ-Թուրքական ընդհա-
րումները։

Այն տրամադրութիւնը, ինչ որ նկատելի էր Թուրքերի մէջ
նախ քան հայ-Թուրքական ընդհարումները, նրա բնական ը-
Թացքը, կրկնում ենք, տանում էր դէպի ընդհանուր հոսանքը,
ընդհանուր շարժումը ռուս բիւրօկրատիայի դէմ։ Այլ կերպ լի-
նել չէր կարող, Թուրքն էլ պիտի շարժուէր,- Թուրքը, որը աւե-
լի քաղցած էր, աւելի իրաւազուրկ, քան հայն ու վրացին, շնոր-
հիւ Թուրք բէկերի ու աղալարների, այդ պարազիտների. Թէպէտ
մտաւոր ցած մակերևոյթի ու իրերի մէջ Թափանցելու անընդու-
նակութեան շնորհիւ դանդաղում էր Թուրք տարրի շարժման ան-
խուսափելիութիւնը։

Շարժումների անխուսափելիութիւնը աւելի ակներև կը դառ-
նայ, եԹէ շեշտենք նաև այն հանգամանքը, Թէ ինչպէս ռուս-եա-
պօնական պատերազմի շնորհիւ, որի իւրաքանչիւր ռուսների հա-
մար անյաջող ճակատամարտը գալիս էր մի մի քար պոկելու
բիւրօկրատիայի խարխուլ շինուածքի հիմքերից, մի մի նոր քար
աւելացնելու վերածնուող, յեղափոխուող Ռուսաստանի նոր շինը-
ուածքի վրա,—բիւրօկրատիայի նոյն կազմալուծումը տեղի ունէր
նաև Կովկասում աւելի մեծ Թափով՝ մի հանգամանք, որը քիչ
չէր նպաստում քաղցած ու իրաւազուրկ Թուրք մասսայի գիտակ-
ցութեան էւոլիւցիային։

Այսպիսի մի խոշոր երևոյթ, վերահաս մի փոԹորիկ, չէր
կարող խուսափել ռուս բիւրօկրատիայի, առանձնապէս Կովկասի
բարձր ադմինիստրացիայի ուշադրութիւնից։

Սակայն ինչ կերպ կանխել վերահաս վտանգը, ինչ կերպ
կանխել այն սպառնալիքը, որը արտայայտելու էր Թուրք տարբ-
ի շարժմամբ իր ակտիւով գալու միանալու հայ և վրացի դըժ-
գոհ տարրերին, ձևակերպելու Կովկասեան ահաւոր փոԹորիկը։

Նման դէպքերում մի ուղի դիւային ձեռքով գծել է պատ-
մութիւնը։ Դեռ ևս հին դարերի ճարպիկ «փօլիտիկը» գտել է մի
միջոց միացող դժգոհ տարրերի վերահաս վտանգից անփորձ
դուրս գալու համար «բաժանիր՝ որ տիրես». այս դարաւոր ա-
ւանդը չը յապաղեց օգնութեան կանչել ռուս բիւրօկրատիան։

Կովկասեան սատրապի, չարախնդաց Գոլիցինի, դիւանում

ծրագրեց ոճիրների ամենագարշելի տեսակը, ապա այդ ծրագիրը հաւանութիւն գտաւ Պետերբուրգի արիւնածարաւ դիւանատներում, իսկ նրա անմիջական գործադրողը եղաւ Բագուի նահանգապետ Իշխան Նակաշիձէն, գօլիցինեան բէժիմի այդ ստոր, վատթարագոյն ներկայացուցիչը։

Ահա այն հանգոյցը, ուր պիտի փնտռել հայկական ջարդի ձևակերպումը Թուրքերի ձեռքով։

Հայ-Թուրքական ընդհարման մէջ մի խոշոր դեր խաղում են նաև Թուրք կալւածատէրերը, բէկերն ու աղալարները։

Ինչպէս յայտնի է, Թուրք կալւածատէրերի մի ամբողջ ցանցով բռնուած է հարաւային Անդրկովկասը։ Չը կայ մի շրջան, մի գաւառ, որը ազատ լինէր այդ տզրուկներից։ Բազմաթիւ գիւղեր, յաճախ տասնեակներով Երևանի և Գանձակի նահանգներում, բընակեցրած գլխաւորապէս Թուրք ազգաբնակութեամբ, պատկանում են այս կամ այն Թուրք բէկին կամ աղային, որոնք վարելով շռայլութիւններով լի մի պօրտաբոյծ կեանք, խլում, վերցնում են անվերջ տանջւող գիւղացու աշխատանքի պտուղը։

Ահա, արիւն ծծող այս դասակարգի դէմ, բնականաբար, միաժամանակ պիտի ուղղէր Թուրք գիւղացու շարժումը։ Այդ ցոյց էին տալիս բոլոր նշանները։

Պէտք էր կասեցնել գալիք դէպքերը, պէտք էր քանդել քաղցած, իրաւազուրկ մասսաների միացման հանգոյցը, պէտք էր ցեղական թշնամութիւն առաջ բերել երկու ժողովուրդների մէջ, պէտք էր իսկական շահերի անգիտակցութեան մէջ պահել Թուրք տարրը կեղեքելու համար. այս պահանջում էր նաև բէկերի ու աղալարների շահը։ Եւ շահերի զուգորդութիւնը բերեց միացրեց այդ երկու կեղեքիչ դասակարգերին—ռուս բիւրօկրատիային և Թուրք կալւածատիրութեանը։

Անգիտակ խաւար Թուրք մասսային հաւատացրին, որ նրան կեղեքողը, նրա աղքատութեան ու թշուառութեան պատճառը հայն է։

Իրերը ըմբռնելու անընդունակ Թուրք մասսան հրապուրւած ճիշտ այնպէս, ինչպէս մանուկը ճրագի բոցով՝ նախ քան մատը նրան հասցնելը, նետւեց իր խնամակալների լարած որոգայթների մէջ, կարծելով թէ միանգամից կարելի է տիրանալ հայի ունեցածին, որով և վերջ կը դրվի իր թշուառութեանը։

Պրովակացիան ուժեղ էր, Թուրք մասսայի մէջ դեռ ևս համակրանք վայելող բէկերի ու աղալարների, այդ տգրուկ դասակարգի ծրագիրը իրագործուեց. Թուրք մասսան շարժուեց, բայց շարժուեց ոչ իր կեղեքիչների, ռուս բիւրօկրատիայի և բէկութեան, այլ իր պէս կեղեքուած հայ ժողովրդի դէմ, որի կողմից եղած դիմադրութիւնը նրան, բնականաբար, մղեցին դէպի ցեղային թշնամութիւն, դէպի վայրենի ինստինկտներ։

Մասսան շարժուեց, սակայն ոչ թէ իր ծով կարիքներին բաւարարութիւն գտնելու ուղիով, այլ ընդհակառակը աւելի ևս թշուառութիւն բերող ճանապարհով, ուր նա գտնում էր բացարձակ խրախուսանք երկիրը կարգի մէջ պահելու կոչուած պաշտօնեաների և զօրքի կողմից, ինչպէս այդ մենք առիթ կունենանք տեսնելու մեր գրքի շատ երեսներում։

Մասսան շարժուեց, բայց շարժուեց հակառակ ուղղութեամբ. նա իր անգիտութեամբ զէնք դարձաւ բէկցիայի ձեռքում և պատնէշ կանգնելով յեղափոխական շարժման դէմ, բացեց արիւնոտ ու սև փաստերի մի էջ Կովկասի տարեգրութեան մէջ։

ԴՐՈՒԹԻՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՆԱԽ ՔԱՆ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ԲՌՆԿՈՒՄԸ։

1905 թուականը Ռուսաստանի համար սկսւում էր մի սիրուն ապագայի խոստումներով։ Նա գալիս էր սկիզբ դնելու վերածնուող Ռուսաստանի ժողովրդական նոր կազմի. հասարակական կարծիքը արտայայտւեց աւելի ևս մեծ թափով. տասնեակ հազարաւոր ժողովուրդը բանւորական դրօշի տակ, Գապօնի առաջնորդութեամբ, յունվարի 9-ին Պետերբուրգը ալեկոծեց իր գրանդիոզ ցոյցով, և որպէս մի նոր գրաւական ռուս յեղափոխական շարժման կենսունակութեան, վիթխարի Պետերբուրգի փողոցները ներկւեցին ժողովրդի արիւնով։

Պետերբուրգի ժողովրդական այդ ցոյցը իր բազմաթիւ զոհերով արձագանք գտաւ Ռուսաստանի բոլոր ծայրերում, առանձնապէս արդիւնաբերական կենտրոններում, ամեն տեղ կազմակերպւեցին գործադուլներ, ցոյցեր, ձայնակցելու Պետերբուրգում տեղի ունեցող շարժման։

Կովկասը անմասն չը մնաց այդ շարժումների մէջ. նա նոյնպէս յուզւեց, աղմկւեց. առանձնապէս Թիֆլիսը, Բաթումը և Բագուն, ուր խմբւած են Կովկասի աշխատաւոր ձեռքերը։

Բագուն դեռ ևս դեկտեմբեր ամսին աղմկւեց բանւորական ցոյցերով, խմորելով մտքերը նաև միւս կենտրոններում։ Դեկտեմբերի 15-ից սկսւած գործադուլը տևեց մինչև 20-ը, վերջանալով մի շարք նաւթահորերի հրդեհումներով։

Այս, ինչպէս և յունվարի 9-ից յետոյ տեղի ունեցած ցոյցերի պատկերը տալու համար առաջ կը բերենք Թիֆլիսի լրագրներում տպւած պաշտօնական հաղորդագրութիւնից համառօտ քաղւածքներ։

«Բագուի նաւթահանքերի բանւորների մէջ ծագած խմորումը արդէն դեկտեմբեր ամսին ազդեց Բաթումի բանւորների տրամադրութեան վրա։ Բագուից եկած ագիտատորների ազդեցութեան տակ դեկտեմբերի 20-ի առաւօտեան Բօտշիլդի և

Մանթաշեանի գործարանների բանուորները հաւաքեցին ապրանքային կայարանի մօտերքը, պարզելով մի քանի կարմիր դրօշակներ յեղափոխական մակագրութիւններով և ատրճանակները դէպի վեր կրակելով, դիմեցին դէպի երկաթուղային դէպօն կոչեր ցրելով, սակայն նկատելով մօտեցող կօզակներին՝ ամբոխը ցրուեց։ Հետևեալ օրը գործարաններում վերսկսեցին աշխատանքները, բայց խմորումն բանուորների մէջ չընդհատուեց»։

«Յունվարի 17-ի առաւօտեան Բաթումի նաւահանգստում երևացին 500-ի չափ բանուորներ և Ռուսական շոգենաւային ընկերութեան, երկաթուղային և նաւամատոյցների բոլոր բանուորներին տարան հետները մահուան սպառնալիքների տակ, արգելելով նրանց աշխատել։ Յունվարի 18-ին գործադուլ արին բոլոր վերանորոգող բանուորները, իսկ 25-ին բոլոր գործարանները։ Խանութները և վաճառատները բաց արին ոստիկանութեան ստիպմունքով. կառքերը դուրս չեկան փողոց։ Յունվարի 28-ին գործադուլ արին հիւրանոցների և մասնաւոր տների ծառաները։ Այդ օրը սպանեցին աւագ ոստիկան Կոնդրատևիչին և երկաթուղու կօնդուկտոր Իւխինչուկին»։

«Գործադուլից ազատ չը մնաց նաև Թիֆլիսը։ Այստեղ նա սկսուեց յունվարի 18-ին։ Անդրկովկասեան երկաթուղու արհեստանոցների, բոլոր մասնաւոր տպարանների և մեքենաշինական բոլոր գործարանների. բանուորները, թւով 3000—4000 մարդ դադարեցին գործելուց։ Յունվարի 19-ի գործադուլին միացան Ա. դէլխանովի կաշու և «Միր» ծխախոտի գործարանների բանուորները ու Թամամշեվի քարվանսարայի գործակատարները շուրջ 4000 մարդ։ Յունվարի 20-ի առաւօտից դադարեց ելէքտրաքարշի և ձիաքարշի շարժումը։ Յունվարի 21, 22-ին գործադուլը Թիֆլիսում շարունակուեց»։

«Այդ բոլոր ժամանակ լինում էին համախմբումներ և ձերբակալութիւններ։ Յունվարի 23-ին Գոլովինսկի Պրոսպեկտի վրա տեղի ունեցան ցոյցեր, բարձրացրին կարմիր դրօշակ, ցրուեցին կոչեր, ատրճանակներից կրակ բացին ոստիկանների վրա, միջամտեց ոստիկանութիւնը, որի ժամանակ եղան սպանութեան փորձեր և ձերբակալութիւններ։ Յունվարի 25-ին գործադուլ արին միս մորթողները, ֆարմացևտները, դեղատան աշակերտները։ Յունվարի 20-ից մինչև 25—26-ը գործադուլներ և ցոյցեր

եղան Քութայիսում և Փոթիում, Սամտրէդի, Կվիրիլի, Շօրապան և Գանձակ կայարաններում, նաև երկրորդական կայարաններում, ինչպէս են՝ Կվաքօնի, Նիգօիտի, Սաչէվախօ, Կոպիտնարի, Աբաշա, Զալօդէտ և այլն»։

«Յունվարի 26-ին վերսկսեց Բագուի տպարանական բանուորների գործադուլը, որից առաջացաւ այն, որ նորից լրագրները դադարեցին։ Յունվարի 28-ին դրանց միացան երկու գործարանների բանուորներ»։

Ահա իրերի դրութիւնը Կովկասում, առանձնապէս Բաթումում, Թիֆլիսում, մանաւանդ Բագուում, ուր դեկտեմբերի 13-ից մինչև 20-ը շարունակող և հրդեհումներով վերջացող գործադուլները և ցոյցերը վերսկսեցին յունվարի վերջերին, խմորելով միւս տեղերը, ինչպէս տեսանք այդ պաշտօնական հաղորդագրութիւնների մէջ։

Այսպէս էր Կովկասի դրութիւնը յունվարի երկրորդ կիսամսեակի ամբողջ ընթացքում, այն է, Բագուի փետրվարեան կոտորածից ընդամենը 7—8 օր առաջ։

Եւ ահա քաղաքական այս խառնաշփոթ միջոցին Ռուսաստանի ազատագրական և ազգերի ընդհանուր շահերի միացման այդ վարկեանին Կովկասի գլխին պայթում է մի չը տեսնուած փոթորիկ։

Այդ փոթորիկը մի առանձին թափով, որպէս չար հողմը, անցաւ բոլոր այն տեղերով, ուր հայ և թուրք ապրում են խառը, սկսած Բագուից մինչև Նախիջեւան և Թիֆլիսից մինչև Շուշի. Անդրկովկասի չորս մեծ—այն է Բաքուի, Երևանի, Գանձակի և Թիֆլիսի նահանգները, դարձնելով նրանց խռովութիւնների և ընդհարումների բուն, որոնց մասին մենք կը տանք փաստերը զատ զատ, աշխատելով պահպանել ժամանակագրական կարգը, միևնոյն ժամանակ կցելով նրանց վիճակագրական կարևոր տեղեկութիւններ և քարտէզներ։

ԲԱԳՈՒԻ ՆԱՀԱՆԳ

Հայ-Թուրքական ընդհարումները, աննշան բացառութեամբ, բռնկուել են այն բոլոր տեղերում, ուր հայ և Թուրք ապրում են միասին խառը, որով և ընդհարումների բեմ հանդիսանում են Գանձակի, Երևանի, Բագուի և Թիֆլիսի նահանգները։ Ի նկատի ունենալով այդ չորս նահանգների ուրոյն աշխարհագրական և քաղաքական պայմանները, հայ և Թուրք ժողովուրդների Թուական համեմատութիւնները և որ գլխաւորն է, կալուածատիրական և բէկական ուրոյն դրութիւնները, ընդհարումները արտայայտուել են տարբեր չափերով և տարբեր հետևանքներ էլ առաջացրել։

Այդ տեսակէտից աւելի ճիշտ լուսաբանութեան յանգելու համար իւրաքանչիւր նահանգ առաջ բերելով առանձին, միաժամանակ կը տանք մի երկու ամփոփ վիճակագրական և այլ տեղեկութիւններ իրենց տեղերում։ *)

Բագուի նահանգում հայ ազգաբնակութեան Թիւը շատ փոքր է, մանաւանդ բնիկ ժողովրդինը։ 1905 Թի ոստիկանական տեղեկութիւններով մշտական և ժամանակաւոր բնակութիւն հաստատած հայերի Թիւը ամբողջ նահանգում հաշուում էր 84,000, բնիկ—հազիւ կէս մասը, որից 50,000ը ապրում էին միմիայն Բագուում և նաւթահանքերի շրջանում, իսկ մնացեալ տեղերում ընդամենը 34,000, որից 18,000ը Շամախիի գաւառում, իսկ 16,000ը Գեօկչայի գաւառում, մի աննշան Թիւ էլ ապրում էր Լենքորանի կողմերում։

---

*) Մեր աշխատութեան մէջ նահանգների և գաւառների տեղագրութիւնները և վիճակագրական մասերը կազմելիս բացի մեր անձնական տեղեկութիւններից, օգտուել ենք նաև զինուորական շտաբի 5 վերստանոց քարտէզներից և պաշտօնական հրատարակութիւններից։

ԲԱԳՈՒ

Բագուն նահանգական քաղաք է, ընկած Ափշերոնեան թերակղզու հարաւային ափին, ներկայացնելով առաջին նաւահանգիստը Կասպից ծովի վրա և՝ առաջին վաճառաշահ քաղաքը ամբողջ Կովկասում։ Շնորհիւ իր հռչակաւոր նաւթահանքերի և նաւթային ընդարձակ արդիւնաբերութեան, որով կարողանում է մրցել ամբողջ երկրագնդի նաւթային արդիւնքների հետ և որի շնորհիւ մի քանի տասնեակ տարիների ընթացքում հասել է արտակարգ բարգաւաճման թէ տնտեսապէս և թէ կենցաղով, նա ասպարէզ է տալիս ահագին թւով աշխատող ձեռքերի, որոնք գալիս են երկրի լեռնային անպտղաբեր գաւառներից մի կտոր հաց ճարելու համար։

1904 թւին Բագուի և նաւթահանքերի ազգաբնակութեան ընդհանուր թիւը մշտական և ժամանակաւոր ապրողները միասին վերցրած հաւասար էր 222 հազարի, հետևեալ կարգով.

1	Մահմետական տարրեր	82
2	Ռուսներ	61
3	Հայեր	51
4	Լէկզիներ և Օսեր	14
5	Վրացիներ	3
6	Գերմանացիներ	3
7	Հրէաներ	3
8	Ցոյներ	1
9	Լեհեր	2
10	Ասորիներ, Աբխազներ, Էստոնցիներ	2

ԱՌԱՋԻՆ ԿՈՏՈՐԱԾԸ ԲԱԳԻՈՒՄ

6-ից 9-ն ՓԵՏՐՎԱՐԻ 1905 Թ.

1905 Թ. փետրվարի 6-ի կիրակի օրուայ առաւօտը բացուեց սովորական անդորրութեամբ։ Սիրուն Կովկասի ջինջ կապուտակը ձմրան կապանքները թօթափելու ճիգերով երևան էր հանել մի ժպիտ, որպիսին յատուկ է Կովկասի երկնակամարին գարնան գալուց առաջ։ Այդ առաւօտը սիրուն էր, խաղաղ, բայց ոչ երկարատև. նա գնում էր անդառնալի կերպով. նա վերջին խաղաղ, անդորր առաւօտն էր 1905 Թւականի մնացեալ տասնեմէկ ամիսների առաւօտների մէջ։

Երջանիկ առաւօտ, որին վիճակուած էր չը տեսնել այն, ինչ որ տեղի ունեցաւ նրանից յետոյ։

Առաւօտեան ժամը 11-ին, մի թուրք Բարայեվ ազգանունով, Գարապետի վրա, հայոց եկեղեցու մօտ, ատրճանակով վիրաւորեց այնտեղ կանգնած մի հայ զինուորի, որը մի քանի ժամանակ առաջ ոմն յանցագործ Աշուր բէկին դատարանից բանտ տանելու ժամանակ սպանել էր, երբ վերջինը փորձել էր փախչել։ Վիրաւորուած զինուորի մօտ եղող հայերը մարդասպանին բռնելով յանձնեցին ոստիկանին, որը կառք նստեցնելով և մի փոքր տեղ տանելով նրան մարդասպանը կառքի մէջից դուրս պրծաւ, և ատրճանակը կրակելով սկսեց փախչել։ Նրա ետևից ընկան մի քանի երիտասարդներ և Կրիվայա փողոցի մօտ սպանեցին ատրճանակների հարուածներով։ Ապա մեռածի դիակը նրա հաւատակիցները դրեցին սայլի վրա և նախ քան տուն տանելը պտտեցրին թուրքական թաղերը՝ գոգոհլով թուրք ամբոխին։ Դա մի սոսկալի կոտորածի ազդանշան էր, որը սկսուեց երեկոյեան ժամը 4-ից տևելով մինչև կէս գիշեր, որի ժամանակ սպանուեցին և վիրաւորուեցին 35 հայեր։

Յաջորդ օրը, երկուշաբթի, փետրվարի 7-ին, ըստ երևոյթին, ամեն ինչ խաղաղ էր, այնպէս որ հայերը փողոց դուրս ե-

կան և շուկան բացուեց, սակայն այդ մի խաբուսիկ ընդմիջումն էր մարդկանց յանկարծակիի բերելու համար։ Ուղիղ ժամը 10-ին սկսուեց կոտորածը քաղաքի շատ փողոցներում միանգամից, որը տևեց երեք օր և երեք դիշեր։

Թէ այդ երեք օրերի ընթացքում եւրոպական պարիկ հագած գեղեցիկ Բագուի փողոցներում ինչեր էին կատարւում, կողոպուտների ու հրդեհումների, մարդկային զոհերի ու տանջանքների որպիսի տեսարաններ տեղի ունէին, այդ թոյլ կը տանք պատմելու ականատեսներին։

«Нов. Обозр.» լրագրի թղթակից Օրեստ Սեսմին այսպէս է նկարագրում Բագուի դէպքերը։ *)

«Այս երկու օրը զարհուրելի բոպէներ է անցկացնում Բագուի ազգարնակութիւնը։ Պարապետի վրա, Վօրոնցովի, Բազարնի և Շամախու փողոցներում թուրքերը անխնայ կոտորում են հայերին։ Մինչև ժամը 12-ը Միքայէլեան հիւանդանոցը բերուել էին 10-ը սպանուած և 40 վիրաւոր հայ, որոնց թւում մի փոքրիկ գիմնազիստ . . . Կէս գիշերից յետոյ հրաձգութիւնը դադարեց։ Բայց այս առաւօտ կոտորածը նորից վերսկսուեց քաղաքի բոլոր մասերում զարհուրելի, սարսափեցուցիչ ուժով։ Քաղաքը ընդունեց թշնամուց պաշարուած բանակի կերպարանք։ Սարսափը քարացնում էր իմ մկանները, արիւնս սառչում է երակներումս, երբ յիշում եմ այն, ինչ որ ես տեսայ այսօր միայն 3 ժամում (ժամը 11½-ից մինչև 2½)։ Անկարող լինելով զսպել հետաքրքրութիւնս, ես ուղևորուեցի թուրք ամբոխի համախմբութեան տեղը—Բազարնի փողոցը։ Այնտեղ մի քանի հարիւր թուրքեր կոտրատում և կողոպտում էին հայերի խանութները։ Ամբոխի վայրենի ոռնոցը, օդի մէջ յաճախ կրակւող գնդակները սարսափեցնում, սառեցնում էին իմ սիրտը։ Ահա ոգևորուած ամբոխը սկսում է կոտրատել պարսիկների խանութները, բայց այնտեղ կանգնած պարսիկները մահակներով զինուած քշեցին թուրք ամբոխին և նա սկսեց ցրուել, աջ ձեռքերում բռնած փայլուն ատրճանակները, իսկ ձախում թալանած մահուդը, կօշիկը կայլն։ Այդ

*) Ինչպէս Օրեստ Սեսմինի թղթակցութիւնները, այնպէս էլ մի քանի պաշտօնական հաղորդագրութիւններ առաջ են բերուած «Մշակ»ի թարգմանութեամբ։

կողոպտողներին հանդիպող զինուորների (պատրուլ) պահակներն անցնում էին մօտերովը չը խլելով նրանց զէնքերը, ոչ էլ նրանց թալանած իրերը։

«Ահա Գուբերնսկի փողոցի վերևում, ռուս տաճարի մօտ, առաւօտից ընկած է մի հայ բանուորի դիակ դէմքը գունատուած, կաթնագոյն է, աչքերը փոս գնացած. . . ։ Իսկ այնտեղ, ներքևում, միևնոյն Գուբերնսկի փողոցում նկատումէ մի ուրիշ դիակ էլ։ Տօրգովի փողոցում դիակների թիւը 10 հատ էր, նոյնպէս և մալականների այգում, որտեղ առաւօտեան տեղի ունեցան իսկական ճակատամարտներ։ Ահա իմ տեսած մի ուրիշ տեսարանը. մի տանից, Պարապետի մօտ, որտեղ, չը գիտեմ ինչու, դատարկ հրապարակում կանգնած են կէս վաշտ զինուորներ և 50 կօզակ, դուրս թռաւ մի հայ, նրա վրա պրծաւ մի թուրք։ Կռի մէջ հայը գետին գլորեց թուրքին և վազեց Պարապետի երկարութիւնով։ Թուրքը վերկացաւ և ընկաւ նրա ետևից . . . մէկ, երկու, երեք կրակեց փախչողի ետևից, բայց ըստ երևոյթին գնդակները չը կպան և հայը անյայտացաւ՝ փողոցի սնկիւնն անցնելով։ Հենց որ թուրքն էլ վազեց այնտեղ, նորից որոտաց ատրճանակը, այս անգամ արդէն թուրքի դէմ, և հաւանօրէն, ճակատագրական, որովհետև վերևում կանգնած թուրք ամբոխը օգնութեան վազեց, աղմուկով սլացաւ զօրքերի աչքի առաջով Պարապետից ներքև և այնտեղից կրակ բաց արեց հայերի պատշգամբների վրա, որտեղից, իր կարգին, կրակների տարափ տեղաց և կողոպտիչների ամբոխը ստիպուած եղաւ յետ նահանջել։ Ի՞նչ էր կատարուում այնտեղ, խորքում, Բազարնի և Շամախու փողոցներում, չը գիտեմ։ Հեռուից երևում է միայն թուրքերի փափախների մի ամբողջ ծով և ամբոխի վայրի ոռնոցը . . .։ Ի՞նչ և ո՞րպիսի սարսափներ էին ծածկուած նրանց տակ կը հաղորդեմ վաղը . . .։ Վրա է հասնում երեկոն։ Բոլորը սարսափով սպասում են «Բարդուղիմեան գիշերին»։ Հաղորդում են, որ նաւթահանքերից քաղաք է շարժուում բանուորական (հայ) մասսան վրէժ հանելու իրենց սպանուած եղբայրների փոխարէն։»

«Լոյս 8-ի գիշերը համեմատաբար խաղաղ անցաւ, բայց առաւօտեան հրաձգութիւնը նորից սաստկացաւ։ Իմ դրացու ննջարանն ընկաւ մի գնդակ. շտապով դուրս ուղարկուած աղախինը (ռուս) լուր բերեց, որ թուրքերը պահանջում են 25 ր. իրենց աղքատների համար։ Տան տէրը (Դաւթեանց) մերժեց։ Կէս ժամ

յետոյ, երբ դրացիս, քրէհով այդ տան մէջ ապրողը, ընտանիքով տեղափոխւում էր տան տիրոջ բնակարանը և երևաց վերևում, նրա վրա կրակ բացին։ Գնդակը թաղւեց պատի մէջ նրա գլխի վերևում։ Ես հէնց այնտեղ էի։ Կանայք հիստերիկաբար հեծկըլտացին։ Զը կամենալով գնդակահար լինել իմ սեփական բնակարանում, ես ուղևորւեցի քաղաք։ Փողոցներում մահացու լռութիւն էր տիրում։ Տեղեկացայ, որ գերեզմանոցում դիակների տնակում 100 մեռել կայ։ Հեռախօսի զանգը տալիս եմ Միքայէլեան հիւանդանոց. այնտեղ կայ 25 սպանւած և 75 վիրաւոր. փողոցներում էլ կան թափւած դիակներ 50-ի չափ (խմբագրութեան ծառայողների հաշւով)։ Նիկոլաևսկի փողոցով գնալիս ես տեսայ թէ ինչպէս 4 պրիստաւների աչքի առաջ և կօզակների դիմացը, իմ ետևում սպանեցին մի հայի, գնդակով ծակելով նրա գլուխը։ Արեան զօրեղ հոսանքը ողողեց մայթը . . .։ Մարդասպան թուրքը, արժանանալով ամբոխի խրախուսանքին, անյայտացաւ բերդում . . .։ Հեռախօսով զանգ եմ տալիս նահանգապետի բնակարանը, որպէսզի զօրք խնդրեմ մի խումբ թուրք երեխաներին հալածելու (բոլորն էլ ատրճանակներով զինւած), որոնք այլանդակութիւններ են անում գերեզմանատան փողոցներում, ապակիներ են կոտրատում, անց ու դարձ անողներին սպառնում են զէնքերով, գարմօններ են ածում և վայրենի աղաղակներ բարձրացնում։ Ոնձ չեն պատասխանում։ Վվեդինսկի փողոցում մի կանաւի մէջ ընկած է մի սպանւած հայ երեխայի դիակ . . . Մալականի այգում արդէն երկրորդ օրն է ընկած է սպանւած մի բժշկի դիակ։ Այսօր իմացայ, որ սպանւած է գիմնազիստ Լեբեդիևը։ Ընդհանուր առմամբ առ այժմ բոլոր զոհերի թիւը համարում են 250։ Ինչ կը լինի յետոյ, չը գիտեմ։ Վախենում են թալաններից և սովից։ Այս րոպէիս գնում եմ բողոքելու պրօկուրօր Վօրօնօվի մօտ վարչութեան անտարբեր և անմասն վերաբերմունքի դէմ դէպի կատարւած դէպքերը։ Երբ յանդիմանում են զինւորներին, թէ ինչու չեն ձերբակալում և զինաթափ անում կողոպտիչներին, զինւորները պատասխանում են «մեզ չէ հրամայւած խառնւել» . . .։ Ներեցէք անշնորհք գրելու համար. ժամանակ չէ այդ մասին մտածելու։ Արիւնոտ սարսափները, որ տեղի են ունենում փողոցում, բառացի կերպով քարացնում են մարդու կամքը և միտքը . . . Վը՛ղ . . . Վը՛ղ . . . Վը՛ղ . . . մի միայն գնդակի այդ ձայներն են լսւում։ Մի անարդար թախիծ ձգն-

շում է մարդու սիրտը. զարհուրելի՜ է, զարհուրելի՜ . . .»

«Գոստից, ուր աշխատանքը դադարած է, ես դուրս եկայ արտիստ Մորսկու հետ (միայն նա յանդգնեց ուղեկցել ինձ)։ Մալաթիայի այգու միջով մենք եկանք դէպի Գարապետ և այնտեղից էլ Նիկոլաևակի փողոցով դէպի Բազարնի փողոցի խորքը, երէկուայ սարսափների վայրը։ Մանսթ հայերից իմացայ, որ Մալաթիայի այգում ապաստանած է բժիշկ Կարաբէդովը։ Այնտեղ էլ իմացանք, որ յատկապէս կատաղի պարտիզանական ընդհարումներ տեղի են ունեցել ամսի 7-ին Ղանիթափայում, Տօրգօվի և Հայոց փողոցներում։ Կողոպտուած են Բուդաղեան, Մայիլեան և ուրիշ առևտրականների տներ։»

«Նիկոլաևակի փողոցի մօտ, Բազարնի փողոցում մենք տեսանք Թուրք ամբոխը, որը պաշարել էր մի հայի խանութ, ուր երկու օր նստած էին 3 հայեր։ Դուռը կոտրելով Թուրքերը միահամուռ կրակ (զալպ) բաց արին դէպի խանութի ներսը մի քանի անգամ իրար ետևից, բայց ապարդիւն։ Այդ կրակի ձայնին եկան կօզակները և հայերին շրջապատեցին տարան . . .։ Գնում ենք առաջ. թալանուած խանութների դռները փակուած են. փողոցի սալայատակի վրա թափուած են ահագին քանակութեամբ կոտրատուած ապակիներ և փաթաթելու թղթեր . . .։ Մօտենում ենք Եկեղեցական փողոցին. «Ֆանտազիա» բաղնիսից սկսած դէպի ներս մինչև ծայրը, մի վերստաչափ տեղ, նա ամբողջապէս ծածկուած է թուրքերով։»

—Ռուսները կարող են անցնել, հարցնում ենք թուրքերին։

—Կարելի է, կարելի է . . .։

«Բայց և այնպէս մենք չը յանդգնեցինք աւելի առաջ անցնել, որովհետև արդէն մթնում էր (երեկոյեան ժամը 6-ն էր)։ Կանգնելով Եկեղեցական և Բազարնի փողոցների անկիւնում, մենք դիտում էինք, թէ ինչպէս ամբոխի առաջին շարքերը մօտեցան Թումայիների տանը «Ֆանտազիայի» մօտ, շիշերով նաֆթը ձեռքերնին։ Թուրքերից շատերը կոուրը մտցուցին և այնտեղից նաւթը լցրին տան վրա։ Ներքևից նոյնպէս նաւթը շաղ էին տալիս փեղկերի և դռների վրա։»

«Շուտով բորբոքուեց կրակը և օդի մէջ սկսեցին թռչել մայթերից դէպի լուսամուտները կրակի լեզուները։»

«Տան վերին յարկից լուեցին զէնքի պայթումներ և աղաղակ-

ներ՝ «օգնեցէք, օգնեցէք» . . . Ներքևից էլ զէնքերն սկսեցին կայծեր փայլել և գնդակները սկսեցին տեղալ դէպի լուսամուտները։»

«Այն ինչ ամբոխն աւելի և աւելի գազանանում էր, զէնքի պայթումները աւելի և աւելի յաճախ էին լսւում, ծուխը և կրակը սաստկանում էին, սպառնալով ծխախեղդ անել կամ խորովել պաշարուածներին։»

«Սարսափը պատեց մեր հոգին, տեսնելով պաշարուածների վիճակը։ Մեզ մօտ կանգնած էր Թումայևների ռուս ազախինը, որից իմացանք, որ Թումայևների տանը բնակւում են և վրացիներ։»

«Շուտով բոցը բռնեց ամբողջ տունը . . .։ Մթնեց և Թուրքերը մեզ խնդրեցին հեռանալ . . .։ Ստիպւած էինք հնազանդւել։ Ճանապարհին Բազարնի փողոցում մենք գտանք մի չաղ հայի դիակ, Թուրքական փափախը գլխին և շատ նման Թուրքի։ Մեր հարցին, թէ մի՞թէ սա հայ է, Թուրքերը պատասխանեցին, այո, հայ է, որը փորձել էր երեսը ներկելով և Թուրքի զգեստ հագնելով խաբել Թուրքերին։»

«Տուն գալով, երբ տանիքը բարձրացայ, ես տեսայ Թումայևների տան վրա ահագին լոյս և լսեցի այն կողմից եկող անընդհատ հրաձգութեան ձայները . . .։ Սարսափելի էր . . . ըստ երևոյթին սկսւեց այն Բարդուղիմեան գիշերը, որին երէկ սպասում էին . . .»

«Փետրվարի 9-ի ցերեկւայ ժամը 11-ին, ռուս արտիստ Գ. Մօրսկու հետ միասին Գարապետից, որի մօտ փուած էին երկու ձիերի դիակներ, ուղևորւեցինք դէպի Վօրօնցովեան փողոցը, որպէսզի գնանք հասնենք Բաբաջանովի և Լազարեանի տան հրդեհի վայրը։ Ճանապարհին, «Մադրիդ» հիւրանոցի մօտ մենք տեսանք մի ռուս աղջկայ այլանդակւած դիակը։ Նա դեռ բռնած ունէր ձեռքին գալոշներ և մի շիշ գինի, որ փախցրել էր այդտեղ գտնւող հայի մի գինետուն կողոպտելու ժամանակ։ Ինչպէս մեզ հաղորդեցին դրացիները, Թուրքերի հետ միասին գինետունը թալանում էին և «բօսեակները», որոնց Թւումն էր և սպանւած կինը։ Մօտենալով Բաբաջանովի տանը, Եկեղեցական փողոցում, մենք տեսանք մի զարհուրելի պատկեր։ Տան առաջի ամբողջ սալայատակը բռնւած էր կոտորտանքով. այդտեղ փուած էին 4 Թուրքի դիակներ անկանոն կերպով։ Ամբողջ տունը, իսկապէս երկու տուն, Բաբաջանեանի և տիկ. Լազարեանի (№ 93 և 95) ներկայացնում էր մի միապաղաղ, այրւած աւերակ։»

«Շէնքի պատերը նախշուած էին գնդակների հազարաւոր փոսիկներով։ Շէնքի ներսում պատկերն աւելի զարհուրելի էր։ 17-ի չափ դիակներ իրար վրա կուտակուել էին, այլակերպուած, ածխացած։ Նրանց մէջ կային 5 երեխաների դիակներ։ Դրանք Ադամեանի, Բաբաջանեանի, Թադէոսեանի և ուրիշների ընտանիքներն էին։ Կան ռուսներ և վրացիներ էլ։ Ոստիկանութեան ասելով Բաբաջանեանի տներում սպանուել են գնդակներից և հրդեհից 24 հոգի, բայց այդ թիւը իրականից պակաս է, որովհետև բացի յիշեալ 17 այրուածները առաւօտեան այնտեղից տարել են 12 դիակ և 4 հատ էլ դեռ ընկած էին փողոցում, ընդամենը 33 զոհ։ Բաբաջանեանի տան մօտից մենք գնացինք Վօրօնցովի փողոցով դէպի բարձր։ Մարդու սարսուռ է պատճառում Ալանեանի կողոպտուած ամբողջ տունը։ Ժամը 11½-ն էր։ Շամախու թաղի կողմից մեր ականջին էին հասնում թուրքերի վայրենի աղաղակները. նրանք Ղուբայի մէյդանում շրջապատել և կրակ էին գցում Լալայեանի տունը։»

«Երբ մենք մօտեցանք, հրդեհն արդէն լափում էր լուսամուտների վերին մասերը, տան բոլոր դռներն ու շրջանակները կոտրատուած էին, իսկ իրերը փողոց դուրս թափուած և այրուած . . .։ Ամբոխը փոթորկում էր, որոնելով նոր զոհեր, ծարաւելով արեան։ Շուտով երկրորդ Զուգահեռական փողոցի վերևի կողմից հրաձգութիւն լսուեց, լսուեց նաև փշրուող ապակիների խշշոցը և փողոցի սալայատակի վրա կազմուեց մի խարոյկ, չը գիտեմ ում տանից դուրս նետուած իրերից . . .։ Շուտով եկան կօզակները . . .։ Այնտեղից մենք նորից իջանք Լալայեանի տան մօտ։ Յանկարծ ձախ կողմի փողոցից, Վլասով կօշկակարի խանութի ետևից լսուեցին զէնքի որոտներ. վազում ենք այնտեղ և տեսնում, թէ ինչպէս հայի տունը ներս խուժած թուրք ամբոխը տանջում և մորթոտում է տան բնակիչներին։»

«Ահա լուսամուտից դուրս թռաւ մի արհեստաւորի արիւնաշաղախ դիակը, յետոյ դուրս թռան բարձեր, աթոռներ։ Ամբոխը թափուեց նրանց վրա և սկսեց ամեն ինչ պատառոտել և կոտրատել . . . իսկ բակի մէջ այդ պահուն որոտում էին զէնքերը։ Երբ նրանք հանդարտուեցին, մենք բակը մտանք և այնտեղ տեսանք արեան մէջ լողացող 7 դիակ . . .։ Զգալով, որ ջղերս ինձ դաւաճանում են, ես քաշ տուի ընկերոջս տուն։ Սակայն հազիւ մենք

անց էինք կացել երկու փողոց, երբ Լալայեանի տան մօտ զէնքեր որոտացին։ Մենք յետ նայեցինք և մեր աչքի առաջ տեղի ունեցաւ հետեւեալ ցնցող տեսարանը. Ղուբայի մէյդանի վրա բացւող Լալայեանի տան մեծ դռնից դուրս եկան մի խումբ Թուրքեր, որոնք օղակի նման շրջապատել էին Լալայեանին և նրա կնոջը, որը փաթաթւել էր իր ամուսնուն։ Թուրք ամբոխը վայրենի ոռնոցներով յարձակւեց Լալայեանի պաշտպանների վրա, օդի մէջ փայլեցին խէնջարները, որոտացին հրացանները, բայց Լալայեանը դեռ շարունակում էր առաջ շարժւել . . . և յանկարծ պատկերը խիստ կերպով փոխւեց. Լալայեանին շրջապատող օղակը պատռւեց և նրան մէջքից վիրաւորեցին մի քանի գնդակով . . .։ Նա վայր ընկաւ և առաջ էր շարժւում չորեքթաթ տալով. նրա կինը թեքւեց նրա վրա և իր մարմնով պաշտպանում էր նրան մարդասպանների հարւածներից։ Բայց որոտացին էլի մի քանի հարւածներ, ուղիղ դէպի տիկին Լալայեանի մէջքը և նա երեսի վրա վայր ընկաւ։ Սև մազերի խիտ կոյտը ծածկեց այդ հերոսուհու դէմքը։»

«Զարհուրանքից սառեց իմ սիրտը և ես համարեա վազելով դիմեցի դէպի տուն։»

«Ճանապարհին մեզ պատահեցին այն երկու հայերի դիակները, որոնք դուրս թռան Շամախու ճանապարհին կողոպտւող տանից և ուզեցին ազատւել կօզակների ձիերի ոտքերի արանքում։ Կօզակները քշեցին ձիերը հեռացան և այդ հայերին պատառ պատառ արեց կատաղած ամբոխը։»

Այժմ տեսնենք ռրպիսի մանրամասնութիւններ տալիս է Թուրք ականատեսը «Бакин. Извѣст.» լրագրի մէջ։

«Պատահած ծանօթ Թուրքերը առաջարկեցին ինձ փոխել եւրոպական գլխարկը և դնել Թուրքական գդակ, որովհետև, ասացին նրանք, ձեզ կարող են հայ համարել և սպանել։ Մինչև առաւօտ քաղաքում տեղի ունէր ցանցառ հրացանաձգութիւն։ Երկրորդ քաղաքամասում, ուր ապրում եմ և ես, մահմեդականները ամբողջ գիշերը պատրաստւում էին պատերազմի։ Վաղ առաւօտից (7-ին) սկսւեց արդէն սաստիկ հրաձգութիւն և հայերի տների ու խանութների աւերումը։ Փողոցներում երևում էին համշարիներ (պարսկահպատակ), որոնք բեռնաւորւած էին հայերից թալանած մանուֆակտուրային ապրանքներով։ Հրաձգութիւնը ժամ ժամի վրա սաստկանում էր, սպանւածներն ընկնում էին արիւնահոս և

ոչ ոք չէր վերցնում տանում նրանց։ Շրջակայ գիւղերը ուղարկ-
ւեցին ձիաւորներ, որ առաջարկեն անյապաղ քաղաք գալ։ Արդէն
փետրվարի 8-ի կէսօրին, քաղաքի Թուրքական մասի այս ու
այն տեղերում, երևում էին բերդան հրացաններով և խէնջարներ-
ով զինուած գիւղացիներ։ Ցերեկւայ ժամը 1-ին լսեցին հրացանի
ձայներ, ես տանից դուրս վազեցի, իջայ Բազարնայեա փողոցը, և
տեսայ որ Ցերկովնայեա փողոցում Բաբաջանովի տունը (№ 98)
շրջապատուած է Թուրքերով։ Տան մէջ պաշարուածներն էլ կրակում
էին երրորդ յարկից, բայց նրանց արձակած գնդակները չէին կա-
րող մէկին վնաս պատճառել, քանի որ պաշարողներին խփելու
համար պէտք էր, որ նրանք դուրս հանէին իրանց գլուխները
պատուհաններից, որպէսզի նշան բռնելու հնարաւորութիւն ունե-
նային, իսկ այդպիսի բան պաշարուածները չէին կարող անել, վա-
խենալով թէ կը սպանուեն։ Վերջապէս պաշարուածներից մէկը դուրս
եկաւ պատշգամբ և հրացանի հարուածով վիրաւորեց մի Թուրքի,
բայց ինքն էլ գնդակահար լինելով ընկաւ փողոցը։ Պաշարողները
և պաշարուողները փոխադարձ հրաձգութիւնը շարունակում էին։
Ամբոխից մէկը առաջարկեց հրդեհել տունը. իսկոյն բերին մի
տակառ նաւթ և ածելով պաշարուած տան մուտքի վրա, կրակե-
ցին։ Երեկոյեան ժամը 6-ի մօտ ամբողջ տունը կրակի մէջ էր։
Ժամը 9-ին ամեն ինչ այրուեց, բացի ներքնայարկից։ Թուրքերը
վճռեցին ներս մտնել և խուզարկել ներքնայարկը։ Այստեղ մեծ
արկղներ կային. մի լէկղի խէնջարը ներս մխեց, երևաց, որ այդ-
տեղ արկղների մէջ ծածկուած են դժբախտ մարդիկ։ Կատաղած
ամբոխը վրա յարձակուեց և գտաւ 9 հոգի։ Ես չեմ կարող նկարա-
գրել այն սարսափը, որ երևում էր գտնուած զոհերի դէմքին . . .։
Նրանց մէկ մէկ դուրս էին բերում և ամենքի աչքի առաջ կո-
տորում էին։»

«Այդ նոյն տեղը ամբոխը գտաւ 10 թագնուած կանանց. նրանց
վերջերին տարան մի ինչ որ տեղ. մէկը, մօտ 50 տարեկան մի կին,
աղաղակում էր ազատել իր որդուն, որ միակ կենդանի էր մնացել
այրուած տանը։ Այդ վայրկեանին բոլոր ներկայ եղողները նկա-
տեցին մօտեցող մի մութ մարդկային պատկեր, որը բարձրա-
ցնելով վերարկուի փէշերը և նրանցով ծածկելով իր գլուխը, գա-
լիս էր այրուող տան բակից։ Պառաւ մայրը տեսնելով նրան՝ ճչաց
և ընկաւ։ Նա ճանաչեց, որ մօտեցողը իր որդին է։ Այս դժբախտը

չէր կարողացել մնալ այրուող տան գաղտնի անկիւնում և ողջ ողջ չայրուելու համար վճռեց դուրս գալ, յոյս դնելով պաշարողների գթասրտութեան վրա . . .։ Բայց ամբոխը ուրախանալով, որ մի նոր զոհ է գտել, վրա յարձակուեց և մի ակնթարթում կտոր կտոր արաւ նրան։ Դժբախտ մայրը, որի վրա ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում, ընկաւ ծխացող գերանների մօտ և ուշաթափուեց, կրակը դանդաղ կերպով մօտեցաւ նրան, հագուստը այրուեց և դժբախտը ուշքի չը գալով նոյնպէս այրուեց վայրենի գազանացած ամբոխի աչքի առաջ։»

«Тифлис. Лис.» լրագրի թղթակիցը սկսում է այսպէս։

«Ո՛չ, ո՛չ, ես չեմ կարող պատմել ձեզ այնտեղ տեսածի տասներորդ, հարիւրերորդ մասն անգամ։»

«Պէտք է աչքով տեսնել այդ բոլորը, որ գոնէ կարելի լինի աղօտ կերպով ներկայացնել այնտեղ պատահած արիւնահեղ դրաման։»

«Զօրքերը ոչինչ չեն կարող անել, ոստիկանութիւնը անզօր է ճնշելու ապստամբութիւնը։»

«Պատրուլները հանդիպելով արիւնարբու թուրքերին, թողնում էին նրանց անցնել իրանց մօտով, չը խլելով նրանց զէնքերը։ Բալախանայից և Բագուի նաւթահանքերից շարժուեց բանւոր հայերի ամբոխը իրանց հաւատակիցներին օգնելու համար. ամբոխին զինաթափ արին և չը թողին ներս մտնել քաղաք։»

«Սաբունչիից եկած են մեծ քանակութեամբ զինուած թուրքեր։»

«Ընդհանուր համոզմունք է տիրում, որ հայերի այդ բոլոր կոտորածը, այդ սարսափելի սպանդանոցը մէկը կազմակերպել է։ Բոլոր թուրքերը մինչև փողոցային վերջին համբալը զինուած են խէնջարներով, բերդուդներով, բեռուլերներով. շատերի մօտ տեսել են արքունական նմուշի բեռուլերներ։ Ո՞րտեղից ունէին թուրքերը այդ բեռուլերները—անյայտ է։ Ժամ առ ժամ սպասում էին, որ կոտորածը կը սկսի Բալախանում և ուրիշ նաւթահանքերում։»

«Օդը թնդում էր գազանացած ամբոխի վայրենի ազաղակներով։»

«Ամեն տեղ հեծեծանք, լաց և արտասուք . . .։»

«Ամեն տեղից լսւում են հրացանաձգութիւններ։»

«Կատարւում է մի ինչ որ ահռելի, սարսափելի բան։»

«Արիւնահեղ դէպքերի առաջին օրը հիւանդանոց են բերուած 34 դիակ. բոլորը հայեր են, մէկը միայն վրացի։ Բոլորը խփուած են թիկունքից։ Թուրքերը ետևից էին գնդակահար անում։»

Թուրքական այսօրինակ գազանութիւններից ազատ չմնացին նաև նաւթահանքերը։ Ահա ականատեսի մի փոքրիկ նկարագրութիւն («Մշակ»)։

«Ահա Փէթօև և ընկ-ից մի մարդ դուրս եկաւ և դանդաղ քայլում էր դէպի մեզ։ Դա մեր բանուորն էր, որ առաւօտեան գնացել էր գրասենեակ։»

«Վերջապէս եկաւ նա և ծեծեց դուռը, մենք բացինք և ինչ տեսանք. ա՜խ, Աստուած, ես նկարագրել չեմ կարող, երեսը արիւն, շորերը արիւն, մատները արիւն, կարծես թէ կարմիր ներկով լինէր ներկուած։»

«Կոտորեցին»։

«Սա եղաւ նրա առաջին խօսքը։ Մեղմը վիրաւորուել էր երեք տեղից՝ ականջից, կրծքից և մէջքից և աղաչում էր հասցնել իրան հիւանդանոց։»

«Ես գնացի կոտորածի տեղը։ Սարսափելի տեսարան։»

«Մարդկային սպանդանոց, ահա այն տեսարանը, որին ես ուրիշ կերպ չեմ կարող անուանել։»

«Եւ իմ աչքերս մթնեցին, գլուխս պտտւեց, ուզում էի ուշաթափուել, բայց ինձ զսպեցի մի կերպ։ Առաջին անգամ իմ աչքիս ընկաւ մի խեղճ, նիհար, փոքրիկ ծերունի, որին գնդակի երեք հարուածներից բաց, սրով կտրատել էին և գլուխը զատել մարմնից։»

«Գնդակների պակաս թողածը լրացրել էին սրերով, այնպէս, որ դժուար էր լինում ճանաչել նրանց։ Այո՛, սպանդանոց էր այդ, բայց այլ տեսակի սպանդանոց, ուր մարդ մտնելիս երբէք չէք կարող արցունքը պահել, տեսնելով յօշոտուած և այլանդակուած դիակներ։»

Ինչ պատկեր էր ներկայացնում Բագուի գերեզմանատունը այդ սոսկալի դէպքերից յետոյ, լսենք դարձեալ ականատեսին։

«Այստեղ այնտեղ թափթփուած են անթիւ դիակներ, մերկ, գնդակահար, բայց աչքերը դէպի անողորմ երկինքը յառած. անշունչ դիակները կարծես զանգատւում էին անսահման բարձրութեան վրա գտնուող այն էակին, որը տեսել էր այդ բոլորը և լուռ,

անտարբեր դիտել իւր բարձրութիւնից։»

«Ահա այստեղ, դիակոյտերից մէկի վրա ընկած է մի յղի կին. բարբարոսները դաշոյնի մի քանի հարւածով պատռել էին թշուառ կնոջ արգանդը և երեխան դուրս հանելով գցել դիակի մօտ,—ծանօթ պատկեր, որ մենք հարիւրաւոր անգամներ կարդացել ենք պատմութեան արիւնոտ էջերում։»

«Ահա մի երիտասարդ, դեռ ևս անբեխ, անմօրուք, երեսն ի վայր ընկած. թշուառի մարմինը ամբողջապէս ծածկւած է գընդակների վէրքերով։»

«Ահա այն կողմը ընկած է մի սևացած, ածուխ դարձած դիակ, որը հրդեհւած տներից մէկի միջից են հանել։»

«Եւ շարունակ այս ու այն կողմը փռւած են անթիւ դիակներ, մերկ, հաշմանդամ։ Գերեզմանատան ծառաները շտապ շտապ հորեր են փորում և դիակները մէջը թափում . . . ։»

«Առանց արտասուքի, առանց սարսուռի չէ կարելի նայել դիակների այդ ահագին կոյտերին, այդ անմեղ զոհերին։»

Այդպիսի սոսկալի տեսարանների դիմաց, երբ մարդու միտքը քարանում է, արիւնը սառչում երակների մէջ, միմիայն մի հարց է ծագում. ո՞վ ստեղծեց մի այդպիսի դժոխք։

Այս հարցին հետևեալ ձևով է պատասխանում վրաց «Ցնորիս Փուրցելի» լրագիրը։

«Այսօր, երբ ամբողջ Ռուսաստանը սթափւում է իրան կաշկանդող խոր քնից, երբ ամեն տեղ տիրում է ընդհանուր շարժում լաւագոյն ապագայ ստեղծելու համար, այսօր, այս ընդհանուր ոգևորութեան ժամանակ, Բագուի դէպքերը, այս վերին աստիճանի ցաւալի անհամաձայնութիւնը իբրև զարհուրելի դիսսոնանս են ներկայանում մեզ։»

«Այս դէպքերի դիմաց մարդու սիրտը պատռւում է, լքւում և արիւնը երակներում սառչում։ Ջեռ հաւատում, երազ է, թէ իրականութիւն. չէ՞ որ այս բոլորը համահաւասար է սեփական ամենաթանկագին իդեաներից հրաժարւելուն. չէ՞ որ այս նշանակում է ոտնակոխ անել մարդու սրբութիւն սրբոցը, իդէալը։»

«Եւ յետոյ, ե՞րբ է տեղի ունենում այդ բոլորը—այն ժամանակ, երբ պիտի վերջ տրւի բռնութեան, երբ պիտի ոչնչացւեն այսօրւայ կարգերը, երբ մեր երևակայութեան մէջ արդէն այնքան պարզ նկատւում է մարդկային ազատ կեանքը, երբ հար-

կաւոր է, որ բոլոր կովկասեան ազգերը ձեռք ձեռքի տուած եղբայրաբար կուեն կովկասեան արշալոյսի համար։ Եղբայրական միութեան, համաձայնութեան դաշինքի փոխարէն արիւնահեղութիւն եղբայրների և եղբայրասպան պատերազմ։»

«Մի՞թէ սա էր հարկաւոր մեզ այսօր, մի՞թէ սա էր մեր պատասխանը մեր թշնամիներին . . .։ Ո՞վ զարթեցրեց չար և խաւար ուժերը, ո՞վ զինեց իրար դէմ երկու հարևան ազգերին, ո՞վ և ի՞նչը յարուցեց եղբայրասպան կոտորածը—թող ամենասաստիկ քննութիւնը պատասխան տայ այս հարցերին։»

Ահա և «Бакинск. Извѣст.» ռուս լրագրի պատասխանը։

«Այն սարսափները, որ տեղի ունէին Բագուի կենտրոնական փողոցներում այս չորս օրերի ընթացքում, ոչ մի կերպով նկարագրել հնարաւոր չէ։ Նոյն իսկ յայտնի թուրքական գազանութիւնները Հայաստանում նսեմանում են մարդասպանութեան, բռնութիւնների, ջարդերի, հրձիգութիւնների և թալանումների վայրենի բռնկումների առաջ։»

«Ի՞նչը առաջացրեց այդ անմիտ սպանդանոցը, մինչև այժմ խաղաղ բնակիչների այդ ոչնչացնող փոխադարձ պատերազմը։»

«Այս հարցի որոշ պատասխանը կարող է տալ, ի հարկէ, միայն գործի բոլոր հանգամանքների խնամքով և անկողմնապահութեամբ կատարուած քննութիւնը։ Նա միայն կարող է ցոյց տալ և արդարութեան ձեռքը յանձնել այս սոսկալի տրագեդիայի մեղաւորներին և պատրաստողներին, մի տրագեդիայի, որի պատրաստման լուրերը մեր խմբագրութեան մէջ պտտում էին համարեա մի ամիս առաջ, յունվարի 9-ին Պետերբուրգում տեղի ունեցած դէպքերից յետոյ անմիջապէս։»

«Ռուսաստանում տեղի ունեցող հասարակական շարժման արձագանքները, բնականաբար, չէին կարող չարտայայտել ժողովրդական մասսայի տրամադրութեան մէջ. այդ արձագանքների այս կամ այն կերպով բացատրելը կարող էր դառնալ այն ազդեցիկ նիւթը, որի համար բաւական էր և մի կայծ, որ նա բռնկուէր և դառնար ամեն ինչ լափող մի հրդեհ։ Այդպիսի կայծի դերը կատարել է դրսից մասսայի վրա պատուաստած մոլորութիւնը, որով միայն և կարելի է բացատրել արիւնահեղ ընդհարումը։»

Ահա և «Մշակի» պատասխանը։

«Տարիների ընթացքում մի սարսափելի թոյն էր պատրաստ-

ում մեր երկրում։ Ազգամոլութեան, օտարակերութեան, փոխադարձ թշնամութիւնների թոյնը։»

Այս էր ընդհանուր կարծիքը, ընդհանուր մեղադրանքը ուղղուած միմիայն և միմիայն ադմինիստրացիայի դէմ։

Որ արիւնալի դէպքերի ժամանակ զօրքը հրաժարւում էր զէնքի դիմելուց՝ ասելով «մեզ չի հրամայուած արձակել», այդ ապացուցուած է մեր առաջ բերած նկարագրութիւնների մէջ։ Որ պահակները և ոստիկանները հրաժարւում էին ուղեկցել պաշտպանութիւն խնդրող հայերին և եթէ ուղեկցում էին, միմիայն գումարներ և յաճախ մեծ գումարներ ստանալով, նոյնպէս անթիւ փաստեր կան։

Բայց լսենք փաստերի հզօրագոյնը։ Սալեանեան գնդի օֆիցեր կապիտան Բախտամովի մի բացատրութիւնը, տպուած «Бак. Извѣс.» լրագրում։

«Փետրվարի 7-ի առաւօտեան Սալեանեան գնդի 2-րդ վաշտը իմ հրամանատարութեամբ քաղաք կանչւեց անկարգութիւնների պատճառով։ Կէսօրին մօտ իմ վաշտը, ադմինիստրացիայի հրամանով, բաժանւեց առանձին առանձին փոքրիկ խմբերի՝ մի քանի զուգահեռական փողոցների վրա հսկելու համար, սկսած Հայոց փողոցից և վերջացած Պարսկական փողոցով։»

«Ցերեկւայ ժամը 2-ի մօտ, անցնելով զինուորների հետ Բազարնայա փողոցով, ես հանդիպեցի մի խումբ թուրքերի, որոնք Ասիական փողոցի անկիւնում կողոպտում էին մանուֆակտուրային մի խանութ և այդտեղ էլ տեսայ 2-րդ քաղաքամասի պրիստաւին, որը մի քանի ոստիկանների հետ կանգնած էր թալանուող խանութի մօտ։ Երբ սկսեցի յանդիմանել, թէ նա ինչու՞ միջոցներ ձեռք չէ առնում կողոպտողների դէմ, պրիստաւը պատասխանեց, թէ բաւականաչափ ոյժ չունի. իսկ երբ ես խնդրեցի թոյլ տալ ինձ կրակ բաց անել, պրիստաւից ստացայ մերժում։ Համարելով ստիպուած անգործ ներկայութիւնը մի այդպիսի բանի մէջ անհամապատասխան օֆիցերի արժանաւորութեանը, ես իմ զինուորներով անցայ Ցիցիանովեան փողոցը, որպէս զի հաւաքեմ զինուորների միւս խմբերը և ունենալով ձեռքի տակ աւելի մեծ թւով զինուորներ, ազդեմ և ցրւեմ կողոպտողների խմբերը։ Խոստովանում եմ, սրանով ես հասայ աչքի ընկնող հետևանքների. մինչև երեկոյ ինձ մի քանի անգամ յաջողւեց դադարեցնել անկարգու-

թիւնները համոզիչ խօսքերով, իսկ երբ խօսքը չէր ազդում, ես ցրւում էի խմբերը հրացանի կոթերով։ Միւս օրը վաշտիս հետ հազիւ ես դուրս էի եկել մինոյն փողոցները, երբ յետ կանչեցի քաղաքացիական վարչութեան միջնորդութեան համաձայն, որ հիմնւած էր ոստիկանութեան այն զեկուցման վրա, որի մէջ ասւած էր, որ ես, իբր թէ, իմ վաշտին հրացան եմ արձակել տւել մահմեդական ամբոխի վրա և դրանով դեգել մահմեդականներին, մինչդեռ ոչ այդ օրը, ոչ ամսի 7-ին ես և իմ վաշտը մի հատ հրացան անգամ չենք պարպել։»

Բագուի այսօրինակ գազանութիւնների մէջ, ադմինիստրացիայի կատարած դերը միանգամայն լրիւ դարձնելու համար առաջ ենք բերում սենատոր Կուզմինսկու կարծիքը։

«Բագւում այն կարծիքն է տարածւած, որ փետրվարեան ջարդը կազմակերպել է ադմինիստրացիան։ Այդ կարծիքը առանձնապէս արմատացել էր հայ ազգաբնակութեան մէջ։ Եւ յիրաւի, ասում է սենատոր Կուզմինսկի—ադմինիստրացիայի վարմունքը կոտորածի ժամանակ կատարելապէս նպաստաւոր հող ստեղծեց նոյնանման լուրերի ծագման համար։ Սկսենք հէնց այն բանից, որ դեռ փետրվարից շատ առաջ սպասում էին ընդհարման թուրքերի և հայերի մէջ. ադմինիստրացիան շատ լաւ տեղեկանալ այդ բանին, սակայն նա միջոցներ ձեռք չառաւ նրա առաջը առնելու համար։ Ոստիկանութիւնը չը զինւեց, չնայելով որ նրա զինման համար որոշւած կրեդիտը գործադրւած չէր։ Փետրվարի 7-ին, երբ ջարդը արդէն նշանաւոր չափերի հասաւ, ընդհարւած ժողովուրդների հոգևորականութիւնը նահանգապետի ներկայութեամբ պատրաստականութիւն յայտնեց անյապաղ խաղաղութեան թափոր կազմակերպել, նահանգապետը պլատօնական համաձայնութիւն տւեց այդ բանին, բայց յայտնի չէ թէ ինչու նրա անյապաղ իրագործմանը արգելք եղաւ։ Նոյն պլատօնական ձևով նահանգապետը համաձայնւեց Բագուի գարնիզօնի հրամանատարի կարծիքի հետ, թէ անհրաժեշտ է ճնշել յուզմունքը զէնքի ուժով, բայց աւարառուների դէմ զէնք գործածելու համար զօրքերի հրամանատարի խնդրած և օրէնքով պահանջւող գրաւոր թոյլտւութիւնը նահանգապետը կտրական կերպով մերժեց։ Ապա անկարգութիւնների թունդ ժամանակը, երբ նահանգապետը (նրա հետ և ոստիկանութեան ուրիշ պաշտոնեաները) քաղաքում պտոյտներ

էր անում, ակներև խրախուսանքով էր վերաբերում թուրքերին և նրբութեան հասցրած մեղմ խօսքերով և բարեկամական բարեսրտութեամբ «յորդորում էր» նրանց դադարեցնել կոտորածը, այն ինչ հայերի հետ նա խիստ էր և բծախնդիր։ Երբ պաշարուած և պաշտպանուող հայերը աղերսում էին փրկել իրանց, նահանգապետը սառնասրտութեամբ պատասխանում էր նրանց «ինքներդ մի կրակէք և ձեզ վրա էլ չեն կրակի»։ Դեռ դա քիչ է. նահանգապետը հրամայեց վերադարձնել մի քանի դէպքերում թուրք մարդասպաններից խլած հրացանները այն հիման վրա, որ նրանք զէնք կրելու թոյլատուութիւն ունէին։»

Այսպէս հանգամանօրէն գործին ծանօթանալուց յետոյ Կուզմինսկի, այնուամենայնիւ, բացասում է տարածուած կարծիքը ջարդը քաղաքական դիտումներով կազմակերպելու նկատմամբ։ Բայց ի հարկէ նա այլ կարծիք յայտնել չէր կարող։

Մեր առաջ բերած իրերի դասաւորութիւնը և անհերքելի փաստերի շարքը ոչ մի կասկած չեն թողնում մի սոսկալի քաղաքական ծրագրի գոյութիւնը այս ջարդի մէջ, որը նոյն տակտիկայով ծուլուլ ոտացու և տարածուեց ջարդերի միւս վայրերը։

Ապա ի՞նչ էր շինում հայը այդ գազանութիւնների ժամանակ, անշուշտ հարց կը տայ ընթերցողը։

«Փետրվարի 6—9-ի հայկական կոտորածի ժամանակ քաղաքում թագաւորում էր կատարեալ կամայականութիւն և քաղաքացիները, իսկապէս հայերը, անձի և գոյքի ապահովութիւն չունէին։ Այս պատճառով հայ երիտասարդութիւնից կազմուեցին կամաւոր խմբեր իւրաքանչիւրը 5—15 հոգուց բաղկացած, որոնք զինուած էին խէնջարներով և բեւուլերներով հայոց թաղերը, փողոցները և տները պաշտպանելու համար։ Այդ խմբերը օր ու գիշեր պահպանում էին իրանց մասերը զինուած թուրքերի յարձակումներից. նրանց յաճախ յաջողւում էր յետ մղել այդ յարձակումները։ 10 հոգուց բաղկացած մի այդպիսի խումբ պահպանում էր «Վակզալի» մասը Տելեֆոնեան փողոցից սկսած մինչև Ստանիսլաւեան, Բալախանեան և Կանիթափայի փողոցները։ Տեղեկանալով, որ Սաբունչուց երկաթուղով քաղաք են գալիս զինուած թուրքեր, իհարկէ ոչբարի դիտաւորութիւններով, այդ խումբը վճռեց հսկել Սաբունչու գնացքներով եկողների վրա։ Փետրվարի 9-ին, ժամը 4-ին, կէսօրից յետոյ, Սաբունչուց եկան բազմաթիւ զինուած

թուրքեր. հայ խումբը գնաց նրանց դէմ և սկսեց կրակել բեւոլ-ուերներից. թուրքերը պատասխանեցին իրանց կողմից, բայց տեսնելով, որ դիմադրութիւնը հայերի կողմից յամառ է, յետ վերադարձան և սկսեցին հրաձգութիւն կայարանից, սակայն չը համարձակւելով ցած գալ։»

«Бакин. Извѣс.» լրագրի այս փոքրիկ նկարագրութիւնը մի թոյլ պատկերն է այն ուժեղ դիմադրութեան, որ երևան հանեց Բագուի հայ երիտասարդութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան զեկավարութեամբ, զազանացած խուժանի դէմ, կանգնեցնելու անմեղ թափւող արեան հոսումը, մի հոսում, որը տւեց սոսկալի թւեր։

Երեք օրւայ ընթացքում սպանւել էին. հայեր՝ 205, թուրքեր՝ 111, վիրաւորւել էին. հայեր՝ 121, թուրքեր՝ 128. շուրջ 565, բացի անյայտ մնացած զոհերը։

205 սպանւած հայերից—7ը կանայք էին, 20ը երեխաներ և 13ը ծերունիներ։

Բացի այս կողոպտւել էին 451 հայերին պատկանող կայքեր և 62 էլ թուրքերին պատկանող։

Այս բոլորից, բնականաբար, պիտի ստեղծւէր մի ծովացեալ զայրոյթ, որը պիտի փնտռէր մի յանցագործ և պայթէր նրա գլխին իր ամբողջ թոյնով։ Այդպէս էլ եղաւ։

Մարտի 29-ին «Кавказъ»-ի մէջ տպւեց հետևեալ պաշտօնական հաղորդագրութիւնը, որը առաջ ենք բերում քաղւածօրէն։

«Փետրվարի 6—9-ը Բագւում տեղի ունեցած դէպքերից յետոյ, տերրորիստների քաղաքում ցրւած պրոկլամացեաների մէջ յայտարարւած էր, թէ կոմիտետի կողմից մահւան են դատապարտւած Բագուի նահանգապետ իշխան Նակաշիձէն և Բագուի ոստիկանութեան պաշտօնեաներ՝ ոստիկանապետ կապիտան Դեմինսկին, պրիստաւ կապիտան Մամեդբէկովը, պրիստաւի օգնական Սուլթանովը և թաղական վերակացուներ՝ իշխան Միքելաձէն և Շահթախտինսկին։»

«Մարտի 16-ին սպանւեց թաղային վերակացու իշխան Միքելաձէն։ Մարտի 22-ին սպանութեան փորձ արեցին պրիստաւ Մամեդբէկովի վրա։»

Իսկ մայիսի 11-ին նոյն «Кавказъ»-ի պաշտօնական բաժնում տպւեց հետևեալը։

«Այսօր, ցերեկւայ ժամը 3 և 15 րոպէին, Բագուի նահան-

գապետ Իշխան Նակաշիձէն կառքով տուն էր վերադառնում գեներալ-նահանգապետ Ամիլախորիի մօտից։ Միքայէլեան փողոցի անկիւնում, «Մետրոպոլ» հիւրանոցի դիմաց նահանգապետի կառքի մէջ նետեցին մի ռումբ, որի պայթումից սպանուեց Իշխան Նակաշիձէն։»

Իշխան Նակաշիձէն ընկաւ, խղճի մի անհուն թեթևութիւն զգաց Կովկասի հայ ժողովուրդը։

ԵՐԿՐՈՐԴ ԿՈՏՈՐԱԾԸ ԲԱԳԻՈՒՄ

20—30 ՕԳՈՍՏՈՍԻ 1905 Թ.

Փետրվարեան արիւնալի դէպքերից յետոյ թէև Բագուն, շարժումների և այդ շարժման որպէս հակադիր ուժ խուլիգանական սխրագործութիւնների այդ հնոցը, խաղաղւեց, բայց այդ մի խաղաղութիւն էր, նման ծովերի վրա ալեկոծումից առաջ տեղի ունեցող խաղաղութեան։

Ջանքերը՝ ուղղած Բագուի կարմիր օրերի կրկնւելու դէմ ապարդիւն էին անցնում և գնալով այդ քաղաքի մթնոլորտի մէջ պատրաստւում էր մի նոր փոթորիկ աւելի կորստաբեր և աւելի ահաբեկիչ, քան նոյն իսկ առաջինը։

Փետրվարեան արիւնոտ օրերից յետոյ Բագուի թուրքերը ուղղակի անտանելի էին դարձել. նրանց հետ, ինչպէս ասում են, խօսել չէր լինում։ Քաղաքային խորհրդարանում փողոցային թուրք սրիկաների ձեռքով վարչութեան ծառայողների ծեծւելը, զինւած խմբերով նաւթահանքերում շրջագայելը ու սրան նրան մահւան սպառնալիք կարդալը, վերջապէս օրը ցերեկով դեմոնստրատիւ կերպով սպանութիւններ կատարելը, այս բոլորը գալիս էին ապացուցելու, որ ներկայ դրութիւնը երկար շարունակւել չէր կարող։ Այսպէս Բագուի թղթակիցները գծագրում էին պատկերը, նախ քան երկրորդ կոտորածը։

Տեղի ունեցան զարհուրելի դէպքեր Շուշում, դրութիւնը աւելի ևս վատթարացաւ, մի փոքրիկ առիթ, և ահա պատրաստ էր բռնկւելու Բագուն երկրորդ անգամ։

Օգոստոսի 20-ին ձիաքարշի ծառայողները գործադուլ յայտարարեցին։ Մի բոպէ Բագուի ադմինիստրացիայի առաջ ցցւեց ընդհանուր գործադուլի ուրւականը մի կողմից, թուրք խուլիգանական հարիւրակների բանակը միւս կողմից։ Իսկ այդ երկուսի

կողքին՝ մի փրկութեան դուռ, որի անունն էր ցեղային թշնամութիւն։

Ադմինիստրացիան ձիաքարշի վրա կանգնեցրեց զինուորներ և սկսեց երթևեկութիւնը, բայց ոչ երկարատև. յայտնուեցին ձիաքարշի ծառայողները կանգնեցնելու երթևեկութիւնը. տեղի ունեցաւ նրանց և զօրքի մէջ ընդհարում, նաև մի քանի հրաձգութիւն, որից քաղաքում առաջ եկաւ իրարանցում և սկսեց նորից հայ-թուրքական կոտորածը իր սարսափներով։ Դրանից յետոյ գործադուլի մասին խօսք այլևս տեղի չունեցաւ. հայերն ու թուրքերը կոտորում էին միմեանց։

Թէ ինչպէս գաղանացած մարդիկ Բագում և Բագուի նաւթային շրջաններում կոտորում էին միմեանց, թէ ինչպէս նորից սկսեց հոսել արիւնը, անմեղ արիւնը, և թէ ինչպէս հրդեհը մէկ այս և մէկ այնտեղ սկսեց իր լափումները անխնայ, դրանց մանրամասն նկարագրութիւնները տալ չարժէ. այդպիսի նկարագրութիւններ շատ կան այս երեսների մէջ. առաջ կը բերենք դէպքերը փաստացի լուսաբանութիւններով։

Ընդհարումը իր սոսկալի կրակով քաղաքի զանազան մասերում միաժամանակ սկսեց օգոստոսի 20-ի երեկոյեան ժամը 5-ից։ Փոքրիկ ընդմիջումներով հրացանաձգութիւնը տևեց ամբողջ գիշեր և դադարեց առաւօտեան ժամը 8-ին։ Զինուորական ուժը կարող եղաւ միմիայն կարճ ժամանակով դադարեցնել հրացանաձգութիւնը. նա վերսկսեց նորից 21-ի երեկոյեան և շարունակեց ամբողջ գիշեր։

Օգոստոսի 22-ին քաղաքում չը դադարեց հրացանաձգութիւնը. կատաղած ամբոխը չէր խնայում նոյն իսկ զօրքերին, որը իր հերթում պատասխանում էր խմբային կրակով։ Մինչև այդ զոհերի թիւը հաշւում էին 400, որից 270-ը՝ թուրքեր և 130-ը՝ հայ, ռուս, վրացի և այլ ազգեր։

Այդ նոյն օգոստոսի 22-ին կոտորածը քաղաքից անցաւ նաւթահանքերը, բայց սոսկալի հրդեհումներով միասին։

Բալախանին հրդեհւեց մի քանի տեղերից միաժամանակ։ Հրեղէն բոցերը լափել սկսեցին հանքերը մէկը միւսի յետևից։ Անարխիան թագաւորեց ամեն տեղ. կոտորածը հասաւ գագաթնակէտին, որի ժամանակ ընկան բազմաթիւ զոհեր։

Հրդեհը անցաւ նաև Սաբունչի, Բամանի և Բիբիէյբատ։

Վերջինում կատարեցին սոսկալի ոճիրներ. ամբոխը պատառ պատառ արեց մի խումբ հայերի. կրակը արշաւեց աջ ու ձախ։

Նաւթահանքերում հայերի դրութիւնը դարձաւ կրիտիկական։ Գազանացած ամբոխին օգնում էր հրդեհը իր հոսումով. այդ պայմաններում էլ հայերին զինաթափ էին անում և ապա տեղափոխում քաղաք։ Տեղափոխութիւնը կոզակների կողմից կատարւում էր մեծ փրկանքներով։ «3 կոզակներ մի ընտանիք Բալախանիից կայարան տեղափոխելու համար սակարգութիւնից յետոյ համաձայնեցին 80 բուբլի ստանալու պայմանով. բայց երբ հնար եղաւ դէսից դէնից հաւաքել միմիայն 70 ր., նրանք խիստ դժգոհ մնացին»—գրում է մի ականատես։

Իսկ այն, ինչ որ տեղի ունեցաւ Սովէտ Սրեզդի շինութիւնների հետ, միմիայն զայրոյթ կարող էր ազդել. բաւական չէ, որ այդտեղ գտնւում էին դպրոցը, հիւանդանոցը, այլ և ապաստան էին գտել մօտ 6000 հրից ու սրից փախած մարդիկ։ Ահա մութ մարդկանց դրդումով թնդանօթի բերանները ուղղեցին դպրոցի ու հիւանդանոցի շէնքերին և չը նայած հիւանդանոցի բժիշկ Շէյինի թախանձանքին—չը հաւատալ չարախօսութիւններին, թընդանօթաձիգ օֆիցերը հրաման տւեց և թնդանօթը երեք անգամ որոտաց, որի ռումբերից մէկը ընկաւ դասարաններից մէկի մէջ և պայթելով ջարդ ու փշուր արեց սեղանն ու նստարանները, իսկ միւսն ընկաւ գրադարանի մէջ։ Դրանից յետոյ սկսեցին զինաթափ անել պաշտպանութիւն գտած մարդկանց։

Բոլոր հայերի գոյքը կրակի և կողոպուտի մատնւեց։ Կողոպտում էին մեծ մասամբ համշարիները, որոնք տեղական թուրքերին ծառայում էին մի տեսակ թնդանօթային մսի տեղ։ Ցարձակման ժամանակ առաջ էին ընկնում համշարիները և յարձակման տեղից եկող գնդակներին զոհ գնում, իսկ կողոպուտը կիսելիս առաջ էին գալիս թագնւած արիստոկրատները և լաւ բաժինը խլում համշարիներից։ Այս կերպ նկարագրում էր «Баку» լրագիրը Բալախանիի թալանը։

Զոհերի թիւը հնար չը կար ստուգելու. թուրքերը ծածկում էին այդ։

Հայերը կարողացան պաշտպանւել համախմբումներով։

Այդպէս չէր նախկին Առաֆելեանի գործարանում։ Այդտեղ եղող 10 հայ բանւորներ, յուսալով ռուս բանւորների պաշտպա-

նութեանը, չը գնացին Մանթաշեանի գործարանը. բայց լէկզի պահապանի մատնութեամբ յանձնուեցին ամբոխին և տանջանքներով մէկիկ-մէկիկ սպանուեցին։ Այսպիսի դէպքեր կատարուել էին մի քանի տեղերում ևս։

Լէկզիները յետ չէին մնում Թուրքերից ոչ սպանութիւններ և ոչ էլ կողոպուտների մէջ։

Պակաս դեր չէին խաղում նաև ռուս բանուորները, թէև այդպիսի խուլիգանների թիւը շատ մեծ չէր։

Նաւթահանքերում հրդեհը շարունակւում էր սոսկալի չափեր ընդունելով. նա լափում էր պատահածը անխնայ։ Հրդեհին զոհ գնացին նաև փոխարքայի մի քանի նաւթահորերը։ Օգոստոսի 23-ին Կիսլովոդսկից փոխարքան հեռագրեց գեներալ-նահանգապետ Ֆաղդէեվին—«չը սահմանափակուել խաղաղացմամբ, այլ անյապաղ դիմել ամենակտրական գործողութիւնների ապստամբների դէմ, հալածելով նրանց մինչև վերջ»։

Օգոստոսի 24-ին քաղաքում տեղի ունեցաւ թնդանօթաձգութիւն դեռ չը խաղաղուած ամբոխին սարսափահար անելու համար և շրջեց խաղաղարար թափօրը, բայց դարձեալ ապարդիւն։ Այդ նոյն օրը Բալախանիում նոր հրդեհներ ծագեցին. իսկ օգոստոսի 26-ին «Սաուչաստնիկ» ընկերութեան նաւթահորը պաշարուեց ամբոխով և հրդեհուեց։ Այդտեղ եղող հայերը, մօտ 300 հոգի, ստիպուած էին դուրս գալ և պաշտպանողական մի շղթայ կազմելով՝ մէջ տեղ կանանց և երեխաներին առած, հեռանալ սպառնացող հրդեհից, որոնց մի մասը ոստիկանատուն հասնելով զինաթափ արուեց սպառնալիքի տակ։

Խառը դրութիւնը շարունակւում էր նաև քաղաքի մէջ. այս և այն տեղից, այս և այն տանից հրացաններ պարպելը նոյն իսկ զօրքերի վրա չէր դադարում։ Այդպիսի մի կրակ բացուեց անցնող զօրքերի վրա օգոստոսի 27-ին Ալիևի տանից, որը ենթարկուեց ռմբակոծութեան, որից և սպանուեց Ալիևի որդին։

Մոլեգնած, գազանացած ամբոխին հեշտ չէր դադարել։ Բագուում և նաւթահանքերում խաղաղութիւնը վերականգնելու համար շատ անգամ թնդանօթը խօսեց և երբ մի փոքր մտքերը խաղաղուեցին և սարսափը անցաւ, նոր հաշի առնուեց այն աւերը, որին ենթարկուել էր Բագուն։

Մի շաբաթուայ մէջ աւերող ձեռքը սրբել, ոչնչացրել էր

նաւթային կուլտուրայի մեծ մասը. տասնեակ տարիների հազարաւոր աշխատող ձեռքերի արդիւնքը ջնջւել էր իսպառ. հազարաւոր բանւորներ զրկւեցին աշխատանքից, գործից, ապրելու բոլոր միջոցներից։ Շատերը նրանցից շաբաթներով գիշերում էին փողոցներում, պատերի տակ, քաղցին ու սովին մատնւած։ Նրանց մասին հոգացող չը կար. նրանք թողնւած էին բաղդի կամքին։

Բագուի նաւթային շրջանը բռնում է աւելի քան 2500 դեսեատին տարածութիւն, որից մշակւած է միմիայն 1000 դեսեատինը։ Այդ հազար դեսեատին հողի վրա, միմեանց կողքի, մի քանի բայօններում, որպէս անտառ, բուսել են 3000-ից աւելի վիշկաներ. բայց աւերող կրակը լափել և տեղը թողել էր միմիայն 1763 հատը։

Նօրէլի հանքերից ազատւել էր երկու երորդը, Կասպեան-Զերնօմօրեան ընկերութեան՝ կէսը, Մօսկւա-Կովկասեան ընկերութիւնից այրւել էր միմիայն 4 վիշկա։ Բեկենդօրֆինը անվնաս էր։ Վարանցով-Դաշկովի վիշկաներից այրւել էր 7-ը։ Շիրաևինը՝ ազատւել էր կէսը։ Խալիֆի փոքր ֆիրման քիչ էր վնասւել։ Անվնաս մնացել էին «Պոլակ»ը, Ստրօւէրի մեքենագործարանը, Մուսա Նաղիեւի և Ասադուլաևի ֆիրմաները։

Գրասենեակներով հանդերձ ամբողջովին այրւել էին. Կապիկան ընկերութիւնը, Ռունօ, Թումաև, Արշալոյս, Մանթաշև, Փիթօև, Միրզօև, Կրասիլնիկօվներ, Մելիքով, Արամազդ, Ադամով, Տէր Ցակոբովներ, «Վօտան» գործարանները. Շիրվան, Կովկասեան, Կավկազ, Սաուչասանիկ, Բադուգա, Պետրով, Բալախանեան ընկերութիւնները. իշխան Դագարին, Դալպերին և շատ ուրիշ ֆիրմաներ։

Այրւել և կողոպտւել էին՝ Ցակոբովի, Դրուժբայի, Զախմախչիևների, Գօլդլիւատի, Դիլդարոֆների, Աղխէնի, Տէր Ցովհաննիսեանների պահեստանոցները, նաև Բամանիի ամբուլատորեան և Բեկենդօրֆի թատրոնը։

Մօտաւոր հաշւով վնասը հասնում էր 25 միլիոն բուբլու, որի շատ մեծ մասը հասել էր հայ ֆիրմաներին, որովհետև հէնց նրանց դէմ էլ ուղղւած էր եղել հրդեհը, թէև հրեղէն լեզուները լափել էին պատահածը անխտիր։

Աւելի ծանր դլուխն, ինչպէս մի փոքր առաջ էլ յիշեցինք, ստեղծուեց բանուորութեան համար։ Բալախանիում աշխատում են մօտաւորապէս 30,000 բանուորներ։ Օդոստոսից սկսած մինչև յունվար ամիսը նաւթահանքերը, մեծ մասամբ, կանգ առան։ Չորս ամիս շարունակ 30,000 բանուոր մատնուեց զրկանքների։ Եթէ իւրաքանչիւր բանուորի օրավարձը հաշուելու լինենք միջին չափով 80 կոպէկ, ուրեմն Բալախանիի բանուորութիւնը կորցրեց մօտ երեք միլիոն բուբլի օրավարձ։

ԵՐՐՈՐԴ ԿՈՏՈՐԱԾԸ ԲԱԳԻՈՒՄ

20—25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1905 Թ.

Բագուն մի անգամ էլ կոտորածի բեմ հանդիսացաւ. այդ մեղսոտ քաղաքի փողոցներում մի անգամ էլ անմեղ արիւնը հոսեց, գեղեցիկ շինութիւններ հրդեհի զոհ գնացին։

Բագուի երրորդ կոտորածը ուշագրաւ է առանձնապէս այն տեսակէտից, որ առաջին երկու կոտորածների ժամանակ վարագոյրի տակ կազմուող ծրագրները այս անգամ երևան եկան բացարձակօրէն։

Եւ եթէ դուք ուշադրութեամբ հետևէք այդ կոտորածի ընթացքին, կը տեսնէք, թէ ինչպէս նա լոյս է սփռում այն բոլոր ջարդերի վրա, որոնք պարբերաբար տեղի էին ունենում այս և այն տեղերում թուրքերի ձեռքով։

Հոկտեմբերի 17-ին հրատարակուեց քաղաքական ազատութիւն խոստացող կայսերական յայտնի մանիֆեստը, մանիֆեստ՝ արցունքի և արեան։

Տօնում էր այդ օրը լայնածաւալ Ռուսաստանը, դարաւոր խաւարի ու բռնութեան տակ հեծող բազմամիլիոն ժողովուրդը, տօնում էր և Բագուն։

Հոկտեմբերի 19-ին Պարապետի վրա հաւաքուեց ահագին ժողովուրդ, որը բազմաթիւ կարմիր դրօշակներ պարզած, փառահեղ միտինգից յետոյ, դիմեց բանտ՝ քաղաքական յանցաւորներին ազատելու համար. սակայն բանտի պահակը կրակ բացեց ժողովրդի վրա, որից սպանուեցին և վիրաւորուեցին տասից աւելի մարդիկ։ Արիւնով էր հարթուում այն ճանապարհը, որտեղից պիտի անցնէին քաղաքական յանցաւորները և անցան նրանք, բայց ոչ բոլորը. Նակաշիձէի սպանութեան մէջ մեղադրուողները,—5 հայեր և 2 դեմոկրատներ, չարժանացան մանիֆեստի շնորհին։

Այդ նոյն օրը երեկոյեան պահուն «Դաշնակցութիւնը» առիթից օգտուելով, «կեցցէ ազգերի համերաշխութիւնը» մակագրութիւն կրող սպիտակ դրօշակ պարզած մեծ հանդիսով շրջեց Թուրքական թաղերը։

Եւ այդպիսով հոկտեմբերի 19-ը մթնեց ազատութեան առաջին հմայքների ոգևորիչ տպաւորութիւնների տակ։

Սակայն այլ առաւօտ ծագեց Բագուի, մասնաւորապէս հայերի վրա հոկտեմբերի 20-ին։ Ի՞նչեր էին կատարուել այդ մէկ օրուայ ընթացքում, Աստուած գիտէ. խաւար գիշերուայ մէջ ծնունդ էր առել սև ռէակցիան. իսկ Բագուն իր տականքներով, իր մութը, անգիտակ մասսաներով, ներկայացնում էր խուլիգանական մի հնոց։

Այդ օրը կազմուեց հայրենասէրների մանիֆեստացիան, որի շուրջը խմբուեցին Բագուի տականքները—Թուրքեր, կօզակներ, լէկզիներ և ռուս պատրիօտներ։ Ահա այն քառադաս խուժանը, որ կայսեր պատկերը առած դուրս էին եկել նախորդ օրուայ տպաւորութիւնը ջնջելու, կարմիր շարժումը խեղդելու համար։

Օդը լցուեց ռէակցիոն տէմպով, մթնոլորտը ծանրացաւ որպէս կապարը, քաղաքի փողոցները դատարկուեցին։ Ասպարէզը մնաց կոպիտ ուժին, հրդեհումներին. մանիֆեստացիայի անուան տակ կատարուեց մի նոր ջարդ։

Նորից տեղի ունեցաւ հայկական կոտորածը, բայց աւելի ձևակերպուած, այսպէս ասած, լեգալ կոտորած։

Թուրքին միացել էր այս անգամ լէկզին, պատրիօտ ռուսը, կօզակը, որոնք վերցրած իւղոտ լաթեր, նաւթի բանկաներ, հանդերձ հրդեհաձգութեան բոլոր պարագաներով, շրջում էին երաժշտական խմբի ուղեկցութեամբ։

Եւ ջարդերն ու հրդեհումները սկսուեցին, դիմադրութիւն չը գտնելով իշխանութիւնների կողմից։

Հայրենասիրական թափորը կանգ առաւ նախ Տարգովայեա փողոցում, ուր յարձակման և կողոպուտի ենթարկուեցին Մէլիքեանի լուսանկարչական արհեստանոցը և Սաղաթէլեանի տունը. վերջինս ենթարկուեց նաև ռմբակոծութեան. պատճառաբանելը հեշտ էր. պատուհաններից, իբր, կրակել էին։ Եւ ահա զալպերը մի կողմից, կողոպուտը՝ միւս, աւերում ու սպանում էին պատահածին անխնայ։

Թափօրը վերսկսեց հոկտեմբերի 21-ին։ Նիկոլաևեան փողոցում հրդեհեցին Միրզաբէկեանի, Շագիդանեանի, Բուդուղեանի և շարքով ընկած 13 հոյակապ տներ։ Այդ փողոցում սպանուեց շատ հայերի թւում նաև Մեսրովբ քահանայ Խոռխոռունին։

Հոկտեմբերի 22-ին նոյնից վերսկսուեց Թափօրը և այս անգամ կողոպտուեցին և հրդեհուեցին մի շարք տներ Բալախանեան և Ստանիսլաւսկոյ փողոցների անկիւնում։ Մէջ ընդ մէջ խօսում էր և թնդանօթը։

Այդ նոյն օրը կողոպտուեցին, ի միջի այլոց, Պետրոսեանի, Առաքելեանի և Արզումանեանի խանութները։

Հրդեհումները, կողոպուտներն ու սպանութիւնները շարունակուեցին մինչև հոկտեմբերի 24-ը։ Այդ օրը խուլիգանների մի խումբ յարձակուեց հայոց անկելանոցի վրա և հրդեհեց չորս տուն։ Անկելանոցում սպանուեցին 6 կին և երեխաներ. սակայն ներսից տեղի ունեցաւ ուժեղ դիմադրութիւն և խուլիգանները փախան, թողնելով տասնեակներով դիակներ անկելանոցի շուրջը։ Մի յարձակում էլ եղաւ Միրզաբէկեանի ծխախոտի գործարանի վրա, բայց յետ մղուեց։

Նման ցոյցեր, կոտորածներ տեղի ունեցան նաև Բայիլովում, ուր եկեղեցում մաղթանք կատարելուց յետոյ խուժանը, բաղկացած պատրիոտներից, թուրքերից և լեզգիներից, կայսեր պատկերով և ազգային դրօշակներով ուղևորուեց դէպի քաղաք միանալու մեծ թափօրին։ Այդ տեղի ունեցաւ հոկտեմբերի 21-ին։

Ճաշից յետոյ, ժամը 4-ին, խուլիգանները փոքրիկ խմբերով վերադարձան Բայիլով բեռնաւորուած թալանի իրերով, իսկ նրանցից շատերը նաև հարբած դրութեան մէջ. հասկանալի է, կողոպտուած էին նաև խմիչքների խանութներ։ Փողոցներում այդ խմբերը գազանութիւններ գործեցին։

Ահա մի խեղճ հայ մշակ. «Бей его армяшку», գոռաց մօտեցող խումբը և անմեղ մարդը պատառ պատառ եղաւ։

Ահա մի հայ կին երեխան գիրկը կանգնած դռանը. գազանացած ամբոխը լկտի հայհոյանքներով այդ կնոջը իր երեխայով առաւ ոտների տակ և տրորեց։ Նման գազանութիւնների զոհ գնացին Բիբիէյբաթում վեց հայ մշակներ։ Բացի այդ Բայիլովում գազանացած ամբոխը յարձակուեց և ուզում էր այրել ռուս Նազարովի տունը, ուր ապրում էին 300-ի չափ հայեր։ Նրանք

հազիւ կարողացան փախչել, ազատուել. թէև նրանցից երեքը դարձեալ ընկան ամբոխի ձեռքը և սպանուեցին գազանաբար։ Չորքը ազատեց այդ տունը հրդեհից։

Հոկտեմբերի 24-ին ժողովրդի կրկնակի դիմումներից յետոյ Ֆադդէևը հրամայեց դադարեցնել հայրենասիրական թափօրները և Բագուն մի փոքր խաղաղուեց. բայց ուր, ամբողջ թաղեր 20-ից աւելի հոյակապ տներով մոխիր էին դարձել, բազմաթիւ խանութներ կողոպտուել և աւերուել էին։ Կորուստը միլիոնների էր հասնում։

Մարդկային զոհերի թիւը նոյնպէս մեծ էր. քաղաքում սպանուել էին 60-ից աւելի մարդիկ, իսկ Բայիլովում՝ 35. վիրաւորներ աւելի շատ էին. ի հարկէ նրանք մեծ մասամբ հայեր էին—անմեղ հայեր։

Սակայն նողկալին այնքան կոտորածն ու աւերը չէր, որքան այն, որ այս դէպքում էլ ադմինիստրացիան չքմեղ ձևացաւ, չը նայած ամենից շատ գործում էին թնդանօթները և կօզակների զալպերը։

Եւ ադմինիստրացիայի չքմեղութիւնը ձևակերպուեց։ Այդ աւերումների որպէս ղեկավար նոյեմբերի սկզբին բանտարկուեց Թուրք խուլիգանների գլխաւոր Ասլան Աշուրովը։ Բայց մի քանի օրից յետոյ, պատմում են, գարնիզօնի գլխաւոր գնդապետ Տօլմաչովը դիմել էր հայերին և առաջարկել դադարեցնել Աշուրովի դէմ սկսած դատը, նախազգուշացնելով, որ կարող են ոչ ցանկալի բարդութիւններ առաջ գալ։

Ճարպիկ կերպով կազմում էին բոլոր կոտորածները, ճարպիկ կերպով չքմեղ ձևանում և այդ բոլորը տանում կապում հայ-թուրքական ընդհարումների հետ։

Ով զազիր պոլիտիկա . . .

Բագուում տեղի ունեցող այս օրինակ կոտորածները արձագանք չը գտան հայաբնակ Գեօկչայի և Շամախիի գաւառներում, թէև հայերի թիւը այդ տեղերում խիստ աննշան էր։

Կոտորածներ տեղի չունեցան շնորհիւ նրա, իբրև թէ թուրքերի մեծ մասը սիւննի լինելով հակառակ էին ընդհարումներին, բացատրում են շատերը։ Սակայն այդ չէր պատճառը, այլ այն, որ այդտեղ պրովակացիան չէր գործում և կառավարութիւնը

շահ չունէր մի այդպիսի տեղ կոտորած սարքելուց։ Լոկ այդ հանգամանքը բաւական եղաւ առաջն առնելու այն ընդհարումների, որոնք մի քանի անգամ նկատելի դարձան այդ շրջաններում և Շամախի քաղաքում։

Այս մի աւելորդ ապացոյց էր այն բանի, որ առանց կառավարութեան գիտութեան կոտորածներ և ընդհարումներ տեղի չէին ունենում։



ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳ.

Երևանի նահանգը ընկած է Անդրկովկասի հարաւային ծայրում, ունենալով սահմաններ՝ հարաւարևմտեան ամբողջ երկարութեամբ Պարսկաստանը, սահմանագիծ ծառայելով Արաքսը, իսկ միւս կողմերից Կարսի շրջանը, Թիֆլիսի և Գանձակի նահանգները։

Երևանի նահանգը բռնում է 23,500 քառակուսի վերստ տարածութիւն, ունենալով մեծ մասամբ լեռնային աղքատ բնութիւն, զուրկ անտառներից։ Փոքր մասը միայն, առանձնապէս Արաքսի և Արփաչայ ու Նախիջևան գետերի հովիտները ներկայացնում են պտղաբեր, արգաւանդ դաշտեր՝ պիտանի բարձր կուլտուրական բերքերի մշակութեան համար։

Երևանի նահանգի ազգաբնակութեան ընդհանուր թիւը, համաձայն 1897 թ. միօրեայ վիճակագրութեան, հասնում է 829 հազարի *), որից հայերը կազմում են 434 հազար, թուրքերը՝ 352 հազար և զանազան ազգութիւններ՝ 43 հազար։ Ամբողջ նահանգում հաշուում են 1,301 գիւղ, որից հայաբնակ են 342-ը. հայ գիւղերը բազմամարդ են։

Նահանգը բաժանւում է եօթ գաւառների։

---

*) Ամբողջ Կովկասում հայերի թիւը հասնում է 1130 հազարի, որից 434 հազարը ապրում են Երևանի նահանգում, 294 հազարը՝ Գանձակի նահանգում, 219 հազարը՝ Թիֆլիսի նահանգում, 73 հազարը՝ Կարսի շրջանում, 50 հազարը՝ Բագուի նահանգում, 14 հազարը՝ Բաթումի շրջանում, իսկ 46 հազարը՝ մնացեալ նահանգներում։

Հայ և Թուրք ժողովուրդների համեմատական թիւերը Երևանի նահանգի 7 գաւառներում վերցրած 1897 թ. միօրեայ վիճակագրութիւնից հազարների հաշուով։

№№	ԳԱՒԱՌՆԵՐ.	Ընդհան. թիւը	Հայերը	Թուրքերը	Զանազ. ազգեր.
1	Այէքսանդրապոլի . .	165	137	7	21
2	Նոր-Բայազէտի . .	122	81	38	3
3	Էջմիածնի . .	124	76	45	3
4	Սուրմալուի .	89	27	55	7
5	Երևանի. .	152	58	87	7
6	Շարուր-Դարալագեազ.	76	21	55	—
7	Նախիջևանի .	101	34	65	2
	Բոլորը միասին . .	829	434	352	43

Հետևելով Երևանի նահանգում տեղի ունեցած ընդհարումների ընթացքին, նկատում է հետևեալը։

Հայ-Թուրքական ընդհարումը այստեղ մեծ ծաւալ չէ ստացել և այնքան տևողական բնաւորութիւն չի կրում, ինչպէս, օրինակ, Գանձակի նահանգում։

Զը հրաժարուելով այն կարծիքից, որ մենք յայտնեցինք այս գրքի յառաջաբանում կառավարութեան դերի նկատմամբ այս խնդրում, կասենք, որ Երևանի նահանգում հայ-Թուրքական ընդհարման աւելի մեծ ծաւալ չընդունելուն *) նպաստեցին երկու հանգամանքներ։

Նախ՝ որ Երևանի նահանգում, ինչպէս տեսանք մեր վերը բերած թիւերից, հայ ազգաբնակութիւնը կազմում է խոշոր մեծամասնութիւն, միանգամայն դէմ լինելով ընդհարումներին։ Այս կարծիքը աւելի ակներև է դառնում, երբ ուշի ուշով հետևում

*) Պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա Երևանի նահանգի կերած գոյքային վնասների քանակը, համաձայն կողոպտած գիւղացիների ներկայացրած ցուցակների, հասնում է 3,881,557 ր., իսկ մասնաժողովների ցուցակներով 1,839,521 ր.

ենք ընդհարումների ընթացքին տարբեր գաւառներում։ Այսպէս ամենախոշոր աւերիչ ընդհարումները տեղի ունեցան Նախիջևանի և Շարուր-Դարալագեազի գաւառներում, ուր Թուրք ազգաբնակութիւնը կազմում է բացարձակ մեծամասնութիւն։

Ընդհարումները աւելի թոյլ չափով արտայայտուեցին Երեւանի և Էջմիածնի գաւառներում, ուր հայ ազգաբնակութիւնը համեմատաբար մեծ թիւ է կազմում։

Իսկ Ալէքսանդրապոլի և Նոր-Բայազէտի գաւառներում, ուր հայերը բացարձակ մեծամասնութիւն են կազմում, ընդհարումներ միանգամայն տեղի չունեցան։

Երկրորդ՝ Երևանի նահանգը, որպէս հարաւային ծայրագաւառ, կազմում է երկու ասիական պետութիւնների—Պարսկաստանի և Տաճկաստանի սահմանագիծը։ Այդ սահմանագծի վրա ապրում են թափառական աւազակաբարոյ ցեղեր, որոնք յաճախ տեղացի քրդերի հետ միացած կողոպուտի յուսով արշաւում են սահմանից ներս։

Բացի այդ, Տաճկաստանը այնքան էլ հաշտ աչքով չի նայում Ռուսաստանի Կովկասի տիրապետութեան վրա, չը հրաժարուելով այն մտքից, որ այդ երկիրը երբ և իցէ նորից կանցնի իր ձեռքը։

Ահա այսպիսի դրութիւնների շնորհիւ այդ սահմանը կարելի է համարել ընդ միշտ անապահով։

Այդ սահմանի վրա մի տարր, որին Ռուսաստանը կարողանար վստահել, հայ ժողովուրդն է, որին նա, յամենայն դէպս, պիտի խնայէր իր շահերի տեսակէտից։ Սրա լաւ ապացոյցը կարող է ծառայել Սուրմալուն—Տաճկաստանի սահմանակից այդ գաւառը, ուր հայերը որքան էլ փոքրաթիւ, այնուամենայնիւ այնտեղ խոշոր ընդհարումներ տեղի չունեցան և միանգամ բռնկւած ընդհարումը անմիջապէս զէնքով ճնշուեց։

Թերևս Նախիջևանի—Պարսկաստանին սահմանակից այդ գաւառում տեղի ունեցող սոսկալի աւերը գար հերքելու մեր այս կարծիքը, սակայն չը պիտի մոռանալ այդ գաւառի նկատմամբ նախ այն, որ այդտեղ մեծ դեր խաղացել են կալւածատէր խաները, որոնք ահագին ազդեցութիւն ունեն Թուրք մասսայի վրա և երկրորդ այն պագրօմը և հրդեհը, որ տեղի ունեցան Նախիջևանի Թուրքաց բազարում կօզակների ձեռքով և այն կոտորածը, որ տեղի ունե-

ցաւ, նոյնպէս կօզակների ձեռքով, մի օր յետոյ Ջահրի գիւղում. այդ, մեր կարծիքով, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ուղղումն մի սխալ գործողութեան։

Այս փոքրիկ ակնարկից յետոյ մենք անցնում ենք բուն դէպքերին, սկսելով Երևան քաղաքից, թոյլ տալով, որ փաստերը իրենք գան պարզաբանելու, թէ ինչպէս ընդհարումները առաջ էին տարւում բաւական վարպետօրէն, չը մոռանալով հիմնական խնդիրները։

ԵՐԵՒԱՆ

Երևանը նահանգական քաղաք է ընկած Հրազդան (Զանգի) գետի վրա, իր բլրապատ շրջակայքով, որի հարաւային կողմից բացւում է Արարատեան ընդարձակ դաշտը Մասիսի սրածայր գագաթներով, որոնք որպէս մի զոյգ հսկաներ իշխում են հեռաւոր տարածութիւնների վրա։

Երևանը այնքան էլ գեղեցիկ քաղաք չէ. նրա մի քանի մասերը մինչև այսօր էլ կրում են իրենց վրա պարսկական խաների տիրապետութեան օրերի կնիքը։ Սակայն նրա զարդը կազմում է հարուստ բուսականութիւնը, ծառազարդ պարտէզներն ու ընդարձակ տարածւած խաղողի այգիները, որոնց մէջ թաղւած գարնան ամիսներին նա նմանում է մի դրախտի։

Երևանը թէև յայտնի իր սուր փոփոխական և անառողջ կլիմայով, ներկայանում է արտահանութեան մի վայր և մթերքների ու դրամի շրջանառութեան յարմար կենտրոնատեղի, մանաւանդ երկաթողու գծի կառուցելուց յետոյ, որով այժմ նա կապւած է Թիֆլիսի և Պարսկաստանի հետ։

Շնորհիւ այգիների և պտղատու պարտէզների Երևանը արտահանում է ամենաընտիր կօնեակ, գինիների մի քանի տեսակներ, թարմ պտուղներ և մանաւանդ կօնսերվաներ։ Բացի այդ, նահանգի ամենամեծ հարստութիւն կազմող բամբակի առուծախը, որի շրջանառութիւնը հասնում է աւելի քան հինգ միլիօն գումարի, կատարւում է Երևանի շուկայում, ահագին զարկ տալով քաղաքի վաճառականական գործին։

Քաղաքը մի ընդարձակ և երկար Աստաֆեան անուն կրող փողոցով բաժանւած է երկու մասի, որոնցից մէկում գլխաւորապէս ապրում են Թուրքեր, իսկ միւսում հայեր, թէև հայ ու Թուրք մի քանի տեղերում ապրում են խառն։ Այսպէս Դամբրբուլաղը, մի մեծ, բայց յետ մնացած թաղը, ընկած քաղաքի

հարաւարևելեան մասում, զուտ թրքաբնակ է. Խանլըղբաղը՝ կանոնաւոր փողոցներով և շինութիւններով, ընկած քաղաքի հակառակ մասում, զուտ հայաբնակ է. իսկ մի քանի թաղերում, ինչպէս են Շահարը, Շէնթաղը, Կօնդը և Զորագիւղը, հայ և թուրք ապրում են խառը։ Ինչ վերաբերում է շուկային, որը գտնւում է քաղաքի ներքին մասում, այդ արդէն ընդհանուր է։

Մեծ առևտուրը գտնւում է հայերի ձեռքում, իսկ մանր առևտուրը և զանազան զբաղմունքներ՝ թուրքերի։ Թուրքերի զբաղմունքների մի ճիւղը կազմում է թէյատներ (ղայֆախանա) պահելը, ուր բուն են դնում թուրք ժողովրդի զբաղմունք չունեցող, անհանգիստ տարրերը, ինչպէս գինետները հայերի մէջ։

Այս թէյատներից, ահա, առաջին անգամ բացւեցին հայերի վրա ատրճանակներ, ինչպէս այդ կը տեսնենք իր տեղում։

Երևանի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 29,000, որից 13,500ը հայեր են, 13,000ը թուրքեր, իսկ 2,500ը զանազան ազգեր։



ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

20—22 ՓԵՏՐՎԱՐԻ 1905 Թ.

Բագուի փետրվարեան սարսափներից անցել էր ամբողջ երկու շաբաթ։ Ցուզմունքներ բոլորովին նկատելի չէին Երևանի հայ և Թուրք ժողովուրդների մէջ։ Գաւառներում ազգաբնակութեան տրամադրութիւնը աւելի ևս խաղաղ էր։

Բագուի սարսափները ոչ միայն Թշնամութիւն չէին ստեղծել, այլ և առաջ էին բերել բուռն զայրոյթ, որը մի առանձին Թափով արտայայտւում էր երկու ժողովուրդների մէջ Բագուի գազանութիւնները կազմակերպողների դէմ։ Դեռ աւելին կասենք. այդ գազանութիւնները կարծէք մօտեցրել էին երկու ժողովուրդներին միմեանց։ Բագուից ստացւող սոսկալի նկարագրութիւններ պարունակող լուրերն ու հեռագրները յաճախ մտքերի և բարեկամական զգացմունքների փոխանակութեան առիթ էին դառնում նրանց մէջ այդ ծանր օրերում։

Մի խօսքով, չը կար պատճառ մտածելու, որ կարող են տեղի ունենալ նման արիւնալի ընդհարումներ երկու դրացի ժողովուրդների մէջ նաև Երևանում։

Այսպէս էր դրութիւնը արտաքուստ. ի՞նչ էր ծրագրւում ներքուստ՝ չը գիտենք . . .

Փետրվարի 20-ը կիրակի էր, հայերի համար աշխատանքից ազատ օր։ Ձմեռւայ կապանքներից նոր ազատւած երկնակամարը մերթ ընդ մերթ հնարաւորութիւն էր տալիս արեգակին ճառագայթներ կաթեցնել կէս եւրոպական և կէս ասիական քաղաքի վրա։ Բնութեան այդ շուտանցուկ ժպիտը սովորականից աւելի թւով ժողովուրդ էր գրաւել շուկայ, ուր Երևանի հայ ազգաբնակութիւնը շտապել էր կիրակնօրեայ պաշար գնելու համար։ Այդ շուկան կամ տեղական բառով, մէյդանը այն տեղն է, ուր ամենից շատ շփւում են հայ և Թուրք տարրերը։

Եւ ահա ուղիղ առաւօտեան ժամը 10-ին, առօրեայ սովորական զբաղմունքի միջոցին, երբ մարդու մտքով ընդհարման մասին կասկած անգամ չէր կարող անցնել, յանկարծ պայթեց մի սոսկալի իրարանցում։ Շուկայից դէպի թաղերը ձգւող բոլոր փողոցներով կատաղի փոթորկից էլ ուժգին թափով հոսում է մարդկային հեղեղը սարսափած, շնչասպառ աղաղակելով. «Թուրքերը մէյդանում հայերին կոտորում են»։ Ոստիկանները խաղաղ քաղաքը աղմկեց, կերպարանափոխ եղաւ. հայերը փախան իրենց մասը, Թուրքերը՝ իրենց և մի վայրկեանի մէջ շուկան դատարկուեց, ամայացաւ։ Թէ այդ ոստիկին որպիսի մի սարսափ էր տիրել քաղաքին, այդ նկարագրել անկարելի է։

Քաղաքային հիւանդանոցին մօտեցան մէկը միւսի յետևից կառքեր գնդակահար, արիւնաներկ վիրաւորներով։ Շուտով նրանց թիւը հասաւ 14-ի, որոնցից 11-ը՝ 3 սպանուած և 8 վիրաւոր, հայեր էին, իսկ 1 սպանուած և 2 վիրաւոր՝ Թուրքեր։ Փաստը ակներև էր. Թուրքերի կողմից տեղի էր ունեցել անսպասելի յարձակում։

Առիթ չկար։ Գլխաւոր շուկայից մի փոքր հեռու ցախի մէյդան կոչուած տեղում երկու Թուրքեր կուել էին և ատրճանակներ կրակել ու միմեանց վիրաւորել։ Ահա հէնց այդ վայրկեանին դուրս էին եկել մօտակայ Թէյատնից Թուրքեր և այդտեղ եղող հայերի վրա ատրճանակներ կրակել։ Այդ տրաքոցների հետ միաժամանակ շուկայի երկու այլ կէտերում, այն է մսավաճառների (դասաբխանայի) շարքում և Զառաբի քարվանսարայի մուտքի մօտ եղող Թէյատներից նոյնպէս դուրս էին եկել Թուրքեր և կրակել աջ ու ձախ հայերի վրա։ Եւ այս բոլորը տեղի էր ունեցել ընդամենը մի քառորդ ժամում։

Հայերի վրդովմունքին չափ չկար։ Բագուի Թուրքական գազանութիւններից յետոյ Երևանում դարձեալ Թուրքերն էին կոտորածի պատճառ դառնում։ Բայց ընդհանուր շահը մի անգամ ևս հարկադրեց հային լռել։ Դուրս եկան երկու կողմերից ազդեցիկ մարդիկ և շրջեցին փողոցները՝ ամենքին հաշտութիւն քարոզելով։ Ապա քաղաքային խորհրդի դահլիճում հաւաքուեցին երկու կողմերից բաւականաչափ մարդիկ, ուր կազմուեց հանգստացնող հեռագիր նահանգի մի քանի կենտրոնները ուղարկելու համար և ընտրուեց երկու կողմերից հաւասարաչափ թւով մի բազմամարդ խաղաղարար մարմին քաղաքի մէջ շրջելու և կարգ պահպանելու համար։

Այդ օրը նոր ընդհարումներ այլևս տեղի չունեցան։

Բացուեց յաջորդ առաւօտը, ճերմակ առաւօտ. քաղաքը ծածկուած էր միապաղաղ ձիւնի հաստ շերտով։ Փողոց դուրս եկած խաղաղարար յանձնաժողովի անդամները համոզում էին խանութատէրերին բացել խանութները և գործի ՏՏալ։ Եւ շուկան բացուեց. բայց շատ կարճատև էր այդ բացումը։

Ժամը 9-ը հազիւ կար, երբ տեղի ունեցաւ նախորդ օրւայ իրարանցումը աւելի մեծ չափով։ Շուկայում պայթեցին ատրճանակներ. խռնուած ամբոխը սկսեց փախչել գլուխը կորցրածի պէս. շուկան մի ակնթարթում դատարկուեց և բոլոր խանութները փակուեցին։

Նորից սպանուած էին երկու հայեր։ Այս լուրը մի այնպիսի յուզում առաջ բերեց քաղաքային այգու մօտ խմբուած հայերի մէջ, որ վերջիններից մի քանիսը կրակ բացին մի խումբ անցորդ Թուրքերի վրա։ Ատրճանակներ պայթեցին նաև ոստիկանատան մօտ, Աստաֆեան փողոցում և քաղաքի զանազան մասերում։ Մի վայրկեան օդը լցուեց տրաքոցներով և վառօդի ծխով։ Այս բոլորը տևեց ընդամենը մի ժամ, որի ընթացքում ընկած զոհերի թիւը գերազանցեց նախորդ օրւայ զոհերի թիւին, սակայն այս անգամ Թուրք զոհերի թիւը մեծ էր։ Հայերից սպանուել էր մէկը և վիրաւորուել էին 6-ը, իսկ Թուրքերից սպանուել էին 7-ը և վիրաւորուել 12-ը։

Դրութիւնը այժմ լուրջ դարձաւ. քաղաքը բաժանուեց երկուսի, նման զինուած երկու բանակների, թէև մասսաների մէջ ընդհարումներ առաջացնելու ոչ մի տրամադրութիւն չկար։

Երրորդ օրը, փետրվարի 22-ին, տեղի ունեցաւ կրօնականթափօրը, օրինակ վերցնելով Բագուից, և ըստ երևոյթին մտքերը սկսեցին աստիճանաբար խաղաղուել, թէև անհատական սպանութիւններ մի քանի օր տեղի էին ունենում քաղաքի այս և այն մասում։

Երևանի առաջին ընդհարումը տարաւ երկու կողմերից 54 սպանուածներ ու վիրաւորներ. մի քանի հայ խանութներ և կաշէգործարաններ կողոպտուեցին և կեանքը քաղաքում, ինչպէս և առևտուրը, 5 օր շարունակ կանգ առաւ։

Որպիսի՞ պատճառ արդեօք կարող էր հիմք ծառայել այսպիսի արիւնահեղ ընդհարման։

Ահա այս հարցին պատասխանելու համար մենք առաջ կը բերենք երկու դէպք, որոնք սերտ կերպով կապուած են Երևանի անցքերի հետ։

Ինչպէս մենք տեսանք, Բագուի փետրվարեան սարսափներից յետոյ առաջին հայ-Թուրքական ընդհարումը տեղի ունեցաւ Երևանում։ Մենք տեսանք նոյնպէս, որ Բագուի դէպքերը սկսեցին Գարապետի վրա Բաբաև ազգանունով մի Թուրքի սպանութիւնով, որը յարձակւել էր մի խումբ հայերի հետ կանգնած մի հայ զինուորի վրա և վիրաւորել նրան. մինչդեռ Երևանում նման որևէ միջնադէպ տեղի չունեցաւ։

Սակայն Երևանում ընդհարումից մի օր առաջ տեղի ունեցաւ մի սպանութիւն, որը ահագին լոյս է սփռում այս խնդրի վրա։

Երևանում ապրում էր Ուրազով ազգանունով մի ռուս բժիշկ, որը, չնորհիւ պաշտօնական շրջանների հետ իր ունեցած կապերի, հասել էր մինչև նահանգական բժշկի աստիճանի։ Այդ բժիշկը երկար տարիներ ապրելով Երևանում և տուն ու տեղի տէր դառնալով, շատ մօտից ուսումնասիրել էր տեղական բարբառները, վարք ու բարքը։ Նա շատ լաւ ճանաչում էր հայ ժողովրդին իր ձգտումներով և Թուրք ժողովրդին՝ իր հակումներով։ Այդ բոլորից յետոյ նա յայտնի էր որպէս ծայրահեղ հայատեաց, իսկ Թուրքերին բարեկամ մարդ, միևնոյն ժամանակ համարելով իսկական ռուս մարդ իր նեղ հասկացողութեամբ։

Փետրվարի 19-ին երեկոյեան ժամը 7-ին քաղաքի մէջ սպանուեց յիշեալ բժիշկ Ուրազովը, իսկ յաջորդ առաւօտ փետրվարի 20-ին տեղի ունեցաւ Թուրքերի յարձակումը հայերի վրա։

Բացի այս, ընդհարման առաջին օրը, երբ հայ և Թուրք ներկայացուցիչներ հաւաքուեցին քաղաքային խորհրդի դահլիճը խորհրդակցելու քաղաքի խաղաղութեան մասին, միաձայն վճռեցին դիմել նահանգապետին և խնդրել ժամանակաւոր կերպով հեռացնել պաշտօնից ոստիկանապետ Բալուևին և նրա տեղ նշանակել մէկ ուրիշին։ Թէև այս առաջարկը նահանգապետի կողմից մերժուեց, բայց անվստահութեան փաստը մնաց փաստ։

Ահա այն երկու դէպքերը, որոնք որոշ չափով լոյս են սփռում Երևանի առաջին ընդհարման վրա։

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

23—26 ՄԱՅԻՍԻ 1905 Թ.

Երևանի երկրորդ ընդհարումը, որը աւելի երկարատև եղաւ և արիւնալի քան առաջինը, աւելի ևս անսպասելի էր։ Նախ՝ առաջին ընդհարման մեղքը ծանրանում էր Թուրքերի վրա. այդ բանը խոստովանում էին նոյն իսկ իրենք Թուրքերը։ Երկրորդ՝ առաջին ընդհարման ժամանակ աւելի չափով զոհեր ունեցան Թուրքերը, Թէև առիթը նրանք տուին։ Եւ երրորդ՝ առաջին ընդհարումից յետոյ հայերը ոչ մի առիթ բաց չէին Թողնում Թուրքերի հետ լաւ յարաբերութիւնների մէջ լինելու համար։

Այսպէս, մարտի 21-ին Քելբալայի մուշտէյիդի մահուան առիթով հազարաւոր հայ ժողովուրդը իր բոլոր դասակարգերով այցելութիւն կատարեց մզկիթում համախմբուած Թուրք ժողովրդին իր ցաւակցութիւնը յայտնելով, ուր երկու կողմերից տեղի ունեցան բազմաթիւ ճառախօսութիւններ համերաշխութեան մասին։

Երևանի երկրորդ ընդհարումը անսպասելի էր և այն տեսակէտից, որ նա տեղի ունենալով Նախիջևանի Թուրքական բարբարոսութիւններից անմիջապէս յետոյ, յուզմունքներ սպասելի էին հայերի կողմից. մինչդեռ այդ պայմաններում էլ նրանք գործ էին դնում ամեն մի զգուշութիւն ընդհարումների առիթ չը տալու համար։

Բայց ի զուր. ճարպիկ ձեռքը գործում էր և տգէտ Թուրք մասսան խրախուսանք գտնելով գալիս էր գազանութիւնների վրա նոր գազանութիւններ աւելացնելու։

Բագուի և Երևանի փետրվարեան առաջին ընդհարումներից երեք ամիս անց, մայիսի 10-ին, կոտորածն ու աւերը բռնկուեց Նախիջևանի գաւառում։ Այդտեղ կատարուող բարբարոսութիւնները ցնցեցին ամբողջ Կովկասը։ Երկու շաբաթ շարունակ մէկը միւսից սոսկալի լուրեր տարածւում էին Կովկասի բոլոր ծայրե-

ը՝ ծանր վիշտ պատճառելով անկեղծ ու անարատ սրտերին։ Հասկանալի է, թէ որքան ծանր կը լինէր Նախիջևանին այնքան մօտ ընկած Երևանի հայ ժողովրդի վիշտը։

Ահա, այդ ծանր վշտերի տակ, մայիսի 23-ի ցերեկւայ ժամը 2-ին պայթում է Երևանի շուկայում երկրորդ ընդհարումը։ Ցուզմունքն ու յուսահատութիւնը երբէք այնպէս ուժեղ թափով չէին արտայայտւել հայ ժողովրդի մէջ, ինչպէս այս անգամ։ Փախչում էին հայերը մի արտասովոր իրարանցումով. փախչում էին շատերը նոյն իսկ առանց խանութները կողպելու. փախչում էին նոյնպէս թուրքերը. տեսարանը սրտաճմլիկ էր։

Ահա և կառքերը դիակներով ու վիրաւորներով. մէկ, երկու, երեք, հինգ, տաս—բոլորը հայեր։

Հայերի վրդովմունքին չափ ու սահման չկար։ Մի վայրկեան հնձւում էին անմեղ կեանքեր. յանցաւորները չէին ձերբակալւում։ Եւ մինչդեռ հայերը խմբւած ոստիկանատան շուրջը յուզմունքից չը գիտէին ինչ անել, այդ վայրկեանին քաղաքային այգու* միջով անցան մի խումբ թուրքեր։ Դրանք թէյատներում բուն դրած յայտնի «դաստաներից» էին, որոնք անցնում էին աբաների տակ զէնքեր պահած մի առանձին ինքնավստահութեամբ։ Ոստիկանութիւնը տեսնում էր այդ և լուռ էր, մինչև որ հայերը նրա ուշադրութիւնը դարձրին այդ դաստայի վրա։ Եւ մինչդեռ մի ոստիկան մօտեցաւ և մէկի ձեռքից առաւ հրացանը, միւսները խուսափեցին, որոնց յետևից հայերը կրակ բացին, բայց անհետևանք։ Այս բոլորին լուռ հանդիսատես էր ոստիկանութիւնը։

Երեկոյ եղաւ. գնալով զոհերի թիւը աւելանում էր։ 21 վիրաւորներից երկուսը միայն թուրքեր էին և մի մի աւօրի ու հրէայ, մնացեալ 17-ը հայեր էին. բացի այդ սպանւած էին նաև 8 հայեր։

Հայերի զայրոյթին չափ չկար. անմեղ մարդիկ շուկայի այս և այն կէտում թէյատներից և այլ անկիւններից վայրկենաբար բացւող կրակներից ընկել էին սպանւած և վիրաւոր։

Անցաւ ծանր ու անքուն գիշերը։ Զայրոյթն ու վիշտը հնարաւորութիւն չը տին հայերին աչք փակել։ Այդ զայրոյթը աւելի մեծացաւ, երբ առաւօտեան հայերի մի շարք խանութների վրա գտան

*) Քաղաքային այգին գտնւում է ոստիկանատան դիմաց։

խաչաձև նշաններ, մանաւանդ երբ յայտնի դարձաւ, որ գիշերը փորձել էին խանութները հրդեհել։

Թորհրդաւոր ձեռքը գործում էր. Թուրք մասսան չէր գիտակցում դրութիւնը և հայերի լռութիւնը համարելով վախկոտութեան նշան, աւելի ևս երես էր առնում։ Գաւառներից նոյնպէս նկատելի էր Թուրք մասսայի շարժումը դէպի քաղաք։ Թուրք մասսան զսպելու համար պէտք էր ոյժ ցոյց տալ. ահա այն դառն իրողութիւնը, որ գալիս էր հային ևս ոճրագործ դարձնելու։

Եւ հայի կուտակուած զայրոյթը պայթեց։

Առաւօտեան ժամը 11-ից սկսւեց մի սարսափելի որոտ. կրակում էին ատրճանակներից և հրացաններից. կրակում էին հրապարակներից, փողոցներից, դիրքերից, լուսամուտներից և կտուրներից։ Գնդակներ սուլում էին աջ ու ձախ ամեն կողմից. սուլում էին նաև քաղաքի բարձր Թաղերից։ Մի խօսքով պայթոցների ժխորը ծանրացել էր քաղաքի վրա մի խլացուցիչ Թափով։

Այդ ձևի հրացանաձգութիւնը շարունակւեց ամբողջ օրը փոքրիկ ընդմիջումներով. Թուրքերը փակւեցին իրենց տների մէջ, հրապարակը մնաց հայերի ձեռքին։ Սակայն հրացանաձգութիւնը տներից և դիրքերից շարունակւում էր։ Անշուշտ հարց կը ծագի, միթէ՞ քաղաքում զօրք չկար։ Զօրք կար, կային նաև պահակներ, բայց նրանք լոկ հանդիսատեսի դերումն էին։

Սոսկալի հրացանաձգութիւնը ընդմիջումներով շարունակւեց նաև 24-ի գիշերը և 25-ի առաւօտը, մինչև որ ժամը 11-ին ռումբը պայթեց մի Թուրքի տան մէջ՝ տանելով զոհեր։

Ահա այդ ժամանակ միայն խստիւ կարգադրւեց դադարեցնել կրակը, որից յետոյ մի կօզակ գնդակահարեց մի հայի և քաղաքը խաղաղւեց։

Թէ որքան զոհեր ունեցան Թուրքերը այդ 24 ժամ շարունակ Թափւող գնդակների տակ, ճիշտ յայտնի չէ։ Եթէ նայենք պաշտօնական Թւերին 35 սպանւածներ և մի այդքան էլ վիրաւորներ էին ունեցել նրանք. սակայն սարսափը շատ մեծ էր, այնքան մեծ, որ Թուրքերը մի ամբողջ շաբաթ սովից նեղւելով հանդերձ չէին վստահանում դուրս գալ տներից։

Ահա այս սարսափի շնորհիւ Երևանը խաղաղւեց, շրջականերից սպասւող խուժանը կանգ առաւ և նոյն իսկ մի քանի գա-

ւառներում տեղի ունեցող դէպքերը սանձահարեցին։

Չը մոռանանք յիշել, որ այս ընդհարման ժամանակ մի քանի հայերի խանութներ թեթև կերպով կողոպտեցին Թուրքերի ձեռքով, իսկ մի քանի Թուրքերի տներ կողոպտեցին հայերը։ Հայ ժողովրդի տականքը շատ հեշտութեամբ իւրացրեց Թուրք մասսայից վերցրած կողոպուտի այլանդակ օրինակը։

Ճիշտ է, մայիսի 25-ին հրացանաձգութիւնը քաղաքում դադարեց, բայց սարսափը, փոքրիկ ընդհարումները և անհատական սպանութիւնները մի ամբողջ շաբաթ շարունակւում էին։

Երթևեկութիւնը գաւառների հետ դադարեց. քաղաքի մէջ զգալի եղաւ պաշարի մեծ կարիք. խառն ազգաբնակութեան մասերից սկսւեց տեղափոխութիւնը։ Հայ և Թուրք տարրերը զատւեցին և համախմբւեցին, բազմաթիւ տներ մնացին անտէր անտիրական։ Բազազխանան նոյնպէս դատարկւեց. շատ հայեր տուն տեղափոխեցին իրենց խանութի ապրանքը հրդեհումներից ազատ պահելու համար։ Շուկան ամայացաւ և քաղաքի մասերում նոր շուկաներ ստեղծւեցին։ Մի քանի տեղերում շինեցին պատնէշներ։ Մի խօսքով քաղաքի տեսքը միանգամայն փոխւեց, իսկ գիշերները Թագաւորում էր մի գերեզմանային լռութիւն։

Ազգաբնակութեան համար ստեղծւեց մի ծանր կացութիւն, մանաւանդ Թուրք ազգաբնակութեան համար, որի մի խոշոր աղքատ մասը փոխադարձ օգնութեան բացակայութեան շնորհիւ տառապում էր քաղցից։

Ահա այն դրութիւնը, որը ստիպեց Երևանի Թուրքերին աղաղակ բարձրացնել, Բագու դիմել, Շէյխ-ուլ-իսլամին կանչել և վերջապէս հայերից հաշտութիւն խնդրել, խոստովանելով և ներկայացուցիչների ստորագրութեամբ վաւերացնելով, որ Երևանի ընդհարումների պատճառը իրենք են եղել։

Հաշտութեան բանակցութիւնները տեղի ունեցան նահանգապետի մօտ։ Հայերը Թուրքերից պահանջում էին խաղաղ մնալ, իսկ նահանգապետից՝ զինաթափ չանել հայերին և հեռացնել իրենց պաշտօններից ոստիկանապետին և պրիստաւ Մամեդ-բէկին. իսկ Թուրքերը նահանգապետից պահանջում էին յայտարարել զինւորական դրութիւն և հայ գաղթականներին հեռացնել քաղաքից։

Չը նայած այն բանին, որ երկու կողմերի առաջարկութիւն-

ները, բացի գաղթականների արտաքսումից, ընդունեց նահանգապետի կողմից, բայց և այնպէս թուրքերը շարունակեցին տների մէջ փակուած մնալ, մինչև որ Շէյխ-ուլ-իսլամը մայիսի 31-ին Նախիջևանից, այդ արիւնաներկ գաւառից, եկաւ։

Առաջարկութիւն եղաւ նոր թափօր կազմել, սակայն հայերը այս անգամ մերժեցին, յայտարարելով որ իրենք առանց թափօրի էլ իրենց հաշուած են համարում, եթէ միայն թուրքերը ընդհարումների նոր առիթներ չեն տալ։ Ահա դրանից յետոյ միայն թուրքերը վստահացան դուրս գալ շուկայ։

Երկրորդ ընդհարման ժամանակ Երևան եկան երկու ռուս թղթակիցներ Սինակևիչ և Սեօմին, որոնք Թիֆլիսի թերթերի մէջ հետևեալ ձևով լուսաբանեցին Երևանի այս երկրորդ ընդհարումը։

«Երևանի կեանքի շատ փաստեր ցոյց են տալիս, որ այստեղ, ինչպէս և ուրիշ տեղերում, ընդհարումները հայերի և մահմեդականների մէջ տեղի էին ունենում ոչ թէ կրօնական կամ տնտեսական, այլ քաղաքական հողի վրա։ Հայերի թշնամութիւնը թուրքերի հետ ոչ թէ երկու ազգերի թշնամութիւն էր, այլ երկու կուսակցութիւնների։ Առաջադիմական կուսակցութիւն կազմում էին հայերը, որպէս աւելի կուլտուրական տարր և հատ-հատ ինտելիգենտ մահմեդականներ։ Իսկ մահմեդական մասսան յետադէմ, տգէտ տարր է և կազմում է մի տեսակ սև հարիւրեակ։» —Գրում է Սենակևիչ։—Ապա շարունակելով նկարագրել, թէ ինչպէս մայիսի սկզբներին Բագուից թուրք ագիտատորներ գալով Երևան հող էին պատրաստում կոտորածի համար, թէ ինչպէս պրովակացիայի բնաւորութիւն ունէր գործակալութեան հեռագիրը (Կենգերլինսկու ուղարկածը) Նախիջևանի և Երևանի դէպքերի առիթով, աւելացնում է. «իշխանութիւնները ընդհարման առաջն առնելու ոչ մի միջոց գործ չէին դնում։»

Եւ ապա նորից նկարագրելով, թէ ինչպէս թուրքերը նախապատրաստուած յարձակում գործեցին հայերի վրա մի քանի տեղերում միաժամանակ՝ վիրաւորելով և սպանելով տասնեակներով հայերի և դրանից յետոյ թէ ինչպէս սկսուեց մահմեդական և հայկական ուժերի մոբիլիզացիա, բացականչում է. «Այդ բոլոր անցած գնացածի վրա ոստիկանութիւնը և զօրքերը կատարելապէս անտարբեր էին նայում, ոչինչ միջոցներ ձեռք չառնելով

և չը միջամտելով կոտորածին։»

«Աչքի առաջ ունենալով ընկերակցիս ի մի հաւաքած փաստերը և մտաբերելով վկաների ցուցմունքների անվերջ շարքը, մենք ակամայ համեմատում էինք մեր մտքի մէջ Երևանում կատարուած անցքերը այն դէպքերի հետ, որոնք տեղի ունեցան Քիշինևում, Գոմելում, Բագուում, ըստ ամենայնի նմանութիւնը զարմանալի էր։»

Այս տողերն էլ գրում է Սեոմին։

Եւ իսկապէս սրանք ճիշտ լուսաբանութիւններ էին Երևանի անցքերի։

ԵՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1905 Թ.

Մայիսեան դէպքերը մոռացութեան տրուեցին, քաղաքը կենդանացաւ, կանոնաւոր երթևեկութիւնը սկսուեց նոյն իսկ դէպի Հրազդանի միւս ափին ընկած այգիները։

Ահա այդ այգիների ճանապարհի վրա սեպտեմբերի 18-ին կիրակի օրը ցերեկւայ ժամը 3-ին մի քանի հայերի և թուրքերի մէջ կռիւ ծագեց, որի ժամանակ թուրքերից մէկը սպանուեց։

Այդ դէպքից երկու ժամ անց, քաղաքի շուկայում, ուր մայիսից ի վեր լինում էր դրագունների պահակը, խմբւում են մի քանի հայեր և թուրքեր հետաքրքրուած այգիների ճանապարհին պատահած սպանութեան հանգամանքներով։ Ահա այդ համախմբումը ցրելու համար երկու դրագունները վայրենաբար վրա են պրծնում նագայկաներով. խմբուած մարդիկ շփոթուած սկսում են այս ու այն կողմը փախչել։ Քաղաքային այգու մօտից երկու թուրքեր տեսնելով շուկայում տեղի ունեցած այդ թեթև իրարանցումը և կարծելով որ ընդհարում կայ, մերկացնում են սրերը և յարձակւում այդտեղ եղող հայերի վրա, որոնք իրենց հերթում հանում են ատրճանակները և կրակում։

Ահա այդտեղից հրաձգութիւնը վայրկենապէս տարածւեց քաղաքի զանազան ծայրերը և շփոթն ու իրարանցումը ընդհանուր դարձաւ։ Բարեբախտաբար Երևանումն էր գտնւում այդ ժամանակ գեներալ-նահանգապետ Նապալիօնը, որը ակամտեանների պատմելով, դուրս թռաւ իր բնակարանից մի ակնթարթում։

Անմիջապէս դուրս եկան դրագունները, բռնեցին բոլոր փողոցների ծայրերը, ստիպելով ամենքին տուն մտնել։ Մի ժամից յետոյ փողոցները մաքրւել էին մարդկանցից և քաղաքը բոլորովին խաղաղւել էր։

Այդ կարճատև ընդհարումը այնուամենայնիւ ունեցաւ երկու տասնեակ զոհեր. սպանուեցին 8 Թուրք, 2 հայ և վիրաւորուեցին 8 հայ, 3 Թուրք։

Այսպէս մի անգամ ևս մտքերը յուզուեցին և յոգնած կեանքը աղմկուեց, բայց նոր ընդհարումների երկիւղ տեղի չունէր, բոլորը՝ հայ թէ Թուրք վստահ էին, որ Նապալիոնի օրօք ընդհարումներ չեն Թոյլատրուի, Թէև այդ դէպքից յետոյ միմիայն 6 օր Նապալիոնը վարեց նահանգապետի պաշտօնը։



ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

27 ՄԱՅԻՍԻ և 8—9 ՅՈՒՆԻՍԻ 1906 Թ.

Նախ քան չորրորդ ընդհարման անցնելը մենք կը յիշենք մի երկու դէպք, որոնք տեղի ունեցան մինչև այդ։

Դեկտեմբեր ամսում Ռուսաստանի քաղաքական հորիզոնի վրա խոշոր դէպքեր կատարուեցին։ Երկրորդ ընդհանուր գործադուլի հետ միաժամանակ մի քանի կենտրոններում՝ ինչպէս Մոսկվայում, Բաստօվում, Նօվօրօսիյսկում և այլ քաղաքներում տեղի ունեցան ապստամբական ցոյցեր։ Նման շարժումներ նկատելի դարձան նաև Կովկասի մի երկու քաղաքներում։ Այս բոլորը եկան մի նոր հարուած հասցնելու ռուս բիւրօկրատիայի խարխուլ շէնքի հիմքերին։ Եւ ահա նորից ասպարէզ եկաւ նրա փրկութեան քաղաքականութիւնը—ցեղային պայքարը։

Հայ-թուրքական շրջաններում նոր յուզմունքներ տեղի ունեցան։ Այդ շրջաններից մէն էր նաև Երևանը։ Թուրք խռովարար տարրերը միացած թշնամութեան թոյնը սերմանող ռուս հայրենասէր ճիւաղների հետ մտքերի այնպիսի խմորումն առաջ բերին, որ մասսային ընդհարումը անխուսափելի դարձաւ Երևանում։ Ազգարնակութիւնը լարուած կերպով բոպէ առ բոպէ սպասում էր փոխադարձ յարձակման։

Այդ դրութեան մէջ էր Երևանը, մանաւանդ դեկտեմբերի 28—29-ին։

Սակայն Ռուսաստանում ըէակցիան յաղթանակեց. բռնկուած ապստամբութիւնը ճնշուեց և ռուս բիւրօկրատիան մի պահ շունչ առած, թուլացրեց զսպանակը և ընդհարումներ տեղի չունեցան։

Ահա յուզմունքի այդ միջոցին էր, երբ քաղաքի մէջ երկու կողմերից անհատական սպանութիւններին զոհ գնացին աւելի քան տասն անմեղ մարդիկ։

Աւելի խորհրդաւոր մի դէպք տեղի ունեցաւ քաղաքում մայիսի 2-ին։

Այդ օրը երեկոյեան պահուն քաղաքային այգուն մօտեցաւ մի կառք, որի միջից կասկածելի մարդիկ ատրճանակներից կրակեցին անցորդների վրա և կառքը սրարշաւ քշելով անհետացան։ Մի ակնթարթում հայ և թուրք իրար անցան և սկսեց փախուստը ատրճանակների տրաքոցների հետ միասին, որի ժամանակ սպանուեցին երեք թուրք և վիրաւորուեցին մի հայ և մի թուրք։

Չը մոռանանք յիշել, որ այդ օրը քաղաքային խորհրդարանում կատարուում էր երկու պատուիրակների ընտրութիւն Պետական Դումայի պատգամաւորական ընտրութեանը մասնակցելու համար։

Միանգամայն պրովակացիայի բնոյթ կրող այդ դէպքը թէև ծաւալ չը ստացաւ, բայց բաւականաչափ գոգոում առաջ բերեց թուրքերի մի որոշ շրջանի մէջ, որոնք խորհրդաւոր զգուշութեամբ կարողացան ծածկել իրենց վրդովմունքը մինչև մայիսի 27-ը, այն է Երևանի չորրորդ ընդհարման օրը։

Մայիսի 27-ի առաւօտեան ժամը 9-ին շուկայում, կշիռի հրապարակի վրա, ուր սովորաբար խռնուած է լինում բաւականաչափ ժողովուրդ, երկու թուրքեր դիտաւորեալ կերպով կռիւ սարքեցին, որը և առիթ ծառայեց յանկարծակի յարձակման և կոտորածի։

Այս անգամ յարձակման տակտիկան փոխուած էր. գնդակների տեղ գործում էր սառը զէնքը. դաշոյնը լուռ անխօս ծակում էր ու անցնում։ Իրարանցումը շատ կարճ տևեց, նոյն իսկ անաղմուկ, ինչպէս այդ յատուկ է դաշոյնամարտին։ Հրացանաձգութիւն շատ քիչ տեղի ունեցաւ. մի բոպէում շուկան դատարկուեց. հայ և թուրք թաղերը քաշուեցին։ Դաւադրութիւնը կատարեալ էր։

Հօրքը դուրս եկաւ. կարգը վերականգնուեց. սակայն 36 զոհերից յետոյ, ինչպէս այդ լինում էր ամեն անգամ։ Այդ կարճատև և միևնոյն ժամանակ լուռ կոտորածը տուեց 22 սպանուած, որից՝ 13-ը հայ, 7-ը թուրք, 1-ը մալական և 1-ը հրէայ և 14 վիրաւոր, որից՝ 7-ը հայ, 4-ը թուրք և մնացեալը օտարազգի։

Այս անսպասելի կոտորածից յետոյ շուկան մի ամբողջ շաբաթ փակ մնաց. սակայն կեանքը աղմկուեց նորից յունիսի 8-ին։

Տեղի ունեցաւ մի նոր ընդհարում ուժեղ հրացանաձգու-

թեամբ, բայց կարճատև։ Այս անգամ զօրքը դուրս եկաւ խիստ պատուէրներով։ Խռովութիւնը դադարեց երեք տասնեակ զոհերից յետոյ. սպանուեցին 10 մարդ, որից՝ 5-ը թուրք, 3-ը հայ, 1-ը քուրդ, 1-ը հրէայ, և վիրաւորուեցին 19 մարդ, որից՝ 13-ը թուրք, 6-ը հայ։

Ուժեղ հրացանաձգութիւնը վերսկսուեց յունիսի 9-ին, բայց առանց զոհերի։ Վերսկսուեց նաև երեկոյեան դէմ, որի ժամանակ թուրքերի մասում մի յայտնի թուրքի տանից պահակների վրա կրակ բացուեց, որի պատճառով այդ տունը զօրքերի կողմից ենթարկուեց հրացանաձգութեան և կողոպուտի։

Ահա այս դէպքը եկաւ զսպելու առ ժամանակ խռովութիւնները։ Մի վայրկեան թուրք մասսային պատկերացաւ երկդիմի քաղաքականութեան ողջ պատկերը։

Սակայն նա շարունակում էր մնալ անգիտակ. նա վերջնականապէս չէր կարողանում ըմբռնել այն մեքենայութիւնները, որի նոյն իսկ իրեն համար կորստաբեր ընթացքին ինքը անգիտօրէն ուժ էր տալիս։

Այդ սոսկալի էր . . .

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԳԱՒԱՌ

Նախիջևանի գաւառը ընկած է Երևանի նահանգի հարաւային ծայրում, որի սահմաններն են՝ հիւսիսային կողմից Շարուր-Դարալագեազի գաւառը, արևելեան կողմից Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառը, իսկ արևմտեան և հարաւային կողմից Արաքսը, որը կազմում է միևնոյն ժամանակ Պարսկաստանի սահմանագիծը։

Նախիջևանի գաւառի մակերևոյթը, ինչպէս այդ յատուկ է Կովկասի բնութեանը, լեռնոտ է և ներկայացնում է կատարների, բլուրների և բազմաթիւ ձորակների մի խառնուածք զուրկ անտառներից։ Հարաւարևմտեան մի մասը միայն, որը թեքւում է դէպի Արաքսը, փոքր ինչ տափարակ է, որի մի քանի շրջանները, շնորհիւ դաշտային տաք կլիմայի և ոռոգման, արտադրում են բամբակ, խաղող և այլ կուլտուրական բերքեր։

Նախիջևանի գաւառը Երևանի նահանգի այն գաւառների թւին է պատկանում, ուր թուրք տարրը կազմում է բացարձակ մեծամասնութիւն, մի հանգամանք, որը և առաջացրել է անօրինակ կողոպուտ և աւեր բարբարոսութիւններով հանդերձ գաւառի մեծագոյն մասում։

Գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 101 հազար, որից հայերը՝ 34 հազար, թուրքերը՝ 64 հազար և զանազան ազգեր՝ 2 հազար։ Հայերը կազմում են ազգաբնակութեան 34%ը։

Նախիջևանի գաւառը կազմւած է բուն Նախիջևան և Գողթան գաւառամասերից։

Ամբողջ գաւառի 170 գիւղերից հայաբնակ են 60-ը, որից 40-ը ընկած են բուն Նախիջևանի գաւառամասում, իսկ 20-ը՝ Գողթանում։

Բացի այդ հայերը ապրում են նաև Նախիջևան և Օրդուբաթ քաղաքներում, վերջինում փոքր չափով։

ՀԱՅ ԳԻՒՂԵՐՆ ԵՆ։

№ №	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	1886 թ. վիճակագ. տուն Թուրքեր.	1886 թ. վիճակագ. տուն հայեր.	Մատաղատուն հայեր.
		*)	*)	**)
1	Հօրաղիզ . .	—	81	90
2	Աղխաչ .	17	19	25
3	Օղբին .	26	13	20
4	Ալմալու . .	—	53	70
5	Սէս (Սէրս) .	—	48	50
6	Սուլթան-բէկ .	—	80	90
7	Ջնաբերդ . . .	20	90	160
8	Ջահրի (Ջահուկ) .	306	170	250
9	Նազարաբադ (Դամրզնդան) .	—	64	90
10	Դիդուվար. . .	32	12	20
11	Գեօմուր .	—	105	160
12	Գժաձոր .	—	64	110
13	Նորս-Մազրա .	5	28	75
14	Նորս .	—	99	160
15	Առինջ .	—	44	70
16	Ղարաբաբա . .	—	22	60
17	Բաղամլու (Մեծոփ) .	20	62	80
18	Խալխալ . .	—	58	80
19	Ալագեօզ-Մազրա .	—	61	70
20	Ուզուն-օբա-իխարի .	24	32	45
21	Մամարզա-դիզա. .	14	16	30
22	Քիւլթափա .	—	86	130

*) Այս տեղեկութիւնները բերուած են պաշտօնական հրատարակութիւններից։ 1897 թ. միօրեայ վիճակագրութիւնը դեռ ևս չի հրատարակուած։

**) Այս տեղեկութիւնները մերն են։

23	Խալիլու . .	—	30	35
24	Քեարիմ-բէկ-դիզա .	—	16	25
25	Կուլի-բէկ-դիզա . .	—	39	45
26	Շխմահմուդ .	—	136	170
27	Եարմջա .	—	125	140
28	Այլաբադ . .	—	71	95
29	Հաջիվար . .	—	44	60
30	Կարախանբէկլու . .	—	113	130
31	Թմբուլ .	50	122	150
32	Եմխանա . .	—	112	145
33	Թազաքէնդ (Աստապատ) .	65	283	400
34	Կարմիր Վանք .	—	19	30
35	Ղազանչի . .	—	99	165
36	Նորաշէն . .	50	40	70
37	Աբրակունիս .	—	77	140
38	Արազին .	43	36	50
39	Գվնութ .	13	195	270
40	Ջուլֆի .	—	90	120
41	Փարադաշտ .	—	35	100
42	Շուրութ . . .	12	59	120
43	Գեաղ (Գեալջարաջուր). .	—	21	55
44	Մսրվան (Նազրվան) .	—	38	65
45	Ալահի .	—	37	50
46	Բիստ .	63	52	100
47	Փառակա . .	10	54	90
48	Ազա-վերին .	—	124	150
49	Ազա-ներքին .	40	24	30
50	Դէր. . .	—	68	90
51	Բամիս . . .	—	28	50
52	Ցղնա (Զանանաբ) .	—	77	135

53	Քաղաքիկ . .	—	34	40
54	Տանակերտ .	—	65	90
55	Դիսար .	15	13	15
56	Վարակերտ .	—	62	70
57	Ագուլիս-վերին . .	61	137	260
58	Ագուլիս-ներքին. .	—	107	160
59	Հանդամէջ .	10	28	30
60	Կարճևան . .	—	37	75

Նախիջևանի գաւառում, ինչպէս և ամեն տեղ, հայ-Թուրքական ընդհարումները, աւելի ճիշտն արտայայտած Թուրքական յարձակումները, տեղի ունեցան նախ քաղաքի մէջ և ապա ալիքանման տարածուեցին գաւառի բոլոր հայաբնակ շրջանները այս կարգով.

1) Նախիջևան գետի ստորին հովիտ։
2) Ջահրի գետի հովիտ։
3) Նախիջևան գետի վերին հովիտ։
4) Ալինջա գետի հովիտ։
5) Շուռութ և Գիլան գետերի հովիտ։

Սկսենք նախ քաղաքից։

ԿՈՏՈՐԱԾԸ ԵՒ ԿՈՂՈՊՈՒՏԸ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ

12 ՄԱՅԻՍԻ 1905 Թ.

Նախիջևանը գաւառի կենտրոնավայրն է՝ բուսականութեամբ, այգիներով և պտղատու պարտէզներով հարուստ, բայց կեղտոտ մի քաղաք, ընկած Նախիջևան գետի վրա, Արաքսին և Պարսից սահմանին շատ մօտ։ Շատ ու քիչ վայելուչ տպաւորութիւն թողնում է հայերի թաղը։

Այդ քաղաքը մինչև այժմ էլ իր վրա կրում է Պարսկաստանի տիրապետութեան ժամանակների կնիքը, խանական կարգերը մինչև այժմ էլ թագաւորում են այդտեղ. թուրք ժողովուրդը ոտի կանգնելով և խորը գլուխ տալով պատւում է Նախիջևանի նախկին խաների այժմեան յաջորդներին, ընդունելով նրանց խօսքը անպայման հեղինակաւոր։

Նախիջևանում հայերը բաւական փոքր թիւ են կազմում, ընդամենը 2,500. մինչդեռ ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 9,000։ Հայ ծխերի թիւը հասնում է 500-ի, որոնք ապրում են քաղաքի զանազան մասերում թուրքերով շրջապատուած այս կարգով. 300 ծուխ ապրում են Սուրբ Գէորգի թաղում, ուր գտնւում են յաջորդարանը և ծխական դպրոցը, 100 ծուխ՝ Ամբարի թաղում, 60-ը՝ Երեք Խորանի, իսկ մնացեալ 40-ը՝ քաղաքից դուրս մի առանձին թաղում, որը կոչւում է Թաղաքէնդ։

Քաղաքի առևտուրը գլխաւորապէս կենտրոնացած էր հայերի ձեռքում։ Աւելի քան 190 մանր ու մեծ հայի խանութներ զետեղուած էին Հայի, Հաջի Արասի չարսուներում և Խանի քարվանսարայում, չորս կողմից շրջապատուած թուրքերի բազմաթիւ խանութներով և խաժամուժ ամբոխով։

Ահա այստեղից էլ բռնկւեց Նախիջևանի հրդեհը։

Հայ-թուրքական ընդհարումների ոչ մի վայր այնպիսի զբր-

կանքներ չը կրեց, ինչպէս Նախիջևանը՝ իր շրջակայքով, և այդ շնորհիւ այն հանգամանքի, որ միամիտ հայ ժողովուրդը իր յոյսը դրած կառավարութեան և զօրքի պաշտպանութեան վրա, ինքնապաշտպանութիւնից զուրկ, անակնկալի բռնուեց Թուրք խուժանի կողմից։

Նախիջևանի գաւառը, մասնաւորապէս քաղաքը, հայ-Թուրքական ընդհարումների հէնց սկզբից համարուեց վտանգաւոր։ Դեռ ևս Երևանի փետրվարեան դէպքերի ժամանակ Նախիջևան եկան Երևանի խաներից մէկը և Գարեգին վարդապետը յուզած մտքերը խաղաղացնելու նպատակով։ Եւ ըստ երևոյթին շրջանը առ ժամանակ խաղաղուեց. սակայն այդ մի խաղաղութիւն էր, որ պահպանւում էր միմիայն հայերի կողմից եղած ջանքերի շնորհիւ։

Այսպէս, ծագած որևէ վէճի ժամանակ արդար Թէ անարդար հայը պիտի լինէր զիջող կողմը, դրացի Թուրքին չը վիրաւորելու համար։ Որևէ գործ սկսելու դէպքում հայը նախ պիտի խորհրդակցէր իր ծանօթների հետ և ապա սկսէր, մի գուցէ իր ձեռնարկութիւնը այս կամ այն ազդեցիկ Թուրքի շահերին դիպչելով դժգոհութիւն առաջ բերէր։ Եւ յաճախ լինում էին դէպքեր, երբ որևէ հայ Թողնում էր իր մտադրութիւնը, համոզուած լինելով, որ դրանով դժգոհութիւն առաջ կը բերի Թուրք շրջանների մէջ։

Այսպիսի օրինակներից կը յիշենք մէկը միայն։

Մետաքսի գործարանատէր Սարգսեանները ուզեցին մի նոր ձևի բաղնիք շինել։ Չը նայած այն բանին, որ դրա մէջ աւելի շահ ունէին հայերը, հնարաւորութիւն ստանալով ազատուել Թուրքերի անմաքուր բաղնիքներից, այնուամենայնիւ, յարմար դատուեց Թողնել նրա կառուցումը, ի նկատի ունենալով, որ այդ նոր բաղնիքը խաների դժգոհութիւնը կը յարուցէր, խլելով նրանց բաղնիքների յաճախորդների մի որոշ մասը։

Այս և սրանից էլ աւելի տարօրինակ զիջողութիւնների ուժով հայերը պահպանում էին խաղաղութիւնը։ Սակայն այս ձևի խաղաղութիւնն էլ երկար չը տևեց։ Քանի մօտենում էր մայիսը, այնքան աւելի մթնոլորտը դառնում էր ճնշող, այնքան աւելի Թուրք ժողովրդի շարժումները դառնում էին կասկածաւոր, մինչև որ մի դէպք եկաւ վերջ դնելու բռնազբօսիկ խաղաղութեանը, եկաւ կարճելու՝ մի կողմից հայ ժողովրդի ծանր մտորումների, միւս

կողմից՝ Թուրք խուժանի ընչաքաղց ակնկալութիւնների տեղողականութիւնը։

Մայիսի 6-ի երեկոյեան ժամը 8-ին Նախիջևանի և Այլարադ գիւղի մէջ տեղ, Ղզդրմա անուն կրող ազբիւրի մօտ, սպանուեց Նախիջևանցի մի Թուրք, Ֆաթուլլա հաջի Բայրամ Ալի օղլին, ազգական ազդեցիկ Ասադ աղա Կինգերլինսկուն։

Այդ սպանութիւնը, որ մինչև այսօր էլ չի պարզուած թէ ում ձեռքով կատարուեց, Թուրքերը վերագրեցին Այլարադ գիւղի հայերին, իսկ հայերը այժմ էլ հաւատացած են, որ նա զոհ գնաց իր հաւատակիցների վրէժխնդրութեան ինչ որ ընտանեկան պատուի պատճառով։ Ինչ և իցէ այդ սովորական սպանութիւնը, որպիսին միշտ տեղի է ունենում հայ-Թուրքական բնակավայրերում, առիթ դարձաւ նախամտածուած գրգռում առաջ բերելու համար սպանուածի հօրը փողոց դուրս բերել վրէժխնդրութեան աղաղակներով, որը միանգամայն յուզեց Թուրք ժողովրդին։ Ահա այստեղից էլ սկսուեցին մի շարք անհատական սպանութիւններ։

Մայիսի 7-ի առաւօտեան ժամը 8-ին քաղաքի մէջ, պօստային կայարանի դիմաց, ստրաժնիկների բնակարանի մօտ, բացայայտ կերպով մի քանի Թուրքեր յարձակուեցին Այլարադցի Միսակ Մահտեսի-Բաբայեանի վրա և տեղն ու տեղը սպանեցին. բացի այդ նոյն միջոցին քաղաքի ծայրում սպանուեց Հաջիվար գիւղացի մի արհեստաւոր։

Այս դէպքերը մի այնպիսի սարսափ ու յուզմունք առաջ բերին քաղաքում, որ հայերը խանութները կողպեցին և քաշուեցին իրենց տները, հեռագրելով Նահանգապետին և զանազան մարդկանց տեղի ունեցող յուզմունքների մասին։

Մայիսի 8-ին քաղաքի շրջակայքում սպանուեց նորից մի հայ գիւղացի, իսկ քաղաքի մէջ մահացու կերպով վիրաւորուեց Ազատ Մանուչարեանը։

Մայիսի 9-ին Շխմահմուդ գիւղի հանդում ընդհարում տեղի ունեցաւ հայերի և մի քանի ջահրեցի Թուրքերի մէջ ցորենի արտերը ուտեցնելու պատճառով, որի ժամանակ Թուրքերից մէկ հոգի սպանուեց և մէկ հոգի էլ վիրաւորուեց։

Մայիսի 10-ին այս դէպքի պատրուակով բաւականաչափ ջահրեցի Թուրքեր քաղաք Թափուելով և գաւառապետին բողոքե-

լով, վերադարձան գիւղ, յարձակւելով և քշելով Շխմահմուդի հանդից գիւղի նախիրը։

Այդ նոյն օրւայ, այն է մայիսի 10-ի գիշերը Թուրքերը մտան Խալիլու գիւղի առաջին հարուստ Խաչատուր Բաբասեանի տունը, ընտանիքը սրի քաշեցին և գոյքը կողոպտեցին։

Ահա այս մի շարք սպանութիւններից յետոյ մայիսի 11-ին յուզմունքը Նախիջևանում գագաթնակէտին էր հասել, երբ քաղաք մտան փոխ-նահանգապետ Տարանովսկին, Նախիջևանի քաղաքագլուխ Ջաֆար-Կուլի խանը, որը Երևան էր գտնւում այդ ժամանակ, Երևանի քաղաքագլուխ Յ. Մելիք-Աղամալեանը և Երեւանի փոխանորդ Կարապետ վարդապետը, որոնք ուղարկւած էին Երևանից մտքերը խաղաղացնելու համար։

Փոխ-նահանգապետի և Ջաֆար-Կուլի խանի ներկայութիւնը, մէկը որպէս բարձր պաշտօնեայի, իսկ միւսը որպէս Թուրքերի մէջ ամենահեղինակաւոր մարդու, բաւական էր յուզումները մեղմելու և նոյն իսկ զսպելու համար։ Այն ինչ հէնց այդ գիշեր փորձ եղաւ խուժել Ադամեանի տունը, սակայն որը չը յաջողւեց շնորհիւ նրա, որ դարպասը ներսից չը բացին, նկատելով կասկածաւոր մարդկանց բախումը։

Մինչդեռ այս բոլորը տեղի ունէր Նախիջևանում, մայիսի 11-ին Ռուսաց գործակալութեանը Երևանից ուղարկւեց հետևեալ հեռագիրը։

«Երևան մայիսի 11-ին. Նախիջևանից հաղորդում են, որ Բագուի դէպքերից յետոյ մահմեդականները ամեն ջանք գործ էին դնում լաւ յարաբերութիւններ պահպանել հայերի հետ, այն ինչ հայերը զանազան գիւղերում սպանեցին մի քանի մահմեդականների։ Տրամադրութիւնը երկիւղ ազդող է և եթէ հայերը չը դադարեն զինւած յարձակումներ գործել մահմեդականների վրա, այն ժամանակ շատ յաճախակի կը դառնան մասսային անկարգութիւնները ամբողջ նահանգում։»

Ահա այս բովանդակութեամբ և այս հոգով հեռագիր ուղարկում էր Երևանում մասնաւոր փաստաբանութեամբ պարապող Նախիջևանի ազդեցիկ Թուրքերից մէկը, Մամեդ-բէկ Կենգերլինսկին։ Այս հեռագիրը գալիս էր նախապատրաստելու մտքերը, պատրաստւող բարբարոսութիւնները արդարացնելու համար։

Մայիսի 12-ին դրութիւնը Նախիջևանում մնաց նոյնը, չը

նայած Երևանից եկող հեղինակաւոր անձանց ներկայութեան։ Հայերը չը վստահացան տներից դուրս գալ և խանութները բացել, վտանգը դեռ ևս անցած չը համարելով։ Ահա զգուշութիւնների այս միջոցին տեղի ունեցաւ առաջին ոճիրը։

Փոխ-նահանգապետ Տարանովսկին, Ջաֆար-Կուլի խանը և նրա եղբայր Բահիմ խանը կանչեցին հայ վաճառականներին՝ Ադամեանին, Խալաթեանին և միւսներին, համոզեցին խանութները բացել, երաշխաւորելով նրանց գոյքն ու նրանց կեանքը։

«Մենք կը տանք մեր գլուխը, եթէ ձեզանից մի մազ անգամ պակսի», արտասանեցին այս խօսքերը երկու պատուաւոր խաները։

Կասկած տանել այլ ևս անկարելի էր և հայերի խանութները բացուեցին, թէև ոչ բոլորը։

Դրանից յետոյ շատ կարճ ժամանակ տևեց, յանկարծ աղմուկը բարձրացաւ և փոթորիկը պայթեց։

Շուկան թափուեց խաժամուժ ամբոխը վայրենի աղաղակներով։ Հրացանների և ատրճանակների պայթոցների հետ միաժամանակ շողշողացին սրերը։ Բացուած խանութների տէրերը ընկան հէնց իրենց խանութների շէմքերի վրա. փակուած խանութների դռները խորտակուեցին և ջարդ ու փշուր եղան. իսկ Խանի քարուանսարան, ուր գտնուում էին ամենամեծ հարուստ խանութները, հրդեհի բոցերին մատնուեց։ Եւ ապա սկսուեց կողոպուտը, խաժամուժ ամբոխի կողոպուտը, որին մասնակցում էին ամենքը, ամենքը։

Հայերի ունեցած 195 զանազան տեսակի խանութներից 180-ը ամբողջովին կողոպուտ գնացին. շուկայում եղող հայերից ազատուեցին քչերը, այն էլ վէրքեր ստացած. աւելի քան 50 հոգի ընկան տանջանքերով. մի քանիսը նոյն իսկ մնացին Խանի քարվանսարայում բռնկուած հրդեհի բոցերի մէջ և այրուեցին։ Դրանց թուումն էին Խալաթեանը և Կարապետ Ադամեանը, այն Ադամեանը, որը հաւասարաչափ յարգուած էր թուրքերից, որի զգուշութիւնները հասնում էին ծայրահեղ վախկոտութեան, թոյլ չը տալով այս և այն տեղ ուղարկուող հեռագրների մէջ մտցնել թուրք բառը, «բարի» դրացիներին չը վիրաւորելու համար և որի կեանքը երաշխաւորեցին պատուաւոր խաները իրենց գլխով։ Միամիտ հաւատացող մարդը ընկաւ, իսկ երաշխաւորող գլուխները կենդանի մնացին։

Ահա այս բոլորը կատարուեց խաների հիւրասիրութիւնը գտած փոխ-նահանգապետ Թեթեւամիտ Տարանովսկու և երկու խաների ներկայութեամբ, հանդիսատես աչքերի առաջ։

Զօրքը օգնութեան հասաւ շատ ուշ. նա վարժութեան էր գնացել քաղաքից բաւական հեռու մի դաշտում և երբ նա եկաւ, արդէն ամէն բան վերջացել էր։ Մի ամբողջ ժողովուրդ կորցրել էր իր ունեցածը. դեռ ևս երկու ժամ առաջ հարուստ համարուած հայը մնացել էր մի կտոր հացի կարօտ։

Սակայն զօրքի գալուց յետոյ էլ փոխ-նահանգապետի ներկայութեամբ կողոպուտը շարունակուեց դեռ երկար ժամանակ։*) Այդ նոյն միջոցին, երբ շուկան կողոպտուում ու հրդեհուում էր անարգել կերպով, Թուրքերի մի այլ խուժան յարձակուեց Թաղաքէնդ քաղաքամասի վրա։ Պաշտպանուելու և Թաղը կողոպուտից ազատելու հնարաւորութիւն չունենալով, հայերը մի երկու վիրաւորներով փախան Շխմահմուդ, իրենց ունեցած չունեցածը Թողնելով խուժանին, որը ամբողջ Թաղը աւերեց մի անասելի կերպով։

Նախիջևանի շուկայի վրա խուժող ամբոխին հայերի կողմից դիմադրելու խօսք լինել չէր կարող, մանաւանդ երբ նրան ա-ջակցում էին ոստիկանական ստորին Թուրք պաշտօնեաները։ Հայերը ինքնապաշտպանութեան համար շատ քիչ միջոցներ ունէին, եղածներով հազիւ պաշտպանում էին Թաղերը, յետ քշելով մի քանի յարձակումներ, որ լինում էին Թաղերը խուժելու նպատակով։ Հէնց այդ յարձակումների միջոցին էլ Թուրքերը տուին մի քանի մարդկային զոհեր։

Ահա Նախիջևանում բռնկուած այս փոթորիկը մի չը տեսնուած արագութեամբ տարածուեց ամբողջ գաւառը, աւելի և աւելի մեծ ծաւալ ընդունելով։ Երկու շաբաթ շարունակ այս և այն տեղ պարբերաբար կրկնուում էին յարձակումները կողոպուտներով և հրդեհումներով հանդերձ. այդ բոլոր ժամանակ քաղաքում շարունակուում էր լարուած դրութիւնը, զրկանքների ու սարսափների վրա աւելացնելով քաղցը և անճարութիւնը։

---

*) Կողոպտուած ապրանքներից, որոնց արժէքի գումարը հասնում էր մօտ մէկ ու մի քառորդ միլիոնի, բաւական չափով դուրս հանեցին Թուրքերի խանութներից, և բացի այդ վկայում են, որ կողոպուտի փայ ու բաժինից զուրկ չէին մնացել նաև ամենայայտնի մարդիկ։

Նախիջևանի այս սոսկալի դրամայից 5—6 օր անց Ջաֆարկուլի խանի բակում նւագում էր զինւորական երաժշտութիւնը. թեթևամիտ Տարանովսկին զւարճանում էր խաների ապարանքներում. թուրք սրիկաները կառքեր նստած անց ու դարձ էին անում հայերի թաղերով, հայերի հասցէին տգեղ ու լկտի ակնարկներ և լպիրշ քրքիջներ արձակելով, իսկ հայերը դառը կսկիծով և ճնշած սրտով տանում էին այս բոլորը։

Եւ այս համարւում էր հաշտութեան ակտը։



ԱԻԵՐՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԻՋԵՎԱՆ ԳԵՏԻ ՍՏՈՐԻՆ ՀՈՎՏՈՒՄ

12—15 ՄԱՅԻՍԻ 1905 թ.

Նախիջևան գետը սկիզբն առնելով գաւառի հիւսիսարևելեան սահմանը կազմող Արիգլի լեռնաշղթայից հարաւարևմտեան ուղղութեամբ մի պտոյտ կազմելով, գալիս թափւում է Արաքսի մէջ։ Սրա մի մեծ ճիւղը կազմում է Ջահրի գետը, որը հոսելով Դարալագեազի լեռներից, գալիս խառնւում է Նախիջևան գետին Ալագեօզ-Մազրա գիւղից փոքր ինչ ցած։

Նախիջևան գետը իր ճիւղերով և մի քանի արհեստական առուներով կեանք է տալիս Նախիջևանի գաւառամասին, իր հովիտների վրա խնամելով բազմաթիւ մանր ու մեծ գիւղեր։

Այդ կենսատու գետի ստորին հովտում, ուր գտնւում է նաև Նախիջևանը, ընկած են շարքով 15 հայաբնակ գիւղեր, այն է՝ Ուզուն-օբան, Մամարզա-դիզան, Քիւլթափան, Խալիլուն, Քեարիմ-բէկ-դիզան, Կուլի-բէկ-դիզան, Շխմահմուդը, Եարմջան, Այլաբադը, Հաջիվարը, Կարախանբէկլուն, Թմբուլը, Եմխանան, Թազաքէնդը և Կարմիր Վանքը։

Այս շրջանում թուրք գիւղերի մէջ իրենց աղմկայոյզ բարքով աչքի էին ընկնում Նէհրամը և Ղահաբը։

Ահա քաղաքին բաւական մօտ և նրա շուրջը ընկած այս գիւղախմբի վերաբերմամբ տեղի ունեցան նոյն ձևի յարձակումներ թուրք խուժանի կողմից, որը քաղաքում բռնկւած խռովութիւնների հետ միաժամանակ գլուխ բարձրացրեց նաև գաւառում, համոզւած լինելով, որ սպանութիւններն ու կողոպուտները արգելքի չեն հանդիպելու կառավարութեան կողմից։

Մայիսի 12-ին յարձակման ենթարկւեցին Ուզուն-օբա, Մամարզա-դիզա և Թազաքէնդ գիւղերը։ Դրանցից առաջին երկուսը,

որոնք Թրքախառն էին և Թոյլ գիւղեր, անկարող լինելով դիմադրել յարձակմանը, մի քանի զոհեր տալով փախան Շխմահմուդ, որոնց ամբողջ գոյքը ինչպէս և կենդանիները կողոպտեցին ու քշեցին։ Իսկ վերջին գիւղը, այն է Թազաքէնդը, կարողացաւ դիմադրել և յետ քշել յարձակումը, Թէև Թուրքերը այնուամենայնիւ կարողացան դաշտից քշել բաւականաչափ տաւարներ։

Մայիսի 13-ին յարձակում տեղի ունեցաւ Հաջիվար, ՔիւլԹափա, Քեարիմ-բէկ-դիզա, Կուլի-բէկ-դիզա և Ղարախանբէկլու գիւղերի վրա։

Հաջիվարը Թէև քաղաքին բաւական մօտ, բայց գտնուելով Բաղաշխա և Շաքարարաղ Թուրք գիւղերի մէջ ժողովուրդը փախաւ քաղաք առանց դիմադրուԹեան, զուրկ լինելով ինքնապաշտպանուԹեան միջոցներից և գիւղը հիմնովին կողոպտուեց ու աւերուեց յիշեալ Թուրքերի ձեռքով, որոնք քանդեցին տարան մինչև անգամ դռներն ու լուսամուտները և եկեղեցու զարդերը։ Այսքանով չը բաւականացած, նրանք հրդեհեցին 10-ից աւելի տներ։

Հաջիվարը ունեցել էր՝ բացի 5 վիրաւորները, 5 էլ սպանուածներ. դրանք էին՝ Ստեփան Պողոսեան, 25 տ., Թադէոս Թորոսեան, 25 տ. և Վարդան Պետրոսեան, 50 տար. քաղաքում սպանուած. 70 տարեկ. ծերունի Տէր Յովհաննէսը գիւղում սպանուած, իսկ 6 տարեկան Խաչատուր Վարդանեանը սրտաճաք եղած։

ՔիւլԹափան, Քեարիմ-բէկ-դիզան, Կուլի-բէկ-դիզան և Կարախանբէկլուն նոյնպէս ենԹարկուեցին կողոպուտի, բայց ոչ այն չափով, ինչ չափով Հաջիվարը։ Այս գիւղերը կիսով չափ ազատ մնացին կողոպուտից շնորհիւ այն բանի, որ կարողացան դիմադրուԹիւն ցոյց տալ խուժանին։ Կուլի-բէկ-դիզայում ինքնապաշտպանուԹիւնը կազմակերպեց գիւղի ուսուցիչը։ Կարախանբէկլուն շնորհիւ մի քանի երիտասարդների կորուստ քիչ ունեցաւ։ Թուրքերը կարողացան քշել նախիրը, այն էլ դաշտից։

Մայիսի 14-ին յարձակման ենԹարկուեց Եարմջան։ Առաջին անգամ մի քանի երիտասարդների շնորհիւ կարելի եղաւ յարձակումը յետ մղել. սակայն խուժանը վերադարձաւ նոր ուժով և նոր Թափով, որից ժողովուրդը յուսահատուած փախաւ դէպի Շըխմահմուդ, իսկ Թուրքերը ներս խուժեցին գիւղը և սկսեցին կողոպտել գիւղի մի մասը։

Այդ ժամանակ Եարմջա էր եկել Մեսրովբ արքեպիսկոպոսը

Հազարանփրկիչ մասունքով, որը եկեղեցուց միւս իրերի հետ կողոպտուեց և նորից յետ բերուեց։

Մայիսի 14-ին յարձակում տեղի ունեցաւ նոյնպէս Թմբուլի վրա։

Թմբուլը բաւական մեծ գիւղ է հարուստ և օրինաւոր տներով, ընկած քաղաքից դէպի հարաւ 3—4 վերստի վրա։ Այդ-տեղ ապրում են 50 տուն Թուրք և 120 տուն հայ բնակիչներ։ Գիւղը ընկած է մի բլուրի ստորոտին, ուր բարձրի մասում Թուրքերի Թաղն է, իսկ ցածի մասում հայերի Թաղը։ Բացի այդ Թմբուլին շատ մօտ ընկած են Բուլգան, Կարաչուգ և մանաւանդ Ղօշաղիզա Թուրք գիւղերը։ Չը մոռանանք յիշել նաև այն, որ Թմբուլցի իւրաքանչիւր արական անդամը պարտք է համարում իր կեանքի մեծ մասը օտարութեան մէջ անցկացնել, յաճախ օտարութեան մէջ էլ մեռնել։ Թմբուլի վրա եղած յարձակումը շատ ուժեղ էր։ Ցիշեալ գիւղերի մի քանի հարիւր հոգուց բաղկացած խուժանը պաշարեց գիւղը ցածի կողմից, իսկ տեղացի Թուրքերը սկսեցին գնդակահարել հայերին իրենց Թաղի յարմարաւոր դիրքերից։ Հայերի փոքրաթիւ զինուած երիտասարդները անկարող լինելով ամբողջ գիւղը պաշտպանել, ժողովուրդը քաշուեց գիւղի կենտրոնական մասը մի քանի մեծ տների մէջ, որից աւելի սիրտ առած Թուրքերը խուժեցին գիւղի մէջ և սկսեցին կողոպտել ու հրդեհել տները։

Գիւղի փողոցներում կողոպուտի և հրդեհի հետ միասին գընդակների, սրերի և նոյն իսկ կացինների հարուածների տակ ընկան 20-ի չափ հայեր։ Ճիշտ է սպանուեցին մի քանի էլ Թուրքեր, բայց փոքրաթիւ հայ կուռողները ստիպուած էին ծանր, անհաւասար և նոյն իսկ յուսահատ կռիւ մղել, մինչև որ նրանց օգնութեան հասան Եմխանայից հայերը, իսկ քաղաքից զօրքը, որ և կարելի եղաւ խուժանին յետ մղել և գիւղը ազատել անխուսափելի աւերումից, թէև մինչև այդ արդէն կողոպտուել էին աւելի քան 50 տուն, որի կէսից աւելին զոհ էր գնացել նաև հրդեհին։

Յարձակման ենթարկուեցին նաև Խալիլուն, Եմխանան և Շխմահմուդը, բայց այս գիւղերը շնորհիւ ինքնապաշտպանութեան ազատ մնացին կողոպուտներից։ Իսկ առանձնապէս Շխմահմուդը հանդիսացաւ այն միակ տեղը, ուր մի շարք աւերումների ենթակայ գիւղերի ժողովուրդները կարողացան կոտորածներից

փախչել և այդտեղ առժամանակ պատսպարան գտնել։ Ուրբ, տաս գիւղերի հազարաւոր ժողովրդին մի անկիւն, մի կտոր հաց տալու ընդունակ էր միմիայն հարուստ ու մեծ Շխմահմուդը. թէև այդ հարուստ գիւղում էլ մի քանի օրից յետոյ պաշարը այն աստիճան սպառուեց, որ այդ ահագին սարսափահար եղած ժողովուրդը մի պահ էլ սովի տանջանքներին մատնուեց։

Այսպիսով Նախիջևան գետի ստորին հովտի 15 գիւղերից երկուսը միայն ազատ մնացին մասսային յարձակումներից, որոնցից մէկը Կարմիր Վանքն էր, ընկած Արաքսի ափին սահմանապահ պօստերին կից, իսկ միւսը՝ Այլարադը, որ յայտնի էր իր քաջ տղաներով։ Մնացեալ 13 գիւղերը անխտիր ենթարկուեցին մասսային յարձակումների և աւելի կամ պակաս չափով աւերուեցին ու կողոպտուեցին։



ԱԻԵՐՈՒՄՆԵՐԸ ՋԱՀՐԻ ԳԵՏԻ ՀՈՎՏՈՒՄ

12—15 ՄԱՅԻՍԻ 1905 Թ.

Ջահրի գետի հովտում ընկած են Նախիջևան գաւառամասի 10 հայաբնակ գիւղեր, այն է՝ Հօրադիզը, Աղխաչը, Օղբինը, Ալմալուն, Սէսը, Սուլթան-բէկը, Ջնաբիրդը, Ջահրին, Նազարաբադը և Դիզուվարը։

Գիւղերի այս խումբը ցրուած գաւառի հիւսիսային լեռների և ձորերի մէջ, շրջապատուած բազմաթիւ մանր ու մեծ թուրք գիւղերով, ենթարկւեց կողոպուտի և աւերի ոչ պակաս բարբարոսաբար քան Նախիջևան գետի ստորին հովտում ընկած գիւղախումբը։

Այս շրջանում յարձակումների և կողոպուտների մէջ առաջնակարգ դեր վերցրել էին իրենց վրա երեք անհանգիստ թուրք գիւղեր՝ Ջահրին, Խոկը և Իթղոանը, իրենց քամակից տանելով մնացեալ գիւղերի խուժանը։

Նախիջևանի խռովութիւնների հետ միաժամանակ մայիսի 12-ին խռովութիւններ, լի բարբարոսութիւններով, ծագեցին Ջահրիում։

Ջահրին կամ Ջահուկը Նախիջևանի շրջանի ամենամեծ գիւղն է, որը ոչ մի բանով չի ուզում յետ մնալ քաղաքից։ Նա ընկած է Նախիջևանից դէպի հիւսիս 14 վերստ հեռաւորութեան վրա, Ջահրի գետի ձախ ափին, իր հարուստ այգիներով և ընդարձակ վարելահողերով։ Այդ գիւղում ապրում են 230 տուն հայ և 550 տնից աւելի թուրք բնակիչներ։ Հայերի թաղը ընկած է գիւղի հարաւարևելեան կողմում, թէև մի քանի տասնեակ տներ ընկած են թուրքերի տների հետ խառը։ Հայերը բաւական լաւ վիճակ ունէին, տները գեղեցիկ, ապրուստի ձևը ոչնչով չը տարբերուող քաղաքացու կեանքից, նոյնպէս՝ տարազով։

Թուրքերն էլ իրենց նիստ ու կացով, ապրուստի եղանակով տարբերուում էին միւս Թուրք գիւղերի ժողովուրդներից։ Սրանք առանձին ձգտում ունէին կապեր պահել քաղաքի Թուրքերի հետ, ազդեցութիւն ունենալ շրջակայքի վրա, ղեկավար հանդիսանալ խոշոր դէպքերի ժամանակ, մի խօսքով ճիգ էին Թափում իշխողի դերում լինել և այդ նրանց յաջողւում էր։ Օրինակ, հայը Զահրիում համարւում էր հպատակ բառի բուն նշանակութեամբ. նրա լեզուն կարճ էր և խօսքը անարժէք. այս բանին քիչ չէր նպաստել նաև այն հանգամանքը, որ նրա Թարմ ուժերը ձգտում էին դէպի օտարութիւն, ասպարէզը Թողնելով կանանց։

Զահրին ունէր նաև իր շուկան 50-ի չափ խանութներով, ուր որոշ տեղ բռնում էին հայերը իրենց ընդարձակ առևտրով և արհեստներով։ Թուրք խանութների շարքում առանձնապէս աչքի էին ընկնում Թէյատները, Թուրք մասսայի այդ ժողովատեղիները, ուր ամեն բան կայ, բացի մտաւորն ու բարոյականը, ինչպէս հայերի մէջ՝ գինետները։

Ահա այս հպարտ և ինքնավստահ Զահրին իր առաջադէմ մարդկանցով, իր տանուտէր Աբաս-Զալ օղլիներով աւելին արեց, քան նոյն իսկ Նախիջևանը։

Դեռևս մայիսի 10-ին, ինչպէս մենք տեսանք, Զահրիի Թուրքերը քշեցին Շխմահմուդ գիւղի նախիրը։

Մայիսի 11-ին այստեղի հայերի դրութիւնը այնքան կրիտիկական դարձաւ, որ նրանք մի կողմից դիմեցին քաղաք օգնութիւն խնդրելու, իսկ միւս կողմից գիշերը աննկատելի կերպով Թուրքախառն մասերից քաշուեցին հայկական Թաղը։

Իսկ մայիսի 12-ի առաւօտեան ժամը 11-ին, հէնց որ քաղաքի յարձակման լուրը տեղ հասաւ, ինչպէս կազմ պատրաստ մի բանակ՝ խուժանը Թափուեց խանութների և հայերի տների վրա հրացանների որոտով, հրդեհումների նիւթերով։

Հրդեհի ծուխն առաջին անգամ բարձրացաւ Խէչան Մահտեսի Մարգարեանի երկու յարկանի տներից։ Հրդեհ երևաց նաև նրա շարքի տներում. սկսուեց սոսկալի կողոպուտը խանութներում և այս շրջանի հայերի տներում միաժամանակ։ Ի՞նչ եղաւ այդտեղ մնացած 20-ի չափ հայ ընտանիքների հետ, յայտնի չէ։ Խէչան Մահտեսի Մարգարեանը, Զահրիի այդ առաջին հարուստը, վստահացած տանուտէր Աբաս-Զալ օղլու վրա, մնաց իր տներում, հա-

մոզելով և պահելով իր հետ նաև 20 հայ ընտանիքների, որոնց մեծ մասը զոհ գնաց բարեկամ Թուրքերի բարբարոսութիւններին, ինչպէս այդ կը տեսնենք յետոյ։

Հրդեհն ու կողոպուտը խանութներում և Թուրքական Թաղի սահմաններում եղող հայերի տներում անարգել կերպով շարունակւեց ամբողջ օրը։ Իսկ հայ ժողովուրդը, խմբւած հայոց Թաղի մի քանի մեծ տների մէջ, պաշտպանւեց շնորհիւ մի քանի երիտասարդների, որոնք բաւական շնորհալի կերպով յետ էին քշում մի քանի անգամ կրկնւող յարձակումները դէպի կողոպուտից ազատ մնացած այդ Թաղը։ Զինւած հայ երիտասարդների Թիւը մեծ չէր, 5—6 հոգի ընդամենը, բայց նրանք կարողացան հայերի Թաղը պաշտպանել մայիսի 12-ին և 13-ին, որի ժամանակ մէկ մէկ փախչում գալիս էին Թուրքերի մասում մնացած հայերից՝ սարսափահար եղած, յաճախ և վիրաւոր կին, մարդ, սոսկալի բաներ պատմելով այնտեղ կատարւածներից, մինչև որ 14-ին քաղաքից եկան Ջաֆար-Կուլի խանը և Կարապետ վարդապետը։

Հոգատար խանը և պրիստաւը հայերին հաւատացնելով, որ նրանց դեռ ևս չը կողոպտւած տները պետական կնիքով կը կնքեն և ոչ ոք չի համարձակւի ձեռք տալ այդ կնիքներին, համոզեցին նրանց տեղափոխւել Շիմահմուդ։ Այդ նոյնը աւելի վստահ կերպով պնդում էր պրիստաւը, որը դէպքի ամբողջ ժամանակ 10 ստրաժնիկներով Ջահրիում գտնւելով ոչ մի դրական քայլ չարեց կողոպուտի առաջն առնելու համար։ Եւ ցաւալին այն էր, որ այդ դատարկ խոստման միամտութիւն ունեցաւ հաւատալ նաև Կարապետ վարդապետը։ Եւ ինչ էք կարծում. հայերը դեռ ոտները չէին դուրս դրել գիւղից, որ Թուրք խուժանը յարձակւեց և սկսեց կողոպուտը ազատ մնացած ահագին Թաղում։ Հայերը, ի հարկէ, յետ չը դարձան, բայց գնացին ուշ ու միտքը ձգած դէպի իրենց տուն ու տեղը, նրանց միջի հարուստ գոյքը, որոնց երկու օր պահպանում էին խնամքով։ Այդ բոլորը նոյնպէս կողոպտւեց. այդ բոլորը նոյնպէս խուժանի ձեռքով վերածւեց մի ժխորի։

Այժմ տեսնենք ինչ պատահեց այն 20 տուն հայերի հետ, որոնք մնացին իրենց տներում, վստահանալով Թուրքերի բարեկամութեան վրա։

Խաչան Մահտեսի Մարգարեանը իր ընտանիքով սպանւեց հէնց իր տան մէջ տների հրդեհման հետ միաժամանակ. սպանւեց նաև

նրա տղան՝ 25 տարեկան քաջ Երանոսը, սակայն ուժեղ դիմադրութիւնից և երկու թուրքեր սպանելուց յետոյ։

Մի քանի ընտանիքներ այդ նոյն ձևով սպանուեցին իրենց տների մէջ յարձակման առաջին վայրկեանում։ Բայց կային դրանցից աւելի բաղդաւորները, որոնք մի օրով աւելի էին ապրել։

Սէիդի տղա Միր-Ասլանը երկու եղբայրներ՝ Աբգար և Ղևոնդ Թադէոսեաններին և Գրիգոր Մկրտչեանին իրենց ընտանիքներով տարաւ Մօլլա Ալոնց տուն իբր պաշտպանելու, սակայն յաջորդ առաւօտը յայտնուեց Քեալբալայի Աբդուլլա Ասադ օղլին և պահուած տեղից դուրս քաշելով Աբգարին և Գրիգորին ասաց. «գնանք, գալաւան ձեզ կանչում է»։ Եւ երբ նրանց դուրս բերեց բակը, այդտեղ խմբուած խուժանը յարձակուեց և սրախողխող արեց երկուսին էլ նրանց կանանց և երեխաների աչքի առաջ, որոնց ճիչն ու աղաղակը անզօր եղան գազանացած խուժանի գութը շարժել։

Այդ նոյն վիճակին ենթարկուեց նաև Ղևոնդը Իբրահիմ Քեալբալայի Հասան օղլու և նրա արիւնարբու ընկերների ձեռքով. բայց այդտեղ կատարուեց արտասովոր մի դէպք։ Ղևոնդի կինը—Շողերը—խելագարի պէս նետուեց ամուսնու վրա, վերցրեց, շալակեց մեռած կարծեցեալ արիւնաշաղախ վիրաւորին և անհետացաւ քաջ տղամարդու պէս. և ինչ էք կարծում, Ղևոնդը առողջացաւ շնորհիւ իր հերոս կնոջ—Շողերի։

Այսօրինակ և սրանից էլ աւելի բարբարոսաբար ընկան Ջահրիում 51 հոգի մարդ, կին, երեխայ, որոնց անուանացուցակը բերում ենք գրքին կից։ Կենդանի մնացածները աւելի տանջանքներ կրեցին, քան ընկածները. սրանց տանջանքները բարոյական էին. կանանցից շատերը ենթարկուեցին բռնաբարութիւնների։ Այսպիսի դժբաղդների թուին պատկանում էին մայր և աղջիկ՝ 45 տարեկան Մարիանն և 25 տարեկան Սօփիան, երկուսն էլ ամուսնացած կանայք։

Մայիսի 25-ին, երբ Ջահրեցիները վերադարձան գիւղ, տեսարանը սոսկալի էր։ Տները կրում էին չինգիսխանեան աւերի հետքերը։ Դիակները դեռ ևս անթաղ այս և այնտեղ հազիւ հողով ծածկուած օդը դարձրել էին անտանելի։ Մի քանի տեղ դիակները թափուած էին կոյտերով։ Մի հորի մէջ ձգուած էին 7 թէ 9 դիակներ, որտեղից երկուսը միայն դուրս բերելուց յետոյ այլևս անկարելի լինելով տանել լուծուած դիակների գարշահոտութիւնը,

հորը լցրին և դարձրին եղբայրական գերեզման։

Ահա այսօրինակ ոճրագործութիւնների ղեկավար հանդիսացել էր Զահրիի տանուտէր Աբաս Զալ օղլին, որը, ականատեսների վկայութեամբ, կարմիր զգեստ հագած առաջնորդում էր խուժանին դէպի շահատակութիւններ և որը ռուս արդարադատութեան կողմից ճանաչուեց անմեղ ու անպարտ։

Զահրիի առաջին օրւայ կոտորածի ու կողոպուտի յաջորդ երեք օրերի ընթացքում, այն է մայիսի 13-ին, 14-ին և 15-ին մասսայական յարձակումների ենթարկուեցին Նազարաբադը, Դիդուվարը, Սէսը, Սուլթան-բէկը, Օղբինը և Աղխաչը։ Ինքնապաշտպանութիւնից զուրկ այս վեց գիւղերը անկարող լինելով յետ մղել յարձակումները, շատ թոյլ դիմադրութիւնից յետոյ և նոյն իսկ առանց դիմադրութեան փախան գիւղերից, եղած-չեղածը թողնելով խուժանի քմահաճոյքին։

Դրանցից առաջին երկուսի, այն է Նազարաբադի և Դիդուվարի ժողովուրդները փախան Շխմահմուդ և երկու գիւղերն էլ մաքուր կողոպտուեցին։

Սէսի և Սուլթան-բէկի ժողովուրդները փախան Դարալագեազի սահմանը և ապաստան գտան Մարտիրոս գիւղում։ Այս գիւղերը նոյնպէս մաքուր կողոպտուեցին, իսկ Սուլթան-բէկը ունեցաւ նաև չորս մարդկային զոհեր։

Աղխաչի և Օղբինի ժողովուրդները փախան Հօրադիզ գիւղը, տանելով իրենց հետ թեթև իրերը։ Այն բոլորը, ինչ որ կարելի չեղաւ տանել, կողոպտուեց տեղացի թուրքերի ձեռքով։

Այս շրջանի երեք գիւղերը միայն շատ ու քիչ ազատ մնացին մեծ կողոպուտներից։ Դրանք էին. Ալմալուն, որը կարողացաւ մի քանի օր կրկնուող յարձակումները քաջաբար յետ մղել կորուստներով։ Այս գիւղից թուրքերը քշեցին միմիայն մի սուրու ոչխար։

Հօրադիզը, որը շնորհիւ իր յարմար դիրքերի ոչ միայն տեղից չը շարժուեց, այլ և պատսպարեց Աղխաչ և Օղբին գիւղերի ժողովուրդներին։

Եւ Զնաբերդը, մի մեծ ու քաջ գիւղ, որը մինչև վերջն էլ կանգուն մնաց, չը նայած այն բանի, որ այդտեղ եղող 20 տան չափ թուրքերը դեռ ևս մայիսի 10-ին իրենց իրերով տեղափոխուելով շրջակայ Կարաբաղլար և Խօկ գիւղերը, կազ-

մակերպեցին մի շարք յարձակումներ Զնաբերդի դէմ։

Ճիշտ է, Թուրքերը Զնաբերդի վրա գործած յարձակումների ժամանակ կարողացան գիւղի հանդից քշել 300-ի չափ ոչխար, 140-ի չափ տաւար և սպանեցին երկու մարդ, բայց գիւղին մոտենալ անկարող եղան և քաջ զնաբերդցին իր մեկուսութեան մէջ մինչև վերջն էլ մնաց անընկճելի։

ԱՒԵՐՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԻՋԵՒԱՆ ԳԵՏԻ ՎԵՐԻՆ ՀՈՎՏՈՒՄ

12—18 ՄԱՅԻՍԻ 1905 Թ.

Նախիջևան գետի վերին հովտում և նրա ճիւղերի վրա ընկած են 9 հայաբնակ գիւղեր, այն է՝ Ալագեօզ-Մազրան, Խալխալը, Բաղամլուն, Ղարաբաբան, Առինջը, Նորսը, Նորս-Մազրան, Գժաձորը և Գեօմուրը։ Վերջին վեց գիւղերը գտնւում են Շահապունեաց ձորի լանջերի վրա, միմեանց հետ կապւած լեռնային ճանապարհով, սակայն զուրկ սայլերի երթևեկութեան հնարաւորութիւնից։ Դրանցից ամենահեռաւոր և բարձր գիւղը Գեօմուրն է, ընկած Սալվարդի գագաթի ստորոտում, պաշտպանութեան համար գեղեցիկ բլուրների վրա։

Այս շրջանում կան 20-ից աւելի թուրքաբնակ գիւղեր, որոնց մէջ կողոպուտները ղեկավարողի դեր էին կատարում Շահբուզի, Քիւլուզի և Մահմուդաւանի թուրքերը, որոնք չափչփելով շրջակայ ձորերն ու գագաթները, ասպատակում էին հայ գիւղերը։

Յարձակումներն ու կողոպուտները այս շրջանում բռնկւեցին մայիսի 13-ին, այն է Նախիջևանի և Ջահրիի կոտորածից մի օր յետոյ, որոնք կրկնւեցին մի քանի օր պարբերաբար։

Կոտորածների սարսափը և մասսաների տարերային շարժումը դէպի կողոպուտն ու աւերը այնպէս կաշկանդել էին բաղդի կամքին թողնւած այս շրջանի հայ ժողովրդի միտքը և ուղեղը, որ նա մտքով անգամ չէր անցկացնում, թէ կարելի է դիմադրել խուժանին։ Եւ ահա մէկը միւսի յետևից դատարկւում էին այս գիւղերը և կողոպտւում ու հրդեհւում անօրինակ կերպով։

Այդ ինը գիւղերից երկուսը, այն է Խալխալը և Ալագեօզ-Մազրան, գտնւելով դաշտային մասում և աւելի մօտ Շխմահմուդին, այդտեղ էլ փախաւ ժողովուրդը, մի քանի զոհեր տալով, որից յետոյ երկու գիւղերն էլ հիմնովին կողոպտւեցին և աւերւեցին։

Ղարաբաբան, որը գտնուում է Նախիջևան գետի ձախ ափին, Շահապունեաց ձորի մի գեղեցիկ հովտում, նոյնպէս հիմնովին կողոպտուեց։ 59 տնից և 308 շնչից բաղկացած ժողովուրդը քաշուելով գիւղին կից «փոսի մէջան» և սուգ ու սարսափի մէջ այնտեղ էլ գիշերելով, ականատես եղաւ խուժանի վանդալական գործողութիւններին, մինչև որ ծանր գիշերւայ սև քօղը քաշուեց և նա՝այդ մերկ ու պլոկուած ժողովուրդը, բռնեց Գեօմուրի ճամբան մի աղեկտուր վայնասունով, անկարող լինելով քաղաք կամ նոյն իսկ Շխմահմուդ հասնել։

Առինջը մի շատ գեղեցիկ գիւղ, ընկած Ղարաբաբայից դէպի հիւսիս 3 վերստի վրա, Քիւքի ձորակի բերանում, երկու բլուրների մէջ, կարողացաւ խուժանին դիմադրել միմիայն մի օր։ Երկրորդ օրը 67 տնից և 500 շնչից բաղկացած ժողովուրդը անկարող լինելով այլևս պաշտպանուել 5 հրացանով, ուրը զոհեր տալուց յետոյ դարձեալ փախաւ Գեօմուր, հարուստ գիւղը, հարուստ կայքն ու տընտեսութիւնը թողնելով խուժանին։

Առինջը կորցրեց—450 տաւար, 2,000 ոչխար և գառ, 200 ձի, էշ, ղաթիր և աւելի քան 1,500 հատ մեղրի փեթակներ։

Ղարաբաբայից արևելք 5 վերստ հեռաւորութեամբ դէպի վեր ձորի լանջերը գտնուում է Նորս-Մազրան։ Այդ գիւղը թուրքախառն է և ունէր 78 տուն—540 շնչից բաղկացած հայ և ընդամենը 10 տուն թուրք բնակիչներ։ Նոյն խուժանը, որ հաւաքուած շրջակայ թուրք գիւղերից կողոպտեց Ղարաբաբան և Առինջը, յարձակուեց նաև Նորս-Մազրայի վրա և կողոպտեց ամբողջովին։ Ժողովուրդը նոյնպէս փախաւ Գեօմուր, այս շրջանի հալածուած հայ ժողովրդի ծաւրը։ Գիւղում մնացին 20 տուն հայեր՝ վստահացած համագիւղացի թուրքերի պաշտպանութեանը, բայց թէ դրանց հետ ինչ պատահեց, այդ կը տեսնենք յետոյ։

Նորս-Մազրայից փոքր ինչ հարաւ Զիարաթ, Գիւնէյ-թափա և Գեօթուրգեան անուններ կրող գագաթների խառնուածքի մի ժայռոտ և քարքարոտ ձորակի վրա ընկած է Նորսը։ Նա և գեղեցիկ է, և հարուստ, և բազմամարդ։ Գիւղը ունէր 160 տուն—1,200 բնակիչ, բաւականաչափ երիտասարդ ուժեր, բայց ինքնապաշտպանութեան համար չը կազմակերպուած։

Հարուստ և մեծ Նորսի վրա, բնականաբար, մեծ էլ խուժան եկաւ. գիւղը մի ամբողջ օր կարողացաւ դիմադրել խուժանին և

յետ քշել նրան կորուստներով և անշուշտ նա մինչև վերջն էլ կը պաշտպանուէր, եթէ կուող ուժերը մի ղեկավարող մարդ ունենային և եթէ տեղի չունենար մի դաւաճանութիւն։

Մի Նորսեցի հայ—Աւագ Մարգարեան անունով—Թուրքերի հետ միացած և մի նոր յարձակում ծրագրած հեւ ի հեւ գիւղ մտաւ աղաղակելով. «փախէք, Թուրքերը ահագին ուժով գալիս են»։ Այս աղաղակը յուսահատութիւն ու շփոթ առաջացնելով անգլուխ Նորսի ժողովրդի մէջ, սկսեց մի չը տեսնուած իրարանցում և փախուստ։ Խուժանը կոխեց գիւղը այն ժամանակ, երբ դեռ ևս շատերը չէին կարողացել գիւղից փախչել։ Ժողովրդի սուգ ու շիւանը և սար ու ձոր ընկնելը սոսկալի տեսարաններ ստեղծեց։

Զոհրաբ Պողոսեանի 80 տարեկան մայրը իր 5 մանր թոռներով, անկարող լինելով փախչել, սրախողխող եղաւ գիւղում և ձգւեց մի հորի մէջ։ 16 տարեկան պատանի Մկրտիչ Սիրունեանը, 70 տարեկան ծերունի Մկրտիչ Ալէքսանեանը և Առաքել Թաթոյեանի 25 տարեկան կինը սարսափից սրտաճաք եղան և մեռան։ Խուդոեանի և Յակո Թորոսեանի մի մի տարեկան ծծկեր երեխաները նետուեցին գետը իրենց հարազատ մայրերի ձեռքով, որոնք շնչասպառ եղած այլևս չէին կարողանում փախչողների յետևից գնալ։ Եւ մանուկ դիակները ջուրն առաւ ու տարաւ։

Այսպիսի սրտաճմլիկ պատահարների զոհ գնացին 15 հոգի, և բացի այդ, չորս ընտանիքներ մահուան սարսափի տակ կրօնափոխ եղան։

Նորսի ժողովուրդը երկու մասի բաժանուած՝ մէկը փախաւ Գեօմուր, իսկ միւսը իրեն ձգեց Նորս-Մազրա, ուր երկու շաբաթ ապրելուց յետոյ դարձեալ քօչեց Գեօմուր։ Նորս-Մազրայի 20 տուն հայերը այս անգամ էլ չուզեցին Գեօմուր գնալ։

Հարուստ Նորսը կողոպտուեց մի չը տեսնուած ձևով. Թուրքերը տարան. 2,000 տաւար, 6,000 գառ ու ոչխար, 750 ձի, էշ, ջորի, 1,000 մեղրի փեթակներ և գիւղի բոլոր գոյքը. պատերի մէջ չը մնաց ոչ դուռ և ոչ լուսամուտ, կողոպտուեց նաև հարուստ եկեղեցին և նրա գաղտնի պահարանը, գիւղացիների պահած ահագին ապրանքներով լեցուն. իսկ այդ բոլորից յետոյ հրդեհեցին մի շարք տներ։

Նորս-Մազրայից դէպի հիւսիսարևելք 7—8 վերստի վրա, բաւական մօտ Գեօմուրին, Թոխլի-դայա գագաթի ստորոտում,

ընկած է Գժաձորը 110 տուն, 890 շունչ ժողովրդով։

Լեռնային կլիմայի և անառիկ բարձունքների մէջ կռած ու կոփուած գժաձորցին էլ չը կարողացաւ պաշտպանուել խուժանի յարձակումներից։ Նա նոյնպէս փախաւ Գեօմուր մի քանի զոհեր տալով. նա նոյնպէս կողոպտուեց, նա նոյնպէս կորցրեց իր գոյքը, իր կենդանիները և ամեն ինչ։

Այսպէս Ղարաբաբայի, Առինջի, Նորս-Մազրայի, Նորսի և Գժաձորի—այդ 5 գիւղերի ժողովուրդը, աւելի քան 3,400 հոգի, եկան խմբուեցին Գեօմուր, սարերի մէջ կորած այդ գիւղը, տեղացի 161 տուն, 1195 շունչ ժողովրդի հետ միասին կազմելով 4,600 հոգի։

Գեօմուրն էլ ենթարկուեց պաշարման, այն էլ մի քանի անգամ. բայց նա կարողացաւ յետ քշել յարձակումները շնորհիւ իր լաւ դիրքերի, իր կուռող ուժերի, թէև խուժանը կարողացաւ քշել գիւղի տաւարն ու ոչխարը։ Ամենամեծ յարձակումը Գեօմուրի վրա տեղի ունեցաւ յունիսի 8-ին, երբ Սալվարդի շղթան եկան բռնեցին Զանգեզուրի և Ջիվանշիրի թափառական, այն է Ալիանցի, Մազմազակցի, Մէյթիլցի, Մարջանցի ցեղերը։

Գեօմուրը իր պատսպարած ահագին գաղթականութեան հետ միասին պաշարուեց մի խիստ օղակով։ Մի կողմից եկան շղթայեցին քոչւոր ցեղերը, իսկ միւս կողմից տեղացի Թուրքերի ահագին խուժանը։ Տեղի ունեցաւ մի յամառ կռիւ. Գեօմուրը իր մի քանի տասնեակներով կարողացաւ պաշտպանուել այդ օրը։ Բայց յարձակումը վերսկսուեց յաջորդ օրը աւելի մեծ ուժով. գիւղի վիճակը դարձաւ դժուարին. յուսահատութիւնը տիրեց ժողովրդին և բոպէն կրիտիկական էր, երբ Զանգեզուրից հասաւ կօզակների մի հարիւրեակ։ Կռիւի ընթացքը փոխուեց. հայերը միացած զօրքի հետ հակայարձակ եղան և Գեօմուրի շրջակայքը մաքրուեց խուժանից։

Այս ժամանակ Գեօմուրը գտնուում էր նեղ վիճակում. հացի պաշարը բոլորովին սպառուել էր, անխուսափելի սովը կեանքեր կը խլէր, եթէ Զանգեզուրը մի օր ևս հացով ու ալիւրով օգնութեան չը հասնէր։

Յունիսի 9-ին մի բարբարոս գործողութիւն տեղի ունեցաւ Նորս-Մազրա գիւղում, այն գիւղում, ուր ինչպէս տեսանք, Թուրքերի պաշտպանութեանը վստահացած մնացին 20 տուն հայեր։

Ահա այդ 20 տուն հայերի վրա Գեօմուրի պաշարումից դատարկաձեռն վերադարձող Թուրք խուժանը եկաւ իր բարկութիւնը Թափելու։

Դրանցից 19 հոգի, 14-ը տղամարդ, 4-ը կին, իսկ մէկը՝ 2 տարեկան մի մանուկ, ընկան տանջանքներով։ Կենդանի մնացածները, որոնցից 11-ը վիրաւորներ, գլուխ ազատելով փախան Գեօմուր, իսկ գեղեցիկ հարսները առևանգուեցին։ Մեզ տուին այդ առևանգուած հարսներից չորսի անունները, որև առաջ ենք բերում այստեղ։

Չորս տարեայ հարս 22 տարեկան Օվսաննա Նաւասարդեանին առևանգեց համագիւղացի Գիւլուլ Ֆարզալի օղլին, տարաւ Մահմուդ-Աւան գիւղը Հուսէին Ահմադ օղլու տունը և բաց Թողեց մի օր պահելուց յետոյ։

Երեք տարեայ հարս 18 տարեկան ՄագԹաղ Գէորգեանին առևանգեց համագիւղացի Ղայբալի Ֆարզալի օղլին, տարաւ Մահմուդ-Աւան Աղավալի Քեալբալայի Հուսէին օղլու տունը, որտեղից դժբաղդ ՄագԹաղը փախաւ երեք օր մնալուց յետոյ։

Հինգ տարեայ հարս 25 տարեկան Անուշ Կիրակոսեանին առևանգեցին համագիւղացի Խալիլ Ալլահեար օղլին և Զաբբար Ղասում օղլին, տարան Քիւլլուզ գիւղը Բաբա Ղուլի օղլու տունը, որտեղից Անուշը փախաւ 8 օր պահելուց յետոյ։

Երկու տարեայ հարս 15 տարեկան Ուստիանա Յովհաննիսեանին առևանգեցին մահմուդաւանցի Քեալբալայի Ղասում Մամադ Զաֆար օղլին և Խուդավէրդի Մամադ օղլին, տարան Քիւլլուզ դարձեալ Բաբա Ղուլի օղլու տունը և բաց Թողին 5 օրից յետոյ։

Ահա մի քանիսը այն անԹիւ ու անհամար փաստերից, որոնք տեղի էին ունեցել երկու-երեք շաբաԹների ընԹացքում։

Այսօրինակ գործողութիւններին ղեկավար առանձնապէս հանդիսացել էին Ղարաբաբայի հասարակութեան տանուտէր Աբաս-Կուլի Քեալբալայի-Հէյդար օղլին և քիւլլուզեցի անտառապահ (лѣсной объѣздчикъ) Մաշադի Ղարա-բէկը։

Այս շրջանի 9-ը գիւղերից մէկը միայն ազատ մնաց կողոպուտից ու աւերից, այդ Բաղամլուն էր, 120 տուն բնակիչներով, որի մի քառորդ մասը Թուրքեր էին, ընկած Առինջից 6—7 վերստ դէպի արևմուտք։

Բաղամլուն երԹարկուեց յարձակման մայիսի 14-ին Առինջի հետ միաժամանակ։

Այդ օրը Թուրքերը քշեցին գիւղի նախիրը, սակայն աւելի քան 80—90 տուն հայ ժողովուրդը փրկւեց կոտորածից շնորհիւ նրա, որ իր ամբողջ կազմով ընդունեց մահմեդական կրօնը։ Մահուան և կոտորածի սարսափի տակ տեղի ունեցաւ կրօնափոխութեան ծիսակատարութեան ակտը իր մանրամասնութիւններով։ Նոր դաւանափոխները ածիլեցին գլուխները, ձեռքերի մատերը ներկեցին հինայով, փոքրիկ մանուկներին թլպատեցին, և անունները փոխարինեցին Թուրքական անուններով։

Այսպէս, գիւղի ծխատէր քահանային, Տէր Թադէոսին, կարգեցին նոր հաւատակիցների վրա մօլլա, անուանելով Աշրաֆ Աղա. նրան օգնական տուին գրագիր Մելիքսէթ Ստեփանեանին, որոնք սովորեցնում էին նոր հաւատակիցներին հետևեալ աղօթքը. «Զանաթաթ կուսը էյլարամ կուրբաթան իլ Ալլահ» որ, կը նշանակէ Աստուծոյ կամքով մաքրւեցինք և հաւատի եկանք։

Մկրտիչ Մինասեանին անուանեցին Աւդլա բէկ։

Զորս տարեկան Ծաղիկին անուանեցին Զէյնաբ և քեաբին արին (նշանադրեցին) Քեալբալայի Հուսէինի տղայի, Ռիզայի հետ։ Իսկ Նօվրուզի աղջկան—9 տարեկան Զէյնաբին—քեաբին արին Միքայէլ Մկրտչեանի հետ։

Այսպիսի օրինակներ մէկ էլ տեղի էին ունեցել մարդասպան Սուլթան Համիդների սպանդանոցում—Տաճկահայաստանում։

Մի, թէ երկու շաբաթ անցաւ, դրութիւնը փոխւեց. Բաղամլուի հայերը թողին առ երես ընդունած մահմեդականութիւնը, մոռացւեցին կրօնափոխութեան դատարկ ծէսերի յիշողութիւնները, բայց չը մոռացւեցին այն զրկանքները, որ կրել էին միւս գիւղերը կոտորածների, լլկանքների, կողոպուտների և աւերումների պատճառով։

Երբ յունիսի վերջերին Գեօմուր խմբւած հայ ժողովուրդները վերադարձան իրենց գիւղերը, անդուռ, անլուսամուտ և դատարկ տների մէջ նրանց կրած աղքատութիւնը առասպելների շարքն անցաւ։ Ղարաբաբա գիւղում հայ կինը ջրի համար խեցի անգամ չունենալու պատճառով, աչքերից արցունք քամելով, իր որդու ձեռքից բռնած տանում էր աղբիւրի մօտ և ձեռքի բռներով ջուր խմացնում նրան ու վերադառնում տուն։ Քաղցի մատնւած այդ ժողովրդին տալիս էին առ ժամանակ զօրանոցների ինչ որ հին ալիւրներ, որից առաջացան ստամոքսային հիւանդութիւններ։

Իսկ նրա մերկութիւնը ծածկելու և անհրաժեշտ կարիքները հոգալու համար Երևանից հասցնում էին հին հագուստների և տնային կարասիների ահագին նուիրաբերութիւնը։

Այսպէս էր իրականութիւնը Ռուսաստանի երկնակամարի տակ։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԱԼԻՆՋԱ ԳԵՏԻ ՀՈՎՏՈՒՄ

ՄԱՅԻՍ 1905 Թ.

Նախիջևան գետից դէպի արևելք Ալանգեօզի շղթայից սկիզբը առնելով և հարաւային ուղղութեամբ հոսելով թափւում է Արաքսի մէջ Ալինջա կամ Երնջակի գետը։

Այս գետի հովտում, բազմաթիւ թուրք գիւղերի հետ խառն, որոնց մէջ առանձնապէս աչքի են ընկնում Միլախը և Բանանիարը, ընկած են վեց հայաբնակ գիւղեր, այն է՝ Ղազանչին, Նորաշէնը, Աբրակունիսը, Արազինը, Գզնութը և Ջուլֆին։

Նախիջևանում և նրա շրջականերում բռնկւած թուրքական գազանութիւնները իրենց հետևանքներով արձագանք գտան նաև այս շրջանում, թէև ոչ այն չափով, ինչ չափով այդ տեղի ունեցան միւս շրջաններում։

Թուրք մասսան շարժւեց, ահագին խմբերով նա յարձակւեց այս և այն գիւղերի և նրանց սահմանների վրա կողոպտելով, քանդելով այն բոլորը, ինչ որ կարելի էր լինում։ Եւ այդ բոլորը տեղի ունեցաւ Նախիջևանի դէպքերի հետ միաժամանակ մայիսի 12, 13 և 14-ին։

Այստեղ կատարւած դէպքերի մանրամասնութիւնները մենք չենք տալ, նկարագրութիւններ միւս շրջանների մասին շատ տւինք, ընդհանուր պատկերն այն էր, ինչ որ տեսանք. առաջ կը բերենք փաստերը մի քանի ամփոփ նախադասութիւններով։

Ջուլֆին՝ ընկած Արաքսի ափին, կարողացաւ պաշտպանւել յարձակումներից և ունեցաւ կենդանիների թեթև կորուստ։

Գզնութը—300 տուն ունեցող այդ մեծ գիւղը—պաշտպանւելով մի քանի անգամ կրկնւող յարձակումներից, ունեցաւ միմիայն կենդանիների կորուստ և 3-էլ մարդկային զոհեր։

Աբրակունիսն ու Արազինը կրեցին բաւական խոշոր վը-

նասներ։ Առաջինում կողոպտուեց 60 տուն, իսկ երկրորդում՝ 38 տուն, բացի այդ նրանք կորցրին իրենց կենդանիները։

Նորաշէնը—164 տնից բաղկացած այդ գիւղը—հիմնովին կողոպտուեց, թալանուեց և ժողովուրդը մատնուեց ծանր զրկանքների։

Իսկ Ղազանչին—գետի վերին հոսանքի վրա ընկած այդ գիւղը—տասն օր կրկնուող յարձակումների դէմ պաշտպանուեց մի այնպիսի հերոսութեամբ, որ ամբողջ գաւառը պատկառանքով էր յիշում այդ անունը. նա ունեցել էր 2 մարդկային զոհեր։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՇՈՒՌՈՒԹ ԵՒ ԳԻԼԱՆ ԳԵՏԵՐԻ ՀՈՎՏՈՒՄ

ՄԱՅԻՍ 1905 Թ.

Ալինջա գետից դէպի արևելք, Գողթան գաւառամասի արևմտեան սահմանի վրա, իր բազմաթիւ ճիւղերով տարածւած Շուռութ և Գիլան գետերի հովտում, նոյնպէս թուրք գիւղերով խառն, ընկած են Գողթանի տասն հայաբնակ գիւղերը, այն է. Փարաղաշտը, Շուռութը, Գեաղը, Մսրւանը, Ալահին, Բիստը, Փառական, Վերին-Ազան, Ներքին-Ազան և Դէրը։

Այս շրջանումն էլ մասսային յարձակումներ տեղի ունեցան, բաց ոչ բոլոր գիւղերի շուրջը։

Այդ տասն գիւղերից չորսը, Մսրւանը, երկու Ազանները և Դէրը ազատ մնացին յարձակումներից։

Փարաղաշտը, Շուռութը, Բիստը և Փառական թէև ենթարկուեցին յարձակումների, բայց կարողացան նրանց յետ քշել և շատ քիչ վնասներ կրել։ Այնպէս որ այս չորս գիւղերը կորցրին միմիայն իրենց կենդանիները։ Բացի այդ՝ Շուռութի մօտ կողոպտուեց Ս. Ստեփաննոսի վանքը իր ջրաղացով, իսկ Փառական ունեցաւ երկու մարդկային զոհեր։

Այս շրջանի տասն գիւղերից միմիայն երկուսը, այն է՝ Գեաղը և Ալահին ենթարկուեցին սոսկալի կողոպուտի։

Գեաղը ունէր 55 տուն. այդ բոլորը հիմնովին կողոպտուեց. նա ունեցաւ նաև երեք մարդկային զոհեր։

Ալահին ունէր 46 տուն. այդ էլ հիմնովին կողոպտուեց։ Ժողովուրդը երկու օր շարունակ դիմադրութիւն ցոյց տալուց յետոյ ականատես եղաւ իր գոյքի, իր տուն ու տեղի վանդալական կողոպուտներին և 12 ընտիր զոհեր տալուց յետոյ ստիպւած եղաւ թողնել աւերւած գիւղը և քաշել Շուռութ ու Բիստ։

Գիլան գետից դէպի արևելք, Կոնգուրо-Ալանգեոզի լեռնաշղթայից սկիզբն առնելով գալիս թափւում են Արաքսը 5 փոքրիկ գետակներ։ Այդ 5 գետակների վրա ընկած են Գողթանի տասն հայաբնակ գիւղերը և Օրդուբաթը.

Ցղնա գետի վրա ընկած են Բամիսը և Ցղնան։

Վանանդ գետի վրա՝ Քաղաքիկը, Տանակերտը և Դիսարը։

Ագուլիս գետի վրա՝ Վահրակերտը, Վերին-Ագուլիսը և Ներքին-Ագուլիսը։

Օրդուբաթ գետի վրա՝ Հանդամէջը և Օրդուբաթը։

Եւ Կարճևան գետի վրա՝ Կարճևանը։

Այս տասն գիւղերը և Օրդուբաթը ազատ մնացին մասսայական յարձակումներից և կողոպուտներից, թէև անհատական սպանութիւնները և մասնակի դէպքերը կրկնւում էին այս և այն տեղ։

Ահա այն միակ բաղդաւոր շրջանը Նախիջևանի ամբողջ գաւառում, որը կարողացաւ մի քանի անգամ առաջ եկած յուզմունքը կանգնեցնել, սպասելիք աղէտների առաջն առնել։

Վերջացնելով Նախիջևանի գաւառում բռնկւած աղէտի համառօտ յիշատակութիւնը, մենք տեսնում ենք հետևեալ սոսկալի պատկերը։

Բացի Նախիջևան քաղաքը և նրա Թազաքէնդ քաղաքամասը, այդ գաւառի 60 հայաբնակ գիւղերից 16-ը միայն ազատ մնացին մասսայական յարձակումներից. մնացեալ 44-ը լայն ասպարէզ դարձան կողոպուտների, բռնութիւնների և սպանութիւնների, որոնցից առանձնապէս 20 գիւղ հիմնովին կողոպտւեցին և աւերւեցին։ Ահա այդ գիւղերի ցուցակը իր անփոփ կորուստներով բերում ենք սրան կից։

Այս սոսկալի աւերումների շարքում մի թուրքաբնակ գիւղ միայն աւերւեց։ Այդ 80 տուն բնակիչ ունեցող Իթղոանն էր, ընկած Ջահրի գետի վերին հովտում, յայտնի իր անհանգիստ բնաւորութեամբ։

Իթղոանը Նախիջևանի գաւառի խռովութիւնների հէնց առաջին օրից հանդիսանալով ռազմական մի վայր, տեղ տւեց շրջակայ անհանգիստ տարրերին, կազմակերպելով մի շարք յարձակումներ հայ գիւղերի վրա։ Այսպէս Իթղոանի յարձակումների

շնորհիւ դատարկուեցին Աղխաչ և Օղբին գիւղերը. իսկ Սէսը և Սուլթան-բէկը բոլորովին կողոպտուեցին և ժողովուրդը հազիւ կարողացաւ փախչել Մարտիրոս գիւղը։ Այսքանով չը բաւականացած Իթղռանը ձեռնարկեց մի շարք յարձակումներ նաև Դարալագեազի, առանձնապէս Մարտիրոս գիւղի վրա։ Ահա հէնց այդ գիւղերի զինուած հայերի մի մեծ խումբ մայիսի 30-ին յարձակուեց Իթղռանի վրա, ուր թուրքերը 3 ժամ յամառ դիմադրութիւնից յետոյ փախան, մեծ զոհեր տալով, որից յետոյ գիւղը կողոպտուեց և ընկաւ. մի քանի հայ գիւղերի աւերման պատճառ դարձող Իթղռանը նոյնպէս աւերուեց։ Այդ անհանգիստ գիւղը ենթարկուեց նոյնպիսի բարբարոսութիւնների, որպիսի բարբարոսութիւններ գործել էր նա մի շարք հայ գիւղերում։ Այդտեղ ընկան 36 հոգի, իսկ ոմանց ասելով նոյն իսկ 100-ից աւելի մարդիկ

Ապա ինչ էր շինում ադմինիստրացիան այն ժամանակ, երբ ամբողջ գաւառում գիւղերը աւերուում էին գիւղերի յետևից և արիւնը շարունակում էր հոսել։

Ահա այս հարցի մի փոքրիկ լուսաբանութիւնը կուզէինք տալ։

Նախիջևանի արիւնոտ դէպքերի սկզբից մենք տեսանք Երեւանի փոխ-նահանգապետ Տարանովսկուն իր ամբողջ այլանդակութեամբ։ Նա երկու շաբաթի չափ այդ արիւնոտ գաւառում մնալուց յետոյ հեռացաւ, տանելով իր հետ մի քաղցր յիշողութիւն, բերանի մի համ ու լազաթ խաների ճոխ հիւրասիրութիւնից։

Ապա մայիսի 18-ին Նախիջևան հասաւ գեներալ Ալիխանովը, որպէս գլխաւոր կարգադրող։ Նա նոյնպէս իջևանեց խաների մօտ և բանից դուրս եկաւ, որ նա նոյն իսկ խաների փեսան է։ Ալիխանովը Նախիջևան մնաց մօտաւորապէս 2 ամիս և հեռացաւ այնտեղից, տանելով իր հետ հայերի ծովացեալ նզովքը։

Տարանովսկու և Ալիխանովի ժամանակ չարագործները ոչ միայն չէին պատժուում, այլ և խրախուսանք էին գտնում անպատիժ մնալով։ Գլխաւոր ոճրագործները, որոնց թուում և Զահրիի գալաւան—Աբաս Զալ օղլին—ազատ շրջում էին։ Ոստիկանական թուրք պաշտօնեաներին փոխանակ հեռացնելու, նորերն էին նշանակուում. դրանցից մէկն էր Ղարաբաբայի, այդ աւերուած շրջանի նոր նշանակուած պրիստաւը՝ Բէյիւք խանը։ Իսկ Նախիջևանում զօրքի մէջ եղող հայ զինուորներին ջոկում, ուղարկում էին

հայ գիւղերը, նրանց ներկայութիւնը քաղաքում համարելով անյարմար։ Մի խօսքով այդ երկու պաշտօնեաների ներկայութիւնը հայ ժողովրդի համար աւելի ծանր էր, քան նոյն իսկ կոտորածը։

Բոլորովին այլ դիրք բռնեց պրինց Նապալիօնը, որը նշանակուեց Երևանի զինուորական նահանգապետ դեռ ևս Ալիխանովի օրով։ Անաչառ ասպետ Նապալիօնը երբ այցելեց Նախիջևան, հայերը ազատ շունչ քաշեցին։ Մի քանի չարագործներ, որոնց թուում նաև Սրուս Զալ օղլին, բանտարկուեցին։ Յարձակում գործող խուժանի վրա կրակ բացող զինուորները արժանացան պրինցի գովեստին։ Բացի այդ, պրինցը խոստացաւ միջնորդել ինքնապաշտպանութեան համար մնասւած հայ գիւղերին զէնք տալ. խոստացաւ նոյնպէս վճարել հայերի ֆնասը թուրքերի հաշուին և խիստ պատժել յանցաւորներին։ Սակայն այդ խոստումները մնացին անկատար. նա սեպտեմբերի 24-ին թողեց Երևանի նահանգապետութեան պաշտօնը։

Ահա ադմինիստրացիայի այսպիսի տակտիկան թուրք անհանգիստ տարրերին մի այնպիսի վստահութիւն ներշնչեց, որ նրանք սկսեցին յարձակուել նոյն իսկ կազակների վրա՝ զէնքեր խլելու նպատակով, որը և վերջացաւ երկու խոշոր պագրօմներով և բարբարոս գործողութիւններով։

Թուրքերի կողմից կազակների վրա եղած մի երկու յարձակումները զօրքի մէջ յուզում առաջ բերին։ Այդ յուզմունքը աւելի ևս հող գտաւ նոյեմբերի 27-ին Նախիջևանի շուկայում մի քանի կազակների և թուրքերի մէջ տեղի ունեցած ընդհարման պատճառով։

Նոյն այդ գիշեր, ժամը 10-ին, Նախիջևանի շուկայում սպանուեց թուրք գիշերապահը, իսկ խանութների շարքում յայտնուեց հրդեհ։ Այրուում էին թուրքերի խանութները. հայերը ամէն ինչ կորցրել էին վաղուց։ Մայիսին հրդեհ ձգողները թուրքերն էին, իսկ այժմ՝ կազակները։ Մայիսին կողոպտում էին թուրքերը, իսկ այժմ՝ կազակները, և կազակները կողոպտեցին մի չը տեսնւած ձևով, որոնց աջակցում էին մի խումբ հայեր։ Յաջորդ օրը շուկայի ամբողջ կէս մասը չը կար այլ ևս։

Նոյեմբերի 29-ին սկսուեց հրդեհ, կողոպուտ և կոտորած նաև Զահրի գիւղում։ Թուրքերը գնդակ արձակեցին մի զինուորի վրա. նոյն թուրքերի գործած բարբարոսութիւնները հայերի դէմ համ-

բերութեամբ տանող զօրքը դուրս եկաւ համբերութիւնից այդ մի գնդակի պատճառով և սկսեցին բարբարոսութիւնները։ Երկու օր շարունակ Թուրքերը դիմադրում էին աննպատակ. երկու օր շարունակ զօրքը կոտորում, հրդեհում ու կողոպտում էր գիւղը, որին մասնակցում էին նաև հայերը։ Եւ այդպէս, Ջահրին ընկաւ Թալանուած ու մրոտուած. ամբողջ գիւղը հրդեհի զոհ էր դնացել. իսկ նրա փողոցներում Թափուած էին բազմաթիւ դիակներ։ Թուրքերը ունեցան աւելի քան 170 զոհեր։

Այս ևս կօզակների գործն էր, երկրի խաղաղութիւնը պահպանող կօզակների գործ, թէև անունը գարձեալ մնաց հայ-Թուրքական ընդհարում։



ՑՈՒՑԱԿՆԵՐ

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳԱՎԱՌԻ ԱՎԵՐՈՒՄՆԵՐԻ՝

Նախիջևանի գաւառի աւերածների պատկերը ներկայացուած վարդապետի ձեռքով

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն բնակիչ	Ցարձակումը եղել է 1905 թ.		Կողոպտուած տներ	Այրուած տներ
			մայիս	յունիս		
1	Նախիջևան .	450	12	—	180	10
2	Թազաքէնդ .	40	12	—	40	1
3	Հաջիվար . .	60	11-13	—	60	12
4	Իւխարի-ուզուն-օբա .	45	12	—	45	1
5	Դիդուվար . .	20	13	—	20	
6	Նազարաբադ .	90	13	—	90	10
7	Ջահրի .	250	12	—	250	12
8	Մամարզա-դիզա .	30	12	—	30	-
9	Խալխալ . .	80	13	—	80	—
10	Ալագեօզ-Մազրա .	70	14	—	70	6
11	Նորս .	160	15	—	160	12
12	Ղարաբաբա .	60	13	—	60	—
13	Առինջ .	70	14	—	70	—
14	Գժաձոր .	110	16	—	110	1
15	Նորս-Մազրա .	75	15	9	75	—
16	Գեալջարաջուր . .	55	12-13	—	55	—
17	Նորաշէն . .	70	13	—	70	—
18	Սուլթան-բէկ .	90	13	—	90	—
19	Սէս . .	50	14	—	50	—

*) Աղիւսակը մեր կազմածն է Մեսրոբ վարդապետի ընդարձակ տեղ տեղեկութիւններ, մեր բերածներն են։

Պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա Նախիջևանի գաւառի ների ներկայացրած ցուցակների, հասնում է 2,729,173 ռուբլու, իսկ յանձ

Նախիջևանի գաւառում աւերուած են միմիայն երկու Թուրքական կօզակների ձեռքով աւերուած է նաև Նախիջևանի Թուրքական բազարը։

Երևանի զինուորական նահանգապետ Լիւի Նապալիոնին Մեսրոբ 1905 թուի յուլիսին։ *

Կողոպտուած գիւղերի թիւը	Սպանուածներ	Վիրաւորուածներ	Քշուած են կենդանիները	Կորուստի քանակը ռուբլիներով	Ժողովուրդը փախաւ
	49	12	—	1,285,366	—
1		2	Բոլորովին կողոպտուած գիւղեր	33,249	Շխմահմուդ
1	1	4		50,449	Քաղաք
1	2	1		40,913	Շխմահմուդ
1	1	1		9,181	,,
1	2	1		107,311	,,
1	51	13		393,535	Շխմահ., Այլաբ., քաղաք
1	3	1		16,412	Շխմահմուդ
1		2		68,991	,,
1	2	4		82,442	,,
1	15	4		անյայտ	Գեօմուր
1	2	—		43,931	,,
1	2	—		103,447	,,
1	2	—		72,719	,,
1	20	11		19,448	,,
1	3	—		46,977	Փարադաշտ և Բիստ
—	1	—		անյայտ	,, ,,
1	3	—		,,	Մարտիրոս
1	—	—		,,	,,

եկագրից հանուած։ Գիւղերի տների թիւերը, ինչպէս և մի քանի լրացուցիչ

կրած գոյքային վնասների քանակը, համաձայն կողոպտուած գիւղացի-նաժողովի ցուցակով՝ 1,340,893 ռուբլու։

գիւղեր—Իթղռանը՝ հայերի ձեռքով, իսկ Ջահրին՝ կօզակների։

20	Ալահի .	50	14-18	—	50	—
21	Եարմջա .	140	14	—	54	—
22	Թմբուլ	150	15	—	55	39
23	Քիւլթափա .	130	13-16	—	32	—
24	Քեարիմ-բէկ-դիզա	25	12-13	—	25	—
25	Կուլի-բէկ-դիզա	45	13	—	45	—
26	Աբրակունիս	140	11-14	—	60	6
27	Արազին .	50	12-13	—	38	—
28	Կարմիր Վանք .	30	12-13	—	—	—
29	Բիստ	100	13-16	—	—	—
30	Մսրվան .	65	17	—	4	—
31	Շխմահմուդ	170	10	—	—	—
32	Խալիլու .	35	10-11	—	1	—
33	Եմխանա .	145	—	6	—	—
34	Ջնաբերդ	160	12	—	—	—
35	Բաղամլու	80	12,13,31	1	—	—
36	Գեօմուր .	160	17-20	8	—	—
37	Ղազանչի .	165	10 օր.	—	—	—
38	Շուրութ .	120	14-20	—	—	—
39	Փարաղաշտ	100	15-22	—	—	—
40	Գզնութ	270	12,13,20	—	—	—
41	Ջուլֆի	120	—	—	—	—
42	Աղխաչ .	25	—	—	25	—
43	Հանդամէջ	30	—	26	—	—
44	Ալմալու .	70	26	—	—	—
45	Փառակա .	90	24	—	—	—
46	Բամիս .	50	24	—	—	—
47	Կարախանբէկլու	130	13	—	—	—
48	Աստապատ	400	12	—	—	—
49	Օղբին	20	—	—	20	—

1	12	—		,,	Շուրուբ և Բիստ
1	1	2		,,	
—	20	9			
—	1	—		,,	
1		—		,,	
—	—	—		10,273	
—	—	—	քշած	20,325	
—	—	—	քշած	անյայտ	
—	—	—		անյայտ	
—	—	—	քշած	5,852	
1		—		անյայտ	
—	—	—	քշած		
—	4	1			
—	—	—		,,	
—	2	1			
—		—		3,630	
—	2	1		անյայտ	
—	2	—		,,	
—	—	—	քշած	1,800	
—	—	—		անյայտ	
—	3	—	քշած	600	
—	—	—		անյայտ	
1	—	—	քշած	,,	Հօրադիզ
—	4	—			
—	—	—	քշած		
—	2	—	քշած	,,	
—	1	—	քշած	,,	
—	—	—	քշած	3,868	
—	—	—	քշած	1,200	
—	—	—	քշած	անյայտ	Հօրադիզ

ՑՈՒՑԱԿ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳԱՎԱՌԻ ԱՎԵՐՎԱԾ ԳՅՈՒՂԵՐԻ 1)

№ №	ԳՅՈՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն հայ	Տուն թուրք	Հայ բնակիչ 2)	Ցարձակումը եղել է 1905 թ. Մայիս	Ցուն.	Սպանուածներ
1	Նախիջևան .	450	—	—	12	—	50
2	Թմբուլ. .	130	40	650	15	—	20
3	Աստապատ .	500	50	2200	15	—	1
4	Եմխանա .	145	3	800	—	6	—
5	Ալահի . .	85	—	520	13	—	8
6	Բիստ . .	60	60	300	13	—	—
7	Հաջիվար .	60	—	280	13	—	5
8	Ջահրի . .	250	600	1010	12	—	52
9	Գեսմուր .	161	—	1195	—	8	1
10	Գժաձոր .	110	—	890	16	—	4
11	Նորս . .	160	—	1203	14-17	—	15
12	Նորս-Մազրա. .	78	10	540	14	—	19
13	Առինջ . .	67	—	500	13	—	8
14	Ղարաբաբա . .	59	—	308	13	—	3
15	Ալազեոզ-Մազրա .	64	—	400	14	—	2
16	Քիւլթափա . .	150	—	1000	15	—	1

1) Ինչպէս Նախիջևանի գաւառում, այնպէս էլ Երևանի նահանգի կուսի բացառութեամբ։

2) Շնչահամարներն առաջ են բերուած համաձայն այն ցուցակների։

3) Նախիջևանում կողոպտուած և աւերուածները խանութներ են։

4) Ցորենի ցանքերը չը ջրելու և չը խնամելու պատճառով կոր-

5) Մի դեսիատին տեղը տալիս է 30 փ. մաքուր բամբակ։

6) Մի դեսիատին տեղը տալիս է 500 խուրձ եօնջա։

7) Առաջ բերած կոտորակները 1/4, 1/2 և 3/4, ցոյց են տալիս բերքի աւերը ցոյց են տալիս, որ բերքը ամբողջովին փչացել է։

ԵՒ ՆՐԱՆՑ ԴԱՇՏԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ—ՄԵՐ ԿԱԶՄԱԾԸ։

Վիրաւորուածներ	Տուն թալանուած	Տուն այրուած	ՔՇԻԱԾԵՆ Տաւար	Ոչխար	Գաւ	Ձի	Էշ, ջորի	Դաշտային կորուստներ դեսիատինի հաշուով Ցորեն	Բամբակ	Եօնջա	Տարեկան եկեղեցական իրեղէն
	3)							4)	5)	6)	
12	180	8	—	—	—	—	—	—	—	—	—
7	55	11	80	30	—	24	—	200	100	—	—
—	—	—	15	300	—	1	—	—	—	—	—
—	—	—	—	—	—	—	—	—	—		—
5	55	3	450	1800	—	68	—	15¹/₄7)	—	20	600
—	—	—	300	500	—	—	—	—	—	—	—
5	60	10	380	800	—	13	—	200	20	10	—
15	250	6	800	500	—	3	—	400¹/₃	80	20	—
1	—	—	50	500	—	30	—	200¹/₄	—	100¹/₂	—
1	110	1	100	300	—	18	—	150¹/₄	—	100	200
4	—	12	2000	4000	2000	150	600	800¹/₄	—	110	1000
11	—	—	500	1200	600	25	150	80¹/₄	—	8¹/₂	—
—	—	8	450	1800	800	—	225	200¹/₄	—	25	1500
—	—	3	200	450	300	—	5	30¹/₂	—	5	—
4	—	5	450	100	—	15	800	100³/₄	—	25	—
—	—	—	10	18	—	—	30	300¹/₄	—	15	—

միւս շրջաններում աւերուած գիւղերը նորից վերաբնակուած են մի երորով աւերուած գիւղերում ալիւր էին բաժանում։

ցրել են բերքի քառորդ, յանախ կէս մասը։

այն մասը, որը փչացել է, իսկ առանց կոտորակների առաջ բերած Քը-

ՇԱՐՈՒՐ-ԴԱՐԱԼԱԳԵԱԶԻ ԳԱՒԱՌ

Երևանի նահանգի 7 գաւառներից ամենափոքրը Շարուր-Դարալագեազի գաւառն է, ընկած նահանգի հարաւային մասում, որի սահմաններն են, հիւսիսից՝ Երևանի և Նոր-Բայազէտի գաւառները, հարաւից՝ Նախիջևանինը, արևելքից՝ Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառը, իսկ արևմուտքից՝ Արաքսը, որը կազմում է Պարսկաստանի կամ Մագուի խանութեան սահմանագիծը։

Շարուր-Դարալագեազի գաւառը լեռնային կազմուածք ունի, մանաւանդ հիւսիսային և արևելեան մասերը, որոնք ներկայացնում են կատարների, լեռների և անհամար ձորերի մի զանգուած, բաւական աղքատ բուսականութեամբ. իսկ հարաւարևմտեան մի փոքր մասը, որը տարածւում է մինչև Արաքսի ափերը, դաշտավայր է, հարուստ բարձր կուլտուրայի բերքերով։

Գաւառը բաղկացած է երկու գաւառամասերից—Դարալագեազից կամ պատմական Վայոց Ձորից, որը բռնում է գաւառի լեռնային երեք քառորդ մակերևոյթը և Շարուրից, որը բռնում է դաշտային տափարակ մասը, ձգւելով մինչև Սաղարակի և Նախիջևանի հարթութիւնները։

Շարուր-Դարալագեազի ամբողջ գաւառը ոռոգւում է մի հատիկ—Արփաչայ գետով, որը սկիզբն առնելով գաւառի հիւսիս-արևելեան սահմանի լեռնաշղթաներից դէպի հարաւարևմտեան սահմանը պտոյտներ կազմելով և բազմաթիւ մանր ու մեծ գետակներ ընդունելով իր մէջ, գալիս տարածւում է Շարուրի դաշտը, կեանք տալով նրան։

Գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 76 հազար, որից թուրքերը՝ 55 հազար, իսկ հայերը՝ 21 հազար։ Հայերը այս գաւառում ամբողջ նահանգի մէջ կազմում են ամենափոքր մասը, այն է՝ 21%-ը։

Շարուր-Դարալագեազի 163 գիւղերից հայաբնակ են 33-ը, որից 8-ը գտնւում են Շարուրի գաւառամասում, իսկ 25-ը՝ Դարալագեազի։ Դրանք են.

ՇԱՐՈՒՐԻ ԳԱՒԱՌԱՄԱՍՈՒՄ

№№	Գիւղերի անունները	1886 թ. վիճակագր. տուն	Մատաղատուն	Շունչ
			*	*
1	Ուլիանորաշէն . .	183	220	1260
2	Դաշարխ . . .	30	32	210
3	Թազաքէնդ . . .	—	33	210
4	Փարչի (50 տ. թուրք) .	18	20	110
5	Խանլուխլար . . .	150	180	1050
6	Ալաքլու . . .	86	120	760
7	Վարմազիար . . .	136	170	1045
8	Քէշտազ (30 տ. թուրք) .	56	71	350

ԴԱՐԱԼԱԳԵԱԶԻ ԳԱՒԱՌԱՄԱՍՈՒՄ

1	Ղուշչիլար . . .	53	90	788
2	Գնդեվազ (20 տ. թուրք) .	38	67	727
3	Այար	34	45	317
4	Արփա	72	80	554
5	Հերհեր (95 տ. թուրք) .	54	80	610
6	Դայլախլու . . .	12	13	126
7	Մալիշկա . . .	126	160	1298
8	Բաշքէնդ . . .	43	65	672
9	Օրթաքէնդ . . .	54	115	1016
10	Քէշիշքէնդ . . .	119	155	1405
11	Քարագլուխ . . .	55	124	946
12	Թառաթումբ . . .	28	48	370
13	Էրդափին . . .	40	70	600
14	Հասանքէնդ . . .	34	87	580
15	Ղոյթուլ	83	123	1066
16	Այնազուր (Աղաւնաձոր) .	47	97	980
17	Ռինդ	43	50	501
18	Ելփին	78	110	785
19	Մարտիրոս . . .	106	160	1319
20	Փաշալու . . .	69	120	884
21	Փոռ	56	50	350
22	Ազաղէք . . .	72	110	919
23	Ենգիջա	30	50	583
24	Կնիշիկ	47	55	560
25	Խաչիկ	90	110	960

Շարուր-Դարալագեազի գաւառում հայ-թուրք. ընդհարումներ տեղի ունեցան թէ Շարուրի և թէ Դարալագեազի գաւառամասերում։

*) Այս տեղեկութիւնները մերն են, առաջ բերուած այժմեան հաշուով։

ԱՒԵՐՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՐԻ ԳԱՒԱՌԱՄԱՍՈՒՄ

29—31 ՄԱՅԻՍԻ 1905 Թ.

Շարուրի պտղաբեր և արգաւանդ դաշտում բաւական խիտ կերպով ընկած են 54 գիւղեր, որոնցից, ինչպէս վերը տեսանք, ութը միայն հայաբնակ են։

Այդ ութը գիւղերից վեցը, այն է՝ Դաշարխը, Թազաքէնդը, Փարչին, Խանլուխլարը, Ալաքլուն և Վարմազիարը խմբուած գտնուում են դաշտավայրի արևելեան մի սիրուն թեք մակերևոյթի վրա, որտեղից արդէն սկսւում է Դարալագեազի սարահարթը։ Այս վեց գիւղերը՝ շնորհիւ բամբակ, բրինձ և խաղող արտադրող դաշտերի և ժողովրդի աշխատասիրութեան, ունէին օրինակելի տնտեսութիւն։ Սիրուն արտաքին և գեղեցիկ տներ աչքի էին ընկնում մանաւանդ Վարմազիար գիւղում։

Այս գիւղախմբից դէպի արևմուտք, մի փոքր հեռու դաշտավայրում, թուրք գիւղերով շրջապատուած, գտնուում է թուրքախառն Քէշտազ գիւղը։

Իսկ դէպի հիւսիս, 10 վերստ հեռաւորութեամբ, Օղլան-Ղալա բլրի ստորոտին, Արփաչայի այն հոսանքի վրա, ուր գետը դուրս պրծնելով Դարալագեազի լեռների ժխորից, բաժանւում է բազմաթիւ առուների և տարածւում ընդարձակ դաշտավայրը, գտնուում է Ուլիանորաշէնը։

Այս շրջանի ութ գիւղերի մէջ ամենահարուստը և ամենամեծը Ուլիանորաշէնն էր, իր 220 տուն բնակիչներով, իր բամբակի և բրնձի առաջնակարգ հողերով, ընկած մի շարք այն է՝ Համզալի, Մահմեդ-քէնդ, Բաշնորաշէն, Զէյվա, Դուդանգա և այլ թուրք գիւղերին կից։

Ահա Նախիջևանի գաւառի աւերումներից և Երևանի մայիսեան ընդհարումներից յետոյ, աւերումների ասպարէզ դարձան այդ ութը գիւղերը։

Այս շրջանում, ինչպէս և Նախիջևանի գաւառում, յուզման նշաններ նկատելի դարձան դեռ ևս Բագուի և Երևանի փետրվարեան դէպքերի ժամանակ։

Պատճառները հասկանալի էին. այստեղ էլ հայ տարրը համարում էր անվստահելի, այստեղ էլ ադմինիստրացիան խեթ աչքով էր նայում նրա վրա, որից թուրք անգիտակ մասսան խրախուսած, կանգ չէր առնում ոչ մի միջոցի դէմ, ոչնչացնելու այն աշխատանքը, որ դրել էր այդ անկիւնում աշխատաւոր հայ ժողովուրդը։ Ինչպէս ադմինիստրացիայի համակրութիւնը, այնպէս էլ թաւ՛ան գերակշռութիւնը թուրքերի կողմն էր։

Փետրվարեան յուզմունքը անցաւ մի թեթև դէպքով. Բաշնորաշէնի *) շուկայում սպանուեցին երկու հայեր։

Յուզմունքները այս շրջանում աւելի մեծ չափեր ընդունեցին մայիսին, Նախիջևանի աւերումներից յետոյ, երբ տեղի ունեցաւ Երևանի ընդհարումը՝ թուրքերի համար կորստաբեր հետևանքներով։

Ճիշտ է, մինչև մայիսի 29-ը մասսայական դէպքեր դեռ ևս տեղի չունէին, բայց դրութիւնը այնքան լուրջ էր, որ հայերը թուրքերի գիւղերի միջով դաղարել էին երթևեկել, իսկ նոր նոր երթևեկող երկաթուղու գնացքով Նախիջևանից Երևան շտապող Շէյխուլ-իսլամը և Կարապետ վարդապետը կարևոր համարեցին իջնել Բաշնորաշէն, հրաւիրել թուրք ժողովրդին և յորդորել խաղաղութիւն ու համերաշխութիւն։

Բայց հէնց որ երկու կրօնաւորները հեռացան, հակառակ նրանց յորդորների յաջորդ օրը և եթ թուրք մասսան շարժուեց, Շարուրի մի բուռն ժողովրդի գլխին պայթեց փոթորիկը։

Առաջին զոհը եղաւ Ուլիանորաշէնը, միայնակ ընկած այդ մեծ գիւղը։

Մայիսի 30-ին շրջակայ գիւղերից մի ահագին խուժան եկաւ պաշարեց գիւղը երեք կողմերից։ Ուլիանորաշէնցին ցոյց տուեց դիմադրութիւն և ուժեղ դիմադրութիւն. նա այնքան էլ հեշտութեամբ չուզեց թողնել իր գոյքը։ Կուող տղամարդիկ շատ չէին, բայց նրանք ցոյց տուին մի հերոսական քաջութիւն։ Անհաւա-

---

*) Բաշնորաշէնը թուրքաբնակ գիւղ է և շրջանի ադմինիստրացիայի կենտրոնավայր։

սար կռիւը տևեց մի քանի ժամ։ Խուժանը գնալով մեծացաւ։ «Վախկոտ» հայերի գնդակները և Թուրքերի տուած մի քանի զոհերը աւելի ևս յուզեցին խուժանին։ Ուլիանորաշէնը նեղուեց. գիւղի հարաւային ծայրից ժողովուրդը սկսեց փախչել. խուժանը մօտեցաւ տներին նաւթով և հրձիգութեան նիւթերով։ Սկսուեց հրդեհը մի քանի տներից. կազմակերպւած հրձիգները Թրջում էին տակառներով բերած նաւթի մէջ դաշտից հաւաքած եօնջայի չորացած խուրձերը, վառում և այդպէս նետում բակերի ու տների ներսը։ Այս գործողութիւնը ղեկավարում էին Բաշնորաշէնի մի քանի յայտնի և անանի Թուրքեր։

Հայ ժողովուրդը սուգ ու շիւանով քաշւեց Օղլան-Ղալա, գիւղի Թիկունքին կպած վահանի պէս ամուր կուրծք ունեցող այդ բլուրի վրա, հազիւ իր չոր գլուխն ազատելով։ Մի քանի հրացանաւորներ, հերոսաբար դիմադրելով խուժանին և նրա շարքերից գետին գլորելով բաւական մարդիկ, հնարաւորութիւն տուին ժողովրդին քաշւել բլրի գագաթը, որից յետոյ միայն իրանք նահանջեցին, անկարող լինելով այլ ևս դիմադրել խուժանին։ Սակայն նրանցից մէկը, Մատթէոս Մովսէսեանը, այդ քաջ տղամարդը, իր տան տանիքի վրա մինչև վերջը կուելով, գնդակահար եղաւ և մեռաւ։

Այս բոլորից յետոյ միայն ամբոխը Թափւեց գիւղը և սկըսւեց կողոպուտն ու հրդեհը մեծ չափով։

Երեք օր շարունակ հազարաւոր խուժանը, մեծ Թէ փոքր, մարդ Թէ կին, էշերով, ձիերով և մէջքի վրա, կրեց Ուլիանորաշէնի հարստութիւնը, երեք օր շարունակ հրդեհը լափեց ու անցաւ ահագին գիւղը և երեք օր շարունակ սովի ու ծարաւի մատնւած ահագին ժողովուրդը բլուրի վրայից ականատես էր այդ բարբարոս գործողութիւններին։

220 տներ և տասնեակ խանութներ բոլորովին կողոպտւեցին, 220 տներ և տասնեակ խանութներ հրդեհւեցին և մոխիր դարձան։ Այդպիսի աւեր ու հրդեհ մենք չը տեսանք և ոչ մի տեղ, այդ մի կատարեալ դժոխային գործողութիւն էր։

Ուլիանորաշէնի նիւթական վնասը ահագին էր. նրա կորուստը հասնում էր 600,000 ր. և բացի այդ, Ուլիանորաշէնը ունեցաւ 30,000-ից աւելի դաշտային կորուստ, շնորհիւ դաշտերի անխնամ և անջուր մնալուն։

Այսպէս, ահա, ուլիանորաշէնցին ամեն ինչից զրկուած, երկու ամիս շարունակ Օղլան-Ղալայի կրծքին կպած՝ ցրտին, աբևի ճառագայթներին և քաղցին ենթակայ, տարափոխիկ հիւանդութիւններով բռնուեց և բազմաթիւ զոհեր տուեց։

Ուլիանորաշէնը յարձակման ժամանակ ունեցել էր չորս զոհ, դրանք էին՝ Բայաթ Մահտեսի-Բաղալեանը, 70 տար., Մատթէոս Մովսէսեանը, 35 տար., Գրիգոր Սահակեանը, 60 տար., և 90 տար. Սէյրօ անունով մի կուրացած պառաւ կին, նաւթով այրուած։ Թուրքերը ունեցել էին մինչև 30 զոհ։

Ուլիանորաշէնի վրա տեղի ունեցած յարձակման հետ միաժամանակ յուզմունքներ նկատուեցին նաև միւս հայ գիւղերի շրջակայքում։ Մասսայական խուժումները անխուսափելի դարձան դաշտավայրի բոլոր ծայրերից։ Խաղաղասէր Թուրքերից մէկը, Մամեդ-բէկ Շահ-Հուսէին-բէկովը, հայերին զգուշացրեց տեղի ունեցող յուզմունքներից։ Քէշտազ, Թազաքէնդ, Դաշարխ, Ալաքլու և Վարմազիար գիւղերից ժողովուրդը շտապեց քոչել Խանլուխլար՝ այդ կենտրոնական և մեծ գիւղը։ Փարչին կպած լինելով Խանլուխլարին, չը քոչեց։ Ալաքլուի և Վարմազիարի ժողովուրդը դեռ ևս իր գոյքը չէր տեղափոխել Խանլուխլար, երբ խուժանը եկաւ պաշարեց մի անգամից այդ երկու գիւղերը։

Խուժանին դիմադրելը անհնարին էր։ Գիւղերը ենթարկուեցին կողոպուտի. ինչ որ կարելի էր տանել, ամբոխը տարաւ, նոյն իսկ զոնեն ու լուսամուտները, ինչ որ կարելի չէր տանել, ջարդ ու փշուր եղաւ, ոչնչացաւ. այնպէս որ այգիներով հարուստ այդ երկու գիւղերում կոտրատուեցին հարիւրաւոր գինու կարասներ և այլ պարագաներ։ Այդ բոլորից յետոյ խուժանը հրդեհեց այդ երկու գիւղերի ամենալաւ տները։

Այս բոլորը տեղի ունէր մայիսի 30-ի երեկոյեան։

Մայիսի 31-ի վաղ առաւօտեան աւերուեց և հրդեհուեց Դաշարխը։ Նոյնը տեղի ունեցաւ նաև Քէշտազ գիւղի հետ։ Եւ ապա խուժանը եկաւ պաշարեց Խանլուխլարը ու Փարչին, ուր խմբուած էին եօթը գիւղերի, մօտ 4000 հոգուց բաղկացած, ժողովուրդը։

Այդ ահագին բազմութեան համար սկսուեց մի ծանր դրութիւն։ Գնալով թափուեց եկաւ չորս կողմից թուրք խուժանը։ Հայերից կազմուեց դիմադրողների մի ուժեղ խումբ. նրան միացաւ

այդտեղ եղող 100-ից աւելի զօրքը, և սկսւեց յամառ ու տևողական կռիւը երկու կողմերից։

Այդ ժամանակ Խանլուխլար էին գտնւում գաւառապետի օգնականը և մասի պրիստաւը, որոնց ներկայութիւնը կարծէք ոչ մի նշանակութիւն չունեցաւ խուժանի համար։ Պաշարումը և կռիւը շարունակւեց մայիսի 31-ի ամբողջ օրը, վերսկսւեց նաև յունիսի 1-ին. զօրքի փամփուշտը, ասում են, սպառւեց և նա կռիւը թողած, անցաւ գիւղի դպրոցի մօտ խմբւած կանանց և երեխաների բազմութիւնը պաշտպանելու։ Գաւառապետի օգնականը քաշւեց մտաւ մի տուն և չէր ուզում այնտեղից դուրս գալ։ Խուժանին դիմադրելու համար դիրքերում մնացին միմիայն հայերը։

Այդ պայմաններում էլ կռիւը դեռ երկար շարունակւեց, մինչև որ նոր զօրքեր հասան և խուժանին հալածեցին մեծ կորուստներով։ Մինչև այդ Նախիջևանից եկաւ նաև Ալիխանովը—թուրքական բարբարոսութիւնները ճնշելու համար Թիֆլիսից ուղարկւած այդ գեներալը։

Անցաւ մի օր, երկու օր, Քէշտաղից, Դաշարխից, Ալաքլուից և Վարմազիարից բարձրացող ծուխը դադարեց. այդ գիւղերը դարձան անմարդաբնակ ու աւերակ. թուրք խուժանը քաշւեց, հանդարտւեց. այդ խուժանից կողոպտւած իրերով բանդարկւած 98 մարդիկ, որոնց թւում նաև խուժանին առաջնորդող դրօշակակիր մօլլան, ազատ արձակւեցին և որպէս ոչինչ չեղած, գեներալ Ալիխանովը վերադարձաւ Նախիջևան։

Նա իր պարտականութիւնը կատարել, վերջացրել էր . . .

Ճիշտ է, այդ գիւղերի աւերման և Խանլուխլարի պաշարման ժամանակ հայ ժողովուրդը ունեցաւ ընդամենը մի քանի սպանւածներ, բայց նա զոհեր տւեց յետոյ։

4000 ժողովուրդը անկարող լինելով դուրս գալ Խանլուխլարից, երեք ամիս շարունակ ապրեց այդ գիւղում սոսկալի նեղութիւնների մէջ։ Նա կերակրւում էր լոկ հացով, նա պարկում էր մերկ յատակների և բացօդեայ տանիքների վրա. սարսափելի նեղւածքը առաջ բերեց գիւղում գարշահոտութիւն, և այդ տարադիր ժողովրդի մէջ բուն դրին տարափոխիկ հիւանդութիւնները, տանելով բազմաթիւ զոհեր—մանաւանդ մանուկ սերնդից։

Ցուլիս ամսին շրջագայող սանիտարական խումբը, որին

միացած էինք և մենք, չը գտաւ և ոչ մի մանուկ, որ առողջ լինէր. նրանք բոլորը տառապում էին այս կամ այն հիւանդութիւնից։

Սրանից աւելի վատթար դրութեան մէջ գտնւում էր Ուլիանորաշէնի ժողովուրդը, որը դեռ ևս ապրում էր Օղլան-Ղալա բլրի կրծքին կպած՝ կապերտներից, ջէջիմներից շինած հովանիների տակ։

Շարուրի հայ ժողովրդի տառապանքը սրանով չը վերջացաւ. շարաթներ շարունակ նա անկարող լինելով ազատօրէն դաշտ դուրս գալ, անջուր և անխնամ մնալուց ահագին փնասներ կրեցին նրա այգիները, հացահատիկների, բամբակի և բրնձի ցանքերը և աստիճանաբար ցամաքեցին նրա ձմրան ապրուստի միջոցները։

Աւելի վատթար էր Քէշտազի ժողովրդի դրութիւնը, որը հրաժարւելով այլ ևս գիւղ վերադառնալ, ձգեց երեսի վրա ամեն ինչ—և արտ, և այգի, և գերադասեց ապրել այս և այն գիւղում, սրա և նրա դրանը։ Իր սեփական տնտեսութիւն ունեցող գիւղացին գերադասում էր այժմ մշակութեան օրավարձը։

Ահա թէ կեանքի որպիսի անապահովութիւն ստեղծւել էր հայ գիւղացու համար։

Այս եօթը գիւղերից սպանւել էին 11 մարդ։ Դրանք էին. Խանլուխլարից՝ Սարգիս Յակոբեանը, 55 տար., Ալաքլուից՝ Լևոն Խաչատրեանը, 13 տար., Քէշտազից՝ Մովսէս Խուդոեանը, 70 տար., Դաշարխից՝ Յովհաննէս Մէլիք Առաքելեանը, 25 տար., Մեսրովբ Բաղդասարեանը, 30 տար., Վարմազիարից՝ Առաքել Մահտ. Ստեփանեանը, 20 տար., Իսրայէլ Մնացականեանը, 27 տար., Գէորգ Յակովբեանը, 25 տար., Կարապետ Ենոքեանը, 42 տար., վերջին վեցը սպանւեցին Ախուրի թուրք գիւղի մօտ, Խաչիկ գիւղից վերադառնալիս, ուր փախել էին յարձակումների ժամանակ։

Բացի այս, Վարմազիարից սպանւել էին այդ դէպքերից դեռ ևս առաջ Ղազար Ղազարեանը, 25 տար. և Սմբատ Յակովբեանը, 25 տարեկան։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԴԱՐԱԼԱԳԵԱԶԻ ԳԱՒԱ-ՌԱՄԱՍՈՒՄ

ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1905 Թ.

Շարուր-Դարալագեազի 163 գիւղերից 109-ը գտնւում են Դարալագեազի գաւառամասում, որից, ինչպէս վերը տեսանք, 25-ը հայաբնակ են։ Դարալագեազ գաւառամասի ամբողջ երկարութեամբ ձգւում է Արփաչայ գետը, երկու կողմերից ընդունելով բազմաթիւ մանր ու մեծ գետակներ։ Աջ կողմից գալիս խառնւում են ի միջի այլոց Հերհեր, Մալիշկա, Ալագեօզ և Ելփին, իսկ ձախ կողմից՝ Մարտիրոս, Ազադէք և Կնիշիկ գետակները։

Արփաչայ գետի վերին հոսանքի և նրա յիշեալ ճիւղերի լեռնահովիտներում ընկած են հայաբնակ գիւղերը այս կարգով։

Արփաչայի բուն հոսանքի վրա, վերից սկսած՝ Ղուշչի-Բիլակ, Գնդեվազ, Այար և Արփա գիւղերը։

Աջ կողմից խառնւող գետակների վրա՝ Հերհերը, Դայլախլուն, Մալիշկան, Բաշքէնդը, Օրթաքէնդը, Քէշիշքէնդը, Քարագլուխը, Թառաթումբը, Էրդափինը, Հասանքէնդը, Ղոյթուլը, Այնազուրը, Ռինդը, Ելփինը։

Իսկ ձախ կողմից խառնւող գետակների վրա՝ Մարտիրոսը, Փաշալուն, Փոռը, Ազադէքը, Ենգիջան, Կնիշիկը և Խաչիկը։

Հայ գիւղերը, փոքր բացառութեամբ, ընկած են միմեանցից բաւական հեռու և շրջապատւած բազմաթիւ թուրք գիւղերով։ Բացի այդ, ամառները Դարալագեազի լեռները չւում-գալիս են Արաքսի ափերից քրդեր, Շարուրի և Սադարակի տափարակից՝ թուրքեր և Ջիբրայիլի հարթութիւններից՝ այլ և այլ ցեղեր։ Այդպիսի եայլաղատեղիներ հիւսիսային մասում յայտնի է Այրիջան, իսկ հարաւային մասում՝ Եազիւրդը։

Ահա այն պայմանները, որոնց մէջ գտնւելով այդ շրջանի

հայ ազգաբնակութիւնը, անխուսափելի կերպով կանգնած էր ընդհարումների առաջ։

Ընդհարումները սկսուեցին հարաւային սահմաններից անմիջական շփման մէջ լինելով Նախիջևանի գաւառի հետ, ուր բռնկուեցին խռովութիւնները։

Այդ խռովութիւնների հետ միաժամանակ, այն է 12-ից մինչև 20-ը մայիսի, խլրտումներ ծագեցին Դարալագեազի բոլոր մասերում։ Տեղական Թուրք տարրերը, միացած թափառական ցեղերի հետ, մի շարք յարձակումներ գործեցին հայաբնակ գիւղերի վրա։

Մարտիրոս գիւղը, որը ընկած է Նախիջևանի սահմանին բաւական մօտ, կարողացաւ յետ մղել յարձակումը, թէև արօտատեղիներից Թուրքերը յաջողեցրին քշել աւելի քան 300 ոչխար։

Յարձակման ենթարկուեց նաև Փաշալուն. այդ գիւղն էլ պաշտպանուեց և յարձակումը յետ մղեց. բայց նոյնպէս ունեցաւ կենդանիների կորուստ, ինչպէս և Մարտիրոսը։

Գնդեվազը և Հերհերը ամբողջ Դարալագեազում միակ Թուրքախառն գիւղերն են։

Դրանցից առաջինի, այն է Գնդեվազի հայերը կողոպտուեցին շատ հապճեպ կերպով։ Համագիւղացի քիրուանները, որոնք փորձում էին դրսից եկող կողոպտիչների առաջն առնել, ոչ պակաս չափով կողոպտեցին և իրենք։ Նրանց դիմադրութեան նպատակը յայտնի դարձաւ. նրանք արգելում էին դրսեցիներին, որպէս զի ամբողջ կողոպուտը իրենց մնայ։ Եւ այդպէս խնամակալուած՝ Գնդեվազի հայը փառաւոր կերպով կողոպտուեց, միևնոյն ժամանակ տալով 2 մարդկային զոհեր։

Հերհերը մի փոքր այլ վիճակ ունեցաւ։ Այդտեղ Թուրքերը այնքան էլ չէին շտապում կողոպտել հայերին, նրանց ունեցածը համարելով իրենց արդար բաժինը, մինչև որ Դարալագեազում կազմակերպուեց ինքնապաշտպանութեան խումբ, որից յետոյ Հերհերի Թուրքերը ստիպուած էին մեղայականներով շահել բաւական անախորժութիւններ ճաշակած համագիւղացի հայերի սիրտը։

Դայլախլու փոքրիկ գիւղի ժողովուրդը փախաւ Փոռ. դատարկ մնացած տները հրդեհուեցին և աւերուեցին։

Առանձնապէս ծանր դրութիւն ստեղծուեց Էրդափին, Քարագլուխ և Թառաթումբ գիւղերի համար։ Մի կողմից անհանգիստ

Հօրսը իր շրջակայ թուրք գիւղերով, միւս կողմից Այրիջան իր թափառական ցեղերով, այդ գիւղերը երկար ժամանակ պահում էին պաշարուած դրութեան մէջ։ Հայ գիւղացին թողած իր դաշտային աշխատանքները, իր տուն ու տեղը, իր տնտեսութիւնը, զէնքը ձեռքին դիրքեր գրաւած գիշեր ցերեկ հսկում էր գիւղերի սահմանների վրա և տոկուն կռիւներով յետ մղում պարբերական յարձակումները։

Չը նայած այդ բոլորին, թուրքերը, այնուամենայնիւ, կարողացան քշել Թառաթումբի 1000 գլխից աւելի ոչխարը։

Յարձակման ենթարկուեց նաև Ղոյթուլը, որտեղից թուրքերը քշեցին 500-ից աւելի ոչխար, բայց հայերը հալածեցին նրանց և կարողացան ոչխարների մեծ մասը յետ բերել։

Յուզմունքները աւելի մեծ չափով տեղական թուրք տարրերի և թափառական ցեղերի մէջ տեղի ունեցան մայիսի վերջերին Շարուրի հայ գիւղերի աւերման հետ միաժամանակ։ Ամբողջ շրջանի հայ ժողովուրդը սարսափի մէջ ընկաւ. դրութիւնը ստիպեց նրան համախմբել եղած ուժերը մի երկու դաշնակցական փորձառու մարդկանց ղեկավարութեան տակ և ինքնապաշտպանութեան մի ստուար խումբ յուզմունքների այդ ծանր օրերին ասպարէզ եկաւ պաշտպանելու փոքրաթիւ հայ ժողովրդին սպառնացող վտանգից։

Խլրտումների առաջին վայր նորից հանդիսացաւ Մարտիրոս գիւղը իր սահմաններով. այս անգամ էլ ղեկավարի դեր կատարում էր Նախիջևանի գաւառի Իթղոան գիւղը, այն Իթղոանը, որը, ինչպէս տեսանք Նախիջևանի ղէպքերը նկարագրելիս, գլուխ անցած մի շարք թուրք գիւղերի խուժանին, կողոպտել էր Օղբինի և Աղխաչի հայերին՝ փախցնելով նրանց Հօրադիզ, կողոպտել և աւերել էր Սէսը և Սուլթան-բէկը, ժողովրդին հալածելով մինչև Մարտիրոս, որից յետոյ մի յարձակում էլ գործել էր Մարտիրոսի և Փաշալուի վրա։

Ահա այդ նոյն անհանգիստ գիւղը նորից համախմբեց իր շուրջը անհանգիստ տարրերը հայ գիւղերի վրա յարձակում գործելու նպատակով։ Առանձնապէս վտանգաւոր դրութիւն ստեղծուեց սահմանին մօտ եղող Նախիջևանի գաւառի Ալմալու գիւղի

համար, որը բաւական երկար ժամանակ կարողացել էր քաջաբար պաշտպանուել։

Մինչդեռ մայիսի 30-ին Իթղոանը պատրաստւում էր յարձակում գործել հայ գիւղերի վրա, ինքը պաշարուեց չորս կողմից հայերով։

Ահագին աւերումների պատճառ եղող և անհանգիստ Իթղոանը նոյնպէս աւերուեց. մի օրւայ յամառ կռուից յետոյ ժողովուրդը փախաւ բազմաթիւ զոհեր տալով, գիւղը ամբողջովին կողոպտուեց, Թուրքերի տներից դուրս բերուեցին հայերից տարած ահագին քանակութեամբ իրեր։

Սխրագործութիւնների սիրահար Իթղոանը ընկաւ, ընկաւ սխրագործութիւններով։

Մինչդեռ կեանքի և գոյքի անապահով իրականութիւնը ստիպում էր Դարալագեազի մի բուռն հայ ժողովրդին աւերել Իթղոանը, այդ վտանգաւոր կենտրոնը անվտանգ դարձնելու համար, մի այլ տեղ Թուրքերը շարունակում էին կողոպուտն ու աւերը։

Այարը, նկատելով կասկածաւոր շարժումներ Ղուրդղուլաղ, Ղուրբանքեասըլան և Զաթմա գիւղերում, փախաւ Մալիշկա, որից յետոյ գիւղում մնացած իրերը կողոպտուեցին։

Ելփինը զոհ գնաց մի մեծ խաբեբայութեան։ Յունիսի 2-ին Զիվա գիւղի մի քանի պատուաւոր Թուրքեր համերաշխութեան առիթով խորհրդակցութիւն էին կատարում հայերի հետ, երբ գիւղը Թափեցին դարան մտած մի քանի հարիւր Թուրքեր։ Անակնկալի եկած հայերը գլուխները կորցրին. գիւղը ենթարկուեց սոսկալի կողոպուտի. Թուրքերը տարան այն ամենը, ինչ որ կարելի էր՝ սկսած ջուլ ու փալասից մինչև վերջին կարասին։ Տարան նաև գիւղի բոլոր կենդանիները, այն է՝ 700-ի չափ ոչխար, 450-ի չափ տաւար և 80-ի չափ ձի ու ջորի։

Ելփինում սպանուեցին երեք հոգի, այն է՝ Թէոս Տէր Յարութիւնեանը, Մնացական և Յովհաննէս Եղիեանները, որոնց մասին պատմում են, չուզելով Թոյլ տալ գիւղի կողոպուտը, ընկան զէնքը ձեռքերին, մի քանի Թուրքեր սպանելուց յետոյ։

Ապա յունիսի 8-ից սկսած մինչև 15-ը Մարտիրոսի վրա տեղի ունեցան մի շարք յարձակումներ, կազմակերպուած—ինչպէս տեղացի Թուրքերից, այնպէս էլ եկւոր Թափառականներից։

Ականատեսների վկայութեամբ յունիսի 8-ի յարձակմանը

մասնակցում էին 2000-ից աւելի կռուող մարդիկ, որոնց դէմ զինուած հայերի հետ միասին դուրս եկաւ պրիստաւը 50 կօզակներով և ստրաժնիկներով։ Մարտիրոսի հետ միաժամանակ յարձակումների ենթարկուեց նաև Փաշալուն, բայց ինչպէս Մարտիրոսը, այնպէս էլ նա, կարողացան բոլոր յարձակումները յետ մղել, ունենալով միմիայն տաւարների և ոչխարների կողոպուտներ։

Այդ մի շարք անյաջող յարձակումներից յետոյ, որի ժամանակ թուրքերը ահագին թւով մարդկային զոհեր էին տուել, Մարտիրոսի շրջանը խաղաղուեց։

Բայց Էրդափինի, Քարագլխի և Թառաթումբի շրջանը չը խաղաղուեց։

Այրիջայի քրդերը մի կողմից, Հօրսը իր շրջակայ թուրք գիւղերով միւս կողմից, երկար ժամանակ այդ երեք գիւղերը սարսափի տակ էին պահում, մինչև որ հայերը մի փոքր ուժ կենտրոնացնելով յուլիսի 5-ին և 10-ին, Այրիջայում երկու ուժեղ ընդհարումներ ունենալով քրդերի հետ, ստիպեցին նրանց իրենց իւրդերը փոխել։

Այրիջայի այդ երկու ընդհարումները, որի ժամանակ քրդերը բաւական զոհեր էին տուել, թուրքերի վրա թողին զսպիչ ազդեցութիւն։

Դարալագեազը խաղաղուեց, մանաւանդ թուրք, քիւրդ և այլ թափառական ցեղերի սարերը թողնելուց յետոյ։ Հայը առ ժամանակ հանգստութիւն գտաւ, բայց նա մոռանալ չը կարողացաւ Հօրսը, այն Հօրսը, որը ահագին դեր էր խաղացել հայ գիւղերի վրա եղած յարձակումների և կողոպուտների մէջ։

Հոկտեմբերի 27-ին հայերի մի մեծ խումբ յարձակուեց Հօրսի վրա։ Թուրքերը մի փոքր դիմադրելուց յետոյ փախան՝ 40-ից աւելի զոհեր տալով. գիւղը ենթարկուեց կողոպուտի, հրդեհի և աւերման. հայերը վարուեցին այդ գիւղի հետ թուրք խուժանին յատուկ եղանակով։

Հօրսը աւերուեց, բայց այդ Դարալագեազի հայերին էժան չը նստեց։ Մի շաբաթուայ մէջ ադմինիստրացիան բանդ ուղարկեց մի շարք հայերի. բացի այդ, 6—7 հայ գիւղերից բռնի կերպով դուրս քաշեց ահագին թւով կենդանիներ և Բաշնորաշէն տանելով կէս, նոյն իսկ քառորդ գնով վաճառեց և դրամները առատօրէն բաժանեց Հօրսի թուրք ժողովրդին։

Այսպէս էլ պիտի լինէր, յանցաւորները պիտի պատժէին, աւերողները պիտի տուժէին յօգուտ աւերուածների. սակայն հայերին տանջում էր ադմինիստրացիայի այն երկդիմի և խայտառակ վերաբերմունքը, որ նա նոյն կերպ չէր վարւում Թուրքերի հետ, երբ վերջիններները կողոպտում էին հայ գիւղերը։ Այդ նոյն ադմինիստրացիան ականատես էր եղել Գնդեվազի, Այարի և Ելփինի աւերումներին և լուռ մնացել. նա լուռ մնաց նոյն իսկ այն դէպքում, երբ Հօրսի աւերումից բաւական անց, նոյեմբերի 12-ին, Թուրքերը յարձակւեցին և քշեցին Այարի 62 տաւարը։

Ահա, ադմինիստրացիայի այս խայտառակ տակտիկան աւելի ևս խրախուսում էր Թուրք տգէտ մասսային դէպի կողոպուտները։

Դարալագեազի դէպքերի թւում չը պիտի մոռանալ մի անուն ևս. այդ Խաչիկ գիւղն է, ընկած միայնակ դէպի Շարուրի դաշտը, որը թէև մասսայական յարձակումներից ազատ մնաց, բայց բաւականաչափ զոհեր ունեցաւ այս և այն տեղում։

Այսպիսի զոհերի 9 անուններ միայն մեզ յայտնի են. դրանցից երկուսը—Մկրտիչ Թադէոսեանը և Թորոս Պետրոսեանը—սպանուեցին Եայիջի Թուրք գիւղում, իսկ 7-ը, այն է՝ Աղաբաբ Աղաբաբեանը, Միքայէլ Պետրոսեանը, Խաչատուր Մատթէոսեանը, Մամբրէ Սիմոնեանը, Սմբատ Անդրէասեանը, Գալուստ Մանուկեանը և Ջահրեցի Ստեփան Մարգարեանը սպանուեցին Ենգիջա գիւղում յունվարի 4-ին, երկաթուղու գնացքին սպասելու ժամանակ։

ՇԱՐՈՒՐ-ԴԱՐԱԼԱԳԵԱԶԻ ԱՒԵՐԻԱԾ ԳԻՒՂԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ, ԱՌԱՋ

№№	ԳԻՒՂԵՐ	Տուն Թուրք	Տուն հայ	Հայ բնակիչներ	Ցարձակումը եղել է 1905թ. Մայիս	Ցուն.	Սպանուած
1	Խանլուխլար .	—	180	1050	31	1-2	1
2	Վարմազիար .	—	170	1045	31	—	6
3	Ալաքլու .	—	120	760	31	—	1
4	Քէշտազ .	45	71	350	31	—	1
5	Դաշարխ .	—	32	210	31	—	2
6	Թազագիւղ .	—	33	130	31	—	—
7	Փարչի .	56	20	110	31	—	—
8	Ուլիանորաշէն .	—	220	1260	30-31	—	4
9	Գնդեվազ .	20	67	727	12	—	2
10	Այար .	—	45	317	—	—	—
11	Ելփին 5) 6) 7) .	—	110	785	—	—	3

1) Ցորենի ցանքերը չը ջրելու պատճառով կորցրել են բերքի քա-

2) Մի դեսիատին տեղը տալիս է 300 փ. չալթուկ (չը մաքրած բրինձ։

3) Մի դեսիատին տեղը տալիս է 30 փ. մաքուր բամբակ։

4) Մի դեսիատին տեղը տալիս է 500 խուրձ եօնջա։

5) Առաջ բերած այս ցուցակը լրիւ չէ։

6) Շարուր-Դարալագեազի գաւառում միմիայն մի թուրքաբնակ գիւղ է

7) Պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա Շարուր-Դարալագեազ-գիւղացիների ներկայացրած ցուցակների, հասնում է 867,210 ռ., իսկ յանձ-

ԲԵՐԱԾ ՆԱԵԻ ԴԱՇՏԱՑԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ՄԵՐ ՏԵՂԵԿԱԳՐԻՑ

Վիրաւոր	Տուն քարէն.	Տուն մէջտեղ	Քշուած են			Դաշտային կորուստ դեսպատինի հաշուով			
			Տաւար	Ոչխար	Ձի	Ցորեն 1)	Զալ-թուկ 2)	Բամ-բակ 3)	Եօնջա 4)
—	—	1	—	—	1	100	—	20	16
1	170	52	9	—	1	50	—	30	4
—	120	28	30	—	—	50	5	40	4
—	71	2	3	—	—	30	—	16	1
—	32	3	—	—	—	30	—	30	10
—	—	—	—	—	—	20	10	30	4
—	—	2	—	—	—	5	3	2	—
5	220	220	550	30	2	20	60	30	8
—	—	—	—	—	—	—	—	—	—
—	—	—	62	—	—	—	—	—	—
—	110	—	450	700	80	—	—	—	—

ողրդ, յանախ կէս մասը։

աւելաւել, այդ 100 տուն ունեցող հօրսն է։

զի գաւառի կրած գոյքային ջաւաների քանակը, համաձայն կողոպտուած նաժողովի ցուցակով 420,358 ր.։

ԸՆՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ ԳԱՒԱՌՈՒՄ

ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1905 Թ.

Երևանի գաւառը ընկած է Սուրմալուի, Էջմիածնի, Նոր-Բայազէտի և Շարուր-Դարալագեազի գաւառների կենտրոնում և ներկայացնում է նահանգի սիրտը, եթէ հաշուի չառնենք նրա հարաւարևմտեան Պարսից սահմանագիծ կազմող մի փոքր մասը։

Գաւառի հիւսիսային մասը լեռնոտ է, լեռնոտ է նոյնպէս և արևելեանը, ձգելով մինչև Աղմաղանի և Դաւաբօյինի լեռնաշղթաները, իսկ արևմտեան և հարաւային մասերը դաշտային են, որոնք մի երկար գծով տարածւում են Արաքսի ափերի ուղղութեամբ։ Դաշտային մասերը ունեն խիստ տաք կլիմայ և այն տեղերը, որոնք ոռոգւում են, արտադրում են թանկագին բոյսեր, այն է՝ բամբակ, բրինձ, խաղող և պտուղներ։

Երևանի գաւառը ոռոգւում է չորս գետերով, դրանք են՝ Հրազդանը, Գառնի, Վէդի և Զանախչի գետերը, որոնք բազմաճիւղ տարածւելով դաշտավայրը, թափւում են Արաքսի մէջ։

Երևանի գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է, հետը հաշուած նաև քաղաքը, 152 հազար, որից հայերը՝ 58 հազար, թուրքերը՝ 87 հազար և զանազան ազգեր՝ 7 հազար։ Հայերը կազմում են ազգաբնակութեան 38% -ը։

Գաւառի 221 գիւղերից 70-ը միայն հայաբնակ են, մի քանի տեղերում ընկած թուրք գիւղերի հետ խառը. բացի այդ, յիշեալ 70 գիւղերից աւելի քան 15-ը թուրքախառն են

Երկու ժողովուրդների թւական և շփման այսպիսի պայմաններում բնական պէտք էր համարել ընդհարումները այն օրից, երբ Նախիջևանի բարբարոսութիւններից յետոյ քաղաքը երկրորդ անգամ խռովութիւնների բեմ հանդիսացաւ։

Եւ ընդհարումները Երևանի մայիսեան դէպքերից յետոյ արձագանք գտան նաև գաւառում։

Երևանից դէպի արևելք ընկած են մի շարք հայաբնակ և Թուրքաբնակ գիւղեր։ Մայիսի 23-ին քաղաքում տեղի ունեցած ընդհարումը յուզմունք առաջ բերեց այս շրջանում։ Այս յուզմունքից վախեցած տասը տուն բնակիչ ունեցող Ղարաչի-Բուլաղ գիւղի հայերը ստիպւած էին տեղափոխւել Շօռ-Բուլաղ հայ գիւղը։

Մայիսի 24-ին քաղաքում կրկնւող ընդհարումների պատճառով այդ շրջանի Թուրքերը, նաև սար դուրս եկած քրդերը, հայ գիւղերի միջով ձգւող ճանապարհը Թողնելով, խումբ-խումբ դիմեցին քաղաք մի շրջապտոյտ գծով, որի վրա ընկած էր Շօռ-Բուլաղը։

Մայիսի 25-ին Շօռ-Բուլաղ տեղափոխւած ղարաչի-բուլաղցի հայերը ստիպւած եղան այդտեղից քոչել Զրվէղ։ Քոչեցին նաև Շօռ-Բուլաղի հայերը, Թւով 20 տուն, տեսնելով սպառնացող վըտանգը. բայց տնային գոյքերը տեղափոխելու ժամանակ քաղաքից վերադարձող մի խումբ քրդերի և Թուրքերի ձեռքով սպանւեց աւդալլարցի Ցարութիւնը, որի սայլի վրա եղած իրերը կողոպտելուց և եզները քշելուց յետոյ, կողոպտիչները անցան Շօռ-Բուլաղ և հրացանաձգութեան բռնւեցին այդտեղ եղող հայերի հետ։ Վերջիններները ստիպւած եղան շատ իրեր Թաղել գետնի տակ և շտապով հեռանալ գիւղից։

Այդ միջնադէպի վրա քոչեցին հայ գիւղերի սահմաններում ընկած երկու Թուրք գիւղերի, այն է Քիւզաջիի և Քիւլլուջայի ժողովուրդները։

Այս բոլորը տեղի ունէր Մայիսի 25-ին։

Այդ նոյն օրւայ գիշերը Թուրքերը ճրագներով մտան Շօռ-Բուլաղ և պահւած տեղերից հանելով Թագցրած իրերը, կրեցին տարան։

Իսկ մայիսի 26-ին հայերը յարձակւեցին Մանգիւս Թուրք գիւղի վրա, ուր խմբւած բաւական Թուրքեր և քրդեր՝ սպառնական դիրք էին բռնել դէպի Թէջրաբակ հայ գիւղը։

Մանգիւսի շուրջը տեղի ունեցաւ տաք կռիւ. Թուրքերը անկարող լինելով դիմադրել հայերին, փախան գիւղից՝ 4 Թէ 5 զոհեր տալով. զոհեր ունեցան նաև հայերը—մէկ սպանւած և 2 վիրաւոր։

Թուրքերի փախչելուց յետոյ Մանդիւսը ենթարկուեց կողոպուտի։

Մանգիւսի ընդհարումից յետոյ դրութիւնը աւելի ևս լարուեց։ Դամագիրմազ, Թութիա և Քեամալ գիւղերից քոչեցին Թուրքերը, իսկ Բէզակլու և Զառ գիւղերից քոչեցին հայերը։ Այդ երեք Թուրք գիւղերում մնացած գոյքը կողոպտուեց հայերի ձեռքով, իսկ Քեամալից քշեցին նաև 200-ի չափ ոչխար։

Նախիջևանի Թուրքական բարբարոսութիւնները ունեցան կրթիչ ազդեցութիւն. կողոպուտի նողկալի երևոյթը եկաւ նուիրագործելու նաև հայ գիւղացին, բարքերը ընդունեցին այլանդակ կերպարանք։

Այսպիսով երկու կողմերից աւելի քան տասն գիւղեր բաւական ժամանակ դարձան աւերակ և անմարդաբնակ, իսկ դաշտերը ոտի տակ գնացին։

Ընդհարումներ տեղի ունեցան նաև Գառնի գետի հովտում։

Երևանից 25 վերստ դէպի հարաւ Գառնի կամ Ազատ գետի ստորին հովտում ընկած են միմեանց կից բազմաթիւ գիւղեր, մեծ մասամբ հայաբնակ, իսկ մի քանիսը Թուրքախառն։ Դրանցից ամենամեծ և հարուստ գիւղը Ղամարլուն է—400 տուն հայ և 150 տուն Թուրք բնակիչներով։ Ղամարլուն ունի բաւական բանուկ շուկայ, գլխաւորապէս հայ առևտրականներով. այստեղ լինում է մասի պրիստաւը և սահմանապահ գունդը։

Ղամարլուից դէպի արևելք գտնւում է Մասումլու Թուրքաբնակ գիւղը, դէպի հարաւ՝ Իւվա և Դարղալու հայաբնակ գիւղերը, որոնցից յետոյ գալիս է Վէդի գետի հովիտը՝ բազմաթիւ Թուրք գիւղերով. իսկ դէպի արևմուտք՝ Նովրուզլու հայաբնակ գիւղը, որը Թուրքերով և քրդերով բնակւած Մասիսի ստորոտներից բաժանւում է Արաքսով։

Այս պայմանների մէջ միանգամայն հասկանալի էր դառնում այն անձնավստահութիւնը, որ նկատւում էր Ղամարլուի Թուրք խռովարար տարրերի մէջ ընդհարումների ժամանակ։

Եւ դրան էլ պիտի վերագրել այն տարօրինակ երևոյթը, որ համեմատաբար փոքրաթիւ Թուրք ժողովուրդը սարսափի տակ էր պահում բազմահայ այդ շրջանը։

Դեռ ևս Երևանի փետրվարեան դէպքերի ժամանակ Ղամար-

լուի հայերը երկիւղի մէջ ընկան, իսկ Նախիջևանի կոտորածի միջոցին այդ երկիւղը կրկնապատկուեց։

Մայիսի 23-ին, երբ քաղաքում տեղի ունեցաւ Թուրքերի յանկարծակի յարձակումը հայերի վրա՝ տանելով երկու տասնեակ զոհեր, Ղամարլուում Թուրքերի մէջ այնպիսի բացայայտ շարժում նկատուեց, որ հայերից մի քանիսը ստիպուած եղան խանութներում եղած ապրանքները տեղափոխել իրենց տները. նոյն կերպ վարուեցին նաև մի քանի Թուրքեր։ Շուկան դատարկուեց. երկու ժողովուրդներ կենտրոնացան իրենց Թաղերում։ Չը նայած այն բանին, որ երկու օր շարունակ այդ երկու ժողովուրդների մէջ շփումն չը կար, բայց և այնպէս մայիսի 26-ին սկսուեց ուժեղ հրացանաձգութիւն երկու կողմերից։ Հրացանաձգութեան առիթ ծառայեց այն, որ մի Թուրք գնդակ արձակեց մի 17 տարեկան հայ տղայի վրա։

Հրացանաձգութիւնը երկու կողմերի դիրքերից շարունակուեց ամբողջ օրը և գիշերը, բայց քիչ զոհերով։

Մայիսի 27-ին յայտարարուեց զինուորական դրութիւն, շնորհիւ որի հրացանաձգութիւնը դադարեց։

Մայիսի 28-ին Սուրմալուի գաւառից և Պարսկաստանից բաւականաչափ Թուրքեր Արաքսն անցնելով՝ յարձակուեցին Նովրուզլու գիւղի վրա։ Ղամարլուից օգնութեան գնացին մի քանի զինուած հայեր, նաև սահմանապահ զինուորների խումբը։ Թուրքերը փախուստի դիմեցին, տանելով գիւղի դաշտում եղած 20-ի չափ տաւարը։ Այդ ընդհարման ժամանակ սպանուեցին Թուրքերից 3 մարդ, իսկ հայերից՝ 2-ը—այն է՝ մի երիտասարդ Լևոն Յովհաննիսեան անունով և մի նախրչի։

Նոյն օրը Թուրքերի մի մեծ բազմութիւն, խմբուած ԲէյիւքՎէդիից և նրա շրջակայ գիւղերից, յարձակում գործեց Դարղալու գիւղի վրա։ Հայերը հազիւ կարողացան իրենց ձգել Իւվա. Ղամարլուից և միւս հայ գիւղերից օգնութեան հասան հայերը այն ժամանակ, երբ գիւղը արդէն կողոպտուում էր։ Մի ժամի չափ տևող հրացանաձգութիւնից յետոյ Թուրքերը փախան աւելի քան 10 զոհերով, որից յետոյ հայերը փոխադարձաբար յարձակուեցին արդէն դատարկուած Մասումլու գիւղի վրա և տները կողոպտեցին հիմնովին։

Այս դէպքերի միջոցին Թուրքախառն գիւղերից շատ Թուրք

ընտանիքներ քոչեցին, իրենց հետ տանելով տնային գոյքը և վերադարձան շրջանը խաղաղելուց յետոյ։

Հայ գիւղերի մի խումբ ընկած է գաւառի հարաւարևելեան մասում՝ շրջապատուած բազմաթիւ թուրքաբնակ գիւղերով։ Դրանք են. Վէդի գետի հովտում՝ Ռէհանլուն—60 տուն, Դաւալուն —400 տուն. Շերեմետեվի «Արազդայեան» կոչւող կալուածքում՝ Խուտոր, Սպահան և Սմո նոր հիմնուած փոքրիկ գիւղերը, իսկ Վէդի ու Զանախչի գետերի վերին լեռնահովիտներում՝ Ղարախաչը—60 տ.—կէսը թուրք, Զէնջրլուն—130 տ., Բիրալուն—45 տ., Քէշիշվէրանը—30 տ., Ղաշխան—40 տ. և Ներքին Զանախչին—90 տուն։

Այս շրջանում հայերին թուրքերի անխուսափելի յարձակումներից պաշտպանելու համար Ղարախաչ ուղարկուեց բաւականաչափ զօրք, բայց զօրքի ներկայութիւնն էլ չօգնեց այդ շրջանին։

Մայիսի վերջերին և յունիսի սկզբներին տեղի ունեցան մի արք յարձակումներ այս և այն գիւղերի սահմանների վրա ոչխարի հօտեր ու նախիրներ քշելու նպատակով։ Այսպէս, թուրքերը քշեցին Ղարախաչի հայերի սուրուն. քշեցին նաև Քէշիշվէրանի սուրուն—450 գլխից բաղկացած։ Իսկ յունիսի 6-ին բաւականաչափ թուրքեր յարձակուեցին և քշեցին Բիրալու գիւղի ամբողջ նախիրը։ Հաւարի դուրս եկած շրջակայ գիւղերի հայերը և զօրքը ոչ միայն նախիրը յետ բերին, այլ և թուրքերին հալածելով մինչև Շէյթան-Դարասի կոչւող ձորը, նրանց մի ջարդ տուին։ Այդ ձորում թուրքերը թողին 42 դիակ։ Զոհեր ունեցան նաև հայերը, բայց շատ քիչ, ընդամենը 2-ը։

Ահա այս կտրուկ միջոցը բաւականաչափ զսպող ազդեցութիւն թողեց շրջակայ թուրք ազգաբնակութեան վրա։

Չը նայած այս բոլորին, Ռէհանլու, Խուտոր, Սմո և Սպահան գիւղերի հայերը անհնարին գտնելով ապրել իրենց գիւղերում, քոչեցին Դաւալու, երեսի վրա թողնելով իրենց դաշտերը, մինչև որ շրջանը խաղաղուեց։

Ցուզմունքներ առանձնապէս նկատելի դարձան Ուլուխանլու թուրք գիւղում։

Ուլուխանլուն Երևանի գաւառի ամենամեծ գիւղն է, աւելի քան 500 տուն բնակիչներով, ընկած Երևանից 15 վերստ դէպի

հարաւ երկաթուղու գծի վրա (առաջին կայարանը) իր անհանգիստ բարքերով։

Շնորհիւ այդ գիւղի՝ հայերի երթևեկութիւնը երկաթուղով մի ժամանակ դարձաւ վտանգաւոր և նոյն իսկ անհնարին։ Թուրքերը մտնում էին գնացքների մէջ և հայ ճամբորդներին ենթարկում խուզարկութեան. իսկ յունիսի կիսին ճամբորդներից մի քանիսը նոյն իսկ կողոպտուեցին, որից յետոյ Ուլուխանլու կայարանը առնուեց պահակ զինուորների հսկողութեան տակ։

Դրանից յետոյ Ուլուխանլուն առիթներ էր փնտռում ընդհարուել դրացի Նորագիւղի հայերի հետ։ Յունիսի 22-ին այդ երկու գիւղերի նախրչիները և պահապանները կռուեցին, որի ժամանակ մի հայ վիրաւորուեց, իսկ մի թուրք սպանուեց։ Ահա այդ դէպքը քիչ մնաց մի խոշոր ընդհարման պատճառ դառնար, որի առաջը կարելի եղաւ առնել մեծ ջանքեր թափելուց յետոյ։

Չը նայած այս բոլորին, պէտք է ասած, Երևանի գաւառում ընդհարումները այնքան մեծ ծաւալ չը ստացան, որքան սպասւում էր և այդ շնորհիւ այն հանգամանքի, որ քաղաքի մայիսեան դէպքերը ունեցան թուրքերի համար կորստաբեր վախճան։ Քաղաքում թուրքերը չը զսպէին հայերի կրակից, քաղաքի թուրք խռովարար տարրերը չը խրատւէին հայերի ակամայից տրուած դասից, ամբողջ գաւառը կը դառնար ընդհարումների բեմ, Երևանի գաւառի հետ նաև միւս գաւառները կը հանդիսանային թուրք մասսաների հեղեղումների մի վայր։ Սա ընդհանրացած կարծիք է. փաստ է և այն, որ բոլոր գաւառներում գլուխ բարձրացրած թուրք տգէտ ամբոխը խաղաղուեց, երբ լուր հասաւ, որ քաղաքում հայերը թուրքերին նեղեցին։

Այսպէս էր, տարաբաղդաբար, իրականութիւնը. թուրք մասսան իր շահը գիտակցելու փոխարէն տեղի էր տալիս միմիայն և միմիայն ուժի առաջ։

Բայց Երևանի գաւառը ազատ մնալով խոշոր մասսայական ընդհարումներից և աւերումներից, ազատ չը մնաց՝ այն նոզկալի մարդասական սիստեմից, որին զոհ գնացին երկու կողմերից բազմաթիւ անմեղ մարդիկ։

Մարդասպանութեան այդ սոսկալի ձևին սկիզբ դրեց Վէդի գետի ստորին հովտում ընկած Քիչիկ-Վէդի թուրք գիւղը։

Յուլիսի 22-ին Դարղալուի գիւղացիներ՝ ծխատէր քահանայ

Տէր Յովհաթան Տէր Դաւթեանը, տանուտէր Ալէքսան Մխիթարեանը և մի երրորդ գիւղացի Խորվիրապի վանքը գնալու ժամանակ Քիչիկ-Վէդի գիւղի մօտ կենդանի գողացուեցին։ Բոլոր միջոցները անզօր եղան գտնել այդ երեք մարդկանց դիակները։

Այդ դէպքից մի քանի օր անց Ղամարլուի շրջանում անհետացաւ Զըլբխանլու գիւղացի Սուլէյման-բէկ Իսմիխան օղլին իր երկու ընկերներով։

Այնուհետև փոփոխակի մէկ այս և մէկ այն կողմից անհետանում էին մարդիկ անմեղ ու անպարտ և բազմաթիւ ընտանիքներ զրկւում էին իրենց կերակրող ձեռքերից։

Այս խայտառակ և նողկալի երևոյթը, անմիտ վրէժխնդրութեան այս անմիտ սիստեմը, գնալով ընդունեց մեծ չափեր, տարածուեց միւս շրջանները, խլելով երկու կողմերից տասնեակներով և աւելի չափով զոհեր, որոնց վերջ դնել երկար ժամանակ կարելի չէր լինում։

Ցուցակ Երևանի գաւառի այն գիւղերի, որոնց ժողովուրդը փախել կամ խոշոր ջնջաններ է կրել ընդհարումների ժամանակ։[1]

ՀԱՅ ԳԻՒՂԵՐ

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն	Քոչած	Կողոպտուած
1	Ղարաչի-Բուլաղ .	10	քոչ.	—
2	Շօռ-Բուլաղ .	20	,,	կող.[2]
3	Բէզաքլու .	45	,,	—
4	Զառ .	40	,,	—
5	Դարղալու .	155	—	կող.
6	Ռէհանլու .	48	քոչ.	—
7	Խուտոր .	—	,,	—
8	Սմօ .		,,	—
9	Սպահան .	—	,,	—

ԹՈՒՐՔ ԳԻՒՂԵՐ

1	Քիւզաջի .	12	քոչ.	—
2	Քիւլուջա .	46	,,	—
3	Մանգիւզ .	40	,,	կող.
4	Դամագիրմազ .	41	,,	,,[2]
5	Թուքիա .	52	,,	,,[2]
6	Քեամալ .	47	,,	,,[2]
7	Մասումլու .	67	—	,,

[1]) Պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա Երևանի գաւառի կրած գոյքային ջնջանների քանակը, համաձայն կողոպտուած գիւղացիների ներկայացրած ցուցակների, հասնում է 164,025 ր., իսկ յանձնաժողովի ցուցակով 46,026 ր.։

[2]) Մասնաւոր չափով կողոպտուած։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՒԱՌՈՒՄ

ՄԱՅԻՍԻ 24—5 ՅՈՒՆԻՍԻ 1905 Թ.

Էջմիածնի գաւառը ընկած է Ալէքսանդրապոլի, Նոր-Բայազէտի, Երևանի և Սուրմալուի գաւառների մէջ տեղ, արևմտեան կողմից կազմելով Կարսի շրջանի սահմանը։

Գաւառի հիւսիսային բաւական ընդարձակ մասը լեռնային է և ձգւում է Արագածի լայնանիստ փէշերի վրա, իսկ հարաւային մասը տափարակ է և տարածւում է մինչև Արաքսի ափերը, ներկայացնելով կուլտուրական բերքերի հարուստ դաշտավայր։

Էջմիածնի գաւառը ոռոգւում է Արաքսից վերցրած առուներով և Քասախ կամ Աբարան գետի ջրերով։

Գաւառի ազգաբնակութեան թիւն է 124 հազար, որից հայերը՝ 76 հազար, Թուրքերը՝ 45 հազար և զանազան ազգեր՝ 3 հազար։ Հայերը կազմում են ազգաբնակութեան 61%-ը։

Գաւառի 219 գիւղերից 88-ը հայաբնակ են և ընկած այս և այնտեղ Թուրք գիւղերի հետ խառը, մի երկու շրջաններում միայն նկատելի է երկու ժողովուրդների շերտաւորումն։

Էջմիածնի գաւառում մի շրջան միայն մասսայական ընդհարումների բեմ դարձաւ, այն էլ մեծ չափով։ Այդ Աշտարակի շրջանն էր, ուր հայ և Թուրք ապրում են խառը։

Էջմիածնից դէպի հիւսիս, Արագածի փէշերի վրա, Քասախի և նրա ճիւղերի հովիտներում ընկած են հետևեալ հայաբնակ գիւղերը. Աշտարակ—401 տուն, Մուղնի—35 տ., Կարբի—132 տ., Օհաննու-Վանք—69 տ., Իլանչալան—44 տ., Ղալաչի—45 տ.։

Թուրքախառն գիւղեր. Փարբի—21 տ. Թուրք, 86 տ. հայ, Սաղմոսավանք—14 տ. Թուրք, 10 տ. հայ, ՂօԹուր—11 տ. Թուրք, 17 տուն հայ։

Զուտ Թուրքաբնակ գիւղեր. ՓաԹրինջ—61 տ., Ագարակ—69 տ., Քիչիկ-քէնդ—36 տ., Թաքիա—85 տ., Նազրվան—58 տ.,

Ուշի—142 տ., Պերսի—34 տ., Անգրսակ—20 տ., Քիւրդալու—11 տ., Համամլու 61 տ.։

Բացի այս, Արագածի փէշերի վրա ամառայ ամիսներին չու�գալիս են բաւականաչափ քրդեր իրենց հօտերով, իսկ Ղարնի-Եարըղի փէշերի վրա, Քիւրդալու և Համամլու գիւղերին մօտ, իջնում է էջմիածնի գաւառի 310 տուն ունեցող Զօբանքեարա գիւղի օբան, ամբողջ շրջանում յայտնի իր համբաւով։

Ահա այն շրջանը, ուր տեղի ունեցան ընդհարումները։

Բագուի և Երևանի փետրվարեան դէպքերը Աշտարակի շրջանի վրա ոչ մի ազդեցութիւն չունեցան։ Բայց ազդեցութիւն ունեցան Նախիջևանի գաւառի դէպքերը, ուր անպատիժ կերպով բազմաթիւ հայ գիւղեր կողոպտուեցին, հրդեհուեցին և աւերուեցին։ Ազդեցութիւն] ունեցաւ մանաւանդ մայիսի 23-ի Երևանի թուրքերի յարձակումը հայերի վրա, որի լուրը սենսացիօն կերպով տարածուեց թուրքերի մէջ գաւառներում։

Ահա այդ ազդեցութեան տակ մայիսի 24-ի առաւօտեան Աշտարակի հանդում հայ գութանաւորների վրա յարձակուեցին Զօբանքեարայի թուրքերը, որոնք ժամանակաւոր կերպով իրենց վրանները խփել էին Աշտարակի հողերի սահմանների մօտ։ Այդ լուրը Աշտարակ հասնելով՝ հայերը օգնութեան գնացին և միւս կողմից դիմելով հասարակութեան տանուտէր Մահմադին, որը կառավարութիւնից նշանակուած և նրա ըէժիմին խիստ շահաւէտ մի անձն էր և որը այդ ժամանակ գտնուում էր Աշտարակում, խնդրեցին շտապել դէպքի տեղը, և որպէս պաշտօնեայի հանդարտեցնել չորանքեարէցիներին, որին թուրքերը անպայման կը լսէին. սակայն տանուտէր Մահմադը, վերցրած երկու թուրք ստրաժնիկնեերի, փոխանակ դէպքի տեղը գնալու, Մուղնի գիւղի արտերի միջով ճանապարհը ծռեց դէպի Քիչիկ-քէնդ և Ուշի։ Երկու աշտարակցի երիտասարդներ, որոնք հետևում էին Մահմադին՝ ստուգելու համար նրա ուր գնալը, նկատելով Մահմադից և ստրաժնիկներից, ենթարկուեցին նրանց կողմից հրացանաձգութեան։ Կրակել սկսեցին նաև երիտասարդները։ Այդ հրացանաձգութեան ժամանակ սպանուեց երիտասարդներից մէկը, այն է՝ Արշակ Փիլոմեանը և մէկ ստրաժնիկ—Փաշա-բէկ անունով։

Եւ մինչդեռ Աշտարակից գութանաւորներին օգնութեան գը-

նացողներին կարելի եղաւ յետ քշել Զօբանքեարայի երկու խումբ Թուրքերին առանց որևէ մարդկային զոհերի, տանուտէր Մահմադը այդ երկու սպանութիւնների պատճառ դառնալուց յետոյ մըտաւ Թուրք գիւղերը և Թուրք ժողովրդին գոգռեց հայերի դէմ։

Ահա այս գոգռման հետևանքը եղաւ այն, որ յարձակումներից վախենալով մի և նոյն օրը Մուղնու հայերը քոչեցին Աշտարակ, իսկ Քիչիկ-քէնդի Թուրքերը քոչեցին Ուշի, որից յետոյ փոխադարձ անվստահութիւնը աստճանաբար աճելով առաջացրեց լուրջ ընդհարումներ։

Մայիսի 25-ին Թուրքերն անցան Ղարղավանք գիւղի սահմանը և փորձեցին ոչխարի սուրուն քշել, բայց Եղվարդից հասնող օգնութեան շնորհիւ կարելի եղաւ նրանց հալածել։

Մայիսի 27-ին սար բարձրացող բաւականաչափ քրդեր եկան Աշտարակի մօտով անցան գնացին։ Եւ մինչդեռ քուրդ քոչւորների այդ շարժումը կատարւեց առանց որևէ միջնադէպի, մի մասնաւոր դէպք մի մեծ ընդհարման պատճառ դարձաւ։

Մայիսի 28-ին Ղօթուր գիւղում բոլորովին մասնաւոր հաշւից առաջացած վէճի ժամանակ մի հայ սպանեց Աջօ անունով մի քրդի։

Այս սպանութեան առիթով Ղօթուրի հայերը դիմեցին Աշտարակ պրիստաւին, իսկ Թուրքերը լուր տարան քրդերին, որոնք եկան պաշարեցին Ղօթուրը։ Սրանց աջակցելու համար եկան նաև ուշեցի Թուրքեր։ Շրջակայ հայ գիւղերից հասնող օգնութեան շնորհիւ կարելի եղաւ քրդերին և Թուրքերին ցրել։ Չը նայած դրան, խառնակ դրութիւնից օգտւելով Ղօթուրցի Թուրքերը քշել տւին հայերի 120 տաւարը և 500-ի չափ ոչխարը։

Սակայն այն հանգամանքը, որ պրիստաւը Ղօթուր հասնելով ոչ մի միջոց ձեռք չառաւ տաւարն ու ոչխարը յետ բերելու, հայերը աւելի ևս առիթ ունեցան գոգռւելու։

Այդ գոգռումը նկատելով Ղօթուրի հայերը խորհուրդ տւին համագիւղացի Թուրքերին քոչել Ուշի, բայց Թուրքերից մէկը— Ալլահվէրդի անունով— արգելք ելաւ այդ բանին։ Թուրքերի յամառութիւնը տեսնելով՝ ստիպւած եղան քոչել այդտեղի հայերը։

Մայիսի 29-ին բաւականաչափ հայեր եկան պաշարեցին Ղօթուրը, Թուրքերից պահանջելով գնալ Ուշիից յետ բերել տաւարն ու ոչխարը, խոստանալով ոչ մէկի մազին էլ ա չը դիպչել։ Թուր-

քերից երկու հոգի գնացին դէպի Ուշի, իբր հայերի պահանջը կատարելու համար, իսկ Ալլահվէրդին բոլոր Թուրքերին հաւաքելով իր տան մէջ պաշտպանողական դիրք բռնեց։ Եւ մինչդեռ հայերը սպասում էին տաւարներին և ոչխարներին, յանկարծ Ուշիի կողմից յայտնուեցին զինուած խմբեր, որոնք գալիս էին Ղօթուրի Թուրքերին օգնութիւն ցոյց տալու։ Սկսուեց հրացանաձգութիւն երկու կողմերից միաժամանակ, հրացանաձգութիւն սկսուեց նաև Ալլահվէրդիի տան միջից, որից սպանուեցին երկու հայեր։ Մի ժամի չափ տևող կռուից յետոյ Թուրքերը յետ փախան, իսկ հայերը գիւղը խուժելով և կանանց ու երեխաներին հեռացնելով Համամլու, 15-ի չափ Թուրք տղամարդկանց սպանեցին, որոնցից մի քանիսը մնացին Ալլահվէրդու տան հրդեհի բոցերի մէջ։ Սպանուեց նաև Ալլահվէրդին գիւղի ծայրում փախչելու ժամանակ։ Այնուհետև Թուրքերի տները—թւով 15—կողոպտուեցին, դռները, լուսամուտները և նոյն իսկ ծածկի փայտերը հանուեցին ու տարուեցին. Ղօթուրի Թուրքական մասը փոխարկուեց աւերակների։

Այս դէպքի վրա մայիսի 30-ին Սաղմոսավանքի Թուրքերը Համամլու փոխադրելով իրենց ընտանիքները և տնային իրերը՝ գիւղի մէջ դիրքեր գրաւեցին, որից հայերը վախենալով՝ քաշուեցին եկեղեցին, և երեք օր շարունակ ստիպուած էին փակուած մնալ այնտեղ։

Այդ նոյն օրը տեղի ունեցաւ հետևեալ դէպքը. սայլի վրա պարկեցրած բժշկելու համար Աշտարակ էին տանում Ղօթուրի կռուի ժամանակ վիրաւորուած օշականցի Օհանին։ Երբ սայլը անցնում էր Ուշիի սահմանով՝ ուշեցի Թուրքերը յարձակուեցին և խլելով սայլը՝ հրդեհեցին, որի բոցերի մէջ այրուեց վիրաւոր Օհանը։

Ահա այդ օրը ընդհարման շրջանը եկաւ գաւառապետը, շրջեց մի քանի հայ և Թուրք գիւղեր և՝ վերադարձաւ ոչինչ չարած. երկու կողմերն էլ այն համոզման եկան, որ ասպարէզը Թողնուած է ուժերի չափուելուն և այդպէս էլ եղաւ։

Մայիսի 31-ին ուշեցիք կտրեցին Մուղնի, Կարբի և Օհանու-Վանք գիւղերի ջրերը. բացի այդ, փակեցին նաև Աբարան տանող ճանապարհը. երթևեկութիւնը առ ժամանակ դադարեց այդ գծով, մանաւանդ երկու ղազնաֆարցի հայերի սպանութիւնից յետոյ։

Յունիսի 2-ին Զորանքեարայի, Քիւրդալուի և Համամլուի Թուրքերը մօտենալով Քասախի ձորակին, կրակ բացին ձորակի հակառակ ծայրին ցցած Սաղմոսավանքի վրա, որտեղից Թուրքերը արդէն քաշւել էին։

Իսկ ուշեցի Թուրքերը գնացին Իլանչալանի վրա, որտեղից հայերը յետ մղելով նրանց՝ եկան հրդեհեցին ճանապարհի վրա գտնւող ուշեցի Մօսու տունը և խանութը։

Յունիսի 3-ին չորանքեարէցիք և համամլուեցիք յարձակւեցին Ափնագիւղի ծայրին գտնւող մի ջրաղացի վրա և սպանեցին ջրաղացպանին. օգնութեան գնացող հայերը իրենց հերթում սպանեցին երեք Թուրքերի և մնացեալին փախցրին։ Սակայն այս բոլորը փոքրիկ երևոյթներ էին համեմատութեամբ այն դէպքերի, որոնք տեղի ունեցան յետոյ, շնորհիւ ադմինիստրացիայի դիտաւորեալ անգործունէութեան։

Յունիսի 4-ին ուշեցի Թուրքերը, միացած բաւականաչափ քրդերի հետ, թւով աւելի քան 200 հոգի, յարձակւեցին Իլանչալանի վրա։ Իլանչալանից գնացած հաւարին թափւեցին եկան շրջակայ գիւղերից զինւած հայեր, որոնք ոչ միայն յետ քշեցին Թուրքերի յարձակումը, այլև հալածելով նրանց մինչև Ուշի, պաշարեցին այդ գիւղը երկու կողմերից։

Կարճ դիմադրութիւնից յետոյ շփոթ ու իրարանցում ընկաւ Թուրքերի մէջ, երբ հայերը մի ծայրից ներս խուժեցին գիւղը։ Թուրքերը փախան մեծամեծ զոհերով, որոնց թիւը, ասում են, հարիւրի էր հասնում։ Կին ու երեխայ, ծեր ու մանուկ գիւղից դուրս պրծան մի վայնասուն բարձրացրած. Ուշին աւերւեց, հրդեհւեց, քար ու քանդ եղաւ. մի գիւղ ևս ջնջւեց, ադմինիստրացիան դարձեալ չը կար։

Ուշիի աւերը այնպիսի սարսափ ձգեց Թուրքերի վրա, որ յունիսի 5-ին մի շարք գիւղեր մի կողմից հապճեպով դատարկւում էին, իսկ միւս կողմից կողոպտւում և հրդեհւում հայերի ձեռքով։

Այրւած գիւղերն էին Նազրվանը և Թաքիան, իսկ կողոպտւածները՝ Պերսին, Անգրսակը, Քիւրդալուն, Համամլուն և Զորանքեարայի օբան։ Այսպիսով Աշտարակի շրջանում 9 Թուրք գիւղերի ժողովուրդը կողոպտւեց, աւերւեց և չոլերն ընկաւ։

Այդպէս էլ կը լինէր, ասպարէզը թողնւած էր ուժեղին.

հայերը այդ շրջանում ուժեղ էին, որոնք Նախիջևանի թուրքական գաղանութիւններից օրինակներ վերցրած՝ կողոպտում, աւերում էին թուրք գիւղերը։

Ահա այս բոլորից յետոյ յունիսի 6-ին յայտնուեց գաւառապետը կօզակներով. բանդարկուեցին բազմաթիւ հայեր, մի քանի հայ գիւղեր ենթարկուեցին զօրքերի խստութիւններին և սկսուեց տուգանքների շրջանը։

Աւերուածն ու քանդուածը խեղճ թուրք ժողովուրդն էր, իսկ տուգանքները գնում էին գանձարանի օգտին։

Ալրտումներ և յուզմունքներ մի քանի անհատական սպանութիւններով տեղի ունեցան նաև Էջմիածնի և Փարաքարի շուրջը. բայց նրանք մասսայական դէպքեր չառաջացրին։ Այս շրջանում խաղաղասիրական տարրը յաղթող էր, խաղաղութեան գործին քիչ չէր նպաստում և մի ազդեցիկ թուրք, որը շրջելով թուրք ժողովրդի մէջ՝ համոզում էր հանգիստ մնալ։ Դա Էջմիածնի գաւառի կալուածատէր Մուսա-խան Մակինսկին էր։



Ցուցակ Էջմիածնի գաւառի այն գիւղերի, որոնց ժողովուրդը ընդհարումների ժամանակ փախել կամ խոշոր ջնասներ է կրել [1]։

ՀԱՑ ԳԻՒՂԵՐ

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն	Քոչած	Կողոպտուած	Աւերուած	Կոտորուած
1	Ղօթուր .	17	քոչ.	կող.	—	—
2	Մուղնի .	35	,,	—	—	—

ԹՈՒՐՔ ԳԻՒՂԵՐ

1	Ուշի. .	142	,,	կող.	աւեր	կոտ.
2	Ղօթուր .	11	,,	,,	,,	,,
3	Նազրվան . .	58	,,	—	,,	—
4	Թաքիա .	85	,,	—	,,	—
5	Պերսի .	34	,,	կող. 2)	—	—
6	Անգրսակ .	20	,,	,, 2)	—	—
7	Քիւրդալու. .	11	,,	,, 2)	—	—
8	Համամլու . .	61	,,	,, 2)	—	—
9	Քիչիկ-քէնդ .	36	,,	—	—	—

1) Պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա Էջմիածնի գաւառի կրած գոյքային ջնասների քանակը, համաձայն կողոպտուած գիւղացիների ներկայացրած ցուցակների, հասնում է 121,149 ր., իսկ յանձնաժողովի ցուցակով՝ 32,244 ր.։

2) Մասնաւոր չափով կողոպտուած։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՒԱՌՈՒՄ

2—4 ՅՈՒՆԻՍԻ 1906 Թ.

Սուրմալուի գաւառը ընկած է Երևանի նահանգի հարաւարևմտեան մասում, հիւսիսային և արևելեան կողմերից կից Էջմիածնի և Երևանի գաւառներին, իսկ արևմտեան և հարաւային կողմերից ամբողջ գծի երկարութեամբ կազմելով Տաճկաց սահմանը։

Գաւառի հարաւային և արևմտեան մասերը լեռնոտ են, ձգուած երկու Մասիսների, Բարդողեան լեռների և Սինակի լանջերի վրա, իսկ հիւսիսային և հարաւային մասերը դաշտային են, տարածելով մինչև Արաքսի ափերը։ Գաւառի լեռնային մասը շատ աղքատ է բուսականութիւնից, հետևապէս և գետերից. տափարակները ոռոգւում են Արաքսից հանած առուներով, որի շնորհիւ արտադրում են բամբակ, խաղող և այլ բերքեր։

Սուրմալուի գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 89 հազար, որից 27 հազարը հայեր են, իսկ մնացեալ 62 հազարը՝ թուրքեր և քրդեր։ Հայերը կազմում են ազգաբնակութեան 30%-ը։

Գաւառի 229 գիւղերից 23 միայն հայաբնակ են, այն էլ մի քանիսը թուրքախառն։

Դրանք են.

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	1886 Թ. վիճակ.	Մատաղատուն
1	Կողբ	355	500
2	Արասգեօլ—4 տ. թուրք	41	65
3	Գիւլլուջա	87	135
4	Մօլլաղամար	53	80
5	Խալֆալու	116	180

6	Խոշխաբար	80	130
7	Իգդիր	360	530
8	Իգդիր-Մաւա—84 տ. Թուրք .	78	130
9	Բահարլու	122	230
10	Հախվէրիս	121	170
11	Ալիղամար	126	250
12	Բլուր	186	300
13	Զաքրլու —37 տ. Թուրք	30	35
14	Փանիկ	141	230
15	Էվջիլար	170	270
16	Ալէթլու	89	150
17	Նաջաֆալի—11 տ. Թուրք	54	70
18	Ղազիղշլաղ—52 տ. Թուրք	42	60
19	Թէջրլու	101	160
20	Մուրշուդալի—7 տ. Թուրք .	77	90
21	Ալիջան	86	140
22	Դաշբուրուն	180	280
23	Ալիղըզըլ .	58	75

Այս գիւղերից առաջինը—կողբը—ընկած է գաւառի հիւսիս-արևմտեան մասում, հոչակաւոր համանուն աղահանքերի մօտ, բոլորովին մեկուսացած հայ գիւղերից։

Յաջորդ երեք գիւղերը, այն է՝ Աբասգեօլը, Գիւլլուջան և Մօլլաղամարը նոյնպէս մեկուսացած են և գտնուում են հիւսիս-արևմտեան լեռնոտ սահմանի վրա Բալղ-Գեօլի մօտ։

Վերջին երկու գիւղերը, այն է Դաշբուռունը և Ալիղըզըլը դարձեալ մեկուսացած՝ գտնուում են գաւառի արևելեան կողմում։

Իսկ մնացեալ 17 գիւղերը ընկած են տափարակի վրա՝ համախմբուած սակայն Թուրք գիւղերի հետ միասին։

Հարիւրաւոր թուրք գիւղեր՝ բռնած գաւառի ամբողջ մակերևոյթը և քիւրդ գիւղեր՝ փռուած մանաւանդ լեռնային մասերում, ներկայացնում էին այդ մի բուռն հայ ժողովրդի համար լուրջ վտանգ, եթէ այս գաւառում ադմինիստրացիայի տակտիկան տարբեր չը լինէր։

Այն հանգամանքը, որ Սուրմալուն գտնւում էր Տաճկաց—Ռուսաստանի Կովկասեան տիրապետութեան վրա խեթ աչքով նայող այդ կառավարութեան և բազմաթիւ քրդական աւազակաբարոյ ցեղերով բնակեցրած սահմանի վրա, կրկնում ենք, ինչպէս և մի այլ տեղ յիշեցինք, ստիպեց կառավարութեանը կտրուկ միջոցների գիմել խռովութիւնների առաջն առնելու համար։

Սուրմալուի գաւառում յուզմունքներ նկատուեցին դեռ ևս 1905 թ. գարնան, Նախիջևանի և Երևանի մայիսեան դէպքերի ժամանակ։ Տաճկահպատակ քրդեր անցնում էին սահմանը և տեղացի քրդերի ու թուրքերի աջակցութեամբ քշում էին հայ գիւղերի նախիրները և ոչխարի հօտերը։ Միմիայն մայիսի ընթացքում քշեցին Տաշբուռուն գիւղի նախիրը 200 գլխից բաղկացած, Իգդիրմաւայի տաւարները 40 հատից աւելի և Խալֆալուի ոչխարը աւելի քան 300 գլխից բաղկացած։

Բացի այդ՝ տեղի ունեցան նաև մի շարք սպանութիւններ և մանր աւազակային դէպքեր։

Այսպէս, դարաղօյինցի թուրքերը օրը ցերեկով սպանեցին Ալիջանի ղորուղչուն։

Յունիսի սկզբին Հուսէին գիւղի թուրքերը Մուրշուդալի գիւղի հայերից 2 եզ փախցնելուց յետոյ, շնորհիւ իրենց ազդեցիկ մարդկանցից մէկի—Ալի բէկի, քիչ մնաց մի մեծ ընդհարում առաջ բերէին։

Օգոստոսի մէջ Մալաքլու գիւղի թուրքերը հանդում ջուր անելիս սպանեցին Զաքրլու գիւղացի Մարտիրոս Սահրադեանին, 35 տար. իսկ դրանից երկու օր անց Փանիկ գիւղի սահմանին մօտ եղող մի ջրաղացում սպանեցին 3 մալաքլուեցի թուրքեր։

Հոկտեմբեր ամսում Ղարխուն գիւղի մօտ մի քրդի վրանում քնած ժամանակ նենգութեամբ սպանուեց տաշբուռունցի Նահապետը, գիւղի ամենաքաջ և սիրուած մարդը։

1906 թ. յունվարի 24-ին 3 կողբեցիներ Փուրսաղ գիւղի մօտ

ենթարկեցին մի քանի թուրքերի յարձակման. տեղի ունեցաւ հրացանաձգութիւն, որի ժամանակ սպանուեց թուրքերից մէկը, այն է աւազակ Ջալիլը։ Այդ դէպքի վրա կառավարութիւնը խիստ ուշադրութիւն դարձրեց և քիչ էր մնում որ հայերին յանձնէին զինուորական դատարանի։

Մարտ ամսի մէջ Քիւլլուկ գիւղի մօտ ծանր վիրաւորուեց Մօլլաղամար գիւղացի Հայրապետ Գրիգորեանը, որին թուրքերը կարծեցին մեռած, բայց որը ազատուեց մի հրաշքով։

Մայիսի 9-ին Հախվէրիսի հանդում ջուր անելիս սպանուեցին՝ Գրիգոր Յակովբեանը—25 տար. և Նիկողոս Կիրակոսեանը—26 տար. իսկ այդ դէպքից 10 օր անց, մայիսի 19-ին, սպանուեցին Հախմահմադ գիւղացիներ՝ Մաշադի Հէյդարը և Հաջի Իսմայիլը, որի համար Բլուր գիւղը ենթարկուեց մեծ տուգանքի։

Եւ այսպէս, հայ-թուրքական ընդհարումների առաջին օրուանից անցնում էր ամբողջ տարի ու կէս, իսկ այդ թուրքաշատ գաւառում մասսային խոշոր ընդհարումներ տեղի չունեցան, մինչև որ մի դէպք եկաւ ապացուցելու, թէ ինչպէս ադմինիստրացիան դէմ էր որևէ ընդհարման այդ գաւառում և թէ ինչպէս նրան հնարաւոր էր ճնշել ամեն մի շարժում, եթէ միայն նա ցանկանար . . .

Սուրմալուի դաշտային մասը, ինչպէս տեսանք, ոռոգւում է Արաքսից հանած առուներով։ Այդ առուները անցնում են բաւական հեռաւոր և դժուարին տեղերով, որոնց մաքրելու համար տարէն մէկ թէ երկու անգամ հայ և թուրք գիւղացիներ խառը դուրս են գալիս մի երկու օրով աշխատելու։

Յունիսի 2-ին որոշած էր բանդը նորոգել և առուները մաքրել և բլուրցի մի քանի հայեր շտապում էին այնտեղ, երբ Հախմահմադ գիւղի մօտ ենթարկուեցին թուրքերի յարձակման։ Երեք հոգի հայերից սպանուեցին, որոնցից երկուսի դիակները անհետացրին, իսկ մէկը թէև վիրաւոր, բայց կարողացաւ փախչել և լուր բերել։ Գաւառապետը հասաւ բանդը այն ժամանակ, երբ այնտեղ եղող հայերը փախչում էին՝ խուսափելով հետապնդող թուրքերից։ Ջը նայած գաւառապետի գալուն, բանդի աշխատանքները դադարեցին և գիւղացիները՝ հայ թէ թուրք վերադարձան գիւղերը։

Ահա այդտեղից վերադարձող թուրքերի վրա Բլուրի և Ջաքրլուի մօտերքում յարձակուեցին հայերը և սպանեցին նրանցից 10 հոգու։

Այս դէպքը արդէն յուզեց Թուրքերին և յունիսի 3-ին Եայ-իջի գիւղում խմբւած Թուրքեր և քրդեր—աւելի քան 100 լաւ զինուած մարդիկ—յարձակում գործեցին Ալիղամարի վրա։

Երբ լուրը Իգդիր հասաւ, պատմում են ականատեսները, կօզակների կօմանդիրը դէպքի տեղը ուղարկելով կօզակներ, խըստիւ կարգադրեց գնդակահարել, ովքեր որ լինին խռովարարները։ Եւ այդպէս էլ եղաւ։ Կօզակները հասնելով Ալիղամար և նկատելով դաշտում Թուրքերին և քրդերին, որոնք գնդակներ էին արձակում հայերի վրա, կրակի կապեցին նրանց, որից սպանուեցին 7 հոգի, իսկ 14 հոգի վիրաւորներ մի քանի առողջների հետ միասին ձերբակալուեցին և բերուեցին Իգդիր։ Այդ վիրաւորներից երկուսը նոյնպէս մեռան։ Բռնուածների մէջն էր մի քուրդ բէկ Շամշադինովների ցեղից, որոնք տխրահռչակ Բօգուսլաւսկու օրով Սուրմալուում թագաւորում էին իրենց շահատակութիւններով։

Ճիշտ է, ինչպէս Շամշադինովը, այնպէս էլ միւս բռնուածները բաց թողուեցին, բայց շնորհիւ այն կտրուկ միջոցի, որին դիմեց զօրքը հէնց առաջին վայրկեանից, սպասող խոշոր ընդհարումները տեղի չունեցան և Թուրքերն ու քրդերը հանդարտուեցին։

Այս դէպքից յետոյ թէև կատարուեցին նորից մի քանի սպանութիւններ Թուրքերի կողմից, ինչպէս քանաքեռցի հիւսն Ալէքսան Ցարութիւնեանի սպանութիւնն էր Ղարաղալայի կայարանում յունիսի 17-ին. մօլլաղամարցիներ Կարապետ Քօլօզեանի և Ցակովբ Մարտիրոսեանի սպանութիւնը Փուրսաղ գիւղի մօտ յունիսի 23-ին և դաշբուրունցի Սեդրակ Հայրապետեանի սպանութիւնը Ջաննաթարադի Թուրքերի ձեռքով իր այգում սեպտեմբերի 9-ին. բայց մասսայական ընդհարումների երկիւղը ընդմիշտ վերացել էր. մի հատիկ դասը խելքի էր բերել խռովարարներին։

Երևանի նահանգի եօթը գաւառներից երկուսը միանգամայն ազատ մնացին ընդհարումներից. դրանք էին Նոր-Բայազէտի և Ալէքսանդրապօլի գաւառները, որոնք յայտնի են որպէս բազմահայ գաւառներ։

Այսպէս, Նոր-Բայազէտի գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 122 հազար, որից հայերը՝ 81 հազար. իսկ Ալէք-

սանդրապոլի գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 165 հազար, որից հայերը՝ 137 հազար։ Այլ խօսքով Նոր-Բայազէտի գաւառում հայերը կազմում են ընդհանուր ազգաբնակութեան 66%-ը, իսկ Ալէքսանդրապոլի գաւառում՝ 83%ը։ Նոր-Բայազէտի գաւառում հաշւում են 135 գիւղ, որից հայաբնակ են 58-ը. իսկ Ալէքսանդրոպոլի գաւառում՝ 164 գիւղ, որից հայաբնակ են 120-ը։

Ահա խաղաղութեան պատճառը այդ գաւառներում։

ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳ

Գանձակի նահանգը, ինչպէս և Երևանինը, ընկած է Անդրկովկասի հարաւային ծայրում, հարաւային կողմից կազմելով Պարսկաստանի սահմանագիծը, իսկ միւս կողմերից, որպէս սահմանակից շրջաններ, ունենալով Երևանի և Թիֆլիսի նահանգները, Դաղըստանի շրջանը և Բագուի նահանգը։

Գանձակի նահանգը բռնում է 38,300 քառակուսի վերստ տարածութիւն, որի հարաւային և արևմտեան մասերը ներկայացնում են մի խիստ լեռնոտ երկիր, պատած վիթխարի կատարներով, խորունկ ձորերով և յաճախ ընդարձակ կուսական անտառներով, ուր գլխաւորապէս ապրում են հայեր. իսկ հիւսիսային և արևմտեան մասերը, ընկած Քուր գետի երկու ափերի վրա, ներկայացնում են հարթ դաշտավայրեր, տեղ տեղ հարուստ ջրանցքներով և բարձր կուլտուրական բերքերի մշակութեամբ, իսկ տեղ տեղ նման մերկ անապատների։

Գանձակի նահանգի ազգաբնակութեան ընդհանուր թիւը, համաձայն 1897 թւի միօրեայ վիճակագրութեան, հասնում է 878 հազարի, որից թուրքերը կազմում են 554 հազար, հայերը՝ 294 հազար և զանազան ազգութիւններ՝ 30 հազար։ Ամբողջ նահանգում հաշւում են 1613 գիւղ, որից հայաբնակ են 390-ը։

Նահանգը բաժանւած է ութ գաւառների։

Հայ և Թուրք ժողովուրդների համեմատական թիւերը Գանձակի նահանգի 8 գաւառներում՝ վերցրած 1897 թ. միօրեայ վիճակագրութիւնից հազարների հաշիւով։

№ №	ԳԱՒԱՌՆԵՐ	Ընդհան. թիւը	Թուրքեր	Հայեր	Զանազան ազգեր
1	Գանձակի .	162	105	43	14
2	Շուշու .	139	63	74	2
3	Զանգեզուրի .	138	74	63	1
4	Նուխու .	120	92	20	8
5	Ղազախի .	112	64	44	4
6	Ջիվանշիրի. .	73	53	20	—
7	Արէշի .	67	53	14	—
8	Ջիբրայիլի . .	67	50	16	1
	Բոլորը միասին	878	554	294	30

Մեր շօշափած խնդրի տեսակէտից Գանձակի նահանգը բոլորովին այլ պայմանների մէջ է գտնւում, քան Երևանինը, և հէնց այդ ուրոյն պայմանների շնորհիւ էլ հայ-Թուրքական ընդհարումները այս տեղ աւելի մեծ ծաւալ են ստացել և աւելի տեղական բնաւորութիւն կրել, քան Երևանի նահանգում։

Որո՞նք են այդ տարբեր պայմանները։

Նախ՝ Գանձակի նահանգը Տաճկաստանի սահման չէ կազմում, հետևապէս սահմանային մոտհոգութիւն և նրա հետ կապւած հայ տարրի փայփայումը չէր կարող այստեղ այնպիսի տեղ գտնել, ինչպէս Երևանի նահանգի նկատմամբ։

Երկրորդ՝ մասնաւոր կալւածատիրութիւնը Գանձակի նահանգում տարածւած է աւելի մեծ չափով, քան Երևանի նահանգում։ Նահանգի բոլոր գաւառներում, բոլոր գաւառների բոլոր մասերում վխտում են Թուրք կալւածատէր բէկեր և աղալարներ, որոնք ներկայացնում են մի մի տէրեր, իշխաններ իշխողի բոլոր

ձգտումներով։ Ճիշտ է, կան նաև հայ կալուածատէր բէկեր, բայց նրանք այնքան մեծ թիւ չեն կազմում և բարեբախտաբար այն ազդեցութիւնը չունեն հայ գիւղացիութեան վրա, ինչ որ թուրք բէկը՝ թուրք գիւղացիութեան վրա։

Թէ Գանձակի նահանգում մասնաւոր կալուածատիրութիւնը որ չափով է զարգացած, այդ մասին մի գաղափար տալու համար առաջ կը բերենք մի փոքրիկ թուական համեմատութիւն, քաղելով այդ «сборникъ статист. данныхъ о землевлад. въ пяти губерн. Закавказ. края 1899 г.» պաշտօնական հրատարակութիւնից։

Գանձակի նահանգում մասնաւոր սեփականատէրերը ունեն 631 հազար դեսիատին հող, որից 314 հազարը գտնւում է նրանց անմիջական տիրապետութեան տակ, իսկ 317 հազարը՝ գիւղացիների ձեռքում (надѣлъ)։ Մինչդեռ Երևանի նահանգում մասնաւոր սեփականատէրերը ունեն ընդամենը 120 հազար դեսիատին հող, որից իրենց անմիջական տիրապետութեան տակ գտնւում է միմիայն 19 հազար դեսիատինը, իսկ 101 հազարը՝ գիւղացիների ձեռքումն է։

Երևանի նահանգում պետական հողերի վրա ապրող գիւղացիները կազմում են 64%, մինչդեռ Գանձակի նահանգում այդ %-ը իջնում է մինչև 45-ի։

Սրանք թւեր են, պերճախօս թւեր, որոնք լոյս են սփռում Գանձակի նահանգում տեղի ունեցած այնքան խոշոր և տևողական դարձած ընդհարումների վրա։

Կայ մի երրորդ հանգամանք ևս, այդ երկու ժողովուրդների թուական տարբերութիւնն է։

Գանձակի նահանգում, ինչպէս տեսանք վերը մեր առաջ բերած թւերից, թուրք ժողովուրդը կազմում է մի ճնշող մեծամասնութիւն՝ իր անգիտութեամբ ենթակայ կողմնակի ազդեցութիւնների և ներշնչումների։

Գանձակի նահանգում բազմաթիւ թուրք ժողովրդի հետ խառը ապրում է համեմատաբար փոքրաթիւ հայ ժողովուրդ։ Հայաբնակ գաւառամասերի և շրջանների ճանապարհները անցնում են թուրքաբնակ տեղերով, մանաւանդ տափարակներում, ինչպէս են Աղդամի և Ջիւանշիրի դաշտերը, ուր ապրում են բացառապէս թուրքեր։ Ընդհարումները բռնկւելուց յետոյ թուրքերը ձգտել են ճանապարհները փակել, երթևեկութիւնը և մթերքների տեղափո-

խութիւնը կանգնեցնել, հայերին կղզիացնել ու այդպիսով նրանց ճնշել. իսկ հայերը ընդհակառակը, աշխատել են զէնքի ուժով ճանապարհները պահել, իսկ անհնարին դէպքում նոր ճանապարհներ բացել, ինչպէս այդ տեղի է ունեցել առանձնապէս Շուշին Գանձակի հետ կապելու նպատակով, թէկուզ դրա համար հարկաւոր լինէր մի շարք թուրքական գիւղեր աւերել։

Ահա թէ ինչպիսի կարիք ստիպել է հայ ժողովրդին հրապարակ գալ իր բոլոր ռազմական ուժերով և ոչ պակաս գազանաբար քանդել, աւերել, ոչնչացնել թուրքի գոյքը, թուրքական գիւղերը։

Եւ իսկապէս, երբ շրջում էք Գանձակի նահանգում տեղի ունեցած ընդհարումների շրջանները, և դիտում աւերւած ինչպէս հայ, այնպէս էլ թուրք գիւղերը և նրանց աշխարհագրական դիրքերը, ձեզ համար միանգամայն լուսաբանւում է այն յամառ կռիւը, որ տեղի է ունեցել երկու դրացի ժողովուրդների մէջ յատկապէս այդ ճանապարհների շուրջը։

Այս փոքրիկ լուսաբանութիւնից յետոյ այժմ անցնենք այդ տխուր անցքերին՝ ժամանակագրական կարգը պահպանելու համար սկսելով նախ Շուշի քաղաքից։



ԾՈՒԾԻ

Սինիքը շատ է հարուստ լեռներով և կատարներով, բայց նրա ամենամեծ զարդը կազմում է Ղարաբաղի լեռնաշղթան, որը երկար ու բարակ ձգելով ընդարձակ տարածությունների վրա, կազմում է Զանգեզուր, Շուշի և Ջիբրայիլ գաւառների միացման սահմանագիծը։

Այդ շղթայի հարաւային մի զոյգ գագաթներ—մէկը 7000, իսկ միւսը 8000 ոտնաչափից էլ աւելի բարձրութիւն ունեցող—կոչւում են Քիրս։ Քիրսի հիւսիսային հեռաւոր փէշերի վրա երեք կողմերից անդնդախոր ձորերով պատած՝ ամուր, շերտաւոր, կոած ու կոփած կուրծքերով, որպէս ձուլածքը, բարձրանում է մի հսկայ սարահարթ։

Ահա այդ աննման ձուլածքին ամբողջ Ղարաբաղը Ղալա է կոչում։ Իսկապէս ղալա, ամրոց, բերդ, ուր բազմած Շուշին, որպէս սրաթև արծիւը, մի առանձին հպարտութեամբ, իշխում է իր առաջ ձգած տարածությունների վրա։

Եւ իսկապէս, Շուշին—կարծր քարերից կերտուած չոր ու ցամաք այդ բարձրությունը—այնքան գեղեցիկ տեսք ունի, այնպիսի գեղեցիկ տեսարաններ կան նրա առաջ ձգուած, որ մարդ հիանում է նրանով։

Շուշին առաջին անգամ տեսնողը բացականչում է «պատերազմների և սխրագործությունների մէջ փառք որոնող որպիսի մի մարդ դրել է այդ քաղաքի հիմքը . . .»

Եւ այդպէս էլ է. ծագումով անյայտ, բայց մի յաջող դիպուածով իշխանութիւն ձեռք բերած և աշխարհակալական ձգտումներով տոչորուած Փանահ-խանը 1752 թուին Վարանդայի Մէլիք-Շահնազարից այդ սարահարթը վերցնելով և նրա աջակցութեամբ այդ բնական ամրութիւնների վրա նոր արհեստական պարիսպներ կանգնեցնելով՝ նպատակ դրեց կուի միջոցով ձեռք ձգել Ղա-

բաբաղի հայ մէլիքների կալուածները, որպիսի կռիւներով նա զբաղուեց մինչև իր կեանքի վերջը։

Երկու գետակներ—մէկը Ղայբալի, իսկ միւսը Քարինտակ անուններով—հոսում են Շուշու երկու կողմերից, համանուն ձորակների միջով։ Դրանք Կառկառ գետի սկզբնական երկու ճիւղերն են, որոնք Խանքէնդ աւանից մի փոքր հեռու խառնւում են միմեանց։

Շուշու մակարդակը արևելեան կողմից թեքւած է դէպի ցած, իսկ արևմտեան և հարաւային կողմերից, ընդհակառակը, բարձրանալով՝ ներկայացնում է կոփածոյ ժայռերի մի փոքրիկ շղթայ Գեաւուր-ղայա անունով։

Ահա այդ շղթայից սկսած դէպի ցած տարածւում է քաղաքը, որի վերին մասում ապրում են հայերը, իսկ ներքին մասում թուրքերը, թէև մի քանի տեղերում նրանք ապրում են և խառը։

Շուշին թէև գաւառական քաղաք է համարւում, բայց իր արտաքինով աւելի գեղեցիկ է քան Գանձակը և Երևանը և ազգաբնակութեան թւով էլ ոչ այնքան պակաս նրանցից։

Շուշին արդիւնաբերութեան և արտահանութեան տեսակէտից աղքատ վայր է։ Արգաւանդ դաշտավայրերը ընկած են հեռու, իսկ լեռնային մասերը ճանապարհների բացակայութեան շնորհիւ անմշակ են։ Առևտրի միակ շրջանառութեան նիւթ կազմում է շերամը։

Այս հանգամանքը ստիպել է տեղական թարմ ուժերին ասպարէզ փնտռել իր միջավայրից դուրս։

Շուշի քաղաքի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 33 հազար, որից հայերը՝ 18 հազար, թուրքերը՝ 14 հազար և զանազան ազգեր՝ 1 հազար, այնպէս որ այստեղ հայերը կազմում են մեծամասնութիւն։

Հայերի քաղաքամասը բաղկացած է մի քանի թաղերից։ Վերի մասը, դէպի հարաւ, կոչւում է Գեաւուր-ղայայի թաղ. նրանից փոքր ինչ ցած՝ Կազարմայի թաղ, որտեղ գտնւում են Վերին կամ Երևանի Դռները և որտեղից անցնում է Գօրիսի խճուղին։ Հիւսիսային մասը, ցցւած Ղայբալի ձորի վրա, կոչւում է Քամու Զրաղացի թաղ. նրանից ցած դէպի ներքին գերեզմանատունը՝ Ղումլուղի թաղ. իսկ հարաւարևելեան մասը՝ Հին Հանգստարանի թաղ և Բաղոնց Ձորեր։

Այս թաղերի և թուրքական մասի մէջտեղում ընկած է

հայերի շուկան—Մեծ Մէյդանը, որը կոչւում է նաև Թոփխանա։

Թոփխանայից սկսած մինչև Հին Հանգստարանի Թաղը, Աղաբէկանց ձորը, և Ցածի Մէյդանը, որտեղից արդէն սկսւում է Թուրքաց Թաղը, շառաւիղաձև ձգւում են երեք մեծ՝ այն է Թատրոնի, Ագուլեաց եկեղեցու փողոցները և Փոստի փողոցի շարունակութիւնը, մէջտեղ կազմելով երկու մեծ կւարտալներ։ Թատրոնի փողոցի վրա գտնւում էր Թամիրեանի Թատրոնը. Ագուլեաց եկեղեցու փողոցի վերին շարքում՝ Ղազանչեցոնց եկեղեցին, իսկ ցածի շարքում՝ Ագուլեաց եկեղեցին իր գեղեցիկ խանութներով։

Ահա այն երեք փողոցները, որոնք կազմում էին քաղաքի զարդը և որոնք իրենց մէջ ամփոփում էին աւելի քան 400 տներ և լեցուն խանութներ, այժմ ներկայացնում են աւերակների մի կոյտ. կանգուն մնացել են միմիայն երկու եկեղեցիները։

Թուրքերն էլ ունեն աւերակներ, բայց անհամեմատ քիչ։ Թուրքերից աւերւած ու հրդեհւած են Երևանի Դոնների մօտ 20 տուն, հին հանգստարանի շրջանում՝ 15, Թատրօնի փողոցում՝ 7, Աղաբէկանց Ձորում՝ 17 և Դիքտան-Ղուռուի շրջանից սկսած մինչև Ղումլուղ և Քեօչարլու Թաղերը՝ աւելի քան 100 տուն։



ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ՇՈՒՇՈՒՄ

16—22 ՕԳՈՍՏՈՍԻ 1905 Թ.

Շուշում յարաբերութիւնները հայերի և Թուրքերի մէջ մինչև ընդհարումները եղել են լաւ և բարեկամական։ Հակակառավարչական որևէ շարժում հայերի կողմից, ինչպէս կալւածական ցոյցն էր, նոյն իսկ համակրութիւն էր գտնում Թուրք ժողովրդի մէջ։ Սակայն այդ շարժումը համակրութիւն չէր գտնում բէկերի մէջ։ Պատմում են հետևեալ դէպքը։

Աղդամեցի Ջաֆար-բէկ Վէզիրովը կալւածների գրաւման ժամանակ խոստացել էր իր մարդկանցով գալ Շուշի և հայերին զսպել, եթէ նրանք կը համարձակւեն կառավարութեան դէմ ցոյց կազմել. մինչև անգամ պնդում են, որ նա իր մարդկանցով նոյն իսկ եկաւ քաղաք, սակայն որին Թուրքերի Ղազին համոզեց Թողնել այդ միտքը և յետ դառնալ։

Այս երևոյթը ահագին լոյս է սփռում այն կատաղի ընդհարումների վրա, որոնք տեղի ունեցան Շուշում և նրա շուրջը, ինչպէս կը տեսնենք աստիճանաբար։

Բագուի փետրվարեան սարսափներից անմիջապէս յետոյ Շուշում հայ և Թուրք ժողովուրդների մէջ նոյն երևոյթը տեղի ունեցաւ, ինչ որ Երևանում, Գանձակում և միւս տեղերում։ Բագուի ոճրագործութիւնները պախարակւում էին երկու կողմից էլ, համերաշխութեան և փոխադարձ շահերի անունից խօսում էին ամենքը։ Սակայն որքան աւելի շատ ջանքեր էին գործ դրւում խաղաղութիւնը ապահովելու նպատակով, այնքան աւելի կասկածներ էին ծնում հայերի մէջ։

Ինչպէս մենք տեսանք, Շուշում հայերը մեծամասնութիւն են կազմում. չը նայած այդ բանին, նրանք առաջինը առիթներ էին փնտռում բարեկամական կապերը աւելի ամրապնդելու։

Այսպէս, մարտի 25-ին հայերը ահագին բազմութեամբ այցելեցին շիաների մզկիթը՝ Թուրք հասարակութեանը ցաւակցութիւն յայտնելու Շէյխ-Հասան մամաղանցի մուշտէյիդի մահուան առիթով, ինչպէս այդ տեղի ունեցաւ Երևանում և Գանձակում։

Սրանք անշուշտ կունենային իրենց դրական նշանակութիւնը, եթէ մտքերի թունաւորումը չը գործէր մի արտակարգ եռանդով։

Շուշին խաղաղ մնաց Բագուի, Երևանի և Նախիջևանի ջարդերի ժամանակ, խաղաղ մնաց նաև ամառուայ ամիսների ընթացքում, բայց միևնոյն ժամանակ չէր փարատւում այն կասկածը, որը կապւած էր թափառական ցեղերի սարից իջնելու դէպքերի հետ։

Քոչերի սարից իջնելու հետ կապել ընդհարումների պատճառները մենք տրամադիր չենք, բայց որ այդ տեղափոխութիւնը կարող էր առիթ ստեղծել ամիսներով կուտակւած տրամադրութիւնների բռնկման, ինչպէս և եղաւ, մենք չենք կասկածում։ Նշանները երևացին նոյն իսկ յուլիս ամսին, երբ քոչւորները սկըսեցին իրենց բարձր «եաթաղներից» շարժւել։

Փաստերը իրենց տեղերում կը գան և կապացուցեն այդ։

Յուլիսի սկզբներին Շուշուց ցած, խճուղու վրա, հանրակառքով (օմնիբուս) ճանապարհորդող մի քանի հայեր կողոպտւեցին. բայց այս դէպքը աննկատելի մնաց. աննկատելի մնացին նոյնպէս մի քանի նման դէպքեր, ընդունելով նրանց որպէս սովորական երևոյթներ. սակայն դրանց յաջորդող դէպքերը այլ բան ցոյց տւին։

Յուլիսի 25-ին, ինչպէս այդ կը տեսնենք իր տեղում, Խաչէնի ձորակում ընդհարում տեղի ունեցաւ սարից իջնող քոչւորների և Վանք գիւղի հայերի մէջ։ Լուրը Աղդամ հասնելով Թուրքերը կողոպտեցին հանրակառքերով ճանապարհորդող շուշեցի հայերին և գերեցին նրանց, որոնց կարելի եղաւ ազատել միմիայն երկու օրից յետոյ։

Այս էլ զանցառութեան տւին շուշեցի հայերը։

Մի նոր ընդհարում, դարձեալ Խաչէնի ձորակում, քոչւոր Թուրքերի և հայերի մէջ տեղի ունեցաւ օգոստոսի 8-ին՝ հայերի կորեկի արտերը ուտեցնելու պատճառով։ Այս երկրորդ դէպքը միանգամայն տակն ու վրա արեց ամբողջապէս Աղդամի դաշտը։ Կարծէք մի անբերևոյթ ուժ ոտքի կանգնեցրեց Թուրք խուժանին, որը երկու օր շարունակ բազմաթիւ ձիաւոր խմբերով ասպատա-

կում էր Եալախի ճանապարհը՝ կողոպտելով և գերելով երկու կողմերից երթևեկող բազմաթիւ շուշեցի ճանապարհորդներին, ենթարկելով նրանց բռնութիւնների, վիրաւորանքների և խայտառակչութիւնների։

Այդ նոյն օրը, օգոստոսի 8-ին, Շուշում սպանուեց մի թուրք լապտերավառ և վիրաւորուեց թուրքերի ձեռքով գիւղերից քաղաք մտնող Տիգրան Մէլիք-Ալլահվէրդեանը։

Չը նայած այն բանին, որ լապտերավառի սպանութիւնը կատարուել էր գիշերը և ոչ մի ապացոյց չը կար, որ նա կատարուած լինէր հայերի ձեռքով, բայց „Kaciiñ" լրագրի մէջ լոյս տեսաւ Շաֆիբէկով ստորագրութիւնը կրող Շուշուց ուղարկուած հետևեալ բնորոշ հեռագիրը։

«Գիշերուայ ժամը 3-ին երեք հայեր մեծ կօշիկներով և բըրդոտ փափախներով, խէնջարներով կտոր կտոր արին մի լապտերավառ մահմեդականի և փախան։»

Հասկանալի է, թէ այսպիսի մի յուզուած ժամանակ կրքերը լարելու օրպիսի յանցաւոր մի միտք և ապագայում հայերին մեղադրելու օրպիսի մի ստոր կանխամտածում թաքնուած էր այդ հեռագրի տակ։

Երկու օրուայ հոգեկան տանջանքներով լի գերութիւնից ազատուեցին ու եկան հարիւրից աւելի ճամբորդ գերիները. շուշեցին այս էլ տարաւ։ Բայց սպանութեան և կողոպուտի դէպքերը գնալով շատանում էին։ Քաղաքի Ներքին Դռների մօտ, որը ծառայում է ամբողջ Վարանդայի համար որպէս մուտք, գիւղացի հայերը խուզարկուում, կողոպտուում էին թուրքերի ձեռքով։ Երթևեկութիւնը այդ կողմով դարձաւ դժուարին. Թուրքի Մէյդանում աշխատող բաւականաչափ հայ արհեստաւորներ ուզեցին տեղափոխել իրենց խանութները հայերի մասը, բայց հարևան թուրքերն արգելք եղան՝ հաւատացնելով որ ոչինչ չը կայ։

Այդպիսի դրութիւնը շարունակուեց մինչև օգոստոսի 16-ը։

Այդ օրը առաւօտեան, Ներքին Դռների մօտ թուրքերը վիրաւորեցին երկու կաղարծեցի հայերի, խլելով նրանց ձեռքից ունեցած ատրճանակները. իսկ ցերեկուայ ժամը 2-ին թուրքերի մասում սպանուեց նախկին հաշտարար դատաւոր Լունեակինը՝ մի թուրքի հետ ունեցած ինչ որ մանաւոր վէճի պատճառով։

Մինչդեռ քաղաքի խօսակցութեան միակ առարկան այդ

սպանութիւնն էր և մի քանի հայեր հետաքրքրուած անցել էին Թուրքաց մասը—սպանութեան տեղը, յանկարծ Թուրքի Մէյդանում պայթեցին հրացաններ։

«Թուրքի Մէյդանում հայերին կոտորում են», ահա այն լուրը, որը հասնելով Թոփխանա՝ հայերն էլ այստեղից սկսեցին կրակել։ Մի վայրկեան օդը խլացաւ հրացանների տրաքոցներից, սարսափահար եղած ժողովրդի հարայ-հրոցից և կանանց ու երեխաների վայնասունից։

Հայերը սկսեցին փախչել Թուրքաց մասից, իսկ Թուրքերը՝ հայոց մասից, ի հարկէ գնդակների տարափի տակ և շատերը վայր գլորուելով։ Ականատեսները պատմում են, որ ոստիկանապետ Խոսրով բէկ Թոփալովը, նոյնպէս մի խումբ իր ձիաւորներով փախչում էր Թոփխանայից դէպի Թուրքի Մէյդանը, բայց աջ ու ձախ կրակելով ատրճանակից։

Մի ժամ տևող հրացանաձգութիւնը դադարեց, քաղաքը բաժանուեց երկու թշնամի բանակների։ Ինչպէս հայերից, այնպէս էլ Թուրքերից բաւականաչափ այս և այն կողմը գերիներ մնացին։ Թուրքի Մէյդանում և Աղաբէկանց Ձորում ընկան 20-ի չափ հայ և Թուրք սպանուածներ։

Գիշերը անցաւ խաղաղ, բայց առաւօտեան հրացանաձգութիւնը սկսուեց մի նոր ուժով։ Այս անգամ սկսեցին կրակել քաղաքի բոլոր մասերից, որը ընդհատումներով տևեց ամբողջ օրը։ Ձօրքը քաղաք դուրս եկաւ. բայց նրա ներկայութիւնը չը կանգնեցրեց հրացանաձգութիւնը. նա, կարծէք, հանդիսատեսի դերում լինէր, ինչպէս և միւս քաղաքներում, միւս ընդհարումների ժամանակ։ Մինչև անգամ փոխ-նահանգապետ Բարանովսկու մուտքը քաղաք 200 կօզակներով վերջ չը դրեց հրացանաձգութեանը. ընդամենը մի ժամուայ ընդհատումից յետոյ հրացանաձգութիւնը սկսուեց նոր թափով։

Այդ օրը Թուրքերը հրդեհեցին քաղաքից դուրս Գեխի աղբիւրի մօտ ընկած Թամիրեանի աղիւսի և քունկերի գործարանը, իսկ Ղայբալուի ձորում՝ Դաւիթ Ներսիսեանի շերամի գործարանը, որին որպէս պատասխան հայերը հրդեհեցին Երևանի Դոնների մօտ Թուրքերի մի քանի տները, որոնց բնակիչները առաջօրէն փախել, պատսպարուել էին մօտիկ գօրանոցում։

18-ի առաւօտը բացուեց աւելի սոսկումով քան նախորդ օրը։

Աղդամից քաղաք էին թափել բաւականաչափ թուրքեր, որոնք խրախուսուած այն բանից, որ հայերը փոխ-նահանգապետի կարգադրութիւնը յարգելով դադարեցրել էին հրացանաձգութիւնը, խուժել հասել էին մինչև Ագուլեաց եկեղեցին և միւս կողմից մինչև Քամու Ջրաղացի տակերը, որտեղից մի անօրինակելի իրարանցումով ժողովուրդը քաշւում էր դէպի հայկական թաղերի խորքը։ Բացի այդ, Ղումլուղի թաղում հրդեհւած էին մի քանի տներ, որտեղից հրդեհը արագութեամբ անցնում էր հարևան շինութիւններին։

Հրդեհի մի փորձ, որն արին թուրքերը Ագուլեաց եկեղեցու յետևի մի թուրքի տանից, աւերիչ չափեր ընդունեց։ Այդ տունը պատկանում էր ոմն Սուլէյմանովին, որի մէջ տեղաւորուած էր հիւանդանոց։ Ահա այդ տունը առաջին անգամ հրդեհւեց թուրքերի կողմից, որտեղից հրդեհը տարածւելով դէպի հայերի մասը, շնորհիւ փչող քամու ահագին ծաւալ ստացաւ։ Վկայում են, որ նախ քան այդ տունը հրդեհելը թուրքերը վճարեցին տան տիրոջը— Սուլէյմանովին— տան արժէքը։

Ղումլուղի թաղում և Ագուլեաց եկեղեցու շուրջը բռնկւած հրդեհը մի կողմից, թուրքերի խուժումը մինչև հայկական թաղերը միւս՝ մի վայրկեան հայերի վրա սարսափ ազդեցին, որոնք սթափւածի պէս դուրս թռան դիրքերից՝ զգալով իրենց սխալը հրացանաձգութիւնը դադարեցնելու մէջ և մի արտակարգ յարձակումով յետ մղեցին առաջացած խուժանին Քամու Ջրաղացի տակից և Ագուլեաց եկեղեցու մօտից։ Այդ մի չը տեսնւած գրոհ էր, որը կորստաբեր նշանակութիւն ունեցաւ թուրքերի համար։ Նրանց զոհերի թիւը այդ օրը հաշւում էին 85, իսկ հայերինը՝ 10 սպանւած և 20 վիրաւոր։ Մի քանի զոհեր էլ ունեցան զինւորները։

Իրիկնադէմին հրդեհը աւելի ևս սոսկալի չափեր ընդունեց՝ հայկական մասում առաջացնելով մի յուսահատ դրութիւն։

Մինչդեռ Ռիզա-կուլի Միրզայի տանը հաւաքւած նահանգապետը, գաւառապետը, առաջնորդը և հայ ու թուրք ներկայացուցիչները զբաղւած էին այդտեղ բերւած հայ և թուրք գերիների, որոնց թւում նաև Հուսէին-աղա Ջիվանշիրի, փոխանակութեամբ և հաշտութեան բանակցութիւններով, հրդեհը աւելի և աւելի տարածւելով բռնել էր մի մեծ շրջան. Թոփխանայից սկսած մինչև Խանին Աղջկայ աղբիւրը և Հին Հանգստարանի թաղը իրենց շըր-

ջակայքով և մի քանի հարիւր տներով և խանութներով։ Գոյքեր ազատելու մասին մտածող չկար. բազմաթիւ ընտանիքներ երեխաների ձեռքերից բռնած թափուած փողոցները, վազվզում էին խելակորոյսի պէս այս և այն կողմ։ Տեսարանը գնալով ընդունում էր մի անօրինակ աղէտի բնաւորութիւն, որի դէմ կուելու համար մարդը դառնում է մի կատարեալ անկարողութիւն։

Ահա, աղէտի այս վայրկեանին Ռիզա-կուլի Միրզայի տանից յայտարարուեց հաշտութիւն, բայց այդ ոչ մի ազդեցութիւն չունեցաւ. հրեղէն լեզուները տարածւում էին նոյն թափով, հրացանների ճռռոցը շարունակւում էր աւելի ևս կատաղի կերպով։

Օգոստոսի 19-ին ընդհարումը նորից վերսկսուեց և շարունակուեց մինչև երեկոյ։

Թուրքերը՝ օգտուելով հրդեհի պատճառած շփոթութիւնից, Ագուլեաց եկեղեցու արևելեան դարպասը այրելով՝ ներս խուժեցին եկեղեցին և դիրք բռնելով զանգակատան գմբէթի տակ՝ մի յամառ կուի ասպարէզ էլ դարձրին եկեղեցու շրջապատը։

Ագուլեաց եկեղեցին գտնւում է երեք փողոցների վրա։ Նրա գլխաւոր մուտքը բացւում է մի նեղ փողոցի մէջ, որը երկու կողմերից դուրս է գալիս երկու մեծ՝ այն է եկեղեցուն համանուն և Փոստի փողոցների վրա։ Այնպէս որ եկեղեցին մտնելու համար կարելի էր գալ այդ երկու փողոցներից՝ սակայն որոնց վրա իշխում էր զանգակատան դիրքը։ Ահա նեղ փողոցի այդ երկու մուտքերի վրա հերոսաբար ընկան մի քանի երիտասարդներ, որոնք նետւում էին այդ բաց տեղերը եկեղեցին մտնելու համար, մինչև որ նրանցից մէկը կարողացաւ մի ոումբ ձեռքին մտնել եկեղեցու բակը, մօտենալ եկեղեցու հարաւային դռանը և ներս շպրտել ռումբը, որի պայթոցը սարսափ տարածեց թուրքերի վրա, որոնք փախան շանթահարուածի պէս՝ մի քանի զոհերով և վիրաւորներով։ Ռումբը իր կտորներով քերծեց նաև եկեղեցու սիւներն ու պատերը, որոնց հետքերը մինչև այժմ էլ մնում են։

Այդպիսի մի յամառ կուիւ էլ այդ օրը տեղի ունեցաւ քաղաքային այգուց դէպի հարաւարևելք թուրքերի մի ուժեղ դիրքի—Գեօհաւար աղայի տան շուրջը, որտեղից արձակւող գնդակները լուրջ կերպով նեղում էին հայերին։

Միաժամանակ այս բոլորին քաղաքի մի քանի մասերում տեղի ունէր կողոպուտ, իսկ հին հանգստարանի թաղում

մի նոր ձգված հրդեհից այրում էին մի շարք տներ։

Այդ օրերի ընթացքում ընկած հայերից մէկն էր Մարգար Ժամհարեանը—մի համակրելի երիտասարդ։

Օգոստոսի 20-ին փոխ-նահանգապետի առաջարկութեամբ հաշտութեան նոր փորձ եղաւ, սակայն թափորի վրա թուրքերը գնդակ արձակեցին. այդ դէպքը նոր ու յամառ հրացանաձգութեան առիթ դարձաւ. թուրքերը փորձեցին մի օրհասական յարձակում գործել հայերի վրա. սկսւեց մի չը տեսնուած հրացանաձգութիւն։ Ասում են, փոխ-նահանգապետը թուրքերի թաղից գրեց գաւառապետին, որ ինքն այլևս ձեռնթափ է լինում քաղաքը պաշտպանելուց և յայտնել հայերին—թէ ինչ միջոց որ ունեն թող գործ դնեն իրենց պաշտպանութեան համար։ Այս կուեցնելու ամենալաւ միջոցն էր և կառավարութեան ընդունուած տակտիկան։ Հայերը մի վայրկեան յուսահատութեան մէջ ընկան, բայց գտան և ելքը։

Պետական հիւանդանոցի մօտ ընկած հնագարեան թնդանօթներից մէկը մի կերպ քաշ տուին մինչև Բաղոնց Զորերը. մեծաքանակ վառօդն ու հազար ու մի երկաթի կտորները մի այնպիսի աղմուկ ու ծուխ բարձրացրին միաժամանակ հայերի բոլոր դիրքերից որոտացող համազարկերի հետ, որ սարսափը ընդհանուր դարձաւ հանդերձ զոհերով։

Վկայում, հաստատում են, որ դրանից յետոյ անմիջապէս թուրքերը սպիտակ դրօշակ բարձրացրին և հաշութիւն խնդրեցին, որը և տեղի ունեցաւ նոյն օրը։

Հաշտութիւնը կայացաւ, բայց կայացաւ ամբողջ վեց օրւայ անընդհատ կատաղի ընդհարումներից, բազմաթիւ անմեղ զոհերից, հարիւրաւոր տների ու խանութների աւերումներից և ահագին թւով ընտանիքների դժբաղդանալուց և փողոց շպրտուելուց յետոյ, որից այն կողմը աւելի սոսկալի աղէտ երևակայել չէր կարելի։

Հարիւրաւոր տների շարքում այրւել էին քաղաքային վարչութեան տունը, հիւանդանոցը, հաշտարար դատարանը, Մարիամեան դպրոցը, եկեղեցապատկան 20 խանութները և թատրոնը։ Մարդկային զոհեր հայերը ունեցել էին 100, իսկ թուրքերը՝ կրկնակի եռակի չափով. նիւթական վնաս թուրքերը ունեցել էին 30 հազարի, իսկ հայերը՝ 5 միլիոնից էլ աւելի։

Աղէտը կատարւեց վերջացաւ, բայց պրովակացիան դեռ շարունակւում էր։

Մինչդեռ հայերը դեռ ևս ժամանակ չէին ունեցել հաշի առնել իրենց զոհերը և կորուստները, մինչդեռ շատ հայ դիակներ դեռ անթաղ էին մնացել, իսկ հրդեհված տներից ծուխը շարունակում էր բարձրանալ, լոյս տեսաւ Ռուսաց գործակալութեան հետևեալ հեռագիրը։

«Օգոստոսի 16-ին Շուշում հայերը յանկարծակի յարձակեցին քաղաքի հայկական թաղում ապրող և առևտուր անող մահմեդականների վրա և բոլորին սրի անցկացրին, յետոյ հայերը հրդեհեցին 40 տնից բաղկացած մի ամբողջ թաղ։ Մահմեդականները թւով 100 հոգի մի ազդեցիկ խանի առաջնորդութեամբ անցան հայկական թաղը՝ ազգաբնակութեանը հանգստացնելու։ Բայց հայերը յարձակւելով՝ շատերին վիրաւորեցին, իսկ մնացածներին գերի վերցրին։ Օգնութեան հասնող նահանգապետ Բարանովսկուն հայերը վիրաւորեցին։ Մահմեդականները վիրաւորուած նահանգապետին տարան քաղաք և վրդովւած սկսեցին հայերի յարձակումը յետ մղել։ Այդ ժամանակ շրջակայ գիւղերից օգնութեան հասան մահմեդականներին, որոնց թիւը քաղաքում երկու անգամ քիչ է։ Հայ հոգևորականութիւնը, որը մինչև այդ անգործ էր՝ խնդրեց բռնութիւնները դադարեցնել։ Մահմեդականները իսկոյն ընդհատեցին կրակը, բայց հայերի կողմից շարունակւեց հրացանաձգութիւնը։ Դրանից յետոյ մահմեդականները պաշտպանւելով՝ յարձակում սկսեցին։ Կոտորածը շարունակւում է, քաղաքը հրդեհւած է ամեն կողմից»։

Այդ հեռագիրը Բագուից ուղարկել էին Թոփչիբաշով և Մէլիքով։

Այդպիսի մի հեռագիր մենք տեսանք ուղարկւած նաև Երևանից, որի հեղինակը դարձեալ առաջաւոր մի թուրք էր։

Սակայն այդ հեռագիրը հերքւեց Կովկասի ոստիկանութեան գլխաւորին, օգոստոսի 23-ին Գանձակից ուղարկւած հեռագրի հետևեալ խօսքերով։

«Ռուսաց գործակալութեան հաղորդած տեղեկութիւնները, Շուշու անկարգութիւնների մասին, փոխ-նահանգապետի ասելով, ամենևին համաձայն չեն իրականութեան հետ»։

Այդ բոլորից յետոյ, օգոստոսի 25-ին, մուտք գործեց Շուշի գեներալ Տակայշվիլին, որի ամբողջ պատկերը արտացոլաց նրա երեք գործողութիւնների մէջ։

Առաջինը՝ նա Շուշի մտնելով հայ և թուրք հոգևորականութեան ու ժողովրդի հետ թուրքաց բազարից սկսելով նախ մտաւ մզկիթ, ապա անցնելով քաղաքի այրուածների միջով՝ մտաւ Ղազանչեցոնց եկեղեցին, զօրքերի և երաժշտութեան ուղեկցութեամբ։

Երկրորդ՝ նա վրդովւած լրագրական իբր սուտ հաղորդագրութիւններից, իր խնամքին յանձնւած շրջանների և Շուշու վերաբերմամբ մի ընդարձակ հեռագրով յայտարարեց, որ այդ հաղորդագրութիւնները սուտ են և որ իր շրջանը միանգամայն խաղաղւած է ու հանգիստ։

Եւ երրորդ՝ նա հրամայեց բանդարկել որպէս խռովարարներ երեք հայերի, այն է՝ բժիշկ Աթաբէկեանին, Ռ. Իւզբաշեանին և Յ. Մէլիքեանին։

Դեռ ևս ծխացող աւերակների վրայով երաժշտական քայլերգ կատարել, հրի ու սրի միջից խաղաղութիւն յայտարարել, իսկ բանդ ուղարկել նրանց, որոնք զէնք անգամ ձեռք չէին վերցրել. այսպէս, ահա, սկսեց Տակայշվիլին իր գործունէութիւնը, մինչդեռ սեպտեմբերի սկզբին Աղդամում ճանապարհորդների վերաբերմամբ նոր բռնութիւններ տեղի ունեցան։

Շուշու առաջին ընդհարման ժամանակ այրուեցին աւելի քան 370 մեծ ու փոքր շինութիւններ հանդերձ տնային կահ-կարասիներով և ոչնչացան 200 խանութներ՝ իրենց միջի ապրանքներով։ Ընդհանուր վնասը հասնում էր 5—6 միլիոն գումարի։

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ՇՈՒՇՈՒՄ

12—22 ՅՈՒԼԻՍԻ 1906 Թ.

Մի նոր ընդհարում նման աղէտներով լի պահուած էր Շուշու համար մի երկրորդ անգամ, սակայն առաջին ընդհարումից մինչև երկրորդը շատ բաներ անցան ու դարձան Շուշու գլխով, որոնցից արժէր մի քանի դէպքեր արձանագրել։

Ճիշտ է, օգոստոսի 22-ին, ամբողջ վեց օրւայ արիւնահեղ ընդհարումներից յետոյ, տեղի ունեցաւ հաշտութիւն և մասնայական դէպքերն այլևս չէին կրկնւում, բայց անգիտակից մասսաների մէջ թշնամութիւնը շարունակւում էր այլ ձևերով։

Շուշին կապւած է երկաթուղու Եալախ կայարանի և արդիւնաբերական կենտրոնների հետ Շուշի-Եալախեան խճուղու միջոցով, որը անցնում է Ակէրանի կիրճով և ձգւում թուրքերով բնակեցրած Աղդամի և Ջիւանշիրի տափարակների ամբողջ երկարութեամբ։

Շուշին իր մթերքները, նոյն իսկ հացի պաշարի մեծ մասը, ստանում է գծի վրա երթևեկող ֆուրգոններով, որոնց մեծ մասը պատկանում է Մալիբէկլու թուրք գիւղացիներին։

Մի այլ խճուղիով Շուշին կապւած է Գօրիսի և Զանգեզուրի հետ, որտեղից կարելի էր նեղն ընկած ժամանակ ամենաանհրաժեշտ մթերքներ բերել։ Սակայն այդ ճանապարհն էլ մեծ մասամբ ձգւած է թուրքերով բնակւած լեռների ու ձորերի միջով։

Ահա, Շուշին պաշարւած վիճակի մէջ դնելու և սովամահ անելու համար բաւական էր փակել այդ երկու ճանապարհները, ինչպէս և եղաւ։

Դեռ ևս Շուշու առաջին ընդհարումների ժամանակ շուշեցի հայ առևտրականների անունով ուղարկւած մեծ քանակութեամբ ապրանքներ և մթերքներ մալիբէկլուեցի թուրք ֆուրգոնչիները քշեցին իրենց գիւղը, որը գտնւում է Շուշուց տասը վերստ հեռաւորութեամբ խճուղու կողքին։ Բացի այդ, թուրքերը յայտա-

բարեցին բոյկոտ. Թուրք ֆուրգոնչիները հրաժարուեցին այլ ևս հայերի համար մթերքներ տեղափոխել, երթևեկութիւնը ոչ մահմետական բեռնակիրների համար դարձաւ վտանգաւոր և ահա սեպտեմբերի սկզբի 4 5 օրերը մթերքների այնպիսի կարիք առաջացաւ, որ մոռացնել տուեց քաղաքին հասած սոսկալի աղէտը։ Երկու օր ևս և սովից մարդիկ միմեանց կուտէին, եթէ զօրքերի պաշտպանութեան տակ մթերք չը մտնէր քաղաք։

Այդ ժամանակ փակւած էր նաև Գօրիսի ճանապարհը, Թուրք հրոսակախմբերը ասպատակում էին իւրաքանչիւր մի կէտը։

Քաղաքի Թուրք խուժանին, Աղդամի և Զարսլուի հարիւրաւոր ձիաւորների սոսկալի գրոհին և կարկտի պէս Թափող գնդակներին մի անօրինակ յամառութեամբ դիմադրող շուշեցի հայը մթերքի կարիքի առաջ ընկճւեց, զինաթափ եղաւ։ Հայերի այս Թոյլ կողմը վաղուց նկատել էին Թուրքերը։ Աղդամի ճանապարհորդներին գերելը ճանապարհները փակելու առաջին փորձն էր։ Այդ փորձերը տեղի էին ունենում մի արտասովոր յանդգնութեամբ։

Այսպիսի պատերազմ յայտարարեցին Թուրքերը հայերին, երբ զէնքի ուժով չը կարողացան նրանց ընկճել։ Շուտ շուտ փակւում էր Եւլախի գիծը, հայերի համար երթևեկութիւնը կանգ էր առնում և մթերքների տեղափոխութիւնը դադարում։

Ահա, հայերի համար այս ծանր լուծելի խնդիրը եկաւ լուծելու Ասկէրանը, որը Թուրքերի տակտիկային հետևելով ոչ միայն ամեն անգամ փակում էր ճանապարհը նրանց առաջ և կանգնեցնում մթերքների փոխադրութիւնը, այլ և Շուշու ընդհարումների օրերում այնտեղ արշաւող Աղդամի դաշտի հազարաւոր խուժանին յետ մղելով թեթևացնում էր հայերի կռիւը քաղաքում թէ մէկ և թէ միւս դիպւածում, ինչպէս այդ կը տեսնենք նաև իր տեղում։

Այս հակակշիռը այնքան նեղ վիճակի մէջ դրեց Շուշու Թուրքերին, որ նրանք իւրաքանչիւր բանակցութեան ժամանակ ամենից առաջ մէջ էին բերում ըմբոստ Ասկէրանը։

Ռազմական այդպիսի մի կէտ հայերը ունէին նաև դէպի Գօրիս ձգւող խճուղու վրա, այդ Ղարաղշլաղն էր, հայկական աուլների այդ վայրը, որին կը պատահենք նոյնպէս իր տեղում։

Բայց թող չը կարծւի, որ թշնամութիւնը սահմանափակ-

ւում էր միմիայն կուի այս ձևերով, ոչ, անհատական սպանութիւնների դէպքերը կրկնւում էին շարունակ այս և այն տեղում, այն էլ մեծ չափով։ Անհատական սպանութիւններ տեղի ունեցան գլխաւորապէս դէպի Գօրիս ձգւող խճուղու վրա, Թուրք Զարսլու գիւղի սահմաններում և Շուշու արևմտեան—Ղայբալուի—ձորի երկարութեամբ, սկսած Պեխի աղբիւրից մինչև Շուշու սարահարթի Սանգեաո կոչւող սեպաձև ժայռերի տակ, թէև նման դէպքեր կատարւում էին նաև քաղաքի շրջակայքում և նոյն իսկ քաղաքի մէջ, ինչպէս էր ներքին հանգստարանում Բալլուջա գիւղացի մի երիտասարդի և մի Թուրք փափախչու սպանութիւնը։ Զարսլուի ճանապարհին մեզ անյայտ սպանուածների թւում յիշեցին երկու անուններ՝ ուսուցիչ Համբարձում Կոստանեանը և գօրիսեցի վաճառական Պօղոս Պարոնեանը նոյեմբերի 21-ին սպանուեցին Զարսլուի մօտ կառքով Գօրիս գնալիս։

Պակաս չէին և այլ տեսակի յանցագործութիւնները. այս միջոցին քաղաքից դուրս հրդեհուեց Խանդամիրեանի ջրաղացը։

Շուշու համար ամենից ծանր դրութիւն ստեղծուեց դեկտեմբերի վերջերին։ Ընդհանուր երկաթուղիական գործադուլը մի կողմից, Աղդամ-Ասկէրանեան ընդհարումները միւս՝ մթերքների այնպիսի կարիք առաջացրին, որ ժողովուրդը ուղղակի սովի մատնուեց, մանաւանդ Թուրք ժողովուրդը։ Թուրքերի մասում հացի ֆունտը բարձրացաւ մինչև 18 կոպէկի. շատ Թուրքեր ցորենը խաշում և այնպէս ուտում էին. ոչ պակաս նեղութեան մէջ էին նաև հայերը։ Ահա այս նեղ միջոցին, յունվարի սկզբին, հասնում է Օզերովսկին մթերքների տրանսպորտով։

Չը մոռանանք յիշել մի դէպք ևս։ Յունվարի 6-ին Թուրքերը ծրագրեցին մի դաւադիր յարձակում միաժամանակ մի քանի գաւառամասերի, ինչպէս և Շուշու վրա. այդ բանը մեծ իրարանցում ձգեց հայերի մէջ։ Ընդհանուր սարսափ տիրեց ամենքին. սակայն այդ փորձն էլ անյաջող անցաւ, որից յետոյ Թուրքերը հաշտութեան նոր բանակցութիւններ սկսեցին, որի ժամանակ որպէս գլխաւոր կէտ ծառայում էր ճանապարհների խնդիրը։

Այդ տեղի ունէր յունվարի 15-ին։ Հարցը պտտում էր բոյկոտը վերացնելու շուրջը. Թուրքերը պահանջում էին բացել Ասկէրանի անցքը, իսկ հայերը պահանջում էին բացել Աղդամի և Գօրիսի ճանապարհները։

Այս բանակցութիւնները տեղի ունէին գենեբալ Գոլոշչապովի օրով, որը անաչառ մարդու տպաւորութիւն թողեց հայերի վրա։ Անաչառ ու անկեղծ պաշտօնեայ քաղաքական այդպիսի պայմաններում դժուար էր գտնել, բայց և այնպէս հայերը գոհ մնացին նրանից։

Շուշին այդքան զրկանքներ կրելուց յետոյ մի առժամանակ խաղաղուեց. հիւանդի ապաքինման շրջանն էր այդ. սակայն մայիսի հետ նա նորից աղմկուեց. մանր-մունր դէպքերը շաբաթների ընթացքում կուտակուելով՝ յուլիսի մէջ առաջացրին մի նոր արիւնահեղ ընդհարում։

Մայիսը մի սոսկալի ամիս էր Շուշու և նրա շրջակաների համար. սկսուեց մարդասպութեան շրջանը մի չը տեսնուած չափով. օր չէր անցնում, որ այս կամ այն տեղ երկու կողմերից փոփոխակի սպանութիւններ և կենդանի մարդկանց անհետանալու դէպքեր տեղի չունենային։

Միմիայն քաղաքի շուրջը սպանուեցին՝ բախկալ Սարգիսը և իր 12 տարեկան տղան, երկու Ֆարինտակ գիւղացի փայտ կըտրողներ, բուլկի ծախող Մարկոսը, Թևանը և իր 15 տարեկան տղան. որդին սպանուեց չոլում, իսկ հայրը վախից հիւանդացաւ և տուն գալով մեռաւ։ Սպանուեց նաև Ղայբալի գիւղացի մի 15 տարեկան հօտաղ, որի հասակակից ընկերոջը կենդանի գողացան և ընծայեցին Նաջաֆ-Կուլի աղային, սակայն որի տանից ճարպիկ պատանին փախաւ՝ իր հետ տանելով աղայի հրացանը։

Նման սպանութեան դէպքեր կատարւում էին նաև հայերի կողմից. այսպէս Բալլուջայի կամուրջի մօտ հայերի ձեռքով անյայտացան մի անգամից մի քանի թուրք սայլապաններ *)։

Հայերի վերաբերմամբ մի շարք սպանութիւններ տեղի ունեցան նաև Ղարաղշլաղի ճանապարհի վրա, Զարսլուի մօտ, որոնց մի առ մի թուելը անհնարին է։

Սակայն այս բոլորի շարքում ամենից շատ վրդովմունք պատճառեցին Աղդամի դէպքերը։

Մայիսի 14—15-ին Ղարբանդ կայարանի մօտ գերեցին հայ

---

*) Մենք ուրախութեամբ այնպիսի մանրամասնութիւններ, որպիսին տալիս ենք հայերի մասին, կը տայինք նաև թուրքերի վերաբերմամբ, եթէ միայն կարելի լինէր ձեռք բերել նրանց, թէև հնարաւոր եղածները, այնուամենայնիւ, մենք առաջ ենք բերում։

ճանապարհորդների թւով 27 հոգի. դրանց մէջ էր շուշեցի Բախշի Արամեանը, որը ճանապարհորդում էր երեք կանանց և երկու փոքրահասակ երեխաների հետ մի հանրակառքով։ Ահա այս բոլոր գերիները այլևս չը վերադարձան. սրանցից միայն 15-ի մորթուած և այլանդակուած դիակները կարելի եղաւ գտնել, մնացեալները անհետ կորան։

Այս դէպքերի ժամանակ գեներալ Գոլոշչապովը չը կար, նա Թիֆլիս էր վերադարձել։

Դրութիւնը գնալով լարուեց, երթևեկութիւնը նորից դադարեց և ճանապարհները փակուեցին։

Ահա այս ժամանակ հայերը մի կողմից դիմեցին փոխարքային՝ խնդրելով նորից ուղարկել Շուշի գեներալ Գոլոշչապովին, իսկ միւս կողմից լուրջ կերպով ձեռնարկեցին Շուշի-Գանձակեան լեռնային ճանապարհի կառուցմանը՝ աշնանից արդէն սկսուած երթևեկութիւնը կանոնաւորելու համար։

Մայիսի վերջին Գոլոշչապովը եկաւ, բայց դրութիւնը դարձեալ չը փոխուեց։ Անհատական սպանութիւնները շարունակուեցին առաջուայ կարգով. ճանապարհները մնացին փակ. Գոլոշչապովի սպառնալիքներն անգամ ապարդիւն անցան։ Շուշում թուրքերի մէջ այլ տրամադրութիւն էր տիրում. նրա արտայայտիչը այս անգամ հանդիսացաւ Նաջաֆ-Կուլի աղան, որը, ասում են, Զանգեզուրի Իլդրիմ և Փաշաբէկ Սուլթանովների հետ գրաւոր բանակցութիւններ էր վարում ինչ որ մի մեծ ծրագիր իրագործելու համար։

Այդ ժամանակ բանդարկուեց Նաջաֆ-Կուլի աղան. այս դէպքը աւելի ևս գրգռեց թուրքերին և յուզմունքները շատացան։

Այսպիսի ծանր երկունքի մէջ ահա ծագեց յուլիսի 12-ի առաւօտը։

Այդ օրը, առաւօտեան ժամը 8-ին, թուրքերի տներին կից Զարգարեանցի պարտիզում քնած տեղը, թուրքերի ձեռքով սպանուեց Սահակ Միրզոյեանը։ Սպանութեան տեղը գնացին դատախազը և ոստիկանութիւնը. այնտեղ շտապեցին նաև շատ հետաքրքիր հայեր։ Ահա, այդ սպանութեան տեղը խմբուած հայերի վրա, պաշտօնեաների գնալուց յետոյ, թուրքերի մասից գնդակ արձակուեց, որը վայրկենապէս արձագանք գտաւ քաղաքի զանազան մասերում։ Սկսուեց հրացանաձգութիւնը երկու կողմերից մի սոսկալի թափով.

սկսուեց նորից արիւնահեղ ընդհարումը երկու դրացի ժողովուրդների մէջ՝ անմիտ և աննպատակ։ Փոխադարձ զոհերով կռիւը շարունակուեց ամբողջ օրը. այս անգամ կուին մասնակցում էր նաև զօրքը և թնդանօթը։ Այս տարօրինակ թող չը թւայ. թուրքերի կրակից սպանուեցին երկու զինուորներ. այդ կատաղեցրեց թէ զօրքին և թէ Գօլօշչապովին. թնդանօթը դարձաւ դէպի թուրքական մասը և որոտաց երկար ու երկար։ Հարիւրաւոր հայեր և թուրքեր եթէ ընկնէին, թնդանօթը չէր խօսի, ինչպէս չէր խօսում և ոչ մի տեղ, իսկ նա խօսեց երբ ընկան երկու զինուորներ. ահա խնդիրը։ Եւ այս հանգամանքը անկարող լինելով ըմբռնել՝ թուրքերը Գօլօշչապովին սկսեցին մեղադրել այն բանում, որ իբր նա հայերի հետ միացած ոմբակոծում, կոտորում էր իրենց անխնայ։

Այս անգամւայ կռիւը աւելի կատաղի էր և յամառ քան առաջինը։ Թուրքերը մինչև անգամ վստահութիւն ունեցան գնդակներ տեղալ Գօլօշչապովի տան վրա, որտեղից նա ստիպւած էր տեղափոխուել հայերի մասում գտնուող հիւրանոցը։

Թուրքերը հինգ յայտնի դիրքեր ունէին, դրանք էին. Խանին-Աղջկայ, Գոհվար-Աղայի, Աղա-Իրզի, Դիքտան-Ղուռուի և Հաջի-Վալիևի տները։ Դրանցից առաջինը գործում էր Ղումլուղի թաղի դէմ, երկրորդը՝ հին հանգստարանի, իսկ մնացեալ երեքը՝ հայոց թաղի կենտրոնական մասերում։

Առաջին օրը հայերը կարողացան այնքան նեղել Աղա-Իրզի դիրքում եղողներին, որ նրանք ստիպւած էին իրենց ձեռքով հրդեհել դիրքը և հեռանալ, մանաւանդ բռնկւած հրդեհը ոչնչացնում էր Ղումլուղի թաղից ցած գտնուող հայերի և թուրքերի տները՝ սպառնալով նաև այդ դիրքին։

Յուլիսի 13-ին հրացանաձգութիւնը շարունակուեց նոյն թափով, սակայն այս անգամ առանց զօրքի և թնդանօթի մասնակցութեան և ինչ կարիք կար նրանց միջամտութեան, քանի որ առանց այն էլ արիւնը հոսում էր և աւերը շարունակւում։

Կռիւը արձագանք էր գտել նաև քաղաքից դուրս, նրա շրջակայքում։ Բազմաթիւ թուրքեր, եկած գլխաւորապէս Զարսլուից և Խալֆալուից, ճիգ էին թափում քաղաք խուժել, իսկ Քարինտակ և Ղայբալի գիւղերի հայերը դիմադրում էին նրանց. այդպիսով շրջակայ ձորերն ու լեռները նոյնպէս թնդում էին համազարկերի ձայնից։

Կռիվների հետ միասին շարունակվում էր նաև հրդեհը. այժմ էլ այրվում էին հին բաղնիսը, Ջաֆար-բէկի տունը, Խանին-Աղջկայ աղբիւրի մօտ։

Բացի այդ, քաղաքի մէջ մի քանի տեղերում կտրուած էր հեռագրաթելը, որը կապելու հնարաւորութիւն չէր լինում. կտրուած էր նաև քաղաքի խմելու ջուրը։

Գօլօշչապովը այդ օրը փորձ արեց հաշտութիւն կայացնել, բայց այդ անկարելի եղաւ և հրացանաձգութիւնը շարունակւեց մինչև գիշեր։

Պէտք ասած, որ այս անգամ էլ Շուշու հայերին Ասկէրանի ցոյց տուած ծառայութիւնը շատ մեծ էր. նա քաջութեամբ կանգնեցրել էր այն խուժումը, որը քաղաքի ընդհարումների առաջին օրւանից սկսւել էր Աղդամի դաշտից դէպի Ասկէրանի կիրճը Շուշի գնալու համար։

Կռիւը շարունակւեց նաև գիշերը, բայց կենտրոնացած գլխաւորապէս Դաբաղների ձորի շուրջը։ Այդ ձորը ընկած է Ղումլուղի թաղի տակ, որտեղ ապրում են և հայեր և թուրքեր. ահա այդ խառնուածքներում տեղի ունեցաւ մի յամառ կռիւ, որի ժամանակ հայերը ունեցան 7—8 զոհեր։

Յուլիսի 14-ին, ցերեկը, մի փոքր խաղաղ անցաւ, որ և քաղաքային խորհրդարանի դահլիճում հաշտութեան մի նոր անպտուղ բանակցութիւն տեղի ունեցաւ. գիշերը նորից հրացանաձգութիւնը վերսկսւեց։ Դիքտան-Ղուռնի դիրքի շուրջը հայերը հրդեհեցին մի քանի տներ, փորձ անելով գրաւել այդ դիրքը, բայց անձրևը խանգարեց նրանց։ Կռիւը տաք բնաւորութիւն ստացաւ նաև Գոհվար-Աղայի դիրքի ու հասարակաց տների շուրջը, Աղաբէկանց ձորում և Ագուլեաց եկեղեցու մօտ։ Զոփուռանց տան շրջակայքում հրդեհւեցին թուրքերի տները։ Հրդեհումները կատարւում էին թէ հայերի և թէ թուրքերի կողմից։ Թուրքերը իրենք հրդեհում էին իրենց տները, երբ հայերից նեղւելով ստիպւած էին լինում թողնել ու հեռանալ՝ չուզելով հնարաւորութիւն տալ հայերին դիրք գրաւել այդ տների մէջ։

Յուլիսի 15-ին հրացանաձգութիւնը դարձեալ շարունակւեց։ Այդ օրը վերջապէս Դիքտան-Ղուռուն ընկաւ. այդ յամառ ու դիմացկուն, հայերին նեղող դիրքը, հայերը գրաւեցին մի անօրինակ գրոհից յետոյ։ Այս դիրքը թողնելուց յետոյ թուրքերը սպիտակ

դրօշակ բարձրացրին. սկսեց բանակցութիւն, բայց գարձեալ անպտուղ. Թուրքերը չը համաձայնեցին կամովին քանդել Գոհվար-Աղայի և Հաջի-Վալիևի դիրքերը, որոնք ամեն անգամ իրենց յարմարութեամբ բորբոքում էին կռիւը։

Յուլիսի 16-ին վերջապէս ընկաւ նաև Հաջի-Վալիևի դիրքը, որին հետևեց հրդեհ և մի քանի ժամ տևող կռիւ հայերի գրաւումներով. Թուրքերը խիստ նեղն ընկած՝ ստիպւած էին դատարկել առաջին շարքերի տները։

Ահա, այդ ժամանակ Թուրքերը նորից բարձրացրին սպիտակ դրօշակ և տեղի ունեցաւ ձևական հաշտութիւնը սակաւամարդ թափօրով։

Այս հաշտութիւնից անցաւ հինգօրեայ մի շրջան—կիսախաղաղ զինադադարի, բայց ոչ վստահութեան շրջան։ Այդ հինգ օրւայ ընթացքում կասկածը հայերի մէջ դէպի խաղաղութիւնը ամենևին չը դադարեց։

Յուլիսի 21-ին Աղա-Իրզի տունը նորից լցւեց զինւած Թուրքերով. նախկին օրերի ընդհարման մեծապէս նպաստող այդ դիրքը նորից ամրապնդւեց։ Պատճառ բերելը հեշտ էր. հայերի ձեռքում գտնւելով՝ նա կասկածների մէջ էր ձգում Թուրքերին։ Եւ տունը յետ տրւեց։

Ահա այդ բանից մի փոքր անց, 21-ի երեկոյեան պահուն, Թուրքական մասից լսւեց համազարկերի մի որոտ, որը վայրկենապէս արձագանք գտաւ քաղաքի բոլոր մասերում։ Առաջին արձագանք տւողներից մէկը եղաւ Աղա-Իրզի նոր ամրացրած դիրքը, որի առաջ միանգամից վիրաւորւեցին մի քանի հայեր։

Բոլոր կասկածները իրականացան. դրսից քաղաք էին մտել բաւականաչափ կռւող ուժեր, որից խրախուսւած տեղացի Թուրքերը՝ վերջին փորձն էին անում վրէժխնդիր լինել։

Սկսւեց նոր ընդհարում նորանոր կորուստներով և զոհերով. շարունակւեց նա ամբողջ գիշերը, որի ժամանակ Թուրքերը փորձեցին այրել Ղումլուղի Թաղը՝ հրդեհելով երեք հայերի տներ, իսկ հայերը հրդեհեցին Քօչարլուի Թուրքերի տները։ Հրացանաձգութիւնը շարունակւեց նաև յաջորդ օրը, մինչև որ Աղա-Իրզի դիրքը երկրորդ անգամ գրաւեցին հայերը, որտեղից Թուրքերը փախան կորուստներով՝ Թողնելով հրդեհաձգութեան բաւականաչափ նիւթ—վառօդ, նաւթ, լաթի կտորներ և այլն։

Մի ամբողջ օր ու գիշեր շարունակող ընդհարումներից յետոյ նոր հաշտութիւն և թափօր տեղի ունեցաւ և նոր միայն զոհերի թիւը յայտնի դարձաւ։ Այդ թիւը սոսկալի էր. միմիայն հայերը ունեցել էին 24 սպանուած և 102 վիրաւոր. իսկ թուրքերի կորուստը կրկնակի չափով մեծ էր։ Բացի այդ, հրդեհը ոչնչացրել էր աւելի քան 200 տուն—մեծ մասամբ թուրքերին պատկանող։

Սակայն վրդովեցուցիչը այն էր, որ թուրքերը դեռ չէին ըմբռնում իրականութիւնը և նրանք էլ նման հայերի միամտութիւն ունէին փրկութիւն որոնել բարեկամ պաշտօնեաների մէջ՝ պահանջ անելով Փոխարքայից, որ Գօլօշչապովի փոխարէն ուղարկէր մի այլ պաշտօնեայ, մոռանալով որ նոյն այդ պաշտօնեաների դերը ընդհարումներ առաջ բերելու մէջ էր։

Միամիտ խեղճերը չէին տեսնում, թէ ինչպէս այն միջոցին, երբ զօրքերի մի մասը մի քանի թնդանօթներով հարուածում էր իրենց, զօրքերի մի այլ քանակ, մի սպայի—Չերնեաևի—ղեկավարութեամբ Խանին-Աղջկայ տներից հարուածում էր հայերին։ Մի թէ, յիրաւի, մինչև վերջն էլ նրանք չը կարողացան նկատել այն երկդիմի դիրքը, որը բռնած ունէր թէ զօրքը և թը իւրաքանչիւր պաշտօնեայ։

Ոչ մի աղէտ թերևս այնքան ծանր չը լինէր, որքան այդ կարճատեսութիւնը թուրք մասսայի մէջ, շնորհիւ որի ոչ մի կերպ հնար չէր լինում վերջ դնել կորստաբեր, անմիտ ընդհարումներին։



ՇՈՒՇՈՒ ԳԱՒԱՌ

Շուշու գաւառը ընկած է Նահանգի հարաւարևելեան մասում՝ Ջիւանշիր, Զանգեզուր և Ջիբրայիլ գաւառների մէջտեղում, հիւսիսարևելեան կողմից կազմելով Բագուի Նահանգի սահմանագիծը։

Շուշու գաւառը թէև տարածութեամբ փոքր, բայց ազգաբնակութեան թւով Նահանգի ութը գաւառների մէջ բռնում է երկրորդ տեղը։ Եւ բացի այդ, Շուշու գաւառը միակն է, ուր հայ ժողովուրդը թուրք ժողովրդի համեմատութեամբ մեծ տոկոս կազմելով՝ միևնոյն ժամանակ ամենաբազմահայ գաւառն է ամբողջ Նահանգում։

Գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւը՝ հաշւած նաև քաղաքը, հասնում է 139 հազարի, որից հայերը՝ 74 հազար, թուրքերը՝ 63 հազար և զանազան ազգեր՝ 2 հազար։

Շուշու գաւառը իր աշխարհագրական կազմւածքով ներկայացնում է երկու տարբեր դրութիւններ. գաւառի ամբողջ լայնութեամբ ընկած հարաւարևմտեան մասը լեռնոտ է՝ հարուստ անտառապատ լանջերի և մերկ գագաթների խայտաբղէտ տեսարաններով, իսկ հիւսիսարևելեան մասը իր ընդարձակ մակերևոյթով հարթ, տափարակ տարածութիւն է, տեղ տեղ մշակւած, իսկ տեղ տեղ ամայի անապատ։

Շուշու գաւառում նկատելի է հայ և թուրք ժողովուրդների որոշ շերտաւորումն, որոնցից հայերը տեղաւորւած են լեռնային շրջանի երկու գաւառամասերում սխմւած կերպով, իսկ թուրքերը՝ փոքր բացառութեամբ, ցրւած են տափարակների վրա։ Այս հանգամանքով պիտի բացատրել այն երևոյթը, որ այս շրջանում հայաբնակ շատ գիւղեր ընկած գաւառամասերի կենտրոններում, ազատ են մնացել ընդհարումներից։

Շուշու գաւառի այն մասը, ուր ապրում են հայերը, կազմւած է պատմական Խաչէն և Վարանդա գաւառներից, որոնց սահմանը

կազմում է Կառկառ գետը և Դիզակ գաւառի այն մասից, որը ընկած Իշխան-Զայ գետի հովտում՝ սահմանակից է Վարանդային։

Շուշու գաւառի 242 գիւղերից 94-ը հայաբակ են, բաղկացած՝ 24 Խաչէնի, 58 Վարանդայի և 12 Դիզակի գիւղերից այս կարգով։

ԽԱՉԷՆԻ ԳԻՒՂԵՐ

№ №	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Պաշտօնական թուերը	Մերը
		*)	*)
1	Ղայբալի—20 տունը թուրք .	100	100
2	Կրկժան—40 տունը թուրք .	120	85
3	Խանքէնդ—60 տ. թուրք . .	130	160
4	Փահլուլ .	10	25
5	Խանածախ .	72	70
6	Ջամբլլու .	12	20
7	Բալլուջա .	160	234
8	Դահրաւ (Ղայաբաշի) . .	110	120
9	Մէյթի-Շէն (Մէյթի-Քէնդ) .	56	75
10	Պորեցիք (Բաղարա) .	126	200
11	Խանձք (Սարի-Քէշիշ) .	55	86
12	Դաշբուլաղ .	130	200
13	Ուլուբաբ (Ուրախչ). .	25	20
14	Ռև (Շալվա) . .	50	60
15	Սէյդի-Շէն (Սէյիդ-Բէկլի). .	50	70

*) Գանձակի նահանգի հայաբնակ գիւղերի ծխերի թիւը առաջ ենք բերում Գանձակի նահանգական վարչութեան 1902 թ. պաշտօնական հրատարակութիւնից՝ համաձայն 1897 թ. վիճակագրութեան։

Առանձին սիւնեակում բերում ենք և մեր հաւաքած տեղեկութիւնները մատեղատան հաշուով։

16	Ղշլաղ (Ղշլաղ-Քէնդ) .	120	150
17	Խնձորեստան . . .	110	150
18	Ցիլիս (Ղարաքէնդ) . .	55	50
19	Սարդարաշէն (Ենգիջա) . .	40	70
20	Նորագիւղ (Քէշիշ-Քէնդ)) . .	160	150
21	Ղըլըջ-Բաղ . . .	60	90
22	Քարագլուխ (Դաշբաշի) .	80	90
23	Խանաբաղ . . .	96	120
24	Խրամորթ .	65	50
	ՎԱՐԱՆԴԱՑԻ ԳԻՒՂԵՐ		
1	Քարինտակ (Դաշալթի) .	120	150
2	Հիւնոտ . . .	25	30
3	Արկաթալի . .	40	70
4	Շոշի (Շոշի-Քէնդ) . .	198	450
5	Դաշուշէն (Դաշքէնդ) .	38	60
6	Քառանէ (Կրասնօե) .	55	—
7	Հարաւ (Գօրով) . .	70	—
8	Սղնախ.	55	—
9	Աւետարանոց (Զանախչի) .	220	—
10	Ջրաղացներ (Դամրչիլար). .	70	—
11	Ղարաբուլաղ (Ղուռուբուլաղ) .	70	—
12	Ալամանց-Գոմեր (Մաղաղ-Քէնդ).	56	—
13	Սարգսաշէն	74	—
14	Մօշխմհաթ (Ղուշչի-Բաբա) .	52	—
15	Թաղավարդ-Վեր. (Զարդանաշէն).	107	—
16	Թաղավարդ-Ներք. . .	167	—
17	Շէխեր (Աւշար) . . .	41	—
18	Տրնավարզ (Քէշիշ-Քէնդ). .	174	230
19	Խաչմազ . .	70	—
20	Սզնէք-Վերին. .	50	—
21	Սզնէք-Ներքին .	90	—
22	Սարուշէն .	75	—
23	Մաւաս . .	27	—
24	Սխտորաշէն .	61	—

25	Բլբլաք	11	—
26	Նինգի (Ջամիաթ)	219	300
27	Ղաւախան (Գաւախան)	59	—
28	Մսմնա (Աղբուլաղ)	30	—
29	Խերխան	57	—
30	Ծովատեղ (Ջատեղ)	65	—
31	Հերհեր (Գերգեր)	71	—
32	Մաշադիշէն (Մամադ-Քէնդ)	113	—
33	Քերդ (Ղուզում-Քէնդ)	103	—
34	Քարահունջ	31	—
35	Սոս (Սուզ)	102	—
36	Կաղարծի (Կչարցէ)	158	—
37	Բռաթումբ	—	—
38	Նինգիջան	—	—
39	Հաղորտի (Քէնդխուր)	128	—
40	Մշկապատ	78	—
41	Գիւնէյ-Ճարտար (Ջերդաղ)	245	—
42	Ղուզէ-Ճարտար	121	—
43	Գիշի	113	—
44	Խնուշինակ (Իսպահանջուղ)	89	—
45	Քեաթուկ	50	—
46	Նախիջևանիկ	170	—
47	Փիրջամալ	140	—
48	Վարազաբոյն (Արանզամին)	140	—
49	Միրիշանլու (Աղբուլաղ)	75	—
50	Դահրազ	60	—
51	Միրուշէն (Միրիքէնդ)	115	—
52	Աւդուռ (Տակիռ)	—	—
53	Հացի (Խացի)	64	—
54	Նորաշէն (Ենգիքէնդ)	133	165
55	Աշան (Գիշան)	93	—
56	Եմիշչա	60	—
57	Սպիտակշէն (Աղքէնդ)	62	—
58	Ղըզլղալա (Ղարաքէնդ)	101	

	ԴԻԶԱԿԻ ԳԻՒՂԵՐ		
1	Թաղլար (Տագ) .	420	—
2	Տրախտիկ . .	42	—
3	Տումի (Դումի) . .	107	—
4	Մօխրենիս (Սուսալիս) .	32	—
5	Հակակու . . .	22	—
6	Թաղոտ (Ատաղոտ) . .	61	—
7	Ծակուռի (Ծիկուռի). .	35	—
8	Տող (Տուղ) . . .	265	350
9	Մամաղաձոր . . .	42	—
10	Զրակոյս (Զիրակուզ) .	33	—
11	Ազոխ	143	—
12	Հողեր (Տոգա). .	65	—

Ի նկատի ունենալով Շուշու գաւառում տեղի ունեցած ընդ-հարումները իրենց ծաւալով և աշխարհագրական պայմաններով նրանց կարելի է հետևեալ հինգ շրջանների բաժանել.

1) Կառկառ գետի վերին հովիտ։

2) Խօջալու և Խնձորեստան գետերի հովիտ։

3) Քեօնդալան գետի հովիտ։

4) Քէչզ-Զայ և Խոնաշէն գետերի հովիտ։

5) Ասկէրան և Կառկառ գետի ստորին հովիտ։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՌԿԱՌ ԳԵՏԻ ՎԵՐԻՆ ՀՈՎՏՈՒՄ

1905 Թ. ՕԳՈՍՏՈՍԻՑ—1906 Թ. ՅՈՒՆԻՍ

Կառկառ գետը՝ սկիզբն առնելով Քիրսի և Մախթուքեանի բազմահազար լանջերից, երկու ճիւղերի բաժանւած, քարերին զարկւելով և փշուր փշուր գալով, լանում անցնում է երկու ձորերի մէջ տարածւած Շուշու ժեռուտ հիմքերը և մի փոքր ցած միանում, ապա ուռչում է նորանոր գետակների ջրերով՝ աւելի ուժգին թափով հոսելու դէպի Աղդամի դաշտավայրը։

Կառկառից դէպի հիւսիսարևմուտք ձգւած է մի բաւական ընդարձակ աւազան թէև անհարթ, բայց գեղեցիկ բլուրների մի օղակով պատած։ Այդ աւազանի խորթ ու բորդերի վրա ընկած են Խաչէնի գիւղերը։

Իսկ Կառկառից դէպի հարաւարևելք բարձրանում է անհամար բլուրների մի զանգւած։ Այդ մի ընդարձակ, վիթխարի սարահարթ է, բլուրների և քերծերի մի ծով աջ ու ձախ տարածւած։ Նա և գեղեցիկ է, և մեծ. այնքան գեղեցիկ և այնքան մեծ, որքան և նրա անունը։ Այդ Վարանդան է 58 մեծ և փոքր գիւղերով,*) 4300 ծխերով, հարուստ բուսականութեամբ, հրաշալի կատարներով ու ձորերով, որի նմանը թէ իր մակերևութային կազմութեամբ և թէ գիւղերի վայելուչ արտաքինով չենք կարծում հայկական շրջաններում լինի մի այլ վայր։

Կառկառ գետի վերին հոսանքի և նրա ճիւղերի վրա, քաղաքից սկսած դէպի ձախ ձգւած են Խաչէնի եօթ գիւղերը, այն է՝

---

*) Վարանդայի գիւղերը քաղաքին վայել իրենց շինութիւններով զարմացնում են այցելուին։ Երկու, յաճախ երեք յարկանի, թիթեղեայ տանիքով, մեծ լուսամուտներով և գեղեցիկ պատշգամբներով տներ կարելի է պատահել շատ գիւղերում։ Վարանդայի մի քանի գիւղերը ունեն լաւ այգիներ և պտրաստում են լաւ գինիներ, իսկ ձարտարները յայտնի են ցորենով։

Ղայբալին, Կրկժանը, Խանքէնդը, Փահլուլը, Խանածախը, Ջամբլ-լուն և Բալլուջան, իսկ դէպի աջ ընկած են Վարանդայի եօթ գիւղերը, այն է՝ Քարինտակը, Հիւնոտը, Արկաթալին, Շօշիքէնդը, Դաշուշէնը, Քառանէն և Հարաւը։

Այս գիւղերից երեքում—Ղայբալիում, Կրկժանում, Խանքէնդում հայերի հետ խառն ապրում են Թուրքեր. բացի այդ, զուտ Թուրքաբնակ գիւղեր քաղաքից դէպի հիւսիս ընկած են Մալիբէկլուն—180 տուն և Ղուշչիլարը—40 տուն, իսկ դէպի հարաւ, Շուշու գլխին՝ Զարսլուն—190 տուն և Խալֆալուն—213 տուն։ Վերջին երկուսը անհանգիստ գիւղեր են, որոնց շնորհիւ այդ շրջանը միշտ անպակաս է լինում աւազակային խմբերից։

Կառկառի վերին հովիտը՝ որպէս քաղաքին անմիջապէս կպած մի շրջան, ամեն անգամ աւելի կամ պակաս չափով արձագանք էր տալիս քաղաքում տեղի ունեցող ընդհարումներին։

Դեռ ևս օգոստոս ամսին, երբ առաջին անգամ Շուշում բռնկուեց հայ-Թուրքական ընդհարումը, ոչ պակաս փութկոտութեամբ Զարսլու և Խալֆալու գիւղերի Թուրքերը, միացած քրդերի և Զանգեզուրից այս կողմը անցած Փչանիս, Նորադին, Վաղազին և այլ գիւղերի Թուրքերի հետ, փորձեցին ներս խուժել քաղաք. բայց մի կողմից՝ Քարինտակ, Հիւնոտ, Արկաթալի, իսկ միւս կողմից՝ Ղայբալի և Կրկժան գիւղերը կարողացան այդ խուժումը կանգնեցնել. Թուրքերը տեսնելով այդ արգելքը իրենց դէմ, անընդհատ յարձակումներով մի քանի օր շարունակ աղմկում էին յիշեալ գիւղերը, որոնք ստիպուած էին ամեն անգամ զինուած դիմադրութիւն ցոյց տալ։

Դրսից խուժող Թուրքերին աջակցում էին Ղայբալի, Կրկըժան և Խանքէնդ գիւղերում եղող տեղացի Թուրքերը, որոնք գաղտնի յարաբերութիւնների մէջ լինելով դրսի Թուրքերի հետ և նրանց առաջնորդելով, աւելի ևս վտանգաւոր տարր էին հանդիսանում հայերի համար։

Այսպիսի մի դեր կատարում էր Մալիբէկլուն Աղդամի Թուրքերի համար քաղաքի նկատմամբ։ Նոյնպիսի դեր կատարում էին նաև Բալլուջա գիւղում բուն դրած բէկերը։

Ղայբալի գիւղի վրա մի ուժեղ յարձակում տեղի ունեցաւ օգոստոսի 23-ին, բայց յետ մղուեց։ Դրա հետ միաժամանակ զինուած խմբեր յայտնուեցին նաև Փահլուլ և Բալլուջա գիւղերի սահ-

մաններում, որոնց դէմ դուրս եկան գիւղացիները և ցրեցին նրանց։ Այս դէպքից յետոյ Բալլուջայի բէկերը ստիպուած եղան հեռանալ գիւղից, որ և դատարկ մնացած տները հրդեհեցին։

Ղայբալիի վրա մի մեծ յարձակում թուրքերը գործեցին նաև օգոստոսի վերջերին *) և այնքան մօտեցան գիւղին, որ կարողացան քշել 75 տաւար և հրդեհել 4 գոմ, բայց յետ քշեցին մի քանի զոհերով, որի ժամանակ հայերից սպանուեցին երկու հոգի— Սարգիս Առստամեանը ալիղուլիշէնցի, 28 տար. և Մարգարիտ Տէր-Ղուկասեանը, 30 տարեկան։

Չը նայած այս բոլորին թուրքերը օգոստոսեան դէպքերի ժամանակ յիշեալ գիւղերին լուրջ վնասներ հասցնել չը կարողացան։ Սակայն նրանք չը հրաժարուեցին այն մտքից, որ քաղաք խուժելու համար պէտք էր անպայման քաղաքին կպած այդ գիւղերը մէջտեղից վերացնել։ Ահա այս ծրագիրը իրագործելու համար ըսկսուեցին նոր յարձակումներ այդ գիւղերի դէմ, որոնց աջակցում էին նաև քաղաքի թուրքերը։

Այդ յարձակումներից մէկը տեղի ունեցաւ նոյեմբերի 29-ին միաժամանակ մի շարք գիւղերի վրա։ Ջամբլլուն որպէս փոքր գիւղ, նկատելով յարձակման նշաններ, մի օր առաջ քոչել էր Խանքէնդ։ Այդ գիւղերից դեռ ևս 10 օր առաջ նոյն թուրքերը քշել էին 30 տաւար, սպանելով 15 տարեկան հօտաղին։ Այս անգամ գիւղը դատարկ գտնելով՝ նրանք հրդեհեցին տները և ապա այդտեղից յարձակուեցին Խանածախի վրա։ Խանածախում եղող կալուածատէրը քոչել էր՝ թողնելով գիւղում մի քանի պահապաններ. սրանք ուզեցին դաւադրութիւն կազմել հայերի դէմ, բայց չը կարողացան. կալուածատիրոջ տները հրդեհուեցին և հայերը օգնութիւն ստանալով՝ հալածեցին թուրքերին, որի ժամանակ սպանուեցին Ջումշուդ Ջալաբեանը, 30 տար. և Յովհաննէս Մկրտչեանը, 25 տար.։ Այդ նոյն միջոցին յարձակման ենթարկուեց նաև Բալլուջա գիւղը, որը նոյնպէս կարողացաւ յարձակումը յետ քշել առանց կորուստների։

Աւելի խոշոր ընդհարումներ այս շրջանում տեղի ունեցան դեկտեմբերի մէջ։

---

*) Դանձակի նահանգում ընդհարումները այնքան յաճախակի են կրկնուել, որ նրանց բոլորի մասին ճիշտ ամսաթիւեր և վիճակագրական տեղեկութիւններ ձեռք բերելը անկարելի էր լինում։

Նախ կատարեցին մի շարք անհատական սպանութիւններ, ինչպէս Մալիբէկլուի, այնպէս էլ Զարսլուի ճանապարհին։

Անհատական սպանութիւններ և կողոպուտներ կատարեցին մանաւանդ Մալիբէկլու և Ղուշչիլար գիւղերի սահմաններում։ Բացի այդ, թուրքերի ձեռքով հրդեհուեց Շօշ գիւղի Փարամաքի կոչւող ձմեռանոցը, որը գտնւում էր Քեաթուկի հարաւային կողերի վրա, Ղուշչիլարին մօտիկ։ Այդ բոլորը առաջ բերին ընդհարումներ Մալիբէկլուի, Ղուշչիլարի և հայ գիւղերի մէջ։ Հայերը յարձակուեցին Ղուշչիլարի վրա դեկտեմբերի 2-ին և գիւղը աւերեցին. ժողովուրդը փախաւ Մալիբէկլու։ Հայերը յարձակուեցին նաև Մալիբէկլուի վրա. տեղի ունեցաւ յամառ կռիւ. մի քանի տներ հրդեհուեցին. թուրքերը խիստ նեղն ընկան, բայց կօգնակներ հասան և գիւղը փրկեցին։ Այդ յարձակման ժամանակ հայերը ունեցան 3 սպանուած և 6 վիրաւոր։

Բայց աւելի խոշոր ընդհարում պահուած էր Խանքէնդի համար։

Խանքէնդը մի գեղեցիկ աւան է, զօրքերի բնակութեան տեղի՝ ընկած Շուշուց դէպի հիւսիս 7 վերստ հեռաւորութեան վրա։ Այդ աւանում նախ բնակութիւն հաստատեցին Շուշու տակ ընկած Բաղինշէն և Վառարակն փոքրիկ գիւղերի հայերը, յարմար դատելով թողնել իրենց գիւղերը և տեղափոխել Խանքէնդ։ Ապա ի նկատի ունենալով զօրքերի ներկայութիւնը և նրանց հետ կապուած առևտուրը՝ այստեղ եկան հաստատուեցին Շուշուց և շրջակայ գիւղերից առևտրով և արհեստներով պարապող հայեր և թուրքեր, այնպէս որ Խանքէնդը այժմ մի գեղեցիկ բնակավայր է՝ 100 տուն հայ և 60 տուն թուրք բնակիչներով։

Առևտուրը գլխաւորապէս հայերի ձեռքին է։

Ահա այդ շուկան թուրքերը ուզեցին կողոպտել և հրդեհել։

Դեկտեմբերի 18-ին Մալիբէկլուի և Ղուշչիլարի թուրքերից աւելի քան 50—60 զինուած մարդիկ մտան Խանքէնդ և տեղաւորուեցին «ղայֆախանաներում»։

Դրանց դիտաւորութիւնը միանգամայն յայտնի դանձաւ, երբ խումբ խումբ դուրս եկան և իրենց մատնող հայեացքներով շրջել սկսեցին հայ խանութների շարքերի առաջ։ Մինչ այդ հայերին օգնութեան հասաւ մօտիկ գիւղերից զինուած տղաների մի խումբ։ Այս նկատելով՝ թուրքերը քաշուեցին և ամրացան «ղայֆախանա-

ներում»։ Հէնց այս միջոցին գիւղից մի փոքր հեռու Թուրքերը սպանեցին մի պառաւ հայ կնոջ և նրա 8 տարեկան թոռանը և գիակները անհետացրին։ Այս դէպքը յուզում առաջացրեց հայերի մէջ և կռիւը պայթեց։ Կուելու պատրաստ երկու հակառակ կողմերը սկսեցին գնդակներ տեղալ միմեանց վրա մի սոսկալի թափով, մինչև որ հայերը նոր օգնական ուժեր ստացան և նեղեցին Թուրքերին, որոնք բաւական զոհեր տալով հազիւ կարողացան ապաստան գտնել զօրանոցներում, որից յետոյ սկսեց Թուրքերի խանութների կողոպուտը, մի քանի տների հրդեհումների հետ միաժամանակ։

Այդ ընդհարման ժամանակ, բացի երկու կողմերի բազմաթիւ վիրաւորներից, Թուրքերը ունեցան աւելի քան 30 սպանուածներ, իսկ հայերը՝ 6, դրանք էին. Թևան Հայրապետեանը, Բաբկէն Օհանեանը, Ալէքսան Գրիգորեանը—գօրիսեցի, Մկրտիչ Գրիգորեանը, Ալէքսան Գաբրէլեանը և Ալէքսան Միքայէլեանը։

Այս բոլորը տեղի ունեցաւ մի այնպիսի վայրում, ուր բաւական Թւով զօրքեր կային, որոնք, եթէ ցանկանային, մի ակընթարթում կարող կը լինէին աղէտի առաջն առնել։

Այս դէպքը նոր յուզումներ առաջացրեց։ Խալֆալուից բազմաթիւ Թուրքեր եկան պաշարեցին Ղայբալին։ Նրանց օգնութեան գնացին նաև քաղաքից Թուրքեր. բայց այս անգամ էլ Ղայբալին կարողացաւ յետ տալ յարձակումը և նոյն իսկ հակայարձակ լինելով՝ հասաւ և աւերեց Խալֆալուի հեռու ընկած մի քանի գիւղամասերը։ *)

Այս դէպքերի միջոցին արդէն քոչեցին Ղայբալի և Կրկժան գիւղերի փոքրաթիւ Թուրք բնակիչները։

Սրանից յետոյ մի առ ժամանակ այս շրջանը խաղաղուեց, բայց Շուշու մայիս-յուլիսեան խռովութիւնների հետ նորից աղ-

*) Ինչպէս այս, այնպէս էլ շատ Թուրքական ցեղեր, մանաւանդ Ջիվանշիրի գաւառում, խոյս են տալիս համախմբումներից և նրանք ապրում են բաժան բաժան մի քանի տուն այս, մի քանի տուն այնտեղ, երբեմն 100—200 տուն ժողովուրդը բռնելով 10—15 վերստ տարածութիւն։ Սրանք ապրում են գետնափոր հիւղերում փոքրիկ խմբակներով, որոնք կոչւում են ղշլաղներ (ձմերանոցներ)։ Այսպիսի կեանք վարում են նաև Խաչէնի ձորակի Քեալանի կոչուած ցեղերը, յայտնի իրենց աւազակութիւններով։

մըկուեց. տեղի ունեցան նորից փոխադարձ սպանութիւններ. մի կարճ միջոցում Ղայբալի գիւղը միմիայն 4 զոհ ունեցաւ. երկու զոյգ հայր և որդի—Յարութիւն Յովհաննիսեանը իր 10 տարեկան որդու՝ Յովհաննիսի հետ և Մարտիրոս Սարգսեանը իր 14 տար. որդու՝ Դանիէլի հետ—սպանուեցին անտառում։

Խառը խուռը ընդհարումներ աւելի կամ պակաս զոհերով տեղի ունեցան Շօշ և Քառասնէ գիւղերի շուրջը, որտեղից Թուրքերը քշեցին միանգամից 48 տաւար։ Ղուշչիլարից Մալիբէկլու քոչած Թուրքերը կտրում էին ճանապարհները և սպանում ու գողանում էին կենդանի մարդկանց. նոյնը սկսեցին անել նաև հայերը։

Յունիսի 10-ին Խալֆալուի և Քեօսալարի Թուրքերի կողմից մասսային յարձակման ենթարկուեց Փահլուլը. օգնութեան հասան շրջակայ գիւղերը և յետ մղեցին յարձակումը։ Հայերն ունեցան երկու զոհ։

Յունիսի 3-ին Հիւնոտ և Արկաթալի գիւղերի ութ տղամարդիկ, որոնք բողոքով Նալֆֆ-Կուլի աղայի տունն էին դիմում, անհետացան քաղաքի Թուրքաց Թաղում։ Դրանք էին. Հիւնոտ գիւղացիներ՝ Բաղդասար Աթաբէկեանը, 53 տար., Խոսրով Աստուածատրեանը, 27 տար., Ալէքսան Բէգլարեանը, 28 տար., Հայրապետ Սարուխանեանը, 27 տար. և Առաքել Ներսիսեանը, 32 տարեկան։ Արկաթալի. գիւղացիներ՝ Կուքան Ասրիեանը, 40 տար., նրա եղբայր Մարդին, 26 տար. և որդին—Սանթուրը, 12 տարեկան։

Յունիսի 25-ին Զառսլուի Թուրքերը քշեցին Քարինտակ գիւղի տաւարը՝ սպանելով նախրչուն։

Յուլիսի 12-ին Շուշու ընդհարումների հետ միաժամանակ մասսային յարձակման ենթարկուեց նորից Ղայբալին, որի յամառ դիմադրութիւնը աւելի ևս կատաղեցրեց Թուրքերին, որոնք մի ուժեղ գրոհով, մի օր անց, փորձեցին հիմնայատակ անել գիւղը. բայց թէ այդ և թէ դրան հետևող մի քանի յարձակումները յետ մղեցին կորուստներով, շնորհիւ քաղաքից հասնող օգնութեան։

Զը նայած այս բոլորին և նոյն իսկ քաղաքում կատարուած հաշտութեան, ընդհարումները այս շրջանում երկար ժամանակ դեռ չէին դադարում։

Յուլիսի կէսերին Թուրքերը մի խմբով մտան Շուշիքէնդ գիւղի մօտ գտնուող Շահնազարեանցի այգին, սպանեցին նրա կնոջը՝ Նադեժդային, ծառային և վիրաւորելով երկու ուրիշներին՝ հեռացան։

Այսպէս էր, ահա, դրամայի կրկնողութեան անվերջ շարքը։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԽՕՋԱԼՈՒ ԵՒ ԽՆՁՈՐԵՍՏԱՆ ԳԵՏԵՐԻ ՀՈՎՏՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻՑ—ՆՈՅԵՄԲԵՐ 1905 Թ.

Կառկառ գետը ձախ կողմից ընդունում է իր մէջ Խաչէնի երկու փոքրիկ գետակներ՝ Խօջալու և Խնձորեստան անուններով։

Այդ երկու գետակների հովիտներում ընկած են Խաչէնի 13 գիւղերը, այն է՝ Դահրաւը, Մէյթի-Շէնը, Պտրեցիքը, Խանձքը, Դաշբուլաղը, Ուլուբաբը, Ռևը, Սէյիդի-Շէնը, Ղշլաղը, Խնձորեստանը, Ցիլիսը, Սարդարաշէնը և Նորագիւղը։

Շնորհիւ այն հանգամանքի, որ այս շրջանը գտնւում է Խաչէնի կենտրոնական մասում և անխառն է Թուրքերով, այդ պատճառով այստեղ լուրջ ընդհարումներ տեղի չունեցան։ Ուշադրութեան արժանի մի երկու դէպք միայն կատարուեցին, որ և առաջ կը բերենք համառօտակի։

Այս շրջանում Թուրքեր համարեա թէ չը կան. միակ գիւղը Խօջալուն է, ուր ապրում էին նաև մի քանի բէկեր, ինչպէս և Պտրեցիք գիւղում ապրում էր կալւածատէր Թուրք բէկը։ Սակայն այն հանգամանքը, որ տարիներ շարունակ այդ բէկերը ոչ մի առիթ բաց չէին Թողել կեղեքելու և ճնշելու հայերին, իսկ այժմ հանդիսանում էին վտանգաւոր տարր՝ մեծ կապեր ունենալով Աղդամի դաշտի Թուրքերի հետ, ուստի, հէնց որ Շուշում բռնկւեց ընդհարումը և յարաբերութիւնները բոլոր տեղերում լարուեցին, յիշեալ բէկերը Թողին իրենց տները և տեղափոխուեցին Աղդամի կողմերը։ Հայերը առանց երկար ու բարակ մտածելու օգոստոսի 23-ին Խօջալուի տները հրդեհեցին, որպէս զի բէկերը այլևս հնարաւորութիւն չունենային այդտեղ վերադառնալու։ Այդ նոյն վիճակին ենթարկւեց նաև Պտրեցիք գիւղի կալւածատիրոջ տունը, ուր սպանուեցին Թուրք պահապանները։

Ի հարկէ բէկերը հեռանալով հանգիստ չը մնացին, նրանք յայտնի դեր էին խաղում ընդհարումների մէջ։

Հոկտեմբերի սկզբին Խաչէնի ձորակի Քեօլանի ցեղերը յարձակուեցին Ուլուբաբ փոքրիկ հայ գիւղի վրա՝ հրդեհելու և աւերելու նպատակով. ժողովուրդը կարողացաւ փախչել Սէյիդի-Շէն. շրջակայ հայ գիւղերից հասան զինուած մարդիկ և կարողացան գիւղը կիսով չափ փրկել հրդեհումից։

Այս միջոցին Խաչէնի ձորում տեղի ունէին խոշոր ընդհարումներ Թուրք Սրխաւէնդ և հայ Ղազանչի գիւղերի շուրջը և որովհետև Ուլուբաբը ընկած էր ընդհարումների սահմանի վրա, այդ պատճառով ժողովուրդը ստիպուած էր երկար ժամանակ գիւղ չը վերադառնալ։ Բացի այդ, Խաչէնի ձորակի Սրխաւէնդի և Շխաւէնդի Քեօլանիները հրոսակախմբեր կազմած երկար ժամանակ աղմկում էին Ջիւանշիրի և Շուշու այդ սահմանագիծը իր շրջականներով, թէև նրանք լուրջ դիմադրութեան էին հանդիպում ամեն անգամ, երբ փորձում էին մօտենալ հայ գիւղերին։

Խաչէնի այս մասը ազատ լինելով լուրջ յարձակումներից, հնարաւորութիւն ունեցաւ ուժեր տալ Ասկէրանի մուտքը պաշտպանելու համար և իսկապէս Ասկէրանի ընդհարումների մէջ խաչէնցիները մեծ դեր կատարեցին, ինչպէս և վարանդացիները, ինչպէս այդ մենք կը տեսնենք մի փոքր յետոյ աւելի մանրամասնօրէն։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՔԵՕՆԴԱԼԱՆ ԳԵՏԻ ՀՈՎՏՈՒՄ

ՅՈՒՆՎԱՐԻՑ—ՕԳՈՍՏՈՍ 1906 Թ.

Սիրուն Վարանդայի գետերի և գետակների շարքում աչքի է ընկնում Քեօնդալանը իր բազմաթիւ մանր մունր ճիւղերով, փըռուած գաւառամասի հարաւային ծայրի ձորերի և հովիտների մէջ՝ հոսելով դէպի արևելք։

Ահա, այդ բազմաճիւղ Քեօնդալանի հովիտների վրա ձգուած են Վարանդայի 18 գիւղերը, այն է՝ ձախ կողմից—Տրնավարզը, Խաչմազը, Վերին և Ներքին Սգնէքները, Սարուշէնը, Մաւասը, Սխտորաշէնը, Բլբլաքը։ Աջ կողմից՝ Սղնախը, Աւետարանոցը,*) Ալամանց-Գոմերը, Ջրաղացները, Ղարաբուլաղը, Սարգսաշէնը, Մօշխըմհաթը, Վերին-Թաղավարդը, Ներքին-Թաղավարդը և Շէխերը։

Քեօնդալան գետից դէպի հարաւ, Քիրսի ստորոտներից սկիզբն առնող Իշխան-Ջայ գետի և նրա աջ ու ձախ ափերում ձգուող հովիտների վրա ընկած են Դիզակի 12 գիւղերը, այն է՝ Թաղլարը, Տրախտիկը, Տումին, Մօխրենիսը, Հակակուն, Թաղոդը, Ծակուռին, Տողը, Մամադաձորը, Ջրակոյսը, Ազոխը և Հողերը։

Ահա, այս երկու գիւղախմբերի շրջանում գոյութիւն ունի թուրք գիւղերի շարքում նաև Ղաջարը—մօտ 300 տուն ունեցող այդ մեծ գիւղը—ընկած Քեօնդալան գետի վրա, Բլբլաք և Շէխեր գիւղերից փոքր ինչ ցած՝ ներկայացնելով իրենից աւազակների մի որջ, որը սարսափի տակ էր պահում շրջակայքը։ Տարիներ, տասնեակ տարիներ անընդհատ նա արտադրում էր յայտնի գողեր,

---

*) Աւետարանոցը կամ Ջանախչին այն գիւղն է, ուր ապրում էին Վարանդայի նախկին տէրերը՝ Մէլիք Շահնազարեանները և ուր մինչև այժմ էլ ապրում են նրանց ժառանգները։

աւազակներ, որոնք կտրում էին ճանապարհներ, կողոպտում և յաճախ սպանում անցորդներին, մտնում գիւղերը, ծակում գոմերի, տների պատերը, տանում տաւարներ, ոչխարներ և այլ իրեր։ Եւ այսպէս շարունակ ու անվերջ... Եւ ով կը համարձակուէր նրանց դէմ դուրս գալ. գէնքը նրանց ձեռքին, սարերն ու ձորերը նրանց իշխանութեան տակ։ Նրանք մի մի աւազակներ էին։

Եւ ահա աւազակութիւնների մէջ հռչակ ստացած Ղաջարին ներկայանում է մի յարմար առիթ, երևան հանելու իր բոլոր ընդունակութիւնները։ Բռնկւում է հայ-թուրքական ընդհարումը։

Ոչ հայ գիւղերի համախմբումը և ոչ էլ նրանց բաւականաչափ թիւը չեն սանձահարում Ղաջարին և նա զէնք առած բաց աշկարա նետւում է կողոպուտների աշխարհը։

Ամարասի վանքի և նրա շրջակայքի կողոպուտների մեծ բաժինը հասաւ Ղաջարի թուրքերին. այդ նոյն ղաջարցիները գնացին դուրս եկան նոյն իսկ Զանգեզուր, մասն ու բաժին ունեցան Մինքէնդի կոտորածների և կողոպուտի մէջ։ Բնականաբար ազատ չը պիտի մնային նրանց յարձակումներից նաև շրջակայ հայ գիւղերը։ Ղաջարին աւելի մօտ ընկած հայերը սկսեցին ուժ տալ ինքնապաշտպանութեան գործին. հայ գիւղացին մաճի տեղ զէնք վերցրեց. այդպէս թելադրում էր դրութիւնը։ Ղաջարցին նկատեց այդ և փոխեց գիւղերի վրա յարձակելու իր մտադրութիւնը և սկսեցին մի շարք աւազակային գործողութիւններ։ Մի կարճ միջոցում քշեցին նրանք Թաղլարի բինաներից 17 տաւար, Ներքին-Թաղավարդի գոմերից՝ 43 տաւար, Սխտորաշէնի գոմերից՝ այնտեղ եղած նախիրը։

Նմանօրինակ աւազակութիւնների հետ միաժամանակ տեղի էին ունենում նաև սպանութիւններ, որոնցից շատ քիչ դէպքեր միայն մեզ յայտնի են։

Այսպէս, սարգսաշէնցի երկու գիւղացիներ սպանուեցին Ղաջարի սահմաններում։ Վերին Թաղավարդի երկու գիւղացիներ բարբարոսաբար սպանուեցին սարի գոմերում։ Ներքին-Թաղավարդցիներ՝ Բալասան Շահրիմանեանը, Սուլէյման և Գրիգոր Ալլահվերդեանները Ղարաբուլաղ գնալիս անհետացան, դարձեալ Ղաջարի սահմաններում։

Սակայն Ղաջարը այսքանով չէր բաւականանում։ Դեկտեմբերի վերջերին և յունվարի սկզբներին Շուշում և Աղդամի ու

Ասկէրանի շրջանում տեղի ունեցած յուզմունքների ազդեցութեան տակ նա ևս եռանդի եկաւ։ Անհանգիստ գիւղը անսովոր իրարանցման մէջ էր. նա պատրաստւեց յարձակւել հարևան հայ գիւղերի վրա։

Տրախտիկը մի փոքրիկ գիւղ է, Ղաջարին բաւական մօտիկ, Դիզակի գիւղախմբի առաջին շարքում ընկած։ Ղաջարում տեղի ունեցող կասկածաւոր շարժումները ստիպեցին Տրախտիկին դիմել հարևան հայ գիւղերի օգնութեանը։

Եւ ահա, նախապէս պատրաստւած այդ միջոցին—յունվարի 9-ի առաւօտեան—Ղաջարցիները յարձակւեցին Տրախտիկի վրա։ Թուրքերի համար միանգամայն անսպասելի էր փոքրիկ գիւղի դիրքերից բացւող միահամուռ կրակը. առաջ գնալն անմտութիւն կը լինէր. Թուրքերը յետ փախան. հրացանաձգութեան ձայնը ոտի հանեց շրջակայ հայ գիւղերին. Տրախտիկի դիրքերից դուրս գալով՝ հայերը Թուրքերին հետապնդեցին մինչև Ղաջար։ Նրանց օգնութեան հասան բազմաթիւ հայեր չորս կողմից և Ղաջարը մնաց սոսկալի կրակի մէջ։ Մի քանի ժամ տևող կրակից յետոյ Թուրքերը փախան կորուստներով և գիւղը մատնւեց հրդեհի և կողոպուտի։ Երբ զօրքը հասաւ՝ գիւղի մեծ մասն արդէն աւերւել էր։

Ղաջարի ընդհարման մէջ Թուրքերը ունեցել էին բաւական Թւով զոհեր. բաւականաչափ զոհեր ունեցան նաև հայերը. զանազան գիւղերից սպանւեցին 9 հոգի. դրանք էին. սօսեցի Գրիգոր Մանուէլեանը, մաշադիշէնցի Բախշին և Անդրին, Խաչմազցի Մարտինը, Աւետարանոց գիւղացի Ալէքսանը, քարահունջեցի Բաղդադը, ճարտարեցի Բախշօ Վարդապետեանը և մի մի հոգի էլ Ազոխ և Ղրբուլաղ գիւղերից։

Սակայն Ղաջարը դրանով չը զսպւեց. այդ միևնոյն օրը Երեկոյեան ղաջարցիների զինւած մի խումբ յարձակւեց Շէխերի և Ազոխի գոմերը հրդեհեց. ապա յարձակւեց բուն Շէխերի վրա, հրդեհելով մի քանի մարագներ և քշելով 30-ի չափ տաւար. կանայք և երեխաներ դուրս փախան գիւղից վայնասունով, իսկ տղամարդիկ մնալով՝ հազիւ կարողացան յարձակումը յետ մղել։

Անցաւ մի առ ժամանակ, Թեթև խաղաղութիւն տիրեց։ Վերադարձան նորից ղաջարցիները գիւղ, մի կերպ շինեցին տները և մէջը քաշւեցին, բայց շուտով նորից սկսեցին աւազակային գործողութիւնները. իսկ օգոստոս ամսին (1906 թ.) լուրջ գործերի ձեռնարկեցին։

Օգոստոսի 14-ին նրանք մեծ ուժով յարձակուեցին Տրախտիկի վրա, քշեցին գիւղի նախիրը՝ 130 գլուխ տաւարից բաղկացած, վիրաւորեցին երկու մարդ, թէև իրենք էլ զոհեր ունեցան։

Այդ նոյն միջոցին մի մեծ յարձակում էլ գործեցին Շէխերի վրա։ Գիշերային պաշարումը այնքան անսպասելի էր, որ ժողովուրդը շփոթուած հազիւ կարողացաւ ծմակները փախչել։ Թուրքերը կողոպտեցին գիւղի մի մասը, հրդեհեցին 8 տուն, քշեցին 150-ի չափ տաւար, մինչև որ շէխերցիք օգնութիւն ստանալով՝ գիւղը կը դառնային։ Այդտեղից Թուրքերը յետ քաշուելով՝ հրդեհեցին Ազոխի գոմերը։

Շէխեր գիւղում սպանուեցին երկու մարդ—Ղահրաման բէկ Աւշարեանը և իր եղբօր կինը։

Երկու օր անց, դարձեալ գիշերով, ղաջարցիները յարձակում գործեցին Բլբլաք գիւղի վրա, ուր հրդեհեցին մի տուն, քշեցին 30-ի չափ տաւար և յետ փախան՝ տեղի տալով շրջակայ գիւղերից հասած օգնութեան։ Բլբլաքում վիրաւորուեցին երկու մարդ։

Եւ այս բոլորը կատարւում էր շատ սովորական կարգով և նոյն իսկ դիւրին կերպով։ Աւազակաբարոյ Ղաջարը գոյութիւն ունէր և նա մի քայլ ևս առաջ էր գնացել իր ընդունակութիւնների մէջ։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՔԷՉԶ-ՉԱՅ ԵՒ ԽՈՆԱՉԷՆ ԳԵՏԵՐԻ ՀՈՎԻՏՆԵՐՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻՑ—ՅՈՒՆՎԱՐ 1906 Թ.

Վարանդայի կենտրոնական մասում, բլուրների կուտակումների վրա, բարձրանում է 5000-ից աւելի ոտնաչափ բարձրութիւն ունեցող մի գագաթ. այդ Բոզր-Խաննէ, ամենաբարձրը Վարանդայի բոլոր գագաթների մէջ։

Բոզր-Խանի արևելեան ստորոտներից սկիզբն են առնում երկու ոչ մեծ գետեր—Քէչզ-Չայը և Խոնաշէնը։ Ահա, այդ երկու գետերի հովիտներում ընկած են Վարանդայի 19-ը գիւղերը, այն է՝ Նինգին, Ղաւախանը, Մսմնան, Խերխանը, Ծովատեղը, Հերհերը, Մաշադիշէնը, Քերդը, Քարահունջը, Սօսը, Կաղարծին, Բռաթումբը, Նինգիջանը, Հաղորտին, Մշկապատը, Գիւնէյ-Ճարտարը, Ղուզէ-Ճարտարը, Գիշին և Խնուշինակը։

Այս շրջանում Սօս գիւղից փոքր ինչ հեռու, Խազազ կոչւող բլուրի վրա, ընկած է Ամարասի վանքը իր 150 դեսեատին վարելահողերով, այգիներով և թթենիներով։

Ամարասի մօտ գոյութիւն ունէր 10—15 ընտանիքներից բաղկացած փոքրիկ բնակչութիւն։ Բացի այդ, Ամարասի մօտերքում շրջակայ հայ գիւղերը ունէին վարելահողեր, հարիւրաւոր գոմեր՝ կենդանիներով, խոտի և դարմանի մեծաքանակ պաշարներով։

Այս շրջանում, դէպի դաշտային ստորոտները, Կաղարծիի, Ճարտարների, Սօսի ու Ամարասի սահմանների վրա, ընկած են մի շարք, ինչպէս են. Ղարադաղլու, Վարանդալու, Վէյսանլու, Հաջիւզ, Աղբաշլու, Դիւանալլար և այլ թուրք գիւղեր. իսկ դէպի հարաւարևելք սկսւում է զուտ թուրքական բնակչութիւն մինչև Արաքսի ափերը, աւելի քան 50 վերստ տարածութեամբ, որից այն կողմը արդէն Պարսից հողն է, իր աւելի ևս կիսակիրթ ցե-

ղերով, որոնք անվերջ հաղորդակցութեան մէջ են այս կողմի մահմեդական տարրերի հետ գաղտնի անցքերի շնորհիւ։

Ահա այն գլխաւոր հանգամանքը, որը հայ-թուրքական ընդհարումների ամբողջ ընթացքում սարսափի տակ էր պահում ինչպէս ամբողջ Վարանդան, այնպէս էլ Դիզակը և որի շնորհիւ այս շրջանում տեղի էին ունենում պարբերական յարձակումներ, թէև հայ գիւղերը իրենց անառիկ դիրքերի շնորհիւ խոշոր մնասներ չէին կրում։

Այս շրջանում տեղի ունեցած մանր-մունր դէպքերին հաշիւ չը կայ, հաշիւ չը կայ նաև մասսային յարձակումներին՝ կատարուած այս և այն գիւղի, այս և այն ձմերանոցի վրա. սակայն մենք դրանց չենք թի, այլ կանգ կառնենք ընդհարումների այն երեք շրջանների վրա, որի ժամանակ տեղի ունեցան խոշոր աւերումներ։

Երբ օգոստոսի 16-ին Շուշում տեղի ունեցած ընդհարման լուրը տարածուեց ամբողջ շրջանում, թուրքերը, որոնք դեռ ևս Խաչէնի Ձորակի և Աղդամի դէպքերի ազդեցութեան տակ մի ինչ որ խորհրդաւոր շարժման մէջ էին, թև ու թիկունք առան։ Թուրք գիւղերի մէջ սկսուեց մարդկանց մի չը տեսնուած երթևեկութիւն։

Նրանց այս շարժումները ակներև դարձրին մի վտանգաւոր ձեռնարկութիւն։ Ամարասի մօտ եղող փոքրաթիւ հայերը, նկատելով գալիք փորձութիւնները, բարւոք համարեցին քոչել այդ տեղից։ Եւ մինչդեռ նրանք իրենց ընտանիքները տեղափոխելով Սօս գիւղը՝ զբաղուած էին տնային իրերի փոխադրութեամբ, օգոստոսի 18-ի առաւօտեան ժամը 11-ին վանքը պաշարուեց թուրքերով։ Շրջակայ գիւղերի թուրք ամբոխի գլուխ անցել էր անցեալ գլխից մեզ յայտնի Ղաջարը։ Միաժամանակ յարձակում տեղի ունեցաւ նաև Սօս և Մաշադիշէն գիւղերի վրա։ Բայց թուրք խուժանը դիմադրութեան հանդիպելով՝ թողեց յիշեալ գիւղերը և ամբողջ ուժով դարձաւ դէպի վանքը։ Խուժանը յետ քշել անհնարին էր. ասպարէզը ամբողջապէս մնաց նրան։

Վանքը բոլորովին կողոպտուեց. եկեղեցական անօթներից սկսած մինչև վերջին կահ-կարասին տարան թուրքերը. կողոպտեցին նաև գիւղացիների թողած տները, ամբարներում եղած ցորենները, միւս հայ գիւղացիների գոմերը *) կենդանիներով և ապա հրդեհեցին այն բոլորը, ինչ որ կարելի չէր տանել։

*) Գանձակի նահանգում ընդհանրացած է գիւղերից հեռու ընկած վարելահողերում և դաշտերում շինել գոմեր, պահել այնտեղ կենդանիները, Նրանց

Այդ յարձակման ժամանակ սպանուեց սօսեցի Կարապետ Գասպարեանը, 55 տարեկան։

Թուրքերի այսօրինակ վանդալական գործողութիւնը հայերի զայրոյթը գրգռելով, միևնոյն ժամանակ վարակիչ ազդեցութիւն գործեց նրանց վրա։

Զինուած երիտասարդների մի խումբ, մի օր յետոյ, շրջակայ հայ գիւղերից յարձակուեց Թուրքերի վրա և հալածեց նրանց, յետ գրաւելով վանքը, որի ժամանակ սպանուեց Հերհեր գիւղացի Վանի անունով մի երիտասարդ։ Այդ բանից հայերը սիրտ առած՝ յարձակում գործեցին նաև Թուրք գիւղերի սահմանների վրա։ Ղարադաղլու և Վարանդալու Թուրք գիւղերից ժողովուրդը փախաւ. երկու գիւղերն էլ հրդեհուեցին և աւերուեցին. նոյն վիճակին ենթարկուեց մի օր յետոյ Դիւանալլար գիւղը։

Այնտեղ կողոպտուեց և այրուեց Ամարասը, Ամարասի մօտ եղող փոքրիկ գիւղը և ապա մի քանի գիւղերի գոմերը իրենց պաշարներով և տնտեսութիւններով. իսկ այստեղ հրդեհուեցին ու աւերուեցին երեք ամբողջ գիւղեր—հարիւրաւոր ընտանիքների պատսպարանը։ Փոխադարձ յարձակումներ, փոխադարձ աւերումներ...

Մի շարք մանր-մունր յարձակումներին, ուղղուած գլխաւորապէս Մաշադիշէնի դէմ, յաջորդեց հոկտեմբերի 19-ի արշաւանքը, որը ամենամեծն էր այդ շրջանի ընդհարումների ամբողջ ընթացքում։

Այս անգամ Պարսկաստանից բազմաթիւ Թուրք ձիաւորներ անցնելով Արաքսը՝ միացել էին տեղացի Թուրքերի հետ և մի մեծ ուժ կազմել։ Ձիաւորների և ոտաւորների մի ահագին խուժան հոկտեմբերի 19-ի առաւօտեան, ժամը 6-ին, պաշարեց Սօս գիւղը այնպէս անակնկալ կերպով, որ գիւղացիներից շատերը հրացանների ճռռոցը լսելով և անկարող լինելով հագնուել, տներից դուրս պրծան տակի վարտիկներով։ Ժողովուրդը փախաւ անտառը, զէնք կրող մարդիկ անկարող լինելով խուժումը կանգնեցնել՝ նոյնպէս դուրս եկան գիւղից, դիրք բռնելով գերեզմանատան քարերի մէջ։ Թուրքերը խուժեցին գիւղը և սկսեցին կողոպտել տները.

պաշարը և տնտեսութեան մի մասը։ Ցաճախ գոմերի հետ շինում են օրինաւոր տներ և ընտանիքներ տեղափոխելով՝ ապրում նրանց մէջ։ Այդ է պատճառը, որ գոմերը, շատ անգամ, ոչնչով չեն տարբերուում գիւղերից։

մինչև որ հայերը հարևան գիւղերից օգնութիւն կը ստանային՝ գիւղի կէս մասը կողոպտուեց։ Օգնութեան հասնող բաւականաչափ ուժը գերեզմանաքարերի յետևից սկսեց գնդակ տեղալ գիւղը շահատակող խուժանի վրա. մի քանիսը նրանցից գլորուեցին, գլորուեց նաև պարսկաստանից եկած խանը—բարձրահասակ, գեղեցկադէմ, երիտասարդ մի մարդ, պարսկական շքեղ հագուստով, որի դիակը Թուրքերը անկարող եղան տանել։ Մինչև այդ՝ խուժանը չէր ուզում Թողնել գիւղը. բայց նա փախուստի դիմեց, հէնց որ զարկուեց խանը։ Այս, ամբոխի հոգեբանութեան յատուկ մի փախուստ էր։ Հայերից սպանուեց 23 տարեկան մի երիտասարդ Յակովբեան Թէոս անունով։

Այդ միևնոյն օրը, Թուրքերի մի այլ խուժան յարձակուեց Մաշադիշէնի գոմերի վրա, ուր ապրում էին գիւղից տեղափոխուած բաւականաչափ ընտանիքներ։ Ժողովուրդը կարողացաւ փախչել չորս զոհ տալով, մինչև որ գիւղից օգնութեան եկողները յետ քշեցին յարձակումը։ Չորս սպանուածներն էին. Մարտի Բաղդէեանը, 45 տար., Մօսի Յարութիւնեանը, 25 տար., Օհանը, 50 տար. և Նէսին, 35 տարեկան։

Ինչպէս առաջին անգամ, այնպէս էլ այս անգամ հայերը յետ քշելով յարձակումը՝ գնացին պաշարեցին Թուրքական երեք գիւղեր, այն է՝ Հաջուզը, Վէյսանլուն և Աղբաշլուն. Թուրքերը մի կարճ դիմադրութիւն ցոյց տալուց յետոյ փախան և երեք գիւղերն էլ ենթարկուեցին հրդեհի ու աւերման։

Երրորդ անգամ այս շրջանը աղմկուեց և մասսայական ընդհարումների ասպարէզ դարձաւ դեկտեմբերի վերջերին և յունվարի սկզբներին, Քեօնդալան գետի հովտում ծագած նոր խռովութիւնների հետ միասին, որի ժամանակ Ղաջարը, ինչպէս տեսանք, ենթարկուեց յարձակման և աւերուեց։ Մի քանի յարձակումներ տեղի ունեցան Սօսի և երկու Ճարտարների վրա, թէև յիշեալ գիւղերը փնասներ չը կրեցին այս անգամ։ Մի յարձակում էլ տեղի ունեցաւ Խոնաշէն գետի հովտում ընկած Գիշի գիւղի գոմերի վրա, որի ժամանակ գոմերը հրդեհուեցին և բաւական փնասներ կրեցին։

Յարձակումները շարունակուեցին մի քանի օր ևս, մինչև որ տեղի ունեցաւ Ղաջարի աւերումը։

Ճիշտ է, Ղաջարի աւերումից յետոյ մի առ ժամանակ շրջանը խաղաղուեց, բայց բարբարոսութիւնների անօրինակ ձևե-

րով մի այլանդակ յարձակում, այս շրջանի հայ գիւղերի վրա, տեղի ունեցաւ մարտ ամսի մէջ. այդ ռուս կօզակների արշաւանքն էր, որը կատարուեց էկզեկուցիայի անուան տակ, թոփ ու թընդանօթով, առաջնորդութեամբ գնդապետ Վիվերնի, գաւառապետ Ֆրէյլիխի և հաշտարար միջնորդ Երմօլաևի, որպիսի արշաւանքի ենթարկուեց նաև Քեօնդալան գետի շրջանում եղած հայ գիւղերի շարքը. սակայն այդ արշաւանքը այնքան ուշագրաւ է և նողկալի իր անօրինակութեամբ, որ նրան մենք կը նուիրենք մի առանձին գլուխ մեր գրքի մի այլ տեղում։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԱՍԿԷՐԱՆՈՒՄ ԵՒ ԿԱՌԿԱՌ ԳԵՏԻ ՍՏՈՐԻՆ ՀՈՎՏՈՒՄ

1905 Թ. ՕԳՈՍՏՈՍԻՑ—1906 Թ. ՅՈՒՆԻՍ

Շուշուց դէպի հիւսիս, 25 վերստ ուղիղ գծով, Խաչէնի աւազանը վերջանում է մի նեղ անցքով։ Այդ անցքից դէպի արևմուտք ձգւումէ մի փոքրիկ շղթայ—Խաչէնի հիւսիսային պատուարը, իսկ դէպի արևելք՝ Վարանդայի ամրակուռ բարձրաւանդակը, սկսած Քեաթուկ գագաթից։

Բացի այդ երկու բնական ամրութիւններից, անցքը զինուած է եղել անցեալում նաև արհեստական ամրութիւններով—մի բերդով՝ Շուշին հիմնարկող Փանահ-խանի ձեռքով շինուած, որի կիսաւեր պարիսպները մինչև այժմ էլ կան։ Դրանք մի սաժենաչափ հաստութիւն, երկու, տեղ տեղ նոյն իսկ երեք սաժենաչափ բարձրութիւն և 100-150 սաժենաչափ երկարութիւն ունեցող մի զոյգ պարիսպներ են, որոնք միմեանց դէմ ու դէմ ընկած՝ մէջտեղ թողել են մի անցք, որի միջով հոսումէ Կառկառ գետը և ձգւում Աղդամի խճուղին։

Ահա այս անցքը իր բնական և արհեստական ամրութիւններով միասին վերցրած կոչւումէ Ասկէրան կամ Ասկէրանի բերդ։

Կառկառ գետը ազատւելով Ասկէրանի կիրճից՝ ոռոգում, կեանք է տալիս խաղողի այգիներով հարուստ մի դաշտավայրի, որի վրա միմեանց կողքի փռուած են Շէլլու, Փօլատլու, Ղարադաղլու, Շխբաբալու, Մուրադ-բէկլու, Ղուրդ-Ղարադաղլու, Ղուրդօթլար, Ղասումբէկլու, Շարաֆլու և այլ բազմաթիւ թուրք գիւղեր, որոնց կենտրոնում բազմած է Աղդամը—մի գիւղ իր շուկայով, իր հարստութիւններով, միևնոյն ժամանակ իր բէկական տականքներով, որը ղեկավարողի դեր է ստանձնել ընդարձակ

դաշտավայրի թուրք տարրերի բացասական գործողութիւնների նկատմամբ։

Ակէրանից դէպի հիւսիսարևմուտք լեռնաշղթայի հիւսիսային լանջերի վրա, 4 վերստ հեռաւորութեամբ, ընկած են Խաչէնի չորս գիւղերը, այնէ՝ Ղըլըջ-Բաղը, Քարագլուխը, Խանաբադը և Խրամորթը. իսկ դէպի արևելք, Վարանդայի հիւսիսային լանջերի վրա՝ Վարանդայի 14 գիւղերը, այն է՝ Քեաթուկը, Նախիջևանիկը, Փիրջամալը, Վարազաբոյնը, Միրիշանլուն, Դահրազը, Միրուշէնը, Աւդուռը, Հացին, Նորաշէնը, Աշանը, Եմիշչան, Սպիտակշէնը և Ղըզլղալան։

Այս շրջանի համարեա կենտրոնում, Զրաղլու անուն կրող բլուրի տակ գտնւում են այժմեան հաշուով, աւելի քան 600 տնից բաղկացած թուրքական երկու մեծ գիւղեր—Աւդալը և Գիւլապլուն իրենց այգիներով և շաղ անցած տներով՝ բռնելով մի ահագին տարածութիւն, փռուած մի ձորակի երկու կողերի վրա։

Աւդալ-Գիւլապլուն, այդ անբաժան զոյգ գիւղերը, այս շրջանի համար աւելի մեծ չարիքներ էին, քան Ղաջարը՝ Քեօնդալան գետի հայ գիւղերի համար։ Այս երկու գիւղերում կազմակերպւած աւազակների չարիքներից ազատ չէր այս շրջանի և ոչ մի հայ գիւղ։

Նրանք ուսումնասիրած ունէին իւրաքանչիւր գիւղի ելքն ու մուտքը, հարուստն ու աղքատը. նրանք ունէին իրենց հայ «ագենտները» իւրաքանչիւր գիւղում. նրանք մինչև անգամ բաժանած ունէին իրենց մէջ գիւղերը, մէկը միւսի սահմանը ոտ չը դնելու համար։ Եւ որպիսի՜ գողութիւններ ու աւազակութիւններ ասէք, որ տեղի չունենային այս շրջանի գիւղերում ամեն ամիս, ամեն շաբաթ, նոյն իսկ ամեն օր։ Այդպիսով, ահա, Աւդալ-Գիւլապլուի համար բացւել էր եկամտի մի առատ աղբիւր։ Գողանալ հայ գիւղերից ոչխար, կով, եզ, ձի. քշել Աղդամ, Աղդամի շրջակայ գիւղերը ու վաճառել և կամ վերադարձնել կենդանին հէնց իրեն—տիրոջը՝ նախօրօք ստանալով նրա արժէքը, սրանք սովորական երևոյթներ էին այս շրջանում։ Իւրաքանչիւր գիւղ, նայած իր տւած արդիւնքին, արժանանում էր Աւդալ-Գիւլապլուի յատկացրած տիտղոսին։ Այսպէս, Աշան գիւղը կոչւում էր «Հալւա-Աշանի», որ նշանակում էր հալւայի պէս քաղցր ու համեղ մի պատուաւ։

Աղդամի դաշտի, Աւդալ-Գիւլապլուի և Ջիանշիրի ու Ջիբրայիլի տափարակների մահմեդական տարրերը՝ կազմելով բազմամբոխ խմբեր, հայ-Թուրքական ընդհարումների ժամանակ արշաւում էին Ասկէրանի կիրճով դէպի Շուշի, իսկ Ասկէրանի երկու կողմերում ընկած Խաչէնի և Վարանդայի փոքրաթիւ հայ գիւղերի մի բուռն կտրիչներ փակում էին Ասկէրանի կիրճը և բնութեան ստեղծած այդ ամրութիւնների շնորհիւ յետ մղում արշաւանքները մեծ կորուստներով։

Ահա այն ընդհարման կէտը, որը այնքան ուշադրութիւն գրաւեց իր վրա և որին մենք կը տանք մի փոքր աւելի տեղ։

Աղդամից սկսած Շուշի-Եւլախեան խճուղին ձգւում է Աղդամի և ապա Ջիանշիրի տափարակների միջով, ամբողջ 70 վերստ երկարութեամբ անցնելով Թուրքաբնակ գիւղերի մօտով։

Ահա, մի ամբողջ օր տևող այդ դաշտային ճանապարհորդութիւնը Շուշի երթևեկող հայերը կատարում էին վախի և սարսափների տակ սկսած այն օրից, երբ առաջին անգամ տեղի ունեցաւ Բագուի կոտորածը։

Այդ սարսափները անտեղի չէին։

Յուլիսի 25-ին, երբ Խաչէնի ձորակում սարից իջնող Փարասանլու և Քէնգերլու կոչւող ցեղերի և հայերի մէջ տեղի ունեցած ընդհարման լուրը Աղդամ հասաւ, հանրակառքերով երթևեկող 18 հայեր անմիջապէս գերուեցին Թուրքերի ձեռքով, և նրանք արձակուեցին այն ժամանակ, երբ հաշտութեան լուրը տեղ հասաւ, սակայն բաւական սնախորժութիւններից յետոյ։ Երկու գիմնազիստներ ենթարկուել էին խայտառակ բռնութիւնների։

Ճիշտ է, այդ դէպքը անցաւ բոլորովին աննկատելի կերպով, բայց նա մի փորձ էր ապագայ գործողութիւնների համար։

Օգոստոսի 8-ին Խաչէնի ձորակում տեղի ունեցաւ երկրորդ ընդհարումը, բայց այս անգամ Ղըլշլու կոչւող ցեղի քոչւորների հետ։ Այս երկրորդ դէպքը ոտի կանգնեցրեց տափարակների վրա ապրող Թուրք տարրերին։ Աղդամում զանազան արհեստներով և մանր-մունր առևտրով պարապող բաւականաչափ հայեր հազիւ կարողացան՝ որը ծանօթի և որը դրամի շնորհիւ, թողնել ունեցածը չունեցածը և փախչել գլուխ ազատել։ Երկու օր ծածկուելուց յետոյ նոյնպէս հազիւ կարողացան փախչել և ազատուել հայ օղե-

գործարանների ծառայողները և մշակները, ամեն ինչ թողնելով խուժանին։ Երեք օր շարունակ կողոպտեցին և ապա գերեցին թէ մէկ և թէ միւս կողմից եկող 200-ի չափ հայ ճանապարհորդներ, որոնց թւում գտնւում էին 14 կանայք և 20-ի չափ երեխաներ։ Նոյն վիճակին ենթարկեցին 10-ից աւելի հայ ճանապարհորդներ Ղարբանդ կայարանում։ Երեք օր շարունակ հազար ու մի անարգանքների և մահւան սարսափի տակ ապրելուց յետոյ՝ այդ գերիները ազատեցին, բայց ոչ բոլորը. նրանցից մի քանիսը, որոնց թւում նաև կանայք, զոհ էին գնացել թուրքերի գազանային հակումներին. իսկ կենդանի մնացածները սարսափով էին յիշում անցկացրած րոպէները։

Օգոստոսի 16-ին, երբ ընդհարումը պայթեց Շուշու մէջ, Աղդամը իր շրջականներով միանգամայն սանձարձակ դարձաւ։ Աղդամի մէջ եղող հայերի խանութները կողոպտեցին. կողոպտեցին նաև Խուբլարովի գործարանը՝ ահագին խմիչքներով, Սողոմոնովի 12 դես. այգին և գործարանը, Ահարոնեանի 6 դես. այգին, գործարանը ու խմիչքների պահեստը, Բաղդասարովի սպիրտի գործարանը՝ մեծաքանակ սպիրտով. ապա այս բոլորը, աւելի քան 400,000 ր. արժողութեամբ, աւերեցին թուրքերի ձեռքով։ Եւ ապա Աղդամի խաղողով հարուստ ահագին շրջանի այդ կուլտուրական ձեռնարկութիւնները հրդեհեցին՝ տնտեսական մի մեծ հարուած հասցնելով նոյն իսկ իրեն—աւերող, քանդող ժողովրդին։ Կողոպուտի ենթարկեց նաև Ղարբանդի պօստի կայարանը իր ձիերով, որը գտնւում էր ոմն Զալինեանցի ձեռքում։

Սակայն կողոպուտի մի այդպիսի նեղ շրջան ահագին խուժանին գոհացում տալ չէր կարող։ Մինչդեռ մի կողմից այդ բոլորը կողոպտւում և աւերւում էին, միւս կողմից բազմամբոխ խմբեր Ասկէրանի կիրճով խուժում էին դէպի Շուշի։

Քաղաքում բռնկւած ընդհարման առաջին երկու օրերին, այն է օգոստոսի 16-ին և 17-ին Ասկէրանի անցքը բաց էր։ Աղդամի դաշտից բաւականաչափ զինւած խմբեր Շուշի թափւեցին. գնալով հոսանքը մեծանում էր. քաղաքից յուսահատական լուրեր հասան. դրսի խուժանը մի կողմից, ներսինը միւս՝ նեղն էին լծել հայերին։

«Ի սէր Աստուծոյ փակեցէք Ասկէրանի մուտքը, կանգնեցրէք Աղդամի հոսանքը, եթէ ոչ մենք կորած ենք», ահա այն աղաղակը, որն առաջին անգամ Ասկէրանի շուրջը ընկած Վարան-

դայի և Խաչէնի հայ գիւղերի ուշադրութիւնը դարձրեց այդ անցքի վրա։

Մի վայրկեան հայ գիւղացին տատանուեց. նրա ուղեղին չը նստեց այն միտքը, որ հային կարելի կը լինէր փակել մի մեծ ճանապարհ և դիմադրել Թուրք խուժանին. բայց գտնուեցին երկու տասնեակ ըմբոստներ՝ Փիրջամալ, Քեաթուկ, Նախիջևանիկ, որոնք գիւղերի երկու տասնեակ դաշնակցական երիտասարդներ օգոստոսի 17-ին բռնեցին Ասկէրանի կիրճը արևելեան կողմից։ Ահա Թուրքերի մի մեծ խումբ. նա արշաւում էր դէպի քաղաք։ Դէպի իր ուժերը որքան անվստահ հայը, նոյնքան անձնավստահ Թուրք խուժանը պատռեց Ասկէրանը, անցաւ 5—6 զոհեր տալով։ Ասկէրանը փակելու առաջին փորձն անյաջող անցաւ. մի զոհ էլ հայերը տալով՝ յետ քաշուեցին, սակայն ճանապարհը հարթուած էր և առաջի յանդուգն քայլը արուած։

Օգոստոսի 18-ին Ասկէրանը նորից փակուեց, բայց այս անգամ արդէն աւելի ամուր կերպով. օգնութեան էին հասել նաև խաչէնցիներից կազմուած դաշնակցական տասնեակները։ Աղդամի կողմից արշաւող մի խուժան յետ փախաւ զոհերով։ Ցարձակումը այդ օրը կրկնուեց երկու անգամ ևս, բայց անյաջող վերջաւորութեամբ։ Թուրքերը ունենում էին զոհեր. թէև նրանցից փոքր խմբեր պատռում շղթան անցնում էին։

Աղդամը ալեկոծուեց որպէս ծովը փոթորկի ժամանակ. չորս կողմի գիւղերից թափուեցին եկան բազմաթիւ ձիաւոր խմբեր, որոնք մի մեծ արշաւախումբ կազմած՝ շարժուեցին դէպի Ասկէրան։ Ականատեսները միաբերան վկայում էին, որ այդ արշաւախումբը՝ բաղկացած ոչ պակաս 2000 լաւ զինուած ձիաւորներից, շարժուեց՝ առաջնորդ ունենալով մի ականաւոր բէկի, որը սպիտակ ձի նստած մի առանձին յաւակնութեամբ առաջ էր գնում, արհամարհելով այն մի քանի տասնեակ հայերին, որոնք փակել էին կիրճը։

Սկսուեց յարձակումը մի անօրինակ թափով օգոստոսի 19-ի առաւօտեան։ Մի քանի ժամ տևող յամառ կռիւը վերջացաւ յաւակնոտ բէկի համար խայտառակ պարտութեամբ։ Արշաւախումբը փախաւ՝ թողնելով մի քանի տասնեակ դիակներ գլխաւորապէս Խրամորթ գիւղի սահմաններում, ուր տեղի ունեցաւ միաժամանակ յարձակումը։

Այս ընդհարումից մի քանի ժամ անց առանց որևէ միջնա-

դէպի եկաւ Շուշի անցաւ Շէյխ-ուլ-իսլամը։

Յարձակումներ Ասկէրանի վրա տեղի ունեցան նորից օգոստոսի 20-ին և 21-ին, բայց դարձեալ անյաջող հետևանքներով։

Օգոստոսի 22-ին նոյնպէս տեղի ունեցաւ ընդհարում և այն էլ արիւնոտ ընդհարում։ Այդ օրը Շուշուց վերադառնում էր կողոպուտներով բեռնաւորուած ձիաւոր թուրքերի մի մեծ խումբ. այդ խումբը ահա թակարդի մէջ բռնուեց և մի յուսակտուր կուից յետոյ ընկաւ մի քանի տասնեակ սպանուածներով։

Ասկէրանը ստացաւ «Գանլի» անունը. մի քանի օրւայ մէջ նրա պատերի տակ թափուել էին աւելի քան 300 զոհեր։ *)

Այս դէպքից յետոյ, օգոստոսի 23-ին զօրք ուղարկուեց Ասկէրան. իսկ օգոստոսի 24-ին եկաւ և անցաւ գեներալ Տակայշվիլին, սակայն որը Աղդամից փոխարքային ուղարկեց մի բնորոշ հեռագիր։

Ահա այդ հեռագիրը իր ամբողջութեամբ։

«Երկու բատալիոն և երկու հարիւրեակ այսօր հասան Շուշի. մի բատալիոն և մի հարիւրեակ այսօր ինձ հետ հասան Աղդամ։ Ելլախից մինչև այստեղ ճանապարհին պէտք եղաւ հանգստացնել թուրք ազգաբնակութեանը, որը յուզուած էր այն պատճառաւ, որ խաղաղութիւնը կապելուց յետոյ հայերը դեռ շարունակում էին գրաւած պահել Ասկէրանի կիրճը և շրջակայ բարձրութիւնները, կրակելով անցնող թուրքերի և նոյն իսկ Շէյխ-ուլ-իսլամին ուղեկցող ձիաւորների վրա։ Այսօր ճանապարհին պատահեցի զինուած թուրք խմբերի՝ սպանուածներով և վիրաւորուածներով։ Ինչպէս երևաց, լոյս 22-ի գիշերը կիրճում ընդհարում է տեղի ունեցել բազմաթիւ զոհերով։ Աղդամ հասնելով անմիջապէս մի զօրամաս ուղարկեցի բռնելու Ասկէրանի կիրճը, իսկ մնացած զօրքերի հետ առաջ շարժուեցի՝ վերցնելով եօթ օրւայ պաստը, ալիւրով բարձած ֆուրգոնները և այն բոլոր բնակիչներին, որոնք վախենում էին գնալ Շուշի Ասկէրանից, Խանքէնդի ճանապարհի փակ լինելու պատճառով»։

Այս բովանդակութեամբ մի հեռագիր կազմելու համար պէտք էր լինել Տակայշվիլի։ Հայերը խախտել էին հաշտութեան պայմանը,

---

*) Ասկէրանի մօտ կայ գինուած ստրաժնիկների մի պահականոց, որի ներկայութեամբ կատարւում էին այս բոլորը։

հայերը կոտորել էին անմեղ ճանապարհորդների, հայերը կրակել էին նոյն իսկ Շէխ-ուլ-իսլամին ուղեկցողների վրա։ Այո, ամեն բանում էլ յանցաւորը հայերն էին։ Անվերջ մեղադրանքներ, որոնք դիտաւորեալ կերպով խմբագրւում էին Թուրք մասսային աւելի ևս մոլորութեան մէջ ձգելու, ընդհարումներն ու կոտորածը աւելի տևողական դարձնելու համար։ Թուրք մասսան խնդիրը ըմբռնել չէր կարողանում. այդ հանգամանքը ստիպում էր հային Ասկէրաններ ստեղծել, դիակներ փռել։ Եւ այս ոչ թէ Տակայշվիլիներին վրդովեցնում էր, այլ հրճւանք պատճառում, որոնք միջոցներ ձեռք չէին առնում արմատապէս մաքրելու Աղդամի գիծը Թուրքերից, իսկ Ասկէրանը՝ հայերից։

Ահա թէ ինչու Ասկէրանը որպէս Շուշու բանալին, այնուհետև դարձաւ երկու դրացի ժողովուրդների, որպէս երկու թշնամի բանակների, կուսախնձորը, որի շուրջը տեղի էին ունենում խոշոր ընդհարումներ։

Ասկէրանի գրաւումը հայերի կողմից լուրջ մտատանջութիւն պատճառեց Աղդամի դաշտի Թուրքերին, որոնց առաջ փակւում էր ասպարէզը դէպի Շուշի։ Եւ ահա սկսւեց արշաւանքների երկար ու տևողական շարքը դէպի այն գիւղերը, որոնք գտնւում էին Ասկէրանի երկու անմիջական թևերի վրա։

Օգոստոսի 19-ին Ասկէրանի կիրճում տեղի ունեցած ընդհարման հետ միաժամանակ յարձակման ենթարկւեցին Խանարադ և Խրամորթ գիւղերը։ Մի քանի ժամ տևող յամառ կռիւը վերջացաւ նրանով, որ Թուրքերը յետ փախան՝ թողնելով կռւի տեղում 13 դիակներ, որից յետոյ Խանարադ գիւղի հայերը հրդեհեցին բէկի տունը. բէկը առաջօրէն քոչել էր այդտեղից։

Աղդամի դաշտի Թուրքերը անկարող լինելով Ասկէրանը շրջապատող հայերին հարւածել, նորից իրենց բարկութիւնը թափեցին ճանապարհորդների վրա։ Սեպտեմբերի 2-ին և 3-ին ադմինիստրացիայի հաւաստիացումներից սիրտ առած, 30-ի չափ հայեր ճանապարհ ընկնելով՝ Աղդամում կողոպտւեցին և գերւեցին։ Դրանցից մի քանիսը—կին, երեխայ, տղամարդ—անհետացան Աղդամից փոքր ինչ հեռու, Ուզուն-Դարա կոչւած տեղում, ուր մի քանի օր անց գտնւեցին 3 այլանդակւած դիակներ և ոմն Սամ-

սոն Գանջեցեանի ու նրա հետ եղող գերմանացի տեխնիկի անցագիրն ու զանազան թղթեր։

Մի անսպասելի յարձակման ենթարկուեց Աւդալ-Գիւլապլուի բարձրում ընկած Միրիշանլու գիւղը։

Գիւլապլու գիւղի մօտ մի քանի օրից ի վեր իրենց վրաններն էին խփել երկու թափառական ցեղեր—Օւշարը և Աշուղլուն։ Օգտուելով առիթից սեպտեմբերի 4-ին գիւլապլուեցիք միացան դրանց և յարձակուեցին Միրիշանլուի վրա այն ժամանակ, երբ շատերը քնած էին։ Գիշերային մթութեան մէջ ժողովուրդը փախաւ չոլերը մի անսասելի իրարանցումով և մինչև որ միւս գիւղերից օգնութիւն կը հասնէր, թուրքերը կողոպտեցին մօտ 20 տուն և քշեցին 80-ի չափ տաւար։

Այս յարձակման ժամանակ հայերից սպանուեցին վեց հոգի, որոնց անունները բերուած են գրքի վերջում։ Դրանցից երկուսը 1-ից մինչև 3 տարեկան մանուկներ էին։ Թուրքերը յետ քաշուեցին 5 սպանուածներով, բայց բաւականաչափ աւարով։

Այս առաջին փորձն էր այն մի շարք յարձակումների, որ սկսեց Աւդալ-Գիւլապլուն հայ գիւղերի դէմ՝ նպատակ ունենալով Քեաթուկի հարաւային լանջերով ճանապարհ բացել պէպի Մալիբէկլու և այնտեղից Շուշի։

Այս յարձակումը յուզեց շրջակայ հայ գիւղերին, մանաւանդ Նախիջևանիկին և Վարազաբոյնին, որոնք թուրք գիւղերին կից, դաշտային մասում ունենալով ընդարձակ խաղողի այգիներ, *) միանգամայն զրկուել էին այնտեղ երթևեկելու հնարաւորութիւնից, թողնելով բոլորը թուրքերի քմահաճոյքին և աւերումներին ենթակայ։

Եւ ահա, երկու օր անց, Սեպտեմբերի 6-ին հայերը յարձակուեցին Աւդալ-Գիւլապլուի վրա այն ժամանակ, երբ վերջինը պատրաստւում էր երկրորդ անգամ յարձակուել Միրիշանլուի վրա. տեղի ունեցաւ մեծ կռիւ, մեծ զոհերով։ Թուրքերը անկարող լինելով մինչև վերջը դիմադրել հայերին, փախան Աւդալից և Գիւլապլուի մի մասից, որից յետոյ հայերը ներս խուժեցին գիւղերը և

---

*) Այդ այգիները, որոնց տարածութիւնը հասնում է 400 դեսիատինի և որից Նախիջևանիկն ու Վարազաբոյնը տարեկան վերցնում էին մինչև 100,000 վեղրօ գինի, մեծ մասամբ աւերուեցին։

սկսուեց կողոպուտն ու աւերը հանդերձ սպանութիւններով և բարբարոս գործողութիւններով, որին լուռ ականատես էր վրա հասած կօզակների հարիւրեակը. և ոչ միայն լուռ ականատես, այլ և մի քանիսը կօզակներից մասնակցում էին կողոպուտին։ Ժողովրդի մեծ մասը փախաւ Աղդամի գիւղերը, իսկ փոքր մասը և գլխաւորապէս կուող տղամարդիկ քաշուեցին Գիւլապլուի ներքին մասը։ Շէն Աւդալ-Գիւլապլուն աւերուեց հիմնովին։

Մինչդեռ հայերը զբաղուած էին Աւդալ-Գիւլապլուի կողոպուտով՝ Աղդամից մի խուժան պաշարեց Վարազարոյնը և կրակեց գիւղի ծայրում եղող գոմերը, բայց շուտափոյթ օգնութեան շնորհիւ կարելի եղաւ յարձակումը յետ քշել և գիւղը փրկել հրդեհից։ Այստեղ աւելի ևս տարօրինակ էր զօրքի բռնած դիրքը. մի հարիւրեակ կօզակ հայերի հետ էր և մի հարիւրեակ կօզակ Թուրքերի կողմը. երկու տեղից էլ կօզակները կրակում էին։

Սեպտեմբերի 16-ին յարձակման ենթարկուեց Նորաշէն գիւղը, բայց այդտեղ նոյնպէս կարելի եղաւ յարձակումը յետ մղել առանց լուրջ վնասների։

Մի առ ժամանակ այս շրջանը խաղաղուեց, բայց ոչ երկարատև։ Հոկտեմբերի 8-ին Աղդամում նորից կողոպտուեց ճանապարհորդների մի բաւական մեծ խումբ, թէև կարելի եղաւ կողոպուտը յետ առնել և տէրերին տալ։ Ապա գիւլապլուեցիների ձեռքով կատարուեցին մի շարք աւազակութիւններ և սպանութիւններ. նրանք քշեցին Միրուշէնի 12 տաւարը, սպանեցին Աւդուռ գիւղացի մի հայի և գործեցին այսօրինակ այլ դէպքեր։ Այս բոլորը առաջ բերին նոր ընդհարումներ։

Հոկտեմբերի 28-ին հայերը երկրորդ անգամ յարձակուեցին Գիւլապլուի վրա, որի ժամանակ թէև մի քանի տներ աւերուեցին, բայց այնուամենայնիւ գիւղի ամենավերջին ծայրը մնաց անվնաս, ուր նորից ամրացան զէնք ունեցող Թուրքերը։

Աւելի մեծ յարձակումներ տեղի ունեցան նոյեմբերի վերջերին և դեկտեմբերի սկզբներին։ Քաղաքի շուրջը կատարուեցին սպանութիւններ. Աղդամը նոյնպէս յուզուեց. Ասկէրանը նորից փակուեց խաչէնցիներով։ Գիւլապլուն Աղդամից օգնութիւն ստանալով՝ նորից փորձեց յարձակում գործել Միրիշանլուի վրա, բայց ինքը պաշարուեց հայերով։ Այս անգամ կռիւը նոյնպէս կատաղի էր։

Գիւլապլուում մնացել էին միմիայն տղամարդիկ, որոնք և յամառ կերպով դիմադրում էին հայերի գրոհին. բայց Գիւլապլուն վերջնականապէս ընկաւ՝ մեծ զոհեր տալով, որից յետոյ մնացեալ տներն ևս աւերուեցին։ Թուրքերը թողին 50-ից աւելի սպանուածներ, որոնցից 26 դիակ միմիայն մի տան մէջ ընկած, բոլորը կուող տղամարդիկ էին։ Հայերից սպանուեց մէկը—դահրազէցի Կարապետ Բդանեանցը և մի քանի հոգի էլ վիրաւորուեցին։

Դեկտեմբերի 3-ին Աղդամից մի խոշոր յարձակում տեղի ունեցաւ Խանաբադ և Խրամորթ գիւղերի վրա։ Յարձակումն այնքան ուժեղ էր, որ Խրամորթի ժողովուրդը փախաւ գիւղից, կարողանալով հետը տանել շատ աննշան իրեր։ Տների մեծ մասը կողոպտուեցին, 18 տներ հրդեհուեցին, Տէր Գրիգորեանի մետաքսի և գինու գործարանները, աւելի քան 30-35,000 ռուբ. արժողութեամբ, նոյնպէս կողոպտուեցին և հրդեհուեցին։ Հայերից սպանուեցին 70 տարեկան ծերունի Մկրտիչ Աղաբաբեանը իր 60 տարեկան կնոջ հետ և 18 տարեկան մի երիտասարդ—Բաղա Սահակեան անունով. բացի այդ, 4 հոգի էլ վիրաւորուեցին։ Թուրքերը թողին կուի տեղում 6 դիակ, որոնցից մէկի գրպանից դուրս եկաւ Մանսրլու գիւղի ստարշինայի կնիքը։

Խանաբադը կարողացաւ յարձակումը յետ տալ, բայց երկու զոհերով։ Սպանուեցին երկու երիտասարդներ—Զումշուդ Մովսիսեանը և Պետրոս Պողոսեանը։

Եկան վերջապէս դեկտեմբերի վերջին ամենածանր օրերը—բոյկոտի, յուզման և մթերքների յետին ծայր սպառման օրերը։ Մինչև Աղդամի ճանապարհը փակուեց հայերի համար, իսկ Ասկէրանը փակուեց թուրքերի համար. երկու կողմերն էլ ենթարկուեցին ծանր զրկանքների, մանաւանդ քաղաքը։ Դա այն միջոցն էր, երբ երկաթուղիական ընդհանուր գործադուլի պատճառով ամբողջ Ռուսաստանը մատնուած էր սովի, երբ մթերքների արժէքը հասել էր չը տեսնուած չափերի։

Այդ ժամանակ Ելիսաբեթից զօրք ուղարկուեց ճանապարհը մաքրելու և Շուշի մթերք հասցնելու համար։

Դեկտեմբերի 26-ին մի վաշտ կօզակների պաշտպանութեան տակ Աղդամից 54 ֆուրգոն—6000 փթաչափ մթերքներով ճանապարհուեցին Շուշի յատկապէս թուրքերի համար։ Այդ պաշարը

պիտի անցնէր Ասկէրանի բարձունքները գրաւած նոյնչափ սովի մատնուած խաչէնցի և վարանդացի դիրքապահների աչքի առաջով։

Երբէք մարդ այնքան յանդուգն չէ լինում, որքան քաղցի րոպէին. ահա այդպիսի մի րոպէ մի ակնթարթում եկաւ խնդիրը լուծելու. դիրքերից կրակեցին հրացանները. ճարպիկ կօզակները վայրկենապէս յետ փախան և մթերքներով բեռնաւորուած ֆուրգօնների շղթան ծուեց դէպի Վարանդայի գիւղերը։

Որքան էլ ծանր լինէին դրա հետևանքները, հանդերձ իրենց տուգանքներով ու էկզեկուցիաներով, այնուամենայնիւ, քաղցած Վարանդան մի առ ժամանակ կշտացաւ, մի առ ժամանակ նա գոհացում տուեց աղաղակող ստամոքսի պահանջին։

Սոյնպիսի մի փորձ տեղի էր ունեցել նոյեմբերի 30-ին. 16 ֆուրգօն մթերքներ կրկին անցել էին Վարանդայի հայերի ձեռքը և սպառուել։ Թուրքը հային էր կողոպտում, հայը՝ թուրքին. կառավարութեանը ինչ փոյթ թէ երկուսով էլ կը թշուառանան . . .

Սակայն այս անգամ Ասկէրանի ամրութիւնների առաջ յայտնուեց Ֆօն-Օզերովսկին իր հռչակաւոր կոչով և թնդանօթներով. խրոխտաց, սպառնաց, թնդանօթի բերանը ուղղելով՝ 12 հարուած տեղաց Խանաբադի վրա, իսկ 4 հարուած՝ Ասկէրանի պարիսպներին, սա էլ միւսների պէս անցաւ գնաց. . .

Յարձակումների ամենակատաղին տեղի ունեցաւ յունվարի 6-ին վաղ առաւօտեան։ Այդ մի մեծ դաւադրութիւն էր ծննդեան գիշերին գործադրելու համար. ծրագրուած էր անսպասելի կերպով յարձակուել և հայերին սրի քաշել, նրանց հանդիսաւոր օրւայ հանդիսաւոր ժամին։

Դեռ ևս յունվարի 5-ին Աղդամ եկել խմբուել էին ահագին թւով թուրքեր Ջիւանշիրի և Արէշի կողմերից. եկել էին Շախսէւան կոչուած ցեղի բազմաթիւ ձիաւորներ նաև Պարսկաստանից։

Յարձակումը տեղի ունեցաւ միաժամանակ Նախիջևանիկի, Փիրջամալի և Վարազաբոյնի վրա աւելի քան 2-3000 հոգու մասնակցութեամբ։ Տեղի ունեցաւ յամառ և երկարատև կռիւ, հայերը թուրքերի ուժերը ջլատելու նպատակով յարձակում գործեցին Շէլլու թուրք գիւղի վրա և իսկապէս այդ ստիպեց թուրքերի մի մասին դառնալ այն կողմը, որից օգուտ քաղելով հայերը մի գրոհ տուին և մեծ կորուստներով քշեցին խուժանին, թէև

իրանք էլ բաւական զոհեր ունեցան։ Վարազարոյնից այդ կուսում սպանուեցին Ալէքսան Ղուկասեանը, 40 տար., Խաչատուր Աւանէսեանը, 25 տար., Խոսրով Արուշանեանը, 25 տար., Յարութիւն Մէլքումեանը, 40 տար., Առաքել Պետրոսեանը, 45 տար., Սարգիս Աւդիեանը, 30 տար., Կարապետ Գասպարեանը, 30 տար., և Օհան Մինասեանի կինը—Բաջին 30 տար. բացի այդ վիրաւորուեցին 17 հոգի. Փիրջամալ գիւղից սպանուեցին՝ Սահակ Սարգսեանը, 40 տար., Ծատուր Դավլաթեանը, 50 տար., Ադամ Միրզոեանը, 30 տար. և վիրաւորուեցին 3 հոգի, ընդամենը 11 սպանուած և 20 վիրաւոր։ Թուրքերի սպանածները շատ շատ էին, թէև անյայտ քանակութեամբ։

Սակայն սրանով էլ շրջանը չը խաղաղուեց. մի կարճ ընդմիջումից յետոյ սկսուեցին նորանոր դէպքեր։

Մարտի 19-ին Աղդամում հայ ճամբորդները նորից բռնութիւնների ենթարկուեցին, որոնցից 5 հոգի ծանր վէրքեր ստացան, սակայն այս անգամ կօզակները կրակ բացին թուրքերի վրա և նրանցից մի քանիսին սպանեցին ու վիրաւորեցին։

Հայ ճամբորդների մի մեծ գերութիւն տեղի ունեցաւ նաև մայիսի 27-ին, որը ահագին աղմուկ հանեց։ Աւելի քան 27 ճամբորդներ անհետ կորան. դրանց թւում գտնւում էր Բախշի Արամեանը մի քանի կանանց ու երեխաների հետ միասին։ Ադմինիստրացիայի բոլոր ջանքերն ապարդիւն անցան նրանց գտնել։ Ճիշտ է, մի քանի օր անց Ղարբանդի մօտ մի անտառի մէջ գտնուեցին 14-ի այլանդակուած դիակները, բայց միւսների մասին որևէ տեղեկութիւն կարելի չեղաւ ստանալ. Ընդհանուր կարծիք էր, որ նրանցից մի քանիսին անց էին կացրել Պարսկաստան։

Այս դէպքից յետոյ այլ ևս հայերը չը վստահացան Աղդամի խաուղիով երթևեկել. նրանք գերադասեցին Շուշի-Գանձակեան լեռնային ճանապարհը, անտես առնելով այն տանջանքները, որոնք կապուած էին այդ ճանապարհորդութեան հետ։

Ապա եկաւ յուլիսը—նոր յուզմունքների և Շուշու նոր ընդհարումների այդ արիւնահեղ ամիսը։ Աղդամը և Ասկէրանը նոր ընդհարումների բեմ հանդիսացան։ Նորից Խանաբադը, Խրամորթը, դրանց վրա աւելացրած նաև Քարագլուխը ենթարկուեցին յարձակումների։ Նորից հրապարակ եկաւ Գիւլապլուն, բայց այս անգամ

կանոնաւոր աւազակային արշաւախմբերով. այդպիսի փորձեր տեղի էին ունեցել դեռ ևս փետրվար և մարտ ամիսների ընթացքում։ Եւ յուլիսի 28-ին Փիրջամալի, Նախիջևանիկի հայերը ստիպուած էին մի նոր ու վերջին անգամ հայածանք սկսել այդ աւազակախմբերի դէմ՝ շրջանը վերջնականապէս խաղաղացնելու համար։

Ահա այն շրջանը, որի իւրաքանչիւր սարը, ձորը, քարը, քօլը կրում էր իր վրա բարբարոսութեան հետքերը, աւերումների ծանր հետևանքները . . .

Սակայն հարց է, այսքանով իրագործուած համարում էր անսիրտ բիւրօկրատիան իր դժոխային ծրագիրը . . .



Ցուցակ Շուշու գաւառի այն գիւղերի, որոնց ժողովուրդը փախել կամ խոշոր վնասներ է կրել ընդհարումների ժամանակ։ *)

ՀԱՅ ԳԻՒՂԵՐ

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն	փախած	կողոպտուած	աւերած	կոտորած
1	Ջամբլլու	20	փախ.	—	աւեր.	—
2	Ուլուբաբ .	20	,,	—	,,	
3	Շէխեր .	41	—	կող.	—	—
4	Ամարաս գիւղ	10	փախ.	,,	աւեր.	—
5	Սօս . .	102	—	,,	—	—
6	Միրիշանլու	75	—	,,	—	—
7	Խրամորթ . .	65	—	,,	—	—
8	Աղդամի հայեր . .	—	—	,,	—	
	ԹՈՒՐՔ ԳԻՒՂԵՐ					
1	Ղուշչիլար	40	փախ.	—	աւեր.	—
2	Խանքէնդ	60	,,	—	,,	կոտ.
3	Խօջալու .	40	,,	—	,,	—
4	Ղաջար .	128	,,	կող.	,,	—
5	Ղարադաղլու	27	,,	—	,,	
6	Վարանդալու .	80	,,	—	,,	—
7	Դիւանալլար .	22	,,	—	,,	—
8	Հաջուզ	30	,,	—	,,	—
9	Վէկսանլու	146	,,	—	—	—
10	Աղբաշ	20	,,		—	
11	Աւդալ .	120	,,	—	աւեր.	—
12	Գիւլապլու	270	,,	—	,,	կոտ.

*) Այստեղ չեն բերուած էկզեկուցիայի անուն տակ կօզակների ձեռքով կողոպտուած և բռնութիւնների ենթարկուած հայ գիւղերի անունները։

Գանձակի նահանգի աւերուած գիւղերի մի մասը մինչև այժմ էլ աւերակ է և անմարդաբնակ։

Խանքէնդ աւանի գործակալութեան 44 գիւղերի ցուցակը
Տէր-Յովհաննիսեա

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Զոհեր		Ֆշուեալներ			
		Սպան.	Վիր.	Տաւար	Ոչխար	Ձի	Էշ
1	Ղայբալի .	7	—	122	22	—	—
2	Կրկժան .	2	1	15	—	—	—
3	Խանքէնդ .	9	—	20	—	2	—
4	Փահլուլ .	—	—	15	—	—	—
5	Ջամբլլու .	2	—	80	—	2	—
6	Խանածախ .	2	3	86	—	—	—
7	Բալլուջա .	13	—	25	—	—	—
8	Մէյթի-Շէն .	1	—	49	—	8	—
9	Դահրաւ .	2	1	2	—	—	—
10	Պորեցիք .	5	3	68	—	5	—
11	Խանձք .	2	—	90	—	5	—
12	Դաշբուլաղ .	4	—	55	—	8	—
13	Յիլիս .	—	—	4	—	—	—
14	Խնձորեստան .	6	—	21	—	—	—
15	Ղշլաղ .	—	—	12	—	—	
16	Սէյիդի-Շէն .	4	—	—	—	2	—
17	Ռև .	—	2	26	—	2	—
18	Ուլուբաբ .	—	—	2	—	5	—
19	Սարդարաշէն .	—	—	4	—	—	—
20	Ղըլըջ-Բաղ .	—	—	50	—	—	—
21	Քարագլուխ .	8	—	132	10	—	—

իրենց կրած վնասներով, քաղուած գործական Տէր-Պետրոս նի տեղեկագրից։

Այրուել և կողոպտուել են			Էկզեկուցիայի				Ծանօթութիւն
Տուն	Գոմ	Դէզ խոտ	Ծախք	Տուգանք	Խլուած զէնք.	Ռմբակոծ. տներ.	
—	5	5	—	600	—	—	
—	—	—	—	—	—	—	
—	—	—	—	—	30	2	
—	—	—	—	—	—	—	Երեք յարձակում յետ մղուած
—	18	9	—	—	—	—	
2	5	5	—	400	—		
—	—	—	600	700	—		
—	—	—	—	—	—	—	
—	—	—	373	1000	—	1	
—	—	—	—	1230	3	12	Կողոպուտ՝ կօզակների ձեռքով
—	—	—	—	500	3	3	
—	—	—		615	1	—	
—	—	—	—	—	—	—	
—	—	—	—	—	2	—	
—	—	—	—	—	1	—	
—	—	—	150	—	1	—	
—	—	—	—	—	—	—	
—	20	20	—	—	—	—	
—	—	—	—	—	—	—	
—	—		850	469	1	1	Կողոպուտ կօզակների ձեռքով
—	—	—	900	—	—	—	Էկզեկուցիա, բռնութիւն, կողոպ.

22	Խրամորթ	.	5	1	36	120	2	—
23	Խանաբաղ	.	2	—	—	—	—	—
24	Ղազանչի	.	1	—	700	—	—	—
25	Դաշուշէն	.	4	1	17	—	—	5
26	Քառասնէ	.	3	—	22	—	—	3
27	Հարաւ .	.	6	2	13	90	—	—
28	Դահրաղ	.	1	—	2	—	1	1
29	Միրիշանլու .	.	11	2	180	—	—	—
30	Վարազաբոյն .	.	12	—	41	100	—	9
31	Փիրջամալ	.	5	—	—	—	—	—
32	Նախիջևանիկ .	.	4	—	15	—	5	—
33	Քեաթուկ	.	2	—	10	—	—	—
34	Շօշի	.	14	4	200	70	—	—
35	Արկաթալի	.	3	—	—	—	—	—
36	Հիւնոտ .	.	6	—	—	—	5	—
37	Սղնաղ	.	3	—	25	—	—	—
38	Քարինտակ	.	2	5	335	—	1	4
39	Ալիղուլի	.	16	3	800	500	—	—
40	Հարար .	.	18	—	150	—	—	—
41	Ղարաղշլաղ*) .	. .	23	5	35	160	8	17
			208	33	2449	1072	61	39

*) Խանքէնդ աւանի գործակալութեան միմիայն երեք գիւղերը, այն է՝ Նոր

12	25	22	—	—	—	—	
—	—	50	868	340	9	4	
—	60	100	—	—	—	—	
—	—	—	—	500	1	—	
—	—	6	-	—	—	—	
—	—	—	—	—	—	—	
—	—	—	—	52	4	2	
35	—	20	—	65	2	—	Կողոպուտ 33,500 ր.
—	100	—	—	1067	3	1	Հրդեհել են կալերն ու մարագները
—	—	—		65	—	—	
—	—	—	—	—	—	—	Կտրատել են այգիները
—	—	—	111	276	—	—	
—	150	60	—	—		—	
—	—	2	—	—	—	—	
—	—	—		—	—	—	
—	—	—	—	—	—	—	
—	—	—	—	—	—	—	
120	120	—	—	—	5	—	Ամբողջովին կողոպտուած, աւերու.
200	200	—		—	20	—	Ամբողջովին կողոպտուած, աւերու.
—	—	—	800	750	42	—	
369	703	299	4652	8629	128	26	

չէնը, Փաւոխը և Ջրագացները ազատ մնացին կորուստներից։

ԶԻԱՆՇԻՐԻ ԳԱՒԱՌ

Զիւանշիրի գաւառը ընկած է Գանձակի նահանգի միջին մասում մի նեղ ու երկար գծով՝ ձգւելով նահանգի ամբողջ լայնութեամբ արևմտեան սահմաններից սկսած մինչև հիւսիսարևելեանը։ Զիւանշիրը իր տարածութեամբ և ազգաբնակութեան թւով նահանգի ութ գաւառների մէջ բռնում է եօթներորդ տեղը։

Գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւը հասնում է 73 հազարի, որից 53 հազարը թուրքեր են, իսկ 20 հազարը՝ հայեր։ Հետևապէս հայերը կազմում են համարեա երեք անգամ փոքր թիւ, քան թուրքերը։

Զիւանշիրի գաւառը իր աշխարհագրական դիրքով ներկայացնում է երկու տարբեր դրութիւններ. արևմտեան մասը լեռնոտ է և անտառապատ, իսկ արևելեանը՝ հարթ ու տափարակ՝ ձգւած մինչև Քուրի ափերը։ Հայերը ապրում են գլխաւորապէս լեռնային և ստորլեռնային մասերում. նրանց մի փոքր թիւը միայն ապրում է թուրքաբնակ դաշտավայրերում, որոնք և եղել են նրա դժբախտութեան պատճառը։

Զիւանշիրի գաւառը ընկած լինելով Գանձակի և Շուշու գաւառների մէջ տեղ սկսւում է Ինջին գետից և Մրաւի շղթայից ու գնում միանում է Խաչէնի ձորակով Շուշու գաւառին։ Այս տարածութեան մէջ ընկած են պատմական Գիւլիստանի հարաւային մասը և Զրաբերդը, որպէս դրացի մէլիքութիւններ իրենց կալւածներով ու բերդերով։

Զը մոռանանք յիշել, որ Զիւանշիրը Գանձակի այն երկու գաւառներից մէկն է, ուր ամենից շատ տարածւած է մասնաւոր կալւածատիրութիւնը։ Այնպէս որ այս գաւառում գիւղացիների ձեռքում եղող կալւածատիրական հողերի քանակը գերազանցում է պետականից՝ 65,000 դեսիատին ընդդէմ 63,000-ի։

Ջիւանշիրի գաւառում եղող 227 գիւղերից հայաբնակ են հետևեալ 39 գիւղերը։

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆԵՐԸ	պաշտ. թւերը տուն.	մերը՝ մատաղատ.
1	Շահմասուր . .	—	30
2	Վանք (Վանքլու) . .	80	120
3	Առաջաձոր (Դովշանլու) .	205	300
4	Ծմակահող (Բազարքէնդ) . .	39	60
5	Հայաղ (Ախմախի) . .	15	30
6	Կոնաքար (Զորմանլի) . .	—	20
7	Թրլղու (Դամկալու) .	25	25
8	Քօլատակ.	33	50
9	Կիչան (Բալլու-Ղայա). .	15	35
10	Ղազանչի . .	25	60
11	Գիւլեաթաղ .	66	105
12	Ջանեաթաղ .	78	120
13	Կուսապատ . . .	105	110
14	Մեծ-Շէն (Ուլու-Ղարաբէկ) . .	62	110
15	Մոխրաթաղ (Քիչիկ-Ղարաբէկ) .	78	120
16	Հոռաթաղ.		90
17	Մարդակերտ (Աղդարա) .	196	300
18	Հաթերք (Հասան-Բիզ) . .	71	138
19	Արութիւնի-Գոմեր (Ղըզլղալա). .		38
20	Կճողուտ (Եայիջի)		60
21	Վաղուհաս (Ուշաջղ I). .	34	60
22	Զափար (Ուշաջղ II) .		34
23	Դրումբօն (Գէյվալի) . .		30
24	Տօնաշէն	22	27
25	Դաստակերտ (Դաստագիր) .		15
26	Մատաղէս (Մագիզ) . . .	26	30
27	Եղակեր (Թորուսի) . .		27
28	Մաղաւուզ (Զարդախլի) .	57	130
29	Լուլասազ (Ենգիջա) . .	30	30
30	Թալիշ . . .	135	190

31	Զայլու Վերին	.	53	250
32	Զայլու Ներքին		47	
33	Մարաղա (Մարաղալու)	.	104	140
34	Սարով-Մարալեան	.	35	50
35	Սարով-Բագիւմ	.	184	230
36	Ղահրիլար (Խորուզլու)	.	28	30
37	Հասան-Ղայա	.	53	70
38	Սօվսալան	.	35	70
39	Եարմջա	.	11	10

Ի նկատի ունենալով Ջիւանշիրի գաւառում տեղի ունեցած ընդհարումները իրենց աշխարհագրական բաժանումներով, կարելի է վերածել նրանց հետևեալ երեք շրջանների.

1) Խաչէնի ձորակ կամ Խաչէն գետի հովիտ։

2) Մարդակերտի կամ Աղդարայի շրջան։

3) Թարթար գետի հովիտ, սակայն որը կարելի է դարձեալ իրեք շրջանների վերածել, այնէ՝ վերին, միջին և ստորին հովիտներ։

Կը սկսենք նախ Խաչէնի ձորակից կամ Խաչէն գետի հովտից։



ԷՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԽԱՉԻՆԻ ՁՈՐԱԿՈՒՄ ԿԱՄ ԽԱՉԻՆ ԳԵՏԻ ՀՈՎՏՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻՑ—ՆՈՅԵՄԲԵՐ 1905 Թ.

Ղրզլ-Եօխուշ, Զիչակլի, Զիլգեազ, Քիլիսալի և այլ գագաթների մի վիթխարի հիւսուածքից սկիզբն առնելով և խոշոր պըտոյտներ գործելով արևելեան ուղղութեամբ հոսում է Խաչէն գետը, իր ընթացքը փոխելով դէպի հիւսիս, երբ համանուն ձորի երբեմն լայն, երբեմն նեղ պատուածքները ողողելով՝ դուրս է պըրծնում հարթ տափարակ դաշտավայրը։

Խաչէն գետի այն վերին հոսանքը, որը ընկած է ձորի մի ընդարձակ հովտում, որի ցածի մասից հարաւային ուղղութեամբ սկսւում է Ցեխ ձորը, մեզ համար ունի մի պատմական նշանակութիւն։

Խաչէնը այն գետն է, որը կազմում է Ղարաբաղի երկու մէլիքութիւնների այն է՝ Ջրաբերդի և Խաչէնի սահմանագիծը և որի անունը կապւած է այդ երկու մէլիքութիւնների պատմական անցքերի հետ։

Խաչէնի ձորակի որ կողմը նայէք, ձեր առաջ ցցւում է մի վիթխարի կատար անտառապատ գագաթների մի հիւսուածքի վրա բազմած։ Մէկ կատարը իր ամեհի կուրծքերով գալիս զարնւում է մէկ ուրիշ կատարի կրծքի, լեռների մի հիւսուածք գալիս կըպչում է լեռների մէկ այլ հիւսուածքի, ձորը մէկ լայնանում և մէկ սղմւում է և գետը նրա քմայաճոյքին ենթակայ՝ անվերջ պտոյտներ է կազմում։ Լեռների և ձորերի այս խառնուածքը իր գեղեցկութեամբ և վայրենի տեսքով ձեզ պատճառում է և հիացմունք և սարսափ։

Այդ կատարներից որը կամենաք վերցրէք. նրա վրա գոյութիւն ունի կամ մի վանք ու սրբատեղի և կամ մի հին բերդի

մնացորդ։ Այսպէս նրանցից մէկը կոչւում է Պոկի-Սուրբ Գէորգ, միւսը՝ Կաչաղակաբերդ, երրորդը՝ Սուրբ Ստեփաննոս-Նախավկայ և այլն։

Այս ձորի մի պաշտպանուած բարձրավանդակի վրա գտնւում է Գանձասարի վանքը, որը ունեցել է իր յատուկ կաթողիկոսական աթոռը և նշանաւոր դեր է խաղացել Ղարաբաղի պատմութեան մէջ, մանաւանդ Պարսկաստանի լծից ազատւելու ժամանակ։

Խաչէնի պատմական այս ձորակում ընկած են իրենց քաջութեամբ անուն հանած հայաբնակ տասն գիւղեր, այն է՝ Շահմասուրը, Վանքը,*) Առաջաձորը, Ծմակահողը, Հայադը, Կոնաքարը, Թբլղուն, Քօլատակը, Կիչանը և Ղազանչին։

Այս ձորակի մէջ հայերի սահմանից սկսած ահագին տարածութեան վրա փռուած ղըշլաղներում ապրում են Սրխաւէնդ և Շխաւէնդ քեօլանի ցեղերը, որոնք յայտնի են իրենց աւազակային գործողութիւններով։

Խաչէնի ձորակը միևնոյն ժամանակ ծառայում է որպէս ճանապարհ այն թափառական ցեղերի համար, որոնք գարնանը իրենց կենդանիներով տափարակներից չւում են սարերը, իսկ աշնան նորից վերադառնում իրենց ձմերանոցները։

Խաչէնի այս ձորակը և թափառական ցեղերը եղան սկզբնապատճառ այն ընդհարումների, որոնք արձագանք գտնելով Աղդամի տափարակների վրա՝ տարածւեցին Շուշի և միւս գաւառները իրենց սոսկումներով, որոնց մենք պատահեցինք և դեռ երկար կը պատահենք։

Ահա թէ ինչու այս ձորակում պատահած անցքերը առաջ ենք բերում մի փոքր հանգամանօրէն։

Յուլիսի 10-ին, թէ 11-ին Ցեխ ձորում մի երկու արտասովոր սպանութիւններ տեղի ունեցան։ Սէյիդիշէնցի Աբիդօն Սարումեանցը և իր որդի 22 տարեկան Արամը Առաջաձորից տուն վերադառնալիս սպանւեցին Թուրքերի ձեռքով այդ ձորում։ Այդ նոյն օրը նոյն տեղում սպանւեց նաև առաջաձորցի Պօղոս Շաքարեանը։

---

*) Այս գիւղում ապրում են պատմական Խաչէն գաւառի նախկին տիրապետող Հասան-Ջալալեանների ժառանգները։

Բացի այս, նոյն միջոցներում սպանուեցին՝ Թբլուեցի Նիկոլա Եղիեանցը Թաւ-Գեաղուկ կոչուած տեղում և առաջաձորցի Մանաս Ազատեանցը Սրխաւէնդ գիւղի մօտ։

Այս սպանութիւններից մի քանի օր անց, յուլիսի 17-ին թէ 18-ին, Աղդամի մօտ սպանուեց իսմայիլբէկցի Իսմայիլ Մուսաբէկովը, իսկ Կիչանի մօտ՝ երկու սրխաւէնդցի թուրքեր, որոնց ձեռքով ըստ երևոյթին կատարուել էին վերը յիշուած սպանութիւնները։

Այդ դէպքերի վրա եկաւ աւելանալու և մի նոր դէպք։

Յուլիսի 25-ին Փարասանլուի և Քէնկերլուի քոչւորները սարից իջնելով՝ կանգ առան Վանք գիւղի սահմանների մօտ Սաբաթ-Քէչմազ անուն կրող տեղում։ Այդ քոչւորներից մի թուրք իր ցեղակիցներից մի ոչխար գողանալով՝ բերում ծախում է Վանք գիւղացի Շաքարի Սահակեանի վրա։ Ոչխարի տէրը իմանալով այդ՝ գալիս բռնում է ոչխարը գնող հայի օձիքից, որից և ծագում է կռիւ նրանց մէջ։

Այդ աղմուկի վրա կռուի տեղն են շտապում թուրքեր, նաև Վանք գիւղացի հայեր. սրանց թւում լինում են գիւղի քահանան— Տէր-Մէսրովբը և Գրիգոր-բէկ Հասան-Ջալալեանը, որոնց ձեռքից թուրքերը փորձում են խլել զէնքերը։

Ահա այդտեղից էլ մեծանում է կռիւը, որի ժամանակ հայերից վիրաւորւում են Շաքարի Սահակեանը և Գրիգոր-բէկ Հասան-Ջալալեանը, իսկ թուրքերից երկուսը սպանւում են և երեքը վիրաւորւում։

Սակայն մօտակայ հայ գիւղերից, ինչպէս և թուրքերից հաւաքւում են մարդիկ և հաշտութիւն կայացնում կռուող կողմերի մէջ։

Մինչ այդ, լուրը Աղդամ հասնելով թուրքերը կտրում են հանրակառքերի առաջը և գերում 18 հայ ճանապարհորդների, որոնցից երկու գիմնազիստների նաև բռնաբարում են։ Միւս կողմից 15-ի չափ թուրքեր, որոնց թւում Աղդամի պրիստաւ Իբրահիմ-բէկը, Շուքիւր-բէկ Այվազովը և Խանլըդ-Մուխտարը շտապում են ընդհարման տեղը— Վանք, ենթադրելով որ քոչւորներին հայերը կոտորում են, մինչդեռ տեղ հասնելով տեսնում են ամեն բան խաղաղած և հաշտութիւն կայացած։ Աղդամից եկած թուրքերին Վանքում Աբրահամ-բէկ Հասան-Ջալալեանը հիւրասիրում է մի ճաշկերոյթով։ Ահա այդ ճաշի ժամանակ Առաջաձորից հաւար է գա-

լիս թէ Թուրքերը կոխեցին խանութները և կողոպտում են։)

Վանքից բաւական թեով հայեր հանում են դէպքի տեղը այն ժամանակ, երբ Աղդամից եկած 150-ի չափ ձիաւոր սպառազինուած Թուրքեր կողոպտում են խանութները, որտեղից հայերը ամեն բան թողած փախել էին գիւղ։ Օգնութեան եկած հայերը կրակ են բացում կողոպտիչների վրա և փախցնում նրանց, որի ժամանակ սպանւում են երկու մարդ։ Թուրքերը փախչելով ճանապարհին կոտրատում են ջրաղացի քարեր, քշում տանում են տաւարներ, վիրաւորում պատահած մի քանի հայերի և կատարում մի շարք նման գործողութիւններ։

Այս դէպքը մի այնպիսի անյարմար դրութեան մէջ է ձգում ճաշի վրա բազմած Թուրքերին, որ նրանք ամօթից կիսակուշտ փորով բարձրանում են ճաշի վրայից և հեռանում, խոստանալով գնալ Աղդամում գերւած հայերին բաց թողնել, որը և կատարւում է։

Այս դէպքից յետոյ դրութիւնը առժամանակ խաղաղւեց և Աղդամի ճանապարհը բացւեց, բայց ոչ երկարատև։

Սարերից սկսւեց քոչերի շարժումը մի առանձին փութկոտութեամբ։ Օգոստոսի 8-ին իջան Ղըլչլուի Թուրքերը, որոնք Առաջաձորի կորեկի արտերը ուտեցնելու պատճառով ընդհարում ունեցան հայերի հետ և մարդիկ վիրաւորեցին։ Հայերը քշեցին Թուրքերի ոչխարները, բայց նորից յետ դարձրին։ **)

Այս դէպքը մի նոր առիթ դարձաւ մի շարք մասնակի սպանութիւնների և մեծաքանակ ճանապարհորդների գերութեան Աղդամում, որի արձագանքները տեղ գտան Շուշում ահռելի չափերով։

Ահա այսպէս Խաչէնի ձորակի դէպքերը տարածւեցին Ջիւանշիրի միւս մասերը, Շուշու և Գանձակի գաւառները՝ ընդունելով մի վարակիչ բնաւորութիւն։

---

*) Առաջաձորը այդ շրջանի ամենամեծ գիւղն է և ունի 30-40-ի չափ արհեստաւորներ և առևտրով պարապողներ, որոնք ամրան քոչի սեզոնում դուրս են գալիս գիւղից ցած ճանապարհի վրա խանութներ սարքում։

**) Այս դէպքի համար հայ գիւղերը ենթարկւեցին էկզեկուցիայի, 19 հայեր բանդարկւեցին, որոնք մինչև այժմ էլ գտնում են Գանձակի բանտում և որոնցից երկուսը Իսահակ Սողոմոնեանը և Հաթամ Յովհաննիսեանը այնտեղ էլ մեռան, չը կարողանալով տանել բանտային կեանքը։

Աղդամից ընդհարումն անցնելով Շուշի և Շուշում տեղի ունեցած կոտորածն ու սոսկալի հրդեհը հայոց թաղում, ինչպէս տեսանք, մեծ ոգևորութիւն առաջ բերեց Թուրքերի մէջ։ Մինչև այդ գաղտագողի կատարուած սպանութիւնները այժմ սկսեցին կատարել ակնյայտ կերպով։ Խաչէնի ձորակի Սրխաւէնդ և Շխաւէնդ քեօլանիները բացարձակ սկսեցին նեղել իրենց մօտ ընկած երկու փոքրիկ՝ Կիչան և Ղազանչի հայ գիւղերին։

Կիչանը օգոստոսի 17-ին ստիպուած եղաւ քոչել Առաջաձոր։ Այս բանը աւելի խրախուսեց Թուրքերին, որոնց սահմանների մօտ սպանուեցին մէկը միւսի յետևից երկու առաջաձորցիներ, այն է՝ Մանաս Գալստեանը, Քարհատի մօտ և Մաքի Ցարութիւնեանը, Զլդրան կոչուած տեղում. բացի այս, նրանք քշեցին սարից Առաջաձորի և Կիչանի նախիրը 75 գլխից բաղկացած։

Գնալով դրութիւնը վատացաւ. Ղազանչիի ժողովուրդը փակուեց գիւղի մէջ և չէր կարողանում գիւղից դուրս գալ։ Սրխաւէնդի և Շխաւէնդի Թուրքերը սկսեցին արշաւել դէպի աւելի հեռուն գտնուող գիւղերը։

Այսպէս, հոկտեմբերի սկզբին նրանք անցան Շուշու գաւառը և յարձակուեցին Ուլուբաբ փոքրիկ հայ գիւղի վրա նաւթով և իւղոտ լաթերով զինուած։ Հայերը փախան. Թուրքերն սկսեցին կողոպտել և հրդեհել տները, մինչև որ շրջակայ հայ գիւղերից օգնութեան հասան և յետ քշեցին նրանց, որոնք յետ քաշուելով՝ գընացին հրդեհեցին Կիչանի մի քանի լաւ տները և միանգամայն սպառնական դիրք բռնեցին դէպի Ղազանչին։

Այս այն ժամանակն էր, երբ Աղդամը իր հրոսակախմբերով արշաւում էր այս և այն կէտի վրա անարգել, երբ երթևեկութիւնը հայերի համար Աղդամի վրայով միանգամայն դադարեց և նրանք ստիպուած էին երթևեկել Գանձակի լեռնային ճանապարհով, որը անցնում էր Ջիւանշիրի վերը յիշած վայրերով, սակայն որը նոյնպէս անապահով դարձաւ շնորհիւ յիշեալ քեօլանի ցեղերի։

Ահա այս բոլորը եկան առաջ բերելու խոշոր դէպքեր։

Հոկտեմբերի 3-ին Խաչէնի ձորակի հայերը՝ տեսնելով ճանապարհի աստիճանաբար անապահով դառնալը մի կողմից, Ղազանչի գիւղի պաշարումը միւս՝ յարձակուեցին Սրխաւէնդի վրա մեծ ուժով. Թուրքերը մի կարճ դիմադրութիւնից յետոյ փախան, թողնելով մի շարք ղլլաղներ, ինչպէս են՝ Գիւլլի-Թալանը, Սրխա-

ւէնդը, Իսմայիլ-Բէկլուն, Նաջաֆ-Կուլին, Դօրբաղտուն, Ջինլու-Քիւրդը, Ջաւադ-Աղալուն և Զուլլուն հայերի ձեռքում, որոնք և աւերուեցին։

Այդ նոյն ժամանակ Թուրքերը պաշարեցին Ղազանչին, ուր ժողովուրդը անկարող լինելով օգնութիւն ստանալ և դիմադրել Թուրքերին՝ փախաւ անտառը։ Գիւղը հիմնովին կողոպտուեց և աւերուեց, որտեղից տարան և գոյքը և կենդանիները։ Այնուհետև այդտեղ մնալ անկարելի էր. հայերը Մարտիրոս անունով մի մարդ զոհ տալով քաշուեցին Առաջաձոր, Գիւլեաթաղ և այլ գիւղեր։ Մի քանի զոհեր էլ Ղազանչիում ունեցան Թուրքերը։

Ահա այս փոխադարձ աւերումներից յետոյ միայն շրջանը մի փոքր խաղաղուեց, այն էլ ոչ հաստատուն կերպով։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԴԱԿԵՐՏԻ ԿԱՄ ԱՂԴԱՐԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻՑ—ՅՈՒՆՎԱՐ 1906 Թ.

Ջիւանշիրի գաւառի երկու մեծ գետերի—Խաչէնի և Թարթարի մէջ եղած տարածութեան վրա, Կուսապատ գետակի ընթացքով, ընկած են մի խումբ գիւղեր, այն է՝ Կուսապատը, Մեծ-Շէնը, Մոխրաթաղը, Հոռաթաղը և Մարդակերտը*)։

Այս գիւղախումբը՝ շնորհիւ իր խմբակցութեան և շրջապատող ամուր դիրքերի, ազատ մնաց խոշոր ընդհարումներից, մանաւանդ որ Մարդակերտը իր կուռ գաւթներով պատնէշ էր հանդիսանում տափարակի կողմից տեղի ունեցող յարձակումներին։

Այս գիւղախմբից դէպի հարաւ 6—7 վերստի վրա ընկած են երկու գիւղեր—Գիւլեաթաղը և Ջանեաթաղը, որոնք մօտ լինելով Ղափարտու ձորին, ենթակայ էին այդ ձորում ընկած թուրք գիւղերի, այն է՝ երեք Գինէյ-Փայաների, Մանիկլուի, Սուլէյմանբէկլուի և Ղալայչիլարի յարձակումներին և սարսափներին։

Իսկ դէպի արևելք 10—15 վերստ հեռու, տափարակի վրա ընկած են դարձեալ երկու հայ գիւղեր, Սօվսալանը՝ 70 և Եարըմջան՝ 10 տնից բաղկացած, որոնք շրջապատուած թուրք տարրերով և մանաւանդ անհանգիստ—Ղարբանդ, Մամուլու, Քեօչարլու, Զրաղլու, Գեռևանդ գիւղերով՝ բոլորովին աւերուեցին։

Վերջին երկու փոքրիկ գիւղերը, կտրուած հայաբնակ վայրերից, զուրկ պաշտպանուելու միջոցներից, հասկանալի է թէ ինչ վիճակ կունենային այն օրից ի վեր, երբ Աղդամի տափարակը հան-

---

*) Այս գիւղախումբը պատմական Ջրաբերդի մելիքութեան կենտրոնական մասն է և նրա սահմաններում գտնում են նախկին տիրապետող Մելիք-Իսրայէլեանների բերդերի մնացորդները։

դիսացաւ պատերազմի մի դաշտ։ Այդպիսի պայմաններում ինքնապաշտպանութեան մասին, պարզ է, որևէ խօսք լինել չէր կարող։ Ուստի Շուշու օգոստոսեան դէպքերից յետոյ, երբ յուզմունքները Թուրքերի մէջ մեծ չափեր ընդունեցին, Եարմջայի ժողովուրդը Թողեց տուն ու տեղը և քոչեց Սօվսալան, որից յետոյ գիւղը հրդեհուեց և աւերուեց խուժանի ձեռքով։

Սօվսալանի ժողովուրդը մի առ ժամանակ կարողացաւ մնալ իր տեղում, բայց ոչ երկարատև. նոյեմբերի 18-ին տեղի ունեցան Գանձակի արիւնոտ դէպքերը, ինչպէս այդ կը տեսնենք իր տեղում, Ջիւանշիրի տափարակների վրա դրութիւնը աւելի ևս վատթարացաւ, հրոսակախմբերը ասպատակել սկսեցին ամբողջ շրջակայքը և Սօվսալանը նոյնպէս ստիպւած եղաւ քոչել։

Սօվսալանցիները նոյեմբերի 23-ին դիմեցին Մարդակերտին և նրա հարևան գիւղերին՝ քոչելու համար սղակցութիւն խնդրելով։ Անմիջապէս այդ տեղերից ուղարկուեցին 130-ի չափ սայլեր, որոնց վրա սօվսալանցիները տեղաւորելով թեթև իրերը և իրենց ընտանիքները՝ առաջին անգամ անփորձ տեղափոխուեցին Մարդակերտ։ Սակայն երբ երկրորդ անգամ մնացեալ իրերով բարձւած սայլերը պատրաստւում էին գիւղից շարժուել, յանկարծ Թուրքերը շրջապատեցին գիւղը և սկսուեց սոսկալի հրացանաձգութիւն։ Հայերը վայրկենարար ձգելով սայլերը և դիրքեր քաշելով, սկսեցին պաշտպանուել անհաւասար ուժի դէմ. այդ ժամանակ օգնութեան եկան 12 կօզակներ, բայց նրանք փախան՝ տեսնելով ահագին խուժանը. փախաւ նոյնպէս պրիստաւ Շաֆի-Բէկ Ֆաթալիբէկովը, որը նոյնպէս, իբր, օգնութեան էր եկել 40 կօզակներով։

Հայերը մինչև երեկոյ կռիւ մղելով ահագին խուժանի դէմ, ստիպւած եղան Թողնել 130 սայլերը եզներով և մեծաքանակ իրերով Թուրքերին ու մի կերպ ճանապարհ բացելով փախչել և իրենց կեանքն ազատել։

Այդ կռիւ մէջ հայերից սպանուեցին. Ջալալ Յարութիւնեանը, 30 տար., Ներսէս Ադամեանը, 40 տար., Թազա անունով մի կին և մարդակերտցիներ՝ Ներսէս Բաղոնցը, 55 տար. ու Սարգիս Յակովբեանը, 35 տարեկան։

Այս դէպքից յուզւած հայերը նոյեմբերի 24-ին մեծ ուժով յարձակուեցին մի շարք Թուրք գիւղերի վրա. տեղի ունեցան խոշոր ընդհարումներ այս և այն շրջաններում։ Ընդհարումները մեծ

ծաւալ ընդունեցին մանաւանդ Թարթար գետի ուղղութեամբ, ինչպէս այդ կը տեսնենք միւս գլխում։ Զրաղլու, Գեառաւանդ, Մամարզալար, Արփաթալա, Բուռուջ, Դամուրլար գիւղերը դատարկուեցին և հայերի ձեռքով աւերուեցին։ Թուրքերը կարողացան տանել իրերի մի մասը միայն, միւս մասը կողոպտուեց և ոչնչացաւ տների հետ միասին։

Այդ օրը հայերից սպանուեցին՝ առաջաձորցի Արշակ Ասլանեանը, մեծշէնցի Յովսէփ Գաբրելեանը և երկու հոգի էլ վիրաւորուեցին, իսկ Թուրքերն ունեցան աւելի քան 30 զոհեր։

Ընդհարումները մի ամսւայ չափ դադար առան և վերսկըսուեցին նորից դեկտեմբերի 21-ին։

Մարդակերտը յայտնի է իր հացով և Խաչէնի ձորակի հայ գիւղերին նա է մատակարարում պաշար։ Ճանապարհը Մարդակերտից դէպի Խաչէնի ձորակը ձգւում է Ղափարտուի ձորի միջով, ուր, ինչպէս վերը տեսանք, ընկած են մի քանի Թուրք գիւղեր։

Դեկտեմբերի 21-ին մի խումբ հայեր այդ ձորով անցնելու ժամանակ ընդհարում ունեցան Ղափարտուի Թուրքերի հետ. յետևից եկող ճամբորդները լուր տարան Խաչէնի ձորակի հայերին։ Այդտեղից հայերը օգնութեան հասան, որից և առաջ եկաւ մի մեծ ընդհարում։ Մի քանի ժամ տևող կռուից յետոյ ձորի 5 փոքրիկ գիւղերը՝ Մանիկլուն, Վերին, Միջին, Ներքին Գիւնէյփայաները և Սուլէյման-Բէկլուն դատարկուեցին։ Ժողովուրդը փախաւ տանելով իր հետ տնային իրերը, որից յետոյ գիւղերը աւերուեցին։ *),

Սակայն յիշեալ գիւղերի ժողովուրդը տեղափոխուելով Շխաւէնդ, Մափռաւանդ, Ալի-Աղալու, Քէնկերլու գիւղերը, ուր տեղափոխուել էին նաև Սրխաւէնդի Թուրքերը, տեղացիների հետ միասին մի մեծ արշաւախումբ կազմելով մի շարք յարձակումներ գործեցին մի կողմից Զանեաթաղ գիւղի, իսկ միւս կողմից Մարդակերտի շրջանի վրա։

Դեկտեմբերի 28-ին վաղ առաւօտեան Զանեաթաղը պաշար-

---

*) Սրանց տները մեծ մասամբ գետնափոր են, շարւածքներից ու փայտեայ մասերից զուրկ, և ընկած են միմեանցից հեռու։ Այդ է պատճառը, որ նրանք հեշտութեամբ չեն հրդեհւում և լուրջ վնասներ կրում։

ւեց թուրքերով, բայց հայերը նախօրօք իմանալով թուրքերի մտադրութիւնը և Գիւլեաթաղից օգնութիւն ստացած լինելով՝ կարողացան ուժեղ դիմադրութիւն ցոյց տալ և յետ քշել յարձակումը կորուստներով, այնպէս որ, մինչև ռուսական Ջանեաթաղից*) օգնութեան եկող 50 կօզակների տեղ հասնելը, կուրը թուլացել էր արդէն։

Այս ընդհարման ժամանակ հայերից սպանուեց 16 տարեկան մի տղա Հայրապետ Իսաջանեան անունով, այն էլ գիւղից հեռու ջրաղացի մէջ, իսկ թուրքերից՝ մի քանիսը, որոնց թւում նաև ինչ որ Վէլի-Բէկով ազգանունով յայտնի անձնաւորութիւն։

Այս դէպքը հայերին առիթ տուեց մի նոր յարձակում գործել Ալի-Աղալուի և Քէնկերլուի վրա, որոնք բաժանուած բազմաթիւ մանր ղշլաղների բռնած ունեն մի մեծ տարածութիւն Խաչէնի ձորի ստորին լանջերի վրա։

Դեկտեմբերի 29-ին Ալի-Աղալուից ժողովուրդը փախաւ մի քանի զոհեր տալով, ղշլաղները կողոպտուեցին և աւերուեցին, յարձակման ենթարկուեց նաև Քէնկերլուի մի մասը, որտեղից ժողովուրդը կարողացաւ քոչել, տանելով տնային իրերը։ Մի քանի ղշլաղներ էլ այդտեղ աւերուեցին. բայց շրջանը դարձեալ չը խաղաղուեց։

Ընդհարումների ամենամեծը տեղի ունեցաւ Մարդակերտի և Մափռաւանդի մէջ յունվարի 2-ին և 3-ին (1906 թ.)։

Մափռաւանդը աւելի քան 200 տուն ունեցող մի անհանգիստ մեծ գիւղ է, ընկած Մարդակերտից 2—3 վերստ դէպի հարաւարևելք մի սարալանջի վրա։

Ահա այդ նոյն մափռաւանդցիք յունվարի 2-ին յարձակուեցին Ղարա-Թափա կոչուած տեղում գտնուող Մարդակերտի գոմերի վրա, բայց գիւղից օգնութեան գնացած տղաները կարողացան թուրքերի ճանապարհը կտրել, ուր և տեղի ունեցաւ տաք կռիւ, որի ժամանակ հայերից սպանուեց մէկը, Սարգիս Բալա-

---

*) Սա մի փոքրիկ ռուսական գիւղ է, հայաբնակ Ջանեաթաղից 2 վերստ ցած, մի սիրուն սարահարթի վրա ընկած, որից մի փոքր ևս ցած մի բուսական տափարակի վրա շինած է զօրանոց։ Մի ժամանակ այդտեղ եղել է պետական ձիաբուծութեան վայր (КОНСВОДСТВО)։

սեան անունով, և վիրաւորեցին երկուսը. իսկ Թուրքերից սպանուեցին 14 հոգի։

Տաք կռիւ տեղի ունեցաւ նաև յաջորդ օրը, բայց այս անգամ երկու գիւղերի շուրջը։ Հայերը կարողացան այնքան առաջ գնալ, որ հրդեհեցին Մափռաւանդի ծայրին գտնուող մի քանի տներ, սակայն գիներալ Գոլոշչապովի դէպի Շուշի ճանապարհուելու պատճառաւ, ուր նա գնում էր նահանգապետի պաշտօնով, Բարդա կայարանում դիմաւորելու համար հաւաքուած ահագին թւով Թուրքերը ընդհարման լուրն առնելով մեծ բազմութեամբ օգնութեան հասան. դրանց հետ էին Ադիգեօղալ, Շամիլ և Մահմադ բէկերը ու Ասկէր-Խանը։ Օգնութիւն ստացան նաև հայերը. կռիւը աւելի ևս կատաղի բնաւորութիւն ստացաւ։ Այդ մի կատարեալ պատերազմ էր, որ մղում էին միմեանց դէմ երկու անգիտացած ժողովուրդներ։

Հայերը ճիգ էին Թափում գրաւել գիւղը և աւերել, բայց այդ նրանց չը յաջողուեց։

Կռիւ տաք ժամանակ վրա հասաւ գաւառապետի օգնական Պիվովարովը մի խումբ կօզակներով, սակայն կատաղի կռիւը դեռ երկար ժամանակ շարունակւում էր։

Հայերը պնդում են Թէ կռիւը այնքան կատաղի էր, որ կօզակները փախան իրենց գնդակների առաջից։ Թերևս ճիշտ լինի այդ բանը, բայց ոչ վախենալուց, ինչպէս հաւատացած են հայերը, այլ նրա համար, որպէս զի երկու կողմերից ընկած զոհերի Թիւը մեծ լինէր. չէ՞ որ ամեն տեղ զօրքերը այդպէս էին վարւում...

Մի ամբողջ օր տևող յամառ կռիւը դադարեց երկու կողմերի բաւականաչափ զոհերով։ Հայերից ընկել էին. մարդակերտցի Միրզա Զախարբէկեանը, Մարտի Հայրապետեանը, Ղօնդաղսազ Ղևոնդը, քօլատակցի Զալալ Մովսիսեանը, Արամ Ծաղիկեանը, Համօն, Մկօն, Սև-Արամը, Գարեգինը և բացի այդ, վիրաւորուել էին 15 հոգի, բոլորն էլ լաւ տղաներ, լաւ կեանքեր, իսկ Թուրքերի կորուստը աւելի մեծ էր. սպանուածները հաշւում էին տասնեակներով։

Այսպիսով Մափռաւանդը Թէև ազատուեց հայերի աւերումից, բայց չազատուեց կառավարութեան պատուհասից։

Վարանդայի բարբարոսութիւնների շնորհիւ հռչակ ստացած

փոխ-գնդապետ Վիվերնը պատժողական արշաւախմբով մի ամսի չափ Խաչէնի և Թարթարի ձորակների հայ գիւղերը շրջելուց յետոյ յուլիսի վերջերին հասաւ Մարդակերտ։ Յուլիսի 31-ին 10 կազակներ Մարդակերտից ուղարկուեցին Աղդամ արշաւախմբի Խանքէնդ գնալու համար պատրաստութիւններ տեսնելու նպատակով. բայց Մափռաւանդի մօտով անցնելու ժամանակ Թուրքերը կազակների վրա կրակ բացին, հաւանօրէն նրանց հայերի տեղ ընդունելով. կազակները անմիջապէս գիւղ վերադառնալով պատահած դէպքի մասին տեղեկութիւն տուին Վիվերնին, որը արշաւախումբը վերցրած գնաց յանդուգն գիւղը պատժելու։ Մի քանի ժամ շարունակ գիւղը ռմբակոծւում էր, իսկ Թուրքերը իրենց հերթում համազարկերով պատասխանում էին արշաւախմբին։ Վիվերնը վերադարձաւ Մարդակերտ վեց վիրաւորներով, որոնցից 4-ը կազակներ էին, իսկ 2-ը ստրաժնիկներ և կատաղած այդ դէպքից օգնական զօրքեր պահանջեց Գանձակից։ Եւ երբ երկու օր յետոյ նոր ուժով Մափռաւանդի վրա գնաց, Թուրքերն արդէն քոչել էին։ Դատարկ գիւղը նորից ռմբակոծուեց, աւերուեց ու հրդեհուեց։ Նոյն վիճակին ենթարկուեց նաև Ղարափիրում գիւղը և Վէլի-Բէկովի տները։

Ինչպէս և սպասելի էր, այդ աւերումներին մասնակցեցին նաև հայերը և այդ եղաւ առիթ մեղքը նրանց վրա ձգելու։ Երբ գաւառապետ Ֆլեգինսկին եկաւ դէպքի տեղը և տեսաւ հրդեհուած գիւղերը, ասում են, բարկացաւ հայերի վրա, սոսկալի ծեծի ենթարկեց մի քանիսին, մեղադրելով նրանց գիւղերը հրդեհելու մէջ։

Այո՛, այդպէս էր ադմինիստրացիայի ամբողջ տակտիկան, քաղաքագիտութիւնը . . . Աւերել երկիրը և անունը դնել հայ-թուրքական ընդհարում ու անպարտ մի կողմ քաշուել . . .

Մինթէ դարձեալ հայն էր մեղաւոր, երբ կառավարչական թնդանօթը ռմբակոծում և աւերում էր գիւղեր, թէկուզ հայը մի վայրկեան նոյնչափ անգիտացած, որքան և Թուրքը, աջակցելիս լինէր այդ աւերին։

Սակայն այս անգամ Թուրք մասսան կարծէք մի փոքր կարողացաւ գիտակցել իրականութիւնը։ Նա աւերման պատճառ համարեց գաւառապետ Ֆլեգինսկուն և որպէս յանցագործ Թարթար աւանում օգոստոսի 13-ին նա ընկաւ մի յանդուգն Թուրքի արձակած գնդակից։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԹԱՐԹԱՐ ԳԵՏԻ ՀՈՎՏՈՒՄ

1905 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ — 1906 Թ. ՅՈՒՆԻՍ

Զիւանշիրի գաւառի ամենամեծ գետը Թարթարն է, հարուստ ջրառատ, կենսատու և հրաշալի հովիտներով։ Նա ձգւում է գաւառի ամբողջ երկարութեամբ՝ սկիզբն առնելով հարաւ արևմտեան սահմաններում փուած Ղարաբաղեան լեռնաշթայից և հոսելով մինչև հիւսիսարևելեան տափարակները, ուր բաժանւելով մի քանի տասնեակ մեծ ու մանր արհեստական գետակների և առուների, ոռոգում է այդ տափարակների մի մեծ տարածութիւնը։ Թարթարը հանդիսանում է Զիւանշիրի կեանք տուողը։

Ահա այդ նոյն Թարթարի հովիտներում ընկած են Զիւանշիրի 20 գիւղերը՝ կազմելով մի քանի խմբակներ։

Այսպէս, նրա լեռնային հոսանքի վրա ընկած են՝ Հաթերքը, Արութիւնի-Գոմերը, Կճողուտը, Վաղուհասը, Զափարը և Դրումբոնը։

Ստորլեռնային հոսանքի վրա, ուր գտնւում է այժմ Շուշու լեռնային ճանապարհին որպէս անցք ծառայող Ղառը-Քեօրփի հինաւուրց կամուրջը, ընկած են՝ Մաղաւուզը, Եղակերը, Լուլասազը, Տօնաշէնը, Դաստակերտը, Մատաղէսը և դէպի հիւսիս Թալիշը։

Դէպի դաշտը, ջրերի բաշխման տեղում, ընկած են Վերին և Ներքին Զայլունկլը, ապա Մարաղան։

Իսկ բոլորովին տափարակի վրա, Զայլուններից 15—20 վերստ հեռաւորութեամբ դէպի հիւսիս, գտնւում են՝ Սարով-Մարալեանը, 50 տ., Սարով-Բագիմը, 230 տ., Ղահրիլարը, 35 տ. և Հասան-Ղայան, 70 տ.։

Թարթարի հարաւային մի ճիւղի վրա ընկած են նաև Սովսալանը և Եարմջան, սակայն որոնք աւելի մօտ լինելով Մարդակերտին և անմիջական կապ ունենալով նրա հետ միացրինք այդ շրջանին, ինչպէս տեսանք մի փոքր առաջ։

Այս շրջանում, ինչպէս և սպասելի էր, ամենից վատ վիճակ ստեղծուեց այս ամենավերջին խմբակի գիւղերի, այն է՝ երկու Սարովների, Ղահրիլարի և Հասան-Ղայայի համար, որոնք շրջապատուած լինելով չորս կողմից Թուրքերով, առանձնապէս անուն հանած Ջամիլլու, Թարթար, Դարբաթլու, Բուռուջ, Մամարզալար, Դամուրլար գիւղերով, բոլորովին զրկուած էին պաշտպանուելու հնարաւորութիւնից։

Այդ չորս գիւղերը, շնորհիւ իրենց բերրի և արգաւանդ հողերի և տոկուն աշխատանքի՝ ստեղծել էին իրենց համար նախանձելի տնտեսութիւն։ Աչքի էր ընկնում մանաւանդ Սարով-Բագիմը իր գեղեցիկ շինութիւններով, դպրոցի ու եկեղեցու շէնքերով և ապրուստի ու հագուստի եղանակով։ Բամբակի և չալթուկի մշակութիւնը դրել էր նրան բարեկեցիկ պայմանների մէջ։ Ահա այդ բոլորը աւելի ևս պղտորում էին տգէտ Թուրք մասսայի Թունաւորուած միտքը։ Սարովը համարւում էր քաղցր պատառ նոյն իսկ հարուստ բէկերի համար։

Ահա այդ չորս գիւղերն ընկան, աւերուեցին և փայ ու բաժին դարձան խուժանին, Թէև մի փոքր ուշ։

Գարնանը հարևան Թուրքերը սովորականի պէս սար բարձրանալիս պահ տուին քիրա հայերին իրենց Թանկագին իրերը և վերցնելով նրանցից մշակութեան համար աւելորդ կենդանիները, բարձեցին իրենց ծանրոցները և սար տարան։ Այս դրացիական-նահապետական փոխանակութիւնը կատարուեց շատ սովորական կերպով։ Սակայն Խաչէնի դէպքերից յետոյ Թուրքերը դեռ բոլորովին սարից վար չը եկած դուրս տարան իրենց պահ տուած իրերը։ Հայերը Այդ երևոյթը համարեցին վատ նշան։

Դրա հետ միաժամանակ Թուրքերը սկսեցին խէթ աչքով նայել հայերի վրա, իսկ վերջինները միանգամայն կասկածանքով վերաբերուել դէպի Թուրքերը։ Ահա այս դրութիւնը գնալով սուր կերպարանք ստացաւ։

Սեպտեմբերի վերջերին Թուրքերը քշեցին Հասան-Ղայայի նախիրը, աւելի քան 200 գլխից բաղկացած։ Հայերի համար ամեն բան պարզուեց. նրանք ստիպուած էին անմիջապէս քոչել Մարաղա՝ ձգելով 100 դեսեատինից աւելի բամբակը, որի կէս մասը միայն ժողոված էր և այն էլ բէկի մօտ պահ տուած։ Գիւղը դատարկուելուց

յետոյ տներն ամբողջապէս աւերուեցին։

Հոկտեմբերի 1-ին Սարով-Մարալեանի 4 տղաներ Ջանեաթաղի սահմաններում ծուղակի մէջ ընկան և երկար ու յամառ կուից յետոյ երեքն սպանուեցին, իսկ մէկն ազատուեց. մի հոգի էլ սպանուեց թուրքերից։ Սպանուածներն էին՝ Խաչատուր Թէոսեանը, 40 տ., Զրաղ Յովհաննիսեանը, 25 տ., և Մարտիրոս Տօնեանը, 30 տ.։

Այս դէպքից անմիջապէս յետոյ քոչեցին Սարով-Բագիւմ, Սարով-Մարալեան և Ղահրիլար գիւղերի հայերը, ձգելով ամէն ինչ—տուն, տեղ, արտ հանդերձ բամբակներով և չալթուկներով։

Այս համախմբումով ևս չը բաւականացած՝ Սարով-Բագիւմը դիմեց գաւառապետին զօրք և պաշտպանութիւն խնդրելով, որ և ուղարկուեցին 25 կօզակներ. սակայն դրանով էլ հայերի դրութիւնը չապահովուեց։

Հոկտեմբերի կէսին թուրքերը քշեցին Սարովի տաւարը, շուրջ 133 գլուխ, որը յետ բերել կարելի չեղաւ։

Չը նայած այս բոլորին, Սարովը դիմանում էր մի յամառ թափով։ Բայց Գանձակի դէպքերից յետոյ դրութիւնն այլևս անտանելի դարձաւ։ Թուրք բէկերը զանազան կողմերից թափուեցին Ջիւանշիրի դաշտը և սկսեցին գրգռել թուրքերին հայերի դէմ. այդ բէկերի մէջ առանձնապէս աչքի էր ընկնում Բահաթր-Բէկ Ղալաբէկովը։

Նոյեմբերի 24-25-ին թուրքերը կտրեցին Սարովի ջուրը։ Գիւղի երիտասարդները 8 կօզակներ վերցրած գնացին ջուրը բացելու, սակայն նրանք վերադարձան նոյն իսկ տեղ չը հասած։ Ահագին խուժանը պաշարել էր Զայլուն, որը ընկած է ջրերի բաժանման տեղում։ Մի քանի օր Սարովն անջուր մնաց։

Նոյեմբերի 30-ին մի քանի տղաներ կօզակներ վերցրած նորից գնացին դէպի գետը, բայց դարձեալ ապարդիւն։ Եւ մինչդեռ Սարովը տառապում էր անջրութիւնից և կենդանիները ծարաւից բառանչելով թափառում էին չոլերը, դեկտեմբերի 1-ին տեղի ունեցաւ պաշարումը։ Առաջին օրը քաջ սարովցիները կարողացան խուժանին յետ մղել, բայց պաշարումը վերսկսուեց նաև դեկտեմբերի 2-ին և 3-ին։ Երեք օր անընդհատ շարունակւում էին ընդհարումները, մինչև որ օգնութեան հասան 200-ի չափ զօրքեր և խուժանին ցրեցին։

Այդ երեք օրւայ կռիւների մէջ հայերից սպանուեցին՝ Սիմոն Թիւնիբալայեանը, 50 տար., Գալուստ Յարութիւնեանը, 25 տար.,

Ցարութիւն Սուվարեանը, 40 տար., Ռուստամ Յովհաննիսեանը, 28 տար., Հայրապետ Մարտիրոսեանը, 25 տ. և Փոթի Ռուստամեանը, 30 տ.—ընդամենը 6 մարդ և բացի այդ, երկու հոգի էլ վիրաւորուեցին։ Իսկ Թուրքերից սպանուեցին շատերը։ Սպանուեց նաև մի կօզակ, որի գլուխը Թուրքերը կտրեցին և տարան։

Այդքան զօրքերին 18 օր շարունակ կերակրելուց յետոյ ժողովուրդն այնուամենայնիւ ստիպւած եղաւ քոչել Թալիշ, Մատաղէս, Զայլու, Մարաղա, որից յետոյ ինչպէս այդ, այնպէս էլ միւս գիւղերն աւերուեցին և գեղեցիկ շէնքերը հրդեհուեցին։

Սարովի կորուստը մեծ էր, շատ մեծ. բացի գեղեցիկ տներն ու շէնքերը և քշւած կենդանիները ոչնչացել էր 11,250 փութ ցորեն, 200 ջվալ գարի և ոտի տակ գնացել էին 80 դեսիատին բամբակ, 125 դեսիատին չալթուկ, 90 դեսիատին այգի և ծառատունկ։ Սարովի և միւս երեք գիւղերի վնասը այնքան մեծ էր, որ նրանց հաշւի առնելու հնարաւորութիւն չը կար։ *)

Սարովից յետոյ Թուրքերի ուշադրութիւնը կենտրոնացաւ Մարաղայի և երկու Զայլուների վրա, որոնք ունէին մի առանձին նշանակութիւն թէ հայերի և թէ Թուրքերի համար։

Մի շարք հայ գիւղեր, ինչպէս էին՝ Մարդակերտը, Հոռաթաղը, Կուսապատը, Մեծ-Շէնը, ունէին տափարակի վրա վարելահողեր, ուր երթևեկելու և ցանքերը խնամելու համար մեծ կարևորութիւն էին ներկայանում վերը յիշւած գիւղերը։ Միւս կողմից՝ նրանք ընկած լինելով Թարթարի մեծ ջրաբաշխի վրա, որտեղից ճիւղաւորւում են բազմաթիւ առուներ, մեծ կարևորութիւն ներկայացնում էին ինքնապաշտպանութեան տեսակէտից, որովհետև Թուրքերն իրենց ունեցած առուների պատճառով ստիպւած էին շարունակ երթևեկել այդ գիւղերի սահմանների միջով, որը և ներկայանում էր նրանց համար որպէս մի սանձահարող հանգամանք։

Ահա թէ ինչու այդ գիւղերի շուրջը նոյնպէս տեղի էին ունենում ընդհարումներ և այն էլ խոշոր ընդհարումներ։

---

*) Դաշտային այս չորս գիւղերի ժողովուրդները իրենց տեղերը վերադառնալու յոյսը միանգամայն կտրել են. և մինչև անգամ սարով-բագիւմցիները նոր գիւղատեղ են ձեռք բերել դարձեալ Թարթարի հովտում և մտադիր են այդտեղ էլ հաստատուել։

Ներքին-Զայլուն, ինչպէս մի փոքր առաջ տեսանք, պաշարուեց դեռ ևս Սարով-Բագիւմի ջուրը կտրելու ժամանակ. նա ենթարկուեց մասնաւոր կողոպուտի և Թուրքերը քշեցին նրա 200 գլխից բաղկացած նախիրն, թէև գիւղն աւերել չը կարողացան։

Դեկտեմբերի 21-ին ծրագրուեց մի մեծ բազմամբոխ յարձակում, նպատակ դնելով աւերել երեք գիւղերը մի անգամից, նախ սկսելով Մարաղայից։ Այդպիսի մի ծրագիր նախատեսելով՝ հայերը նոյնպէս կենտրոնացրին ուժեր։ Սակայն այդ յարձակումը տեսելով մի ամբողջ օր, հետևանքի չը հասցրեց Թուրքերին։

Յարձակումը կրկնուեց նաև 23-ին, այս անգամ աւելի ևս մեծ ուժով ու պատրաստութեամբ. կռիւն աւելի յամառ էր քան առաջին օրը. այս անգամ Թուրքերը յետ քաշուեցին մեծ կորուստներով. նրանք ունեցել էին 63 զոհ. զոհեր ունեցան նաև հայերը, բայց ընդամենը 4 հոգի։ Դրանք էին՝ մարաղացի Միրզաջան և Աւանէս Աղթամանեանները, Հասան-Ղայա գիւղացի Դամրչի Յարութիւնը և մի շուշեցի վաճառական։ Բացի այդ, վիրաւորուել էին երկու հոգի։

Ընդհարումների մի շարք տեղի ունեցաւ Թարթար գետի վերին հոսանքի հայ գիւղախմբի շուրջը։

Հաթերք, Արութիւնի-Գոմեր, Կճողուտ, Վաղուհաս, Զափար և Դրումբոն գիւղերի շրջանում կայ մի կիրճ Սարսանգ անունով, որի միջով ձգւում է այդ շրջանի ճանապարհը. ահա հայ-Թուրքական յարաբերութիւնները լարուելուց յետոյ այդ կիրճը հայերի համար դարձաւ վտանգաւոր։

Ումուդտու, Գեուանդ-Իմարաթ, Զօբան-Սայ, Զրաղլու, ահա այն անհանգիստ գիւղերը, որոնք իրենց աւազակային գործողութիւններով շրջականները պահում էին սարսափի տակ։ Նրանց գործողութիւններից մեզ յայտնի են միմիայն մի երկուսը։

Դեկտեմբերի կիսին Արութիւնի-Գոմերի սահմաններից Թուրքերը քշեցին Քօլանց Իւանի 18 ձիերը։

Մի երկու օր անց Ումուդտուի սահմաններում սպանուեց Վերդի Դանելեանը։

Դեկտեմբերի 23-ին Ումուդտու գիւղի մի խումբ Թուրքեր ընդհարում ունեցան Կճողուտ գիւղի հայերի հետ, որը ծանր հետևանք ունեցաւ։ Հայերը շրջակայ գիւղերից օգնութիւն ստանալով

յարձակեցին Ումուդտու և Գեուանդ-Իմարաթ գիւղերի վրա։ Մի քանի ժամ տևող դիմադրութիւնը չը փրկեց Թուրքերին կոտորածից։ Հայերը ներս խուժեցին այդ երկու գիւղերը՝ բարբարոսութիւններ գործելով։

Հայ խուժանը ոչ պակաս Թուրք խուժանից Ումուդտու գիւղում երևան հանեց չարագործութեան տեսակները, անխնայ սպանելով աջ ու ձախ։ Թրքուհին այդտեղ, պատմում են, հերոսութեան օրինակներ տուեց։ Մէկը նրանցից, տարիքով երիտասարդ, խլեց իր ամուսնուն սպանող հայի ձեռքից սուրը և խրեց իր կուրծքը։ Այդ երկու գիւղերի մէջ ընկան տասնեակներով մարդ և կին. սակայն աւելի սոսկալի բան տեղի ունեցաւ կոտորածից յետոյ։

Ականատեսի պատմելով, կոտորածից ազատուողներից այնպիսիները, որոնք չէին կարողացել երկար ճանապարհ գնալ, մնացել էին անտառի մէջ և ցրտից սառել։ Այսպէս, մի կին սառել էր երեխան գրկի մէջ, մի մարդ սառել էր կանգնած տեղը ծառից ամուր բռնած դրութեամբ և շատ այսպիսի օրինակներ։

Մի տարւայ սարսափների և ոճիրների դաստիարակութիւնը դուրս էր քաշել մարդկանց կրծքի տակ պահւած թոթոուն սիրտը և նրանց ընդունակ դարձրել բարբարոսութիւնների։ Ժամանակն այսպիսի բարքերի ընտելացրեց նաև խաղաղ աշխատանքի սովոր հային։

Ընդհարումներն առ ժամանակ դադարեցին և տիրեց մի այնպիսի լռութիւն, որպիսին տեղի է ունենում մեծ աղէտներից յետոյ։ Այսպէս էր ձմրան ամիսների ընթացքում. սակայն եկաւ ամառը և քոչւորների սար դուրս գալով նոր ընդհարումներ տեղի ունեցան։

Մուսի և Կօթուրլուի ստորոտներում իջան Ջինլու, Նարիշտար ցեղերը և Ղափարտուի քեօլանիները։ Այստեղ դուրս եկան սովորականի պէս նաև Վանք գիւղացիք, սակայն վերջինները յունիսի 20-ին ստիպւած եղան գիւղ վերադառնալ։

Յունիսի 21-ին Թուրք քոչւորները քշեցին Հաթերքի 7 գոմէշները, որից և առաջ եկան նոր ընդհարումներ, կրկնւելով 22-ին և 24-ին, որ և յիշեալ քոչւորները ստիպուած եղան չլել այդտեղից՝ տալով մի քանի զոհեր։

Ահա այս դէպքերը եղան պատճառ փոխ-գնդապետ Վիվերնի հրամանատարութեամբ պատժողական արշաւախմբի Ջիւանշիր գալուն, որի ձեռքով, ինչպէս վերը տեսանք, յուլիսի 31-ին աւերւեցին Մափրաւանդ և Ղարափիրում Թուրք գիւղերը։

Ցուցակ Ջիւանշիրի գաւառի այն գիւղերի, որոնց ժողովուրդը փախել կամ խոշոր վնասներ է կրել ընդհարումների ժամանակ։

ՀԱՑ ԳԻՒՂԵՐ

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն.	Գոչած.	Կողոպուտ.	Աւերս.	Կատրած.
1	Կիչան .	35	քոչ.	—	աւեր.	—
2	Ղազանչի	40	,,	կող.	,,	—
3	Սէյսօլան . .	70	,,	,,	,,	—
4	Եարմջա . .	10	,,	,,	,,	—
5	Հասան-Ղայա .	70	,,	,,	,,	—
6	Սարով-Մարալեան .	50	,,	,,	,,	—
7	Սարով-Բագիւմ	230	,,	,,	,,	—
8	Ղահրիլար .	30	,,	,,	,,	—
9	Զայլու	120	—	,,	—	—

ԹՈՒՐՔ ԳԻՒՂԵՐ

1	Սրխավէնդ	140	քոչ.	—	աւեր.	—
2	Ղղլաղներ	—	,,	—	,,	—
3	Զրաղլու .	50	,,	—	,,	—
4	Գեռևանդ	70	,,	—	,,	—
5	Մամարզալար .	35	,,	—	,,	—
6	Արփաթալա	—	,,	—	,,	—
7	Բուռուջ .	60	,,	—	,,	—
8	Դամուրլար .	25	,,	—	,,	—
9	Գիւնէյ-Փայաններ	70	,,	—	,,	—
10	Մանիկլու . .	20	,,	—	,,	—
11	Սուլէյման-Բէկլու .	20	,,	—	,,	—
12	Ալի-Աղալու .	40	,,	—	,,	—
13	Քէնկերլու . . .	—	,,		,,	—
14	Մափռաւանդ (կօղ. ձեռք.)	100	,,	—	,,	—
15	Ղարափիրում (,, ,,)	70	,,	—	,,	—
16	Ումուդտու . . .	50	,,	կող.	,,	կող.
17	Գեռևանդ-Իմարաթ	90	,,	,,	,,	—

ԶԻԲՐԱՅԻԼԻ ԳԱՒԱՌ

Զիբրայիլի գաւառն ընկած է Շուշու և Զանգեզուրի գաւառների հարաւարևելեան կողմը, տարածելով մի կողմից մինչև Արաքսը, որը կազմում է Պարսկաստանի սահմանագիծը, իսկ միւս կողմից՝ մինչև Բագուի նահանգը։

Զիբրայիլի գաւառը թէ իր տարածութեամբ և թէ ազգաբնակութեան թւով նահանգի ութ գաւառների շարքում, Արէշի գաւառից յետոյ, բռնում է ամենայետին տեղը։ Նոյնպիսի տեղ բռնում է նա միևնոյն ժամանակ հայ ազգաբնակութեան թւի նըկատմամբ։

Գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 67 հազար, որից թուրքերը՝ 50 հազար, իսկ հայերը՝ ընդամենը 16 հազար։

Զիբրայիլի գաւառը իր աշխարհագրական կազմուածքով հետևեալ պատկերն է ներկայացնում. հիւսիսային և արևմտեան մասերը լեռնոտ են և հարուստ բարձր գագաթներով, սակայն զուրկ Սիւնեաց աշխարհին յատուկ ճոխ անտառներից. ամենաբարձր գագաթ համարւում է Զիարաթը, որը ունի 8000 ոտնաչափ բարձրութիւն։ Իսկ արևելեան և հարաւային մասերը ամբողջապէս դաշտային են, ձգւելով մի կողմից մինչև Արաքսը, իսկ միւս կողմից՝ մինչև Մէլին անապատը։

Հայերն ապրում են լեռնային և ստորլեռնային մասում, որը կազմում է Վարանդայի շարունակութիւնը հարաւարևելեան կողմից, սակայն շրջապատուած թուրք գիւղերով։ Իսկ թուրքերը բրոնած ունեն տափարակները, թէև նրանց թիւը փոքր չէ նաև լեռնային մասերում։

Զիբրայիլի գաւառի այն շրջանը, ուր ապրում են հայերը, պատմական Դիզակն է, բայց ոչ ամբողջը. նա աւելի մեծ էր և ունէր 47 գիւղ. դրանցից 12-ը, ինչպէս Շուշու գաւառի նկարագրութեան մէջ տեսանք, այժմ միացած են Շուշու գաւառին. իսկ 3-ը՝ Զանգեզուրին. մնացեալ 32 գիւղերը գտնւում են Զիբրայիլի գաւառում։

Ջիբրայիլի գաւառում հաշուում են 171 գիւղեր, որի հետեւեալ 32-ը հայաբնակ են։

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն պաշտոնական թւերը
1	Քիւրաթաղ (Դուդուկչի)	33
2	Էդիլլու—8 տունը թուրք .	92
3	Ախլլու (Գամբլլու)—31 տունը թուրք.	60
4	Աղբուլաղ .	27
5	Խրմանջուղ	57
6	Պլէթանց (Պլուտան)	27
7	Մէլիք-Ջանլու (Մալիշան) .	28
8	Քոչբէկ (Կոչբէկլու)	19
9	Կամրակուչ	49
10	Վրինշատ (Էդիշա)	41
11	Սարիշէն (Շագախ)	66
12	Թաղասեռ (Տօգասեր)	103
13	Հադրութ	243
14	Վանք	31
15	Տաք (Տանգ)	33
16	Ցոր (Սուր)	69
17	Նորշէն	22
18	Ղուշչիլար .	11
19	Ջամձոր (Ջամզուր)	84
20	Մուլքադարա	32
21	Քարագլուխ (Դաշբաշի)	27
22	Բանազուր .	140

23	Առաքել (Արակիլ)	91
24	Ջիլան	29
25	Բինիաթտու	22
26	Դօլանլար (Արգիւնաշ)	68
27	Խծաբերդ (Խուզաբերդ)	56
28	Արփագեաղուկ	—
29	Թէզխարաբ	33
30	Հին-Թաղլար	28
31	Սպիտակշէն (Աղջաքէնդ)	39
32	Խանձաձոր	—

Բացի այս 32 գիւղերը առևտրով պարապող 25 տան չափ հայեր ապրում էին կէսը մօլոկան, կէսը Թուրք բնակչութիւն ունեցող Ղարաբուլաղ գիւղում, որը յայտնի է իր բազարով։

Ջիբրայիլի գաւառում տեղի ունեցած ընդհարումները կարելի է բաժանել հետևեալ չորս շրջանների։

1) Ղուզէ գիւղեր։
2) Հաղրութի ձոր։
3) Բանազուրի ձոր
4) Սարի գիւղեր։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՂՈՒԶԷ ԳԻՒՂԵՐԻ ՀՐՋԱՆՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍ 1905 Թ. ԵՒ ՕԳՈՍՏՈՍ 1906 Թ.

Զիբրայիլի հայաբնակ 32 գիւղերից վեցը, այն է՝ Խծաբերդը, Արփագեաղուկը, Թէզխարաբը, Հին-Թաղլարը, Սպիտակշէնը և Խանձաձորը ընկած են լեռնային ամենաբարձր շրջանում, Զիարաթի այս և այն փէշերի վրա, միմեանցից անջատ թուրք գիւղերով շրջապատուած։ Այս վեց գիւղերը կոչւում են Սարի գիւղեր և գտնւում են ապահովութեան կողմից աննպաստ պայմանների մէջ։

Զիարաթի հարաւարևելեան ստորին փէշերին, Բանազուրի ձորակում, համանուն գետակի հովիտների վրա ընկած են Զամձոր, Միւլքադարա, Քարագլուխ, Բանազուր, Առաքել, Զիլան, Բինեաթտու և Դօլանլար գիւղերը, դարձեալ թուրքերով շրջապատուած։

Բանազուրի ձորից դէպի հիւսիս ձգւած Հաղրութի ձորակում կամ Ղօզլու գետի հովիտների վրա գտնւում են Կամրակուշ, Վրինշատ, Սարիշէն, Թաղասեռ, Հաղրութ, Վանք, Տաք, Ցոր, Նորշէն և Ղուշչիլար գիւղերը, որոնցից առաջին եօթը համախմբուած են ձորակի վերին մասում, իսկ վերջին երեքը՝ ցածի մասում, հայաբնակ գիւղերից անջատ, թուրքերով շրջապատուած, նոյնպէս անապահով պայմանների մէջ։

Իսկ Հաղրութի ձորակից աւելի ևս հիւսիս, դէպի դաշտային շրջանը, մի շարքում ընկած են Զիբրայիլի մնացած ութը գիւղերը, այն է՝ Քիւրաթաղը, Էդիլլուն, Ախլլուն, Աղբուլաղը, Խրմանջուղը, Պլէթանցը, Մէլիքջանլուն և Քոչբէկը, որոնք միասին մի ընդհանուր անունով կոչւում են Ղուզէ գիւղեր։ *)

---

*) Ղուզէ կը նշանակի շաք. Ղուզէ գիւղեր՝ շաքում ընկած գիւղեր. իսկ Գիւնէյ՝ արևկող. այս իմաստով կոչւում են Վարանդայի երկու գիւղերը, Գիւնէյ և Ղուզէ ձարտարները, որոնց պատահեցինք միւս գլխում։

Ահա Ղուզէ գիւղերից էլ սկսեցին Զիբրայիլի ընդհարումները, ընկած լինելով հայ գիւղերի առաջին շարքում և գտնուելով Թուրքերի հետ անմիջական շփման մէջ։

Զիբրայիլը ազատ մնալ չէր կարող հայ-Թուրքական ընդհարումներից այն պարզ պատճառով, նախ՝ որ այս գաւառում, ինչպէս վերը տեսանք, հայերը կազմում են չնչին փոքրամասնութիւն, այն էլ ցրուած մեծ տարածութեան վրա և երկրորդ՝ Թուրքերը գտնուելով Պարսկաստանի հետ անմիջական յարաբերութեան մէջ, աւելի ևս տրամադիր էին դէպի աւարառութիւնները, աջակցութիւն և խրախոյս գտնելով պարսկահպատակ ցեղակիցներից։

Առաջին անգամ, երբ Շուշում տեղի ունեցաւ հայ-Թուրքական ընդհարումը, Զիբրայիլի դաշտերում Թուրք տարրերի մէջ նկատուեց մեծ շարժում, սակայն սկզբում ոչ տեղացի հայ գիւղերի դէմ, այլ դէպի քաղաք արշաւելու դիտաւորութեամբ։ Բայց մինչև որ նրանք կը հասնէին տեղ, քաղաքի մուտքերը փակուած էին արդէն. դաշտի կողմից Ասկէրանով, իսկ Զարսլուի կողմից՝ Վերին-Դոնեերով։

Օգոստոսի 22-ին Զիբրայիլի Թուրքերը խումբ խումբ վերադառնալով Աղդամից և Զարսլուից դատարկաձեռն, միևնոյն ժամանակ յուզուած այն բանից, որ Ասկէրանում իրենց հաւատակիցները մեծ ջարդեր էին կրել, խորհուրդ անելով Ղարաբուլաղում հաւաքուած Զիբրայիլի յայտնի բէկերի հետ, յաջորդ օրը պատրաստեցին յարձակուել տեղացի հայերի վրա. վերջիններս նկատելով այդ և միևնոյն ժամանակ անկարող լինելով պաշտպանուել շրջապատող տարրից՝ փախան Հադրութ, ունեցած չունեցածը Թողնելով Թուրքերի ձեռքը։ Այդպիսով Ղարաբուլաղի հայերի գոյքը ամբողջապէս կողոպտուեց, Թէև մարդկային զոհեր նրանք չունեցան։

Այդ նոյն օրը, օգոստոսի 23-ին, Թուրքերի մի մեծ խուժան առաջնորդութեամբ Ղարաբուլաղի և Ղօչահմադտուի Թուրք գիւղացիների՝ յարձակուեցին Քիւրաթաղի վրա։ Չը մոռանանք ասել, որ Ղարաբուլաղի Թուրքերը ղեկավարում էին նաև Վարանդայի յարձակումները։ Քիւրաթաղը շնորհիւ իր երիտասարդների կարող եղաւ յետ մղել առաջին յարձակումը. սակայն նա անկարող եղաւ դիմադրել երկրորդին։ Գիւղը դատարկուեց, ժողովուրդը փախաւ իրարանցումով և Թուրք խուժանը ներս

թափելով՝ սկսեց կողոպտել տները։

Ապա խուժանը յարձակուեց Էդիլլու գիւղի վրա, ուր մի բուռն երիտասարդներ կարողացան ուժեղ դիմադրութիւն ցոյց տալ և խուժանին յետ քշել։

Յարձակման ենթարկուեցին միաժամանակ Ախլլու և Աղբուլաղ գիւղերը. դիմադրութեան փորձերն ապարդիւն անցան։ Մի քանի հոգու զարկուելը աւելի ևս կատաղեցրեց խուժանին։ Հայերը ստիպուած եղան փախուստի դիմել. այս գիւղերը նոյնպէս ենթարկուեցին կողոպուտի։

Եւ մինչդեռ Հադրութից երիտասարդների մի խումբ օգնութեան կը հասնէր Ախլլու և Աղբուլաղ գիւղերին, ճանապարհին պաշարուած գտաւ Խրմանջուղ գիւղը, որտեղից ժողովուրդը փախել էր՝ զոհ տալով մի պառաւ կին և մի ծերունի մարդ,—Խաչի անունով։ Այդ խումբը ճանապարհը ծռելով Խրմանջուղ, մտաւ այն ժամանակ, երբ խուժանը կողոպտում էր գիւղը։ Տեղացող կրակը այնքան անսպասելի էր և կորստաբեր խուժանի համար, որ նա փախուստի դիմեց ոչ միայն դատարկաձեռն, այլ և բազմաթիւ զոհեր տալով։

Ականատեսի վկայութեամբ 50-ից աւելի դիակներ մնացին գիւղի մէջ և ճանապարհներին ընկած։

Խրմանջուղը երկրորդ անգամ յարձակման ենթարկուեց այդ դէպքից երկու օր անց. բայց այս անգամ գիւղը պաշտպանել անկարելի եղաւ։ Յարձակման փորձեր տեղի ունեցան նաև Մէլիք-Ջանլու գիւղի շուրջը, որի վրա դարձնել տալով հայերի ուշադրութիւնը, խուժանը դրաւեց Խրմանջուղը և կողոպտեց։

Խրմանջուղը հարուստ գիւղ էր, հարուստ հացահատիկներով և ցորենի լի հորերով ու ամբարներով. ահա այդ բոլորը թուրք խուժանը կրեց տարաւ ձիերով, սայլերով և ուղտերով, միևնոյն ժամանակ հրդեհելով տները, մետաքսի գործարանը՝ իր մի քանի տասնեակ հազարներ արժեցող շէնքով ու մթերքներով։

Կողոպուտի այս առատ ու ազատ ձևը աւելի ևս խուժան դրաւեց։ Հայ գիւղերի դրութիւնը գնալով վտանգաւոր դարձաւ. Քիւրթաղը, Ախլլուն, Աղբուլաղը և Խրմանջուղը դատարկուելուց և կողոպտուելուց յետոյ, դատարկուեցին նաև մնացեալ չորս գիւղերը, այն է՝ Էդիլլուն, Պլէթանցը, Մէլիք-Ջանլուն և Քոչբէկը, թողնելով կալն ու կուտը, արտն ու այգին մի քանի հրացանա-

ւորների յուսով, սակայն որոնք դիրքերից վեր գալ և այդ բոլորը պահպանել անկարող էին։

Այս տեղի ունէր օգոստոսի 27-ին։

Այդ օրից անցան ամիսներ. աւերուած գիւղերը մի կերպ վերաշինուեցին և փախած ժողովուրդը յետ դարձաւ, բայց յարձակումները չը դադարեցին։

Մէլիք-Ջանլուն կրկրորդ անգամ յարձակման ենթարկուեց մի ամբողջ տարի անցնելուց յետոյ։ Այդ յարձակումը տեղի ունեցաւ օգոստոսի 16-ին 1906 թ. Ղարադաղլու և Գիւզլակ գիւղերի թուրքերի կողմից, բայց անյաջող վախճանով։ Հայերն այս անգամ աւելի պատրաստուած էին, քան առաջին անգամ. թուրքերն ուժեղ դիմադրութեան հանդիպելով՝ փախան, որոնց հալածելով հայերը յարձակուեցին նրանց գիւղերի վրա։ Այդ երկու գիւղերից ժողովուրդը փախաւ բաւական զոհեր տալով։ Հայերը ներս խուժեցին գիւղերը և կուտակուած զայրոյթը թափեցին դատարկուած տների վրա՝ անխնայ այրելով և աւերելով նրանց։

Այդպէս էր ընդհարումների ընթացքը Ղուզէ գիւղերի շրջանում։

Այժմ տեսնենք ինչեր կատարուեցին Հադրութի ձորում։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՀԱԴՐՈՒԹԻ ՁՈՐԻ ՇՐՋԱ-ՆՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍ 1905 Թ.

Ինչպէս վերը տեսանք, Հադրութի շրջանի գիւղերից երկուսը—Նորշէնը և Ղուշչիլարը ընկած են ձորի ստորին մասում և գտնւում են այնպիսի պայմանների մէջ, ինչպիսի պայմանների մէջ գտնւում են Ղուզէ գիւղերը։

Մենք տեսանք նոյնպէս, որ Ղուզէ գիւղերից չորսը դեռ ևս օգոստոս ամսին ենթարկւեցին յարձակման և կողոպտւեցին, իսկ միւս չորսը անխուսափելի վտանգն իրենց առաջ ցցած տեսնելով, ինքնակամ դատարկւեցին և ժողովուրդը տեղափոխւեց Հադրութի ձորի գիւղերը։

Ահա այս տեսնելով Նորշէնի և Ղուշչիլարի ժողովուրդները նոյնպէս ստիպւած եղան դատարկել տները և տեղափոխւել վերի գիւղերը։

Այս շրջանում իր անհանգիստ բարքերով աչքի էր ընկնում Սուլէյմանլու գիւղը։

Օգոստոսի 28-ին Սուլէյմանլուի թուրքերը յարձակւեցին Ղուշչիլարի վրա և դատարկւած գիւղի դատարկ տները սկսեցին կողոպտել, հանելով թաղւած տեղերից պահւած իրերը, դռներն ու լուսամուտները և այն բոլորը, ինչ որ կարելի էր տանել։

Իսկ 29-ի առաւօտեան, օրը երկուշաբթի, Ղշլաղ գիւղի թուրքերը յարձակւեցին և հանդից քշեցին Ցոր գիւղի տաւարը։

Այդ օրը գաւառապետ Ցինբալովի մասնակցութեամբ տեղի պիտի ունենար երկու կողմերի մէջ հաշտութիւն։

Ցորի տաւարը քշելու լուրն առնելով՝ Հադրութից և շրջակայ գիւղերից օգնութեան հասնող տղաների շնորհիւ կարելի եղաւ տաւարը յետ բերել, սակայն մեծ դժւարութեամբ. աղմուկը

ձգեց ու բերեց ահագին թւով թուրքեր, որոնք հասան մինչև Ցորի սահմանները։ Մի յամառ և երկարատև կռիւ մղելուց յետոյ հայերին յաջողւեց յետ քշել թուրքերին և նոյն իսկ յարձակւել Ղշլաղ գիւղի վրա, որը ընկած է Ցորից փոքր ինչ ցած և կողոպտել ու այրել բաւականաչափ տներ, որտեղից ժողովուրդը փախաւ, թողնելով 3 դիակ։

Դրա հետ միաժամանակ թուրքերը յարձակւեցին Բանազուր գիւղի բինանների և քումերի (շերամապահութեան տներ) վրա, որոնք գտնւում էին թուրքերի սահմանների մօտ, Ղըլշլու կոչւած տեղում և աւերեցին ու հրդեհեցին եղած չեղածը։

Հադրութի ձորակի միւս գիւղերն ազատ մնացին յարձակումներից շնորհիւ այն բանի, որ նրանք ընկած էին միմեանց մօտ և պաշտպանութեան համար յարմարաւոր տեղերում։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԱԶՈՒՐԻ ՁՈՐԱԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1905 Թ.

Ջիբրայիլի գաւառում ամենից քիչ զրկանքներ կրել է այս շրջանը։

Շնորհիւ այն հանգամանքի, որ հայ գիւղերը այս շրջանում օժտուած էին անառիկ դիրքերով, կարողացան ազատ մնալ մասսայական յարձակումներից և առաջ գալիք չարիքներից. սակայն նրանք ազատ չէին մասնակի սպանութիւններից և յափշտակութիւններից, որոնք տեղի ունէին դեռ ևս օգոստոսի սկզբներից շնորհիւ Ջիբրայիլի լեռները չլող քոչւորների և տեղացի Ալիանլու անհանգիստ ցեղի։

Այսպէս, Մուլքադարա գիւղի հանդից Թուրքերը քշեցին 8 տաւար, խլելով տիրոջ ձեռքի զէնքը։

Մի երկու օր անց քշեցին Ջիլան գիւղի նախիրը, որը բաղկացած էր 60 գլուխ կովերից և եզներից։

Ապա Բանազուրի հանդից քշեցին գիւղացիների ցորենով բարձած 5 ջորիները։

Բայց այսպիսի մանր աւարներով Թուրքերը չէին բաւականանում։

Սեպտեմբերի 14-ին յարձակման ենթարկուեց միայնակ ընկած Դօլանլար գիւղը։ Մի ամբողջ օր կռիւ տալով Թուրքերը անկարող եղան գիւղը խուժել։ Յաջորդ օրը թէև փոքրաթիւ, բայց մի քանի քաջ հրացանաւորների շնորհիւ կարելի եղաւ Թուրքերին յետ քշել, որոնք երկու զոհ տալով հեռացան, կրակելով գիւղի ծայրում ընկած երկու տուն, մի քանի դարմանանոցներ և մի ջրաղաց, բարբարոսաբար սպանելով ջրաղացում եղող մի հայի։ Յարձակման ժամանակ գիւղի մէջ վիրաւորուեցին 4 մարդ։

Հոկտեմբերի 16-ին աւելի մեծ յարձակման ենթարկուեց Մուլքադարա գիւղը։ Գիւղի արևմտեան կողմում ցցած ժայռերի կատարներից հայերը մի ամբողջ օր դիմադրեցին Թուրքերին, մինչև որ մօտակայ գիւղերից օգնութիւն ստանալով՝ միւս օրը կարողացան յետ քշել նրանց, որոնք փախան մի քանի զոհեր տալով։

Հայերը չը բաւականացած Թուրքերի փախուստով՝ իրենց հերթում յարձակուեցին երկու Թուրք գիւղերի, այն է՝ Աշղ-Մէլիքլուի և Մազրայի վրա, որտեղերից ժողովուրդը փախաւ շփոթուած և տները բոլորովին աւերեցին։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՐԻ ԳԻՒՂԵՐԻ ՇԸՐՋԱՆՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1905 Թ.

Զիարաթի ժլատ ստորոտները շատ նօսր են բնակւած։ Բնութեան անհիւրընկալ այդ վայրերը անկարող են եղել կենդանի էակների մեծ համախմբումներ գրաւել և այդ է պատճառը, որ դարերով լեռնոտ և անմատչելի գիւղատեղեր փնտռող հալածական հայ ժողովուրդը քիչ չափով է այդտեղ ապաստան գտել. ընդամենը վեց գիւղեր, այն էլ փոքր ու սակաւամարդ, ընկած են միմեանցից բաւական հեռու հեռու այդ լանջերում։ Այդ գիւղերն են՝ Խծաբերդը, Արփագեադուկը, Թէզխարաբը, Հին-Թաղլարը, Սպիտակշէնը և Խանձաձորը։

Այս շրջանում աւելի մեծ չափով բնակութիւն են հաստատել կուլտուրայից ու լոյսից խուսափող գետնափորերում ապրող Թուրք՝ առանձնապէս Այլանլու և Մուսուրմանլար ցեղերը, որոնք և եղել են այս շրջանի չարիքը։

Այսպիսի մի դրութիւն ինքն ըստ ինքեան բաւական էր սարի գիւղերը անապահով դարձնելու համար։

Այս շրջանի երկու գիւղերը, այն է՝ Խծաբերդը և Հին-Թաղլարը շատ ու քիչ հնարաւորութիւն ունէին պաշտպանւելու և իրենց տեղերում կայուն էին. ինչ վերաբերում է միւս գիւղերին, ինչպէս ասում են, նրանք փշի վրայ էին նստած։ Բաւական էր մի փոքրիկ դէպք, որ այդ գիւղերի ժողովուրդները ձգէին իրենց տուն ու տեղը և քոչէին ուր էլ որ լինէր։

Թուրքերի առաջին յարձակմանը ենթարկւեց Արփագեադուկը։ Փոքրիկ գիւղը փոքրիկ էլ դիմադրութիւն ցոյց տւեց։ Արփագեադուկցին կանգնեց մի վայրկեան, փորձեց՝ թոյլ չը տալ Թուրքին գիւղ մտնելու, բայց ինքն էլ չը հաւատաց իր ուժերին, մի քանի

պայթոցներ, մի յուսակտուր ճիգ և նա առաւ իր կինն ու երեխաները և քոչեց Խծաբերդ, թողնելով խուժանին նոյն իսկ ցորենի դէզերը։

Այդ դէպքից յետոյ քոչեցին Խծաբերդ նաև Սպիտակշէնի և Թէզխարաբի հայերը, այլևս իրենց գիւղերը չը վերադառնալու մտքով։

Ահա այս բնաւեր եղած ժողովրդից կազմուեցին միջավայրին յատուկ արշաւախմբեր՝ կուռելու շարունակուող յարձակումների դէմ, սակայն որոնցից մէկն ունեցաւ մի հերոսական վախճան։ Այդ խմբում 14 հոգի էին—14 քաջ երիտասարդներ, որոնք Ֆարաջան թուրք գիւղի մօտ կռուի բռնուելով՝ նեղն ընկած մտան մի ջրաղաց։

Երկու օրւայ հերոսական դիմադրութիւնից յետոյ, պատմում են, Ֆերբ խուժանը հրդեհեց ջրաղացը, պաշարուածները գերադասեցին իրենց ձեռքով սպանուել. նախ նրանք փչացրին բոլոր զէնքերը և ապա իրենց դաշոյններով ինքնասպան եղան և ընկան հերոսաբար։ Այս անօրինակ մարտիրոսութիւնը, որը տեղի ունեցաւ յունվարի 27-ին, սարսափ ազդեց նոյն իսկ գազանացած խուժանի վրա։

Անցան ամիսներ. ընդհարումները կորցրին իրենց սուր բնաւորութիւնը. միւս շրջանների աւերուած գիւղերի ժողովուրդները նորից յետ դարձան իրենց գիւղերը, բայց այս երեք գիւղերի ժողովուրդները այլևս չը դարձան, այլ բաւական երկար ժամանակ ապրելով Խծաբերդում, այդտեղից էլ անցան Ջիւանշիրի գաւառը դէպի Թարթարի հովիտը, մի ապահով և հիւրընկալ անկիւն փընտրելու համար։

Մինչդեռ այս բոլորը կատարւում էր Ջիբրայիլի պէս թուրքաբնակ գաւառում, գեներալ Տակայշվիլին այդ շրջանը խաղաղացնելու համար լիազօրութիւն էր տուել Հուսէին-Աղա Ջիւանշիրին, այն մարդուն, որը համարւում էր հայ-թուրքական ընդհարումների կողմնակից և մաքսատան ծառայող Արիստակէս Տէր-Սրապեանի սպանութեան մեղսակից։ Իսկ գաւառապետ Ցիմբալովը զբաղւած էր կոմիտիայով—երկու թշնամի ժողովուրդներին հաշտեցնելու գործով։ Եւ ինչո՞ւ զարմանանք. չէ՞ որ Ցիմբալովը մի օղակն էր այն մոգական շղթայի, որի մէջ կաշկանդւած էր ամբողջ Կովկասը։

Ցուցակ Չիբրայիլի գաւառի այն գիւղերի, որոնց ժողովուրդը փախել կամ խոշոր վնասներ է կրել ընդհարումների ժամանակ։

ՀԱՑ ԳԻՒՂԵՐ

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն.	Քոչած.	Կողոպտ.	Աւերուած.
1	Ղարաբուլաղ .	25	քոչ.	կող.	—
2	Քիւրաթաղ	33	,,	,,	աւեր.
3	Ախբլլու .	29	,,	,,	—
4	Աղբուլաղ	27	,,	,,	—
5	Խրմանջուղ	57	,,	,,	աւեր.
6	Էդիլլու .	84	,,	—	,,
7	Պլէթանց .	27	,,	—	,,
8	Մէլիք-Ջանլու	28	,,	—	,,
9	Քոչբէկ .	19	,,	–	,,
10	Նորշէն .	22	,,	—	,,
11	Ղուշչիլար .	11	,,	կող.	,,
12	Արփագեաղուկ	—	,,	—	,,
13	Սպիտակշէն	39	,,	—	,,
14	Թէզխարաբ	33	,,	—	,,

ԹՈՒՐՔ ԳԻՒՂԵՐ

1	Ղարաղաղլու .	24	քոչ.	կող.	—
2	Գիւզլուկ .	19	,,	,,	—
3	Ղշլաղ .	—	,,	,,	—
4	Աշղ-Մէլիքլու .	—	,,	,,	—
5	Մազրա .	—	,,	,,	—

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՒԱՌ

Զանգեզուրի գաւառն ընկած է Գանձակի նահանգի հարաւային ծայրում, կպած՝ հիւսիսային և արևելեան կողմերից Ջիւանշիրի, Շուշու և Ջիբրայիլի գաւառներին, արևմտեան կողմից՝ Երեւանեան նահանգի Շարուր-Դարալագեազի և Նախիջևանի գաւառներին, իսկ հարաւային կողմից՝ Պարսկաստանին, սահման ունենալով Արաքսի ընթացքը։

Զանգեզուրը իր ընդարձակութեամբ և ազգաբնակութեան թւով Գանձակի նահանգի ութ գաւառների մէջ բռնում է երրորդ տեղը, իսկ հայ ազգաբնակութեան թւի նկատմամբ՝ երկրորդ տեղը, թէև թուրք ազգաբնակութիւնը, այնուամենայնիւ, կազմում է գաւառում մեծամասնութիւն։

Գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 138 հազար, որից հայեր՝ 63 հազար, թուրքեր՝ 74 հազար և զանազան ազգեր՝ 1 հազար։

Զանգեզուրի գաւառը իր աշխարհագրական դիրքով մի հետաքրքիր վայր է. զուրկ դաշտավայրերից նա ներկայացնում է բարձր լեռների, խորունկ ձորերի, կուսական անտառների և մանր սարահարթերի մի անօրինակ բազմատեսակութիւն։ Գաւառի հիւսիսարևմտեան մասը թերևս՝ մի փոքր տաղտկալի լինի, ուր աղքատ բնութիւնը դուրս է ժայթել մերկ կատարների մի անսահմանութիւն, բայց հարաւային մասը աննման է։

Գաւառը երեք կողմերից շրջապատուած է Կանգուրս-Ալանգեազի և Ղարաբաղի լեռնաշղթաներով, որոնց մի շարք, այն է՝ Քիրս, Դալի-Դաղ, Գեալին-Ղայա, Սալվարդի և այլ գագաթները ունեն 8000-ից սկսած մինչև 12000 ոտնաչափ բարձրութիւն։

Զանգեզուրը հարուստ է նաև գետերով, որոնց մէջ աչքի են ընկնում՝ Հագարը, Բազար-Բարգիւշատը՝ մեր պատմական Որոտանը, Օխչին՝ Էջանանի ճիւղով, Բասուտը, Մեղրին և այլն։

Զանգեզուրի գաւառը, մանաւորապէս Ղափանը, առանձին հետաքրքրութիւն ներկայացնում է իր պատմական անցեալով։

Այստեղ գտնուում է Տաթևի հռչակաւոր վանքը իր ընդարձակ կալուածներով. այդտեղ գոյութիւն են ունեցել հայկական մէլիքութիւններ, որոնցից առաջ եկաւ 1722—28 թուականներին այնքան անուն հանած Ղարաբաղի հերոսը, Դաւիթ-բէկը, իր վարած պատերազմներով։

Զանգեզուրի գաւառը կազմուած է երեք գաւառամասերից, այն է՝ Բուն-Զանգեզուրից, Սիսիանից և Ղափանից, ուր հայերն ապրում են ոչ համախմբուած, այլ ցրուած այս և այն տեղ փոքրիկ գիւղախմբերով, խառը թուրք ժողովրդի հետ, որ և այդ երեք գաւառների ընդհարումներին մենք կը տանք զատ զատ գլուխներ։

Զանգեզուրի գաւառի 406 գիւղերից 92-ը հայաբնակ են, որոնցից 25-ը գտնուում են Բուն-Զանգեզուրում, 20-ը՝ Սիսիանում, իսկ 47-ը՝ Ղափանում։

Դրանք են.

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն 1)	Մատա դատ. 2)	Շունչ 3)
	ԲՈՒՆ-ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ			
1	Գօրիս 4 մասերից բաղկացած .	450	840	4722
2	Քարահուլջ .	98	—	1352
3	Ալիղուլիշէն . . .	105	—	981
4	Խնձորէսկ (Իսզիրակ) .	615	—	5368
5	Գեօրու .	60	—	603
6	Մաղանջուղ .	23	—	391
7	Մինքէնդ—145 տուն թուրք .	85	—	556
8	Խոզնավար—40 » » .	80	—	659
9	Զէյվա—100 » » .	25	—	2183
10	Խնածախ—50 » » .	188	—	
11	Քարաշէն (Դաշքէնդ) .	57	—	852

1) Պաշտօնական տեղեկութիւններով։

2) Մեր հաւաքած տեղեկութիւններով։

3) Համաձայն Տաթևի հոգևոր կառավարութեան տեղեկագիրների՝ այժմեան հաշուով։

12	Արաւուս .	16	—	181
13	Տեղ	422	700	3532
14	Կորնձոր (Գերեզուր) . .	225	—	1700
15	Ղարաղշլաղ (Ղալաղարասի) .	430	600	—
16	Ալիղուլի . .	100	—	—
17	Հարար .	103	135	—
18	Տաթև .	177	—	2490
19	Սևարանց .	21	—	377
20	Տանձատափ .	31	—	424
21	Եայիջի .	39	—	652
22	Հալիձոր . .	64	—	732
23	Երիցաթումբ .	24	—	351
24	Շնհէր .	174	—	1812
25	Խոտ .	122	—	1071
	ՍԻՍԻԱՆՈՒՄ			
1	Ղալաջըղ . .	42	60	351
2	Անգեղակոթ .	171	300	2353
3	Շաղաթ .	123	180	1441
4	Մազրա .	72	120	1131
5	Բալաք . .	38	60	559
6	Ղարաքիլիսա—Թուրքախառն .	92	150	723
7	Ալիլու . . .	76	120	919
8	Բոնակոթ (Փիրնաուդ) .	156	350	2880
9	Ախլաթեան .	106	190	1302
10	Բնունիս . .	34	55	550
11	Թազաքէնդ .	68	100	558
12	Աղքէնդ . .	42	70	436
13	Տուլորս (Դուլուս) .	80	120	787
14	Ուզ . .	124	180	1302
15	Շինաթաղ .	62	95	776

16	Լոր . .	34	70	508
17	Գետաթաղ . . .	31	55	393
18	Դարաբաս—110 տուն թուրք .	42	36	563
19	Շամբ — 20 » » .		35	
20	Լծէն .	25	43	334
	ՂԱՓԱՆՈՒՄ			
1	Զէյվա .	80	—	882
2	Մողէս .	35	—	135
3	Ուժէնիս . . .	47	—	505
4	Խըդրբանց (Սիրքեաթաս) . .	39	—	431
5	Եղվարդ (Ագաւիւրդ) .	87	—	812
6	Ագարակ	93	—	1386
7	Տանձաթափա (Ղարաբաբա) .	29	—	218
8	Տորթնի—թուրքախառն . .	—	—	138
9	Խոտանան—Վերին . .	37	60	681
10	Խոտանան—Ներքին . . .	9	—	
11	Շրվէնանց (Դագմադագլու) .	32	—	307
12	Խլաթաղ (Ախտախանա) .	30	—	488
13	Առաջաձոր .	60	—	688
14	Նորաշէն . .	73	—	569
15	Կաւարտ . .	59	—	654
16	Ըրկենանց (Մուլքիչափ) .	37	—	374
17	Սևաքար . .	98	—	845
18	Զափնի	47	—	473
19	Արծւանիկ (Երիցվանիկ) . .	132	—	1201
20	Բարարաթում (Պառաւաթումբ) . .	44	—	445
21	Բէխ .	32	—	330
22	Վաչական . .	46	—	587
23	Պաղավերջ (Բազարուրջ) . .	41	—	500
24	Գիւտգում . .	52	—	793

25	Ճակատէն (Զակադի). .	41	—	533
26	Քաշարանց (Էջեանան) .	50	100	675
27	Հանդ (Փանիսլու) . .	39	64	677
28	Քրդիկենց .	40	65	667
29	Մազրա .	20	17	—
30	Փուրխուտ .	29	22	314
31	Շիշկերտ . .	35	—	501
32	Կիմանց .	17	—	—
33	Ծաւ .	—	—	—
34	Հանդ-Փոքր .	31	—	191
35	Շիկահող (Շիխաւուզ) .	118	—	896
36	Սրաշէն (Քիլիսաքէնդ) .	26	—	260
37	Կալեր (Գեալուր) . .	42	—	445
38	Վանք . . .	43	—	443
39	Տաշտոն .	34	—	357
40	Լիճք (Լիչք) .	49	—	550
41	Վահրաւա . .	27	—	274
42	Կուտեմնիս (Ուլջանաբաս). .	55	—	448
43	Կուրիս .	23	—	246
44	Ագարակ . .	21	—	164
45	Մեղրի . .	209	—	1304
46	Մալև (Մալևալան) .	44	—	375
47	Շանիձոր (Աստազուր) .	133	—	1112

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԲՈՒՆ-ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Գանձակի նահանգի ութ գաւառներից ոչ մէկում կոտորածներն ու աւերումներն այնքան մեծ չափեր չընդունեցին և այնպէս տևողական չը դարձան, ինչպէս Զանգեզուրում։ Եւ իսկապէս, գուցէ ոչ մի տեղ այնքան արիւն և արցունք չը հոսեց, որքան այս հեռաւոր լեռներում։

Մէկ ամբողջ տարի փոքրիկ ընդմիջումներով մէկ այս և մէկ այն տեղ բռնկում էին ընդհարումները, ընկնում էին հարիւրաւոր զոհեր, դատարկւում և աւերւում էին գիւղեր և գիւղախմբեր փոխադարձաբար երկու կողմերից. բայց և այնպէս արիւն ու աւերի ծրագիրը իրագործւած չէր համարւում։

Եւ այդ ընդհարումները այնքան շատ են, այնքան բազմատեսակ և միաժամանակ բազմաթիւ տեղերում կատարւած, որ մարդ չը գիտէ որտեղից սկսի և որտեղ վերջացնի։

Բայց ինչպէս էլ լինի պէտք է արձանագրել, որքան կարելի է փաստացի կերպով, քսաներորդ դարի այս մեծ ոճրագործութիւնը իր մի քանի մանրամասնութիւններով։

Սկսենք նախ Բուն-Զանգեզուրից։

Բուն-Զանգեզուրը բռնում է գաւառի հիւսիսարևելեան մասը, ընդգրկելով իր մէջ Հագար գետի ամբողջ վերին հովիտը մինչև Որոտան կամ Բազար-Չայ գետի միջին հոսանքը։

Ի նկատի ունենալով Բուն-Զանգեզուրում հայ գիւղերի աշխարհագրական դիրքերը և տեղի ունեցած ընդհարումները, նրանց կարելի է բաժանել հետևեալ վեց շրջանների։

1) Գօրիսի շրջան։
2) Մինքէնդ։
3) Խոզնավար, Խնածախ, Զէյվա, Ալիղուլի և Հարար։
4) Զէջիմլուներ։
5) Ղարաղշլաղ։
6) Տաթևի շրջան։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԳՕՐԻՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍ 1905 Թ.

Գորիսը Զանգեզուրի գաւառի կենտրոնատեղին է—զուտ հայաբնակ մի վայր։

Նա ընկած է Քէչալ-Դաղ լերան ստորոտում, մի հրաշալի հովտի մէջ, համանուն գետի վրա, բաղկացած չորս մասերից, այնէ՝ քաղաքից, որը կառուցուած է գետի աջ ափին մի սիրուն հարթութեան վրա, առ այժմ 200 տնից բաղկացած, ուր գտնուում են կառավարչական հիմնարկութիւնները և բաւական բանուկ շուկան. Գորիս գիւղից, որը ընկած է գետի ձախ ափին քաղաքին կից Լաստի-Խութի ժայռերի և կօնուսների տակ *) 500 տնից բաղկացած. Հին-Գորիսից, որը գտնուում է քաղաքից դէպի հիւսիս հովտի վերին մասում 2 վերստ հեռաւորութեան վրա—90 տուն բնակիչներով, միևնոյն ժամանակ կոչելով Վերին-Շէն և մի փոքրիկ գիւղից, 50 տուն բնակիչներով, մօտիկ Հին-Գորիսին, որը կոչւում է Բուռուն։

Գորիսից դէպի հարաւարևելք մի քանի վերստ միմեանցից հեռու շրջանաձև ընկած են հինգ մեծ հայաբնակ գիւղեր, այն է՝ Ալիղուլին, Քարահունջը, Մաղանջուղը, Գեօրուն և Խնձորէսկը։

Գորիսի և Խնձորէսկի վրայով ձգւում է քոչւորների երթևեկութեան ճանապարհը, որը և եղաւ Զանգեզուրի ընդհարումների պատճառ։

Գորիսի շրջանում յուզմունքներ նկատուեցին դեռևս օգոստոսի սկզբներին, երբ Խաչէնի ձորակում և Աղդամի ճանապարհին տեղի ունեցող ընդհարումների լուրերի տարածման հետ միաժամանակ

---

*) Դարերի ընթացքում անձրևները և հողմը քերելով Լաստի-Խութի կուրծքը, կարծր շերտերից կերտել են ճիշտ և ճիշտ կօնուսաձև բազմաթիւ ժայռեր, որոնք Գորիսին տալիս են մի առանձին գեղեցկութիւն։

սարերից սկսեց քոչւորների շարժումը դէպի դաշտ։ Այդ շարժումը մի հոգեմաշ ծանրութեամբ ճնշում էր առանձնապէս այն հայաբնակ գիւղերին, որոնց սահմաններով անցնելու էին այդ թափառական ցեղերը։

Սակայն վտանգը միմիայն քոչւորների կողմից չէր. ոչ պակաս յուզմունքներ նկատելի էին նաև տեղացի Թուրքերի մէջ, որոնք սկզբում արտայայտւում էին մասնակի դէպքերով։ Անհատական սպանութիւնները և կողոպուտները մեծ չափեր ընդունեցին, ճանապարհները դարձան հայերի համար վտանգաւոր, մինչև որ մի դէպք բոլորովին յուզեց մտքերը։

Օգոստոսի 16-ին Գօրիսից տուն վերադարձող չորս անւանի հայեր՝ ղարաքիլիսեցի Զիլֆիղար-բէկ և նրա որդի Իսկանդար-բէկ Սաֆրազբէկեանները և բռնակոթցի Արշակ-բէկ և Ջաֆար-բէկ Մէլիք-Թանգեանները, հետներն ունենալով երկու ուղեկցող ստրաժնիկներ, Աղոդի և Վաղոդի գիւղերի սահմաններում, Ուչթափալարի մօտ, Գեօբակ-Դաշ կոչւած տեղում, ենթարկւեցին Թուրքերի յարձակմանը և բարբարոսաբար սպանւեցին։ Ստրաժնիկները փախան ազատւեցին։

Այս արտակարգ սպանութիւնը մեծ յուզմունք առաջ բերեց ինչպէս Սիսիանում, այնպէս էլ Գօրիսում և նրա շրջաններում։

Յուզմունքի այս փոթորկոտ միջոցին, օգոստոսի 17-ին, Գօրիսի արևելեան բլուրների լանջերի վրա իջան Քեարիմբէկլուի, Քիւրդ-Մամադտուի քոչւորները։ Այդ միևնոյն ժամանակ լուր հասաւ, որ յիշեալ քոչւորներն իրենց հետ տանում են Թուրք կնոջ զգեստ հագցրած Նախիջևանի գաւառի հինգ հայ գերի կանանց։

Հայերը քոչւորներին խուզարկեցին, բայց ոչինչ չը գտան. նրանց մի մասը ծռել էր ճանապարհը և ուրիշ կողմով անցել գնացել. այդ հանգամանքը բացատրւեց գերի հայ կանանց փախցնելու դիտումով։

Քոչւորները, որոնք խուզարկութեան միջոցին ոչ մի դիմադրութիւն, ոչ մի դժգոհութիւն ցոյց չը տւին, ճանապարհ ընկնելով Խնձորէսկ գիւղի հանդից քշեցին գիւղի նախիրը. հայերը դուրս եկան յետ խլելու. պրիստաւ Վասկրեսենսկին համարելով այդ բանը սուտ, կրակ բացել տւեց հայերի վրա, որից սպանւեց 25 տարեկան մի երիտասարդ՝ Խաչատուր Աբէլեան անունով. հայերը յետ քաշւեցին։ Քոչւորները խրախուսւած այդ բանից, շարունակելով

իրենց ճանապարհը, բռնեցին և բարբարոսաբար սպանեցին դաշտերում աշխատող 11 գիւղացիների և անցորդ չորս բեռնակիր հայերի, բոլորը 15 հոգի և շտապով անցան գնացին։

Գօրիսի շրջանում յուզմունքն աւելի ևս մեծացաւ մանաւանդ, երբ տեղ հասաւ Շուշում բռնկուած ընդհարման լուրը։ Քոչուորները շարժուեցին սարերից՝ մեծ խմբերով. տեղացի Թուրքերը բոլորովին երես առան։ Մինքէնդի կողմերից յուսահատական լուրեր հասան։

Հայերը դրութեան լրջութիւնը նկատելով՝ դուրս բերին ինքնապաշտպանութեան խմբեր. նոյնն արեց նաև Գօրիսը—ոստիկանութեան այդ կենտրոնավայրը։ Ի՞նչ արած, երբ կառավարութիւն, ըստ երևոյթին, գոյութիւն չունէր և հրապարակը թողնուած էր ուժերի չափուելուն։

Եւ ահա օգոստոսի 18-ին տեղի ունեցաւ մի նոր անցք։

Այդ օրը Համզալու գիւղացի Նիւֆթալի-բէկը—Մինքէնդի գրագիր ճիւաղ Շամիրի հայրը—15 զինուած Թուրք ընկերներով գալիս էր Գօրիս։ Դեռ քաղաք չը մտած դիրքերում եղող զինուած տղաները՝ կասկածելով դրանց վրա, արգելեցին քաղաք մտնել. Թուրքերը չուզեցին դառնալ, որից և առաջ եկաւ ընդհարում ու խիստ հրացանաձգութիւն, որը դադարեցնելու համար ադմինիստրացիան ոչ մի միջոց ձեռք չառաւ։ Այդտեղ սպանուեցին Նիւֆթալի-բէկը և նրա մարդկանցից երկուսը, իսկ հայերից երկու երիտասարդներ—Փաշան և Բախշին։

Այս դէպքն արդէն բոլորովին յուզեց մտքերը. Թուրք բէկերը, որոնք դեռ ևս մարտ ամսին ծրագրած ունէին յարձակուելու հանքերի Ուղուրչայ բազարի վրա և կողոպտել, այս անգամ բացարձակ հրապարակ եկան. դրանցից ամենամեծ յանդգնութիւն ունեցողը Իլդրիմ-բէկ Սուլթանովն էր, որն ահագին հրոսակախումբ կազմած օգոստոսի 20-ին թէ 21-ին գօրիսեցիներին ուլտիմատումի ձևով մի արտասովոր պահանջագիր ուղարկեց, որով պահանջում էր. 1) Գօրիսից դուրս թողնել Թուրք բնակիչներին, 2) ազատ ճանապարհ տալ քոչուորներին, 3) հեռացնել Գօրիսի դիրքերից հայ զինուած տղաներին և 4) վճարել 10,000 ր. դրամ։

Եւ այսպիսի մի անպատկառ առաջարկութիւն Ռուսաստանի մէջ, ռուս պրիստաւ Եաւորսկու միջոցաւ, անում էր մի քաղաքի մի հրոսակապետ, և այսպիսի բանակցութեան միջամտում էր ինքը գաւառապետ Աւալիանին, կատարելով այդ հրոսակապետի

մի այլ քմահաճոյքը, արձակելով բանդից մի քանի թուրք բանդարկեալների, նախ քան նրանց պատժի ժամանակամիջոցի լրանալը։

Գօրիսում եղող թուրքերը բաց թողնուեցին, քոչի ճանապարհը առաջ էլ բաց էր. ինչ վերաբերում է հայ զինուած տղաներին դիրքերից վայր բերելուն և 10,000 ր. տուգանք տալուն, ի հարկէ, չը կատարուեցին։ Այլ կերպ լինել չէր էլ կարող, որովհետև հէնց այդ դիրքերի շնորհիւ Գօրիսն ազատ մնաց Իլդրիմ-բէկի յարձակումից, թէև թուրք խուժանը գնաց անպաշտպան Մինքէնդում և նրա բախտակից մի քանի գիւղերում իր գազանացած հակումներին գոհացում տալու, ինչպէս այդ կը տեսնենք մի փոքր յետոյ։

Գօրիսի շրջանի վրա մենք երկար կանգ չենք առնի, որովհետև այդտեղ խոշոր մասսային ընդհարումներ տեղի չունեցան. իսկ մասնակի դէպքեր, ինչպէս էին սեպտեմբերի 12-ին Այնախլու կոչուած տեղում խնձորեսկցիներ՝ Ա. Մուսայէլեանցի և Շափաղաթ Բաղէեանցի սպանելը և հոկտեմբ. 17-ին Հին-Գօրիսի 2 հայ չոբանների մորթոտելը ու 400 ոչխար քշելը, նրանք այնքան շատ են, որ մի առ մի առաջ բերելը թէ ձանձրալի է և թէ նոյն իսկ անհնարին։

Միայն մենք կարձանագրենք այն աղէտը, որին հնխարկեց Քարահունջը։

Ներկայ 1906 թ. սեպտեմբեր ամսին կօզակների կողմից նշանակուած էկզեկուցիայի պատճառով գիւղը վճարեց 1500 ր. տուգանք. դրանից երկու անգամ աւելի մեծ գումար ծախք դրեց 150 կօզակի 12 օր շարունակ կերակրելու և հազար ու մի պահանջները կատարելու համար։ Բացի այդ, ժողովուրդը գիւղից փախաւ, դադարգիւն ընկաւ, սարսափահար եղած կօզակների գալուց և այնքան ժամանակ չը վերադարձաւ գիւղ, մինչև որ կօզակները գիւղում տարածուած տիֆի պատճառով չը հեռացան։

Այս աղէտի պատճառը հետևեալն էր։ Աւազակների մի գըլխաւոր, ընդհարումներին ուժ տուող և հայերի համար մի չարիք դառած մազմազակցի Խանլար-բէկը սեպտեմբերի 6-ին բանդից ազատուելով՝ երկու ստրաժնիկներ առած Քարահունջի սահմանի մօտով տուն էր վերադառնում։ Մի քանի անգամ բանդ մտած և ազատուած այդ չարագործ բէկի վերջին արդարացումը շատ ծանր տպաւորութիւն թողեց մի քանի երիտասարդների վրա, որոնք հետևելով նրան՝ Քարահունջի մօտ գնդակահար արին։ Ահա

այդ անմասն յանցանքի համար Քարահունջը ենթարկուեց մի բարբարոս էկզեկուցիայի։

Այսպիսի հոգատար ադմինիստրացիայի աչքի առաջ տեղի էին ունեցել մինքէնդեան բարբարոսութիւնները իրենց սրտաճըմլիկ տեսարաններով և անցել գնացել անպատիժ կերպով։



ԿՈՏՈՐԱԾԸ ՄԻՆՔԷՆԴՈՒՄ

19—22 ՕԳՈՍՏՈՍԻ 1905 Թ.

Մինքէնդը Թուրքախառն մի գիւղ է 145 տուն Թուրք և 85 տուն հայ բնակիչներով, ընկած Գօրիսից դէպի հիւսիս 35 վերստ հեռաւորութեամբ, Քէշտազ գետի վրա մի բլրապատ հարթ տեղում։

Մինքէնդի հայերը 1844 Թուին գաղթել են այդտեղ Խնձորէկ գիւղից։

Հայերն ունէին լաւ տներ՝ յաճախ երկու յարկանի և Թիթեղեայ տանիքով։ Նրանք պարապում էին երկրագործութեամբ, անասնապահութեամբ, մասամբ և առևտրով։ Ունէին 21 խանութ զանազան տեսակի ապրանքներով. ունէին նաև դպրոց իր յատուկ շէնքով, ուր սովորում էին նոյն իսկ Թուրք մանուկներ։

Ահա այս գիւղի հայ ժողովրդին վիճակուած էր մի անօրինակ մարտիրոսագրութիւն իր անօրինակ բարբարոսութիւններով։

Այն հանգամանքը, որ Մինքէնդը ընկած էր հեռու հայաբնակ շրջաններից և շրջապատուած բազմաթիւ Թուրք գիւղերով, այդտեղի հայերի դրութիւնը վտանգաւոր դարձաւ հէնց այն օրից, երբ մայիսին Նախիջևանի գաւառում տեղի ունեցան Թուրքական գազանութիւնները. այնպէս որ դեռ ևս յունիսին նշմարւող յուզմունքների պատճառով, երբ գաւառապետ Աւալիանին կօզակներով դուրս եկաւ գաւառը շրջագայելու, Մինքէնդ հասնելով այնտեղի հայերը դիմեցին նրան խնդրելով՝ կամ կօզակներ տայ գիւղի պաշտպանութեան համար և կամ Թոյլ տայ իրենց գիւղից քոչելու։ Գաւառապետը Թոյլ չը տուեց գաղթելու, այլ Թողնելով 25 կօզակ նրանց պաշտպանութեան համար, անցաւ գնաց։ Բայց մի քանի օրից յետոյ կօզակները յետ կանչուեցին, իսկ նրանց փոխարէն այդտեղ եկաւ պրիստաւ Սադդ-բէկ Մէլիք-Ասլանովը, որը և եղաւ Մինքէնդի ոճիրների նիւթողը։

Մինքէնդի հայերի դրութիւնը միանգամայն վտանգաւոր դարձաւ օգոստոսի սկզբներում, երբ տեղի ունեցան Խաչէնի ձորակի դէպքերը, մանաւանդ երբ Մուղանլու, Խալաճ, Օվշար կոչուող Թարաքեամաները եկան իրենց վրանները խփեցին Մինքէնդի դաշտում։

Այդ ժամանակ գաւառապետ Աւալիանին գնացել էր Փչանիս գիւղը այդտեղ Թուրքերի ձեռքով խնածախցի անտառապահ Ասատուր Մարտիրոսեանի սպանութեան գործը քննելու։ Փչանիսից գաւառապետը վերադարձաւ Մինքէնդի վրայով, ուր հայերը վճռած լինելով ինչպէս էլ լինի քոչել այդտեղից, նորից դիմեցին նրան. խնդրեցին, աղաչեցին, նոյն իսկ կախ ընկան նրա փէշերից՝ պահանջելով տալ կօզակներ ուղեկցելու իրենց մինչև հայ գիւղերը։ Աւալիանին այս անգամ էլ Թոյլ չը տուեց և փոխանակ լուրջ միջոցներ ձեռք առնելու, կանչեց Թարաքեամաների տանուտէրերին և պատուէրներ տուեց նրանց չը դիպչել հայերին, համոզելով վերջիններին չը շարժուել իրենց տեղից և ապահով լինել։ Հայերից մի քանիսը չը բաւականացած գաւառապետի կարգադրութիւններով, երբ երեխաների ձեռքից բռնած փորձեցին Թողնել գիւղը, օգտուելով նրա ներկայութիւնից, գաւառապետը կօզակներով կանգնեցրեց նրանց։ Ահա այս բոլորից յետոյ միայն գաւառապետը Թողեց հայերի պաշտպանութեան համար 15 կօզակ և մի օր յետոյ ուղարկեց Գօրիսից նորից 25 կօզակ, կարգադրած լինելով հեռացնել քոչւորներին Մինքէնդի շրջականերից, բայց պրիստաւ Սադղ-բէկը ոչ միայն քոչւորներին չը հեռացրեց Մինքէնդի սահմաններից, այլ և կօզակների մեծ մասն ուղարկեց Շալվա և Օվշար, Մինքէնդում Թողնելով միմիայն 14 հոգի։

Այս դրութիւնը շարունակուեց մի քանի օր ևս, մինչև որ տեղի ունեցան Շուշու և Գօրիսի դէպքերը, որոնք Մինքէնդի շրջանում նոր յուզմունքներ առաջացրին։

Օգոստոսի 19-ին Մինքէնդի հայերը՝ նկատելով բացարձակ յուզմունքներ Թուրքերի կողմից, քոչելու մի նոր փորձ արին. պրիստաւի մօտ ուղարկեցին գիւղի ծխատէր քահանայ Տէր-Յակովբ Տէր-Մինասեանին, որը մեզ պատմեց հետևեալը։

«Երբ ես մտա պրիստաւի սենեակը, մի սարսուռ անցաւ իմ երակների միջով. այնտեղ հաւաքուած էին մի քանի յայտնի Թուրքեր, բոլորը յուզուած, գրգռուած, ոճրագործի դէմքերով։ Այդտեղ էր շուշեցի

Շահմար-բէկ Կօչարլինսկին արտասուալի աչքերով, ձեռքին մի նամակ, որով Շուշուց հաղորդում էին նրա եղբօր սպանման մասին։ Այդտեղ էր բայինդուրցի Ամրաստան Մաշադի-Մուրադ օղլին, որը գանգատւում էր գօրիսեցիների ձեռքով իր, իբր, 5 ազգականների սպանման առիթով։ Իմ ներս մտնելը այնպիսի շփոթութիւն առաջ բերեց նրանց մէջ, որ այլ ևս ինձ մէջ կասկած չը մնաց, որ այդ ժողովում ծրագրւում էր մի ինչ որ դժոխային գործ։ Իմ դիմումը ոչ մի հետևանքի չը հասցրեց. պրիստաւ Սաղդ-բէկը սկսեց երդւել, հաւատացնել, որ մեզ ոչինչ չի պատահի, որ մենք կարող ենք հանգիստ լինել։ Չը նայած այդ բոլորին, ես դուրս եկայ ինձ ճնշող այդ սենեակից այն խորին համոզմունքով, որ այդ ժողովում ծրագրւում էր Մինքէնդի սոսկալի կոտորածը։ Եւ իմ ենթադրութիւնը կատարւեց»։

Ահա քահանայի պատմութեան այդ նոյն օրում, օգոստոսի 19-ի երեկոյեան, գիւղի այն կողմում, ուր սովորաբար գիշերում էին հայերի ոչխարները, հրացաններ պայթեցին և երեք սուրու ոչխար թուրքերը փախցրին։ Հայերը դուրս եկան հաւարի, բայց կարողացան յետ բերել միմիայն երկու սուրուն. մէկը տարան թուրքերը։

Յաջորդ օրը նորից քահանան դիմեց պրիստաւին և տալով նրան 100 ր., խոստացաւ 1000 ռուբլի ևս, միայն այն պայմանով, որ ոչխարը յետ բերէր և իրենց պաշտպանէր։ Ի հարկէ, պրիստաւը փողը գրպանը դրեց, բայց ոչխարը յետ չեկաւ. ինչ վերաբերում է պաշտպանութիւն ցոյց տալուն, այսքանը միայն յայտնի է, որ հէնց այդ նոյն օրը, օգոստոսի 20-ի երեկոյեան, գիւղը պաշարւեց թարաքեամաներով հրացանների որոտների հետ միաժամանակ։

Առաջին անգամ գիւղը պաշտպանելու համար հայերի հետ միասին փողոց դուրս եկան թէ կօզակները և թէ ստրաժնիկները, բոլորը միասին 32 հոգի. սակայն այդ մի ստոր խաղ էր պրիստաւի կողմից. մի փոքր այս և այն կողմը վազվզելով՝ ներս քաշւեցին թէ պրիստաւը, թէ կօզակները և թէ ստրաժնիկները։ Դաւադրութիւնը կատարեալ էր։ Թէև հայերը մի կարճ ժամանակ դիմադրեցին, բայց ապարդիւն։ Շուտով գիւղի միւս ծայրից լուր եկաւ, որ թուրքերն արդէն ներս խուժեցին և կողոպտեցին Գաբրիէլ Օհանեանի և Իւան Հայրապետեանի խանութները, որ

սպանուեցին Սարգիս Հայրապետեանը և Առաքել Բաղամեանը, որ սկսեցին կողոպտել նաև տեղացի քիրուա Թուրքերը։ Յուսահատութիւնը տիրեց հայերին։ Նրանցից որը իրեն ձգեց իր ծանօթ Թուրքի մօտ և որն էլ այս ու այն կողմը փախաւ, սարերն ընկաւ։ Թուրք խուժանը բոլորովին ազատութիւն գտնելով՝ ամբողջ գիշերը կողոպտեց թէ խանութները և թէ տների մեծ մասը։

Օգոստոսի 21-ի առաւօտեան թարաքեամաներին միացան նաև տեղացի Թուրքերը և սկսեցին կողոպուտը նոր թափով՝ միևնոյն ժամանակ սպանելով պատահած հայերին։ Յարձակուեցին նրանք Էդիլեանի տան վրա և սրի քաշեցին ամբողջ ընտանիքը՝ 7 հոգուց բաղկացած։ Յարձակուեցին և սրախողխող արին փողոցում պատահած հայերին—թւով 13 հոգի, այնպէս որ, օգոստոսի 21-ի առաւօտեան Մինքէնդի փողոցներում ընկած էին արդէն 22 դիակ։

Եւ մինչդեռ Թուրք խուժանը գազանացած ուզում էր յարձակուել և պահուած տեղերից դուրս բերել հայերին և կոտորել, մի բարի Թուրք—Սաֆար-Ալի-բէկ Մաշադի-Արդիլ-բէկ օղլին—այդ կոտորածի առաջն առնելու նպատակով մի սուտ հնարեց, բարձրաձայն աղաղակելով—«ռուսաց և հայոց զօրքերն եկան. փախէք քանի շուտ է»։ Այդ աղաղակը նպատակի ծառայեց. խուժանը փախաւ և առ ժամանակ կոտորածը դադարեց, մինչև որ օգոստոսի 22-ին Գօրիսից հասաւ մի օֆիցեր 45 կազակներով, որը սկսեց հաւաքել թագնուած և այս ու այն տեղ ցրիւ եկած հայերին։

Սակայն այդ բոպէին էլ հանգիստ չառաւ ոճրագործ պրիստաւը. նա պատճառ բռնելով Խոզնավարում սկսուած ընդհարումը, օֆիցերին կազակների հետ միասին յաջորդ օրը, օգոստոսի 23-ին, ուղարկեց Խոզնավար։

Երբ հայերն այդ իմացան, մի մասը գիւղից փախաւ, իսկ մնացեալ մասը պատսպարուեց այսպէս կոչուած «Заѣзжій» տանը։

Ահա այդ տան վրա էլ յարձակուեց խուժանը—բաղկացած թարաքեամաներից, Մօլլա-Ահմադտու գիւղի և տեղացի Թուրքերից, բայց այս անգամ գրագիր Շամիրի առաջնորդութեամբ, որը Շալվա գիւղում լսելով իր հայր Նիւֆթալի-բէկի սպանման լուրը, մի օր առաջ Մինքէնդ եկաւ իր բարեկամ պրիստաւ Սադդ-բէկի խորհրդով հոր վրէժը լուծելու համար։

«Заѣзжій» տան բակում տեղի ունեցաւ մի չը տեսնուած, չը

լսած բարբարոս գործողութիւն։ Մի առ մի բակը դուրս բերին այդտեղ պատսպարուած մարդկանց, կանանց և երեխաներին անխտիր, աւելի քան 200 հոգի, և սկսեցին սրերով, կացիններով և հազար ու մի բութ գործիքներով կոտորել անխնայ. դրանցից շատ քչերն ազատուեցին։ Գազանացած խուժանը այդտեղ կատարեց այն բոլոր քստմնելի գործողութիւնները, որպիսին ընդունակ է երևան հանելու մոլեգնած ամբոխը։

Թշուառ մարդկանց տանջանքներն աւելի ևս տևողական դարձնելու համար, նախ քան մահացնելը, մաս մաս կտրատում էին նրանց մարմնի անդամները։ Այդ ձևի տանջանքների ենթարկեցին՝ 20 տարեկան Խաչատուր Դաւթեանը, 60 տարեկան պառաւ Մանուշակ Հայրիեանը, որի նախ ծծերը կտրատեցին և ապա ձեռքերը։

22 տարեկան Համբարձում Գալստեանի մազերից բռնելով՝ կոկորդը կտրեցին ճիշտ այնպէս, ինչպէս «դասաբը»՝ ոչխարի գլուխը։

65 տարեկան Աննա Դաւթեանցին և նրա երեք թոռներին — վեց տարեկան Գիւլնշանին, հինգ տարեկան Սառանին և չորս տարեկան Անդրէասին մէկը միւսի ետև շարքով կանգնեցնելով՝ Զաբրայիլ Շախսուարովը փորձեց մի գնդակի հարուածով չորսին միանգամից սպանել։

Մանուչար Գրիգորեանի յղի կնոջ—Նաւոմի փորը պատռեցին և երեխան սրի ծայրին մեխած դուրս բերին արգանդից։

Բայց քանի քանի սրանցից աւելի սոսկալի տեսարաններ տեղի ունեցան, սակայն որոնց անուն անուն առաջ բերելը անկարելի էր։

Այսպիսով Մինքէնդի 696 բնակիչներից միմիայն 456-ը կարողացան, որը վիրաւոր և որն էլ սարսափից մաշած, կմախք դարձած, փախչել, ազատուել. մնացեալ 240-ը չը կային։ Նրանցից յայտնի սպանուածների թիւը 196 էր, որոնց անունների ցանկը բերում ենք գրքի վերջում, իսկ 44-ը անյայտացած և գերի էին տարուած, որոնցից 5 հոգու կարելի եղաւ ազատել օգոստոսի 28-ին Շուշու մօտ քոչուորների ձեռքից, գլուխներն արդէն թուրքի ձեռով ածիլած։

Մինքէնդի նիւթական կորուստին չափ չը կար. նրանք կորցրել էին ամենը, ամենը. թուրքերը տարել էին 590 կով, եզ,

գոմէշ, 1423 ոչխար, 149 ձի, էշ, ջորի, 1290 գորգ, 688 կապերտ, 182 ջէջիմ, 688 ջվալ, 344 թաղիք, 172 պղնձէ կուժ, 457 պղնձէ ամաններ, 1290 անկողին, 65 ինքնահոս, 14 կարի մեքենայ, 6520 ռուբ. արծաթեղէն, 2700 ռ. ոսկու և արծաթի զարդարանքներ, մեծաքանակ իւղ, պանիր, ալիւր, ցորեն, գարի և այլ մթերքներ։ Բացի այդ, նրանք կորցրել էին 21 խանութի ապրանք, 85 գեղեցիկ շինութիւններ և ահագին դաշտավայրեր՝ հնձած ցորենի և դարու դէզերով։

Ահա այս բոլորը ձգեց մինքէնդցին և գնաց, այլ ևս չը վերադառնալու համար, այլ ևս չը տեսնելու այն տեղը, որը եղել էր նրա հարազատների սպանդանոցը։

Նա գնաց տնաւեր, քաղցած, բազմաթիւ զոհերով և վշտաբեկ սրտով, բայց նրան տանջում էր աւելի շատ այն հանգամանքը, որ ոճրագործները չէին պատժւում, որ նրանք, ընդհակառակը, խրախուսանքներ էին գտնում պաշտօնեաների կողմից։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՒԵՐՈՒՄՆԵՐԸ ԽՈԶՆԱՎԱՐ, ԽՆԱԾԱԽ, ԶԷՅՎԱ, ԱԼԻՂՈՒԼԻ ԵՒ ՀԱՐԱՐ ԳԻՒՂԵՐՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905 Թ.

Այս հինգ գիւղերը ճիշտ և ճիշտ այն պայմաններում էին գտնուում, ինչ պայմաններում որ գտնուում էր Մինքէնդը։ Սրանք ընկած են միմեանցից հեռու հեռու, հայաբնակ շրջաններից կտրուած, թուրք տարրերով շրջապատուած, իսկ առաջին երեքը նաև թուրքախառն են։

Դրանցից Խոզնավարը, որը գտնուում է Մինքէնդից դէպի հարաւարևելք մօտ 15 վերստի վրա, ունէր 80 տուն հայ և 40 տուն թուրք բնակիչ։

Խնածախը՝ ընկած Խոզնավարից դէպի հարաւարևելք 4 վերստի վրա, ունէր 188 տուն հայ և 50 տուն թուրք բնակիչ։

Զէյվան՝ որը գտնուում է Մինքէնդից դէպի արևելք 10—12 վերստի վրա, ունէր 25 տուն հայ և 100 տուն թուրք բնակիչ։

Ալիղուլին՝ *) ընկած Մինքէնդից դէպի արևելք 15 վերստ հեռաւորութեամբ, Հազար գետի վերին հոսանքի մի փոքր ճիւղի վրա, Մաղաւուզի ձորում, զուտ հայաբնակ գիւղ էր և ունէր 100 տուն բնակիչ։

Հարարը նոյնպէս զուտ հայաբնակ էր և ունէր 135 տուն բնակիչ, սակայն նա ընկած էր աւելի հեռու, աւելի վատ տեղում, այն է՝ Հազար գետից դէպի արևելք Ջիբրայիլի գաւառի սահմանների մօտ մէն մենակ։

Վերջին երկու գիւղերը շրջապատուած են միապաղաղ, անհանգիստ թուրք տարրերով։

---

*) Այս անունը չը պէտք է շփոթել Գորիսի շրջանի Ալիղուլի գիւղի անուան հետ. այս անունով հայաբնակ գիւղեր Բուն-Զանգեզուրում երկուսն են։

Առաջին երկու գիւղերը նոյնպէս շրջապատուած են Թուրքերով, սակայն նրանց մէջ առանձնապէս աչքի էին ընկնում որպէս աւազակարարոյ գիւղեր Բայինդուրը և համանուն ձորակի մի շարք ղշլաղները, որոնք մեծ դեր էին խաղում ինչպէս Մինքէնդի, այնպէս էլ միւս գիւղերի վրա տեղի ունեցող յարձակումների մէջ, միևնոյն ժամանակ վտանգաւոր դարձնելով Շուշի-Գորիսեան խճուղին։

Ահա այսպիսի պայմանների մէջ հասկանալի է, թէ ինչ վիճակ ստեղծուեց յիշեալ գիւղերի համար այն օրից, երբ Մինքէնդը մի սոսկալի սպանդանոց դառնալով հանդերձ, գլխաւոր ոճրագործները դեռ շարունակում էին պաշտօնների մէջ մնալ։

Եւ իսկապէս, այս գիւղերի շուրջը յուզմունքներ նկատելի դարձան դեռ ևս օգոստոսի 16-ից սկսած, իսկ բուռն մասսայական յարձակումներ տեղի ունեցան Մինքէնդի կոտորածի հետ միաժամանակ։

Թէ ինչեր անցան ու դարձան այդ հինգ գիւղերի գլխով օգոստոսի 20-ից մինչև 24-ը, այդ աւելորդ ենք համարում մանրամասն առաջ բերել. մենք կարձանագրենք միմիայն այն փաստացի տեղեկութիւնները, որոնք բնորոշում են աւերումների չափը։

Նախ պիտի ասենք, որ այս հինգ գիւղերում այնպիսի կոտորած, որպիսին մենք տեսանք Մինքէնդում, տեղի չունեցաւ։ Նախ՝ Հարար գիւղը անձնատուր եղաւ և Թոյլ տուեց խուժանին կողոպտելու եղած չեղածը առանց դիմադրութեան։ Զէյվա գիւղից ժողովուրդը փախաւ նախ քան մեծ յարձակումը, իսկ մնացեալ երեք գիւղերը կանոնաւոր դիմադրութիւն ցոյց տուին։ Եւ երկրորդ՝ այս գիւղերը բախտաւորութիւն ունեցան դուրս մնալու պրիստաւ Սադղ-բէկերի պաշտպանութիւնից։ Լինէին այս գիւղերում մի մի Սադղ-բէկեր, թերևս արիւնը աւելի մեծ չափով հոսէր, քան նոյն իսկ Մինքէնդում։

Չը նայած այս բոլորին, այս հինգ գիւղերը, այնուամենայնիւ, ազատ չը մնացին կողոպուտներից և հրդեհումներից։

Հինգ օրւայ կռիւներից յետոյ Խոզնավար գիւղը ունենալով նաև կօզակների պաշտպանութիւնը, կարողացաւ յետ մղել յարձակումները, պատճառելով Թուրքերին մեծ կորուստներ։ Տեղացի Թուրքերը, մեծ մասամբ բէկեր, որոնք և ծրագրել էին յարձակումները, ստիպւած եղան փախչել գիւղից, որոնց տները հայերի ձեռքով հրդեհուեցին։ Սակայն կորուստներ ունեցան նաև հայերը։

Նախ քան Թուրքերին բոլորովին հալածելը, նրանց ձեռքով կողոպտուեցին 60 տուն, որից 30-ը նաև հրդեհուեցին։ Խոզնավարում հայերից սպանուեցին 12 մարդ. դրանք էին՝ Սարգիս Աւանէսեանը, 45 տար., Եախշի Պետրոսեանը, 30 տ., Իսաջան Շափաղաթեանը, 25 տ., Մատթէոս Ղուկասեանը, 28 տ., Փարսի Մանուչարեանը, 65 տ., Գրիգոր Մատթէոսեանը, 65 տ., Առաքել Մատթէոսեանը, 55 տ., Աւանէս Մէլքոնեանը, 45 տ., Առաքել Պետրոսեանը, 50 տ., Աստուածատուր Գրիգորեանը, 18 տ., Աարգիս Առստամեանը, 33 տ. (խելագար) և մի անդամալոյծ օրիորդ, 40 տարեկան։

Խնածախը՝ շնորհիւ իր դիրքերի և տոկուն դիմադրութեան, ազատ մնաց կողոպուտներից և հրդեհից, թէև ընդհարումների ժամանակ ունեցաւ վեց զոհ։

Զէյվան ունեցաւ 5 զոհ և բացի այդ՝ ենթարկուեց կողոպուտի, կորցնելով ունեցած գոյքի կէսից աւելին և քոչեց գիւղից, այլ ևս անկարող լինելով ապրել այդտեղ։

Ալիղուլին պաշարուեց տեղացի և քոչուոր թարաքեամների մի ահագին խուժանով, բայց երկու օր նա կարողացաւ հերոսաբար դիմադրել, մինչև որ Գօրիսից զօրք հասաւ. թէև մինչև այդ գիւղի մեծ մասն արդէն կողոպտուել էր և հրդեհուել։ Զօրքերի գալով Թուրքերը յետ մղուեցին մեծ կորուստներով։ Հայերն ունեցան բաւական թւով սպանուածներ, որոնց ցուցակը բերուած է գրքի վերջում։

Զը նայած կուի այսպիսի վախճանին, հայերն այդ գիւղում ապրել այլ ևս անհնարին համարելով, ձգեցին ամեն ինչ և դուրս եկան մի այլ տեղ բախտ որոնելու։

Բոլորից վատթար վիճակ ունեցաւ Թշուառ Հարարը, այդ կորած մոռացուած գիւղը։ 135 տուն ժողովուրդը կողոպտուեց մինչև վերջին թելը, վերջին ասեղը։ Ապա նա գերի ընկաւ շրջապատող Թուրքերի ձեռքը։ Խեղճ հայեր, օրեր շարունակ նրանք ապրում էին մահուան սարսափի, բարոյական և հոգեկան տանջանքների տակ. նրանք կտրուած դրսի աշխարհից, չը գիտէին, ինչ էր կատարուում դուրսը, չը գիտէին, որպիսի վախճան սպասում է իրենց։ Եւ երբ այդ բոլորից յետոյ զօրքը գնաց նրանց ազատելու, նրանք չէին հաւատում իրենց աչքերին։ Ինչպէս դահճի սրից փախածը, նրանք հեռացան այդ ծանօթ վայրերից, այլ ևս չը վերադառնալու պայմանով, գնացին մի այլ տեղ ապաստան փնտռելու։ Հարարն ունեցաւ բաւական մարդկային զոհեր, որոնց ցուցակը

նոյնպէս բերուած է գրքի վերջում։

Ահա, այս բոլորը կատարուել վերջացել էր, երբ օգոստոսի 31-ին Գօրիս ոտ դրեց նոր նշանակուած գեներալ-նահանգապետ Պրինց Նապալիօնը և սեպտեմբերի 1-ին ուղարկեց փոխարքային մի ընդարձակ հեռագիր, որից առաջ ենք բերում հետևեալ քաղուածքը։

«Երևանի և Նախիջևանի դէպքերի ազդեցութեան տակ յարաբերութիւնը մահմեդականների և հայերի մէջ զսպւում էին գաւառապետի ձեռքով և անհատական դէպքերով էին արտայայտւում։ Շուշու դէպքերը խիստ ագիտացիա առաջացրին հայերի դէմ թափառականների մէջ Զանգեզուրի գաւառի սէյիդների և մի քանի ազդեցիկ անձերի կողմից։ Այս բանի հետևանքն եղաւ այն, որ թափառականները վճռեցին իջնել իրենց քոչատեղերից և ճանապարհին, վրէժ առնելու համար, թալանել հայոց գիւղերը։ Շուշու և Զաւադի գաւառների թափառականների մի խումբ, որ տուն էր դառնում Մինքէնդի միջով օգոստոսի 20-ից լոյս 21-ի գիշերը, յարձակւեց գիւղի վրա, թալանեց և այրեց, սպանելով 17 հայերի, յետոյ ուղեւորուեց դէպի Ալիղուլիշէն, ուր հասաւ օգոստոսի 24-ին և տեսաւ, որ այդ գիւղն արդէն պաշարել են Զանգեզուրի գաւառի երեք հասարակութիւնների բնակիչները. գիւղը թալանւեց, իսկ 24 տներ հրդեհւեցին։ Օգոստոսի 25-ին Գօրիսից վրա հասած գաւառապետին յաջողւեց ցրել թափառականներին և թուրքերին, բայց նոյն այդ օրը երկրորդ փորձ արւեց պաշարելու գիւղը, չը նայած որ գիւղում գտնւում էր գաւառապետը 70 կօզակներով։ Այդ փորձը չը յաջողւեց, հրացանաձգութեան ժամանակ սպանւեցին մի կօզակ, 7 հայ, շատ մահմեդականներ»։

«Դեռ օգոստոսի 22-ին այն գիւղերի պաշտպանութեան համար, որոնք գտնւում են թափառականների վերադարձի ճանապարհին, գաւառապետն ուղարկել էր պահապանների օֆիցերին 63 կօզակների և ստրաժնիկների հետ Մինքէնդ գիւղը, որն արդէն մի անգամ ենթարկւել էր յարձակման։ Այստեղ օֆիցերը տեղեկութիւն ստացաւ, որ թափառականները յարձակւել են Խոզնավար գիւղի վրա։ Պրիստաւ Մէլիք-Ասլանովը օֆիցերին խաբեց, ասելով, որ Մինքէնդին նոր վտանգ չէ սպառնում, ուստի օֆիցերը մի քանի մարդկանց հետ պրիստաւին թողնելով այդ գիւղում, ճանապարհներին վերցրած օգոստոսի 23-ին գնաց խոզնավարցիներին

ազատելու։ Նրա հեռանալուն պէս Մինքէնդի մահմեդականները յարձակեցին հայերի վրա, կոտորեցին մօտ 140 մարդ և վիրաւորեցին 40 հոգի։ Այս բոլորը տեղի ունեցաւ պրիստաւի աչքի առաջ, որը ոչ միայն աջակցութիւն ցոյց չը տուեց, այլ նոյն իսկ չը յայտնեց օֆիցերին յարձակման մասին, որի պատճառով գաւառապետն իսկոյն հեռացրեց նրան պաշտօնից, մինչև դատաստանական պատասխանատուութեան ենթարկելը»։

Հեռագիրը փոխարքային ուղարկելուց յետոյ Նապալիօնն այցելելով Մինքէնդ, Խոզնավար և Ալիղուլի գիւղերը, խստութեամբ կարգադրեց յետ պահանջել բոլոր կողոպուտները, բանդարկել անմիջապէս գլխաւոր չարագործներին, էկզեկուցիայի ենթարկել յարձակումներին մասնակցող գիւղերը, հեռացնել գիւղից Մինքէնդի թուրքերին և հայերին բերել համախմբել մի տեղում։

Խիստ մխիթարական էին հայերի համար Նապալիօնի կարգադրութիւնները և անաչառ վերաբերմունքը դէպի բարբարոսները։

Բայց միամիտ էր մարդասէր, ասպետ ֆրանսիացին. նա կարծում էր, թէ ինքը կարող է արցունքներ սրբել և վշտեր ամոքել։ Նա պահանջում էր արդար հատուցումն ոճրագործներին և նիւթական բաւարարութիւն կողոպտուածներին։

Այդ նոյնը նա ծրագրել էր նաև Նախիջևանի և Շարուր-Դարալագեազի գաւառների նկատմամբ, բայց սեպտեմբերի 18-ի Երևանի երրորդ ընդհարումը մի ժամում ճնշող Նապալիօնը թողեց Զանգեզուրի, ինչպէս և Երևանի նահանգապետութեան պաշտօնը և հեռացաւ, ասպարէզը տալով գեներալ Տակայշվիլուն, որը հիմնովին ըմբռնած լինելով այդ պաշտօնի իմաստը Կովկասի իրականութեան մէջ, ինչպէս Շուշի, այնպէս էլ Զանգեզուր ոտ դնելով՝ մեղադրեց հայերին, բանդարկելով Գօրիսում 10 հոգու, Տեղ գիւղում՝ 15 հոգու, մինչդեռ գլխաւոր չարագործների, այն է՝ պրիստաւ Սաղդ-բէկի, գրագիր Շամիրի և Իլդրիմ-բէկի մասին չարեց և ոչ մի կարգադրութիւն։

Եկաւ անագին յոյսեր խոստացող Նապալիօնն էլ և գնաց, սակայն իրականութեան մէջ ոչ մի փոփոխութիւն չը մտաւ. կառավարութեան վրա յոյս դնելն անմտութիւն էր. սեփական միջոցներին պէտք էր վստահել։ Այս թելադրում էր իրականութիւնը և այժմ էլ աւերել սկսեցին հայերը, այդ համարելով միակ միջոցը թուրք անգիտացած մասսային զսպելու համար։ Իսկ առիթներ որ-

քան կամենայիք. օր չը լինէր, որ Թուրքական յարձակում տեղի չունենար այս և այն գիւղի սահմանների և նախիրների վրա։

Սեպտեմբերի 22-ին Բայինդուր գիւղի Թուրքերը՝ գլուխ անցած Բայինդուր ձորակի մի շարք գիւղերի խուժանին, նորից յարձակում գործեցին Խոզնավարի և Խնածախի վրա, չը կարողանալով մոռանալ այն զոհերը, որ նրանք ունեցել էին օգոստոսեան յարձակումների ժամանակ։ Երկու օր տևող կռիւը վերջացաւ Թուրքերի պարտութեամբ. այս անգամ հայերը շրջականներից բաւական օգնութիւն ստանալով՝ մի ուժեղ հակայարձակումով խուժեցին Թուրք գիւղերի վրա և այրեցին ու աւերեցին՝ Բայինդուրը, 50 տ., Հալաքը, 35 տ., Բինաերին, 15 տ., Քօսալարը, 25 տ., Մալիբէկլուն, 50 տ., Ջաղազուրը, 40 տ., Ջայլուն, 10 տ., Քեալավալախը, 25 տ. և Նովրուզլուն, 15 տուն բնակիչներով։ Այս գիւղերից առաջին երեքը կողոպտուեցին, որոնց տներից դուրս հանուեցին բաւականաչափ իրեր Մինքէնդի հայերից կողոպտած. իսկ միւս գիւղերի ժողովուրդները կարողացան փախչել՝ տանելով իրենց հետ գոյքերը։

Ահա այս գիւղերի մեծ մասը մինչև այժմ էլ աւեր է։

Սակայն ընդհարումները սրանով էլ չը վերջացան։

Դեկտեմբերի 15-ին Հաջիլար գիւղի Թուրքերը յարձակուեցին և Խոզնավարի սահմաններից քշեցին 100-ի չափ տաւար, իսկ նախրըչուն կենդանի բռնեցին ու տարան։ Խնածախը օգնութեան գնաց և պաշարեց Հաջիլարը, որի ժամանակ հայերից վիրաւորուեցին 7 հոգի, իսկ Թուրքերից սպանուեցին 5-ը։

Խոզնավարը յարձակման ենթարկուեց նորից յունիսի 7-ին, ապա՝ յունիսի 24-ին, որի ժամանակ Թուրքերի ձեռքով սպանուեց հայ պրիստաւ Բագրատ-բէկ Ասիրովը, և ապա՝ յուլիսի 6-ին, որի ժամանակ Թուրքերը քշեցին գիւղի նախիրը։

Յուլիսի 6-ին յարձակման ենթարկուեց նաև Խնածախը, բայց այս անգամ մալիբէկլուեցի աւազակ Նաղի Հուսէին օղլու ղեկավարութեամբ, սակայն որի ժամանակ հայերի գնդակներից սպանուեցին՝ ինքը—աւազակ Նաղին, Սարիբէկ Բէկլար-բէկ օղլին, Իսա Օրուջ-Ալի օղլին և երկու այլ Թուրքեր։ Խուժանը յետ փախաւ. գիւղը մնաց անվնաս։

ԵՐԿՈՒ ՋԷՋԻՄԼՈՒՆԵՐԻ ԱՒԵՐՈՒՄԸ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905 Թ.

Գօրիսից դէպի հիւսիսարևելք 15 վերստ հեռաւորութեան վրա գտնուում են չորս հայաբնակ գիւղեր, այն է՝ Արաւուսը, Քարաշէնը, Կորնձորը, իրենց կենտրոնում ունենալով 700 տնից բաղկացած Տեղ գիւղը՝ յայտնի հացահատիկների մշակութեամբ։ Սրանք ընկած են մի ընդարձակ սարահարթի վրա, բաւական հեռու խիտ թուրքաբնակ վայրերից։ Միմիայն Կորնձորից հարաւ ընկած են մի քանի թուրք գիւղեր, որոնց թւում նաև երկու Ջէջիմլուները, մէկը՝ 102, իսկ միւսը 26 տնից բաղկացած։

Հայ գիւղերի այս խմբակը՝ համեմատած միւս խմբակներին, կարելի է ասել, ազատ մնաց խոշոր ընդհարումներից. սակայն նա ազատ չը մնաց մասնակի յարձակումներից. տեղի էին ունենում նախիրներ քշելու դէպքեր և անհատական սպանութիւններ, որոնց զոհերը յաճախ աւելի զգալի էին լինում, քան նոյն իսկ մի խոշոր ընդհարումը։

Այսպէս, սեպտեմբերի 22-ին կորնձորցի 36 ճամբորդներ Թաթլու-Դարայում ենթարկուեցին Բաղր-բէկլու, Թաթ-Դարա, Սիւմուքլու և Իւղանիս գիւղերի թուրքերի յարձակման. դրանցից 8 հոգին - Կարապետ և Մարտիրոս Աբրահամեանները, Բաղդասար Պետրոսեանը, Յարութիւն Յովհաննիսեանը, Կոստանդին Բախշիեանը, Աղասի Մկրտչեանը, Պետրոս Մարտիրոսեանը և Շափաղաթ Գրիգորեանը սպանուեցին՝ ամբողջ գիւղը թողնելով սգի մէջ։

Մասամբ այս և մասամբ այն բանի շնորհիւ, որ այս գիւղերը իրենց բաւական ուժեղ էին զգում, իրաւունք համարեցին խախտել հայ ժողովրդի կուլտուրական կենցաղին վայել դրացիական ներողամտութիւնը՝ յարձակուելով և աւերելով երկու Ջէջիմլու գիւղերը, վրդովուած վերջինների կողմից կատարուած մի երկու աւազակային գործողութիւններից։

Զէյթիմլուները սիւննիներ էին և բնականաբար աւելի մեղմ բարքերով սնուած, քան շիաները. սակայն այդ հանգամանքը չարգելեց նրանց ընկնել կողոպուտների հմայքի ազդեցութեան տակ և օգտուել առիթից, որն և եղաւ նրանց աւերման պատճառը։

Կորնձորի և միւս գիւղերի հանդերից Զէյթիմլուեցիները մի քանի անգամ տաւար գողացան, սակայն նրանք հասարակ գողութիւններով չը բաւականացան։ Դեկտեմբերի 17-ին յարձակուեցին և Տեղ գիւղի հանդից քշեցին նախիրը. ահա այս եղաւ առիթ, որ և հայերը իրենց հերթում յարձակուեցին երկու Զէյթիմլուների վրա. Փոքր-Զէյթիմլուն բոլորովին կողոպտուեց, իսկ Մեծ-Զէյթիմլուի ժողովուրդը կարողացաւ փախչել, տանելով իր հետ գոյքի մեծ մասը. տները հնթարկուեցին կողոպուտի և աւերման։

Բարբարոս միջավայրը կարճ ժամանակի ընթացքում վայրենի հակումներ ներշնչեց նաև խաղաղ հայ ժողովրդին, որը յաճախ ինքնամոռացութեան մէջ չէր քաշւում թափառական կիսավայրենի ցեղերին յատուկ հակակուլտուրական գործողութիւններ կատարելուց։

Սրանք փաստեր էին, տխուր փաստեր, որոնց չարձանագրել մենք չէինք կարող, որքան էլ այդ անհաճոյ լինէր շատերին։

ՂԱՐԱՂՇԼԱՂԻ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

1905 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ — 1906 Թ. ՓԵՏՐՎԱՐ

Գօրիսը Շուշու հետ կապւած է մի երկար խճուղիով, որը մի քմահաճ ելևէջներով ձգւում է լեռնանցքերի, ձորերի ու հովիտների միջով, երբեմն բարձրանալով կատարների վրա և երբեմն իջնելով մթին ձորերի յատակը։

Այդ խճուղին Շուշուց դէպի հարաւ անթիւ բլուրների և ձորերի կողերը տաշելով և 20 վերստ տարածութիւն ակօսելով մի ոլորապտոյտ գծով՝ հասնում է Ղարաբաղի լեռնաշղթայի ամենաբարձր, միևնոյն ժամանակ գաւառի սահման կազմող գծին, ուր շինւած է առաջին կայարանը — Թթու-Ջուրը կամ Լիսագօրը։ Այդտեղից Նոյնպիսի ոլորապտոյտ մի ակօս իջնում է մի խորունկ ձոր, որի միջով հոսում է Հագար գետը և նորից մի վերելք կազմելով, ձգւում է դէպի Տեղ գիւղը և ապա Գօրիս։

Այդ խճուղին իր ամբողջ երկարութեամբ ունի 90 վերստ, իսկ Շուշուց մինչև հայաբնակ Տեղ գիւղը 70 վերստ տարածութիւն։

Ահա այդ երկար ուղին ձգւում է թուրքաբնակ գիւղերի սահմաններով, որի շնորհիւ նա սովորական ժամանակ էլ համարւում է անապահով։

Ի՞նչ կը լինէր այդ գծով ճանապարհորդող հայերի դրութիւնը հայ-թուրքական ընդհարումներից յետոյ, դժւար չէ երևակայել։

Այդ ճանապարհը ընդմիշտ փակւած կը մնար հայերի համար, ինչպէս Աղդամինը. նա կը դառնար թուրք հրոսակախմբերի համար մի ընդարձակ ասպարէզ արշաւելու դէպի Շուշի, որն առանց այն էլ ապրում էր աչազակաբարոյ Զարսլու և Խալֆալու թուրք գիւղերի սարսափների տակ և վերջապէս կընդհատւէր յարաբերու-

թիւնը Շուշու և Գօրիսի մէջ, մի անտանելի կացութիւն ստեղծելով Զանգեզուրի հայ ժողովրդի համար, եթէ միայն մի խոչնդոտ չը լինէր։

Այդ խոչնդոտը Ղարաղշլաղն էր, միակ հայ գիւղը այդ 70 վերստ տարածութեան վրա. միակ հայ գիւղը այդ կորած սարերի և ձորերի մէջ, շրջապատուած բազմաթիւ թուրք լեռնաբնակ ցեղերով։

Ահա այդ խոչնդոտը մէջտեղից վերացնելու համար տեղի ունեցան մի շարք բազմամբոխ յարձակումներ Շուշու ընդհարման օրերից սկսած։

Ղարաղշլաղը կամ Ղալադարասին, այժմ 600 տնից բաղկացած այդ մեծ գիւղը, գտնուում է Թթու-Զրից մի քանի վերստ դէպի Հագար գետի ձորը, անմատչելի բլուրների վրա։ Նա նման չէ հայաբնակ միւս գիւղերին՝ սղմուած, կուչ եկած, այլ նա տարածուած է հպարտ գագաթների վրա մի անօրինակ վստահութեամբ, կազմելով աւելի քան 20 մանր ու մեծ թաղեր։

Շահնաքար (Սաղսաղան) գագաթից փոքր ինչ ցած, խճուղուց դէպի արևելք, ձորի յատակից մի անօրինակ ըմբոստութեամբ բարձրացած մի բլուրի վրա, որպէս սրաթև արծիւը, բազմած է Ղարաղշլաղի կենտրոնական մասը, 300 տնից բաղկացած։

Դրանից 2 վերստ դէպի հարաւ ընկած է երկրորդ մեծ հատուածը՝ մօտ 100 տնից բաղկացած—Քեօհնա-Շէն անունով, իսկ դէպի արևմուտք խճուղու հակառակ կողմի վրա ընկած է երրորդ հատուածը՝ 80 տնից բաղկացած—Եղծեւող անունով։ Այսուհետև գալիս են մի երկար շարք անուններ, այն է՝ 1) Սարէն-Գիւմեր, 12 տ., 2) Կանաչ-Թալահ, 15 տ., 3) Տշտուղ, 10 տ., 4) Քրզեկէն-Զոր, 8 տ., 5) Խէրխան, 9 տ., 6) Փոքր-Խէրխան, 12 տ., 7) Շոռէն-Թալահ, 7 տ., 8) Զորան-Գիւնէյ, 15 տ., 9) Թաւան-Աւի, 8 տ., 10) Ղման-Աւող, 5 տ., 11) Հգիզուղ, 8 տ., 12) Պիժախութ (Բժշկաբլուր), 4 տ., 13) Ղզարա-Գիւմրատեղ (Ղազարի գոմերի տեղ), 7 տ., 14) Իլանանց, 6 տ., 15) Բղլավար, 6 տ., 16) Ղօզլու-Փէկէ (Ղօզլուի գոմ), 8 տ., 17) Թումասեռ, 10 տուն։ Սրանք, այս մանր թաղերը, փռուած են ամբողջ 15 վերստ տարածութեան վրա, ըմբոստ քերծերից և կուրծքերից կախ ընկած, կուսական այդ վայրերին իշխելու մի արտասովոր վստահութեամբ։ Սրանք կատարեալ աուլներ են, հայկական աուլներ, աղքատ բնութեան,

բայց ազատ կատարների հետ ամուր կապված, կենցաղի և բարքերի կոպիտ ձևերով, բայց լեռնականին յատուկ պարզութեամբ ու քաջութեամբ, շնորհիւ որի նա այսօր կարողացել է իր գոյութիւնը պահպանել և Շուշի-Գօրիսեան խճուղին անվտանգ դարձնել։

Ահա այս արծւի բունը քանդելու համար սեպտեմ. 20-ին, Բաղր-Բէկլու, Ունաննաւ և Սաֆիան գիւղերի թուրքերը միացած՝ առաջին անգամ յարձակում գործեցին Ղարաղլշաղի Քեօհնա-Շէն գիւղի վրա։ Կռիւն երկար չը տևեց. քաջ ղարաղշլաղցին մի հակայարձակումով յետ քշեց թուրքերին մինչև Բաղր-Բէկլու, որտեղից ժողովուրդը փախաւ՝ գիւղը թողնելով հայերի ձեռքին, կողոպուտի և հրդեհի բաժին։

Յարձակումն աւելի մեծ ուժով կրկնուեց այդ դէպքից երեք օր անց։ Այս անգամ կռիւն աւելի ծանր էր և տևողական։ Թուրքերը հրդեհեցին 20—30 հատ գոմեր, մինչև անգամ մօտեցան գիւղի սահմաններին, բայց Քէօհնա-Շէնին օգնութեան հասան նոյն իսկ հեռաւոր թաղերի հայերը և յետ մղելով յարձակումը՝ խուժեցին թուրք գիւղերի վրա։ Սակայն վրա հասաւ գաւառապետ Աւալիանին զօրքով և ազատեց թուրք գիւղերն աւերումից։

Այս կռւում հայերից սպանուեց մէկ հոգի, Սահակ Սարուխանեանցը, երկու հոգի էլ վիրաւորուեցին. իսկ թուրքերն ունեցան շատ զոհեր, որոնց թւում նաև բէկեր։

Երրորդ մեծ յարձակումը տեղի ունեցաւ դեկտեմբերի 28-ին. այս այն միջոցին էր, երբ Շուշում և Ասկէրանի շուրջը թշնամական յարաբերութիւնները նորից սուր բնաւորութիւն էին ստացել։ Այս անգամ յարձակմանը մասնակցում էին շատ հեռու տեղերից եկած, այն է՝ Հաջի-Սանլու, Բազարդուզ, Սէյիդտար, Արաբլու և այլ գիւղերի թուրքեր։ Ղարաղշլաղը պաշարուեց միաժամանակ մի քանի կողմերից։ Այս կռիւը տևեց մի ամբողջ օր կատաղի ուժով. կատաղի կռիւ տեղի ունեցաւ մանաւանդ Սարոբաբ սարի շուրջը, ուր դիրք էին գրաւել թուրքերը. բայց այս յարձակումը նոյնպէս յետ մղուեց և հայերն առաջ գնալով՝ աւերեցին Քեարահուզ և Ունաննաւ գիւղերը, առաջինը՝ մեծ չափով հանդերձ սպանութիւններով, իսկ երկրորդը՝ փոքր չափով։

Այս կռւի ժամանակ հայերն ունեցան երեք վիրաւոր, իսկ թուրքերն անյայտ քանակութեամբ սպանուածներ։

Չորրորդ մեծ յարձակումը, դարձեալ անյաջող վախճանով,

տեղի ունեցաւ փետրվար ամսին Եղծեւող գիւղի վրա, որի ժամանակ Թուրքերից սպանուեց ի միջի այլոց Ջաղաղուրցի Մօլլա-Գէիւշը, իսկ հայերից մի հոգի՝ Ալէքսան Միքայէլեանը։

Ցարձակումներ տեղի ունեցան մի քանի անգամ ևս, բայց ամեն անգամ էլ անյաջող հետևանքներով։

Սակայն Ղարաղշլաղի շուրջը տեղի ունեցող ընդհարումները այսքանով չէին սահմանափակւում. նա թէև ազատ մնաց մասսայական խուժումներից, բայց ազատ չը մնաց գաղտագողի սպանութիւններից։ Բաւական ղարաղշլաղցիներ սպանուեցին և կենդանի գողացուեցին Շուշու ճանապարհին Զարսլուի Թուրքերի ձեռքով. նման պախարակելի գործողութիւնների, հնարաւոր եղած դէպքում, դիմում էր նաև ղարաղշլաղցին։ Այս ձևի սպանութեան մայիս ամսում զոհ գնացին 13 ղարաղշլաղցի պատանիներ, որոնք դուրս գալով Ճօպօր աղբիւրի մօտ զբօսանքի, միասին ընկան գազանացած Թուրքերի սրերով. այդ պատանիներն էին՝ Աբրահամ, Սարուխան, Պօտրուս, Սահակ, Թիւնի, դարձեալ Թիւնի, Բախշի, Դանիէլ, Առստամ, Միրզա, Ղարա, Մանիա և Ասլան։

Զը նայած այս բոլորին, մինչև այսօր էլ ղարաղշլաղցին իր ազատ լեռների տէրն է, և իր քաջութեամբ պատկառանք ազդելով շրջակայ անհանգիստ Թուրք տարրերի վրա, հնարաւորութիւն է տալիս հայերին երթևեկելու Շուշի-Գօրիսեան խճուղիով ազատօրէն։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՏԱԹԵՎԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՅՈՒՆՎԱՐԻՑ—ՕԳՈՍՏՈՍ 1906 Թ.

Գօրիսից դէպի հարաւ, Որոտան գետի ձախ ափին, միմեանցից հեռու հեռու յաջորդաբար ընկած են՝ Եայիջի, Հալիձոր, Շընհէր և Խոտ գիւղերը, իսկ գետի աջ ափին՝ Երիցաթումբը. ապա գետից դէպի հարաւ, բաւական բարձր լեռների կուտակումների մի վիթխարի սարահարթի վրա, անդնդախոր մի ձորի ժայռոտ եզերքին շինուած է հռչակաւոր Տաթևի վանքը իր օրիգինալ շարժուն սիւնով։ Իսկ վանքի շրջապատում խորունկ ձորակներով միմեանցից բաժանուած ընկած են համանուն Տաթև, Սևարանց և Տանձատափ գիւղերը։ *)

Տաթևից դէպի հարաւարևելք 7 վերստի վրա բացւում է Զայ-Զամին ձորակը համանուն գետակով, որը գնում խառնւում է Բարգիւշատ (Որոտանի ստորին հոսանք) գետին։

Այդ ձորակի մէջ ընկած են մի շարք թուրք գիւղեր, այն է՝ Աղւանին, 25 տ., Տանձաւերը, 50 տ., Մահը, Քիւրդ-Ղալան, Շամսուզը։

Տանձաւեր գիւղը պատկանում է Սուլթանով բէկերին, որոնք ահագին դեր խաղացին Զանգեզուրի հայ-թուրքական ընդհարումների մէջ, ինչպէս այդ տեսանք Գօրիսի դէպքերի ժամանակ։

---

*) Տաթևից ցած, Որոտան գետի վրա, գտնւում է հռչակաւոր Սատանի-Կամուրջը, բնութեան հրաշալիքներից մէկը։ Դարերի ընթացքում կրային բաղադրութիւն ունեցող ջուրը բարձր ժայռերից կաթկաթելով աստիճանաբար քարացել է (сталактитъ), աճել, մեծացել այն աստիճան, որ միացնելով փրփրող, աղմկող Որոտան գետի երկու խորխորատ ափերը, կերտել է մի արտասովոր կամուրջ, որի կառուցածքի բացատրութիւնը բնութեան խորհուրդներին անգիտակ նախնեաց մարդը անկարող լինելով գտնել, վերագրել է այդ սատանային, անուանելով նրան «Սատանի-Կամուրջ։»

Տաթևից մի ճանապարհ Տանձաւեր և Աղւանի գիւղերի սահմանով անցնում է դէպի Ղափան։

Ահա այս ճանապարհը յիշեալ Թուրք գիւղերի պատճառով վտանգաւոր դարձաւ դեռ ևս 1905 թ. գարնան ամիսներից. իսկ յուլիս ամսից երթևեկութիւնը միանգամից դադարեց, մանաւանդ Ինջաբէլի կոչւած տեղում Թուրքերի ձեռքով Կաւարտ գիւղացի Կոստի Աղայեանի սպանութիւնից յետոյ։ Թուրքերը իրենց նպատակին հասան. երկու շրջանների մէջ յարաբերութիւնները երկար ժամանակով ընդհատուեցին։

Այսքանով չը բաւականացած, յունվարի 4-ին Թուրքերը մեծ ուժով յարձակուեցին Երիցաթումբ գիւղի վրա։

Տաթևի շրջանում բոլորից թոյլ և հեռու ընկած գիւղ համարւում էր Երիցաթումբը։ Չը նայած այդ բանին, Թուրքերը յետ փախան մի քանի սպանուածներ տալով, որոնց թւում էր սէյթաղեցի յայտնի աւազակ Ղարան։

Սակայն նախ քան այս, դեկտեմբերի վերջերին Սիսիանում տեղի ունէին խոշոր ընդհարումներ հանդերձ երկու կողմերի բազմաթիւ զոհերով։ Աղոդի և Վաղոդի գիւղերի մօտ տեղի ունեցած ընդհարման ժամանակ ընկել էր Սիսիանի սիրելին—Ստեփանեանը իր ընկերներով. այդ դէպքը հայաբնակ շրջաններում մեծ յուզմունք առաջ բերեց։

Ահա յուզման այս տպաւորութեան տակ Տաթևի շրջանի հայերը դեկտեմբերի 29-ին յարձակում գործեցին Եայիջի գիւղի մօտ գտնուող Քիւրդտար Թուրքաբնակ գիւղի վրա։ Թուրքերը մի կարճ դիմադրութիւնից յետոյ փախան՝ տալով բաւականաչափ զոհեր։ Գիւղը ենթարկուեց կողոպուտի և ապա հրդեհուեց, որը մինչև այժմ էլ աւերակ է։

Այս գիւղի աւերման որևէ պոռթ մենք չը գտանք. սպանութիւնների և աւերումների վարակիչ ախտը մի տարերային ուժով հայերին ևս մղել էր դէպի մի բարբարոս գործողութիւն, մի դատապարտելի շահատակութիւն։

Այս շրջանում Թուրքական մի յարձակում տեղի ունեցաւ նաև յուլիս ամսին։ Այս յարձակման մէջ էլ ղեկավարողի դեր ստանձնել էին Աղւանի և Տանձաւեր գիւղերը։ Յարձակումը ուղղւած էր Տանձատափի Մալդաշ կոչւած բինանների վրա, որտեղից Թուրքերը քշեցին 100 գլխից աւելի ոչխար և հրդեհեցին

բինանները։ Այս դէպքից յետոյ Ղափանի ճանապարհը, որով նոր նոր սկսել էին հայերը երթևեկել, նորից փակուեց և տանձատափ-ցիների համար ստեղծուեց մի ծանր դրութիւն. նրանք անկարող էին դուրս գալ դէպի արօտատեղիները և իրենց հանդերը։

Այս դրութիւնը ստիպեց հայերին պատրաստուել և օգոստոսի 8-ին յարձակուել նախ Աղուանիի և ապա Տանձաւերի վրա։ Թուրքերը մի կարճ դիմադրութիւնից յետոյ փախան, կուի տեղում թողնելով 9-ը դիակ, որից յետոյ երկու գիւղերն էլ աւերուեցին և հրդեհուեցին, որոնք մինչև այժմ էլ աւերակ են։

Տանձաւերը աւերուելուց յետոյ Ղափանի ճանապարհը բացուեց, երթևեկութիւնը սկսուեց, բայց մանր մունր յարձակումներն, այնուամենայնիւ, չը դադարեցին։

Օգոստոսի 20—25-ին նոյն Մալդաշի բինանների մօտից թուրքերը քշեցին տաթևացիներից մի քանի տաւար։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԻՍԻԱՆՈՒՄ

ՅՈՒՆԻՍԻՑ—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905 Թ.

Սիսիանը ընկած է Զանգեզուրի գաւառի հիւսիսարևմտեան մասում Որոտան (Բազար-Չայ) գետի բազմաճիւղ ակունքների և նրա վերին հոսանքի վրա, մի լեռնոտ և խորդ ու բորդ արտաքինով, որը, թէև զուրկ անտառներից, սակայն հարուստ ջրերով և սիրուն հովիտներով, ներկայացնում է հացահատիկների մշակութեան համար արդիւնաւէտ մի վայր։

Ամբողջ Սիսիանում կան 20 հայաբնակ գիւղեր, որոնցից բուն Սիսիանում գտնւում են 14-ը. սրանցից 5-ը, այն է՝ Ղալաջըղը, Անգեղակոթը, Շաղաթը, Մազրան և Բալաքը ընկած են Որոտանի վերին խառնուածքների վրա. իսկ առանձնապէս Ղալաջըղը ընկած է հեռու, վտանգաւոր մի տեղում։

Մնացեալ գիւղերը, այն է՝ Ղարաքիլիսան, Ուզը, Տուլորսը, Բռնակոթը, Ալիլուն, Աղքէնդը, Թազաքէնդը, Բնունիսը և Ախլաթեանն ընկած են Որոտանի մի փոքր ստորին հոսանքի և նրա երկու ճիւղերի, այն է՝ Սիսիան և Այրի-Չայ գետակների հովիտների վրա։

Սիսիանի այս մասը իր տեսքով աննման է։ Սալվարդի, Ղըզըլքիլիսայի և Ելլիջայի բարձունքները աստիճանաբար փուելով փուելով գալիս միանում են, կազմելով մի գեղեցիկ աւազան գեղածիծաղ յատակով, որի սիրուն լանջերի, ձորակների և դաշտավայրերի վրա խնամւում են օազիսի պէս այս և այն տեղ ընկած գիւղերը։ Աւազանի յատակը զանազան ուղղութիւններով ակօսում են փոքրիկ գետակներ, աւելի ևս գեղեցիկ դարձնելով Ելլիջայի գագաթից ձեր առաջ բացւող այդ հմայիչ աւազանը։

Սիսիանի մնացեալ 6 գիւղերը, այն է՝ Շինաթաղը, Լորը,

Գետաթաղը, Դարաբասը, Լծէնը և Շամբը մի շարքով ընկած են Բուն-Սիսիանից դէպի արևելք, Դարաբաս ձորակի մէջ, որը հիւսիսային ուղղութեամբ գնում խառնւում է Որոտանի ձորակին։

Սիսիանը չորս կողմից շրջապատուած է բազմաթիւ մանր ու մեծ թուրքաբնակ գիւղերով, որոնց մէջ իրենց անհանգիստ բնաւորութեամբ աչքի են ընկնում—Շաղաթի մօտ՝ Շուքեարը, Թազաքէնդի մօտ՝ Ջամարդտուն, Ախլաթեանի մօտ՝ Շխլարը, Ալիլուի մօտ՝ Սիսիանը,*) Ուզի և Ղարաքիլիսայի մօտ՝ Աղոդին և Վաղոդին։

Բացի այդ, Սիսիանի լեռները ամառուայ ամիսների ընթացքում բռնած են լինում ահագին թւով թափառական ցեղեր, որոնք տեղական թուրք տարրերի հետ միասին կազմում են մի վտանգաւոր մասսա։

Ահա մօտաւորապէս այն պայմանները, որոնք լուսաբանում են Սիսիանում տեղի ունեցած խոշոր ընդհարումների հնարաւորութիւնը։

Զանգեզուրի գաւառում հայ-թուրքական ընդհարումը առաջին անգամ արձագանք գտաւ Սիսիանի շրջանում, և այդ շնորհիւ այն բանի, որ նա սահմանակից էր Նախիջևանի գաւառին, ուր մայիս ամսին այնպէս մեծ չափով արտայայտութիւն գտան թուրքական գազանութիւնները։

Եւ իսկապէս, առաջին ընդհարումը տեղի ունեցաւ Նախիջևանի գաւառին սահմանակից երկու գիւղերում և այդ այն ժամանակ, երբ այդ գաւառի այս և այն տեղում խռովութիւնները դեռ ևս շարունակւում էին։

Յունիսի 25-ին Արիկլու գիւղացի աւազակ Մուրթուզը իր խմբով յարձակւեց Շաղաթ գիւղի նախրի վրա և ուզեց քշել, բայց գիւղից, ինչպէս և Մազրայից հասած օգնութեան շնորհիւ կարելի եղաւ նախիրն ազատել։ Աւազակ Մուրթուզին օգնութեան եկան Սալվարդ շղթայի վրա չւած Էլիաթից Ուսուբլու, Ահմադալար, Քեարիմբէկլու և այլ ցեղեր, որոնց շնորհիւ կռիւն աւելի մեծ ծաւալ ստացաւ։ Շուտով հայերին օգնութեան հասան նաև Ալիլու գիւղից և ուժեղ կռիւը շարունակւեց մինչև երեկոյ, որի ժամանակ հայերից վիրաւորւեցին 5 հոգի, իսկ թուրքերից սպան-

---

*) Սիսիան անունը գաւառամասից բաց իրեն վրա կրում է նաև մի թուրքաբնակ գիւղ։

ւեցին մօտ 10 հոգի։ Զը նայած այս բանին, Թուրքերը, այնուամենայնիւ, կարողացան տանել Մազրայից 90 գոմէշ և Շաղաթից՝ երկու հարիւրի չափ գառներ։ Իսկ հայերը յարձակւեցին և աւերեցին Ուսուբլուի օրան։ Ահա այդ ժամանակ Գեօմուրից եկաւ մի հարիւրեակ կօզակ և կռիւը դադարեց, թէև հայերն իրենց կենդանիները յետ ստանալ չը կարողացան։

Այս ընդհարումից անցաւ մօտ երկու ամիս, մինչև որ օգոստոսի 16-ին Ուչթափալարի մօտ Աղոդի և Վաղոդի գիւղերի սահմաններում Թուրքերի ձեռքով սպանւեցին չորս հայ բէկերը— Սաֆրազբէկեանները և Մէլիք-Թանգեանները։

Ինչպէս Գօրիսի դէպքերի նկարագրութեան ժամանակ էլ տեսանք, այդ չորս բէկերի սպանութիւնը մեծ յուզմունք առաջ բերեց ամբողջ Սիսիանում։

Բէկերի սպանութիւնից յետոյ տեղի ունեցան Շուշու և Գօրիսի դէպքերը, որոնց մանրամասնութիւնները աւելի ևս գունաւորւած կերպով հասնում էին Սիսիան և մտքերը յուզում։

Ահա այս յուզմունքների ժամանակ, օգոստոսի 22-ին, Ուսուբլուի և Ահմադալարի օրանները սարից իջնելով՝ վրանները խըփեցին Բռնակոթ գիւղի մօտ։ Բռնակոթցիք առաջօրէն իմացած լինելով, որ այդ օրանները իրենց հետ տանում են Դարալագեազի Մարտիրոս գիւղից փախցրած ոչխարի սուրուն, մօտեցան և գրաւեցին ոչխարը, որը միւս ոչխարներից միանգամայն տարբերւում էր իր տեսակով—պոչաւոր դմակով։ Ոչխարների գրաւումը տեղի ունեցաւ առանց մի որև է միջնադէպի. կառավարութեան միջամըտութիւնը վերջացաւ նրանով, որ Մարտիրոս գիւղից եկան մի քանի մարդիկ և ճանաչեցին իրենց ոչխարները։

Այս դէպքի պատճառով Թուրքերի մէջ նշմարւող շարժումը ծաւալ չը ստացաւ. նրանք չը վստահացան յարձակումներ գործել, նկատելով հայերի մէջ դիմադրութեան համար բաւականաչափ ուժ։

Այսպիսով խաղաղութիւնը այս շրջանում մի առ ժամանակ ևս կարելի եղաւ պահպանել, բայց ոչ ընդ միշտ. Թուրքերը ճանապարհների վրա կատարեցին մի շարք սպանութիւններ, որոնք առաջ բերին նոր յուզմունքներ։

Անհատական սպանութիւններ աւելի ևս յաճախակի դարձան նոյեմբերի սկզբներում։ Մի շաբաթւայ մէջ Մալիքլար Թուրք գիւղի սահմաններում սպանւեցին և անհետ կորան դալաջըղցի նա-

խըրչիներ, չորաններ և բեռնակիրներ թւով 6 հոգի։

Նոյն ձևով վարեցին նաև հայերը։

Նոյեմբերի 22-ին անյայտացաւ Արաւուս գիւղի սէյիդ Աղի-գեօզալը։ Այս դէպքը ամենից շատ յուզեց Սիսիան գիւղի թուրքերին, որոնք թէև գտնւում էին Աղքէնդ, Ալիլու, Թազաքէնդ, Տուլորս հայ գիւղերի մէջտեղ, այնուամենայնիւ, փորձեցին սէյիդի վրէժը լուծել։

Սէյիդի անյայտացման դէպքից մի օր անց, նոյեմբերի 23-ին, Սիսիան գիւղի դիմաց երկու թազաքէնդցի բեռնակիրներ թուրքերի կողմից յարձակման ենթարկւեցին։ Սրանք բեռները թողնելով հազիւ կարողացան փախչել, ազատւել։ Յարձակւողները չը բաւականացած դրանով՝ ընկան փախչող հայերի յետևից մինչև Թազաքէնդի մօտ. Սիսիանից սկսւեց խուժումը դէպի այդ գիւղը։

Սիսիանը, պէտք է ասած, բաւական մեծ գիւղ է, մօտ 200 տուն բնակիչներով և յայտնի է որպէս անհանգիստ վայր։ Ահա այդ անհանգիստ սիսիանցիներով պաշարւեց Թազաքէնդը երկու կողմերից։ Գիւղի ծայրում հրդեհւեցին մի քանի դէզեր, հրացանների որոտը սարսափ տարածեց գիւղի վրա. կին ու երեխաներ մի անօրինակ վայնասունով, ոտաբոբիկ, գլխաբաց սկսեցին փախչել դէպի Ալիլու գիւղը, բայց տղամարդիկ մնացին և կարողացան գիւղն ազատել աւերումից։

Սիսիանը դրանով չը հանգստացաւ. հայերի վայնասունը և Ալիլու փախչելը խրախուսեց նրան։ Երեք օր անց, նոյեմբերի 26-ին, Թազաքէնդը նորից ենթարկւեց յարձակման. այս յարձակումը ծրագրւած էր Ջօմարդտու և մի երկու այլ գիւղերի մասնակցութեամբ, թէև նա չիրականացաւ։ Թազաքէնդցին նախատեսելով մի այդպիսի յարձակում, նախօրօք կին ու երեխաներին տեղափոխելով Ալիլու, միւս գիւղերից օգնութիւն խնդրեց, շնորհիւ որի նա այս անգամ մի հակայարձակում գործեց։ Թուրքերը փախան կորուստներով, 8 հոգի նրանցից ընկան միմիայն մի դիրքում, որ գրաւած ունէին նրանք Ալիլուի ճանապարհի մօտ մի քարափի մէջ։ Եւ ապա հայերը սիրտ առած այդ յաջողութիւնից գնացին Սիսիանի վրա։

Թուրքերը ուժեղ դիմադրութիւն ցոյց տւին, բայց շուտով բաւական զոհեր տալով քաշւեցին գիւղի կենտրոնում ցցւած բլու-

րի վրա. մի հինաւուրց բերդի մնացորդների մէջ*), որից յետոյ գիւղում սկսւեց կողոպուտն ու աւերը։

Հայերը յետ չը մնացին Թուրքերից գազանութիւնների մէջ. նրանք հրդեհեցին 50-ի չափ տներ, քշեցին 6—700 տաւար ու ոչխար և շարունակում էին կողոպուտը, երբ վրա հասաւ զօրքը և գնդակների ուժով մաքրեց գիւղը կողոպտող հայերից։

Սիսիանի, այդ անհանգիստ գիւղի կորուստը շատ մեծ էր. բացի նիւթական վնասներից, նա ունեցել էր 50-ից աւելի սպանուածներ և վիրաւորներ։ Զոհեր տւին նաև հայերը. գլխաւորապէս կօզակների գնդակներից ընկել էին, Թազաքէնդից՝ Աւօ Կոստանեանը, 30 տ., Ալիլու գիւղից՝ Արշակ Գալստեանը, 25 տ., Եսայի Պօղոսեանը, 25 տ., Գրիգոր Գրիգորեանը, 38 տ., Մովսէս Յակովբեանը, 25 տ., Լևոն Սահակեանը, 25 տ., Մազրա գիւղից՝ Գէորգ անունով 26 տ. մի երիտասարդ, Բոնակոթ գիւղից՝ Գաբրիէլ Մէլիք-Թանգեանը, 45 տարեկան և մի երկու էլ մեզ անյայտ անուններ։

Ահա այս խոշոր ընդհարումից յետոյ շրջանը մի առ ժամանակ խաղաղւեց, բայց ոչ երկարատև։

Սիսիանի ճանապարհը դէպի Գօրիս ձգւում է Աղոդի և Վաղոդի գիւղերի վրայով. հասկանալի է, թէ այդ երկու անհանգիստ գիւղերի մօտով ներկայ պայմաններում ինչ կը նշանակէր ճանապարհորդել։ Անմեղ հայ ճամբորդներ այդ ճանապարհի վրա շատ են սպանւել, բայց կատարւում էին և յանդուգն սպանութիւններ. ձեզ օրինակ 4 հայ բէկերի սպանութիւնը, որոնց ուղեկցում էին նոյնի իսկ երկու ստրաժնիկներ։ Դրանից աւելի յանդուգն մի սպանութիւն տեղի ունեցաւ դեկտ. 23-ին. գօրիսեցի մի սայլապանի, որը երկու կօզակների ուղեկցութեամբ տեղափոխում էր մթերք զօրքի համար, խլեցին Թուրքերը կօզակների ձեռքից և սպանեցին։

Այս և սրա նման մի քանի սպանութիւններ այդ ճանապարհը հայերի համար դարձրին միանգամայն անանցանելի։ Քսան գիւղերի մի ամբողջ ժողովուրդ ստիպւած էր ճանապարհը ծռել, բարձրանալ սարերի վրա, մտնել ձորերի յատակը, իջնել Որոտան

---

*) Տեղացիները այդ բերդի պատմութիւնը կապում են Սիւնեաց Վասակ իշխանի անուան հետ։

գետի խորխորատները, մագլցել այդ աղմկող, որոտացող գետի անմատչելի կողերն ու ժայռերը Դօրիս երթևեկելու համար։ Այս մի ճանապարհ էր վտանգների հետ կապված, ուր մի փոքրիկ անզգոյշ քայլը խորխորատ կը տանէր քեզ էլ, ձիուդ էլ։ Այսպիսի ճանապարհ կը համաձայնէր անցնել խեղդված, նեղն ընկած ժողովուրդը միայն։ Մօմէնտը և կարիքը, յաճախ, մարդուն ձգում են ծայրահեղութիւնների մէջ և ընդունակ դարձնում յանցաւոր գործողութիւնների։ Այդպէս էր ներկայ մօմէնտը։

«Հարկաւոր է Աղոդին և Վաղոդին— այդ երկու անհանգիստ գիւղերը մէջտեղից վերցնել, որ կարելի լինի երթևեկել ուղիղ ճանապարհով». ահա այն յանդուգն և անմիտ ծրագիրը, որ դրուած էր մէջտեղ։

Դեկտեմբերի 25-ին զինուած հայերի մի մեծ խումբ յարձակում գործեց Աղոդի գիւղի վրա։ Թուրքերը կարճ դիմադրութիւնից յետոյ, բայց մեծ զոհեր տալով՝ փախան Վաղոդի, մի մասն էլ փակուեց մզկիթի մէջ։ Յարձակողների մի մասը ճամբայ գիւղից դուրս դիրքերի վրա, իսկ միւս մասը խուժեց գիւղը և սկսեց հրդեհել ու աւերել տները։ Այդ ժամանակ Շէքի գիւղի Թուրքերն օգնութեան հասան և կռուի ընթացքը փոխուեց. օգնութեան եկան նաև միւս գիւղերից, ինչպէս և Դարաբասից։ Գիւղից դուրս դիրքերում ճամբածներն ընկան խաչաձև կրակի տակ. տեղի ունեցաւ մի յամառ ու երկարատև կռիւ, որը վերջացաւ հայերի նահանջով։ Այդ ընդհարման ժամանակ Թուրքերն ունեցան բազմաթիւ սպանուածներ մինչև 60, շատերի վկայութեամբ նոյն իսկ աւելի հոգի, իսկ հայերը՝ 22։ Այդտեղ ընկան. Սիսիանի սիրելի Ստեփան Ստեփանեանը, ալէքսանդրապոլցի Վահագ Պարոնակեանը, բուլանղցի Զաքօն, մշեցի Յարութը և Յակովը, դարաբիլիսեցի Բաբագիւլ Խալաթեանը, բռնակոթցիներ՝ Թանգի-բէկ Մէլիք-Թանգեանը, Մկրտիչ Մակարեանը, Մանուչարեանը, Արշակը, Աբրահամեանը, ուզեցի Սարգիս Դանիելեանը, քարահունջեցի Արսէն Գէորգեանը, շնհերցի Խաչօն, ալիղուլեցի Սարգիսը և այլն։

Ահա այսպէս էր այդ անմիտ ծրագրի վախճանը, որը Սիսիանի հայերի վրա թողեց մի ճնշող տպաւորութիւն, իսկ Թուրքերի վրա՝ մի խրախուսիչ ազդեցութիւն, որը և առիթ դարձաւ Դարաբասի սոսկալի դրամային, ինչպէս այդ կը տեսնենք մի փոքր յետոյ։

ԿՈՏՈՐԱԾԸ ԴԱՐԱԲԱՍՈՒՄ

25—27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1905 Թ.

Ինչպէս վերը տեսանք, Դարաբասի ձորակում մի շարքով ընկած են Շինաթաղ, Լոր, Գետաթաղ, Դարաբաս, Լծէն և Շամբ հայաբնակ գիւղերը, տեսանք և այն, որ այդ ձորակը գնում միանում է Որոտանի ձորակին. ահա այդ խառնուածքի մօտակայքում ընկած են Աղոդին, Վաղոդին, ինչպէս և Որոտ, Իրիմիս, Բահարլու Թուրք գիւղերը։ Բացի այդ, յիշեալ վեց հայ գիւղերից երկուսը, այնէ՝ Շամբը, ընկած Թուրք գիւղերի սահմանների մօտ և Դարաբասը Թուրքախառն են։ Առաջինը նոր հիմնած գիւղ է, 35 տուն հայ և 20 տուն Թուրք բնակիչներով, իսկ երկրորդը բաւական մեծ գիւղ է, 215 տուն Թուրք և ընդամենը 36 տուն հայ բնակիչներով։

Դարաբասը՝ ընկած Եղիակ և Ջիվիր-Դաշ գագաթների սիրուն յատակում, հին հայկական գիւղ է, որը ունեցել է 700 տուն բնակիչ, 7 եկեղեցի, որոնց աւերակները մինչև այժմ էլ կան. մէկը, գիւղացիների վկայութեամբ, Թուրքերի այժմեան մզկիթն է, վերանորոգած Թուրքերի ձեռքով։ Դարաբասի Թուրքերը, դարձեալ գիւղացիների պատմելով, կրօնափոխ եղած հայեր են։ Սրան որպէս ապացոյց բերում են այն, որ շատ հայ և Թուրք ընտանիքներ մինչև այժմ էլ միմեանց ,,ամօղլի'' (հօրեղբօրորդի) են անուանում։ Անշուշտ այս հանգամանքը նպաստել է այնքան մօտ բարեկամական յարաբերութիւններին, որ գոյութիւն ունէր այդ գիւղի հայ և Թուրք ժողովուրդների մէջ նախ քան ընդհարումները, թէև չը պիտի անտես առնել և այն հանգամանքը, որ հայերը, ինչպէս ամէն տեղ, նոյնպէս էլ այստեղ եղել են համբերող կողմը և շատ ճնշումներ տարել են որպէս աւանդական մի դառն ճակատագիր։

Գալիս է հայ-Թուրքական ընդհարումը, մտքերը պղտորւում

են, անպատիժ կողոպուտը թունաւորում է նաև Դարաբասի ամօղլիներին և կամաց-կամաց նրանց մէջ նկատւում են կասկածելի շարժումներ։

Տեղի են ունենում Մազրայի ընդհարումները, չորս բէկերի սպանութիւնը, Գօրիսի և Շուշու դէպքերը, Մինքէնդի կոտորածը. տեղի է ունենում Սիսիանի աւերը, այս բոլորը յուզում են Դարաբասի թուրքերին, մանաւանդ՝ նրանց ջահելներին։

Այսպիսի տրամադրութեան մէջ հոկտեմբերի 17-ին թուրքերը յարձակւում և քշում են Շինաթաղ գիւղի տաւարը և սպանում Ալէքսան Եղիեանին, 25 տարեկան։ Նոյեմբերի վերջերին Գօրիսի ճանապարհին, ,,Եօթն-Աղբիւր'' կոչւած տեղում սպանւում են Միքայէլ Սարգսեանը, 35 տար. և Յովսէփ Գրիգորեանը, 30 տ., որոնց սպանութեան կասկածն ընկնում է Դարաբասի թուրքերի վրա։

Այս աւելի ևս լարում է դրութիւնը։ Դարաբասի թուրքերից 20—30 ընտանիքներ քոչում գնում են գիւղից, իսկ Շամբի հայերը, որոնք այդտեղ գաղթել էին Դարաբասից, գալիս տեղաւորւում են թուրքերի դատարկ մնացած տների մէջ։

Դարաբասի հայերը՝ նկատելով վտանգաւոր դրութիւնը, ստիպւած են լինում դիմել այս և այն տեղ, ղէնքեր ձեռք բերել, կապեր հաստատել միւս հայ գիւղերի հետ՝ ընդհարման դէպքում օգնութիւն ստանալու յուսով։ Այս բանն էլ գալիս է կասկածներ և յուզմունքներ ծնեցնելու թուրքերի մէջ։

Ահա այս խառն ու փնթոր վիճակում տեղի է ունենում Աղոդի գիւղի պաշարումը. Ստեփանեանի և իր 21 ընկերների սպանութեան լուրը կայծակի արագութեամբ տարածւում է ամբողջ Սիսիանում. թուրքերը միանգամից սիրտ են առնում և սպառնական դիրք բռնում։

Այս նոյնը տեղի է ունենում նաև Դարաբասում, մանաւանդ երբ Աղոդիից վերադառնում են օգնութեան գնացած թուրքերը։

Հայերը նկատելով սպասող փոթորիկը, դիմում են թուրքերի առաջաւոր մարդկանց խորհրդակցութեանը և աջակցութեանը։ Դեկտեմբ. 26-ին Ալակպար-բէկի տանը տեղի է ունենում ժողով. այդտեղ հայերի կողմից գնում են գիւղի քահանան՝ Տէր-Մկրտիչը և հասակաւոր հինգ գիւղացիներ։ Երբ սրանք ներս են մտնում ժողովատեղին, մի սարսուռ պատում է սրանց։ Հաւաքւած են լինում աւելի քան 30—40 թուրքեր, մեծ մասամբ զինւած, և

կասկածաւոր հայեացքներով։ Քահանային, որպէս Թուրքերից էլ յարգւած մարդու, նստեցնում են բոլորից բարձր, իսկ միւսները նստում են դրան մօտ։ Խօսակցութիւնը պտտում է օրւայ հարցի շուրջը. հայերն առաջարկում են Թուրքերին տեղափոխւել Շամբ, իսկ Շամբի հայերին տեղափոխել Դարաբաս։ Բայց Թուրքերը այս անգամ խօսում են այլ լեզուով. դրած խնդրից խուսափելով սկսում են հայերին յանդիմանել, մանաւանդ նրանցից մէկը—Քեալբալայի Ալփանանը, որն սպառնալիքներով յայտնում է, թէ ջահելներին այլևս զսպել չի կարելի, երաշխաւորելը դժւար է և այլն։

Ահա խօսակցութեան այս միջոցին գիւղի միջից լսւում է հրացանի մի պայթոց, ապա երկրորդը, երրորդը. ժողովի մէջ իրարանցում է ընկնում. դրան մօտ նստած 5 հայերը վայրկենապէս դուրս են պրծնում, փախչում, իսկ քահանան այդտեղ սպանւում է։

Ժողովի ժամանակ գիւղի մէջ կատարւեց հետևեալ դէպքը։ Նախ պէտք է ասենք, որ գիւղը բաղկացած է երեք մասերից, որոնցից հարաւային և հիւսիսային մասերում ապրում են Թուրքերը, իսկ կենտրոնում՝ հայերը։

Երկու ճամբորդ հայեր, որոնք զինւած անցնում էին Թուրքերի հարաւային մասով դէպի Գետաթաղ, Թուրքերը յարձակւեցին նրանց վրա՝ զինաթափ անելու նպատակով. այդտեղից ծագեց կռիւ և հրացանաձգութիւն, որի ժամանակ սպանւեցին երկու Թուրքեր։

Այդ հրացանաձգութեան ձայնը լսելով՝ Թուրքերի միւս մասում մի Թուրք ատրճանակի մի քանի հարւածով միմեանց ետևից սպանեց Շամբից գաղթած Մկրտիչ Խաչատրեանին, Մանուշակ Գրիգորեանին, 35 տ. և 5 տարեկան մի որդի աղջկայ—Սապի Գրիգորեանին։ Ահա այստեղից էլ սկսւեց ընդհարումը։

Թուրքերն անհամեմատ շատ լինելով՝ գնդակների տարափի տակ հայերին քշեցին լցրին տների մէջ, որի ժամանակ սպանւեցին նորից չորս հոգի, այն է՝ 80 տարեկան ծերունի Գրիգոր Աստուածատրեանը, 70 տարեկան կոյր պառաւ Հռոմ Սարգսեանը, Կաթուածահար 70 տար. պառաւ Աննման Գէորգեանը և 18 տար. Արշակ Միքայէլեանը։

Հայերի այդ նեղ բոպէին, ահա, հասան մօտակայ գիւղերից օգնական ուժեր և գիւղի ծայրից սկսեցին հրդեհել Թուրքերի տները և սպանել պատահածին։

Այս անգամ էլ Թուրքերը նեղ դրութեան մէջ ընկան. նրանց

մի մասը փախաւ սարերն ու ձորերը, իսկ մնացեալ մասը քաշուեց, և պատսպարուեց երեք մեծ, այն է՝ Մօլլա-Աբիլ-Հասանի և Ալակ-պար-բէկի (որի մօտ տեղի ունէր ժողովը) տների մէջ՝ հարաւային մասում և Աբաս Ալաքպար օղլու տան մէջ՝ հիւսիսային մասում։

Տներում թաղնուած հայերը օգնութեան եկողների աղաղակն առնելով՝ դուրս թափուեցին փողոց գազան կտրած. յարձակուեցին թուրքերի տների վրա կողոպուտներով և հրդեհումներով։ Հրդեհելով և աւերելով հասան մինչև այն տներին, ուր պատսպարուել էին թուրքերը մեծով, փոքրով, կանանցով և երեխաներով և ահա այդտեղ հայերը գործեցին չարագործութեան ամենասոսկալին. հրդեհեցին նաև այդ երեք տները մէջը եղած մարդկանցով։

Ոճիրը կատարուեց, հրդեհի մէջ և փլատակների տակ մնացին բազմաթիւ կենդանի էակներ։

Մենք տեսանք այդ այրուած տների մոխիրը, խառը մարդկային ոսկորներով և ցնցուեցինք. նզովեցինք ոճրագործներին, բայց աւելի շատ այն ոճրագործներին, որոնք ստեղծել էին այդ սոսկալի դժոխքը։

Մի օր անց Դարաբասին օգնութեան եկան Աղոդիի և Վաղոդիի թուրքերը. այս անգամ էլ հայերը փախան և թուրքերն սկսեցին կողոպտել և հրդեհել նրանց տները, մինչև որ նորից հայերն օգնութիւն ստանալով յետ եկան և թուրքերը հաւաքելով կենդանի մնացածներին հեռացան։

Դարաբասի թուրքերի կորուստը սոսկալի էր, իսկ զոհերը անհաշիւ։ Սպանուած, այրուած և այս ու այնտեղ ընկածների թիւը հասնում էր 272-ի։*)

Ահա այդ օրից Դարաբասը ներկայացնում է աւերակների մի կոյտ, ուր տիրում է գերեզմանային մի ահաւոր լռութիւն։

Դարաբասի ձորակում այլևս խոշոր ընդհարումներ տեղի չունեցան, թէև թեթևակի դէպքեր, ինչպէս էին յունիսի 10-ի յարձակումը Լծէնի վրա, որի ժամանակ սպանուեց Նիկողոս Աղամեանը, 25 տ. և յուլիսի վերջում տեղի ունեցած յարձակումը Շինաթաղի վրա, որի ժամանակ թուրքերը քշեցին 20 տաւար, դեռ շարունակւում էին։

Սակայն մենք անցնենք նորից Բուն-Սիսիան և տեսնենք ինչեր տեղի ունեցան այդ շրջանում Դարաբասի կոտորածից յետոյ։

---

*) Թէ ադմինիստրացիան որպիսի անտարբերութեամբ էր վերաբերւում այս բոլորին, երևում է այն բանից, որ մի այսպիսի խոշոր արիւնալի ընդհարումը լուրջ քննութեան անգամ չէր արժանացել նրա կողմից. ինչպէս պատմեցին մեզ այդ գիւղում, մի անգամ ոստիկանութիւնը կազմել էր մի արձանագրութիւն և անցել գնացել։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԻՍԻԱՆՈՒՄ

ՅՈՒՆՎԱՐԻՑ—ՅՈՒԼԻՍ 1906 Թ.

Ոչ Սիսիան գիւղի աւերը, ոչ Աղոդի գիւղի վրա տեղի ունեցած յարձակումը և հայերի տուած զոհերը և ոչ էլ Դարաբասի կոտորածը Սիսիանին խաղաղութիւն չը բերին, ընդհակառակը Թուրքերն աւելի ևս յուզեցին։

Թուրքերն ամեն կերպ մտածում էին և պատրաստւում վրէժխնդիր լինել, որքան կարելի էր մեծ թափով և որքան կարելի էր նշանակալից օրում։

Եւ ահա ծրագրւեց մի մեծ կոտորած Յունվարի 6-ին, հայերի համար այդ հանդիսաւոր ժամին։ Այդպիսի մի ծրագիր մենք տեսանք կազմւած Շուշու գաւառում, Ասկէրանի շրջանի հայ գիւղերի նկատմամբ։ Նոյնը տեղի ունէր և այստեղ. սակայն ինչպէս այնտեղ, այնպէս էլ այստեղ այդ դիւային ծրագիրը օդը ցնդեց։

Յունվարի 6-ի առաւօտեան, ճիշտ այն ժամին, երբ Անդեղակոթ գիւղի հայերը եկեղեցում կատարում էին ծննդեան հանդէսը, թուրքերի մի ահագին բազմութիւն՝ խմբւած Աղոդի, Վաղոդի, Որոտ, Շէքի և այլ գիւղերից, յարձակում գործեց գիւղի վրա մի սոսկալի աղմուկով և հրացանաձգութեամբ։ Այս յարձակմանը, ականատեսների վկայութեամբ, մասնակցում էր աւելի քան 1000 մարդ, առաջնորդում էր ոմն Շախսվար-բէկը և մի մօլլա՝ ջահադ կանչելով. արշաւախմբին ուղեկցում էր նաև դափ ու զուռնան։ Սակայն որքան ուժեղ էր յարձակումը, նոյնքան ուժեղ կերպով տեղի ունեցաւ դիմադրութիւնը։

Անդեղակոթում այդ ժամանակ գտնւում էր Սիսիանի սիրելի Քեռին. ահա այդ փորձառու զինուորն առաջ անցաւ, որին հետևեցին գիւղի շատ թէ քիչ զէնք գործածելու ընդունակ մարդիկ և շնորհիւ առաջնորդի փորձառութեան համեմատաբար քիչ թւով

հայ դիմադրողներին յաջողուեց յարձակումը յետ մղել։ Թուրքերը փախուստի դիմեցին, թողնելով 8 դիակ Անգեղակոթի մօտ. իսկ աւելի շատ թւով սպանուածներ և վիրաւորներ հետները տարան։ Հայերից սպանուեցին 2 կին, այն է՝ Բէկիխան Մկրտումեանը, 25 տ., Վարդիգիւլ Ալլահվէրդեանը, 40 տ., և Յովսէփ Հալանեանի 10 տարեկան տղան և 6 տարեկան աղջիկը։

Այս խոշոր յարձակումից յետոյ առ ժամանակ շրջանը խաղաղուեց, և նորից աղմկուեց փետրվար ամսին. տեղի ունեցան նոր դէպքեր, որոնցից մենք կը յիշենք մի քանիսը միայն։

Փետրվարի 2-ին Ելլիջա սարի Պատպատի կոչուած տեղում շխլարցի Թուրքերը երկու ճամբորդ Հորսեցի հայերին կինդանի բռնեցին և տարան. նրանց հետ եղող մի բռնակոթցին կարողացաւ փախչել և հաւար տանել։ Երբ Ախլաթեան գիւղի հայերը հաւարի գնացին, Շխլարի Թուրքերը նրանց հալածելով եկան պաշարեցին գիւղը, սակայն Թուրքերը յետ մղուեցին Ախլաթեանի մօտ 5 դիակ թողնելով։ Հայերից սպանուեց Եախշի Եղոհանը, 25 տարեկան։

Մայիսի 3-ին միաժամանակ յարձակում տեղի ունեցաւ Ալիլու և Տուլորս գիւղերի վրա, բայց երկու յարձակումներն էլ յետ մղուեցին առանց որևէ լուրջ վնասներ պատճառելու։

Յուլիսի 2-ին յարձակման ենթարկուեց Թազաքէնդը, որի ժամանակ Թուրքերը քշեցին 18 գլուխ տաւար։

Մի մեծ կորստաբեր յարձակում պատրաստուած էր Ղալաջը գիւղի համար։

Այս գիւղը իր հեռաւորութեամբ և լեռնականներին մօտ լինելու պատճառով այնքան զրկանքներ էր կրել և զոհեր տուել, որ դրանց թիւ ու հաշիւ չը կար։ Որոտան գետի ակունքների մօտ մի անգամ այդ գիւղից սպանուեցին 9 հոգի, բայց քանի քանիսը սպանուեցին մէկով, երկուսով։ Սակայն այդ բոլորը չնչին էին այն զրկանքների համեմատութեամբ, որ կրեց նա վերջին անգամ։

Յուլիսի 5-ին Շախսէվան և Ղարահինդիկլու էլիաթից մի քանի թուրքեր եկան Ղալաջրի արօտներից ոչխար գողանալու. հայերին յաջողուեց դրանցից մէկին բռնել և ահա ահագին բազմութիւն լեռներից իջնելով պաշարեց գիւղը. բայց հայերը կարոնացան շնորհիւ գիւղի յարմարաւոր դիրքերի յարձակումը յետ քշել։

Չը նայած դրան, հայերը նկատելով իրենց գիւղի վտանգաւոր դրութիւնը, այդ դէպքի յաջորդ օրը պատրաստուեցին քոչելու. բայց գիւղից դեռ նոր դուրս եկած նրանք պաշարուեցին Թուրքերով և նորից յետ փախան գիւղը։ Այս անգամ յարձակումը տեղի ունեցաւ թէ քոչւորների և թէ Աղոդի ու Վաղոդի գիւղերի կողմից միաժամանակ։ Ղալաջըղը նեղ օղակի պէս պաշարուեց չորս կողմից։ Թէև փոքրաթիւ, բայց հերոսաբար կուող ինքնապաշտպանութեան խումբը գերագոյն ճիգեր թափեց, մինչև որ կարողացաւ այդ օր էլ թէև մեծ զոհերով գիւղը խուժանից ազատել։

Այդ օրը հայերից սպանուեցին 22 հոգի, դրանք էին. Անգեղակոթ գիւղից՝ Առաքել Գրիգորեանը, 25 տ., Թորոս Յովհաննիսեանը, 20 տ., Շահնազար Յարէթեանը, 40 տ., Հաքիմի տղայ Արզումանը, 30 տ., Յարութիւն Կարապետեանը, 30 տ., Ղազար Ղևոնդեանը, 35 տ., Օգուլ Հայրապետեանը, 23 տ., Շողաթ գիւղից՝ Յարութիւն Յովհաննիսեանը, 40 տ., Ստեփան Տէր-Կարապետեանը, 18 տ., նաև հինգ հոգի, որոնց անունները մեզ յայտնի չեղան, Բալաք գիւղից, Վարդան Բաբայեանը, 28 տ., Զիլֆուղար Կարապետեանը, 30 տ., Ղարաքիլիսա գիւղից՝ մէկը—Մկրտիչ անունով, Ղալաջըղ գիւղից՝ երկու մարդ, մի կին և երկու էլ օտարականներ։

Չը նայած այն բանին, որ Թուրքերը այդ օրը յետ քաշուեցին աւելի քան 30 զոհ տալով, բայց և այնպէս նրանք յարձակուեցին նաև երրորդ օրը աւելի ևս մեծ բազմութեամբ. գիւղի դրութիւնը կրիտիկական դարձաւ. մի ճիգ ևս և ամէն բան վերջացած էր. ահա այդ րոպէին հասաւ զօրքը և ժողովրդին առած դուրս եկաւ, որից յետոյ գիւղը ենթարկուեց խուժանի սոսկալի կամայականութիւններին. քար քարի վրա չը մնաց. 60 տնից բաղկացած գիւղն աւերուեց, 60 ընտանիք մնացին բաց երկնքի տակ, տարագիր։ Ղալաջըղը բոլորովին աւերուեց և այժմ էլ աւերակ է նա։

Ղալաջըղն աւերուելուց անմիջապէս յետոյ հայերն էլ յարձակուեցին և աւերեցին չորս Թուրքական գիւղեր, այն է՝ Փուլը, Արիքլուն, Շուքեարը և Մալիքլարը, որտեղերից ժողովուրդը փախաւ մի քանի զոհեր տալով։ Այսպիսով աւելի քան 150 ընտանիք էլ այստեղ մնացին բաց երկնքի տակ տարագիր։

Սրանից յետոյ, յուլիսի 9-ին, Սիսիանի և Զօմարդտուի Թուրքերը եկան նորից պաշարեցին Թազաքէնդը, սակայն վրա հասան կազակները և Թուրքերից 8 հոգու սպանելով, ցրեցին նրանց։ Իսկ յուլիսի 12-ին եկաւ պատժողական գունդը և յիշեալ երկու Թուրք գիւղերը ոմբակոծեց, որից յետոյ միայն շրջանը խաղաղուեց։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՂԱՓԱՆՈՒՄ

Ղափանը բռնում է Զանգեզուրի գաւառի հարաւային ամբողջ կէս մասը, ուր լեռնային կազմուածքը շնորհիւ ճոխ բուսականութեան, հարուստ անտառների և բազմաթիւ մանր ու մեծ գետերի, այդ պատմական գաւառին տալիս է մի դիւթիչ տեսք, թէև այդ կողմերին յատուկ թանձր մշուշը յաճախ գալիս է օրերով ծածկելու հետաքրքիր աչքերից բնութեան այդ զարդը։

Ղափանի մակերևոյթը ծածկուած է անթիւ ձորերով և պատրուածքներով, որոնց միջով հոսում են Բարգիւշատը, Աջանան, Օխչին, Բասուտը, Մեղրին և շատ գետակներ, որոնք առատօրէն ոռոգում են այդ բազմակերպ մակերևոյթը։

Բացի այդ, Ղափանը յայտնի է իր պղնձահանքերով, որոնք թէև առ այժմ շահագործութեան մեծ ասպարէզ չեն դարձել, բայց իրենց հարստութեամբ մեծ ապագայ են խոստանում, մանաւանդ երբ ճանապարհների հաղորդակցութեան զարգացման հետ մուտք կը գործի այդտեղ հանքերը շահագործելու նորագոյն տեխնիկան։

Ղափանի շրջանի հայաբնակ գիւղերը, ընկած գաւառակի զանազան մասերում, ներկայացնում են վեց խմբակներ, որոնցից երկուսը ազատ մնացին խոշոր մասսայական ընդհարումներից։

Այդ խմբակներն են.

1) Ագարակ—Ուժէնիսի շրջան։
2) Աջանան գետի հովիտ։
3) Հանքերի շրջան կամ Անդրաջանան։
4) Օխչի ձոր կամ Օխչի գետի հովիտ։
5) Բասուտ գետի հովիտ։
6) Մեղրի գետի հովիտ։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԱԳԱՐԱԿ-ՈՒԺԷՆԻՍԻ ԶՐՋԱՆՈՒՄ

ՅՈՒՆՎԱՐ և ՕԳՈՍՏՈՍ 1906 թ.

Բարգիւշատ գետի արևմտեան մի ճիւղի—Քեահրէզ գետի վերին հովիտների վրա ընկած են Ղափանի վեց հայաբնակ գիւղերը, այնէ՝ Մողէսը, Ուժէնիսը, Խըզբրանցը, Եղվարդը, Ագարակը և Տանձաթափան։ Իսկ այս վեց գիւղերից դէպի հիւսիս, Զայ-Զամին գետի վրա ընկած է Զէյվան։

Հայ գիւղերի այս խմբակի շուրջը բազմաթիւ թուրքական գիւղերի շարքում գտնւում են անհանգիստ Իսկևանդարբէկլուն, Ալադինը, Եմազլուն, Զարալուն, Փարիջանը, Սալդաշը և Ղուբաթլուն։ Ղուբաթլու գիւղում ապրում է Իլդրիմ-բէկ Սուլթանովը, որին մենք պատահեցինք Գօրիսի դէպքերի նկարագրութեան ժամանակ և որը ահագին դեր խաղաց Զանգեզուրի ընդհարումների մէջ։

Ահա հայ գիւղերի այս շրջանում յունվարի սկզբին տեղի ունեցաւ Ղափանի առաջին ընդհարումը։

Մինչև այդ Ղափանի ոչ մի մասում հայ-թուրքական ընդհարում չեղաւ։ Օգոստոսին և նրա յետագայ ամիսներին Բունի-Զանգեզուրում և Սիսիանում տեղի ունեցող դէպքերը արձագանք չը գտան Պարսկաստանին սահմանակից այս շրջանում, սակայն չը պէտք է կարծել, որ այդտեղ յուզմունքներ տեղի չունէին, ընդհակառակը Նախիջևանի դաւառի ընդհարումների միջոցին Ղափանում լուրջ դրութիւն ստեղծւեց, տեղացի և պարսկահպատակ թուրքերի մէջ ակնյայտ դարձաւ մի ինչ որ արտասովոր շարժում. ճամբորդ հայերի վերաբերմամբ կատարւեցին կողոպուտի և սպանութեան դէպքեր, ճանապարհները դարձան վտանգաւոր և անանցանելի. մի ժամանակ այնպիսի գրգռուած դրութիւն առաջ եկաւ, մանաւանդ սահմանին մօտ շրջաններում, որ ժամ առ ժամ սպասւում էր յարձակման. բայց հայ ժողովրդի ծայրահեղ համբերողութեան շնորհիւ կարելի եղաւ առ ժամանակ թուրք տարրերի մէջ

նկատուող յուզմունքը մեղմել և ընհարումների առաջն առնել, թէև հնարաւոր չեղաւ այդ դրութիւնը մինչև վերջը պահպանել։

Մի փոքրիկ առիթ և ահա ընդհարումը պայթեց։

Յունվարի 9-ին Եղվարդ գիւղի հանդում Սարալու, Խաչ-թափա գիւղերի մի քանի թուրքերի և եղվարդցի հայերի մէջ կռիւ ծագեց, որի ժամանակ թուրքերից երկուսն սպանուեցին։ Այս դէպքից գրգռուած, թուրքերը նոյն այդ գիշերը յարձակուեցին Եղ-վարդի բինանների վրա, քշեցին 150 գլուխ տաւար, կողոպտեցին եղած չեղածը և ապա հրդեհեցին բինաներն ու խոտի դէզերը։ Այդտեղ եղող մարդիկ հազիւ կարողացան փախչել և ազատուել։ Սրանով չը բաւականացած թուրքերը փորձեցին յարձակուել նաև գիւղի վրա, բայց յետ մղուեցին, որի ժամանակ սպանուեց աւա-զակ Խանքիշին։

Յարձակումը կրկնուեց նաև յունվարի 14-ին, բայց այս անգամ աւելի մեծ ուժով և ուղղուած Մողէս գիւղի վրա։

Փոքրիկ Մողէսը անկարող եղաւ դիմադրել ահագին խուժա-նին. ժողովուրդը հազիւ կարողացաւ Արծւանիկ փախչելով ազատ-ուել. գիւղը ենթարկուեց կողոպուտի. թուրքերը տարան 400-ի չափ տաւար ու ոչխար և տնային բոլոր իրերը։

Մողէսը վիճելի գիւղ էր Խալիֆանով բէկերի և գանձարանի մէջ։ 1902 թուին հայերի վկայութեան շնորհիւ դատը վերջացաւ յօգուտ գանձարանի. մողէսցիների այդ վարմունքը եկան բէկերը պատժելու։ Ահա այն ընդհանրացած կարծիքը, որ գոյութիւն ունի Ղավանում Մողէսի աւերման նկատմամբ։

Մողէսի յարձակման ժամանակ սպանուեց ծերունի Օհանջան Օհանջանեանը, իսկ Բարխուդարեանի և Գալստեանի ընտանիքները հրդեհից ազատուեցին մի հրաշքով Արծւանիկից հասնող օգնու-թեան շնորհիւ։ Թուրքերից սպանուեցին աւելի քան 10 հոգի։

Յունվարի 18 և 19-ին յարձակման ենթարկուեց Զէյվան։ Ականատեսների վկայութեամբ ահագին խուժանին առաջնորդում էր անձամբ ինքը Իլդրիմ-բէկը։ Երկու օր շարունակ կրկնուում էին յարձակումները, բայց ապարդիւն. քաջ Զէյվան կարողացաւ յետ մղել խուժանին, որն անկարող լինելով գիւղն աւերել, գնաց հրդեհեց գիւղի բինանները։

Մի նոր յարձակում տեղի ունեցաւ Եղվարդի վրա նաև յունվա-րի 22-ին, բայց դարձեալ ապարդիւն. թուրքերը փախան 22 զոհերով։

Այս յարձակումով շրջանը մի առ ժամանակ խաղաղուեց, մինչև եկաւ օգոստոսը, այդ չարաբաստիկ ամիսը, երբ քոչուորները շարժուեցին իրենց տեղերից։ Հանքային շրջանում տեղի ունեցան նախ մի քանի սպանութիւններ և ապա խոշոր դէպքեր, ինչպէս այդ կը տեսնենք մի փոքր յետոյ։ Հանքային շրջանի այդ դէպքերը արձագանք գտան նաև այս շրջանում։

Օգոստոսի 10-ի լուսածագին Թուրքերի մի ահագին խուժան յարձակուեց Տանձաթափայի վրա։ Մինչև կէս օր դիմադրելով հայերն անկարող եղան կանգնեցնել խուժումը։ Ժողովուրդը հազիւ կարողացաւ փախչել Ագարակ։ Հարուստ Տանձաթափան բոլորովին կողոպտուեց և հրդեհուեց։ Խուժանը տարաւ 300 գլուխ տաւար, հարիւրաւոր բեռներով ցորեն, գարի և այլ տնային հարստութիւն։ Ժողովուրդը փախաւ բոլորովին պլոկուած՝ 5 զոհերով և մի քանի վիրաւորներով։ Սպանուեցին՝ Մէլիք Քարամեանների տանից՝ Միքայէլ-բէկը, 70 տար., Բէգլար-բէկը, 65 տար., Բահրամ-բէկը, 45 տար., Բախշի-բէկի կինը, 40 տար. և Հաթամ-բէկի աղջիկը, 19 տար.։ Թուրքերը նոյնպէս ունեցան զոհեր, բայց անյայտ թիւով։

Այդ նոյն օրը հայերն էլ յաձակուեցին և աւերեցին Եմաղլու, Խաշտապ և Ալմալի Թուրք գիւղերը։ Տանձաթափան մինչև այժմ էլ աւերակ է։

Օգոստոսի 14-ին յարձակման ենթարկուեց Ուժէնիսը, որը գրաւում է մի քանի Թուրք գիւղերի սահմանի վրա։ Հայերը ծանր դրութեան մէջ ընկան. գիւղի ծայրերում հրդեհուեցին 40-ից աւելի մարագներ։ Եւ այն վայրկեանին, երբ հայերը յուսահատած պատրաստւում էին գիւղը Թողնել խուժանին և փախչել, Ագարակից օգնութեան եկող հայերը յետևի կողմից յարձակուեցին Թուրքերի վրա և հալածեցին նրանց մի քանի զոհերով, թէև մինչև այդ նրանք արդէն տարել էին 60 տաւար և 100-ի չափ այծ։

Հայերից սպանուեցին Կոստան Աղասարեանը, 60 տար., Խոսրով Սահակեանը, 17 տար. և 9 հոգի էլ վիրաւորուեցին։

Ուժէնիսի վրա մի նոր յարձակում տեղի ունեցաւ օգոստոսի 22-ին. այս անգամ յարձակմանը մասնակցում էին նաև Պարսկաստանից եկած Թուրքեր, բայց չը նայած այդ բանին, ուժեղ դիմադրութեան հանդիպելով Թուրքերը յետ փախան, կոտրատելով ճանապարհին պատահած ջրաղացների քարերը։

Ահա ընդհանուր գծերով այն ընդհարումները, որ տեղի ունեցան Ագարակ-Ուժէնիսի շրջանում. սակայն աւելի խոշոր և արիւնալի ընդհարումներ տեղի ունեցան հանքային շրջանում, որին և անցնում ենք։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՆՔԵՐԻ ԿԱՄ ԱՆԴՐԱ-ՋԱՆԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

2 15 ՕԳՈՍՏՈՍԻ 1906 Թ.

Ագարակ-Ուժէնիսի գիւղախմբակից դէպի արևմուտք Աջանան գետի հովիտներում ընկած են Տօրթնի, Վերին և Ներքին Խոտանան, Շրվէնանց, Խլաթաղ, Առաջաձոր, Նորաշէն, Կաւարտ, Ըրկէնանց, Սևաքար, Զափնի և Արծւանիկ հայ գիւղերը։ Միմեանց մօտ մօտ ընկած այս գիւղերի շրջանում խոշոր մասսային ընդհարումներ տեղի չեն ունեցել. հետևապէս նրանց վրա կանգ առնել չարժէ և եթէ անուններին այդ ցանկը մենք առաջ բերինք, այդ էլ Ղափանի բոլոր հայաբնակ գիւղերի և նրանց տեղագրութիւնների մասին մի ամփոփ գաղափար տալու նպատակով։

Այս գիւղախմբակից դէպի հարաւ, Աջանան և Օխչի գետերի խառնուածքի վրա, Անդրաջանանի շրջանում և Ուղուր-Զայ գետի ձորերում գտնւում են Ղափանի պղնձեայ հանքերը, գործարանները և Ուղուր-Զայի բազարը մի քանի տասնեակ հայերի և թուրքերի խանութներով։

Հանքերի շրջանում աշխատում են աւելի քան 1500 բանւորներ, բաղկացած կէս մասը տեղացի հայերից, իսկ կէս մասը՝ տեղացի և պարսկահպատակ թուրքերից։

Հանքերի շրջանում ընկած են վեց հայաբնակ գիւղեր, այն է՝ Բարարաթումը, Բէյրը, Վաչականը, Պաղավերդը, Գիւտգիւմը, Ճակատէնը և բազմաթիւ թուրք գիւղեր, որոնց թւում գտնւում են Ղաթարը մի անհանգիստ մեծ գիւղ, Քեարխանան, Գեօմբանը, Դարզուլուն, Աղքէնդը և Ղարաչիմանը։

Հայ-թուրքական ընդհարումների ամբողջ մէկ ու կէս տարւայ ընթացքում անվերջ յուզմունքների և սարսափների տակ

գտնուող այս շրջանը թէև ազատ մնաց յարձակումներից, բայց վերջ ի վերջոյ նա աղմկեց և այն էլ հասարակ պատճառից, որն և առիթ դարձաւ ընդհարումների բռնկման ամբողջ Ղափանում։

Ճիշտ է, պատճառը չնչին էր, բայց նա առաջ եկաւ քոչուորների յետադարձ շարժումից դէպի իրենց ձմերանոցները։

Օգոստոսի 1-ին Բէխ գիւղի սարում Թուրքերի ձեռքով սպանուեց մի ձիապան հայ, Աւագ Սարգսեան անունով։

Դրանից մի օր անց, օգոստոսի 2-ին, Տայդաղ և Շիրվանլի քոչուորները Բարաբաթումի հողերով անցնելու ժամանակ իրենց նախիրներին խառնեցին այդ գիւղի հանդում եղած տաւարները և ուզեցին քշել։ Հայերը դուրս եկան կանգնեցնելու նախիրը. դրանից առաջ եկաւ ընդհարում, որի ժամանակ Բարաբաթումի այգիների մէջ սպանուեցին Ղարաչիման գիւղացի անցորդ երկու կողմնակի Թուրքեր։

Ահա այդ սպանուած Թուրքերից մէկի հայրը Ջամալ-բէկը, որդու սպանման լուրն առնելով՝ հաւաքեց մեծ բազմութիւն և յարձակուեց Մէլիք-Ազարեանի «Սիւնիք» գործարանի վրա, ուր առաջին զոհը եղաւ գործարանի մեխանիկ Մինաս Խոջամիրեանը։ Այս տեսնելով, գործարանում եղող մնացեալ 7 մարդիկ պաշտպանուելով՝ կարողացան մինչև երեկոյ կանգնեցնել խուժումը։ Սակայն այդ 7 հոգուց սպանուեցին նաև 2-ը, իսկ մնացեալ 5-ը խիստ նեղն ընկած հազիւ կարողացան փախչել ազատուել, որից յետոյ աւելի քան 150,000 ր. արժողութիւն ունեցող այդ շրջանի ամենալաւ գործարանը—«Սիւնիքը» կողոպտուեց և ապա հրդեհուեց։

Ահա այս դէպքը սարսափ տարածեց հանքերի ամբողջ շրջանի վրա. հանքերը կանգնեցին, բանուորները փախան գիւղերը, բազարում եղող Թուրքերը նոյնպէս փախան, որոնց խանութները—մօտ 40 հատ, աւելի քան 30 հազար բուբլու զանազան ապրանքներով, կողոպտուեցին հայերի ձեռքով։

Օգոստոսի 4-ին նորից վերսկսուեցին խռովութիւնները և ընդհարումները։

Վաչական և Պաղավերջ գիւղերին սահմանակից է Թուրքաբնակ Քեարխանա գիւղը, որտեղից այդ օրը կրակ բացին հայերի վրա։ Հայերը մեծ խմբով յարձակուեցին և պաշարեցին Քեարխանան. Թուրքերն անկարող լինելով դիմադրել, փախուստի դիմեցին, բայց ահագին զոհեր տալով։ Հայերը խուժեցին գիւղ գազա-

նացած ընազդներով. այդտեղ ընկան տասնեակներով մարդ, կին և երեխայ։ Ոճիրների յանցաւորութիւնը գիտակցելու ընդունակութիւնը կորցրած հայ խուժանը անխնայ սպանում էր, աւերում և ոչնչացնում պատահածը։

Ժողովրդի մի մասը կոտորուեց, միւս մասը փախաւ ազատուեց, իսկ գիւղը հրդեհուեց, որը մինչև այժմ էլ աւեր է։

Եւ ապա մի քանի օր շարունակ տեղի ունեցան երկու կողմերից փոխադարձ յարձակումներ, որի ընթացքում հայերը աստիճանաբար օգնութիւն ստանալով շրջակայ գիւղերից, յարձակուեցին և աւերեցին մի շարք թուրք գիւղեր, այն է՝ Ջիբլլուն, Խալաջը, Գէչի-Շարադինը, Ինջավարը և Զուլլուն։

Ամենամեծ ընդհարումը այս շրջանում տեղի ունեցաւ Ղաթար գիւղի շուրջը։

Ղաթարը 70—80 տուն բնակիչ ունեցող գիւղ է, ընկած Ղաթար պղնձահանքի բարձրում, Սայադ-Դաշ լեռան կրծքին։ Շրջակայ թուրք գիւղերից այդտեղ խմբուեցին բաւական կուռ ուժեր. խմբուեցին նաև հանքերում բանող պարսկահպատակ մշակներ և քոչւոր թարաքեամաներ։ Այդտեղ եկան նոյնպէս մի քանի յայտնի թուրքեր. այնպէս որ ակներև դարձաւ Ղաթարի սպառնական վերաբերմունքը դէպի հայ գիւղերը։

Օգոստոսի 7-ին թէ 8-ին Ղաթարը մի թեթև յարձակում գործեց Բէխ գիւղի վրա, բայց շուտով յետ քաշուեց։ Այդ դէպքից յետոյ Աջանան գետի շրջանի, բայց Ղաթարի սահմանակից կաւարտ մեծ գիւղը սարսափի տակ ընկաւ. նրան սպառնում էր մի մեծ և ահաւոր յարձակում։ Այդ նկատելով, հայերն իրենց ուժերը կենտրոնացրին այդտեղ և մինչև որ Ղաթարը կիրագործէր իր մտադրութիւնը, պաշարուեց չորս կողմից զինուած հայերով։

Օգոստոսի 12-ին տեղի ունեցաւ Ղաթարի սոսկալի կռիւը, որը տևեց մի ամբողջ օր և որի ժամանակ թուրքերի անօրինակ դիմադրութիւնը, ասում են, զարմանք պատճառեց պաշարողներին։ Մի ինչ որ անասնաբուժի ղեկավարութեամբ Ղաթարում խմբուած թուրքերը քաջութեան հրաշքներ գործեցին։ Սակայն թափող գնդակներից ընկան բաւականաչափ թուրքեր, ընկաւ նաև դիմադրութիւնը ղեկավարող անասնաբուժը. յուսահատութիւնը տիրեց գիւղին և ահա սկսուեց փախուստը գնդակների տարափի տակ, դիակների վրայով։ Հայերը ներս խուժեցին գիւղ և սկսուեց աւերն

ու հրդեհը։ Ժողովրդի մի մասը կարողացաւ փախչել, իսկ միւս մասը, բաղկացած գլխաւորապէս կանանցից և երեխաներից, փակւեց մզկիթում և մի քանի մեծ տներում։

Ահա այդ ժամանակ, պատմում են, յարձակումը ղեկավարողներից մէկը, Մուրադը, խստիւ պատուիրեց մօտ չը գնալ մզկիթին, չը դիպչել կանանց, երեխաներին և պարսկահպատակ մշակներին, նաև այն մարդկանց, որոնք զէնքը ցած կը դնէին ինքնարերաբար. և այդպէս էլ եղաւ. բազմաթիւ կանանց, երեխաներին և պարսկահպատակ մշակներին հայ երիտասարդները առաջնորդեցին դէպի Թուրք գիւղերը. բայց ոճիրը գործւել էր. յանցանքը հայինն էր, Թուրքին, թէ երկրի կարգը պահպանող կառավարութեանը, այդ միևնոյն է. Ղաթարում ընկած զոհերի թիւը հասնում էր մի քանի տասնեակների. ամբողջ գիւղը աւերւել էր, դեռ երէկւայ շէն Ղաթարը այլ ևս չը կար։

Զոհեր տւին նաև հայերը և այն էլ շատ զոհեր, որոնցից միմիայն 7-ի անունները մենք կարողացանք ձեռք բերել. դրանք էին՝ կաւարտեցի Մարգար Մակիեանը, առաջաձորցիներ՝ Անդրէաս Թումանեանը, 30 տ., Խաչիկ Թումանեանը, 32 տ., շիկահողցիներ՝ Պապինը, 28 տ., Խունդիանոս Շաքարեանը, 22 տ., Նիկոլայ Տէր-Մատթէոսեանը, 20 տ. և Պետրոս Պետրոսեանը, 40 տար.։

Ահա այսպէս շրջանը տակն ու վրայ եղաւ, գիւղեր աւերւեցին, հազարաւոր մարդիկ թշւառութեան մատնւեցին, հանքերում կեանքը մնաց, ճանապարհներն աւելի ևս անանցանելի դարձան։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՆ ՕԽՉԻԻ ՁՈՐՈՒՄ ԿԱՄ ՕԽՉԻ ԳԵՏԻ ՀՈՎՏՈՒՄ

8—15 ՕԳՈՍՏՈՍԻ 1906 Թ.

Հանքերի շրջանից դէպի արևմուտք Օխչի գետի վերին հովտում կամ Օխչի ձորում ընկած են հինգ հայ գիւղեր, այն է՝ Քաջարանցը, Հանդը, Քրդիկենցը, Մազրան և Փուրխուտը։

Այս հինգ գիւղերին շրջապատում են բազմաթիւ թուրք գիւղեր, որոնց թւում գտնւում են՝ Օխչին, Շաբադինը, Փերդաւուդանը, Աթկըզը։

Շնորհիւ այն բանի, որ յիշեալ գիւղերը հեռու են ընկած թէ հանքերի և թէ Մեղրիի շրջաններից և շրջապատւած են թուրք տարրերով, դեռ Նախիջևանի գաւառի դէպքերի օրերից նրանք գտնւում էին մի ծանր կացութեան մէջ։

Ճիշտ է, այդ շրջանը չէր փոթորկւում և նա խաղաղ էր, բայց այդ շնորհիւ նրա, որ հայերը համբերութեամբ տանում էին ամէն մի զրկանք, որը յաճախ արտայայտւում էր սպանութիւններով։

Այսպէս, յունվարի 18-ին Ղալարասի կոչւած տեղում սպանւեցին քաջարանցեցի Վարդան Յարութիւնեանը, 40 տ. և մազրեցի Խաչատուր Մկրտչեանը, 45 տար.։

Յուլիսի մէջ Բօղաջղ գիւղի մօտ սպանեցին Քրդիկենց գիւղացի Պօղոս Յարութիւնեանը, 40 տ. և մազրեցի Անտոն Յակոբեանը, 45 տ., իսկ Մուսալլամ գիւղի մօտ կենդանի գողացան դարձեալ Քրդիկենց գիւղից Աբրահամ Համբարձումեանին։

Ահա այս ձևի պահպանւած խաղաղութիւնը նկան խախտելու հանքերի շրջանում տեղի ունեցող խոշոր դէպքերը։

Օգոստոսի սկզբին, «Սիւնիք» գործարանի հրդեհումից յետոյ, Օխչի գիւղը եկան մի քանի օտարական թուրքեր և սկսեցին տեղացիներին գրգռել հայերի դէմ։

Այս բանը այնքան ակներև կերպով էր կատարւում, որ

Օխչիի Թուրքերը հայերին միամտացնելու համար կարևոր համարեցին գալ նրանց մօտ և հաւատացնել, որ իրենք դէմ են ընդհարումներին և որ այդ օտարականներին փող տալով հեռացնելու են իրենց միջից. այն ինչ օգոստոսի 8-ին Քաջարանցը չորս կողմից պաշարուեց Թուրքերով։

Հայերը երեք օր կարողացան դիմադրել խուժանին և Թոյլ չը տալ նրանց խուժելու գիւղը։ Սակայն Թուրքերը քշեցին մօտ 400 տաւար, 1300 հատ ոչխար և մօտենալով գիւղի մի ծայրին՝ կողոպտեցին բաւականաչափ տներ և հրդեհեցին մարագները։

Երեք օր գիւղը պաշարուած մնալուց յետոյ Մեղրիից և հանքերի կողմից օգնութեան հասան զինուած տղաներ։ Օգնութեան եկողները շատ չէին, ընդամենը 20-25 հոգի, բայց դրանք անսպասելի կերպով յետևի կողմից յարձակուելով Թուրքերի վրա հալածեցին նրանց մեծ կորուստներով, որից տեղացի հայերը սիրտ առած խուժեցին յաջորդաբար Օխչի, Աթկըզ, Փիրդաւուդան, Շաբադին, Առջազուր, Աչըլլու և Բօղաջղ Թուրք գիւղերի վրա, որտեղերից ժողովուրդը փախչելով գիւղերն աւերուեցին։

Հայերի համար այսպիսի նեղ պայմաններում այնքան Թուրք գիւղերի աւերելը պիտի բացատրել Թուրք ժողովրդի այն տարօրինակ հոգեբանութեամբ, որ կուի և կողոպուտի այնքան հեշտութեամբ աճապարող Թուրք մասսան նոյնքան հեշտութեամբ և ամբոխին յատուկ հետեւողութեամբ գլուխ է վերցնում ու փախչում, այլևս քամակ չը նայելով։

Չը նայած այս բոլորին, Քաջարանց գիւղի դրութիւնը, որը ընկած է Օխչի, Աթկըզ, Շաբադին և Փիրդաւուդան Թուրք գիւղերի մէջտեղը, այնուամենայնիւ, վտանգաւոր համարուեց։ Այդտեղի ժողովուրդը օգոստոսի 11-ին ստիպուած եղաւ քոչել Քրդիկենց և Հանդ գիւղերը. Թուրքերն առանց օր կորցնելու յարձակուեցին և տներն աւերեցին ու հրդեհեցին։

Եւ ապա օգոստոսի 12-ին մեծ ուժով եկան պաշարեցին Քրդիկենցը, հանդից քշելով 300-ի չափ տաւար և 500-ի չափ ոչխար. կռիւը տևեց ամբողջ օրը, բայց հայերին յաջողուեց մի նոր և ուժեղ հակայարձակումով հալածել Թուրքերին։

Ահա այս ժամանակ միայն զօրք եկաւ և շրջանը խաղաղուեց։

Օխչի ձորի ընդհարումների մէջ Թուրքերը հարիւրից աւելի

զոհեր ունեցան. զոհեր ունեցան նաև հայերը. բացի վիրաւորներից, Քաջարանց և Բրդիկենց գիւղերից սպանուել էին՝ Անտոն Մարտիրոսեանի կինը—Սապին, 35 տ., Թադէոս Զաքարեանը, 28 տ., Խոսրով Վարդանեանը, 27 տ., Օհանջան Դաւթեանը, 40 տ., Աղաբէկ Մինասեանը, 25 տ., Թադէոս Մինասեանը, 25 տ., Ներսէս Բաղդասարեանը, 26 տ., Ղուկաս Համբարձումեանը, 45 տ., Համբարձում Ղազարեանը, 26 տ. և Շահի Յովհաննիսեանը 26 տար.։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՍՈՒՏ ԳԵՏԻ ՀՈՎՏՈՒՄ

6 15 ՕԳՈՍՏՈՍԻ 1906 Թ.

Հանքերի շրջանից դէպի հարաւ, Բասուտ գետի հովտում ընկած են վեց հայաբնակ գիւղեր, այն է՝ Շիշկերտը, Կիմանցը, Ծաւը, Հանդը, Շիկահողը և Սրաշէնը։

Այս խմբակը նոյնպէս մեկուսացած է հայաբնակ վայրերից, նոյնպէս շրջապատուած թուրք տարրերով։

Այս շրջանի թուրքերը շատ մօտ յարաբերութեան մէջ են Պարսկաստանի հետ. սրանց միջոցով և առաջնորդութեամբ անցնում էին սահմանը պարսկահպատակ թուրքեր և յարձակումներ գործում հայ գիւղերի վրա, հասնելով մինչև Ուժէնիս, Տաթև և նոյն իսկ Սիսիան։ Կարծում ենք բացատրելու կարիք չկայ այն ծանր կացութիւնը, որի մէջ ապրում էր այդ փոքրիկ գիւղախումբը հայ-թուրքական ընդհարումներից ի վեր։

Մենք կանգ չենք առնի այդ շրջանում տեղի ունեցած մանր մունր դէպքերի վրա. կանգ չենք առնի նաև փետրվարի սկզբում տեղի ունեցած յարձակման վրա, որի ժամանակ թուրքերը փախան մի քանի դիակներ թողնելով, այլ կը յիշատակենք միայն վերջին ընդհարումը։

Օգոստոսի 6-ին Զանգելանի և Ղարագեօլի թուրքերը՝ միացած սահմանից այս կողմը անցած պարսկահպատակ թուրքերի հետ, մեծ ամբոխով եկան պաշարեցին Հանդը, Շիկահողը և Սրաշէնը։ Հայերը երկու օր շարունակ կարողացան ուժեղ դիմադրութիւն ցոյց տալ և ի դերև հանել նրանց մտադրութիւնը։ Թուրքերը նկատելով որ երեք գիւղերը միաժամանակ աւերելը դժուար է, երրորդ օրը բոլորը միասին մեծ ուժով գնացին պաշարեցին Հանդը,

որ և այդտեղից նրանք կարողացան քշել 60 հատ տաւար, մօտեցան գիւղի սահմաններին և կրակեցին մի քանի մարագներ։ Ահա այդ նեղ րոպէին հասաւ օգնութեան երիտասարդների մի խումբ Կորիւնի առաջնորդութեամբ և ազատեց Հանդը անխուսափելի աւերումից։

Դրանից յետոյ հայերը՝ հետևելով Թուրք խուժանի օրինակին, այս անգամ էլ իրենք յարձակեցին Թուրք գիւղերի վրա, որտեղերից ժողովուրդը փախչելով, աւերեցին Քեօլլու-Ղշլաղը, Մթնաձորը և Սանալուն, որոնք մինչև այժմ էլ անմարդաբնակ են։

Ղափանի այս սոսկալի տարեգրութիւնը փակելու համար, մեզ մնում է յիշել հայաբնակ գիւղերի վերջին խմբակը։

Այդ Մեղրի գետի հովիտն է, ուր ընկած են՝ Կալէր, Վանք, Տաշտուն, Լիճք, Վահրաւա, Կուտենիս, Կուրիս, Ագարակ, Մեղրի, իսկ դէպի արևելք՝ Մալև և Շանիձոր գիւղերը։

Այս շրջանում մասսային ընդհարումներ տեղի չունեցան, բայց նրանց սարսափները մինչև վերջը շարունակեցին։

Ինչ վերաբերում է մասնակի դէպքերին, դրանց հաշիւ չկայ։ Մենք կը յիշենք մեր իմացած մի երկու դէպքերը։

1905 թ. յուլիսին Թուրքերը քշեցին Տաշտուն և Վահրաւա գիւղերի 1000-ից աւելի ոչխարը և սպանեցին տաշտունցի Առաքելին։

1906 թ. փետրվարին քշեցին Շանիձորի տաւարն ու ոչխարը։

1906 թ. ապրիլ ամսին Շանիձորի մօտ Թուրքերի ձեռքով սպանուեցին բէխեցի Դաւիթ Մէլիք-Փարսադանեանը և շիշկերտցի Մարտիրոսը։

1906 թ. սեպտեմբերին Թուրքերը քշեցին սարից Մեղրիի 80 տաւարը. ապա՝ Փուշկակ գիւղակի 70 տաւարը և Թուրք Լեհվազ գիւղի 30 ոչխարը։ Լեհվազի Թուրքերը Ալանգեօզի սարում հայերի հետ միասին կռուում էին Թուրքերի դէմ։

Ինչպէս տեսանք Ղափանի շրջանում խոշոր ընդհարումներ և սոսկալի աւերումներ տեղի ունեցան օգոստոսի 2-ից սկսած մինչև 15-ը։

Այժմ տեսնենք թէ ինչ էր անում այդ ժամանակ ադմինիստրացիան։

«Միմեանց քամակից հեռագրում էինք Շուշի նահանգապետին և Գօրիս գաւառապետին, որ գաւառում ահագին ընդհարումներ կան, որ գիւղեր երկու կողմերից աւերւում, քանդւում են, որ յուզմունքը ծայրահեղ չափերի է հասել և տեղի են ունենում կոտորածներ, սակայն զօրք չէր ուղարկւում, կարգադրութիւն չէր արւում և ամբողջ շրջանը թողնւած էր բախտի կամքին». ահա այս պատմում էր մեզ խաղաղարար կոմիսիայի անդամ Ս. Մելիք-Ստեփանեանը, ցոյց տալով մեզ այն մի շարք հեռագրների պատճէնները, որ ուղարկւած էին նահանգապետին և գաւառապետին։

«Եւ զօրքը եկաւ այն ժամանակ, երբ ընդհարումները բաւականաչափ հանդարտւել էին և պէտք էր տուգանքներ գանձել»։

Եւ իսկապէս ընդհարումներից յետոյ սկսեցին տուգանքների գանձումը Ղափանում։

15 հայ գիւղերից վերցրին 13,000 ռուբլու չափ տուգանքը, չը խնայեցին նոյն իսկ Օխչիի ձորի 4 հայ գիւղերին, որոնք ստիպւած էին անհաւասար կռիւ մղել շրջապատող տարրերի հետ։ Տուգանքներ վերցրին նաև թուրքերից, շատ տեղերում նոյն իսկ 10-ական ռուբլի իւրաքանչիւր տանից։

Թշուառ ժողովուրդներ. բաւական չէ որ անգիտացած միմեանց աւերում քանդում էիք, միևնոյն ժամանակ աւերւում քանդրւում էիք տուգանքների և էկզեկուցիաների շնորհիւ, որոնց ոչ չափն էր նախատեսնւում և ոչ վախճանը։

Վերջացնելով Զանգեզուրի գաւառի այս արիւնոտ տարեգրութիւնը, մենք առաջ կը բերենք մի հղինակաւոր կարծիք ևս, որը մի աւելորդ ապացոյց կը սփռի հայ-թուրքական ընդհարումների վրա մասնաւորապէս Զանգեզուրում։

Զանգեզուրի IV մասի հաշտարար միջնորդ պ. Ֆոն-Մենդենկամպֆը Զանգեզուրում հայ-թուրքական ընդհարումը բռնկելուց յետոյ Գանձակի նահանգի գեներալ-նահանգապետին այդ ընդհարումների առիթով ներկայացրեց մի ընդարձակ և միևնոյն ժամանակ շատ հետաքրքիր զեկուցագիր, որից քաղւածօրէն մենք կը բերենք մի երկու փոքրիկ կտորներ. ահա նրանք.

«1904 թ. սեպտեմբեր ամսից*), երբ ես ստանձնեցի հաշ-

---

*) Տես „Елисавет. Кровав. дни" երեսներ 126, 129, 135, 137։

տարար միջնորդի պաշտօնը—ասում է դօկլադի մէջ Ֆօն Մենդենկամպֆը—առանց բացակայելու ապրելով յետ ընկած գիւղերի գիւղացիների մէջ նախ IV և ապա V ոստիկանական մասերում, Զանգելանում և Բարաբաթումում, ոչ մի անգամ անձամբ չը նըկատեցի և չը լսեցի հայ և Թուրք բնակիչներից մինչև անգամ որևէ ակնարկ ցեղային Թշնամութեան մասին. ընդհակառակը նըկատեցի մաքուր բարեկամական կապեր գիւղացիների մէջ, մինչև քաւորութիւնը»։

Ապա իր ասածներին ապացոյց բերելով մի քանի օրինակներ, աւելացնում է.

«Հայերի դէմ ուղղուած Թուրքական շարժման հող կար, բայց այդ հողը պէտք է փնտռել ոչ Թէ խաղաղ կուլտուրական և ինքնապաշտպանութեան ընդունակ հայ ժողովրդի մէջ, ոչ Թէ օրէնքի առաջ հայ գիւղացու հետ միևնոյն պայմանների մէջ եղող Թուրք գիւղացիութեան մէջ, այլ Թուրք առաջաւոր դասի—բէկերի, սէյիդների և մոլլաների մէջ»։

Ապա բաւական կանգ առնելով այն պայմանների վրա, որոնք դրդեցին Թուրք առաջաւոր դասին կուլտուրայի ընդունակ հայ ժողովրդի դէմ, շարունակում է.

«Ոչ պակաս դեր խաղում է այստեղ նաև տեղական ադմինիստրացիայի անտակտութիւնը՝ Թուրքերին ցոյց տուած համակրանքով և հետևապէս նրանց դէմ հէնց սկզբից ձեռք առնելիք վճռական միջոցների բացակայութեամբ և ընդհակառակը իշխանութեան բացասական վերաբերմունքով դէպի հայերը»։

Եւ ապա առաջ բերելով մեղադրանքներ գաւառապետ Աւալիանիի դէմ, անաչառ պաշտօնեան իր դօկլադը վերջացնում է 14 հարցերից բաղկացած մի դիմումով. ահա նրանցից երեքը.

«Ինչու Գօրիս քաղաքի աչքերի առաջ 12 ժամ շարունակուող հրացանաձգութիւնը հայերի և Թուրքերի մէջ—բացակայում է Ֆօն-Մենդենկամպֆը անձամբ դուրս չեկաւ դադարեցնելու գաւառապետը կօղակների հետ միասին, մինչև այդ չարաբաստիկ հրացանաձգութեանը վերջ դրուում է գաւառի ամբողջ կոտորածը»։

«Ինչու II մասի պրիստաւ նշանակուեց նախկին բանտարկեալ Սաղդ-բէկ Մէլիք-Ասլանովը»։

«Ինչու այդ նոյն Մէլիք-Ասլանովը հակառակ մինքէնդցի-

ների խնդրանքի չը հեռացուեց պաշտօնից մինչև կոտորածը, սակայն որը հեռացուեց նոյն իշխանութեան ձեռքով միմիայն կոտորածից յետոյ»։

Ահա մեղադրական ակտերը պաշտօնական շրջաններից, պաշտօնական շրջանների դէմ։

Միթէ այլևս որևէ կասկած կարող է լինել այն մասին, որ հայ-թուրքական կոտորածների մէջ կար մի խորհրդաւոր ձեռք, որը նիւթել էր այս դժոխքը։



Ցուցակ Զանգեզուրի գաւառի այն գիւղերի, որոնց ժողովուրդը փախել կամ խոշոր վնասներ է կրել ընդհարումների ժամանակ։

ՀԱՑ ԳԻՒՂԵՐ

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն	Քոչած	կողոպտ.	Աւերած	կոտորած
1	Մինքէնդ	85	քոչ.	կող.	աւեր.	կոտ.
2	Խոզնավար .	80	—	,,		—
3	Զէյվա .	25	քոչ.	,,	—	
4	Ալիղուլի .	100	,,	,,	աւեր.	—
5	Հարար .	103	,,	,,	,,	—
6	Թազաքէնդ .	68	,,	—	—	—
7	Ղալաջըղ .	42	,,	կող.	աւեր.	կոտ.
8	Շամբ .	42	,,	—	—	—
9	Դարաբաս		,,	կող.	—	—
10	Եղվարդ .	87	,,	,,	աւեր.	—
11	Մողէս . .	35	,,	,,	,,	—
12	Տանձաթափա	29	,,	,,	,,	—
13	Քաջարանց .	50	,,	,,	—	—
14	Քրդիկենց	40	—	,,	—	—
15	Հանդ . . .	31	—	,,	—	—

ԹՈՒՐՔ ԳԻՒՂԵՐ

1	Բայինդուր .	50	քոչ.	կող.	աւեր.	—
2	Հալաք .	35	,,	,,	,,	—
3	Բինաերի.	15	,,	,,	,,	
4	Քեօսալար	25	,,	—	,,	—
5	Մալիբէկլու	50	,,		,,	—
6	Զաղազուր	40	,,	—	,,	—
7	Զայլու . .	10	,,	—	,,	—
8	Քեալավալախ	25	,,	—	,,	—
9	Նօվրուզլու . .	10	,,	—	,,	—
10	Զէջիմլու	102	,,	—	,,	—

11	Հաջիլար .	26	քոչ.	կող.	աւեր.	—
12	Բաղրբէկլու .	—	,,	—	,,	—
13	Քեարահուզ .	30	,,	—	—	—
14	Ունաննաւ .	25	,,	—	աւեր.	—
15	Քիւրդտար .	19	,,	կող.	,,	—
16	Աղւանի .	13	,,	—	,,	—
17	Տանձաւեր .	26	,,	—	,,	—
18	Սիսիան .	95	—	կող. *	—	—
19	Աղոդի .	100	—	,, *	—	—
20	Դարաբաս	110	քոչ.	,,	աւեր.	կոտ.
21	Փուլ .	17	,,	—	,,	—
22	Արիքլու .	18	,,	—	,,	—
23	Շուքեար .	34	,,	—	,,	—
24	Մալիքլար .	30	,,	—	,,	—
25	Եմազլու .	45	,,	—	—	—
26	Խաշտապ .	30	,,	—	—	—
27	Ալմալի .	12	,,	—	—	—
28	Քեարխանա .	28	,,	—	աւեր.	կոտ.
29	Ղաթար .	47	,,	կող.	,,	,,
30	Ջիբլլու .	30	,,	,,	—	—
31	Խալաջ . . .	50	,,	—	—	—
32	Գէչի-Շաբադին	30	,,	կող.	—	—
33	Ինջավար .	19	,,	,,	—	—
34	Զուլլու .	17	,,	,,	—	—
35	Օխչի .	176	,,	—	աւեր.	կոտ.
36	Աթկրզ . .	20	,,	—	,,	—
37	Փիրդաւուդան .	—	,,	—	,,	—
38	Առջազուր	—	,,	—	,,	—
39	Աջլլու . . .	36	,,	—	,,	—
40	Բօղաջղ . . .	—	,,	—	,,	—
41	Քեօլլու-Ղշլաղ .	23	,,	կող. *	—	—
42	Մթնաձոր .	10	—	,, *	աւեր.	—
43	Սանալու .	17	քոչ.	—	—	—

*) Մասնաւոր չափով կողոպտուած։

ԳԱՆՁԱԿ

Գանձակը նահանգական քաղաք է, ընկած Թիֆլիսից 180 վերստ հեռաւորութեամբ, Բագու տանող երկաթուղու գծի կողքին, երեք չորս վերստ դէպի հարաւ, Գանձակ գետի վրա։ Գանձակ գետը սկիզբն առնելով Փոքր-Կովկասեան լեռնաշղթայի հիւսիսային ստորոտներից, գալիս կտրում է Գանձակը հիւսիսարևելքից հարաւարևմտեան ուղղութեամբ, քաղաքը բաժանելով երկու մասերի։ Գետի աջ ափը, դէպի երկաթուղու գիծը, կոչւում է Թուրքական մաս. իսկ ձախ ափը՝ հայկական։ Թուրքական մասը ներկայացնում է մի ընդարձակ հարթավայր, իսկ հայկական մասը ձգւած է գետի ափերով բարձրացող մի մակարդակի վրա։

Թուրքական մասում Թուրքերից բաց ապրում էին նաև հայեր. դրանցից 20 տուն զետեղւած էին Երևանցոց փոքրիկ Թաղում, կամրջին շատ մօտ, իսկ հարիւրից աւելի տուն՝ Նորաշէն Թաղում, որն ընկած է Թուրքական Թաղի յետևի մասում՝ հարուստ խաղողի այգիներով։

Հայկական մասում հայերից բաց ապրում էին նաև աւելի քան 400 տուն Թուրքեր, զետեղւած երկու բաւական մեծ Թաղերում, այն է՝ Զայլուում և Մօլլա-Զալլուում, որոնք մի երկար գծով ընկած են հայոց Թաղի արևելեան սահմանի վրա, կազմելով նրա Թիկունքը։ Այստեղ ապրում էր Թուրք ժողովրդի աղքատ մասը՝ տալով գողերի բաւական մեծ Թիւ։

Այս Թաղերի հետ մշտական յարաբերութեան մէջ էր Թօփալ-Հասանլուն, հռչակաւոր աւազակաբարոյ այդ գիւղը, որին կը պատահենք յետոյ իր տեղում։

Գանձակը՝ շնորհիւ իր տաք կլիմայի և ճոխ բուսականութեան, մի պճնազարդ քաղաք է, թէև նրա մի քանի մասերը, մանաւանդ Թուրք բնակչութեան շրջաններում, իրենց արտաքինով և փողոցների անկանոնութեամբ ու անմաքրութեամբ շատ աւելի հեռու են քաղաքի արժանիքից։

Գանձակը յայտնի է իր ծառապտուղներով, որոնց մէջ աչքի է ընկնում նուռը։ Գանձակը յայտնի է նաև իր խաղողի այգիներով և գինեգործութեամբ, շնորհիւ որի որոշ չափով նա ունի առևտուր և դրամական շրջանառութիւն։ Առևտուրը կենտրոնացած էր գլխաւորապէս հայերի ձեռքում, իսկ շուկան գտնւում էր Թուրքաց մասում մի ընդարձակ հրապարակի շուրջը, որտեղ կառուցած է Շահ-Աբասի հինաւուրց մզկիթը։ Այդ հրապարակում տեղի ունեցան ահա բարբարոս գործողութիւնները։

Հայ-Թուրքական ընդհարումներից և հայոց բազարը կողոպուտի և հրդեհի զոհ գնալուց յետոյ*), ինչպէս քաղաքը, այնպէս էլ շուկան բաժանւած են երկու միմեանցից անջատ մասերի։

Գանձակի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 37,000, որից Թուրքեր՝ 17,000, հայեր՝ 15,000 և զանազան ազգեր՝ 5,000։

---

*) Գանձակի աւերումների ժամանակ կողոպտել, այրել և աւերել են 450 տուն, խանութ, տան մէջ, խանութի մէջ և այգիներ. ընտանը հասնում է 3 միլիոն գումարի։ Այսքան ընտանի ունեցել են միմիայն հայերը. Թուրքերն էլ ունեցել են կորուստներ աւերումներից և հրդեհումներից առաջ եկած, սակայն նրանց ընտանները շատ չնչին են հայերի կորուստների հետ համեմատած։

ԱՒԵՐՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ ԳԱՆՁԱԿՈՒՄ

18–23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1905 Թ.

Մարդկային հիւանդութիւնների մէջ կայ մէկը, որը ունի մի տարօրինակ արտայայտութիւն. նա, այդ հիւանդութիւնը, չի հարուածում, ինչպէս թոքերի բորբոքումը կամ տիֆը. նա չի շրջբրտում մարդուն անկողին. նա չի պատճառում ոչ ցաւ, ոչ տենդ և ոչ էլ ջերմ։ Բայց նա մարդուն աւելի քան տանջում է, թէև անընկատելի կերպով։ Անքնութիւն, անհանգիստ վիճակ, ախորժակի խանգարումն, թափառելու ցանկութիւն, բոպէական վրդովմունք, չնչին երևոյթներից մեծ տպաւորութիւն, և վերջապէս մկանների ուժեղ ցնցումներ. ահա այն սիմպտոմները, որոնց գիտութիւնը տուել է ջղային հիւանդութիւն անունը։

Ճիշտ ջղային հիւանդութիւնների և ցնցումների ախտով բռնուած մարդու վիճակ մաշում էր Գանձակը Բագուի փետրվարեան կարմիր օրերից սկսած մինչև նոյեմբերի 18-ը, ամբողջ ինն ամիսներ շարունակ, որին սովորական լեզուով անուանում ենք խաղաղութիւն։

Հայ-թուրքական ընդհարումների բեմ հանդիսացած քաղաքների մէջ, ճիշտ է, թէև Գանձակը ամենից երկար կարողացաւ խաղաղութիւն պահպանել, բայց նա ոչ թէ խաղաղութիւն էր, այլ անքուն գիշերների, անվերջ սարսափների, վերջապէս անխուսափելի գալիք կոտորածների սպառնական, հոգեմաշ միլիոնաւոր ծանր բոպէների մի անսահման շարան էր, որ Գանձակը մաշում էր տանջող երևակայութեան բեռի տակ։ Եւ նա ազատուեց այդ բեռի ծանրութիւնից, երբ երևակայութիւնը իրականութիւն դարձաւ, երբ կարմիր հեղուկը նրանից էլ հոսեց։

Հայը, ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և Գանձակում, սարսափում էր անմեղ արիւն թափելուց. մարդկային մտքի, ձեռքի ար-

դիւնքները, կուլտուրայի ստեղծած բարիքները այրելուց, ոչնչացնելուց և նա ամեն միջոց գործ էր դնում կանգնեցնել գալիք աղէտները։

Մարտի 4-ին Թուրքերը ասնում էին իրենց կրօնական սուգը—շախսէ-վախսէն. այդ համարելով յարմար առիթ դրացիական կապը աւելի ևս ամրապնդելու համար, հայերը վճռեցին այդ օրը խանութները փակ պահել։

Չը նայած հայերի կողմից գործ դրած նման ջանքերին, Երևանի մայիսեան դէպքերի ժամանակ Թուրքերի մէջ նկատուեցին յուզմունքներ, թէև մտքերը շուտով խաղաղուեցին։ Այդ յուզմունքները աւելի ակներև դարձան Շուշու կոտորածների ժամանակ, որ և օգոստոսի 19-ին հայերը ստիպուած էին խանութները կողպել և տուն քաշուել։ Սակայն այս անգամ էլ հնար եղաւ փոթորիկի առաջն առնել։ Տեղի ունեցան հայ և Թուրք ժողովուրդների, ինչպէս և հոգևորական ներկայացուցիչների խորհրդակցութիւն, եղան փոխադարձ հաւաստիացումներ. նորից մտքերը խաղաղուեցին, բայց ոչ յարատև. այնպէս որ սեպտեմբերի 23-ին նորից կարևոր համարուեց երկու ժողովուրդների փոխադարձ այցելութիւն կատարել. հայերը այցելեցին Շահ-Աբասի մզկիթը, իսկ Թուրքերը՝ Ս. Յովհաննէս մայր եկեղեցին։ Այս փոխադարձ այցելութիւններին առաջնորդում էր գեներալ Տակայշվիլին։ Նա դեռ ևս սեպտեմբերի 12-ին, երբ առաջին անգամ Գանձակ մտաւ, այցելելով առաջնորդարան, ուր հաւաքուել էին բաւականաչափ հայեր, խօսել էր շատ վճռողական տօնով, յայտնել էր, որ ինքը Թոյլ չի տալ ոչ մի կարգի խանգարումն և որ հայերը կարող են միանգամայն ապահով լինել։

Իշխանական հաւաստիացումն, ծիսական կարգ, ձևական այցելութիւն, ահա Նակաշիձէի աւանդ Թողած «փօլիտիկը»։

Եւ քեռի Նակաշիձէի սպանութիւնով վշտացած Տակայշվիլու նենգ ու դիւային մտածումները մի կողմից, քաղաքական հանգամանքների դասաւորութիւնը միւս՝ եկան խորտակեցին գերագոյն ճիգերը։

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը եկել էր ամոքելու վշտեր, մոռացութեան տալու կրած զրկանքները և հաշտութիւն ձգելու թշնամիների մէջ անգամ։

Հոկտեմբերի 21-ին Գանձակի Թուրքերը մանիֆեստի առի-

թով ցոյց կազմեցին. ահագին բազմութիւն երաժշտութեան ուղեկցութեամբ կարմիր դրօշակներ բարձրացրած եկաւ Ս. Յովհաննէս եկեղեցու մօտ և համերաշխութեան անունից ճառեր խօսեց։

Նոյնպիսի ցոյց, մի օր յետոյ, ուզեցին կազմել հայերը, նպատակ ունենալով ընթանալ դէպի մզկիթի հրապարակը և ազատութեան տօնի առիթով խօսել կրկին համերաշխութեան մասին, բայց այս միտքը իրագործել հնար չեղաւ. ակներև դարձան խուլիգանական հարիւրեակների կողմից ջանքեր՝ կոտորած սարքելու հէնց որ ցոյցը շարժւէր տեղից։ Ռուս բիւրօկրատիան դեռ ևս գոյութիւն ունէր. նա, նոյն իսկ իր մէջ ուժ էր զգում տապալելու մանիֆեստը և նախորդ օրւայ ցոյցի մասնակցող թուրքերից փորձում էր սև հարիւրեակներ կազմել։ Հայերը զգուշացան և ցոյց տեղի չունեցաւ. այդ զգուշութեան շնորհիւ ահա փոթորիկն այս անգամ էլ անցաւ։

Սակայն ռէակցիան կանգ չառաւ. նա ուզեց իր դժոխային ծրագիրն ինչպէս էլ լինի այստեղ ևս իրագործել։ Եւ ահա ընդամենը մի շաբաթ անց, հոկտեմբերի 27-ին, Գանձակում տարածւեց մի յուզիչ լուր և միաժամանակ լոյս տեսաւ Ռուսաց գործակալութեան մի հեռագիրը, որը հաղորդում էր, որ իբր Սարբսու գիւղում հայերը կոտորել են թուրքերին և որ այդ լուրը յուզել է նրանց հաւատակիցներին։

Այս հեռագիրը նպատակ ունէր սպասելիք կոտորածների մեղքը հայերի վրա ձգել, ինչպէս այդ նոյն բանը մենք տեսանք Նախիջևանի և Շուշու կոտորածների նախօրէքին։

Այս անգամ ևս փոթորիկն անցաւ շնորհիւ խելահաս թուրքերի, որոնք ուղարկելով և տեղն ու տեղը քննելով դէպքը, գտան որ ոչ միայն թուրքերի կոտորած չի եղել, այլ և Մանաշէթ հայ գիւղի տաւարը քշելու պատճառով հաւարի գնացած հայերը հանդիպել են Սարբսու գիւղի թուրքերին, որ և տեղի է ունեցել հրացանաձգութիւն, բայց առանց որ և է լուրջ հետևանք առաջացնելու։

Մինչև այդ գաւառներից հասնում էին Տակայշվիլու դէմ բողոքներ. հայերը ենթարկւում էին հալածանքի և էկզեկուցիաների. անմեղ մարդիկ բանդ էին ուղարկւում, չարագործ թուրքերը շարունակում էին ազատ մնալ և մի շարք այսպիսի փաստեր։ Եւ մինչդեռ Շուշուց մի քանի հայեր Տակայշվիլու գործունէութեան առիթով շնորհակալութեան հեռագիր էին ուղարկում փոխարքային,

Գանձակի յաջորդ Կորիւն վարդապետը նոյեմբերի 9-ին ստիպուած էր Թիֆլիս գնալ, ներկայանալ փոխարքային և անձամբ պատմելով հայ ժողովրդի կրած տառապանքները, խնդրել հեռացնելու նահանգապետութեան պաշտօնից նոյն Տակայշվիլուն։ Հարցը պարզ էր, Տակայշվիլին հայերի համար ներկայանում էր երկսայրի մի սուր։

Վերջապէս հասաւ նոյեմբերի 18-ը, Գանձակի համար այդ չարաբաստիկ օրը։

Չը մոռանանք յիշել, որ երկու օր առաջ Շուշուց Գանձակ էր վերադարձել Տակայշվիլին։ Ասում են, նա թթուած էր, Կորիւն վարդապետի բողոքը նրա զազրելի պաշտօնէութեան դէմ նրա սրտի մէջ կաթեցրել էր թոյնի մի նոր կաթիլ։

Նոյեմբերի 18-ին, օրն ուրբաթ, քաղաքային դպրոցի բակում նշանակուած էր միտինգ—մանիֆեստից յետոյ առաջին քաղաքական միտինգը Գանձակում։ Այդտեղ պիտի գային թէ հայեր և թէ թուրքեր։ Երկու ժողովուրդներ միասին պիտի տօնէին այդ օրը։ Սակայն դեռ միտինգից շատ առաջ, առաւօտեան պահին հայոց քաղաքամասի ծայրում, Դիք-Քիւչա փողոցի գլխին, Գրիգոր Տէր-Յարութիւնեանի այգու առաջ ընկած գտան երկու թուրքի, այն է՝ Տօղանլար գիւղացի Բայրամ Մաշադի-Մամադ-Ալի օղլու և Մէհր-Ալի Զէյնալ օղլու դիակները։ Սպանութիւնը կատարուել էր այլ տեղ, իսկ դիակները բերել ձգել էին այդտեղ։ Մի թուրք, որն իրեն համարում էր սպանուածների ընկերը, հայոց փողոցով շտապ անցնելիս, ականատեսների պատմելով, աղաղակում էր, որ իր ընկերներին սպանեցին թուրքերը, այն ինչ այդ նոյն թուրքը, երբ հասաւ թուրքաց մասը, մի ակնթարթում տարածեց, որ հայերը յարձակուեցին և սպանեցին իր երկու ընկերներին։*)

Ահա այն բոլորը, որն առիթ ծառայեց Գանձակի ամիսներով պատրաստուած սոսկալի դրամայի։ Չէ՞ որ նոյնանման առիթներ մենք տեսանք Նախիջևանի և Շուշու կոտորածների նախօրէքին։

Դիք-Քիւչայի սպանման լուրը բոպէապէս տարածուեց քաղաքում, սարսափ տիրեց ամենքին. միտինգը մոռացուեց, թուրքերը համախմբուեցին Շահ-Աբասի մզկիթում, ուր ներկայ գտնուեցին

---

*) Ստուգուած է, որ այդ երկու դիակները մի օր առաջ բերուած են եղել Բալըշլու թուրք գիւղից Բաղմանլար թաղը. իսկ Բալըշլուն նոյեմբերի 16-ին ընհարում էր ունեցել Զովդար հայ գիւղի հետ։

նաև անուանի թուրքեր և ժամը 10 և կէսին այնտեղից դուրս խուժեց ամբոխը կատաղած։ Առաջին զոհն եղաւ առաջին պատահած հայը—Վասիլ Տէր-Մարտիրոսեանը, որից յետոյ պայթեց փոթորիկն ինչպէս հրաբուխը։

Նոյեմբերի 18-ը ջումա էր—թուրքերի կիրակին և նրանք առաւտուր չունէին այդ օրը, իսկ հայերի խանութները բաց էին։ Ահա հէնց դրանց դէմ էլ ուղղուեց յարձակումը։

Մի վայրկեան շուկան լցուեց զինուած թուրքերով, շողշողացին սրեր, պայթեցին հրացաններ, գլորուեցին անմեղ հայեր տասնեակներով, սկսուեց խանութների կողոպուտը մի վանդալական շահատակութեամբ։ Ընկան խանութատէրեր, ընկան գործակատարներ, որոնք դեռ երկու օր առաջ ուզում էին գործադուլ անել խանութները հայոց թաղը տեղափոխել տալու նպատակով, սակայն որպիսի փորձերին ամեն անգամ արգելք էր հանդիսանում ոստիկանապետ Հասանբէկովը, ընկան և արհեստաւորներ։

Գազանացած խուժանը աջ ու ձախ սպանելով՝ խուժեց մեծ հրապարակին կից քարվանսարան ,,Փուչիչիխան'', ուր աշխատում էին բազմաթիւ խեղճ ու կրակ, աղքատ ընտանիքներ կերակրող արհեստաւորներ։ Այդտեղ աւելի գործ տեսաւ լուռ ու անաղմուկ սառը զէնքը, որը անխնայ ծակում, յոշոտում անցնում էր անխտիր հասակի, տարիքի։

Թափուեց եկաւ ընչաքաղց խուժանն ամեն կողմից. սկսուեց կողոպուտն ու աւերը։ Մի կողմից գլորուում էին անմեղ զոհերը, միւս կողմից բարձւում էին խորտակուած խանութների ապրանքները սայլերի և ֆուրգոնների վրա և տարուում օրը ցերեկով ամենքի աչքի առաջով. և ոչ ոք չէր կանգնեցնում, ոչ ոք չէր փորձում փակել այդ գործողութեան առաջը։ Տանող տանողի էր, ով ինչով կարողանար . . . Եւ այս գործողութիւնը շարունակւում էր ամբողջ օրը։ Թէ ինչ էր անում այդ միջոցին ոստիկանութիւնը, նրա դերը բնորոշելու համար առաջ կը բերենք ,,Елисаветпольск. Кровав. Дни'' գրքի 11, 14, 15, 16, և 17 երեսներից հետևեալ քաղուածքները։

,,Ոստիկանութիւնը յանձին ոստիկանապետ Հասանբէկովի, ականատեսների պատմելով, ոչ միայն միջոցներ ձեռք չէր առնում կանգնեցնել կոտորածն ու կողոպուտը, ոչ միայն չէր մտածում իր պարտականութիւնների մասին, այլ և շրջապատած հագուստ-

ները փոխած թուրք գիմազիստներով, խրախուսում էր կողոպուտը, միջնորդում արձակել այն թուրքին, որին մի հայի սպանելու մոմենտին ռուս զինուորները բռնելով բերել էին Ասլանդուզեան գնդի գնդապետի մոտ։ Բացի այդ, ոստիկանապետի թիկնապահ ինգուշը, մի քանի ականատեսների վկայութեամբ, հրացանազարկ էր անում պատահող հայերին, իր, ոստիկանապետի ներկայութեամբ և նոյն իսկ նրա հրամանով՝՝։

,,Բանդարկեալների վրա հսկող թուրք գօրօդօվոյ Քեարիմը, դարձեալ ականատեսի վկայութեամբ, նախ՝ ոստիկանատան միջանցքից սկսեց մաուզեր ատրճանակով կրակել փախչող և ոստիկանատուն դիմող հայերի վրա. ապա՝ դուրս գալով և ,,խարչենիկ՝՝ ու ,,չայչի՝՝ թուրքերի հետ միացած ներս խուժելով կոտրեց այն սենեակի դուռը, ուր պահւում էին կառավարչական զէնքեր ու փամփուշտներ և վերցնելով այդ բոլորը արձակեցին 12 թուրք բանդարկեալներին, որից յետոյ սկսեցին ներսն ու դուրսը հայեր փնտռել, նրանց կողոպտելու համար՝՝։

,,Խանութում փակւած մէկ այլ ականատեսի վկայութեամբ, որը ամեն բան տեսել էր դրան ճեղքից, պրիստաւի օգնական Աբուլ-բէկ Կապանլինսկին ոստիկանապետի թիկնապահ ինգուշի և ուրիշ թուրքերի հետ սկսեցին կողոպտել նրա արհեստանոցը, սակայն սրանց մօտենալով Ալակպար-բէկ Բաֆիբէկովը յանդիմանեց ասելով, որ դեռ կողոպուտի ժամանակ չէ, այլ պէտք է նախ սպանել՝՝։

,,Մի ռուս պաշտօնեայի—ժանդարմ Կաչանովսկու վկայութեամբ, զինւած թուրքերի մի մեծ ամբոխ, որը անցնում էր մեծ փողոցով, ոստիկանապետն ուղարկեց նրանց մօտ պրիստաւ Իսրաֆիլբէկովին, որը ամբոխին դարձրեց մի այլ փողոց, ուր նա սկսեց կոտրատել հայերի խանութները։ Ամբոխին մասնակցում էին զինուորներ և ոստիկանական պաշտօնեաներ, որոնց թւում նա նկատել էր առաջին մասի պրիստաւի օգնական Ֆաթալիբէկովին։ Նոյն վկան մի փոքր անց ականատես էր եղել, թէ ինչպէս ,,Ցենտրալ՝՝ հիւրանոցի մօտ գեներալ Տակայշվիլու և ոստիկանապետի ներկայութեամբ թուրքերը քարշ էին տալիս հայերի ապրանքը, կրակում հրացաններից, բայց իշխանութիւնը ոչ մի կարգադրութիւն չէր անում՝՝։

,,Ժանդարմ Կաչանովսկու այն հարցին, թէ ինչու թուրքերը

սպանում, կողոպտում են հայերին, Նորաշէնի Թուրք իւզբաշին պատասխանեց. ,,Այդ գիտէ ինքը գեներալ-գուբերնատորը''։

,,Կաչանովսկու ցուցմունքները ամբողջովին հաստատեց նաև ժանդարմ Գոլովենկոն փոխարքայի օդնական Մալամայի ներկայութեամբ, որին և տալիս էին անձամբ իրենց ցուցմունքները առաջ բերած մեր մի շարք դէպքերի ականատեսները''։

Ոստիկանապետին ներկայացրած նոյեմբերի 27-ի թուով երկրորդ մասի պրիստաւ Կամսարականի բապորտի մէջ արձանագրուած է Գանձակի ոստիկանութիւնը ընորոշող հետևեալ փաստը. ,,իմ ձեռքի տակ եղող Թուրք գորոդովոյները—զեկուցանում է պրիստաւը իր իշխանաւորին— առանց իմ թոյլտուութեան դեռ ևս առաւօտից քաշուեցին իրենց տները, իսկ հայ գորոդովոյներ իմ ձեռքի տակ կային ընդամենը չորս հոգի և այն էլ առանց որև է զէնքի, որովհետև զինուած էին միմիայն Թուրք գորոդովոյները''։

Չը մոռանանք ասելու, որ Գանձակի ոստիկանութիւնը անանուն բացառութեամբ— սկսած ոստիկանապետից մինչև ստորին պաշտօնեան, կազմուած էր Թուրքերից։

Աւելի այլանդակ մի դեր այդ կոտորածի ընթացքում վերցրել էր իր վրա Տակայշվիլին։

Մի խումբ ռուս պաշտօնեաներ, որոնք դուրս էին եկել ,,Кавказъ'' թերթի մէջ *) (№ 27 1906 թ.) պաշտպանելու Զրելաեվի յարձակումներից, որը ,,Возрожденіе'' թերթի մէջ Գանձակի կոտորածի յանցանքը բարդում էր նրանց վրա, բացարձակ մեղադրում են Տակայշվիլուն, յայտարարելով. ,,. . . որ նոյեմբերի 18-ին, առաւօտեան ժամը 7 1/2-ին, երբ պաշտօնապէս յայտնեցին քաղաքի վրդովուած դրութեան մասին և հարց դրեց պահակներ հանել քաղաքում շրջելու համար, նա ոչ միայն այդ մասին հոգս չը տարաւ, այլ և կարգադրելով Թուրքերին ժողովել մզկիթ նրանց հետ տեսնուելու համար, չը շտապեց այնտեղ ոչ ժամը 8-ին, ոչ 9-ին և ոչ էլ 10-ին։''

,,Բացի այդ, չը նայած այն բանին, որ կոտորածը սկսել էր բազարում դեռ ևս ժամը 10 1/2-ից և վայրագութիւնները խուժանի կողմից գնալով մեծ չափեր էին ընդունում, գեներալ Տակայշվիլին մինչև 2-ը դուրս չեկաւ իր բնակարանից։ Եւ երբ

*) Տես „Елисаветпольск. Кровавые Дни'' երես 160.

տանից դուրս գալուց յետոյ դեռ շարունակւում էր կողոպուտը, նա միջոցներ ձեռք չառաւ կանգնեցնելու աւերը, չը նայած որ հրապարակը խուժանից մաքրելու համար բաւական էր մի համազարկ նոյն իսկ օդի մէջ, և նա Տակայշվիլին ոչ միայն այդ չուզեց անել, այլ և քաղաքի ամենալաւ մասը չը փորձեց հրդեհից ազատել, մինչդեռ այդ հնարաւոր էր նրան) "։*

Վկայում են շատերը, թէ երբ Տակայշվիլին բաւական ժամանակ անց քաղաք դուրս բերեց զօրքեր և թնդանօթներ, առաջին հոգսը եղաւ նախ ամրացնել կամուրջը՝ թնդանօթի բերանը դարձնելով դէպի հայկական մասը, որտեղից սպասւում էր օգնութիւն կողոպտիչների քմայաճոյքին թողնւած բազարի և այնտեղ մնացած հայերի համար։

Մի քանի զինուորներ, որոնք այդպիսի գործողութիւնների լուռ հանդիսատես լինելը համարելով վիրաւորական զինուորի կոչման, դիմեցին Տակայշվիլուն խնդրելով թոյլ տալ կանգնեցնելու կողոպուտը, այդ նրանց մերժուեց։

*,,Գեներալ Տակայշվիլին անտարբեր մտիկ էր տալիս կողոպտման վայրագ տեսարանին, ծխում էր, զրուցում շքախմբի հետ, ժպտում, ծիծաղում, նոյն իսկ ժպտադէմ դառնում յաճախակի իր մտերիմ սիրելուն, ոստիկանապետ Թէմուր-բէկ Հասանբէկովին, որն սքանչելի ժպիտով պատասխանում էր մեծաւորի հարցերին, գրում է ,,Մշակ" ի թղթակիցը շարունակելով **)—մի քանի հայ առևտրականներ իրենց պատսպարանից մի կերպ հասնելով Տակայշվիլուն, երբ խնդրում էին նրան կանգնեցնել կոտորածն ու կողոպուտը, երկրի անդորրութեան համար նշանակւած գեներալը ժպտադէմ պատասխանում էր նրանց,— Այդ, աղաւնեակներ, յետոյ, յետոյ . . . Մի յուզւէք այդպէս . . . Այժմ կրակել չի կարելի . . . Յետոյ կը հրամայեմ զօրքով շրջապատեն ամբողջ բազարը և բոլոր կողոպտած իրերը հաւաքել մի տեղ, այն ժամանակ ամեն ոք կը ստանայ իր սեփականութիւնը . . .*"

,,(Это, голубчикъ, потомъ, потомъ . . . Не волнуйтесь такъ . . . Теперь стрѣлять нельзя . . . Потомъ прикажу оцѣпить базаръ и весь награбленный товаръ собрать въ одно мѣсто, тогда каждый получитъ свое . . . .)"

**) Տես* „Елисаветпольск. Кровавые Дни" *երես 122, 123,*

*** Տես ,,Մշակ" № 238—1905 թ.*

,,Երբ բազարում սկսեց հայերի խանութների, տների և քարվանսարաների հրդեհը, երբ աղէտը հասաւ իր զարգացման գագաթնակէտին, այդ ժամանակ (ժամը 3 1/2-ին) գեներալ Տակայշվիլին, շրջապատուած կօզակներով ժպտադէմ եկաւ հայոց քաղաքամասը ու կանգնեց յաջորդարանի առաջ, իսկոյն շրջապատուեց ամբոխով, որը գանգատներով մօտեցաւ նրան։ Գանգատաւորները շատ էին, անթիւ. շատերը կորցրել էին արդէն իրենց ամբողջ հարստութիւնը մի քանի ժամուայ մէջ։ Տասնեակ տարիների ընթացքում ձեռք բերած հարստութիւնը կորցրած մարդիկ խնդրում, պահանջում էին արդարացի զայրութով գոնէ կեանքի ապահովութիւն, կանանց, երեխաների փրկութիւն վայրագ խուժանից։ Բազարի դժոխքից եկած Տակայշվիլին, դժոխքի, որը ամենարութ զգացմունքի տէր մարդու վրա անգամ կարող էր ազդել, ճնշել, զրուցում էր աղէտի զոհերի հետ, ինչպէս հին ,,քաղքի լօթին'' խօսում է սքաւոր ընտանիքների տեսութեան գնացած ժամանակ. անդադար ժպտում էր, ծիծաղում, նոյն իսկ զուարճախօսում էր և այդպիսով մխիթարում հայերին''։

,,Երբ հայոց եկեղեցու առաջ հայ հասարակութեան ներկայացուցիչները պահանջեցին Տակայշվիլուց կանգնեցնել խանութների կողոպտումն ու հրդեհումը, կողոպտողների վրա կրակել հրացաններից, կրակել նոյն իսկ թնդանօթներից, առանց ազգութեան խտրութեան, գեներալ-նահանգապետը իր անփոփոխ ժպիտով պատասխանեց հարցական եղանակով, —միթէ, կրակել նոյն իսկ թնդանօթներից, լաւ, հա, հա, հա, հա, . . . Հայերի այդ պահանջը զուարճացրեց նահանգապետին''։

Խանութներում փակուած հայերին զօրքը առաջնորդում էր հայոց թաղը վարձատրութեամբ միայն։ Ճիշտ է, զինուորների մէջ կային մարդիկ, որոնք առանց դրամի կատարում էին զինուորի կոչումը, իսկ կօզակները առանց վարձատրութեան մի քայլ անգամ չէին անում։ Մի հայ, որը ամբողջ ունեցածը կորցնելուց յետոյ կարողացել էր խանութից վերցնել միմիայն 180 ր. փող, այդ բոլորը տուեց կօզակներին, որ նոր կարողացաւ նրանց պաշտպանութեան տակ հայոց թաղը հասնել։

Մինչդեռ թուրք խուժանը շուկայում շարունակում էր իր սխրագործութիւնները իշխանութիւնների ներկայութեամբ, մինչդեռ յուսահատ մարդիկ զոհերի ու կորուստների վրտով համակ-

ւած այս ու այն կողմն ընկած, Տակայշվիլու փէշերից քարշ ընկած օգնութիւն էին աղերսում և սառն ու անտարբեր պատասխաններ լսում, քաղաքի հայկական մասում դաշնակցական գործողների ղեկավարութեամբ կազմակերպւում դասաւորւում էր ինքնապաշտպանութեան գործը։

Միմիայն շուկան չէր, ուր տեղի ունեցաւ կոտորած և կողոպուտ. ծրագիրը աւելի էլ ընդարձակ էր։

Շուկայում կոտորածն սկսելու հետ միաժամանակ յարձակման նշաններ դէպի հայոց թաղը նկատելի դարձան Զայլուի և Մօլլա-Զալլուի կողմերից, ուր, ինչպէս յետոյ յայտնի եղաւ, շրջակայ գիւղերից, մասնաւորապէս Թօփալ-Հասանլուից, եկել խմբւել էին բաւական թւով թուրքեր։

Այդ երկու թաղերի այս և այն կողմերից պայթեցին հրացաններ մի առանձին թափով. ուժեղ հրացանաձգութիւն տեղի ունեցաւ Զայլուի կողմից, առանձնապէս Մաշադի-Բահիմ Հաջի-Մէլիքովի խանութից և նրա դիմաց գտնւող Մուստաֆա օղլու ցախի պահեստից, որոնք ծառայում էին որպէս դիրքեր։ Այդ երկու թաղերը լուրջ երկիւղ էին ազդում հայերի վրա իրենց դրրւածքով, որտեղից դէպի հայոց թաղը խուժելը շատ դիւրին էր։ Սակայն ադմինիստրացիայի խրախուսանք գտած Զայլուի թուրքերի յարձակումը հէնց առաջին քայլափոխում դիմադրութեան հանդիպեց և յետ մղւեց մի քանի զոհերով, որոնց թւում ընկաւ նաև անուն հանած Ղարա Թաթ օղլին։

Մի անյաջող յարձակում այդ նոյն օրը տեղի ունեցաւ Զօլագ կոչւած այգիների վրա մի խումբ ձիաւոր թուրքերի կողմից, այնտեղ աշխատող մշակներին կոտորելու նպատակով, սակայն նրանց դէմ դուրս եկան ընդամենը երեք զինւած երիտասարդներ և յետ մղեցին՝ սպանելով մէկին և վիրաւորելով երկուսին, թէև մէկն էլ իրենցից վիրաւորւեց. մշակներից սպանւեցին 2-ը, իսկ աւելի քան 100 հոգի ազատւեցին։

Հրացանաձգութիւն դէպի հայոց թաղը տեղի ունեցաւ նաև Բաղմանլարից, բայց այդտեղ էլ նրանք դիմադրութեան հանդիպեցին։

Յարձակման ենթարկւեց նաև Երևանցոց թաղը, որը նոյնպէս անվնաս մնաց, նախ՝ որ հայոց թաղից կարելի էր լինում

պաշտպանել նրան և երկրորդ՝ որ հէնց թաղի մէջ կային կուռ տղաներ. քիչ չէր նպաստում նրա պաշտպանութեանը նաև կամբրջի վրա եղող զօրքը, որի մէջ, այնուամենայնիւ, աւելի շատ մարդասիրութեան զգացմունք կար, քան վատթար գեներալի։ Երևանցոց թաղի հայերը շնորհիւ այդ պայմանների փոքր առ փոքր կարողացան իրենց իրերով տեղափոխուել հայոց մասը։

Ամենից վտանգաւոր դրութեան մէջ գտնւում էին Նորաշէնի հայերը, որոնք ընկած թուրք թաղի յետևը, ոչ մի հնարաւորութիւն չունէին օգնութիւն ստանալ։ Այդ թաղի վրա ամբոխը խուժեց այն ժամանակ, երբ արդէն շուկայի հետ ամեն բան վերջացել էր, սակայն մինչև այդ՝ Նորաշէնցիները թողած տուն ու տեղ խմբւել էին եկեղեցու մէջ, որը նրանց պատսպարանը դարձաւ չորս օր շարունակ։ Մի քանի կուռ երիտասարդներ առաւօտեան տեղի ունեցած թոյլ յարձակմանը կարողացան այնքան դիմադրել, մինչև որ օգնութեան եկող զօրքերի հետ եկեղեցու դիրքերից դէմ դրին նաև մեծ գրոհին, թէև խուժանը կարողացաւ մի քանի տներ կողոպտել և այգիներ կտրատել։

Չորս օր ու գիշեր շարունակ ահագին թւով ժողովուրդը զօրքի հետ միասին ապրում, գիշերում էր եկեղեցու մէջ. մի ընդհանուր սեղանից ուտում-խմում էր չորս օր շարունակ հարուստն ու աղքատը, մարդ ու կին, մեծ ու փոքր, մինչև 22-ին ֆուրգոններով կարելի եղաւ տեղափոխել հայերի մասը, որից յետոյ տներն ամբողջովին հրդեհուեցին և այգիները կտրատուեցին։

Նոյեմբերի 18-ի չարաբաստիկ օրը միմիայն բազարի կոտորածով ու կողոպուտով և հայկական թաղի վրա եղած մի քանի յարձակումներով չը վերջացաւ։ Հայերի ամբողջ գոյքը բազարում կողոպտելուց յետոյ երեկոյեան ժամը 5-ին մի քանի տեղից հրդեհուեցին հայերի տները և խանութները։ Երկու մեծ շէնքերի հրդեհները, որպէս երկու վիթխարի խարոյկներ, ամբողջ գիշերը լուսաւորում էին ոչ միայն քաղաքը, այլ և հեռու շրջակայքը։ Այնպէս որ, այն, ինչ որ հնար չեղաւ կողոպտել, տանել՝ հրդեհեցին, ոչնչացրին։ Այսպէս էր ծրագիրը։

Նոյեմբերի 19-ին Զայլուի և Մօլլա-Զալլուի կողմերից յարձակման մի նոր փորձ եղաւ։ Այդ թաղերում խմբւել էին բաւականաչափ ուժեր՝ եկած թուրքական միւս մասերից. շուկայում ունեցած յաջողութիւնը նրանց մղել էր այս անգամ դէպի հայոց

թաղը, բայց ի զուր. մի ամբողջ օրւայ յամառ կռւից յետոյ, երբ զօրք եկաւ մի թնդանօթով թուրքերի խուժումը կանգնեցնելու համար, հայ կռւողները կարողացան գրաւել թուրքական երկու զօրեղ դիրքեր, մէկը Մօլլա-Զալլուում, իսկ միւսը Զայլուում, օրիորդաց գիմնազիայի դիմաց, որից յետոյ թուրքերը յուսահատւած փախան՝ դատարկելով թաղերը։ Երկու օրւայ կոտորածի, կողոպուտի ու հրդեհի պատճառած զայրոյթը հայերը թափեցին այդ երկու թաղերի վրա. թուրք խուժանին յատուկ կողոպուտը հայերն էլ սրբագործեցին, սակայն այն տարբերութեամբ, որ վերջինները հրդեհի չը դիմեցին, և ձեռք չը տւին այն թուրք կանանց ու երեխաներին, որոնք անկարող լինելով փախչել գերի ընկան հայերի ձեռքը։ Սրանք փոխանորդի միջոցով յանձնւեցին թուրքերին։

Հայերը նպատակ չունէին թաղեր աւերել. այդ նրանց ցանկութիւններից դուրս էր, բայց երկու հանգամանք, նախ՝ ապահովութեան և երկրորդ՝ մի նոր ճանապարհ բացելու խնդիրը դէպի երկաթուղու կայարանը, ստիպում էր նրանց քշել թուրքերին այդ տեղերից։ Եւ այդ կարիքն առաջ եկաւ այն օրից, երբ թուրքերի թաղով հայերի երթևեկութիւնը միանգամայն դադարեց։ Նոյեմբերի 22-ին թուրքերը հրդեհեցին Նորաշէնի տները. հրդեհեցին նաև 2 տուն բազարի մօտ. դրանց և յաջորդ դէպքերին որպէս պատասխան հայերն էլ հրդեհեցին և աւերեցին Զայլուն և Մօլլա-Զալլուն։

Գանձակի ընդհարումները այսքանով չը սահմանափակւեցին. կռւի ամենայամառ տեսակը տեղի ունեցաւ նոյեմբերի 22-ից լոյս 23-ի գիշերը։ Այդ օրը քաղաք էր մտել Դալի-Ալին, այդ թուրք աւազակը, որին բերել էին տւել թուրք երևելիները, երաշխաւորելով, որ նրան կառավարութիւնը չի դիպչելու։ Եւ այդպէս էլ էր, Դալի-Ալու Գանձակ լինելը ադմինիստրացիան գիտէր և նրան անհանգիստ չէր անում։

Դալի-Ալու մուտքը Գանձակ նոր ոգևորութիւն առաջ բերեց թուրքերի մէջ, մի ամբողջ օր շարժման մէջ էր Բաղմանլարը։

Երեկոյեան ժամը 9-ին Բաղմանլարի կողմից պայթեցին հրացաններ, որոնց արձագանք տւին այս և այն կողմից լսւող ոլոտները. գնալով հրաձգութիւնը սաստկացաւ. հայերն էլ իրենց կողմից սկսեցին կրակել։ Շուտով յայտնւեց զօրքը թնդանօթով,

որը նոյնպէս կրակել սկսեց։ Մի ժամանակ հրացանաձգութիւնը սոսկալի չափերի հասաւ։ Թուրքերը փորձեցին անցնել գետը և նրանցից մի քանիսը հասնելով հայերի այգիներին, հրդեհեցին մի դէզ։ Այս դէպքը իրարանցում առաջ բերեց հայերի մէջ, սարսափ տիրեց ամենքին. հայերի թաղը վտանգի մէջ էր. բայց այդ յուսահատ բոպէին առաջ անցաւ Համբոն, հայ դաչաղը, լայնաթիկունք, յաղթանդամ, ամեհի ուժի տէր, 42 տարեկան մարդը և իր մի քանի կտրիչներով նետուեց կրակի մէջ, անցաւ գետը, մտաւ Բաղմանլար և հասաւ մինչև Թուրքաց գերեզմանատունը։ Եւ երբ կէս գիշերից անց, ժամը 3-ին վերադարձաւ Համբոն, Բաղմանլարը լուռ էր որպէս գերեզմանը։ Համբոն զոհ տալով իր ընկերներից երեքին—խաչակապցի Արզումանին, Գրիգորին և բանանցեցի Հանէսին, մի քանի անգամ աւելի թուով զոհեր էր առել, սարսափ տարածելով ամբողջ Բաղմանլարում։ Ցաջորդ օրը հայերի այգիների մէջ գտնուեցին մի կապոյտ դրօշակ և նաւթած լաթեր։

Այդ կռուում բացի վերև յիշուածները ընկան նաև փիրեցի Խաչատուրը և բանանցեցի Տօնոնց Նիկոլը։ Կային նաև վիրաւորներ։ Զոհեր ունէին և Թուրքերը, այն էլ շատ զոհեր. եթէ հաւատանք մի ֆելդշերի տուած տեղեկութեան՝ 85 էր այդ զոհերի թիւը։

Թէև այս մեծ ընդհարումը իր հետևանքներով որոշ ազդեցութիւն թողեց Թուրքերի վրա և մասսայական յարձակումները դադարեցին, այնուամենայնիւ, տեղի ունեցան հետևեալ պժգալի դէպքերը։

Նոյեմբերի 24-ին փոխարքայի օգնական Մալամայի ներկայութեամբ, որը եկել էր Գանձակ 4 օր առաջ, հանդիսաւոր հաշտութիւն տեղի ունեցաւ, մինչդեռ այդ հաշտութիւնից մի ժամ յետոյ պրիստաւ Կապանլինսկու ուղեկցութեամբ Թուրքաց մասում դիակներ փնտռելու գնացած, ինչպէս և կայարանից երկու կառքերով անցնող հայերը ենթարկուեցին յարձակման և սպանուեցին։

Այս դէպքի յաջորդ օրը, նոյեմբերի 25-ին, խաղաղարար կոմիսիայի նիստին փաստաբան Ալակպար Խաս-Մամեդովը և Ալակպար-բէկ Բաֆիրէկովը յայտնելով, որ թուրքերի մօտ կան գերի հայեր, որոնց համար բոպէն թանկ արժէ, առաջարկեցին փոխանակել Թուրք գերիների հետ։ Սակայն երբ յաջորդ օրը հաշտարար դատաւոր Զերնիցը և Սերեբրիակովը երեք Թուրք գերիներով ներկայացան որոշուած տեղը—ժողովարան, Միխայիլովը

և Խաս-Մամեդովը չեկան և երբ երկար սպասելուց յետոյ, Թուրք գերիներն արձակեցին, յայտնի եղաւ, որ հայ գերիները սպանուած են արդէն։

Գանձակի այս սոսկալի պատմութեան մէջ չը պիտի մոռանալ մի էջ ևս։

Երկու ժողովուրդներին հաշտեցնելու նպատակով կոտորածի յաջորդ օրը Թիֆլիսից եկաւ մի խաղաղարար մարմին, որի անդամներից մէկն էր Զրելաևը։ Պ. Զրելաևը իր միսսիան հասկացել էր Տակայշվիլու պաշտպանութեան մէջ, որը և «Возрожденіе» թերթի էջերում մի շարք յօդուածներով իր անունը անմահացրեց տխրահռչակ գեներալի սխրագործութիւնների արդարացումներով։

Գանձակի կոտորածի օրերում մեծ սարսափի տակ գտնուում էր նաև երկաթուղու կայարանը, ուր կային մի քանի հայ խանութպաններ, որոնց կոտորելու և կողոպտելու նպատակով Թուրքերի կողմից տեղի ունեցան մի շարք յարձակումներ, բայց ամեն անգամ էլ նրանք յետ էին մղուում գոներ տալով։ Երկաթուղու ծառայողները—ռուս, վրացի, և այլ տեղերից եկած հայեր—բոլորը մօտ 40 հոգի և 16 զինուորների մի պահակ երեք օր կարողացան կայարանը պաշտպանել, թոյլ չը տալով խուժանին որևէ ձևաս հասցնել նրան։

Մի սոսկալի դրամայ էլ տեղի ունեցաւ քաղաքի շրջակայքում այգիների մէջ։

Գանձակից դէպի հիւսիս, մի տափարակի վրա, ձգած են գերմանացի Ֆերի, ռուս Գօրչակովի, Ղորղանեանի և Առաֆելեանի ընդարձակ այգիները, ուր տարուայ այդ միջոցին բանելիս են լինում բաղմաթիւ հայ մշակներ։ Ահա այդ այգիների վրա յարձակեցին Թուրքերը։ Մշակներից մի մասը կարողացաւ փախչել, բայց ընկնողներ էլ շատ եղան։ Ապա աւերող ձեռքը հաշիւ տեսաւ Ղորղանեանի և Առաֆելեանի այգիների հետ։ Տասնեակ հազարներ արժեցող շինութիւններն իրենց Թանկագին կահկարասիներով զոհ գնացին լափող հրդեհին։

Մի երկու բնորոշումներ ևս տանք գերմանացիների վերաբերմամբ։

Գանձակ կայարանից ոչ հեռու յայտնի Ֆօրերի այգում բանում էին այդ ժամանակ բազմաթիւ հայ մշակներ։ Քաղաքում կոտորածն սկսելուն պէս այգու կառավարիչն այդ մշակներին դուրս քշեց այգուց, խլելով մէկի ձեռքից նոյն իսկ հրացանը—նրա վերջին պաշտպանութիւնը։

Աւելի նողկալի էր միւս դէպքը։ Ալաբաշլի կայարանի մօտ Ֆօրերն ունի մի այլ ընդարձակ այգի «Ղարաեր» անունով։ Այդտեղ բանող մշակներից մի քանիսն ազատուեցին շնորհիւ չվդարեցի մի կտրիչ մարդու, որն իր հրացանն առած մտաւ եղեգնուտների մէջ և կուեց Թուրքերի դէմ։ Մշակներից 25 հոգի, որոնց անուանացուցակը բերուած է գրքի վերջում, ընկան սրախողխող։ Քարասիրտ գերմանացին այդ դժբախտ կեանքերը փրկելու համար զլացաւ տալ չարագործներին մի փոքրիկ գումար որպէս փրկանք։ Մինչև անգամ մէկը մշակներից, որն ազատուեց մի հրաշքով և որը 5 տարի շարունակ ծառայել էր Ֆօրերին, երբ դիմեց նրա կառավարչին մի քանի ռուբլի խնդրելով, գերմանացին մերժեց տալ, մինչև որ սպառնալիքով կարելի եղաւ 3 ռ. փող դուրս քաշել նրա գրպանից, մահից ազատուած մարդու ճանապարհածախքի համար։

Ահա իր տեսակի մէջ եզակի Գանձակի աղէտը, որ մի աւելորդ անգամ եկաւ ռուս բիւրօկրատիայի ճակատին դրոշմելու որբերի և այրիների անէծքը։

Երկու օրուայ մէջ Գանձակում ընկել էին 150-ից աւելի անմեղ զոհեր. հայերի ամբողջ շուկան կողոպտուել էր, որի կորուստը հասնում էր երեք միլիօնի. 60-ից աւելի խանութներ և բազմաթիւ տներ թէ շուկայում և թէ թաղերում հրդեհի զոհ էին դարձել։ Աւերուել էին նաև երկու Թուրքական թաղերը։ Մի խօսքով շէն քաղաքի մի քանի մասերը ներկայացնում էին աւերակների կոյտեր։

Այդ բոլորից յետոյ միայն արձակուեց Տակայշվիլին, այդ զազիր Եագօն. այդ էլ կարծէք աւերուած հայերին մխիթարելու համար. իսկ նրա փոխարէն նշանակուեց գեներալ Ֆլէյշերը, որը բաւական կեանքեր էր փրկել կոտորածի առաջին օրը։ Գանձակի ոստիկանապետ Հասանբէկովը, ոչ պակաս մեղսակից քան Տա-

կայշվիլին, իր պաշտօնում մնաց. կողոպուտը և կոտորածը դեկավարող յայտնի աւազակներն անպատիժ մնացին և այդ բոլորից յետոյ անբնական էլ կը լինէր, եթէ Ֆլէյշերը շարունակէր իր պաշտօնավարութիւնը առաջին օրերի անաչառութեամբ. չէ՞ որ կոտորածները անհատների գործեր չէին, այլ մի մեծ ծրագիր վերևից, շատ վերևից եկած։

Այդ ծրագրին դէմ գնալ ոչ ոք չէր կարող, լինէր նա Տակայշվիլի թէ Ֆլէյշեր, տարբերութիւնը նրանումն էր, որ Տակայշվիլին, որպէս վատթարագոյնը, հոգիների մի այլանդակութիւն, անձնական հաճոյք էր գտնում, երբ զոհերը շատ էին լինում և զոհերի տանջանքը սոսկալի. իսկ Ֆլէյշերը անձնականապէս դժգոհ այդօրինակ բարբարոսութիւններից, այնուամենայնիւ, անզօր էր իրերը այլ կերպ դարձնել։ Եւ այդպէս էլ էր։ Բարի Ֆլէյշերը շարունակեց գեներալ-նահանգապետի պաշտօնավարութիւնը, թշնամական գործողութիւնները հայերի դէմ շարունակուեցին առաջուայ պէս, կեանքն իր սովորական ընթացքի մէջ չը մտաւ, հայերը նրանից էլ դժգոհ մնացին . . .

ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌ

Գանձակի գաւառը՝ ընկած Նահանգի հիւսիսային կողմում, իր բազմամարդութեամբ և ընդարձակութեամբ միւս գաւառների շարքում բռնում է առաջին տեղը, թէև հայ ազգաբնակութիւնը բաւական փոքրաթիւ է, եթէ չը հաշուենք քաղաքում բնակուողներին։

Գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւը քաղաքի հետ միասին հասնում է 162,000-ի, որից Թուրքեր՝ 105,000, հայեր՝ 43,000 և զանազան ազգութիւններ՝ 14,000։

Գանձակի գաւառը իր աշխարհագրական դիրքով երկու տարբեր դրութիւններ է ներկայացնում։ Հիւսիսային մասը հարթ-տափարակ է, ձգուած Քուր գետի երկու ափերի վրա, բնակեցրած բացառապէս Թուրքերով, իսկ հարաւային մասը լեռնոտ է և տեղ տեղ անտառապատ, ուր հայ և Թուրք ապրում են խառը։

Գանձակի գաւառում եղող 171 գիւղերից հայաբնակ են հետևեալ 38 գիւղերը։

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն՝ պաշտ. թիւր	Մատաղատուն՝ մերը
1	Վերին-Շէն (Աղջաքէնդ-Վերին) .	121	240
2	Ներքին-Շէն (Աղջաքէնդ-Ներքին) .	130	270
3	Պարիս . . .	49	80
4	Խարխապուտ .	30	50
5	Մանասբէկ . .	55	80
6	Աղջաղալա (Ղարաչինար) . .	141	200
7	Ղաբրիքէնդ (Ենգիքէնդ) .	19	25
8	Գետաշէն (Զայքէնդ) .	464	700
9	Ազատ (Սուլուկ) .	59	110
10	Աբլահ	41	60
11	Նորաշէն (Ղուշչուլար) .		40
12	Ղարաբուլաղ . . .	60	100
13	Բախշիկ (Հաջիքէնդ). .	43	70

14	Ղարադաղլու	76	80
15	Խոյլար (Խանքէնդ) .	38	40
16	Սարով .	27	30
17	Բուզլուղ . .	115	—
18	Մանաշէթ .	46	80
19	Էրքէջ . . .	150	220
20	Ոսկանապատ (Զուռնաբատ) .	102	—
21	Միզրիկ . .	75	—
22	Մուրութ . . .	34	
23	Բարաջուր (Ղարաքէշիշ) . . .	56	—
24	Քարհատ-Վերին (Դաշքէսան-Վերին)	84	
25	Քարհատ-Ներքին (Դաշքէսան-Ներքին)		
26	Բանանց (Բայան) . . .	281	400
27	Խաչակապ (Ղուշչի) . .	119	
28	Կիրանց (Սէյիդ) .	45	—
29	Փիր (Զագլիկ) . .	327	—
30	Զովդար . .	99	—
31	Բարսում . .	185	—
32	Բարում . .	102	
33	Գուլամբիր .		
34	Նուզդէր . .	102	
35	Զագիր .	140	—
36	Զարդախլու .	331	
37	Բաղաքէնդ .	256	400
38	Ղազախ . .	60	
39	Գիւլիստան .	63	

Ի նկատի ունենալով Գանձակի գաւառում բռնկուած ընդհարումներն իրենց ծաւալով և աշխարհագրական դիրքերով, սկսած գաւառի արևելեան սահմանից դէպի արևմուտք, նրանց կարելի է բաժանել հետևեալ վեց շրջանների.

1) Ղարա-Զայ գետի հովիտ։
2) Քիւրակ-Զայ գետի հովիտ։
3) Գանձակ գետի հովիտ։
4) Արթօնաջուր կամ Ղուշղարա գետի հովիտ։
5) Շամքոր գետի հովիտ։
6) Բաղաքէնդ-Գետաբէկի շրջան։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՂԱՐԱ-ՉԱՅ ԳԵՏԻ ՀՈՎՏՈՒՄ

1905 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻՑ—1906 Թ. ՓԵՏՐՎԱՐ։

Մրաւ լեռան ստորոտներից սկիզբն առնելով հիւսիսարևելեան ուղղութեամբ հոսում է փոքրիկ, բայց բեղմնաւոր Ղարա-Չայ գետը, որի հովտում ընկած են պատմական Գիւլիստանի մի շարք պտղատու, այգիներով հարուստ Վերին-Շէն, Ներքին-Շէն, Պարիս, Խարիապուտ, Մանասբէկ, Աղջաղալա*) և Ղարրիքէնդ գիւղերը։

Աղջաղալայից սկսւում է Ղարա-Չայի ստորին հովիտը՝ ձգուած դէպի ընդարձակ դաշտավայրը, ուր ընկած են Մօլլա-Վալադլու, Զէյվա, Ղարակուջաղ, Սաֆի-Քիւրդ, Ղըզըլ-Հաջըլու, Ղասումբէկլու, Բոյ-Ահմէդլի և այլ բազմաթիւ թուրք գիւղեր իրենց անհանգիստ տարրերով, որոնք նոյն իսկ խաղաղ ժամանակ աւիթը բաց չեն թողնում դիպչել տեղացի և անցորդ հայերին ու նրանց կայքին ու կենդանիներին։

Այս շրջանի թուրքերի մէջ յուզման նշաններ նկատելի դարձան դեռ ևս ամրան վերջերին, երբ քոչը սարից վայր իջաւ։ Սեպտեմբերի վերջերին Աղջաղալայի վրա տեղի ունեցաւ մի թեթև յարձակում, որի ժամանակ սպանուեցին երկու հայեր։ Դրանից յետոյ տեղի ունեցան հետևեալ սպանութիւնները և կողոպուտները.

Մօլլա-Վալադ գիւղում, մզկիթի վրա բանելիս, սպանուեց Ներքին-Շէնեցի որմնադիր Ղարախանը, 35 տարեկան։

Սեպտեմբերի 20-ին Եանղ կոչուած սարում սպանուեցին 3 սարովցի հայեր։

---

*) Խարիապուտ, Աղջաղալա գիւղերում, ինչպէս և Թալիշում մինչև այժմ ապրում են Գիւլիստանի նախկին տիրապետող Մէլիք-Բէգլարեանների ժառանգները, որպէս բէկեր, սակայն բաժան բաժան եղած իրենց փոքրիկ կալուածներով։

Հոկտեմբերի 7-ին Աղջաղալայի մօտ սպանուեց վերին-շէնեցի Սիմօնը։

Հոկտեմբերի 10-ին Թուրքերը քշեցին Ղարաբուլաղի ձիերը և ապա՝ տաւարը։

Մի քանի օր անց Պարիս գիւղի հանդից քշեցին 72 տաւար։

Իսկ հայերն այդ միջոցին իրենց հերթում Մրաւ սարի ստորոտներից քշեցին Խաս-Մամեդբէկովի 100-ի չափ ոչխարը։

Հոկտեմբերի 19-ին Աղջաղալայից քշեցին 127 տաւար։ Ապա քշեցին 70 տաւար և նորից 84 տաւար։

Հոկտեմբերի 23-ին Դոզիլար Թուրք գիւղի մօտ սպանուեցին աղջաղալեցի 5 հայեր, դրանք էին՝ Սարգիս Ղարայեանը, 35 տար., Յովհաննէս Մարինեանը, 25 տ., Դուխան Գզիրեանը, 30 տ., Ֆրիդօն Բաղիեանը, 20 տ. և Ջաւադ Շիրինեանը, 18 տարեկան։

Եւ վերջապէս 3 օր անց Աղջաղալայի մօտ մի այգում խլեցին Ղազար Յարութիւնեանի ձեռքից հրացանը և նրա 3 գոմէշները։

Մալականների Պարիս գիւղում կողոպտուեցին գանձակեցի Արշակ Լիսիկեանի խանութը և հացի ամբարները, մօտ 10,000 ր. գումարի ապրանքներով։ Կողոպտողները թէև Ղարաղոյունլու գիւղի Թուրքերն էին, բայց քիչ մասնակցութիւն չէին ունեցել նաև մալականները, որոնց տներում գտնուեցին կողոպտուած ապրանքներ։

Յունվարի 1-ին Ջէյվայի Թուրքերը գիւղից կրակ բացին անցորդ աղջաղալեցի հայերի վրա, որից առաջ եկաւ ընդհարում։ Այդ ընդհարման ժամանակ հայերից սպանուեց մի 20 տարեկան երիտասարդ Միրզա Բաղմանեան անունով, իսկ Թուրքերից սպանուեցին մի քանիսը։

Այս դէպքը Թուրքերը չը կարողանալով տանել, շրջականերից մեծ բազմութիւն հաւաքելով՝ յունվարի 4-ին, առաւօտեան ժամը 5-ին, մեծ ուժով յարձակուեցին Աղջաղալայի վրա, ուր տեղի ունեցաւ ամբողջ օրը տաք կռիւ։ Յարձակումը վերջացաւ նրանով, որ Թուրքերը բաւական սպանուածներ տալով, սակայն միմիայն 4 դիակներ թողնելով, փախան։

Այդ կռուում հայերից սպանուեց Սարով գիւղացի Միքայէլ Ազիզեանը, 40 տարեկան և երեք հոգի էլ վիրաւորուեցին։

Փետրվարի 13-ին Աղջաղալայի վրա մի նոր յարձակում

տեղի ունեցաւ Մօլլա-Վալադ գիւղի կողմից, բայց Թուրքերը յետ փախան՝ ուժեղ դիմադրութեան հանդիպելով. հայերը զայրացած այդքան յանդգնութիւնից հետամուտ եղան նրանց մինչև գիւղը. այդ տեսնելով Թուրքերը վերցրին իրենց ընտանիքները և փախան, որից յետոյ նրանց տներն աւերուեցին։

Այս շրջանի դէպքերից աւելի խոշոր դէպքեր տեղի ունեցան Քիւրակ-Զայ գետի հովտում, որին և դիմում ենք։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՔԻՒՐԱԿ-ՉԱՅ ԳԵՏԻ ՀՈՎՏՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905 Թ.

Իր բարձրութեամբ հռչակաւոր Մրաւի հետ մրցել է ուղում նրանից 15 վերստաչափ դէպի արևմուտք ցցուած Քեափազը, որի սեպաձև ժայռերից հիւսուած լայնանիստ կատարը նրան տալիս է արտասովոր մի տեսք։ Այդ կատարը գեղեցիկ է, աննման՝ բազմած մինչև մրաւը շղթայի ձևով ձգուած գագաթների վրա։

Սիրուն Քեափազի հիւսիսային հեռաւոր փէշերի վրա Իլխադարա և Օմարդաղ գագաթների ստորոտներից հիւսիսարևելեան ուղղութեամբ բացւում է մի ընդարձակ աւազան, սակայն խորդ ու բորդ մակերևոյթով։

Ահա այդ աւազանի եզրներով ձգւած են Ապատ, Բախշիկ, Աբլահ և Ղալարուլաղ գիւղերը. աւազանի երկարութեամբ նոյն Քեափազի ծմակներից վազող Քիւրակ-Չայ գետը աղմկայոյզ հոսում է *) համանուն մի ձորակի միջով. այդ ձորակի մի բանաստեղծական պատուածքում, Ղալին-Ճակատը գագաթի դիմաց, մի ըմբոստ կուրծքից կախ ընկած է Գետաշէնը՝ այդ շրջանի ամենամեծ, 6-700 տուն ունեցող շէն գիւղը գեղեցիկ տեսքով, գեղեցիկ շինութիւններով և ծաղկած արհեստներով ու առևտրով։ Իսկ Գետաշէնից մի փոքր ցած, նոյն ձորակի վրա ընկած է Նորաշէն գիւղը։

Քիւրակ-Չայ գետի արևելեան կողմից միացող Էրքէջ գետակի վրա ընկած են Բուղլուղ, Մանաշէթ և Էրքէջ գիւղերը։

Այս շրջանում եղող թուրք գիւղերի շարքում իրենց անհանգիստ գործողութիւններով աչքի են ընկնում Չայլիլարը, Դարդարան, Սարըսուն, Դօղիլարը և Թօդանը։

Նոյն Քիւրակ-Չայի ստորին հովտում, Գանձակից դէպի արևելք, տափարակի վրա, թուրք ազգաբնակութեան խիտ տեղում,

---

*) Այս գետից սկսւում է պատմական Գիւլիստանի գաւառը՝ տարածւելով մինչև Թարթար գետը։

հայաբնակ շրջաններից միանգամայն կտրված, գտնվում են երեք հայ գիւղեր, այն է՝ Ղարադաղլուն, Խոյլարը և Սարովը*)։ Ղարադաղլուն և Խոյլարը համարեայ թէ կպած են միմեանց, իսկ Սարովը ընկած է մի փոքր հեռու, դէպի հիւսիս։

Այս երեք գիւղերը բաւական ընդարձակ և բերրի հողեր ունէին, որտեղ մշակում էին հացահատիկներ, բամբակ, խաղող և նոյն իսկ շերամ։ Դրանցից Ղարադաղլուն յայտնի էր մանաւանդ իր հացի առատութեամբ, բայց թուրքական ճնշումներն արգելք էին լինում այդ գիւղերի աւելի ևս ծաղկելուն։ Ճնշումներ, առանձնապէս գործ էին դնում Շադլու, Ազատ-Ահմէդլու, Սաֆիքիւրդ, և Բորսունլու մեծ ու աւազակարարող գիւղերը։

Հայ-թուրքական ընդհարումների հետ հայ գիւղերի վիճակը միանգամայն վատթարացաւ, որքան էլ Ղարադաղլուն յայտնի էր իր քաջ երիտասարդներով։ Սովորական ճնշումները տեղի տուին սպանութիւնների և նման բռնութիւնների։

Այսպէս, հոկտեմբերի սկզբին Սարով գիւղում իր բակի մէջ առանց որ և է պատճառի գնդակահար եղաւ Մամիկոն Մաղաթեանը, 40 տարեկան, որից անմիջապէս յետոյ ժողովուրդը քաշեց Ղարադաղլու և Գանձակ։ Գիւղը դատարկելուց յետոյ տների պէտքական մասերը նախ կողոպտուեցին և ապա հրդեհուեցին։

Սարովը քաշելուց յետոյ Ղարադաղլուի և Խոյլարի դրութիւնը աւելի ևս վատացաւ. սրանց պաշտպանութեան համար այնտեղ ուղարկուեցին 30 կօզակներ, սակայն իրերի դրութիւնը չը փոխուեց։

Նոյեմբերի 8 թէ 10-ին երկաթուղու ճանապարհին սպանուեց Կոստի Քաթանեանը, 35 տարեկան։

Նոյեմբերի 17-ին Ղարադաղլուից կէս վերստ հեռաւորութեան վրա գտնուող Ֆրիդոնովի ջրաղացում սպանուեցին ջրաղացի կառավարիչը և մէկ ուրիշ հայ։

Այս սպանութեան յաջորդ օրը, ինչպէս գիտենք, տեղի ունեցաւ Գանձակի կոտորածը, որից յետոյ թուրքերը բացարձակ սպառնական դիրք բռնեցին։ Կօզակների օգնեցերը հրաժարուեց այլ ևս մնալ այդտեղ և խորհուրդ տուեց հայերին քաշել գիւղերից։ Հայերը դիմեցին Գեստաշէն սայլեր խնդրելու և նոյեմբերի 20-ին

*) Այս Սարովը չը պէտք է շփոթել Ջիւանշիրի դաւառի երկու Սարովների հետ, որոնցից մէկը կոչւում է Սարով-Բագիւմ, իսկ միւսը Սարով-Մարալեան։

վերցնելով միմիայն այն, ինչ որ հնարաւոր էր տանել, քոչեցին գիւղից, ձգելով ցորենով լի հորերը և ամբարները, խոտն ու դարմանը, գինիներով և այլ մթերքներով լի մառանները։ Սակայն քոչը իր այդ ,,դաղարգիւն'' վիճակում դեռ Գետաշէն չը հասած, Զայլիլար գիւղի մօտ ենթարկուեց Թուրքերի յարձակմանը, որը, շնորհիւ Գետաշէնից հասած օգնութեան, վերջացաւ կօզակների 2 ձիու սպանումով միայն, որոնց արժէքը 300 ր. փոխանակ Զայլիլարից պահանջելու, կօզակները վերցրին փախստական հայերից. չէ՞ որ Թուրքերից պահանջելը դժուար էր։

Ժողովուրդը քոչելուց յետոյ երկու գիւղերն էլ կողոպտուեցին մինչև վերջին հատիկը, վերջին չոփը, գինիներն անգամ տարան վաճառեցին Թուրքերը, իսկ տները հրդեհեցին։

Այդ երեք գիւղերի կորուստը՝ հաշուած ընդամենը 150 տուն, իւրաքանչիւր տան փնասը շէնքերի և մթերքների համար միասին վերցրած 5 600 ր., կը լինէր ոչ պակաս 70 80,000 բուր., դեռ չը հաշուած այն կորուստները, որ նրանք կրել էին և մինչև այժմ էլ կրում են դաշտերի անմշակ մնալուց)։

Այս շրջանում բացի յիշեալ գիւղերն աւերուեցին՝ 1) Ֆրիդոնովի շքեղ ջրաղացն իր շինութիւններով, որի փնասը հասնում էր 40 50,000 բուրլու, 2) Առաֆելեանի կալուածքը—20 դեսեատին այգին իր շինութիւններով և 600 դեսեատին վարելահողը—կրելով 70 80,000 բուրլու փնաս և 3) Ղարդանեանի կալուածքը 50 դեսեատին այգին, շքեղ տունն իր շքեղ կահաւորութեամբ, պահեստները 12,000 վեդրո հին և նոր տեսակի գինիներով և 250 դեսեատին վարելահողը—ունենալով 150,000 բուրլու կորուստ։

Սակայն Թուրքերի գործողութիւններն այս շրջանով չէին սահմանափակւում. նրանք իրենց շահատակութիւնները տարածում էին աւելի ու աւելի հեռուն, մինչև Գիւրակ-Զայի վերին հովտում ընկած հայ գիւղերը, նախ սկսելով մասնակի յափշտակութիւններից և սպանութիւններից, ինչպէս և ամեն տեղ։

Միմիայն Գետաշէնը, մի կարճ ժամանակի ընթացքում, 18 մասնակի զոհեր էր տուել։

---

*) Այժմ Սարովի ժողովուրդը միանգամայն ձեռք է վերցրել իր հողերից, իսկ Ղարադաղլուի և Խոյլարի ժողովուրդները սարսափի տակ մի կերպ գնում են վար ու ցանք անում և գիշերները քնում եկեղեցու մէջ, որովհետև գիւղի միակ ծածկուած տեղը եկեղեցին է մնացել։

Այսպէս սեպտեմբերի 10-ին Գեօրան կայարանի) մօտ սպանուեց Յակոբ Զաքարեանը։

Այդ նոյն միջոցներին, Հոյն Գեօրան կայարանի ճանապարհին սպանուեցին գետաշէնցի 5 տղամարդիկ, այնէ՝ Շամիր Խաչատրեանը, Մէջլում Մալումեանը, Սիմոն Նազարեանը, Գեամալ Խաչատրեանը և Յովհաննէս Առաքելեանը։

Սեպտեմբերի 20-ին սպանուեց Սարգիս Առստամեանը։

Ապա յաջորդաբար մէկը միւսի յետևից սպանուեցին. Յարութիւն Գրիգորեանը—Զայլիլարի մօտ, Սիմոն Գրիգորեանը—Գանձակի ճանապարհին, խոզարած Սարգիս Ռոստոմեանը—Սարբսու գիւղի սահմանի մօտ, վանքի ձորում, պլօտնիկ Արշակ Մարկոսեանը, Զվալանց Եղիգարի 18 տարեկան տղան և այլն։

Սոյնանման զոհեր ունենում էին նաև միւս գիւղերը, օրինակ՝ Բախշիկ գիւղը, որտեղից սպանուեց Գեսունց Գաբրէլը։

Սպանութիւններից բաց տեղի էին ունենում նաև նախիրներ և տաւարներ քշելու դէպքեր։

Այսպէս սեպտեմբերի 18-ին թուրքերը քշեցին Գետաշէնի սահմաններից Մէլիք-Մնացականեանի տաւարը։

20-ին քշեցին Յովհաննէս Եպիսկոպոսեանի տաւարը։

22-ին Գիւրզալիլար գիւղի թուրքերը յարձակուեցին նախրի վրա, բայց դիմադրութեան հանդիպելով յետ փախան, տալով 2 սպանուած և 3 վիրաւոր։

Հոկտեմբերի 21-ին զինուած թուրքերի մի խումբ արշաւեց Նորաշէն և Ղարաբուլաղ գիւղերի վրա, սակայն յետ փախաւ՝ գերի թողնելով 4 հոգու, որոնք կրում էին Լաբինեան գնդի ուսնոցներ։

Հոկտեմբերի 27-ին Սարբսու գիւղի թուրքերը յարձակուեցին և քշեցին Մանաշէթի տաւարը, որի պատճառով տեղի ունեցաւ տաք կռիւ։ Ահա այս դէպքը նիւթ դարձաւ գործակալական այն հեռագրին, որի մասին մենք յիշեցինք անցեալ գլխում։

Այսպէս, դէպքերը յաջորդում էին միմեանց, մինչև վրա հասաւ Գանձակի կոտորածը, որից յետոյ թուրքերի սահմաններով հայերի երթևեկութիւնը միանգամայն դադարեց։ Գետաշէնը, ինչպէս և միւս գիւղերը, զրկուեցին դէպի Գեօրան և միւս տեղերում ընկած հողերը երթևեկելու հնարաւորութիւնից։

---

*) Գեօրան կայարանի մօտ Գետաշէնը ունի 2,100 դեսեատին վարելահող, իսկ Բախշիկը՝ 320։ Այդ հողերն այժմ ընհարումների պատճառով հնարաւորութիւն չը կայ մշակելու։

Վերջապէս դեկտեմբերի 10-12-ին Զայլիլարի թուրքերը երկու անգամ յարձակեցին Աբլահի սահմանների վրա, առաջին անգամ քշելով 85 տաւար, իսկ երկրորդ անգամ՝ 100-ից աւելի այծ։

Դրանից յետոյ Զայլիլարը երես առած պատրաստւում էր մեծ ուժով արշաւել դէպի հայ գիւղերը, երբ ինքը պաշարուեց հայերով։

Գանձակի կոտորածը մի կողմից, Ղարադաղլուի, Խոյլարի, և Սարովի քարուքանդ լինելը միւս՝ և անընդհատ կրկնուող սպանութիւններն ու յափշտակութիւնները երրորդ կողմից, զայրոյթի բուռն թափով շրջակայ հայ գիւղացիներին մղեցին դէպի Զայլիլարը, դէպի այդ աւազակային որջը։

Դեկտեմբերի 15-ին, առաւօտեան ժամը 6 ½-ին Զայլիլարը տաշարուեց երեք կողմից մի ծանր օղակով։

Այդտեղ համախմբուած բաւականաչափ ուժերը անկարող եղան երեք կողմերից թափող կրակին դէմ դնել, մի քանի ժամուայ յամառ դիմադրութիւնից յետոյ, դաշտի կողմից թուրքերը փախան, որից յետոյ հայերը խուժեցին գիւղը և սկսեց կողոպուտը, աւերն ու հրդեհը։ Սակայն հայերը գիւղի հետ դեռ ևս գործը չէին վերջացրել, երբ տափարակի կողմից եկաւ մի մեծ խուժան. կռիւը նորոգուեց մի նոր ուժով, մի նոր թափով, որը տևեց ժամեր։ Վերջապէս թուրքերը յետ մղուեցին, բայց ծանր կռուից յետոյ. այդտեղ հայերից ընկան Խաչէնի ըմբոստ բնութեան ըմբոստ զաւակը Բախշին, Իվան Բալասանեանը և զարարուլաղցի Ղուկաս Պետրոսեանը և բացի այդ, վիրաւորուեցին 6 հոգի, իսկ թուրքերից սպանուեցին աւելի քան 20 հոգի։

Զայլիլարից յետոյ յարձակման ենթարկուեցին և աւերուեցին այդ նոյն հայերի ձեռքով Դարդարան, Սարըսուն, Դոզիլարը, աւերուեցին նաև Արաս-Դարան, և Փանահլարը։ Վերջին երկու գիւղերից ժողովուրդը քոչել էր դեռ ևս յարձակումից առաջ։

Ահա այս բոլորը տեղի ունեցել վերջացել էր և ահագին թւով զոհեր ընկել ու գիւղեր աւերուել էին արդէն, երբ այդ շրջանում մարտի վերջերին յայտնուեց պատժողական գունդը։ Ինչպէս մի քանի գիւղերից, այնպէս էլ Գետաշէնից պահանջուեցին զէնքեր և տուգանքներ։ Գետաշէնի վրա 18 անգամ թնդանօթ որոտաց, Գրիգոր Կարապետեանի, Նիկոլայ Մէլիք-Մնացականեանի և մի քանի այլ մարդկանց տները ռումբերից հարուածներ կրեցին։ Յովհաննէս Մարտիրոսեանի տունը հրդեհի մատնուեց։

Եւ այս բոլորը այն ժամանակ, երբ երկու կողմերն էլ համահաւասար քանդուել էին և աւերուել։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԳԱՆՁԱԿ ԳԵՏԻ ՀՈՎՏՈՒՄ

Գանձակ գետի վերին հոսանքի և նրա ճիւղերի վրա ընկած են չորս հայաբնակ գիւղեր—Ոսկանապատը, Միղրիկը, Մուրուքը և Բարաջուրը։

Շնորհիւ այն հանգամանքի, որ այս չորս գիւղերը արևելեան և արևմտեան կողմերից պաշտպանւում են Արթօնաջուր և Քիւրակ-Զայ գետերի հովիտներում ընկած հայ գիւղերով, այդ պատճառով սրանց վիճակը համեմատաբար լաւ է եղել, համեմատաբար ենք ասում, որովհետև սրանք, այնուամենայնիւ, բաւական անհատական զոհեր տուին, որոնցից առաջ կը բերենք մեզ յայտնի մի քանի դէպքեր։

Չը մոռանանք յիշել, որ աւազակաբարոյ Թօփալ-Հասանլուի սխրագործութիւնները տարածւում էին նաև այս գիւղերի վրա։

Հոկտեմբերի 8-ին այս գիւղերի շրջանում սպանուեցին չորդարեցի երկու հայեր, Ոսկան և Աբրահամ անուններով։

Սրանից մի քանի օր անց ոսկանապատցիներ—Պօղոս Սարգսեանը և Պօղոս Յովհաննիսեանը փայտ կտրելիս սպանուեցին Թուրք անտառապահների ձեռքով։

Սրանց հաղորդելու գնացած ծերունի Տէր-Միքայէլը նոյնպէս գնդակահար եղաւ և սպանուեց անտառում։

Մի երկու օր անց սպանուեց Յարութիւն անունով մի ծերունի։

Հէնց այդ նոյն միջոցներին Թօփալ-Հասանլուի Թուրքերի ձեռքով սպանուեցին երեք այլ գիւղացիներ, երկուսը սայլապաններ—Կարապետ և Աւետիս անուններով, իսկ երրորդը մի ածխատար՝ Միրզա անունով։

Մասսայական յարձակումներ այս շրջանում տեղի չունեցան, նրանք կատարւում էին միւս շրջաններում, որոնց և յաջորդաբար անցնում ենք։



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԹՕՆԱՋՈՒՐ ԿԱՄ ՂՈՒԶՂԱՐԱ ԳԵՏԵՐԻ ՀՈՎՏՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905 Թ.

Արշախանի բարձունքներից սկիզբն առնելով հիւսիսային ուղղութեամբ մինչև Քուրը հոսում է Արթօնաջուր կամ Ղուշղարա գետը, որի հունի և ճիւղաւորութիւնների վրա ընկած են հայաբնակ հետևեալ եօթ գիւղերը, այն է՝ Վերին-Քարհատը, Ներքին-Քարհատը, Բանանցը, Խաչակապը, Կիրանցը, Փիրը և Զովդարը։

Այս շրջանի Թուրք գիւղերի շարքում իրենց անհանգիստ և աւազակաբարոյ գործողութիւններով աչքի են ընկնում Աղ-Եօխուշը, Ախրջան, Բալչըլուի ղշլաղները և հռչակաւոր Թօփալ-Հասանլուն, որոնց շնորհիւ այս շրջանում ոչ միայն անհատական, այլ և մասսայական ընդհարումներ տեղի էին ունենում դեռ ևս Գանձակի դէպքերից առաջ։

Գանձակից 20—25 վերստ դէպի արևմուտք «Մըլզնաբերդ» և «Մթին-Քարեր» լեռնագագաթների մի բարձրավանդակի վրա փռուած է Զովդարը։ Ամուր դիրքեր ունեցող միջավայրը դարբնել է չովդարեցու մէջ անվեհեր հոգի, քաջութիւն և տոկունութիւն։

Ամրակուռ Զովդարը խոչնդոտ էր հանդիսանում յիշեալ Թուրք գիւղերին յարձակուել Բանանց, Խաչակապ, Փիր, Կիրանց և Քարհատ գիւղերի վրա։ Եւ ահա ռազմական տեսակէտով առաջնորդուելով, դեռ ևս օգոստոս ամսին թեթևակի յարձակումներով Թուրքերը փորձեր արին Զովդարը քոչեցնել իր տեղից, սակայն այդ նրանց չը յաջողուեց, թէև մէկ այս և մէկ այնտեղ շարունակւում էին թեթևակի յարձակումները։

Սեպտեմբերի 4-ին մի ընդհարում հայերի և Թուրքերի մէջ տեղի ունեցաւ Փիր գիւղի սահմաններում։

Փիրը ունի Աղէքսաշէն անուն կրող մի ամարանոց, ուր պահ-ւում են գիւղի անասունները։ Զինուած Թուրքերը յարձակուելով՝ այդտեղից քշեցին 70 ձիերից բաղկացած երամակը. լուրն առ-նելով գիւղից օգնութեան հասաւ զինուած երիտասարդների մի խումբ, որը ոչ միայն յետ բերեց երամակը, այլ և խլեց Թուր-քերից 7 ձի և 2 հրացան։ Ընդհարման ժամանակ հայերն ունե-ցան երկու վիրաւոր, իսկ Թուրքերը՝ մի քանիսը։

Հոկտեմբերի 9-ին Հարամ-Դարասի կոչւող ձորում սպանուեց Բանանց գիւղացի Արտեմ Մատթէոսեանը։

Մէկ թէ երկու օր անց ծանր կերպով վիրաւորուեց, դարձեալ Բանանց գիւղացի, Գրիգոր Տէր-Մկրտչեանը։

Սրանից յետոյ տեղի ունեցան մի շարք սպանութիւններ, սակայն, որոնց արձանագրել մեզ չը յաջողուեց։

Հոկտեմբերի 14-ին թէ 15-ին Զովդարի վրա տեղի ունեցաւ նորից մի ուժեղ յարձակում։ Բալչըլու խմբուելով շրջականներից բազ-մաթիւ Թուրքեր, եկան պաշարեցին գիւղը չորս կողմից. երեք օր տևող յամառ կռուից այս անգամ էլ Զովդարը դուրս եկաւ պատ-ուով և հպարտ։ Թուրքերը յետ փախան՝ տանելով իրենց հետ մի քանի սպանուածներ։

Այս դէպքից անմիջապէս յետոյ տեղի ունեցան Գանձակի կարմիր օրերը, որոնք լայն չափով արձագանք գտան գաւառա-մասերում։

Քաղաքի կոտորածը, կողոպուտն ու աւերը խրախոյս հան-դիսացան գաւառի Թուրք ժողովրդի համար։ Սկսուեց մի չը տես-նուած, չը լսուած շարժում. ամեն կողմից դիմում էին դէպի քաղաք անզէն ու զինուած մարդիկ. ճանապարհները միանդամայն վտան-գաւոր դարձան հայերի համար։ Բաղաքէնդն ու Գետարէկը սրա-ծութիւնների վայր դարձան. երթևեկութիւնը Բանանց, Զարդախ-լու և այլ գիւղերից դէպի քաղաք և միւս շրջանները միանգա-մայն ընդհատուեց. ասպարէզը մնաց ամբողջովին Թուրք հրոսակա-խմբերին, որոնք անարգել յայտնուում էին այս և այն տեղ և բոր-բոքում սկսուած ընդհարումները։

Այսպիսի պայմանների մէջ ապրելն անկարելի էր, պէտք էր մի ելք, մի ճանապարհ գտնել . . .

Ինչպէս վերը տեսանք, աւազակութիւնների և ասպատակու-թիւնների մէջ մասնակցութիւն ունէին նաև Աղ-Եօխուշ և Ախրջա

գիւղերը. ահա այս գիւղերի դէմ ուղղեցին հայերն իրենց հակայարձակումները։

Դեկտեմբերի 10-ին պաշարեց Աղ-Եօխուշը. շրջաններն ասպատակող գիւղը չուզեց վախկոտ հայերի առաջ տեղի տալ. յուսահատ ճիգեր թափեց նա ազատուելու աւերումից, բայց զուր, զայրոյթի գագաթնակէտին հասած հայերը գերագոյն ճիգեր թափելով գրաւեցին գիւղը։ Թուրքերը փախան ահագին զոհեր տալով։ Պատմում են, որ կուռող տղամարդկանցից միմիայն ընկել էին 40 հոգի։ Գիւղն ամբողջովին աւերուեց, բայց նախ քան աւերուելը կողոպտուեց, որտեղից տարան 150-ի չափ տաւար, 600 ոչխար և 35—40 ձի։

Աղ-Եօխուշում գերի ընկան 12 թուրք կանայք, որոնց Բանանց գիւղը տանելով այնպէս պատուով պահեցին հայերը, որ յունվարի 11-ին, երբ Գանձակ էին ուղարկում թուրքերին յանձնելու համար, ականատեսների պատմելով, նրանք խնդրում, թախանձում էին պահել իրենց գոնէ մինչև գարունը։

Աղ-Եօխուշից յետոյ յարձակման ենթարկուեց Ախրջա գիւղը. ժողովուրդը տեսնելով իր դրացու ապարդիւն դիմադրութիւնը, փախուստի դիմեց առանց կռիւ տալու, որին հետևեցին նաև մի քանի փոքրիկ գիւղերի ժողովուրդները, քոչելուց առաջ իրենց ձեռքով քանդելով իրենց տները։

Սակայն շրջանը չը խաղաղուեց և ճանապարհները չապահովուեցին. դեռ մնում էր Թօփալ-Հասանլուն, այդ աւազակարունը, այդ որջը։

Դա ամբողջ գաւառում անուն հանած գիւղ է, ընկած Բանանցից Գանձակ տանող ճանապարհի վրա։ Նա նոյն իսկ խաղաղ ժամանակ մի կատարեալ պատիժ էր ոչ միայն հայ գիւղերի, այլ և գերմանական գաղութի, Ելենենդորֆի համար։ Սովորական գողեր, ճանապարհ կտրողներ ու անցորդներին կողոպտողներ և մինչև անգամ աւազակախմբեր արտադրում էր այդ գիւղը անթիւ, անհաշիւ։ Կառավարութիւնն անդամ զսպել չէր կարողանում, աւելի ճիշտը չէր կամենում նրան, շնորհիւ ոստիկանական թուրք պաշտօնեաների։

Այդ նոյն Թօփալ-Հասանլուն հայ-թուրքական ընդհարումներից ի վեր առիւծ էր կտրել. աջ ու ձախ խփում անցնում էր նաքաղաքը աւերող մեծ ոյժ դա էր տալիս, ինչպէս տեսանք քաղաքի

դէպքերը նկարագրելիս։ Մի խօսքով նա մի պատուհաս էր իր շրջապատի համար։

Ահա դրա հետ պէտք էր հաշիւ վերջացնել շրջանը խաղաղացնելու համար, մտածեցին հայերը և դեկտեմբերի 22-ին գործի անցան։

Թօփալ-Հասանլուն նախատեսելով մի այդպիսի բան առաջօրէն դուրս էր տարել կանանց և երեխաներին։ Գիւղում մնացել էին միմիայն տղամարդիկ և կուռող ուժերը։ Սակայն այդ հանգամանքը չը կանգնեցրեց գիւղի կործանումը. թէև երկար, բայց անօգուտ դիմադրութիւնից յետոյ գաւառը «զարի» բերող աւազակները փախան՝ թողնելով գիւղի փողոցներում 20-ի չափ դիակ։ Դրա հետ միաժամանակ հայերը մի ջարդ էլ տուին Թօփալ-Հասանլուին քաղաքից օգնութեան եկող Թուրքերին Աղ-Քեօրփի կոչուող ձորում, փախցնելով ու ցրիւ տալով նրանց՝ առաջօրէն բռնած լինելով այդ ձորի անցքը։

Թօփալ-Հասանլուն նախ քան աւերուելը կողոպտուեց, որտեղից հայերը տարան 200-ի չափ տաւար, 1000-ի չափ ոչխար, 30—40 ձի ու ջորի և բազմաթիւ տնային իրեր ու ապրանքներ՝ մեծ մասամբ հայերի պատկան, կողոպտուած ու բերուած Գանձակից։

Թօփալ-Հասանլուի աւերման հետ միաժամանակ դատարկուեցին Դարաբէկլու և Կարաեաթաղ Թուրքաբնակ գիւղերը, որտեղերից ժողովուրդը քոչեց, նախօրօք աւերելով տները։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԶԱՄՔՕՐ ԳԵՏԻ ՀՈՎՏՈՒՄ

1905 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻՑ 1906 թ. ՅՈՒՆՎԱՐ

Շամքօրը, Քուրից յետոյ, Գանձակի գաւառի ամենամեծ և ընդարձակ հովիտներ ունեցող գետն է, որի ընթացքով ընկած են չորս հայաբնակ գիւղեր, այն է՝ Բարումը, Բարսումը, Գուլամբիրը և Նուզգէրը։ Բացի այս չորս գիւղերից, գետի ստորին հովտում ընկած է գերմանական երկրորդ գաղութը, Անենֆելդը, ուր բնակութիւն ունեն հաստատած 25 30 առևտրով և արհեստներով պարապող հայեր իրենց ընտանիքներով, որոնք և եղան այդ շրջանի բռնութիւնների առաջին զոհը։

Անենֆելդի մօտ գտնւում է աւազակաբարոյ Թուրքական Մօրուլ գիւղը, որը շահատակութիւնների առաջին օրինակը տւեց այդ շրջանում։

Նոյեմբերի 18-ից լոյս 19-ի գիշերը, երբ Գանձակի կոտորածի լուրը տարածւեց գաւառի բոլոր ծայրերը, յիշեալ Մօրուլ գիւղի Թուրքերը յարձակում գործեցին գաղութում եղող հայերի և նրանց խանութների վրա։ Հայերն անզէն էին և զուրկ ինքնապաշտպանութեան միջոցներից, այդ պատճառով նրանք փախան և մտան գերմանացիների տները, խանութները Թողնելով խուժանին, որն առանց արգելքի սկսեց փակ դռները խորտակել և միջի եղած ապրանքները կողոպտել։ Դրանով չը բաւականացած ամբոխը փորձեց խուժել նաև տները, բայց բարեբախտաբար մի հայի ունեցած միակ ռումբը իր ուժգին պայթումով սարսափահար արեց խուժանին և փախցրեց։

Յաջորդ օրը *) յայտնւեց պրիստաւ Իսմայիլ-բէկ Հաջիբէկովը, որը ոչ մի միջոց ձեռք չառաւ կողոպուտը դադարեցնելու, առաջարկեց հայերին հաւաքւել Դալլար կայարանը գնալու համար. հայերը հրաժարւեցին ընդունել այդ առաջարկութիւնը, չը վստա-

*) Տես ,,Մշակ" № 235, 1905 թ.

հանալով պրիստաւի պաշտպանութեանը, բայց գերմանացիներն ստիպեցին նրանց հեռանալ։ Հայերն ստիպւած եղան հնազանդւել, և հէնց որ նրանց մի մասը պատրաստւեց ճանապարհ ընկնել, Թուրքերը յարձակւեցին նրանց վրա և պրիստաւի ներկայութեամբ սկսեցին կողոպտել այս անգամ էլ գրպաններն ու տնային ճեացած իրերը, որից յետոյ միայն բոլորովին պլոկւած հայերը կարողացան մի կերպ Դալլար հասնել։ Այդ դէպքից մի օր անց պրիստաւ Հաջիբէկովը ոմն Սարաղեանին և մի քանի այլ հայերի պաշտպանելու համար փրկանք վերցրեց 300 ր.։

Աւելի մեծ կողոպուտ տեղի ունեցաւ Դալլար կայարանում, ուր հայերը բաւական խոշոր առևտուր ունէին։ Բացի այդ, այնտեղի հայերից սպանւեցին մի քանի հոգի, իսկ մի քանի հոգի էլ գերւեցին, որոնց փրկելու համար նոյն պրիստաւի ձեռքով 800 ր. փրկանք վճարւեց, թէև մի կին և մի օրիորդ, այնուամենայնիւ, չազատւեցին։

Անենֆելդի հայերը կորցրին 10-ի չափ լեցուն խանութներ, 20-ի չափ մանր խանութներ ու արհեստանոցներ և տնային իրեր աւելի քան 120,000 ռուբ. արժողութեամբ։ Իսկ Դալլար կայարանում եղող հայերի կորուստը աւելի մեծ էր, նա հասնում էր 200,000 ռուբլու։

Նոյեմբերի 27-28-ին, Բաղաքէնդի և Գետարէկի կոտորածներից յետոյ, կռիւներ տեղի ունէին Զարդախլուի շուրջը։ Թուրքերն այդտեղ հանդիպելով անյաջողութեան՝ եկան պաշարեցին Բարսումը, որը շնորհիւ իր ամուր դիրքերի ուժեղ դիմադրութիւն ցոյց տւեց և յետ քշեց յարձակումը։

Սակայն Թուրքերը չը խրատւած այդ բանից, դեկտեմբերի 5-ին յարձակւեցին Բարսումի վրա և հանդից քշեցին նախիրը, որի ժամանակ պատահաբար Զարդախլուից եկող զինւած մի խումբ երիտասարդներ օգնութեան հասնելով, ոչ միայն նախիրը յետ խլեցին, այլ և հետևելով Թուրքերին մինչև Մալաքլու գիւղը, կրակի կապեցին նրանց։ Մալաքլուի ժողովուրդը փախաւ գիւղից գլուխը կորցրածի պէս, որից յետոյ տները ենթարկւեցին կողոպուտի և աւերի։ Հայերը տարան 2 բերդան, 6 ձի և 65 տաւար, Թուրքերից սպանւեցին 4-ը, որոնցից երկուսը բէկեր էին։

Ցունվարի 5-ին յարձակման ենթարկւեց Նուզգէր գիւղը։ Յարձակման մասնակցում էին ոչ միայն շրջակայ գիւղերից, այլև

Շամքոր գեի հոտ հեռաւորվիտներից եկած Թուրքեր։ Յարձակումը յետ մղեց շնորհիւ հայերի ցոյց տուած ուժեղ դիմադրութեան։

Յունվարի 10-ին տեղի ունեցաւ երկրորդ յարձակումը աւելի բազմամարդ, աւելի ուժեղ չափով, քան առաջինը։ Այս յարձակման առաջնորդում էր Դալի-Ալին. այդտեղ էին նաև Գեոտաբէկի պրիստաւ Մուսէիրը և Սուլէյման-բէկ Շամքորսկին։

Հայերը նախատեսելով այդպիսի մի յարձակում նոյնպէս կենտրոնացրել էին բաւականաչափ ուժեր, որոնց մէջ աչքի էին ընկնում Զովդարի կտրիչները։ Ընդհարումներն ստացել էին բացարձակ կուի բնաւորութիւն, կարծէք կառավարութիւն գոյութիւն չունէր։ Ցամառ կռիւն սկսւեց առաւօտեան ժամը 5-ից և տևեց ամբողջ օրը։ Թուրքերը կարողացան բաւական առաջ գնալ դէպի գիւղը և հրդեհեցին մի քանի մարագներ. այդ ժամանակ հայերը մի կատաղի գրոհ տուին և Թուրքերին փախցրին կորուստներով։ Գերմանացիների վկայութեամբ Թուրքերը կողոպուտի համար բերած ֆուրգոնները յետ տարան մարդկային դիակներ բարձած։

Այս կուում զոհեր տուին նաև հայերը և այն էլ լաւ զոհեր. բացի 3 վիրաւորներից ընկել էին 6 հոգի. դրանք էին՝ Նաւասարդ Առաքելեանը, Անտոն Գալստեանը, Սիմոն Աւագեանը, Յովհաննէս Առաքելեանը, Յարութիւն Առուշանեանը և Մակիչ Պետրոսեանը, բոլորն էլ ընտիր, քաջ մարդիկ։

Սակայն Թուրքերը խրատ ասածը չը գիտէին ինչ բան է. այս դէպքից ընդամենը 4 օր անց, յունվարի 14-ին, յարձակւեցին այս անգամ էլ Միլրիկ գիւղի վրա և քշեցին 350 հատից բաղկացած ոչխարի սուրուն։



ԲԱԴԱՔԷՆԴ-ԳԵՏԱԲԷԿԻ ԿԱՄ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆ

19—25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1905 Թ.

Այն բոլորը, ինչ որ մենք արձանագրեցինք Գանձակի և Գանձակի գաւառի վերաբերեալ մինչև այժմ, նսեմանում են այն բարբարոսութիւնների դիմաց, որոնց նոր պիտի պատահենք։ Դրանք Բադաքէնդ-Գետաբէկի կոտորածներն են, որոնց վրա մի փոքր երկար պիտի կանգ առնենք։

Գանձակի գաւառի արևմտեան մասում, քաղաքից 30—35 վերստ, իսկ Դալլար կայարանից դէպի հարաւարևմուտք 20—25 վերստ հեռաւորութեամբ ընկած է Զարդախլու մեծ և շէն գիւղը, հայ գիւղախմբերից անջատ, թուրքերով շրջապատուած, բայց ամուր դիրքերով հպարտ ու խիզախ, որպէս անմատչելի ժայռի գագաթին բազմած արծիւը։

Զարդախլուից դէպի հիւսիսարևմուտք 15 վերստ հեռաւորութեամբ Բադա գետի վրա ընկած է Բադաքէնդը, նոյնպէս հայ գիւղախմբերից անջատ ու միայնակ։ Գիւղը փուած է մի սարահարթի վրա մի կողմից պաշտպանելով Օղուզի և Խանփերի գագաթներով, իսկ միւս կողմից՝ Բադա և Խազնի անուն կրող ձորերով։ Այդ ձորերի մէջ ձգած են գիւղի այգիները, որոնք ոռոգւում են Բադա գետակով։

Բադան հարուստ է հողերով և յայտնի իր տնտեսութեամբ. նա պարապում էր երկրագործութեամբ, անասնապահութեամբ և այգեգործութեամբ։ Գիւղի հարստութիւնը անասելի էր. 40—50-ով եզ, կով, ձի, գոմէշ ունենալը սովորական էր բաղեցու համար. միմիայն եզների թիւը գիւղում հասնում էր 2500-ի. նրա ամբարներն ու հորերը լիքն էին, մառանները նոյնպէս, տներն ամուր ու գեղեցիկ։

Բաղան միևնոյն ժամանակ բաւական հիւրասէր գիւղ էր. նրա սեղանը յաճախ բացւում էր մանաւանդ դրացի Թուրքերի առաջ, նրանց բարեկամութիւնը շահելու համար. այդպէս Թելադրում էր դրութիւնը։

Բաղան ունէր 400-ից աւելի ծուխ 1388 արական և 1225 իգական՝ շուրջ 2713 բնակիչ։

Բաղային շրջապատում էին Թուրքական 24 մեծ գիւղեր, որոնց Թւում գտնւում են՝ Խինանլուն, Իւխարի-Այիբլուն, Աշաղա-Այիբլուն, Իրմաշլուն, Թագարլուն և Դուգեարլուն։

Զարդախլուից դէպի հարաւ 25 վերստաչափ հեռաւորութեամբ, անտառներով ծածկւած մի լեռնոտ տեղում ընկած են «Սիմէնս և Հալսկէ» ընկերութեան Գետաբէկի հռչակաւոր պղնձի հանքերը։ Դրանք բաւական ընդարձակ ու շահաւէտ հանքեր են հանդերձ մետաղ զտող գործարաններով։

Հանքերում և գործարաններում աշխատում են աւելի քան 2000 մշակներ։ Մշակների խոշոր մասը Թուրքեր են, մեծ մասամբ պարսկաստանցիներ։ Հայերը կը լինեն մօտ 500 հոգի, հաւաքւած շրջակայ Ղազախ, Զարդախլու, Զագիր, Բարսում գիւղերից, որոնք կատարում են համեմատաբար լաւ աշխատանքներ և պարապում են արհեստներով։ Կան նաև յոյներ և տաճկաստանից եկած սիւնիներ, որոնք աւելի բարձր աշխատանքներ են կատարում և բոլորից էլ լաւ վարձատրւում։ Իսկ հանքերի կառավարութիւնը գտնւում է մի քանի տասնեակ մասնագէտ գերմանացիների ձեռքում։

Հանքերը շահագործելով՝ իրենց հետ առաջ են քաշել կապիտալ և կուլտուրա, որի շնորհիւ այդտեղ ստեղծւել է մանր և մեծ առևտրականների մի շուկայ։ Ահա այդ շուկայում կային 50-ի չափ հայ խանութպաններ և արհեստաւորներ և մի 20 էլ մանրավաճառ Թուրքեր։

Հանքերից մի վերստ հեռու մի ձորակի մէջ ընկած է Ղազախ գիւղը 70—80 տնից բաղկացած, նոյնպէս միայնակ և Թուրքերով շրջապատւած։

Գետաբէկի և Ղազախի շրջակայ վայրերը բռնած ունեն Այրում և այլ անուն կրող ցեղերը, որոնք ապրում են Սօգիւտլու, Արբխտամ, Ղարաղօյունլու, Միսկինլու, Սարիքեօհնա, Եաղուբլու և բազմաթիւ գիւղերում՝ փռւած այս և այն տեղ։ Բացի այդ, ա-

մառները հեռաւոր դաշտավայրերից չուում գալիս են Գետարէկի սարերը բաւականաչափ քոչւորներ, որով սերտ կապ է հաստատուել լեռնական և տափարակների վրա ապրող Թուրքերի մէջ։

Ահա այս չորս կէտերի շուրջը կատարուած դէպքերի և բարբարոսութիւնների նկարագրութեանը անցնում ենք այժմ։

Գանձակի առաջին օրւայ կոտորածի հետ միաժամանակ, այն է, Նոյեմբերի 18-ին, Թուրքական մի խուժան յարձակւեց Զարդախլուի վրա աւերելու և այդ խոչնդոտը մէջտեղից վերացնելու նպատակով։ Վաղուցւայ մտադրութիւնը այս անգամ էլ չիրագործւեց, Զարդախլուն դիմադրեց որպէս վահան և ճնաց կանգուն ու հպարտ։

Յարձակումը կրկնւեց նաև 19-ին, բայց դարձեալ անյաջող, որից յետոյ խուժանը դարձաւ դէպի Բաղաքէնդ, պղնձահանքերը և Ղազախ։

Բաղաքէնդը, ինչպէս վերը տեսանք, սիրտը բաց մի հիւրասէր գիւղ էր. նրա սեղանը ամենից յաճախ բացւում էր հարևան Թուրք գիւղացիների առաջ. օր չը լինէր, որ 20-30 Թուրքեր իրենց ձիերով հիւր չը լինէին բաղեցուն, չուտէին, չը խմէին նրա սեղանից։ Սակայն բաղեցին դրանից փրկութիւն չը գտաւ. Թուրքերը աչք Թեքեցին հարուստ Բաղայի վրա, նրանց միտքը պղտորւեց և սկսւեցին նախ և առաջ մասնակի սպանութիւններ, ինչպէս և ամեն տեղ։

Այսպէս մի կարճ միջոցում Բաղա գիւղից սպանւեցին Տամբլուտ-Ղօբի քեօլում իմաշլուեցիների ձեռքով Իւան Բարսեղեանը, 25 տար.։

Նոյն Իմաշլուեցիների ձեռքով սպանւեց Նովեր-Եալում Յարութիւն Խառադեանցը, 27 տար.։

Խինանլու գիւղի մօտ, Ջրաղացում, սպանւեցին Պետրոս Աղասեանը, 47 տար. և Մարիամ Խաչատրեանը։

Ղըզըլղալում սպանւեց Եսայի Աւագեանը, 27 տար.։

Բաղա գետի վրա Յոսէփին Ջաղացում սպանւեց Սողոմոն Տէր-Յարութիւնեանը, 45 տար.։

Նոյեմբերի 14 Թէ 15-ին այգիների մօտի գոմերից քշեցին 50-ի չափ տաւար։

Չը նայած այդ բոլորին, բաղեցիները լռում էին և, ինչպէս ասում են, իրենց ցաւը իրենց ատամը կցած՝ քաշ էին տալիս

չարագուշակ օրերը։ Բայց ի զուր։

Նոյեմբերի 19-ին, առաւօտեան ժամը 7-ին, Թուրքերն եկան բռնեցին գիւղի շրջակայ բլուրները, իսկ գիւղից 5 վերստ հեռու գտնուող Զառչի-Բինան կողոպտեցին և եղած չեղածը տարան։

Այս տեսնելով հայերը դիմեցին կալւածատէր Ալլահեար-բէկ Զուլգադարովին, որպէս ազդեցիկ մարդու և խնդրեցին հեռացնել իրենց գիւղի գլխին կուտակւած փոթորիկը։ Եկաւ Ալլահեար-բէկը իր մի քանի ձիաւորներով, իջևանեց իր բարեկամ բաղեցիների մօտ. մնաց այնտեղ մի օր և մի գիշեր, գտաւ փառահեղ հիւրասիրութիւն, յագեցաւ բաղեցու ճոխ սեղանից և երդւեց իր կտրած աղ ու հացով, որ նա քանի կենդանի է, բաղեցու մի մազին անգամ դիպչող չի լինի։ Բայց քաղցած ամբոխի ,,ռեխը'' ձգելու համար 3,000 ռուբ. պահանջեց, թէև յետոյ այդ գումարը վեր բերեց մինչև 1,000-ի։ Պահանջեց նաև 15 թաղար (650 փութ) գարի իր ձիերի համար։

Եւ մինչդեռ յաջորդ առաւօտ, այս սակարգութիւնից յետոյ, Ալլահեար-բէկը նոր հաւաստիացումներ անելով պատրաստւում էր ճանապարհ ընկնել, հայերը լուր բերին, որ Թուրքերն ուզում են գիւղը կոխել։ Ալլահեար-բէկը դուրս եկաւ Թուրքերի առաջ յանդիմանութիւններով, սակայն մառախուղի միջից (օրը մառախլապատ էր) նրա ականջին հասան այս խօսքերը. ,,Բէկ, դու չէիր, որ միւս բէկերի հետ սովորեցնում էիր մեզ յարձակւել, կողոպտել, կոտորել, հայերին՝ ասելով, նամէստնիկը և ռուսները ձեզ չեն պատժի, իսկ այժմ դու պաշտպան ես կանգնում հայերին''։

Ալլահեար-բէկը լսեց այս խօսքերը և բարկանալով ու հայհոյելով յետ դարձրեց Թուրքերին։

Սակայն միմիայն մի օր անց, նոյեմբերի 21-ին, խուժանը նորից երևաց, բայց այս անգամ աւելի մեծ չափով. այգիների ցանկապատերը հրդեհւեցին, գիւղը պաշարւեց չորս կողմից. սկսւեց մի անհաւասար, օրհասական կռիւ, որպիսին լինում է յուսահատական բոպէներին։ Բաղայի փոքրաթիւ կուռողները մինչև 22-ի երեկոյեան քաջարար դիմադրելով դիրքերը ձեռքից թողին միմիայն հերոսաբար ընկնելուց յետոյ*)։

---

*) Ահա, ճիշտ այս բովանդակութեամբ Բաղայի ժողովուրդը իր ծխատէր քահանայ Տէր-Մեսրովբ Ստեփանեանի միջոցաւ բողոք ներկայացրեց փոխարքային, մատնացոյց անելով, որպէս Բաղայի կոտորածի դեկավարների, մի

Սակայն Բաղայի ժողովուրդը հերոսութեան նոր ապացոյցներ տուեց. թուրքերի ներս խուժումից յետոյ մի յամառ կռիւ էլ տեղի ունեցաւ գիւղի փողոցներում փայտերով, կացիններով և այլ գործիքներով. մինչև վերջին ճիգը, վերջին շունչը, ինչպէս գօտեմարտը, որից յետոյ խուժանը կատարեց իրեն յատուկ բարբարոսութիւնը մեծի ու փոքրի, կանանց և երեխաների վերաբերմամբ։

Ժողովուրդը ցրիւ եկաւ խելակորոյսի պէս. մայրը որդուն, որդին հօրը կորցրած՝ սարսափահար ընկան չոլերը, սարերն ու ձորերը, որոնց խուժանը հետևելով այդ սարերն ու ձորերն էլ նախշում էր անմեղ դիակներով։ Սպանութիւնների պէս պէս ձևերը գերազանցեցին մէկը միւսին. խուժանը փորձեց տանջանքի տեսակները նոյն իսկ ծծկեր մանուկների վերաբերմամբ։

Այսպէս, Խաչատուր Պապեանի 8—9 ամսական երեխայի դիակը գտնուեց առանց երկու թեների՝ մարմնի միւս տեղերը անվնաս։

Այս սրտաճմլիկ տեսարանների շարքում լինում էին և ոգեւորիչ բոպէներ։

Այսպէս, մի 70 տարեկան ծերունի իր որդու հետ մինչև ընկնելը քաջութեան հրաշքներ գործեց, գլորելով 10-ի չափ թուրքեր։

Յովհաննէս Մովսէսեանի կինը, 18 տարեկան Նինոն և Սար-

շարք ազդեցիկ մարդկանց վրա։ Դրանք էին.

1) Ալլահեար-բէկ Զուլգադարովը, Թինանլու գիւղից։

2) Բէիր-Աղա և Թաղի-բէկ Ղարաբէկովները և Սարիբէկ Իսմայիլ օղլին, Իխարի-Այիբլու գիւղից։

3) Մաշադի Ասլանը և Ղահրաման քեօխվան, Իրմաշլու գիւղից։

4) Ղադի Քեօխվան, Ղօյլար-Սարբլի գիւղից։

5) Հաջի-Զէյնալ-Աբդինը և Քեալբալայ-Մամէդ Համզա օղլին, Աշաղա-Այիբլու գիւղից։

6) Մաշադի-Ալլահվէրան Հաջի-Սօիւն օղլին, Թադարլու գիւղից։

7) Ալլահ-Թանչալ Սէիդը և Քեալբալայի-Մահարլամը, Դուգեարլու գիւղից։

Ցիշեալ անձանց պատասխանատուութեան ենթարկել տալու նպատակով կազմուած այդ բողոքը վերջանում էր հետեւեալ բնորոշ խօսքերով։ ,,Ալլահեար-բէկ Զուլգադարովը իր հաւատակիցների մէջ ունի ահագին ազդեցութիւն և շնորհիւ այն հանգամանքի, որ նա համարւում է ձերդ պայծառափայլութեան մօտ առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ, թուրք ժողովրդին ներշնչում է այն միտքը, որ իբր հայերին ճնշելը կառավարութեան հակառակ չէ''։

գիս Պետրոսեանի կինը, 20 տարեկան գեղեցիկ Խալլուն, որոնց խարերայութեամբ Բաղաձորից դուրս բերելով և ազգականներին կոտորելով թուրքերն ուզում էին այդ երկուսին առևանգել, մի յուսահատ ճիգով դուրս պրծան գազանացած ամբոխի ձեռքից և ահագին քարափից ձորը նետուեցին՝ ազատելով իրենց պատիւը, թէև ջարդ ու փշուր եղած, օրերով տառապում էին անկողնում։

Այսպէս էր հիւրասէր, սիրաց բաց Բաղայի վիճակը։ Շէն գիւղն իր բոլոր հարստութիւններով ու կենդանիներով, լեցուն հորերով ու շտեմարաններով, գեղեցիկ տներով ու տնային իրերով կողոպտուեց մինչև վերջին հատիկը, աւերուեց ու այրուեց, որի կորուստը, հաշտարար միջնորդի ցուցակով, հասնում էր երկու միլիոն երկու հազար երեք հարիւր ռուբլի գումարի (2,002,300 ռ.)։ Իսկ ժողովուրդը, որի մի մասն ընկել էր գիւղի փողոցներում, սարերի ու ձորերի քերծերում և գերի տարուել, շաղ անցաւ այս ու այն տեղ, մի անկիւն և մի կտոր հաց մուրալու համար։

Փախստական բաղեցիների այն սուար մասը, որը ապաստան գտաւ Զարդախլու գիւղում, այնտեղից էլ «դադարգիւն» ընկաւ։ Այդ հալածուածները դեռ շունչ չէին քաշել հիւրընկալ գիւղում, երբ նա պաշարուեց նոյն արիւնածարաւ խուժանով։ Ճիշտ է, Զարդախլուն չընկճուեց, ինչպէս այդ կը տեսնենք յետոյ, բայց սարսափահար եղած բաղեցին այդտեղից էլ չուեց, ամեն տեղ թողնելով իր թափթփուկները, այնպէս որ նա աստիճանաբար ծծուում, մաշուում էր ճանապարհներին։

Փետրվար ամսին բաղայի փախստականները գտնուում էին Բանանց, Խաչակապ, Փիր, Զովդար, Կիրանց, Բարում, Բալսում, և Զարդախլու գիւղերում, որոնցից 560 հոգի ապաստանել էին Բանանց գիւղում։ Այդ փախստականներից մի խոշոր մաս էլ անցել էր Ղազախի գաւառը, ապաստանելով Քարվանսարա, Վերին-Աղդամ, Խաչթառակ, Թաթլու, Թուզ և այլ գիւղերում։ Ինչ վերաբերում է գերի ընկածներին, նրանք շաբաթներով պահուում էին թուրքերի մօտ և եթէ ազատուում գալիս էին, այն էլ մաս մաս մեծ ջանքեր գործ դրելուց յետոյ։

Այսպէս, յունվարի 20-ին գերութիւնից ազատուեցին 9 հոգի, դրանք էին՝ կանայք՝ Ազիզ, 30 տար., Մագթաղ, 27 տ., օրիորդներ՝ Վարդանուշ, 11 տ., Սոֆիա, 7 տ., Շուշանիկ, 4 տ., Զաւահիր, 13 տ., և մանուկներ՝ Գրիգոր, 7 տ., Ազիզ, 3 տ. և Իւան, 2 տար.։

Յունվարի 29-ին ազատեցին 22 գերիներ, որոնցից 3-ը տղամարդ, 4-ը կին, իսկ 15-ը փոքրահասակ տղաներ և աղջիկներ էին։ Թէ գերութեան մէջ այդ թշուառները որպիսի բարոյական և ֆիզիքական տանջանքներ էին կրել, մանաւանդ կանայք և օրիորդները, լաւ է այդ մասին լռել։

Փետրվարի սկզբին ազատեցին դարձեալ մի քանի գերիներ. սրանց թւում եղող օրիորդ Շահնազարեանը յայտնեց, որ Գետաբէկի շրջակայքում ապրող Այրումների մօտ գտնւում են դեռ ևս հետևեալ գերիները։

1) Ստեփան Գասպարեան Բաղդասարեանը, 6 տ., թլպատուած։

2) Օր. Անուշ Մէլիքեան Ադամեանը՝ չարդախլուեցի, 14 տ.։

3) Օր. Վարդանուշ Սարգսեան Յակովբեանը, գետաբէկցի, 16 տարեկան։

4) Օր. Վարսենիկ Սարգսեան Յակովբեանը, 16 տար.։

5) Տիկին Նինա Գասպարեան Օդարաշեանը—գանձակեցի, 20 տարեկան։

Սկզբներում, երբ Բաղայի ժողովուրդը սարսափահար, գլուխը կորցրած դեռ ևս այս ու այն կողմն էր թափառում, տնաւեր ու տարագիր, հնարաւորութիւն չը կար Բաղայի զոհերի թիւը ստուգել. յունվարի 20-ին միայն կարելի եղաւ իմանալ այդ թիւը. տանջանքներով ընկել էին մարդ, կին, երեխայ 118 հոգի, որոնց անուանացուցակը կը գտնէք գրքի վերջում։

Այն ժամանակ, երբ կատարւում էին Բաղաքէնդի սարսափները, աւելի վատթարագոյն սարսափներ տեղի ունէին պղնձահանքերում, մասնակցութեամբ մասի պրիստաւի։

Նոյեմբերի 19-ին Գետաբէկի շուրջը մի ցոյց կատարելուց յետոյ թուրք խուժանը մի երկաթէ օղակի պէս եկաւ պաշարեց միաժամանակ թէ բազարը (հանքերի շուկան) և թէ Ղազախ գիւղը։ Թէև փոքրաթիւ, բայց քաջ երիտասարդների մի խումբ դիրք բռնելով բազարի և գիւղի մէջտեղ ընկած գերեզմանատան քարերի մէջ՝ կարողացաւ մի ամբողջ օր պաշտպանել թէ մէկ և թէ միւս տեղը. սակայն գնալով՝ խուժանը աւելի ևս մեծանում էր, որին զուգընթաց դժւարին էր դառնում նաև կռիւը։ Գերեզմանատանը դիրք բռնած երիտասարդները, տեսնելով որ երկու տեղը միաժամանակ այլ ևս անհնար է պաշտպանել, անցան դէպի գիւղ,

որից յետոյ ամբոխը խուժեց բազարի վրա մի վանդալական շահատակութեամբ։ Սկսեց նախ խանութների խորտակումն ու կողոպուտը. թալան-թրաշը հասաւ ծայրահեղ չափերի. գազանացած, մոլեգնած ամբոխը մի կարճ ժամանակով միայն տեղի տուեց մի յուսահատ հայի նետած ռումբին, որը մի քանի զոհեր խլեց ամբոխից։ Խուժանը յետ եկաւ աւելի կատաղած, աւելի գազանացած։ Կողոպուտից յետոյ սկսեց հրդեհը, որի ժամանակ ամբոխը յարձակւում էր տների վրա, դուրս էր քաշում թագնուած տեղերից մարդ, կին, երեխայ և կենդանի կենդանի նետում կրակի մէջ։ Կրակի բոցերի մէջ այրւողների տանջանքի աղաղակն աւելի ևս կատաղեցնում էր ամբոխին, որը աւելի ևս կրակի խորն էր հրում զոհին։ Այդպիսի զոհերից մէկն էր 75 տարեկան մի պառաւ կին Գիւլլիզար Բաղդասարեանը։ Յղի կանանց փորերը պատռում էին և երեխաներին հանելով կրակը նետում։ Մարդկանց նախ քան սպանելը մաս մաս կտրատում էին և այնպէս մահացնում։ Բարբարոսութիւնների ձևերը գերազանցեցին մէկը միւսին, մի քանի տասնեակ մարդ, կին, երեխայ ընկան առանց գընդակի՝ սրով ու հրով. այդպէս էր ամիրվարցի քեռվա Մահմէդի կարգադրութիւնը. չարժէր նրանց համար փամփուշտներ փչացնել։

Այս սարսափներից ազատուած բաւականաչափ հայեր դիմեցին հանքերի կառավարչին պաշտպանութիւն խնդրելով նրանից։ Կառավարիչը դրանց երկու մասի բաժանելով՝ մի մասին իր մօտ տեղ տուեց, իսկ միւսին տեղաւորեց իր օգնական Էնկլունդի մօտ։ Երկու օր պահելուց յետոյ, նոյեմբերի 25-ին, ներկայացաւ պրիստաւ Մուսէյիբ-բէկ Ալիևը և առաջարկեց հայերին իրեն հետ գնալ Զարդախլու։ Ասում են, գերմանացի մի ստոր արարած, անունը Վալտեր, ցոյց էր տուել հայերի տեղը, այն Վալտերը, որը զինաթափ էր արել հայերին, երբ նրանց մօտ նկատել էր ինքնապաշտպանութեան համար զէնք։ Հայերը հրաժարուեցին գնալ, չը վստահանալով Մուսէյիբի պաշտպանութեանը, որը չուզեց բարբարոսութիւնների առաջն առնել, բայց գերմանացիները հրաժարուեցին այլ ևս նրանց տեղ տալ և յանձնեցին հրէշ Մուսէյիբին, հակառակ նրանց ցանկութեան և դռները փակելով ներս մտան։

Որպէս սպանդանոց ուղարկւող ոչխարներ, երեք ֆուրգոնների մէջ նստեցրին մի քանի տասնեակ հայերին, որոնցից 18-ը տղամարդ, իսկ մնացեալը կին և երեխայ և 8 ստրաժնիկների ու-

ղեկցութեամբ ճանապարհ ձգեցին, բայց ֆուրգոնները դեռ ևս մի քանի հարիւր քայլ չանցած պրիստաւ Մուսէյիբի ներկայութեամբ յարձակուեց ամբոխը և մի նոր մարտիրոսութիւն կատարեց այդ թշուառների վրա։ Կոտորեցին անխտիր բոլոր տղամարդկանց՝ ենթարկելով նրանց սոսկալի տանջանքների։ Մտնելով կանանց և օրիորդների մէջ ընտրեցին ամենագեղեցիկներին իրենց մէջ բաժանելու համար։ Դրանք էին.

1) Թիֆլիսեցի տօկար Սարգսի 18 տար. աղջիկը։

2) Զարդախլուեցի դամբրչի Սիմոնի 16 տար. աղջիկը։

3) Զարդախլուեցի սայլապան Մէլիքի 17 տար. աղջիկը։

4) Ղազախեցի նալբանդ Սարգսի աղջիկը, 18 տար. Վարսենիկը, չարդախլուեցի դրագիր Ալէքսանի հարսնացուն։

5) Նիկոլայ Բաղդասարեանի կինը, 18 տար. Նինօն, որի ամուսինն սպանուեց, բայց չորս թուրք սպանելուց յետոյ։

Մեր իմացած այս հինգ զոհերից առաջին երկուսը բաժին ընկան պրիստաւ Մուսէյիբին, որը վերադարձրեց մէկին մի ամիս, իսկ միւսին երկու ամսի չափ պահելուց յետոյ։

Վերջինը բաժին ընկաւ քիօխվա Մահմադին, որն այլ ևս չը գտնուեց և անհետ կորաւ։

Մնացեալ երկուսը նոյնպէս անհետ կորան։

Այդ միևնոյն ժամանակ պաշարուած էր նաև Ղազախը։ Յարձակումները կրկնուում էին պարբերաբար ամեն օր։ Նոյեմբերի 23-ի յարձակումը տևեց ամբողջ օրը։ Գիշերուայ պատճառով յետ քաշուած խուժանը նորից յարձակուեց նոյեմբերի 24-ի առաւօտեան ծէգին։ Կռիւը ծանր էր. գիւղը պաշտպանելու այլ ևս հնար չը կար։ Զինուած տղամարդիկ պաշտպանելով դէպի դուխօբուրների Սլաւեանկա գիւղը ձգող ճանապարհը, հնարաւորութիւն տին ժողովրդին այդ կողմով փախչել գլուխ ազատել, բայց դուխօբուրները ոչ միայն ներս չառան յոգնած ու տանջուած փախստական ժողովրդին, այլ և հրաժարուեցին սայլեր տալ ուժասպառ կանանց և երեխաներին տեղափոխելու համար։ Սարսափը մոռացնել տալով և քաղցը, և ծարաւը և տանջող յոգնածութիւնը՝ քշեց այդ թշուառներին մինչև Զարդախլու։ Չը մոռանանք յիշել, որ մինչև այդ թուրքերը Սլաւեանկա գիւղում կողոպտել էին երկու հայի, այն է՝ Յովսէփեանի և Մնացականեանի խանութները։

Ղազախի ժողովուրդը քոչելուց յետոյ գիւղն ամբողջապէս կողոպտուեց և այրուեց։

Թէ կառավարութեան երկու ներկայացուցիչները—պրիստաւ Մուսէյիբ-բէկ Ալիեւը և Միսկիլինի հասարակութեան ստարշինա Մահմէդը ինչ դեր խաղացին այս դրամայի մէջ, կը բերենք այդ մասին Գետարէկի նոր նշանակած պրիստաւ Շեպիլովի խօսքերը, քաղելով այդ նրա բապորտից*), ուղղուած Գանձակի նահանգական դատախազին՝ դէպքերից անմիջապէս յետոյ։

«Նոյեմբերի 24-ին ես պրիստաւ Ալիեւի հետ գնացինք հանքերը դինամիտը պահպանելու համար։ Պրիստաւ ալիեւը նկատելով, որ Ղազախ գիւղից հայերը փախչում են դէպի Զարդախլու, թողնելով ինձ, մօտեցաւ թուրքերին և նրանց ուղարկելով Զարդախլուի ուղղութեամբ, հրամայեց նրանց կենդանի չը թողնել և ոչ մի հայի, որ և ճանապարհին սպանուեցին երկու հայեր»։

«Նոյեմբերի 25-ին ներս թափուելով 15 զինուած թուրքեր դուրս տարան ինձ մօտ պահուած 2 հայերի և նստեցրին ֆուրգոնների վրա միւս հայերի հետ Զարդախլու տանելու համար։ Ալիեւն առաջարկեց ինձ ուղեկցել նրանց, բայց ես չը գնացի, որովհետև լսել էի, որ ուզում են ինձ սպանել։ Ֆուրգոնները ութ պահապաններով դեռ 200 սաժէն չը հեռացած բացուեցին հրացանները նրանց վրա և սպանուեցին տղամարդիկ և մի կին։ Ազատուեցին 10 կանայք, իմ թարգմանը, Զինգերի ագենտ Բէրգեանը և մի երեխայ։ Սակայն մի փոքր անց ինձ մօտ թափուեցին թուրքերը և դուրս տանելով 3 հայերին սպանեցին կամրջի մօտ»։

«Թուրքերի Գետարէկից դուրս գնալուց յետոյ հողին յանձնեցի 18 հայի դիակ, իսկ 27-ին՝ նորից 7-ը, ընդամենը՝ 25 դիակ։ Ինձ հասած տեղեկութիւններից իմացայ, որ տներում այրուած են 50-ի չափ մարդ, կին, երեխայ։ Երկու օրիորդներ 23-ից մինչև այժմ մնում են պրիստաւ Ալիեւի մօտ և մի քանի կանայք ուղարկուած են Միսկիլինի հասարակութեան գիւղերը, ուր մինչ այժմ էլ մնում են նրանք»։

«Սարաժնիկները գանգատւում էին, որ թուրքերը խլում էին նրանց ձեռքերում եղած փամփուշտները։ Իսկ նրանցից մէկը,

---

*) Տես Елисаветпольск. Кровав. Дни. երես 150։

թուրք, անունն Աստան, յայտնեց որ պրիստաւ Ալիեւը հրամայեց վերցնել նրանից հրացանն այն պատճառով, որ նա չէր միանում յանցաւոր թուրքերին։»

«Պատիւ ունիմ յայտնելու, որ պրիստաւ Ալիեւը իր ստրաժնիկներով և Միսկիլինի ստարշինա Մահմէդը հոանդուն մասնակցութիւն ունէին այս խռովութիւնների մէջ։ Աւելացնելու եմ նաև այն, որ թուրքերն իմանալով, որ ես ընդունելու եմ պրիստաւի պաշտօնը, կողոպտեցին իմ գրասենեակը և արձակեցին բոլոր բանդարկեալներին և երբ ես այդ մասին յայտնեցի պրիստաւ Ալիեւին, նա ծիծաղելով պատասխանեց աւելի լաւ, գործ քիչ կը լինի։»

Ահա իրողութիւնը, վկայած մի այլ պրիստաւի բերանով. բայց չը նայած այդ բոլորին, մինչև այժմ էլ ինչպէս Ալիեւը, այնպէս էլ ստարշինա Մահմէդը մնում են իրենց պաշտօնների մէջ։

Բայց արդեօք այսքանով վերջացաւ այս շրջանի աղէտը. ոչ։ Ինչպէս տեսանք, Բաղայի, Գետաբէկի ու Ղազախի փախստական ժողովրդի մի խոշոր մասը ապաստան գտաւ Զարդախլու գիւղում։ Սակայն նրանց այդտեղ էլ հանգիստ չը տուին։ Բաղայի, Գետաբէկի և Ղազախի հետ ամեն բան վերջացնելուց յետոյ, նորից թուրք խուժանը դարձաւ դէպի Զարդախլու։ Նոյեմբերի 25-ից սկսած մինչև 30-ը պարբերաբար յետ մղելով և նորանոր թարմացած ուժերով նոր յարձակումներ գործելով, նա չը յոգնեց։ Բաւական էր մի քանի ժամւայ ընդհատում, որ յոգնած խուժանը թարմանար նոր հոսանքով։ Նոյեմբերի 30-ին տեղի ունեցաւ վճռական յարձակումը և այս անգամ խուժանը յետ փախաւ մեծ կորուստներով։ Հայերից սպանուեց այդ կռուում մի հոգի, բայց լաւ հոգի. դա չարդախլուեցի Շահէնն էր։

Գանձակի դաւառի պատկերը ամբողջացնելու համար չը մոռանանք յիշել նաև երկաթուղու երկու կայարաններում, այն է՝ Դալլարում և Զէգամում տեղի ունեցած դէպքերը։

Այդ երկու կայարաններում կային հայի խանութներ, իւրաքանչիւրում 8-10-ի չափ, ահա այդ խանութների վրա յարձակուեց խուժանը և կողոպտեց Գանձակի առաջին օրւայ կոտորածի հետ միաժամանակ. Դալլարում կողոպտուեց նաև օղիի մի գործարան։

Բացի այդ, խուժանի գազանութիւններին զոհ գնացին Դալ-

լար կայարանում մի հոգի, դա օղիի գործարանի վարպետ գանձակեցի Քէրովբն էր, իսկ Զէգամ կայարանում՝ 5 հոգի, դրանք էին՝ Յակովբ Փարսադանեանը, Պօղոս Նալբանդեանը, գրագիր Մոսէսը, գանձակեցի դերձիկ Սարգիսը և ղազախեցի գրագիր Բէյբութը։

Անցան շաբաթներ, շրջանը մի փոքր խաղաղուեց, փախստականները մի կերպ տեղաւորուեցին այս և այն գիւղերում, բայց Բադայի և Գետաբէկի աղէտը չը մոռացուեց։ Տարագիր ու տնաւեր եղած մարդիկ տեսնելով կառավարութեան պապանձումը, չարագործների անպատիժ մնալը, աւելի ևս վրդովւում էին և բուռն զայրոյթով լցւում։ Մի՞թէ այդքան զոհերը և այդ աստիճան վիրաւորանքները տանել կարելի էր։ Մի՞թէ այդ բոլորը մոռացութեան պիտի տրուէր. բայց կառավարութիւնը լուռ էր, համր . . . Ուրեմն մնում էր մի միջոց, այն է՝ սեփական ուժերին դիմելու միջոցը յանցագործներին պատժելու համար։ Իշխանաւորներն էլ հէնց այդ էին ուզում, չէ՞ որ թշնամութիւնը գնալով խոր արմատներ էր ձգում երկու ժողովուրդների մէջ . . .

Սօգիւթլու գիւղը հանդիսանում էր ղեկավար Գետարէկի ամբողջ բարբարոսութիւնների և անա այդ գիւղի վրա էլ թափուեց ծովացած վրէժը։

1906 թ. յունվարի 1-ի վաղորդեան հետ Սօգիւթլուն անսպասելի կերպով պաշարուեց չորս կողմից։ Անընդհատ տեղացող կրակը մի սոսկալի շփոթ առաջ բերից ոճրագործ գիւղի մէջ։ Սկսուեց մի յուսահատ դիմադրութիւն գիւղի տներից. գլուխը կորցրածի պէս պաշարուածները կրակում էին նոյն իսկ միմեանց վրա։ Աչսպիսի դիմադրութիւնը տևեց շատ կարճ. թուրքերը դիմեցին փախուստի, սակայն մի քանի տասնեակ դիակներ թողնելուց յետոյ։ Գիւղը կողոպտուեց. հայերը քշեցին Սօգիւթլուից մի քանի հարիւր տաւար, 2000-ի չափ ոչխար և բաւական իրեր, որոնց մէջ կային Գետարէկի և Ղազախի կողոպուտից շատ իրեր։

Եւ մինչդեռ Սօգիւթլուն շարունակւում էր աւերւել զայրոյթով լցւած հայերի ձեռքով, վրա հասաւ դրագունների մի վաշտ և կրակ բացեց հայերի վրա, որոնք իրենց հերթում պատասխանեցին կրակով, նրանց ընդունելով թուրքերի տեղ։

Վերջապէս հայերը յետ քաշուեցին, բայց մի քանի զոհեր տալուց յետոյ, դրանք էին՝ ղազախեցի Բէգլար Աւագեանը, ախալքալակ-ցի Պետրոսը և Սերգէ Մարտիրոսեանը, բարսումեցի Պապինը և Նիկօլը, բացի այս մի քանի հոգի էլ վիրաւորուեցին։

Ահա Գանձակի գաւառի մարտիրոսագրութեան թոյլ պատ-կերը։



Ցուցակ Գանձակի գաւառի այն գիւղերի, որոնց ժողովուրդը փախել կամ խոշոր վնասներ է կրել ընդհարումների ժամանակ։

ՀԱՅ ԳԻՒՂԵՐ։

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն	Փախած	Կողոպտուած	Աւերուած	Կոտորած
1	Բաղաքէնդ . .	400	փախ.	կող.	աւեր.	կոտ.
2	Ղազախ . .	60	»	»	»	
3	Անենֆելդ .	30	»	»	—	
4	Սարով .	30	»	»	աւեր.	—
5	Ղարադաղլու . .	80	»	»	»	—
6	Գետաբէկ .	30	»	»	»	կոտ.
7	Խոյլար . .	40	»	»	»	

ԹՈՒՐՔ ԳԻՒՂԵՐ

1	Մոլլավալադ . .	—	փախ.	կող.		
2	Զայլիլար .	—	»	»		
3	Դարդարա .		»	—	աւեր.	
4	Սարբսու .	—	»	—	»	—
5	Դոզիլար .	—	»		»	
6	Աբաս-Դարա . .	—	»	—	»	
7	Փանահլար .	—	»		»	—
8	Աղ-Եօխուշ .	—	»	կող.	»	կոտ.
9	Ախրջա . . .	—	»	»	»	—
10	Թօփալ-Հասանլու . .	—	»	»	»	—
11	Դարաբէկլու . .	—	»	—	»	
12	Կարա-Եաթաղ .	—	»	—	»	
13	Մալաքլու .	—	»	կող.	»	—
14	Սօգիւթլու .	—		»	»	կոտ.



ՂԱԶԱԽԻ ԳԱՒԱՌ

Ղազախի գաւառն ընկած է նահանգի հիւսիսարևմտեան ծայրում, երեք կողմերից կազմելով Երևանի և Թիֆլիսի նահանգների սահմանը, իսկ հարաւարևելեան կողմից միանալով Գանձակի գաւառին։

Գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւը հասնում է 112 հազարի, որից 64 հազարը թուրքեր են, 44 հազարը՝ հայեր, իսկ 4 հազարը՝ զանազան ազգեր։

Ղազախի գաւառը իր աշխարհագրական դիրքով բաւական գեղեցիկ տեսք ունի. բարձր լեռները և անտառապատ ծմակներն իրենց բազմաթիւ առուակներով, որոնցից գոյանում են Աղստաֆա, Թարսա-Չայ և միւս գետերը, կազմում են գաւառի հարաւային և հարաւարևմտեան մասի զարդը։ Իսկ հիւսիսային և հիւսիսարևելեան մասը հարթ տափարակ է, ընկած Քուր գետի երկու ափերի վրա։ Հայերն աննշան բացառութեամբ ապրում են լեռնոտ մասերում թուրքերի հետ խառն, իսկ տափարակները բռնուած են թուրքերով։

Ղազախի գաւառը բաղկացած է երկու գաւառամասերից, այն է՝ Բուն-Ղազախից՝ ընկած արևմտեան մասում և Շամշադինից՝ ընկած հարաւային մասում։

Ղազախի գաւառի 131 գիւղերից 48-ը հայաբնակ են, որոնցից 30-ը գտնուում են Բուն-Ղազախում, իսկ 18-ը՝ Շամշադինում։

Դրանք են.

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն՝ պաշտ. թիւը.	մատա-դատուն՝ մերը.
	ԲՈՒՆ-ՂԱԶԱԽՈՒՄ		
1	Պօղոս-Քիլիսա	130	—
2	Դիլիջան . . .	160	
3	Ջարխէջ (Շարխաչ)	100	—
4	Ղօշավանք . . .	25	—

5	Աղդան-Վերին .	111	-
6	Քարվանսարա	153	—
7	Թազա-Քէնդ .	80	120
8	Քրդէվան . .	74	—
9	Ղարանլուղ-Դարա .	23	—
10	Խաշտառակ .	95	—
11	Աղդան-Ներքին .	47	
12	Բէվազլու .	30	
13	Աչասու .	392	—
14	Ուզուն-Թալա . .	130	—
15	Սև-քար (Ղարադաշ) .	283	—
16	Լալի-Գիւղ (Լալի-Քէնդ) .	43	—
17	Մէլիքի-Գիւղ (Մէլիք-Քէնդ) .	49	-
18	Սրի-Գիւղ (Ղլիջ-Քէնդ) .	86	—
19	Կունէն . . .	44	—
20	Պիպիս (Ջօղազ) . . .	43	
21	Ճօճավանք (Ճաճվական) .	13	—
22	Ղօշղոթան	88	—
23	Բաղանիս	46	—
24	Աքսիբար (Ոսկէպար)	36	—
25	Կօտը-Քէնդ . .	193	—
26	Կուրումսու . .	72	—
27	Բարանա . . .	95	—
28	Դուէղ (Բալա-Քէնդ) .	25	—
29	Կողբ . . .	158	—
30	Ղալաչա .	157	—
	ՇԱՄՇԱԴԻՆՈՒՄ		
1	Կրզէն . .	30	41
2	Հախում . .	80	100
3	Թաթլի-Քէնդ .	105	—
4	Նաուր . .	80	
5	Զինչին	30	
6	Թուզ-Ղալա .	97	250
7	Թուզ-Քէնդ . .	100	210
8	Մոսէս-Քէնդ . .	120	180

9	Կարմիր-Աղբիւր-Վերին (Ղըզլ-Բուլաղ)	98	120
10	Թազա-Քէնդ (Նորաշէն)	40	—
11	Կարմիր-Աղբիւր-Ներքին (Ղըզլ-Բուլաղ)	130	—
12	Ղուլալի	120	250
13	Ղարաղայա (Ղրղի) .	90	260
14	Զինարլու. .	55	67
15	Զորաթան	28	62
16	Բաշքէնդ . . .	213	350
17	Ճամբարաք-Վերին .	86	160
18	Ճամբարաք-Ներքին	91	170

Բացի յիշեալ 48 գիւղերը, 200-ից աւելի ընտանիքներ և առևտրականներ ապրում են նաև գաւառի կենտրոնավայր Ղազախ քաղաքում, ինչպէս և մի քանիսը՝ երկաթուղու Թօուզ, Թաթլի և Աղստաֆա կայարաններում։

Ղազախի գաւառում բռնկած կողոպուտներն ու ընդհարումները կարելի է բաժանել հինգ շրջանների, դրանք են.

1) Ղազախ քաղաքը և Թօուզ, Թաթլի, Աղստաֆա կայարանները։

2) Կրզէն գիւղը։

3) Հասան-Սու, Թօուզ և Խնձորկոտ գետերի հովիտները։

4) Բաշքէնդը և երկու Ճամբարաքները։

5) Աղստաֆա և Կունէն գետերի հովիտները։



ԿՈՂՈՊՈՒՏՆ ՈՒ ՀՐԴԵՀԸ ՂԱԶԱԽ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՒ ԹՕՈՒԶ, ԹԱԹԼԻ, ԱՂՍՏԱՖԱ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՄ

18 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1905 Թ.

Գանձակում և Գանձակի գաւառում տեղի ունեցած կոտորածներն ու աւերը չէին կարող արձագանք չը գտնել սահմանակից Ղազախի գաւառում, երբ յանցագործութիւնները շարունակւում էին անպատիժ կերպով։

Սակայն Ղազախի գաւառում դէպքերն այլ կերպ դասաւորուեցին։

Բացի այն, որ այդ գաւառում, ինչպէս վերը տեսանք, հայ տարրը բաւական մեծ թիւ է կազմում, նա միևնոյն ժամանակ քաջ և իր իրաւունքները պաշտպանող ժողովուրդ է։ Դաշտային մասում միայն նա թւով շատ փոքր է և թոյլ, ուր և առաջին անգամ թուրք խուժանն ուղղեց իր արշաւանքը։

Այդպիսի մի վայր ներկայանում էր գաւառի կենտրոնատեղին—Ղազախ քաղաքը։

Ղազախը նոր քաղաք է, ընդամենը 25—30 տարուայ պատմութիւն ունեցող, շինուած Աղստաֆա գետի վրա երկաթուղու Աղստաֆա կայարանից 9 վերստ հեռաւորութեամբ դէպի հարաւարևմուտք։ Այդ քաղաքն, առ այժմ, աւելի շուտ կարելի է համարել կառավարչական հիմնարկութիւնների կենտրոնատեղի, քան բնակութեան վայր և նա շատ քիչ ընիկ ժողովուրդ ունի, եղածներն էլ մեծ մասամբ առևտրականներ և ժամանակաւոր ապրողներ են։

Ղազախ քաղաքում կային աւելի քան 200 տուն հայեր, որոնք պարապում էին գլխաւորապէս առևտրով և զանազան արհեստներով։ Ահա դրանց գոյքն ու կայքը ենթարկուեցին կողոպու-

տի ադմինիստրացիայի տակտիկայից խրախուսած թուրք տգէտ մասսայի ձեռքով. բայց նախ քան քաղաքի կողոպուտը, կողոպուտեցին երկաթուղու գծի վրա գտնուող կայարանները։

Գանձակի կոտորածների ժամանակ երկաթուղու գիծն իր ամբողջ երկարութեամբ—սկսած Թիֆլիսից մինչև Բագու, կատարեալապէս անցաւ թուրք խուժանի ձեռքը. գծի վրա տիրեց կատարեալ անիշխանութիւն։ Թուրքերը Ելլախից սկսած կողոպտեցին այն բոլոր կայարանները, ուր հայերը խանութներ ունէին դրած։ Շատ տեղերում հազիւ կարողացան խանութատէրերը փախչել և գլուխ ազատել։ Գանձակի գաւառում, ինչպէս տեսանք, կողոպտեցին Դալլարը և Զէգամը. ահա այդ նոյն վիճակին ենթարկուեցին նաև Ղազախի գաւառի կայարաններն, այն է՝ Թօուզը, Թաթլին, Աղստաֆան։

Այս բոլորը տեղի ունէր նոյեմբերի 18-ից մինչև 20—22-ը։

Այս դէպքերի, ինչպէս և Գանձակում տեղի ունեցող ընդհարումների հետ միաժամանակ դրութիւնը վատացաւ նաև Ղազախ քաղաքում և չը նայած այն բանին, որ նա առերևոյթ խաղաղ էր, սակայն մի փոքրիկ առիթը բաւական էր թուրք մասսան տակրն ու վրա անելու համար, և առիթը ներկայացաւ։

Նոյեմբերի 27-ին մի թուրք գնդակ արձակեց Նասիր Էիւբովի խանութի մէջ և վիրաւորեց Մամադ Էֆէնդի Եաղուբովին և մի վրացի ծառայի։ Այդ դէպքի վրա քաղաքում սկսուեց հրացանաձգութիւն և իրարանցում։ Գաւառապետ Արնօլդը, որն իր բարեխիղճ պաշտօնավարութեամբ երկար ժամանակ կարողանում էր գաւառը ազատ պահել ընդհարումներից և կոտորածից, իր մի բուռն ստրաժնիկներով կարողացաւ այդ օրը կողոպուտի առաջն առնել, թէև ստրաժնիկներից շատերը չէին հնազանդուում գաւառապետի կարգադրութիւններին։

Հայերը, որոնց մի մասն առաջօրէն տեղափոխուել էր մօտակայ հայ գիւղերը պատսպարուեցին զօրանոցում, գանձարանում և հեռագրատանը։

Այդ դէպքի յաջորդ օրը, նոյեմբերի 28-ին, փոխարքայի դիւանի կարգադրութեամբ Արնօլդը, որի դէմ թուրքերը բողոքներ էին տուել, անսպասելի կերպով կանչուեց Թիֆլիս։ Այդպէս էլ պէտք է լինէր . . . Արնօլդը անընդունակ ադմինիստրատոր էր. նա ժամանակի պահանջը չը հասկացաւ, գնաց։ Եւ հէնց նրա

գնացած օրն էլ քաղաքի կողոպուտն սկսեց. Թուրք խուժանը ազատութիւն էր գտել . . . Թափեց Ղրաղ-Քեսամանից, Քեսալարից և շրջակայ միւս գիւղերից Թուրք խուժանը, որպէս մի վանդէյ և սկսեց մի սոսկալի կողոպուտ ու աւեր միաժամանակ թէ շուկայում և թէ տներում. Թափուել եկել էին բոլոր սեռերը և բոլոր հասակները։ Կողոպուտը կրում էին մէջքի վրա, ձիերով և սայլերով. կողոպուտին մասնակցում էին փոքրիկ մանուկները, նոյն իսկ կանայք։ Հայերի կողմից դիմադրութեան որևէ փորձ տեղի չունեցաւ, հրապարակը մնաց խուժանի ձեռքին։ Կողոպուտից յետոյ սկսեց հրդեհ, որին զոհ գնացին Խաչատրեանի, Մէլիք-Իսրայէլեանների, Գալումեանի, Ջաղէթեանի և մի շարք հայերի տներ։

Ահա այդ բոլորը կողոպտելուց և հրդեհելուց յետոյ միայն տեղական վաշտը Գանձակից եկած մի օֆիցերի հրամանատարութեամբ դիմեց զէնքի, որի ժամանակ ընկան մի քանի Թուրքեր։

Հայերը զօրքերի պաշտպանութեան տակ տեղափոխուեցին Թիֆլիս, Գանձակ և մօտակայ հայ գիւղերը։

Ղազախի և երեք կայարանների հայերին հասած նիւթական վնասը մեծ էր, շատ մեծ, թէև մարդկային զոհերը քիչ։ Քաղաքում սպանուեց մէկը Թօուզքէնդցի Աղէքսանդր Խաչատրեանը, 35 տար., մի առևտրական հայ ոչխարի պէս մորթուեց Փոյլի կայարանի պլատֆորմայի վրա պահակ զօրքի, ճանապարհորդների և հարազատ մօր ներկայութեամբ։ Նոյնանման մի մարտիրոսութիւն տեղի ունեցաւ նաև Աղստաֆա կայարանում, մի 14 տարեկան պատանու վերաբերմամբ դեկտեմբերի 6-ին։

Չը մոռանանք յիշել և այն կողոպուտը, որին ենթարկուեցին Ալեքսէևկա գիւղում և նրա մօտակայքում ձեռնարկութիւն ունեցող մի երկու հայեր։

ԿՐԶԷՆ ԳԻՒՂԻ ԱՒԵՐՈՒՄԸ

20–28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1905 թ.

Աւելի վատթար օրեր վիճակուած էին Կրզէն հայ գիւղին։

Կրզէնը Շամշադինի ամենափոքր գիւղերից մէկն էր, ընդամենը 41 ծխից բաղկացած, 220 շնչով, ընկած Քուրի աջ ափին, մեն մենակ, հայ գիւղերից հեռու, շրջապատուած թուրք գիւղերով, որոնց մէջ աւազակային հակումներով աչքի էր ընկնում Բօզանղալուն, որը և պատճառ դարձաւ թշուառ Կրզէնի աւերման։

Կրզէնը թէև ունէր վատ կլիմայ, բայց նրա ժողովուրդը օգտուում էր ջրարբի և արգաւանդ հողերով, մշակում էր հացահատիկներ և խաղողի այգիներ և ապրում կուշտ փորով։

Սակայն այն պայմանները, որոնց մէջ գտնուում էր նա, շատ էին ստիպել նրան խեղճանալ, լեզուն կարճ անել, տանել ամեն մի նախատինք և վիրաւորանք. բայց այդ էլ չը փրկեց նրան, ընդհակառակը զէնքի կուլտը նուիրագործող թուրք խուժանը այնքան աւելի երես էր առնում և անզուսպ դառնում, որքան քիչ դիմադրութեան էր հանդիպում։ Այսպիսի պայմաններում բնական պիտի համարել այն, ինչ որ տեղի ունեցաւ Կրզէնի վերաբերմամբ.

Նոյեմբերի 20-ին Բօզանղալուի թուրքերը քշեցին Կրզէնի 300 գլուխ տաւարը և սպանեցին նախրչուն։

Նոյեմբերի 21-ին նոյն թուրքերը մտան գիւղ և տարան պատահած ձիերը, եզներն ու կովերը։ Դիմադրելու հնարաւորութիւնից միանգամայն զուրկ Կրզէնի ժողովուրդը Մանսրլու գիւղի թուրքերից պատսպարան խնդրելով քոչեց նրանց մօտ, թողնելով գիւղը թուրք խուժանին։ Բայց այդտեղ էլ նրան հանգիստ չը տուին։

Նոյեմբերի 24-ին ամբոխը յարձակուեց Մանսրլու գիւղի վրա, զօռով դուրս քաշեց տներում պահուած հայերին, կողոպտեց նրանց բոլոր ունեցած չունեցածը և ապա մաս մաս անելով, որպէս

գերիների, քշեց տարաւ աղիողորմ աղաղակ բարձրացրած այդ բազմութեանը։ 4 օր անյայտութեան մէջ մնալուց յետոյ, նոյեմբերի 28-ին, զօրք հասաւ Բօզանղալու և ազատեց գերիների մի մասին, այն է 23 ընտանիքի 120 հոգից բաղկացած, որոնք այդ 4 օրւայ գերութեան մէջ ենթարկւել էին անասելի բարոյական և ֆիզիքական տանջանքների։ Մի քանիսը կանանցից սարսափի տակ ներկել էին հինայով իրենց ձեռքերը. տղամարդիկ ածիլել էին գլուխները, յետևից միայն «քեաքիւլներ» թողնելով, բացի այդ, տեղի էին ունեցել բռնաբարութիւններ։

Այս 23 ընտանիքի գերութեան տեղում, Բօզանղալուում, կազմւեց արձանագրութիւն, որի մէջ, որպէս Կրզէնի աւերման յանցագործներ, ցուցակագրւեցին մի շարք անուններ, դրանք էին, բօզանղալուեցի Սարի-Ասադ Քեալբալայի-Օվչի օղլին, չովդարլուեցի Մարդան Մարդան օղլին և Արուլար Թանդրի-Կուլի օղլին, ալիմարդանլուեցի Շամիլ Մամէդ-Ասադ օղլին և Վալի Բահարլի օղլին։

Կրզէնի մնացեալ 17 տուն գերիների ուր լինելը երկար ժամանակ մնաց անյայտ և մեծ ջանքեր եղան, մինչև որ յունվարի (1906 թ.) մէջ նրանց տեղը կարելի եղաւ իմանալ. դրանցից 24 հոգի ազատւեցին եկան միմիայն փետրվարի 6-ին։

Զրկանքների, բռնութիւների և անարգանքների այս սոսկալի փաստերի շարքում պակաս էր մնացել միմիայն հեգնանքը, բայց շուտով կրզէնցուն առիթ հանդիսացաւ այդ էլ ճաշակելու։

Փետրվարի վերջերին, երբ կրզէնցիները Թիֆլիսում արդէն պատսպարւել էին, Բօզանղալուի թուրք առաջաւորները, նոյն կրզէնցիներին կողոպտող աւազակները, 750 ռուբլի դրամ հանգանակելով, որպէս դրացիական նպաստ ուղարկեցին Թիֆլիս կրզէնցիներին յանձնելու համար։ 30,000-ի կողոպուտ և կորուստ պատճառող չարագործները, ինչպէս այդ կը տեսնենք Ղազախի գաւառի վնասները որոշող յանձնաժողովի ցուցակից, 750 ռուբլու նուիրաբերութիւն էին անում։

Սակայն կրզէնցիները բացէ ի բաց մերժեցին ընդունել այդ նուիրաբերութիւնը, յայտարարելով հետևեալը.

,,Եթէ Ռուսաստանում դեռ գոյութիւն ունի օրէնք, թող դատեն չարագործները և այդ կը լինի մեր ամենամեծ վարձատրութիւնը''։

Կրզէնցիներն այժմ ապրում են Կարմիր-Աղբիւր գիւղում և այդ տեղից մի կերպ մշակում են իրենց հողերը, սակայն այդ մշակումը կատարւում է արեան գնով։

Արեան գնով ենք ասում, որովհետև այդ բոլոր զրկանքներից յետոյ նրանք դարձեալ ազատ չէին Թուրքերի գազանութիւններից։

Ներկայ գարնանը, ապրիլի 25-ին (1906 Թ.), ցանքերը ջրելու ժամանակ, միանգամից սպանուեցին 4 հոգի, դրանք էին՝ Սուսան Մայիլեանը, 50 տար., Աստան Ղազարեանը, 60 տար., Բայվէրդի Էրմիեանը, 55 տ. և Գրիգոր Ոսկանեանը, 25 տար.։

Եւ այս, բիւրօկրատիայի ոճով, համարւում էր խաղաղւած դրութիւն . . .



ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՆ-ՍՈՒ, ԹՕՈՒԶ ԵՒ ԽՆՁՈՐԿՈՏ ԳԵՏԵՐԻ ՀՈՎԻՏՆԵՐՈՒՄ

1905 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻՑ—1906 Թ. ՅՈՒՆՎԱՐ։

Շամշադինի գաւառամասի 18 հայ գիւղերից 14-ն ընկած են Հասան-Սու, Թօուզ և Խնձորկոտ գետերի և նրանց ճիւղաւորութիւնների հովիտներում, միմեանց բաւական մօտ մօտ այս կարգով։

Հախումը և Թաթլի-Քէնդն ընկած են Հասան-Սու գետի վրա։

Նաւուրը, Զինչինը, Թօուզ-Կալան, Թօուզ-Քէնդը, Մոսէս-Քէնդը, Վերին-Կարմիր-Աղբիւրը, Թազա-Քէնդը և Ներքին-Կարմիր-Աղբիւրն ընկած են Թօուզ գետի և նրա ճիւղերի վրա։

Իսկ Ղուլալին, Ղարաղայան, Զինարլին և Զորաթանը՝ Խնձորկոտ գետի և նրա ճիւղերի վրա։

Ահա այս շրջանում բոնկուեցին ընդհարումները Ղազախ քաղաքի և Կրզէն գիւղի դէպքերից մի փոքր ժամանակ անց։

Սակայն Ղազախի գաւառում ընդհարումները բոլորովին այլ բնաւորութիւն ստացան, և այդ շնորհիւ այն հանգամանքի, որ հայերը տեսնելով կառավարութեան չեզոք վերաբերմունքը դէպի ընդհարումները, որով աւելի ևս խրախուսանք էր գտնում կողոպուտների և աւերումների հակած թուրք մասսան, դիմեցին իրենց սեփական միջոցներին, իւրաքանչիւր յարձակման պատասխանելով նոյն ձևի յարձակումներով, իւրաքանչիւր աւերման պատասխանելով նոյն ձևի աւերումներով։ Ընդհարումներն այսպիսի ընթացք ստացան նաև գաւառի միւս վայրերում։

Բայց չը պէտք է մոռանալ և այն հանգամանքը, որ ինչպէս բոլոր շրջաններում, այնպէս էլ այստեղ, նախայարձակ լինում էին թուրքերը։

Շամշադինում, ինչպէս և ամեն տեղ, ընդհարումներն սկսե-

ցին մասնակի դէպքերից, որոնք կատարւում էին թէ թուրքերի և թէ հայերի կողմից։

Այսպէս, նոյեմբերի 25-29-ին Թաթլի գիւղի թուրքերը քշեցին հայ Թաթլի գիւղի 50-60 տաւարը, որի փոխարէն մի օր յետոյ հայերն էլ քշեցին թուրքերի նախիրը 70 գլխից բաղկացած։

Այս միջոցին Շամշադին հասաւ Բաղայի կոտորածից փախած ժողովրդի մի մասը, որն իր մերկութեամբ, տանջանքների ու սարսափի իր սոսկում պատճառող արտաքինով յուզեց տեղացի հայ ժողովրդին։ Այս դէպքի պատճառով այն փոքրիկ թուրք խմբակները, որոնք ապրում էին հայ գիւղերի ձմերանոցներում, քոչեցին իրենց նախկին գիւղերը։

Դեկտեմբերի կէսերին Հաջալու գիւղի թուրքերը քշեցին Ներքին-Կարմիր-Աղբիւրի 800 գլխից բաղկացած երկու սուրու ոչխարը։

Այս դէպքից մի քանի օր անց, երկու երիտասարդների, մէկը Մոսէս-Ֆէնդ գիւղացի, Ոսկան անունով, միւսը Ղարադայա գիւղացի, Մեհրաբ անունով—որոնք շրջանի պրիստաւին ուղեկցելով մինչև Ալիբէկլու թուրք գիւղը վերադառնում էին տուն, ճանապարհին թուրքերն սպանեցին և դիակները անհետացրին։

Այս սպանութեանը որպէս պատասխան երկու օր անց Վերին-Կարմիր-Աղբիւր գիւղի սահմաններում հայերն անհետացրին ձմերանոցներից վերադարձող մի քանի թուրքերի։

Դրանից յետոյ Մրդուզ լեռան փէշերում սպանուեց թօուզդալացի մի ծերունի հայ չոբան։ Մի այլ հայ չոբան անհետացաւ Զինարլու գիւղի հանդում։

Ապա թուրքերը յարձակուեցին և Ղուլալի գիւղի գոմերից տարան տաւարներ, մեղրի փեթակներ և այլ իրեր։

Ահա այս բոլորից յետոյ տեղի ունեցան մասսայական ընդհարումները։

Դեկտեմբերի 18-ին մասսայական յարձակման ենթարկուեցին Թօուզ գետի շրջանում Ներքին-Կարմիր-Աղբիւր և Մոսէս-Ֆէնդ գիւղերը։ Դեկտեմբերի 18-ը մի մառախլապատ թխպոտ օր էր, որն ընտրել էին թուրքերն իրենց յարձակումը աննկատելի դարձնելու համար։

Մոսէս-Ֆէնդն ընկած է մի ձորի մէջ, շրջապատուած բլուրներով,

որից դէպի հիւսիս մի սարի հետ ընկած է Ալիրէկլու Թուրք գիւղ. ահա հէնց այդ գիւղն էլ եկել էր Մոսէս-Քէնդի վրա. իսկ Ներքին-Կարմիր-Աղբիւրի վրա եկել էին Օքիզլու և Հաջալու գիւղերի Թուրքերը։ Բացի այս, մի թեթև յարձակում էլ կատարուեց Զորաթանի շուրջը, Խնձորկոտ գետի վրա, հայերին մի քանի կէտերում զրաղեցնելու և նրանց ուժերը ջլատելու նպատակով։

Յարձակումների ծրագիրը խելացի էր և մտմտնտի ընտրութիւնը յայտող, այնպէս որ Թուրքերն աննկատելի կերպով կարողացել էին հասնել մինչև գիւղերի բուն սահմանին։ Չը նայած այդ բոլորին, նրանք հայերին լուրջ վնասներ հասցնել չը կարողացան։ Երկու գիւղերում միաժամանակ սկսուած կռիւը տևեց մի քանի ժամ. հայերը մօտակայ գիւղերից օգնութիւն ստանալով, Թուրքերին ստիպեցին նահանջ տալ։ Ալիրէկլուն և Հաջալուն։ Այդ գիւղերի շուրջը երկար կռիւ տեղի ունեցաւ, որտեղերից Թուրքերը ստիպուած եղան փախչել բաւական զոհեր տալով, մանաւանդ Ալիրէկլուն։ Հայերը ներս խուժելով այդ երկու գիւղերը, նախ կողոպտեցին և ապա հրդեհեցին։

Յետ մղուեց նաև Զորաթանի վրա տեղի ունեցած յարձակումը։ Այստեղ էլ ինչպէս և Ներքին-Կարմիր-Աղբիւրում և Մոսէս-Քէնդում հայերն օգնութիւն ստանալով հարևան գիւղերից, Թուրքերին հալածեցին մինչև Աղդամ գիւղ և նրա մի մասը կողոպտեցին ու հրդեհեցին։

Ալիրէկլուն և Հաջալուն աւերուելուց յետոյ երկու օր լռութիւն տիրեց, բայց շուտով Թուրքերը յայտնուեցին մեծ պատրաստութիւններով և շրջանը նորից աղմկեց։

Դեկտեմբերի 21-ին Թուրքերի մի մեծ բազմութիւն հաւաքուեց Օքիզլու, Օջաղլու, Ղրաղ-Քեասաման և Դաղ-Քեասաման գիւղերում։ Այդտեղ թափուեցին եկան Թուրքեր նոյն իսկ Բօրչալուի և Գանձակի կողմերից։ Եւ հազարաւոր խուժանը երկրորդ անգամ եկաւ պաշարեց յիշեալ երկու հայ գիւղերը ոչխարորդապէս Ներքին-Կարմիր-Աղբիւրը։ Խուժանի հետ, ասում են, կային նաև ստրաժնիկներ և կօզակներ առաջնորդութեամբ մի ինչ որ հայատեաց օֆիցերի։

Այդ օրը նոյնպէս մառախլապատ էր, այնպէս որ, երբ Թուխպը մի վայրկեան քաշուեց, Կարմիր-Աղբիւրի հայերը նկատեցին

գիւղից ընդամենը կէս վերստի վրա գտնուող Շիշթափա բլուրի փէշերը, բռնուած ահագին խուժանով կօզակների հետ միասին։

Հայերը մի վայրկեան սարսափի մէջ ընկան։ Մինչդեռ կօզակները սպիտակ դրօշակ պարզած բանակցելու նշաններ էին տալիս, յանկարծ գիւղի հիւսիսային և արևելեան կողմերից յայտընուեցին ձիաւոր խմբեր, իսկ հեռու Ներքին-Հաջալուի այն սահմանից, ուր գտնուում է Նորաշէնի ձմերանոցը, բարձրացաւ հրդեհի թանձր ծուխը։ Սարսափն ընդհանուր եղաւ, ձիաւոր խմբերը կրակ բացին և սկսեցին արագութեամբ առաջ գալ. ահա այս ծանրը վայրկեանին Մոսէս-Քէնդից օգնութեան հասան բաւականաչափ հայեր և յարձակուեցին մօտեցող և կրակող ձիաւոր խմբերի վրա։ Այս բանից սիրտ առած կրակեցին նաև գիւղի դիրքերում եղողները։ Տեղի ունեցաւ մի յամառ կռիւ փոփոխակի յաջողութիւններով, մինչև որ հայերը՝ շնորհիւ նոր հասած օգնութեան, կարողացան յարձակումը յետ մղել, որի ժամանակ ընկան շատ թուրքեր և երկու կօզակներ։ Զոհեր ունեցան նաև հայերը. կօզակների գնդակներից ընկան Իւան-բէկ Թումանեանը, 40 տար., 25 տարեկան մի ճամբարաքցի երիտասարդ Սեւան անունով և 30 տար. մի այլ երիտասարդ Դիլիջանից։ Բացի այս, մի քանի հոգի էլ վիրաւորուեցին։ Սպանուած երկու կօզակների պատճառով գիւղը ենթարկուեց 5,000 ր. տուգանքի։

Մինչդեռ Ներքին-Կարմիր-Աղբիւրի շուրջը տեղի էին ունենում այս խոշոր ընդհարումները, մի այլ խուժան աւերում և հրդեհում էր Զինարլու գիւղի տները, դէզերը և լիքը դարմանոցները. ժողովուրդն այդտեղից առաջօրէն տեղափոխուել էր Ղուլալի։ Հրդեհուեցին և աւերուեցին այդ նոյն օրը նաև Զինարլուի Ղօզլու անուն կրող ձմերանոցը և Զորաթանի ձմերանոցն իր խոտերով։

Դեկտեմբերի 23-ին և 24-ին տեղի ունեցան նոր ընդհարումներ, բայց թուրքերի կողմից արդէն թոյլ դիմադրութիւններով։ Հայերը յարձակուեցին Ալա-Թալա թուրք գիւղի վրա. աննշան դիմադրութիւնից յետոյ թուրքերը փախան բաւական զոհեր տալով. գիւղը ենթարկուեց կողոպուտի և աւերի։ Այդ միջոցին աւերուեցին նաև Հաղամ-Աղալու, Քեօհնա-Ղըշլաղ և Եարադուլլի թուրք գիւղերը, որտեղերից ժողովուրդը դեռ ևս երկու-երեք օր առաջ տեղափոխուել էր հարևան թուրք գիւղերը։

Մի մեծ յարձակում տեղի ունեցաւ յունվարի 2-ին Թաթլու գիւղի շուրջը, որն ընկած Հասան-Սու գետի երկու ափերի վրա և Թուրքերի սահմանի բերանը, հիւսիսային կողմից բոլորովին անպաշտպան է։ Թուրքերի մի ահագին խուժան պաշարեց գիւղը երեք կողմերից, միաժամանակ հրդեհելով երկու վեղարտ հեռաւորութեան վրա ընկած Թաթլուի ձմեռանոցն իր խոտի դէզերով։ Եւ չը նայած այն բանին, որ Թաթլուն նախատեսելով մի այդպիսի յարձակում համախմբած ունէր բաւական ուժեր, այնուամենայնիւ, Թուրքերին յաջողուեց մօտենալ գիւղին, գրաւել այգիները և նոյն իսկ մի քանի տներ գիւղի ծայրում։ Ահա այդ ժամանակ Թօուզ-Ղալայից հասաւ մի խումբ և մի յամառ կռուից յետոյ կարելի եղաւ Թուրքերին քշել մեծ կորուստներով։

Նման յարձակումներ կրկնուեցին նաև յաջորդ երեք օրերը, բայց ամեն անգամ էլ անյաջող հետևանքներով։

Այս կռուում հայերից սպանուեցին՝ բոզիգիւղացի Համբարձում անունով մի երիտասարդ, դիլիջանցի Պետրոս Սաղաթելեանը և 3 հոգի էլ վիրաւորուեցին։

Այդ նոյն օրը հայերն այրեցին Հագամ-Աղալուի ձմերանոցը։

Թաթլուի վրա մի յարձակում էլ տեղի ունեցաւ յունվարի 16-ին, բայց դարձեալ անյաջող վերջաւորութեամբ. Թուրքերը յետ փախան՝ թողնելով մի քանի դիակներ։

Մի շարք յարձակումներ տեղի ունեցան նաև յունվարի վերջերին։

Այսպէս, 23-ին հրդեհեցին Զորաթան գիւղի մի քանի դէզերը։

25-ի գիշերը կրակեցին Նորաշէն գիւղի այգիների ցանկապատերը և մի քանի դէզեր։

26-ին, 27-ին և 29-ին յարձակումներ տեղի ունեցան Մոսկոֆէնդ գիւղի վրա, բայց առանց լուրջ վնասներ պատճառելու նրան։

Ահա այսպէս անվերջ կերպով տեղի էին ունենում անմիտ ու կորստաբեր յարձակումները երկու կողմերից փոխադարձ կերպով։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՇ-ՔԷՆԴ ԵՒ ՃԱՄԲԱՐԱՔ ԳԻՒՂԵՐԻ ՀՈՒՐՋԸ

1905 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ 1906 Թ. ՅՈՒՆՎԱՐ։

Շամշադինի երեք մեծ գիւղերը, այն է՝ Բաշ-Քէնդը, Վերին և Ներքին Ճամբարաքները ընկած են գաւառամասի հարաւային կողմում, կտրուած հայաբնակ վայրերից և շրջապատուած Թուրք գիւղերով։

Դրանցից առաջինը, Բաշ-Քէնդը, ընկած է Ֆունդուրլու գետի վրա, իսկ միւս երկուսը, Վերին և Ներքին Ճամբարաքներն, ընկած են Բաշ-Քէնդից 10 վերստ հեռաւորութեան վրա, Թարսա-Զայ գետի վերին հովտում։

Այս երեք գիւղերն իրենց առանձնացած գրութեան շնորհիւ հնթարկւեցին մի շարք յարձակումների, մանաւանդ յունվար ամսի ընթացքում։ Այդ յարձակումներն այնքան շատ են և այնքան յաճախակի կրկնուած, որ նրանց մի առ մի թւելը նոյն իսկ ձանձրալի կը լինէր։ Միայն Բաշ-Քէնդ գիւղի վրա հաշւում են աւելի քան տասն յարձակումներ։

Ամենամեծ յարձակումները տեղի ունեցան յունվարի 2-ին և 21-ին, որոնք մի անօրինակելի թափով կրկնւում էին 3, 4 օր անընդհատ և վերջ ի վերջոյ յետ մղւում մեծ կորուստներով, շնորհիւ որի այս երեք գիւղերը խոշոր վնասներ չը կրեցին և եթէ մենք նրանց առանձին տեղ տւինք, միմիայն այն պատճառով, որ արձանագրած լինինք մի մխիթարիչ հանգամանք, թէ ինչպէս այդ գիւղերը մի արտասովոր տոկունութեամբ դիմադրելով բոլոր յարձակումներին կարողանում էին յետ քշել նրանց և անվտանգ մնալ հրի ու սրի այս ժամանակամիջոցում, այն էլ մեկուսացած, աննպաստ վիճակի մէջ։

Ինքնապաշտպանութեան բաւարար միջոցները, զէնք կրելու ընդունակութիւնը և դրանց հետ միասին կեանքի ու գոյքի պաշտպանութեան խորը գիտակցութիւնը մի այնպիսի հերոսութեան են հասցրել բաշքէնդցուն և ճամբարաքցուն, որ նրանք դիւրութեամբ կարողանալով մինչև այժմ յետ մղել Այրում և այլ ցեղերի վանդէական յարձակումները, յարգել են տուել իրենց, զէնքի կուլտը սրբագործող այդ միջավայրում։

Ճամբարաքի անուն հետ կապուած է մի դէպք, որը չենք կարող այստեղ չարձանագրել։

Գանձակի դէպքերից անմիջապէս յետոյ Ճամբարաքի ժողովրդի դրութիւնն այնքան վտանգաւոր դարձաւ, որ նա այլ միջոց չը գտնելով անխուսափելի վտանգից ազատուելու համար, մարդ ուղարկեց Սևանի լճի վրայով Նոր-Բայազէտ օգնութիւն խնդրելու։ Օգնութեան գնացող 17 զինուած հայերի մի խումբ, որը նոյեմբերի 27-ին շտապով Նադէժդինսо*) (Շօրջալու) գիւղի մօտով աճապարում էր դէպի նեղն ընկած Ճանբարաքը, այդ գիւղի մալականների կողմից մատնուեց, որի շնորհիւ Աղբուլաղ և Թոխլիջա գիւղերի թուրքերը մի կիրճում թակարդի մէջ առնելով խմբին, 7 հոգուն սպանեցին, իսկ միւսները վիրաւոր և խոշտանգած հազիւ կարողացան փախչել և ազատուել։

Այս ձևով արտայայտուել էին մի քանի տեղերում մալականները։

*) Նադէժդինսօն դուտ մալականաբնակ գիւղ է։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՆ ԱՂՍՏԱՖԱ ԵՒ ԿՈՒՆԷՆ ԳԵՏԵՐԻ ՀՈՎԻՏՆԵՐՈՒՄ

ՅՈՒՆՎԱՐ 1906 Թ.

Բուն-Ղազախը ողողում է մի քանի գետերով, որոնցից ամենամեծը Աղստաֆան է, որը հարաւային լեռներից սկիզբն առնելով և խոշոր պտոյտներ կազմելով գնում թափւում է Քուրը։ Բացի Աղստաֆան, դէպի հիւսիսարևմուտք հոսում են նաև մի շարք մանր ու մեծ գետեր, որոնցից յիշելու ենք Ջողազը իր կունէն և Բաղանիս ճիւղերով և Ինջա-Սուն իր Բարանա և Կողբ ճիւղերով։

Այս գետերի և նրանց բազմաթիւ երկրորդական ճիւղերի հովիտների վրա ընկած են Ղազախի 30 գիւղերը այս կարգով։

Աղստաֆա գետի հովտում՝ Պողոս-Քիլիսան, Դիլիջանը, Ջարխէջը, Ղոշավանքը, Վերին-Աղդանը, Քարվանսարան, Թազա-Քէնդը, Քրդէվանը, Ղարանլուխ-Դարան, Խաչթառակը, Ներքին-Աղդանը, Ըէվազլին, Աչասուն, Ուզուն-Թալան, Սևքարը, Լալի-Գիւղը, և ապա Ղազախ քաղաքը։

Կունէն գետի հովտում՝ Մէլիքի-Գիւղը, Սրի-Գիւղը, Կունէնը և Պիպիսը։

Բաղանիս գետի հովտում՝ Ձօճավանքը, Ղշղոթանը, Բաղանիսը, Աքսիբարը, իսկ դէպի հիւսիս՝ Կոսը-Քէնդը և Կուրումսուն։

Բարանա գետի հովտում՝ Բարանան և Դովէղը։

Եւ Կողբ գետի հովտում՝ Կողբը և Ղալաչան։

Ահա այս գիւղերի շուրջը տեղի ունեցան մի շարք ընդհարումներ, որոնցից մենք առաջ կը բերենք խոշորները։

Բուն-Ղազախում մասսային ընդհարումները շատ ուշ սկսուեցին։ Նոյն իսկ այն միջոցին, երբ Շամշադինը ընդհարումների մի բեմ էր ներկայացնում, այս գաւառամասը խաղաղ էր գոնէ մասսայական շարժումների նկատմամբ, թէև կենդանիներ քշելու և

գաղտագողի սպանութիւնների դէպքեր կատարւում էին և այն էլ մեծ չափով։

Այսպէս, նոյեմբերի 15-ին Դաշ-Սալահլուի և Զայլուի թուրքերը Ուչկուլ-Եաթաղ կոչուած տեղից քշեցին Կօտը-Քէնդ գիւղի 300 գլուխ տաւարը։

Այդ նոյն միջոցին Փօյլու գիւղում եղող սևքարեցի Կարապետ Սարիրէկեանի և Գրիգոր Փաշիկեանի 700 գլուխ ոչխարը թուրքերը բաժանեցին իրենց մէջ, որը Լևիցկին հաւաքեց և յետ տուեց տէրերին միմիայն յունվարի վերջերում։

Տեղի ունեցան աւելի մեծ չափով անհատական սպանութիւններ, որոնցից առանձին յուզմունք պատճառեց հայերին հետևեալ դէպքը։

Դեկտեմբերի վերջերին Գեօղ-Դաղ սարի ճամապարհին, Աքսիբար և Կուշչու-Այրում թուրք գիւղերի սահմաններում գերուեցին 9 ճամբորդ հայեր։ Դրանք էին. Դօստըլու գիւղացիներ՝ Վասիլ Մարմարեանը, 30 տար., Պօղոս Վարդանեանը, 26 տ., Խալաթ Եսայեանը, 18 տ., Սարիրէկ Զիթչեանը, 18 տ., Ճօճավանք գիւղացիներ՝ Մէլիքսէթ Բարաջանեանը, 40 տ., Ղահրաման Զիլինկարեանը, 40 տ., Ղալաչա գիւղացիներ՝ Շամիլ Նիազեանը, 17 տ., Սարգիս Բարխուդարեանը, 22 տ., Արշակ Երիցեանը, 30 տ.։

Այս 9 հոգուն թուրքերը տանելով Ղարա-Համզա կոչուած թուրքական գոմերը, սոսկալի տանջանքների տակ, մաս մաս կտրատելով ականջները, ձեռքերը և մարմնի միւս անդամները, սպանեցին և ապա այրեցին, որոնց այլանդակուած դիակներն այդտեղից կարելի եղաւ հանել 10 օր փնտռելուց յետոյ։

Այս դէպքի վրա թուրքերը թէև դադարեցրին իրենց երթեւեկութիւնը հայ գիւղերի մօտով ձգւող մի քանի ճանապարհներով, բայց աւազակութեան դէպքեր, այնուամենայնիւ, շարունակւեցին։

Այսպէս, Ղալաչա գիւղի Հօնուդ կոչւող տեղից Դաշ-Սալահլու և Զայլու գիւղերի թուրքերը քշեցին 46 գլուխ տաւար և 100-ի չափ ոչխար։

Սրան որպէս պատասխան հայերը քշեցին Շրխլլու թուրք գիւղի 8 տաւարը, բայց վերադարձրին, ի նկատի ունենալով Շրխլլուի անմասն լինելը Ղալաչայի տաւարը քշելու մէջ։

Այս միջոցին Շրխլլու գիւղում գտնւող կողբեցի Եարալեանի 1000-ի չափ և Սարգիս Տէր-Բարսեղեանի 300-ի չափ ոչխարները

Թուրքերը բաժանեցին իրենց մէջ, որը մի քանի ամսից յետոյ Լէյեցկին հաւաքել տեց և յանձնեց տէրերին։ Բայց Տէր-Բարսեղեանի ընդունած ոչխարների միջից դուրս եկան այս անգամ էլ Թիֆլիսեցի Աղա-Մուրադեանից գողացած ոչխարները՝ թւով 40 հատ։

Նման աւազակային գործողութիւնների դիմեցին նաև հայերը. այսպէս, սեքարէցիք քշեցին Թուրք Աքսիբար գիւղի 45 տաւարը, խաչթառակցիք քշեցին Սօփլու գիւղի 65 տաւարը, թէև երկու դէպքում էլ տաւարները վերադարձրին տէրերին։

Բայց շրջանը դարձեալ չը խաղաղուեց, մանր դէպքերը կրկնուելով բարդացան և առաջ բերին խոշոր ընդհարումներ։

Յունվարի 21-ի գիշերը յարձակման ենթարկուեց Լալի-Գիւղը։ Թուրքերի մի մեծ բազմութիւն անսպասելի կերպով խուժելով գիւղը կողոպտեց և հրդեհեց մի քանի տներ և անասելի մի շփոթ առաջացնելով գիւղի մէջ, քշեց 200-ի չափ ոչխար, ճանապարհին հրդեհելով պատահած շինութիւնները և ջրաղացները։ Հայ երիտասարդները հետեւելով կողոպտիչներին հպիւ կարողացան Զախմախլու գիւղի մօտ յետ խլել ոչխարը։

Նոյնպիսի մի յարձակում այդ օրը տեղի ունեցաւ Ուզուն-Թալայի վրա. Թուրքերն այստեղ էլ անկարող եղան գիւղը մտնել և յետ քաշուեցին, հրդեհելով ճանապարհի վրա և կայարանի մօտ շինուած խանութներն ու ջրաղացը։

Այդ նոյն օրը յարձակման ենթարկուեց նաև Պիպիսը, որտեղից դեռ մի օր առաջ, անխուսափելի վտանգը տեսնելով, ժողովուրդը քոչել էր մօտակայ հայ գիւղերը։ Դատարկ մնացած տները հրդեհուեցին և աւերուեցին։

Սրանից մի օր անց, յունվարի 23-ին, սեքարէցիք յարձակուեցին Ղըզլ-Հաջըլու գիւղի վրա, ուր այդ ժամանակ մնացել էին միմիայն կուռող տղամարդիկ։ Մի փոքր դիմադրութիւնից յետոյ Թուրքերը փախան 8—10 զոհ տալով, բայց նրանք շուտով վերադարձան մեծ ուժ հետներն առած։ Հայերը քաշուեցին Սաթլմիշ լեռան գագաթը, իսկ Թուրքերը՝ Արասբէկլու գիւղին կպած սարը։ Սկսուեց մի յամառ և երկարատև հրացանաձգութիւն երկու կողմերից . . . Եւ մինչդեռ այդ երկու բարձրութիւնների մէջ շարունակւում էր անմիտ կռիւը, Ուզուն-Թալայի և Լալի-Գիւղի հայերը յարձակուեցին Զաֆարլու գիւղի վրա։ Ժողովուրդն առանց դիմադրութեան փախաւ, որից յետոյ գիւղը կողոպտուեց և հրդեհուեց։

Դրանից յետոյ դատարկեցին նաև Զախմախլի, Ղըզըլ-Հաջըլի, Աբաս-Բէկլու և Բարխուդարլու Թուրք գիւղերը, որոնք նոյնպէս աւելի կամ պակաս չափով վնասներ կրեցին։

Աւելի խոշոր ընդհարումներ տեղի ունեցան յունվարի 25-ին և 26-ին։

Աքսիրարից Կունէն գնալիս մի քանի հայ ճամբորդների վրա Աքսիրար գիւղի Թուրքերը կրակ բացին, որից սպանուեց մի ձի։

Այդ դէպքից վրդովուած հայերը մեծ ուժով յարձակուեցին և Աքսիբարը երեք կողմերից պաշարեցին։ Գիւղի շուրջը երկար կռիւ տեղի ունեցաւ, որի ժամանակ Թուրքերը պաշտպանւում էին մի անասելի քաջութեամբ։

Այստեղ կատարուած մի ուշագրաւ դէպք արժէր արձանագրել։ Թուրքերի մի խումբ դիրք էր բռնել գիւղին մօտ ընկած մի աւերակ վանքի մէջ։ Այդտեղ եղող Թուրքերից մէկն սպանուեց։ Սպանուածի մայրը—մի պառաւ կին, լսելով որդու մահը, խելակորոյս դուրս թռաւ գիւղից և կարկտի պէս թափուող գնդակների տակ վազում էր բաց դաշտի միջով դէպի վանքը։ Բոպէներ շարունակ վազում էր այդ կինը. գնդակներ թափւում էին անընդհատ նրա շուրջը, բայց նա գնում էր առանց կանգնելու։ Մայրական սէրը քշում էր նրան դէպի իր որդին, դէպի նրա ընկած տեղը։ Որդեկորոյս մայրն անցաւ այդ տարածութիւնը, թափուող գնդակների միջից, այդ մահաբեր ճանապարհը նա անցաւ անփորձ և տեղ հասաւ։ Հերոսութեան հասած մայրական սիրոյ այդ ակտը յիշում էին ականատեսները յափշտակութեամբ։

Այս գիւղի շուրջը տեղի ունեցող կռիւը սոսկալի էր, նա տևեց ամբողջ օրը. յուսահատութիւն տիրեց Թուրքերին, բայց վրա հասան զօրքերը և գիւղը փրկեց։

Այս կռւում, բացի վիրաւորները, հայերից սպանուեցին բարանեցի Գրիգոր Քոսեանը, 40 տար., դոշղոթանցի Յարութիւն Թէչիկեանը, 35 տ., Մովսէս Սարիրէկեանը, 35 տ., բաղանիսեցի Հասան Ալիխանեանը, 27 տ., և դարաղայեցի Պալի Յարութիւնեանը, 23 տարեկան։ Թուրքերի կորուստը աւելի ևս մեծ էր։

Այդ նոյն օրը Թուրքերի կողմից յարձակում տեղի ունեցաւ Կօտը-Քէնդ և Դօստըլու գիւղերի վրա, ուր մինչև երեկոյ անընդատակ կրակելուց յետոյ Թուրքերը յետ քաշուեցին մի երկու զոհերով։

Յունվարի 26-ին Աքսիրար գիւղում նկատուեց մի մեծ բազ-

մութիւն։ Այդտեղ հաւաքւել էին շրջակայ գիւղերից բազմաթիւ թուրքեր։ Այդտեղ էր նաև գաւառապետի օգնականը դրագունների մի վաշտով։

Չը նայած այն բանին, որ այդ օրը հայերն իրենց ուժերը կենտրոնացրած ունէին Պիպիսում և Սրի-Գիւղում, բոլորովին մօտ Աքսիբարին, ուր տեղի ունէր թուրքերի համախմբումը, բայց և այնպէս, ի նկատի ունենալով գաւառապետի օգնականի և զօրքի ներկայութիւնը, նրանք ընդհարման որևէ առիթ չուզեցին տալ, մինչդեռ թուրքերի մի խումբ զօրքի ներկայութեամբ առաջնալով կրակ բացեց Սրի-Գիւղի վրա։ Ահա այդ ժամանակ գաւառապետի օգնականը դրագունները վերցրած դուրս եկաւ գիւղից, բռնելով Ղազախ քաղաքի ճանապարհը։

Մի փոքր ճանապարհ կտրելով, գաւառապետի օգնականը նկատեց թուրքերի մի մեծ հոսանք, որը շտապում էր դէպի Պիպիս։ Բայց չը նայած այն բանին, որ կարգ ու կանոնի պահպանութեան համար կոչուած այդ պաշտօնեան տեսաւ մի խոշոր ընդհարման հնարաւորութեան անխուսափելիութիւնը, այնուամենայնիւ, անցաւ ու գնաց, հետը տանելով վաշտը։

Եւ մինչդեռ նրա յաղթական դնացքը նկատելի էր սովորական աչքերին, թուրքերը մի ամուր շղթայով եկան պաշարեցին Պիպիսը և Սրի-Գիւղը։ Սկսուեց մի սոսկալի կռիւ երկարատև ու յամառ, որը տևեց մի ամբողջ օր։ Սար ու ձոր թնդում էին համազարկերի աղմուկից. ընդհարումները բորբոքւում էին կատաղի ուժով մէկ այս և մէկ այնտեղ, մինչև որ երեկոյ եղաւ, մութը կոխեց սար ու ձոր և միմեանց տեսնելու հնարաւորութիւնը չքացաւ։ Լուռ գիշեր տիրեց և երբ առաւօտը ծագեց, Աքսիբարից թուրք ժողովուրդը քաշել էր. դատարկուած գիւղը ենթարկուեց աւերի։

Այս կռիւը վերսկսուեց երկրորդ և երրորդ օրը. ընդհարումները դառնում էին երբեմն այս և երբեմն այն գիւղի շուրջը փոփոխակի յաղթութիւններով և փոխադարձ հրդեհներով ու աւերումներով։

Այսպէս, ահա, կոտորածը երկու ժողովուրդների մէջ փոխադարձ աւերումներով երկու ամիս անընդհատ շարունակւում էր ամբողջ Ղազախի գաւառում, մինչև որ Լևիցկին եկաւ և Խնդանօթի բերանից յայտարարեց, «բաւական է որքան միմեանց կոտորեցիք»։

Ղազախի գաւառի ընդհարումների, աւերած գիւղերի և կըրած նիւթական զրկանքների ցանկը աւելի մեծ է, քան մեր թւածը։ Այդ ցանկը մանրամասնութեամբ կը գտնէք յանձնաժողովի այստեղ առաջ բերած ցուցակում, որը Լևիցկու կարգադրութեամբ կազմուած էր հակառակ կողմերից վնասները պահանջելու և տուժող կողմերին տալու նպատակով։

Պէտք է նկատել, որ այսպիսի մի փորձ միմիայն Ղազախում տեղի ունեցաւ, որը որքան էլ թերի և պակասաւոր, այնուամենայնիւ, որոշ գաղափար է տալիս աւերումների չափի մասին, թէև այդ վնասների մի երրորդական մասը միայն պահանջուեց և վնասուած գիւղերին վճարուեց։

Ղազախի գաւառի վնասուած գիւղերի և նրանց կորուստների ցուցակը, կազմուած վնասներն ստուգող յանձնաժողովի ձեռքով։

ՀԱՅ ԳԻՒՂԵՐ

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն	Վնասների գումարը
1	Ղազախ—քաղաք .	200	124.725
2	Աղստաֆա—կայարան	10	9500
3	Ալեքսէևկա	5	15300
4	Թօուզ կայարան	10	9130
5	Թաթլի-Բէկնդ	105	3900
6	Թաթլի կայարան.	10	1150
7	Ուզուն-Թալա	130	5000
8	Լալի-Գիւղ	43	14440
9	Կրզէն	30	30000
10	Պիպիս	43	10050
11	Սևքար	283	1700
12	Ղօզլուի ձմերանոց	—	1041
			225.936

ԹՈՒՐՔ ԳՅՈՒՂԵՐ

1	Ալիբէկլու	180	14340
2	Միւլքիւլու .	60	842
3	Հաջալի	30	7977
4	Քեօհնա-Ղշլաղ.	70	6230
5	Եարադուլլի	30	5738
6	Հաթամ-Աղալի.	30	2517
7	Ալաթալա	19	7813
8	Սաֆուլի	15	5195
9	Բարխուդարլու	12	1000
10	Ջաֆարլի	40	20086
11	Ջախմախլի .	19	1500
12	Փօլատ-Այրում	85	120
13	Գեօրչափ		190
14	Մրտէլ	216	873
15	Ալաչղ-Ղայա		3000
16	Աղքիլիսա		2000
17	Ախկխլի .	31	10000
18	Ղըզլ-Հաջըլի	56	10000
19	Բաղանիս-Այրում	34	1700
20	Խէյրումլի	14	4000
21	Մազամլու	26	500
22	Ղուշչի-Այրում	60	700
23	Աքսիբար Վերին և Ներքին	38	3000
			109,420

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՆ ԱՐԷՇԻ ԳԱՒԱՌԻՄ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1905 Թ.

Արէշի գաւառն ընկած է Գանձակի նահանգի հիւսիսարևելեան մասում, Քուր գետի ձախ ափին, Նուխու, Գանձակի և Ջիւանշիրի գաւառների մէջտեղ, արևելեան կողմից կազմելով Բագուի նահանգի սահմանը։

Նահանգի ութ գաւառների մէջ թէ տարածութեամբ և թէ ազգաբնակութեան թւով ամենավերջին տեղը բռնում է Արէշի գաւառը, միևնոյն ժամանակ վերջին տեղը բռնելով նաև հայ ազգաբնակութեան քանակի նկատմամբ։

Գաւառի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 67 հազար, որից 53 հազարը թուրքեր են, իսկ 14 հազարը՝ հայեր։

Արէշի գաւառն իր աշխարհագրական դիրքով աննշան բացառութեամբ ներկայացնում է հարթ դաշտավայր, որի հեռաւոր մասերը ամայի են, իսկ կենտրոնական մասը, շնորհիւ Ղարա-Ջայ գետից ճիւղաւորուած բազմաթիւ առուների, մշակուած է և յայտնի բամբակի, բրնձի, խաղողի և շերամի բերքերով։

Արէշի գաւառում հաշուում են 137 գիւղ, որոնցից հայաբնակ են հետևեալ 18-ը.

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Ծուն՝ պաշտ. թուր	Մատաղատուն
1	Ջայքէնդ	97	—
2	Ղայաբաշի	228	—
3	Խանաբադ—136 տ. թուրք	33	—
4	Էրմէնի-Բազար—14 տ. թուրք.	35	39
5	Նէմէթաբադ—204 տ. թուրք	69	90

6	Քեանդակ	122	165
7	Նաւարիկ	116	180
8	Մազրդու	44	53
9	Մեծ-Սօգիւթլու	381	—
10	Փոքր-Սօգիւթլու	96	—
11	Խօշկաշէն	75	
12	Ծիրիկ	26	
13	Թօսիկ	24	—
14	Բէգլար-Քէնդ	141	
15	Բլէղ	48	—
16	Սարդ-Ենգիջա	41	
17	Գիրդադուլ	151	—
18	Զանաղ-Բուլաղ	116	

Գաւառի արևմտեան մասում, Ալջիգեան գետի վրա ընկած են՝ Զայքէնդը, Ղայարաշին, Խանարադը. աւելի ցած—Քուրի ափին ընկած են՝ Մազրդուն, Հաւարիկը, Քեանդակը, իսկ այս վերջին երեք գիւղերից բաւական հեռու, դէպի արևելք, գտնուում են Նէմէթարադը և Էրմէնի-Բազարը։

Գաւառի հիւսիսային մասում, Թոդան-Զայ գետի վերին հոսանքի դաշտերի վրա ընկած են՝ Մեծ-Սօգիւթլուն, Փոքր-Սօգիւթլուն, Խօշկաշէնը, Ծիրիկը և Թօսիկը, իսկ դէպի արևելք, Գեօգ-Զայ գետի դաշտերի վրա՝ Բէգլար-Քէնդը, Բլէղը, Սարդ-Ենգիջան, Գիրդադուլը և Զանաղ-Բուլաղը։

Փոքր թիւ կազմող այս գիւղերը մի քանի խմբակների բաժանուած գտնուում են միմեանցից բաւական հեռու հեռու, թուրք գիւղերով շրջապատուած։

Այսպիսի պայմանների մէջ, բնականաբար, թեթև պիտի համարել այն աղէտը, որ հասել է այս շրջանի միմիայն հինգ գիւղերին։

Այդ գիւղերն են. 1) Մազրդուն, որն ունէր 53 ծուխ 400 շնչով*), 2) Քեանդակը՝ 162 ծուխ 1000 շնչով, 3) Հաւարիկը՝ 180 ծուխ 1100 շնչով, 4) Էրմէնի-Բազարը՝ 39 ծուխ 274 շնչով և 5)

*) Այս գիւղերի վերաբերեալ տեղեկութիւնները մենք բերում ենք պ. Ե. Սարգսեանի զեկուցումից՝ ներկայացրած Թիֆլիսի Նպաստամատոյց յանձնաժողովին։

Նէմէթարաղը՝ 90 ծուխ 600 շնչով, բոլորը միասին 524 ծուխ 3374 շնչով։

Այս գիւղերից երկուսը -Էրմէնի-Բազարը և Նէմէթարաղը թուրքախառն են, որոնցից առաջինում կան 14 տուն, իսկ երկրորդում 204 տուն սիւննիներ։

Թէ այս հինգ գիւղերը շնորհիւ պտղատու դաշտերի և ժողովրդի ժրաջան աշխատութեան որպիսի բարեկեցիկ վիճակ ունէին, գաղափար կազմելու համար առաջ կը բերենք մի քանի թւեր նրանց եկամուտներից։ Շերամապահութիւնից նրանք տարեկան վերցնում էին 70—80 հազար ռուբլի, բամբակից՝ մինչև 60 հազար, չալթուկից և խաղողից՝ մինչև 30 հազար, այնպէս որ այս հինգ գիւղերի տարեկան եկամուտը միասին վերցրած հասնում էր 100-ից մինչև 170 հազար ռուբլու, մի եկամուտ, որով 3374 հոգին կարող էր ապրել շատ մարդավայել կերպով։

Եւ իսկապէս, երբ նայում էք այս գիւղերի ունեցած կենդանիների և մի քանի տնային կարասիների ու գործիքների քանակութեանը, համոզւում էք, որ նրանք բաւական լաւ տնտեսութիւն ունէին։

Այսպէս, այդ հինգ գիւղերը միասին ունէին լծկան գոմէշներ 1020 հատ, կթի գոմէշներ և կովեր՝ 3045 հատ, ձիեր՝ 219 հատ, այծեր՝ 500 հատ, չուխեր՝ 500 հատ, կամեր՝ 650 հատ, կարասներ և տակառներ՝ 4600 հատ և վերջապէս սայլեր՝ 305 հատ։

Ահա այս հինգ գիւղերի տոկուն աշխատանքով իրեն համար բարեկեցիկ դրութիւն ստեղծած ժողովրդին նոյնպէս վիճակւած էր կրել սոսկալի աղէտը, ընկնել թշւառութեան գիրկը։

Այն հանգամանքը, որ Արէշի գաւառի թուրք ազգաբնակութիւնը պատկանում է մեծ մասամբ սիւննի դաւանութեան, այդ բանն անգամ չօգնեց հայերին ազատ մնալ թուրքական յարձակումներից։

Ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ այստեղ, նախ տեղի ունեցան մի շարք կողոպուտներ և կենդանիներ քշելու դէպքեր. այսպէս, նոյեմբեր ամսի մէջ քշեցին Խանարաղ գիւղից 14 տաւար, Քեանդակ գիւղից՝ 22 տաւար և ձի, Նէմէթարաղ գիւղից՝ 32 ձի և 260 տաւար։

Մի շարք այսպիսի մանր դէպքերից յետոյ, նոյեմբերի 28-ին, Ղարաբաղի թուրքերը Քուր գետն անցնելով եկան պաշարեցին

Մազրդուն։ Վերջին տասնամեակի յեղափոխական և մտաւոր շարժումն իր ազդեցութիւնը թողել էր նաև Արէշի սակաւաթիւ հայ ժողովրդի վրա՝ զարգացնելով նրա մէջ ինքնապաշտպանութեան գիտակցութիւնը։ Եւ ահա Հաւարիկ և Բնանդակ գիւղերից օգնութիւն ստանալով, Մազրդուի երիտասարդները կարողացան գիւղի սահմաններից թուրքերին հալածել։ Սակայն տեղացի թուրքերը, նրանց հետ միասին նաև պրիստաւ Մամադ-բէկ Ղալաբէկովը, տեսնելով հայ երիտասարդների յաջողութիւնը, ետուից հասան և նրանց կրակի մէջ առան։ Հայերը մի փոքր ժամանակ պատասխանելով երկու կողմից թափող գնդակներին, այդ անհաւասար կուից դուրս եկան ծանր զոհեր տալով. նրանցից ընկել էին 37 հոգի։ Դրանք էին՝ Գ. Մարտիրոսեանը, Պ. Սարգսեանը, Թ. Ամիրեանը, Յ. Ստեփանեանը, Ն. Ստեփանեանը, Ղ. Գրիգորեանը, Յ. Տէր-Պողոսեանը, Հ. Սարդարեանը, Ա. Թէւանեանը, Յ. Թումուկեանը, Ս. Եղիազարեանը, Ի. Սաքիեանը, Մ. Եղիազարեանը, Ա. Պողոսեանը, Ա. Շահվէրդեանը, Գ. Անանեանը, Ա. Տօնեանը, Ա. Մալեանը, Յ. Անդրէասեանը, Բ. Յակոբեանը, Պ. Հայրապետեանը, Ա. Կարապետեանը, Ս. Եղիգարեանը, Ա. Հայրապետեանը, Բ. Պետրոսեանը, Ն. Մանուէլեանը, Մ. Մարտինեանը և մեզ անյայտ անուններ։

Դաշտում տեղի ունեցած կոտորածի լուրը սարսափ ու իրարանցում առաջ բերեց գիւղի մէջ. կանայք և երեխաներ սուգ ու շիւանով դուրս փախան գիւղից. թուրք խուժանը ներս թափուեց գիւղ և սկսեց մի սոսկալի կողոպուտ, աւեր ու հրդեհ։

Թուրքերի մի այսպիսի բարբարոսութիւնը սարսափ տարածեց Հաւարիկ, Բնանդակ և Էրմէնի-Բազար գիւղերի ժողովուրդների վրա, որոնք նախատեսելով նոյն վիճակը նաև իրենց համար, լծեցին սայլերը և շտապ վերցնելով միմիայն թեթև իրերը՝ քոչեցին Ղայաբաշի, որից անմիջապէս յետոյ թուրքերը մտան դատարկուած գիւղերը, պոռոտեցին տների ծակուծուկերը, պատերն ու յատակները և հանեցին այն ամենը, ինչ որ պահել էին հայերը։

Աւելի քաղաքավարի կերպով կողոպուտեց Նէմէթարադը։ Այդտեղի հայերը պահ տալով ունեցած չունեցածն իրենց հարեւաններին և քիրվաներին, նոյնպէս գլուխ վերցրին և փախան Ղայաբաշի։ Սակայն երբ մի փոքր անց վերադարձան գիւղ իրենց

իրերն ստանալու համար, հաւատարիմ քիրվանները հրաժարուեցին տալ, յայտարարելով, որ իրենց մօտ պահ տուած ապրանքներ չը կան։

Բացի այդ, հայերը սարսափահար գիւղերը դատարկելով և փախչելով, նրանցից աւելի քան 60—70 հոգի ճանապարհներին անհետ կորան և գերի ընկան Թուրքերի ձեռքը, որոնցից մի քանիսը կրօնափոխ եղան և կանայք բռնի կնութիւն ընդունեցին։ Թէ այդ Թշուառները որքան ժամանակ գերի մնացին, երևում է այն բանից, որ դեռ ևս փետրվարին Էրմէնի-Բազար գիւղի քահանայ Տէր-Եղիշէն ներկայանալով Գանձակի գեներալ-նահանգապետ Ալֆտանին, խնդրում էր կարգադրութիւն անել գերիներին ազատելու համար։

Այսպէս, հինգ գիւղերի ժողովուրդն աւելի քան 3300 հոգի, տնաւեր, կողոպտուած ու Թալանուած եկաւ Թափուեց Ղայաբաշի, մի փոքրիկ գիւղի մէջ, այն էլ ձմրան օրերին, ցրտին ու անձրևներին ենթակայ։ Ի հարկէ, այդպէս ապրել անկարելի էր, զըրկանքներ կրած այդ ժողովուրդը նորից դուրս ընկաւ մի անկիւն մուրալու համար։ Նա շաղ անցաւ Արէշի և Նուխու գիւղերը, այն է՝ Դաշ-Բուլաղ, Գեօյ-Բուլաղ, Ջաֆարաբադ, Ալեար, Այդին-Բուլաղ, Աղփլաքան, Ղօզլու, Սալբրէկ, Մէջլիս, Ջուջամիշ, Սաբաթլու, Նիժ, Եաղուբլի, Զայքէնդ, Զառաֆ, Սօգիթլի, ուր նա անց էր կացնում սողունի կեանք, ապրելով մերկ յատակների վրա, սառն ու խոնաւ խրճիթների մէջ, միմեանց վրա Թափած և վարակիչ հիւանդութիւններով բռնուած, որին զոհ գնացին մի քանի ամսւայ մէջ աւելի քան 80 հոգի։

Արէշի այս հինգ գիւղերի նիւթական վնասը հասնում էր մէկ միլիոն ռուբլու։ Ահագին կենդանիներից և գոյքերից ազատուել էր մի չնչին մասը միայն։

Բացի այս, Արէշի գաւառում կողոպտուեց և աւերուեց Սաֆրազեանի կալուածքը, որի վնասը հասնում էր 35,000 ռուբլու։

Ցուցակ Արէշի գաւառի այն գիւղերի, որոնց ժողովուրդը փախել կամ խոշոր վնասներ է կրել յարձակումների ժամանակ։

ՀԱՅ ԳԻՒՂԵՐ

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն	Փախած	Կողոպտուած	Աւերուած	Կոտորած
1	Մազրդու .	53	փախ.	կող.	աւեր.	կոտ.
2	Քհանդակ .	165	»	»	—	—
3	Հաւարիկ .	180	»	»	—	—
4	Էրմէնի-Բազար .	39	»	»	—	—
5	Նէմէթաբադ .	90	»	»	—	—



ՆՈՒԽՈՒ ԳԱՒԱՌ

Գանձակի նահանգի 8 գաւառներից ամենաբախտաւորը Նուխու գաւառն է, ուր հայ ժողովուրդը մասսային ընդհարումներից ազատ մնաց, թէև մանր աւազակային դէպքերի և ընդհարումների ուրուականի սարսափի տակ երկար ժամանակ նա ապրեց։

Գանձակի նահանգի հայ ազգաբնակութեան մասին մի ընդհանուր գաղափար տալու համար մի երկու տեղեկութիւններ կը տանք նաև Նուխու գաւառի վերաբերեալ, որով և կը փակենք մեր գրքի այս բաժինը։

Նուխու գաւառն ընկած է Գանձակի նահանգի հիւսիսարեւելեան ծայրում։ Նրա հիւսիսային մասը լեռնային է և հարուստ բազմաթիւ գետերով ու գետակներով, որոնք առատօրէն իջնելով և ոռոգելով հարաւային տափարակ մասը, նրան դարձնում են խիստ արդիւնաբեր։

Նուխու ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 120 հազար, որից 92 հազարը թուրքեր են, 20 հազարը՝ հայեր և 8 հազարը՝ զանազան ազգեր։

Գաւառի կենտրոնավայրը կազմում է Նուխի քաղաքը, որն ունի 30 հազար բնակիչ, որից 6 հազարը միայն հայեր են։

Նուխու գաւառն ունի 128 գիւղ, որոնցից հայաբնակ են հետևեալ 29-ը, ընկած հարաւային մասում, արևելեան կողմից սկսած, այս կարգով։

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Տուն հայ պաշտ. թիւր
1	Ջալլի	58
2	Միրզաբէկլի . . .	51
3	Սուլթան-Նուխի — 61 տ. թուրք .	156
4	Մէլիքլի . .	41
5	Նիժ — 87 տուն թուրք	681

6	Վարդաշէն—հայեր և ուտիացիներ . .	505
7	Վարդանլի—168 տուն թուրք .	10
8	Փաղար—74 տուն թուրք .	19
9	Եաղուբլու . .	192
10	Օթմանլու .	26
11	Զարաֆ	142
12	Թոփեր . . .	48
13	Ճալէթ—26 տուն թուրք	195
14	Մալըղ .	30
15	Զովլան	11
16	Ենգի-Քէնդ	24
17	Զուջամիշ	50
18	Սալիբէկ	58
19	Մէջլիս	67
20	Ալիար	67
21	Այդին-Բուլաղ	80
22	Աղբլաքէնդ	227
23	Ղօզլու .	102
24	Գէյբէկլու . .	59
25	Զաֆարաբաղ-Խոյ	68
26	Գիւլլու-Դաղ .	86
27	Շէն . .	106
28	Դաշբուլաղ .	232
29	Գէյբուլաղ .	200



ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳ

Թիֆլիսի նահանգն ընկած է Գանձակի, Երևանի, Քութայիսի նահանգների և Կարսի, Թերէքի, Դաղստանի շրջանների կենտրոնում՝ կազմելով Կովկասի սիրտը։

Կովկասի բոլոր նահանգների մէջ իր բազմամարդութեամբ առաջին տեղը բռնում է Թիֆլիսի նահանգը։ Ազգաբնակութեան ընդհանուր թիւը, համաձայն 1897 թւի միօրեայ վիճակագրութեան, հասնում է 970 հազարի, որի գերակշիռ մասը կազմում են վրացիները։

Նոյն վիճակագրութեան համաձայն 1897 թւին Թիֆլիսի նահանգում ապրում էին 219 հազար հայեր, որից աւելի քան 50 հազարը բնակւում էին բուն Թիֆլիսի մէջ։

Իսկ թուրքերը Թիֆլիսի նահանգում ապրում են աւելի ևս քիչ չափով, ընդամենը 113 հազար, այն էլ մեծ մասամբ սիւնիի դաւանութեան պատկանող։

Հայ և թուրք ժողովուրդների համեմատական թիւերը Թիֆլիսի նահանգի 9 գաւառներում, վերցրած նոյն թւի վիճակագրութիւնից հազարների հաշւով, հետևեալ պատկերն է ներկայացնում։

№№	ԳԱՒԱՌՆԵՐԸ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ	Ընդ. թիւը	Հայեր	Թուրքեր	Վրացիներ և այլ ազգեր
1	Թիֆլիսի .	235	65	20	150
2	Ախալքալակի .	73	55	8	10
3	Ախալցխայի	71	20	35	16
4	Բօրչալուի	129	45	38	46
5	Գօրու .	191	13	—	178
6	Դուշէթի	68	3		65
7	Թելաւի .	67	8	4	55
8	Թիոնէթի	34	1	2	31
9	Սղնախի .	102	9	6	87
	Բոլորը միասին	970	219	113	638

Առաջ բերելով հայ և թուրք ժողովուրդների թւական այս համեմատութիւնը, աւելորդ ենք համարում բացատրել թէ ինչու Թիֆլիսի նահանգում հայ-թուրքական ընդհարումները, որոնց կը պատահենք շուտով, այնպիսի մեծ ծաւալ չընդունեցին, ինչպէս, օրինակ, Երևանի և Գանձակի նահանգներում։

Ինչ վերաբերում է յատկապէս Թիֆլիսի մէջ և Բօրչալուի գաւառում տեղի ունեցած ընդհարումներին, այդ էլ անխուսափելի էր շնորհիւ այն քաղաքական փոթորկոտ մօմենտի, որն ստեղծուեց ընդհարումների օրերին ամբողջ Ռուսաստանում, մասնաւորապէս Կովկասում և Թիֆլիսում, և որը եկաւ մի անգամ ևս նուիրագործելու հայ-թուրքական ընդհարումը, որպէս փրկութեան մի դուռ հոգեվարքի հասած ըէժիմի համար։

ԹԻՖԼԻՍ

Թիֆլիսը Կովկասի մայրաքաղաքն է և խառնարանը Կովկասի ազգութիւնների, նրանց ձգտումների ու մտքերի։ Աւելի բազմամարդ, աւելի այլատարը և աւելի եռուն ու աղմկող քաղաք, քան Թիֆլիսը, չը կայ մէկ ուրիշը Կովկասում։

Այդտեղ կենտրոնացած է Կովկասի ամբողջ մտածողութիւնը, կեանքի և փարթամութեան հեշտանքները. այդտեղ կենտրոնացած են նաև Կովկասի կապիտալները և նրանց շրջանառութիւնները։

Կովկասի էներդիան Թիֆլիսումն է ասպարէզ գտնում գործելու, Կովկասի խրախճանքը նոյնպէս այդտեղ է բաւականութիւն փնտռում։

Ահա թէ ինչու նա ընդարձակւում, մեծանում, ճոխանում է թռիչքներ գործելով։

1864 թւին Թիֆլիսն ունէր 66 հազար բնակիչ, 1874 թւին՝ 100 հազար, 1897 թւին՝ 162 հազար, 1903 թւին՝ 210 հազար, իսկ 1905 թւին այդ թիւը հասաւ արդէն 240 հազարի։

1905 թւին, ոստիկանական տեղեկութիւնների համաձայն, Թիֆլիսի ազգաբնակութիւնը կազմւած էր հետևեալ տարրերից։

1	Հայեր .	84 հազար
2	Ռուսներ. .	57 »
3	Վրացիներ	55 »
4	Թուրքեր—շիա և սիւննի միասին .	13 »
5	Ասիական ցեղեր	11 »
6	Լեհեր, գերմանացիներ և այլ եւրոպացիներ . .	11 »
7	Լեռնականներ. .	4 »
8	Հրէաներ. .	5 »
	Բոլորը միասին	240 հազար

Ինչպէս տեսնում էք, Թիֆլիսում գերակշիռ տարր կազմում են հայերը, որոնք և առաջնակարգ տեղ են բռնում առանձնապէս վաճառականական ասպարիզում։

Թիֆլիսի այն մասում, որը կոչւում է հին քաղաք և ընկած է Քուրի երկու ափերի վրա, սկսած Բօտանիկական այգու զառիվայրից, տարածւելով Մետեխի և Հաւլաբարի կամուրջներով մինչև Խօջիվանքի գերեզմանատունը, ապրում են գլխաւորապէս հայեր։ Այդ տարածութիւնը Թիֆլիսի ամենախիտ բնակութիւն ունեցող և ամենախառնաշփոթ ու անկանոն մասն է, ուր գտնւում են հին բազազխանան և բաւական առևտրական շարքեր։ Այդ նոյն շրջանում գտնւում է նաև Թուրքերի Շէյթան-Բազարը և Թուրքական թաղը, սակայն սահմանակից, տեղ տեղ նոյն իսկ խառը հայաբնակ թաղերին։

Ահա այս շրջանում տեղի ունեցան Թիֆլիսի հայ-Թուրքական ընդհարումները իրենց կորստարեր հետևանքներով։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

22-30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1905 թ.

Ոչ մի տեղ հայ-թուրքական ընդհարումն այնպէս արհեստական կերպով առաջ չը քաշուեց, ինչպէս Թիֆլիսում։ Այստեղ ամեն ինչ բղխում էր տիրող շրջաններից, այն էլ բացայայտ կերպով։

Ինչպէս մեր առաջ բերած վիճակագրութիւնից տեսանք, Թիֆլիսում հայերը կազմում են մի խոշոր թիւ—84 հազար, իսկ թուրքերը շիա և սիւննի միասին վերցրած՝ ընդամենը 13 հազար։

Երկու ազգութիւնների այսօրինակ անհամաչափ լինելը մի կողմից, Կովկասի բարձր ադմինիստրացիայի ներկայութիւնը միւս կողմից, միանգամայն հնարաւոր էին դարձնում հաւատալ, որ Թիֆլիսն ազատ կը մնայ հայ-թուրքական ընդհարումներից, բայց այդպէս չեղաւ։

Ոչ հայ և ոչ էլ թուրք ժողովրդի ջանքերը չը կարողացան յետ կասեցնել այն ընդհարումը, որը ծրագրւեց Թիֆլիսում և որի լուռաբանութիւնը առանձնապէս արժէր ընդգծել։

Որ հայերը Թիֆլիսում ամեն կերպ խուսափում էին ընդհարումներից, սա բացատրութեան կարօտ չէ։ Ընդհարումներից խուսափում էին նաև Թիֆլիսի թուրքերը. նախ՝ որ նրանց մէջ էլ քիչ չէին ընդհարումների կորստաբեր հետևանքները ըմբռնող անհատներ և երկրորդ՝ թւական չափը թեյաղրում էր նրանց խուսափել գերակշիռ ուժից։

Սրանով էլ պիտի բացատրել այն երևոյթը, որ նոյեմբերի 18-ին Գանձակում սկսւած ընդհարումն արձագանք չէր գտնում Թիֆլիսում։

Այս հանգամանքը հանգիստ չէր տալիս Թիֆլիսի սև հարիւրակային հերոսներին։

Համառուսական պօստ-հեռագրական ընդհանուր գործադուլը շարունակւում էր, զբաղեցնելով հասարակական միտքը։ Այդ

գործադուլը տարածելով Ռուսաստանի բոլոր ծայրերում, հրապարակ էր բերել մի այլ ահաւոր գործադուլի խնդիր։ Ցամառ կերպով պատրաստւում էր համառուսական երկաթուղիների երկրորդ գործադուլը։ Ռուսաստանի մի ծայրից մինչև միւսը եռանդուն կերպով արծարծւում էր հոկտեմբերեան մեծ գործադուլի երկրորդ փորձը։

Ահա մի նոր փոթորիկ յեղափոխւող Ռուսաստանի ծոցում, մի նոր ահաւոր պայքար ուղղւած բիւրոկրատիայի դէմ։ Պարզ է, թէ որպիսի մի միտք զբաղեցնում էր հոգեվարքի հասած կառավարութեանն այսպիսի մի նեղ ճգնաժամին։

Այսպիսի ազդեցութիւններից ազատ չէր նաև Կովկասը, մանաւանդ Թիֆլիսը, ուր ամենից շատ և այն էլ մեծ թափով արձագանք էր գտնում Ռուսաստանի իւրաքանչիւր շարժումը։

Պէտք էր գալիք դէպքերը կանխատեսել, պէտք էր այդ դէպքերին հակակշիռ մի դրութիւն ստեղծել հէնց իրեն, աղմկող ժողովրդի ծոցում։ Իսկ դրա համար նիւթ շատ կար։ Ամեն անգամ հրապարակ էր քաշւում հայ-թուրքական ընդհարումը։ Այստեղ էլ, ինչպէս և Բագւում, թուրք անգիտակ մասսան հրապարակ բերւեց որպէս սև հարիւրակային հակադիր մի ուժ գործադուլների դէմ։

Եւ մինչդեռ Գանձակի արիւնոտ անցքերի սարսափի ազդեցութեան տակ Թիֆլիսում գերագոյն ճիգեր էին թափւում ժողովրդի տրամադրութիւնը խաղաղ պահելու համար, նոյեմբերի 22-ին, երեկոյեան ժամը 7-ին, Շէյթան-Բազարում հայերի և թուրքերի մէջ տեղի ունեցաւ հրացանաձգութիւն։

Ի՞նչից առաջացաւ այդ հրացանաձգութիւնը, ո՞վ առաջինը պատճառ դարձաւ ընդհարման, մինչև այժմ էլ պարզւած չէ. սակայն փաստ է այն, որ մութ ու կասկածաւոր մարդիկ մի շաբաթից ի վեր վխտում էին երկու ժողովուրդների այդ շփման տեղում։

Նոյեմբերի 22-ի երեկոյեան սկսւած հրացանաձգութիւնը գիշերւայ ընթացքում վերսկսւեց մի քանի անգամ, երկու կողմերից տանելով մի քանի զոհեր։

Հրացանաձգութիւնը հայերի և թուրքերի մէջ տներից և պատշգամբներից վերսկսւեց նաև նոյեմբերի 23-ի առաւօտեան, որն ընդմիջումներով շարունակւեց մինչև ցերեկւայ ժամի 3-ը, ունենալով նոր զոհեր։ Լրագրների տեղեկութիւններով զոհերի թիւը հասնում էր 42-ի, որոնց մեծ մասը թուրքեր էին, իսկ փոքր

մասը՝ հայեր, վրացիներ և ռուսներ *)։

Ահա այդ ժամանակ միայն քաղաքում յայտնուեցին զօրքեր, այն էլ կարծէք լոկ ձևի համար։

Այդ ժամանակ իր հեղինակաւոր ձայնով հրապարակ եկաւ նաև սոցիալ-դեմոկրատիան։ Հայ-Թուրքական ընդհարումներից վնասւում էին նաև նրա, ինչպէս և ամբողջ երկրի շահերը։

Երկաթուղու բանուորները գործադուլ յայտարարելով և Նախալովկայում մի մեծ միտինգ կազմելով, սպիտակ դրօշակներ պարզած անցան Թուրքի Մէյդանով, Շէյթան-Բազարով, Վարանցովի փողոցով մինչև Արրուզնի հրապարակը, ուր խաղաղութեան և համերաշխութեան անունից ճառեր խօսելով ցրուեցին։

Ըստ երևոյթին ընդհարումները պիտի որ դադարէին։ Ցանկանում էին այդ հայերը, ցանկանում էին և Թուրքերը, մանաւանդ որ Թիֆլիսի բանուորութիւնը գործադուլի միջոցաւ բողոքեց կառավարութեան բռնած դիրքի դէմ, բայց դարձեալ անպտուղ, խաղաղութիւնը 24 ժամ էլ չը տևեց։

Նոյեմբերի 24-ի առաւօտեան հայերի և Թուրքերի շփման շրջանում, աշղ Ջիւանու սրճարանի մօտ, մահացու կերպով վիրաւորուեցին երեք հայեր, որը և առիթ դարձաւ նոր ընդհարման։

Սոցիալ-դեմոկրատները տեսնելով իրենց ջանքերի ապարդիւն լինելը, նորից գործադուլ յայտարարեցին։

Այս ժամանակ տեղի ունեցաւ մի կօմեդիա։

Օրեայ խնդրի առիթով «Возрожденіе» լրագրի խմբագրատանը կազմուած յեղափոխական կուսակցութիւնների խորհրդակցութեան ժամանակ ներկայացաւ Թիֆլիսի ոստիկանապետ Ցիսը և մտքերի փոխանակութիւնից յետոյ համաձայնելով հայ-Թուրքական խաղաղացման գործը յանձնել սոցիալ-դեմոկրատներին, խոստացաւ միջնորդել փոխարքայի մօտ կառավարչական պահեստից տալու 500 հրացան։

Ոչ ոք չէր հաւատում, որ կառավարութիւնը զէնք կը տայ և հասարակական կարգերին հսկելու համար կը հրաւիրի մի յեղափոխական մարմնի. բայց անհաւատալին հաւատալի դարձաւ

*) Նոյեմբերի 22 25-ը Միքայէլեան հիւանդանոց էին տարել 23 ըսպանուած, որոնցից 11-ը՝ Թուրք, 7-ը՝ հայ, 2-ը՝ վրացի, 1-ն՝ ռուս, 2-ն՝ անյայտ և 39-ը վիրաւորներ, որոնցից 22-ը՝ Թուրք, 17-ը՝ հայ, իսկ 10-ը՝ վրացի և ռուս։

և փաստը կատարուեց։ Այդ խաղը շատերի համար մութը մնաց. հազարաւոր զօրքերի կողքին Թիֆլիսի հայ-թուրքական ընդհարումը խաղաղացնելու գործը յանձնւում էր մի յեղափոխական կուսակցութեան։

Նոյեմբերի 25-ին սոցիալ-դեմօկրատների դրուժինան դուրս եկաւ քաղաքի կարգը պաշտպանելու կառավարչական զէնքով կրծքներին սպիտակ, խաչաձև կտորներից նշաններ կպցրած։ Այդ դրուժինայի մի մասն անցաւ հայ-թուրքական սահմանների վրա հսկելու համար, իսկ միւս մասը կարգերով տեղափոխում էր քաղաքի մէջ երթևեկող թուրքերին այս և այն տեղ։ Չը մոռանանք յիշել, որ զինուելու և կրծքներին որոշ նշաններ կրելու իրաւունք ստացել էին նաև միւս յեղափոխական կուսակցութիւնները, սակայն առանց կառավարչական զէնքերի։

Եւ մինչդեռ յեղափոխական յաղթանակի այս անհաւատալի ակտով հայ-թուրքական հաշտութիւնը համարւում էր ապահովուած, տեղի ունեցան հետևեալ բնորոշ միջնադէպերը։

Թիֆլիսի զինուորական շրջանները անբաւական մնալով փոխարքայի այդ կարգադրութիւնից և վիրաւորական համարելով իրենց համար դեմօկրատների զինուած ներկայութիւնը, հարց դրին զինաթափ անել նրանց և զօրքերը դեմօկրատների մի խմբի ձեռքից բռնի կերպով խլեցին զէնքերը. խլեցին զէնքեր նաև մի խումբ դաշնակցականների ձեռքից, թէև ադմինիստրացիայից այդպիսի կարգադրութիւն չը կար։

Մինչդեռ զինուորականների կողմից տեղի ունէր այս կարգի արշաւանք, մի այլ ձևի արշաւանք սկսած էր հայ-թուրքական սահմաններում հսկող դէմօկրատների դէմ։

Նոյեմբերի 26-ի գիշերը մի թուրքի թէյատան մէջ դեմօկրատների պահակների խմբից գողացուեցին 5 հրացան և երկու հոգի էլ վիրաւորուեցին։

Մի նոր դաւադրութիւն դեմօկրատ պահակների դէմ տեղի ունեցաւ նոյեմբերի 27-ին, որի ժամանակ վիրաւորուեցին երկուսը, իսկ մէկը, Սիլուեստրին ազգանունով, սպանուեց։

Ահա դաւադրական այս մի քանի փորձերն ստիպեցին դեմօկրատներին զէնքերը վեր դնել և քաշուել ասպարէզից, յայտնելով հայերին իրենց անզօրութիւնը սկսած պրովակացիայի դէմ։

Այսպէս, մի կողմից դեմօկրատները զէնքերը վեր դրին,

իսկ միւս կողմից Բօրչալուի գաւառի Թուրքերը բաւական խոշոր խմբերով սկսեցին քաղաք մտնել առանց դիմադրութեան հանդիպելու ճանապարհների վրա հսկող զօրքերի կողմից։

Նոյեմբերի 28-ը խաւար ուժերի յաղթանակի մեծ օրն էր։ Թիֆլիսին յատուկ մոայլը այդ օր իջել էր քաղաքի վրա մի հոգեմաշ ծանրութեամբ։ Բօտանիկական այգու դիրքերի վրա կանգնած ռուս զինուորական պահակները երեսները դարձրած դէպի քաղաքի դուրսը համազարկեր էին տալիս։ Մինթէ Բօրչալուից Թուրքերը խուժում էին քաղաք . . . Տալիս էր ամեն մէկն այս հարցը։ Բայց խուժումն չը կար։ Ապա ինչո՞ւ համար էին այդ բոլորը . . .

Դեմօկրատներից զէնքերը յետ էին խլում, Բօրչալուից քաղաք մտնող Թուրքերին արգելք չէր դրուում, իսկ այժմ էլ պահակներն առանց առիթի կրակում էին խմբերով։

Այդ համազարկերը աննպատակ չէին, նրանք իրենց դերը կատարեցին։ Շուտով հրացանի պայթոցներ լսուեցին Թուրքերի դիրքերից, հառնդի եկան նաև հայերը և սկսեց իսկական ընդհարումն իր սարսափներով։ Ամբողջ օրը Սուրբ Գէորգի, Խարփուխի և Թուրքական Թաղերի մէջ անընդհատ որոտում էին հրացաններ։ Այդ օրն ընկան նորից նորանոր զոհեր, բայց թէ որքան յայտնի չեղաւ։

Մթնեց վերջապէս նոյեմբերի 28-ը—այդ արիւնոտ օրը, բացուեց 29-ի առաւօտը աւելի ևս չարագուշակ մոայլով, կէս օր եղաւ, յուզմունքը դեռ կար՝ ահա և հրդեհ . . . Բազազխանայի դիմացի քարվանսարայում ծուխն ու բոցը երկինք բարձրացաւ, պատկերը կատարեալ եղաւ։

Հրդեհաշէջների խումբը կրակի տեղին հասնելով յետ դարձաւ՝ պատճառ բերելով Թուրքերի Թաղից տեղացող գնդակների տարափը։ Հրդեհն սկսեց աւելի և աւելի մեծ ծաւալ ստանալ։ Հրդեհելու փորձեր տեղի ունեցան նաև հայկական Թաղի մի քանի տեղերում. մութ ուժերը աւելի ևս հառնդի եկան։ Շփոթ տիրեց քաղաքին. հրդեհի շրջանից դէպի քաղաքի հեռաւոր Թաղերն ըսկսեց մի արտասովոր գաղթ։ Այդ խառը դրութիւնից օգտուելով գլուխ բարձրացրեց կողոպուտը։ Մի խօսքով Թիֆլիսի այդ մասում տիրեց անիշխանութիւնը. . . Եւ երբ երեկոյ եղաւ և հրդեհը մեծ ծաւալ ընդունելով Մէյդանի, Վօրօնցովի, Կրասիլնայա և

Կրէպաստնոյ փողոցների շրջանում արդէն բոցավառւեց Խարազեանի, Ցարութիւնեանների, Քէփինեանների, Զախարբէգեանի, Տէր-Ցակովբեանի, Աբամէլիքի, Թուլաեւի, Թէմուրազեանի, Թոփչիբաշևի և մի քանի այլ տներ, այդ ժամանակ միայն հրդեհի տեղը եկան զօրքեր և հրդեհաշէջների խումբը՝ հրդեհի առաջն առնելու համար։ Բայց ո՞ւր, արդէն բազմաթիւ շէնքեր այրւել էին և բազմաթիւ ընտանիքներ զրկւել ապրուստի միջոցներից։

Այստեղ էլ ադմինիստրացիան չքմեղ ձևացաւ։ Հայ-թուրքական ընդհարումը կառավարչական զէնքով զինուած սոցիալ-դեմոկրատիան էլ չը կարողացաւ կանգնեցնել. բիւրոկրատիան մի անգամ ևս ելք գտաւ. նրա կեանքը մի օրով էլ երկարեց. անմեղ արիւնը մի անգամ էլ հոսեց. . . Թիֆլիսին այլ ևս վտանգ չէր սպառնում։



ԿՈՂՈՊՈՒՏՆԵՐԸ ԲՈՐՉԱԼՈՒԻ ԳԱՒԱՌՈՒՄ

ՆՈՅԵՄԲԵՐ ԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905 Թ.

Թիֆլիսի նահանգի ինը գաւառներից միմիայն մէկում—Բորչալուում—տեղի ունեցան կողոպուտներ և աւերումներ և այդ ունէր իր պատճառները։

Ինչպէս վերն առաջ բերած վիճակագրութիւնից մենք տեսանք, Թիֆլիսի նահանգում թուրք ազգաբնակութեան թիւը հասնում է 113 հազարի, որից Թիֆլիսի գաւառում ապրում են 20 հազար հոգի, հետը հաշուած նաև բուն Թիֆլիսի թուրքերին, 35 հազարն ապրում են Ախալցխայի գաւառում, 38 հազարը՝ Բորչալուում, իսկ 20 հազարը՝ մնացեալ վեց գաւառներում. հետեւապէս թուրքերի ամենամեծ թիւն ապրում է Բորչալուում։

Եթէ ի նկատի ունենանք և այն հանգամանքը, որ Բորչալուն համեմատաբար մեծ թիւ կազմող թուրք ազգաբնակութեամբ սահմանակից է Գանձակի նահանգի Ղազախ գաւառին, ուր հայ-թուրքական ընդհարումները այնքան մեծ ծաւալ ընդունեցին, այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչու Բորչալուն հանդիսացաւ կողոպուտների և աւերումների բեմ։

Բորչալուի գաւառում հայերի թիւը հասնում է 45 հազարի, սակայն այս հանգամանքն էլ արգելք լինել չը կարողացաւ թուրքական կողոպուտներին։

Չը գիտենք, ինչու Բորչալուեցի թուրքերը մի արտասովոր սարսափ ունեն տարածած առանձնապէս Թիֆլիսի հայերի վրա։ Այդ սարսափի մասին գաղափար կազմելու համար պէտք էր լինել Թիֆլիսում ընդհարումների ժամանակ։ Ամբողջ քաղաքը մի անօրինակ ահ ու դողով ընդունում էր իւրաքանչիւր լուր, որը գու-

ժում էր Բօրչալուեցի Թուրքերի խուժման մասին. և Թիֆլիսեցի հայն այդ բառը լսելիս, վախկոտ նապաստակի պէս ականջները խլշկոտացրած, մի անկիւն էր փնտռում գլուխը թագցնելու համար։

Բօրչալուի Թուրքերը Թիֆլիս մտան և այնտեղից դուրս եկան դատարկաձեռն, սակայն նրանք դատարկաձեռն չը մնացին Բօրչալուի մէջ։

Նոյեմբերի 26-ին Թուրքերը յարձակուեցին Բաշկեչէտ դուխօբօրների գիւղում առևտրով պարապող հայերի վրա և կողոպտեցին մի քանի տասնեակ հազարների ապրանքներ, տանելով նաև 300-ի չափ տաւար և ոչխար։ Հայերը պաշտպանութիւն չը գտնելով ոչ դուխօբօրներից և ոչ էլ պրիստաւի կողմից, փախան գիւղից բոլորովին պլոկուած։

Նոյն օրը Թուրքերը յարձակուեցին և կողոպտեցին դուխօբօրների Ղարաքլիս գիւղում առևտրով պարապող հայերին՝ տանելով մեծ գումարի ապրանքներ և 350 հատ ոչխար։ Հայերն այստեղ էլ դուխօբօրներից պաշտպանութիւն չը գտնելով փախան բոլորովին պլոկուած։ Այս շրջանում կողոպտուեցին նոյնպէս մի քանի արհեստաւոր հայեր։

Աւելի վատթար վիճակ ստեղծուեց Եկատերինենֆելդի շուրջը եղող հայ գիւղացիների համար։ Կիանէթի, Ակաուրտի, Բատեւանի և Եկատերինենֆելդի հայերը ձգելով տուն ու տեղ փախան Թիֆլիսի գաւառի Դաղէթ-Խաչէն, Շամշուլդա և Սամդարէթ գիւղերը։ Դատարկուած տները ենթարկուեցին կողոպուտի, մանաւանդ Կիանէթում, ուր հորերում պահած ցորենն անգամ հանելով՝ որը տարել և որն էլ շաղ տուել, փչացրել էին ճանապարհներին։

Նոյնանման կողոպուտի ենթարկուեց նաև Բօսլէպ գիւղը Բաշկեչէտի շրջանում, ուր հայ և վրացի ապրում են խառը։ Գիւղացիները հազիւ կարողացան փախչել Գօրնջուկ հայ գիւղը և գլուխ ազատել։ Բօսլէպից Թուրքերը կրեցին, տարան այն բոլորը, ինչ որ կարելի էր։ Այսքանով չը բաւականացած Թուրքերը շարունակեցին ասպատակել շրջանը, որ և Բօսլէպ գիւղի մօտ նոյեմբերի 30-ին ընդհարում տեղի ունեցաւ զօրքերի և նրանց մէջ, որի ժամանակ վերջինները բաւական զոհեր ունեցան։

Այս շրջանում յարձակումներից ազատ չը մնացին նաև հայ-վրացաբնակ Բալիջի և Դումանիս գիւղերը. այս երկու գիւղերից Թուրքերը քշեցին բաւականաչափ կենդանիներ։

Հանգիստ չէր և Լոռին։ Այդ շրջանի հայ-կաթոլիկաբնակ երկու գիւղեր, Ղարաքիլիսա և Շիշթափա, նոյնպէս ենթարկուեցին յարձակման, որոնցից թուրքերը քշեցին նոյնպէս բաւականաչափ տաւար և ոչխար։

Նոյեմբերի 27-ին զինուած թուրքերի մի մեծ բազմութիւն, առաջնորդութեամբ Բօրչալուի մի քանի ազդեցիկ թուրքերի, եկաւ պաշարեց Շուլաւէրը—գաւառի այդ կենտրոնավայրը՝ հայերին պատերազմի կանչելով։ Սարսափը տիրեց Շուլաւէրին։ Ադմինիստրացիան փոխանակ կտրուկ միջոցների դիմելու, ստանձնեց միջնորդի դեր, ինչպէս նա այդ անում էր ամեն տեղ։ Երկու օրւայ պաշարումից յետոյ թուրքերը յետ քաշուեցին, համոզուած լինելով, որ Շուլաւէրի վրա գնալն այնքան էլ հեշտ բան չէ։

Սակայն մեր առաջ բերած կողոպուտները չնչին, աննշան բաներ են համեմատութեամբ այն աւերումների, որոնց ենթարկուեցին մի շարք կալուածներ և պանրագործարաններ այդ գաւառում։

Բօրչալուի գաւառն իր կլիմայական պայմաններով և հրաշալի արօտատեղիներով իր ծոցում զարգացրել է մի շարք պանրագործարաններ, ագարակներ և գիւղատնտեսական ձեռնարկութիւններ։

Այսպէս, այդ շրջանում գտնւում են Մանթաշեանի, Արամեանի, Ծատուրեանի, Միրզոեանի, Վարդ-Պատրիկեանի և Էնիկոլոփեանի մշակւած ընդարձակ կալուածները. Շաղինեանի, Քալանթարեանի, Մէլիք-Բախտամեանի, Յակովբեանի և Մատթէոսեանի պանրագործարաններն իրենց բոլոր պարագաներով։

Կապիտալը, ձեռնարկող ոգին և աշխատանքը միացած տարիների ընթացքում ստեղծել էին Բօրչալուի հարուստ բնութեան ծոցում մի նախանձելի կուլտուրա։

Ահա կուլտուրական այս ձեռնարկութիւնները կրեցին ամենամեծ հարւածը։

Ընդարձակ շինութիւններն այրուեցին, շարժական ահագին գոյքեր կողոպտուեցին, մեծ քանակութեամբ պանիր և այլ մթերքներ թալանի մատնուեցին. հարիւրաւոր ընտիր կովեր, երկրագործական գործիքներ և այն բոլորը, ինչ որ ձեռք էր բերուել տարիների ընթացքում, յափշտակուեցին։ Մի խօսքով հարիւր հազարներ արժեցող այդ կուլտուրական ձեռնարկութիւններն աւերուեցին։

Այդ շրջանի մի քանի օտար ֆիրմաներ ազատ ճեռացին աւե-

ռումներից. դրանցից մէկն էր Կուչենբախը, որի ռնած դիրքը դէպի հայերը, ասում են, Թուրքերին դուր գալու համար, հասնում էր այլանդակութեան։

Ահա, այս շրջանն ուղարկուեց Թիֆլիսի չեզոք անձնաւորութիւններից կազմուած մի խաղաղարար յանձնաժողով երկու ժողովուրդների մէջ բարեկամական կապեր հաստատելու համար։ Սակայն այդ յանձնաժողովը յայտնի դարձաւ նրանով, որ նա իր միսսիան հասկացաւ գաւառի վարչական կենտրոնը Շուլաւէրից Եկատերինենֆելդ փոխադրելու միտքը արծարծելում։

Ցուցակ Բօրչալուի գաւառի այն գիւղերի, որոնց ժողովուրդը փախել կամ խոշոր ջնջաններ է կրել յարձակումների ժամանակ։

№№	ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Փախած	Կողոպտ.
1	Կիանէթ .	փախ.	կող.
2	Ակաուրտ .	»	»
3	Բատևանի .	»	»
4	Եկատերինենֆելդի հայերը .	»	»
5	Բօսլէպ .	»	»

Երկու տարուայ հայ-Թուրքական ընդհարումների ժամանակ աւերուել և խոշոր վնասներ կրել են հետևեալ գաւառներում, հետևեալ քանակութեամբ գիւղեր և ընտանիքներ։

№№	ԳԱՒԱՌՆԵՐ	Հայաբնակ		Թուրքաբնակ		Բոլորը	
		Գիւղ	Տուն	Գիւղ	Տուն	Գիւղ	Տուն
1	Նախիջևանի Երև. նահ.	29	2205	2	630	31	2835
2	Շարուր-Դար. » »	11	1068	1	100	12	1168
3	Երևանի » »	9[3])	318	7	305	16	623
4	Էջմիածնի » »	2	52	9	458	11	510
5	Շուշու Գանձ. »	7	333	12	984	19	1317
6	Ջիւանշիրի » »	9	655	17[3])	840	26	1495
7	Ջիբրայիլի » »	14[1])	434	5[3])	43	19	477
8	Զանգեզուրի » »	15	317	43[1])	1495	58	2312
9	Գանձակի » »	7	67	14[11])	—	21	67
10	Ղազախի » »	6	634	23	1065	29	1699
11	Արէշի » »	5	527	—	—	5	527
12	Բօրչալուի Թիֆ. »	5[5])	—	—	—	5	—
	Ընդամենը	119	7110	133	5920	252	13030

Այսպիսով, երկու տարուայ ընթացքում հայ-Թուրքական ընդհարումների պատճառով աւերուել ու վնասուել են 252 գիւղ, որից հայաբնակ են 119-ը, իսկ Թուրքաբնակ՝ 133-ը։ Վնասուած ընտանիքների Թիւը եղել է 13,030, որից հայեր՝ 7,110, իսկ Թուրքեր՝ 5,920. սակայն այս բոլորը չէ. ծանօթութիւնից տեսնում ենք, որ այս Թուերի մէջ չեն մտել վնասուած 9 հայաբնակ և 24 Թուրքաբնակ գիւղերի ընտանիքների Թուերը։ Եթէ այդ 33 գիւղերի ընտանիքների Թուերը հաշուելու լինենք 50-ական և աւելացնենք հայ ընտանիքների Թիւը 450-ով, իսկ Թուրքերինը՝ 1,200-ով, կըստանանք հայ ընտանիքների Թիւը 7,560, իսկ Թուրքերինը՝ 7,120. ընդամենը 14,680։ Բացի այս, ընդհարումների բեմ հանդիսացել են Բագու, Թիֆլիս, Շուշի, Գանձակ, Երևան, Նախիջևան և Ղազախ քաղաքներն, ուր զրկանքների ենթարկուած ընտանիքների Թիւը դարձեալ հազարների է հասնում։

---

[3]), [1]), [5]), [3]), [3]), [1]), [11]) այս Թուերը ցոյց են տալիս Թէ յիշեալ գաւառներում քանի վնասուած գիւղերի ընտանիքների Թուերը՝ յայտնի չը լինելու պատճառով, չեն մտել առաջ բերած գումարների մէջ։

ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԷԿԶԵԿՈՒՑԻԱ

Բազմաթիւ գլուխներ մենք նուիրեցինք այն աղէտների նկարագրութեան, որոնք տեղի ունեցան Կովկասի իրականութեան մէջ հայ-թուրքական ընդհարումների պատճառով երկու տարի շարունակ։

Սակայն մենք չարձանագրեցինք աղէտների այն շարքը, որոնց ենթարկւում էր աւերւած ժողովուրդը էկզեկուցիաների պատճառով ընդհարումների միջոցին։

Երկու ժողովուրդներ կուում, կողոպտում, սպանում էին միմեանց, իրանք էլ չը հասկանալով ինչու համար. երկու ժողովուրդներ հրդեհում, աւերում էին փոխադարձաբար գիւղեր և գիւղախմբեր, իրանք էլ չը հասկանալով ո՞ր աներևոյթ ձեռքի դրդմամբ։

Եւ երբ տներ աւերւում, գիւղեր կողոպտւում, ամայի էին դառնում, այն ժամանակ յայտնւում էին պատժողական արշաւախմբերը թնդանօթներով և աւերումներից ազատ մնացած գիւղերը պատժի ենթարկում։

Յանցաւոր համարւած գիւղից նախ պահանջւում էր, որպէս տուգանք, խոշոր գումարներ, ապա թնդանօթի բերանը դարձնելով դէպի գիւղ ռմբակոծւում էին լաւ շէնքերը. դրանից յետոյ զօրքի համար պահանջւում էր առատ ուտեստ և ապա, եթէ գիւղի յանցանքը համարւում էր ծանր, իսկ արշաւախմբի առաջնորդը լինում էր դաժան մարդ, տեղի էր ունենում կողոպուտ, թալան, ծեծ, բռնութիւն, բռնաբարութիւն և ամեն տեսակ բարբարոս գործողութիւններ կօզակների ձեռքով։ Իսկ երբ կօզակի սանձը բաց է թողնւում, նա աւելի ևս անզուսպ է, քան նոյն իսկ տաճիկ զափտիէն։

Հայ-թուրքական ընդհարումներից ի վեր թէ քանի՞ քանի՞ գիւղեր այս և այն գաւառում ու շրջանում ենթարկւեցին տուգանքների, ռմբակոծութեան և նման ճնշումների, դրանց հաշիւ չը կայ։ Ղազախի, Գանձակի, Ջիւանշիրի, Շուշու և Զանգեզուրի գա-

ւառներում բազմաթիւ են այդօրինակ բռնութիւնների ենթարկուած գիւղերի թիւը *)։ դրանց անունները մենք առաջ չենք բերի։

Բայց մենք առաջ կը բերենք ոմբակոծութեան, էկզեկուցիաների և սոսկալի բարբարոսութիւնների այն շարքը, որ տեղի ունեցաւ 1905 թ. մարտ ամսին Շուշու գաւառում Վարանդայի աւելի քան 15 հայ գիւղերի վերաբերմամբ։ Գաղափար կազմելու համար, թէ ո՞րպիսի աղէտ հանդիսանում էր նոյն ինքը կարգի պաշտպան արշաւախումբը, կը բերենք նրա գործողութիւններից մի քանի մանրամասնութիւններ։

Էկզեկուցիայի ենթարկուած գիւղերն էին՝ Աւետարանոց, Շէխեր, Սարգսաշէն, Թաղավարդ, Թաղլար, Տող, Տումի, Ազոխ, Հաղորտի, Սօս, Գիւնէյ-Ճարտար, Ղուզէ-Ճարտար, Խնուշինակ, Գիշի և այլն։

Այս շրջանն ուղարկուեց աւելի քան 400 զինուորներից և կազակներից բաղկացած արշաւախումբը չորս թնդանօթներով։

Արշաւախմբին առաջնորդում էին՝ փոխ-գնդապետ Վիվերնը, սպաներ՝ Բիրիւլկինը և Հաջիևը, գաւառապետ Ֆրէյլիխը, հաշտարար միջնորդ Երմօլաևը և պրիստաւ Ֆիտին։

Արշաւախումբը մօտենալով յիշեալ գիւղերին պահանջում էր յանձնել եղած զէնքերը, յայտնի գումարի տուգանք և խռովարար մարդկանց և այդ բոլորը կատարելու համար տրւում էր որոշ ժամանակ, որից յետոյ տեղի էին ունենում ոմբակոծութիւն, տների հրդեհումն, ծեծ, տանջանք, բռնաբարութիւն, կողոպուտ ու աւեր։

Այսպէս, Գիշի գիւղը վճարեց 500 ր. տուգանք, ենթարկուեց թնդանօթային 12 հարուածի, որից առաւելապէս փնաստեց Սարգիս Մահտեսի-Բաբայեանի տունը, և գանակոծուեցին մի շարք մարդիկ, որոնցից Սայի Ղահրամանեանը անկողին մտաւ, իսկ Աստուր Քամալեանի գլուխը պատուեց կարի մեքենայի ծանր հարուածից։

Խնուշինակ գիւղում Թէոս Այդինեանի հոյարկանի գեղեցիկ տունը նախ ոմբակոծուեց և ապա հրդեհուեց, որի բոցերին զոհ գնաց ամբողջ շէնքը։ Մի այլ գեղեցիկ տուն կարելի եղաւ փրկել

---

*) Նման բռնութիւններից ազատ չէին նաև թուրքերը. մենք տեսանք նոյն իսկ գիւղեր, ինչպէս էին՝ Ջահրին, Մափրաւանդը և Ղարափիրումը, որոնք աւերուեցին զօրքերի ձեռքով։

Ռուսաստանում ընդունած մի շատ սովորական միջոցով։

Ղուզէ-Ճարտար գիւղը վճարեց 600 ր. տուգանք, ոմբակոծուեց Միրզա Սարգսեանի տունը, հրդեհուեցին Վանի և նրա եղբայր Միքայէլ Քոչարեանների գեղեցիկ տները. ժողովուրդը փախաւ սարերը. կօզակները մտան գիւղը, վերցրին գինի, գարի, հաց, իւղ, պանիր և այլ մթերքներ. ծեծուեցին շատ մարդիկ։ Այստեղ բռնաբարուեց մի 60 տարեկան ծերունի։

Գիւնէյ-Ճարտար գիւղի կրած նիւթական վնասները և բարոյական տանջանքները սոսկալի էին. մարդ չէ հաւատում իր ականջներին, երբ լսում է այն բոլորը, որոնք անցան այդ գիւղի գլխով։ Ժողովուրդը լսած լինելով Սօս գիւղում կատարուած բարբարոսութիւնների մասին, դեռ արշաւախումբը գիւղ չը մտած, սարսափահար փախաւ սարերն ու ծմակները։

Գիւղը վճարեց 1200 ր. տուգանք։ Աղաջան Պետրոսեանի և Միքայէլ Հայրապետեանի տներն ոմբակոծուեցին. գիւղում մնացած տղամարդիկ հնթարկուեցին ծեծի և տանջանքների։ Աւելի քան 400 զինուորներ և կօզակներ ապրեցին գիւղում ամրողջ վեց օր. հարուստ Գիւնէյ-Ճարտարի գինու կարասները դատարկուեցին և ապա կոտրատուեցին, գարու և ցորենի հորերը բացուեցին և անխնայ ձիերի կերակուր դարձան ու ոտի տակ դնացին. հարուստ Ճարտարի տներում պաշար չը մնաց, բոլորը լափուեց և կողոպտուեց։ Ենիչէրիները մորեխի պէս աղում էին պատահածը։ Սարերն ու ծմակները փախած ժողովուրդը ցրտից և սովից սոսկալի տանջանքներ կրեց։

Երկու երեք օրւայ ծնած, անկողնից դեռ ևս չազատուած կանայք 35 տարեկան Թալագիւլ Պետրոսեանը և Գէորգ Մայիլեանի կինը շալակեցին իրենց նորածինները և փախան անտառ։

Մարիամ Պետրոսեանը, 33 տ., Մինա Պօղոսեանը, 29 տ., Բագիւմ Յարութիւնեանը, 28 տ., Մինա Պետրոսեանը, 32 տ. և Անուշ Սուլէյմանեանը, 24 տարեկան, ծնեցին ծմակների մէջ։

Մարգարիտ Պետրոսեանը, 30 տ. վիժեց երեխան նոյնպէս ծմակում։

Հայ կինն ազատ չը մնաց մինչև անգամ բռնաբարութիւնից, տաճկական այդ զազիր գործողութիւնից։ Այդպիսի մի զոհ էր Սարգիս Կարապետեանի կինը—երկու օրւայ ծնած 30 տ. Սառան, որը չէր կարողացել անտառ փախչել։ Բայց քանիսը կային, ո-

բոնք հրաժարուում էին հլապարակ հանել այդպիսի անարգանքը։

Գիւնէյ-Ճարտարի կրած գրկանքներից վատթարագոյնը վիճակւած էր Սօս գիւղին։ Առանց արցունքի անկարելի էր լսել այդ գիւղին հասած տառապանքների պատմութիւնը։ Արշաւախումբն այստեղ մնաց երկու օր. գիւղը թողուեց կօզակների լիակատար տրամադրութեան տակ։ Տները կողոպտուեցին, պաշարը լափուեց և ոտի տակ գնաց, շատ կահ-կարասիներ ջարդ ու փշուր եղան. յափշտակուեցին կանանց զարդարանքները. բազմաթիւ մարդիկ ենթարկուեցին ծեծի և սոսկալի տանջանքների։ Եւ որ ամենազզրելին է, շատ կանայք և օրիորդներ ենթարկուեցին լկանքների ու բարբարոսութեան։

Այդպիսի զոհերից էին՝ Մարիամ Յովհաննէսեանը, 25 տ., Մինա Բալայեանը, 35 տ., Նանագիւլ Դաղասեանը, 38 տ., Աննա Սարգսեանը, 40 տ., Շուղի Սարգսեանը, 42 տ., Մինա Գասպարեանը, 45 տ., Թութի Գասպարեանը, 50 տ., օրիորդներ՝ Քօլա Յարութիւնեանը, 18 տ. և Նարաթ Դանելեանը, 12 տ.։ Այս վերջինը – մի հիւանդոտ օրիորդ, բռնաբարուեց ծերունի պապի ներկայութեամբ, որը կօզակներին դիմադրելու համար սոսկալի ծեծի տակ արիւնհոսութիւն ստացաւ ստամոքսում։

Սակայն այս բոլորը նսեմանում են այն ողբերգութեան առաջ, որը տեղի ունեցաւ մի անօրինակ բռնաբարութեան ժամանակ։

Ենիչէրիները որդու ներկայութեամբ փորձեցին բռնաբարել 60 տարեկան Նուբար Հայրապետեանին. պատւախնդիր որդին— 30 տար. Յովհաննէսը, չը կարողանալով տանել մի այդպիսի անարգանք, դիմադրեց ենիչէրիներին։ Գազան կտրած կօզակները ծեծի տակ առան պատւախնդիր որդուն. սոսկալի հարւածների տակ ջարդ ու փշուր եղան նրա գլուխը, թևերն ու կողերը, որից յետոյ նա ապրեց երկու օր, բայց տանջելու համար։ Ռուս կօզակի ձեռքով անարգւած մօր պատիւը պաշտպանող որդին սպանւում էր ծեծի տակ։

Ահա, այսպիսի փոթորիկներ եկել անցել էին նաև Աւետարանոց, Շէխեր, Սարգսաշէն, Թաղավարդ, Թաղլար, Տող, Տումի, Ազոխ, Հաղորտի գիւղերի վրայով։

Տող գիւղում ռմբակոծութիւնից այրւեց այրի Սօփիա Պօղոսեանի տունը, իսկ Յարութիւն Մուսայէլեանի եոյարկանի

տունը ճոթեղէնի խանութի և ցորենի ամբարների հետ միասին հրդեհուեց նաւթոտ լաթերով։ Բաբա Աթայեանին երկու անգամ նետեցին կրակի մէջ, սակայն նա ազատուեց հրաշքով։

Այս գիւղում սոսկալի ծեծի ենթարկուեցին 40-ի չափ տղամարդիկ, որոնցից մահացու կերպով՝ Սարգիս Բարսեղեանը, Գաբրիէլ Մուսայէլեանը, Յարութիւն Դանielեանը և Ալէքսան Գրիգորեանը։

Այս նոյն գիւղում բռնաբարուեցին՝ Մայկօ Սարգսեանը, 17 տ.—երկու տարուայ ամուսնացած, Բալախանում Զիթչեանը, 25 տ., սրա չորս տարեկան աղջիկը—Նադեժդան սրտաճաք եղաւ մեռաւ, Մանուշակ Փուլեանը, 35 տ., Թամամ Սարգսեանը, 40 տ., Նախշուն Նադիրեանը, 50 ա., Ազիզգիւլ Ջաւադեանը, 55 տ., Մարիամ Աւանէսեանը 60 տ., օրիորդ Շուշանիկ Զախմախեանը, 14 տ., Մարիամ Հայրապետեանը, 16 տ.—նորահարս, Մարիամգիւլ Օհանջանեանը, 17 տ.—նորահարս, Թութի Աղաջանեանը, 35 տ., Սիրանոյշ Եգանեանը, 40 տ., Մէհրի Մովսիսեանը, 50 տ., Թամամ Ապրէսեանը, Մանուշակ Աբաղեանը և Բաջի Գրիգորեանը։ Իսկ թագուհի Քուշլեանցը վախից երեխան վիժեց։

Ազոխ*) գիւղում տեղի ունեցան նոյն կողոպուտներն ու վայրագութիւնները. սոսկալի ծեծի ենթարկուեցին բազմաթիւ մարդիկ, որոնցից մահացու կերպով՝ Աւագ Արզումանեանը, Յովակիմ Օհանեանը, Աւետիս Արզումանեանը և Առստամ Արզումանեանը։

Բացի այդ, բռնաբարուեցին՝ Սահրնազ Բալասանեանը, Նանա Բալասանեանը, 20 տ., Ազիզ Բալասանեանը, Խուրդա Վանէսեանը, Բախչագիւլ Յակոբեանը, 25 տ., Սահրնազ Հայրապետեանը, Մանուշակ Յարութիւնեանը, 28 տ., Սօնիչկա Զաքարեանը, 30 տ., Անթառամ Աւագեանը, 38 տ., Մալագ Մնացականեանը 40 տ., Մինա Գաբրիէլեանը, 45 տ. և Մարգարիտ Գրիգորեանը, 50 տ.։

Իսկ այրի Դաստա Թիւնեանը, 35 տ. բռնաբարուեց իր 3 և 9 տարեկան որդկերանց ներկայութեամբ, որից յետոյ անարգուած կինն ստիպուած եղաւ համբուրել կօզակների սեռական անդամները. Խոսրով Կարապետեանի բերանը ապականեցին նրա համար, որ նա կօզակներին չը յանձնեց իր կնոջը։

*) Տող և Ազոխ գիւղերի բռնաբարուած կանանց անունները մենք վերցրել ենք «Մի քանի գլուխ հայ-Թուրքական ընդհարումներից» գրքոյկից, իսկ միւս գիւղերինը հաւաքել ենք մենք անձամբ իրենց տեղերում։

Վարանդայի այդ 15 գիւղերի մարտիրոսագրութիւնը լի է այսօրինակ բարբարոսութիւններով, սակայն որոնց մի առ մի թուելն անկարելի էր։

Ականատես գիւղացիները վկայում են, որ Երմօլաևը քաջալերում էր կօզակներին և իր ձեռքով նաւթը շաղ տալով տների վրա հրդեհում նրանց։

Արշաւախմբի ղեկավարները մերժում էին հայերի առաջարկած ճաշը և ընդունում էին Մինքէնդի կոտորածների յանցագործ նախկին պրիստաւ Սադղ-բէկ Մէլիք-Ասլանովի հիւրասիրութիւնը, որն ապրում էր Տող գիւղում։

Ահա այն բարբարոսութիւնները, որոնք իրենց բոլոր մանրամասնութիւններով հաստատուեցին քանիցս նշանակուած պաշտօնական քննութիւններով, թէև յանցագործները մնացին անպատիժ և նոյն իսկ իրենց պաշտօնների մէջ։

Սակայն բարբարոսութիւնների այս անօրինակ ակտը մնաց անջնջելի էջ Կովկասի պատմութեան մէջ. Կովկասի ամբողջ մամուլն արձանագրեց իր էջերում այդ ակտը իր մանրամասնութիւններով. նա դարձաւ նիւթ այն հեռագրների, որոնք ուղարկւում էին նոյն իսկ բարձր ադմինիստրացիային։

Մի հեռագիր էլ մարտի 28-ին Շուշի քաղաքի հայ կանայք ուղարկեցին կայսրուհուն, որը մենք այստեղ առաջ ենք բերում մի քանի կրճատումներով։ Ահա նա։

«Մի ամբողջ տարուայ հայ-թուրքական կոտորածի արիւնահեղ սարսափներից յետոյ մեզ, հայերիս վրա պայթեց մի նոր և աւելի ահեղ արհաւիրք, որի նմանը մեր պատմութիւնը չէ յիշում նոյն իսկ մահմեդական տիրապետութեան ժամանակներից։ Մեր գաւառն է ուղարկուած կօզակների թուցիկ խումբը իբրև թէ հայերին և թուրքերին խաղաղեցնելու և նրանց մէջ կարգը և հանգստութիւնը վերականգնելու համար։ Այդ զօրախումբը, որի հրամանատարն է փոխ-գնդապետ Վիվերնը և որի գործողութիւնները ղեկավարում են գաւառապետ Ֆրէյլիխը և հաշտարար միջնորդ Երմօլաևը, գաւառի խաղաղ հայ ազգաբնակութեան վրա այնպիսի սարսափելի բաներ է գործադրում, որոնց նկարագրելը մարդու երակների մէջ արիւն է սառեցնում։ Զինաթափ անելու պատրւակով կօզակները մտնում են անպաշտպան ազգաբնակութեան տները, կողոպտում են բոլոր արժէքաւոր իրերը, ոչնչա-

ցընում և անպէտք են դարձնում ժողովրդի վերջին ստացուածքը, թափում են հացահատիկների սուղ պաշարը ցեխի մէջ և հէնց այդտեղ էլ ոտնահարում, տրորում են։ Գիւղացիներին գանակոծում և ենթարկում են ամենասոսկալի տանջանքների, որոնց շընորհիւ մահւան դէպքերը հազւագիւտ չեն և կատարում են այնպիսի շատ ուրիշ բաներ, որպիսիները չեն կատարւել նոյն իսկ թշնամու երկրում։ Եւ ահա դեռ ևս թուրքերի ձեռքով հրդեհւած գիւղերի և քաղաքների մխացող աւերակների առաջ երևում են նոր աւերակներ՝ կօզակների ձեռքով կատարւած և թուրքերի ձեռքից ընկած զոհերի դեռ ևս թարմ գերեզմաններին կից աւելանում են նորերը կօզակների շնորհիւ։ Եւ այդ բոլորը կատարւում են նրանց հրամանատարների ներկայութեամբ։ Բայց որ ամենասարսափելին է և որ կարող է վրդովեցնել խորապէս ամեն մի կնոջ, դա այն է, որ պղծւում է ամեն մի կնոջ համար ամենանուիրական սրբութիւնը, նրա կուսութիւնը։ Իրենց ամուսինների, եղբայրների և հայրերի աչքի առաջ բռնաբարւում են կանայք, քոյրերը և աղջիկները, սկսած 60 տարեկան պառաւներից մինչև 11 տարեկան օրիորդները։ Չեն խնայում նոյն իսկ երկունքով բռնւած կանանց անկողինները։ Այդպիսի արհաւիրքների են ենթարկւել մեր գաւառում սկսած մարտի 15-ից Թաղլար, Տող, Ազոխ, Տումի, Սօս, Ճարտար և այլն գիւղերը։ Դրա շնորհիւ բնակիչներից շատերն առանց ուշադրութիւն դարձնելու լեռների բուքի և սառնամանիների վրա, հարկադրւած էին փրկութիւն որոնել անտառներում, լեռներում ու լեռների խոռոչներում»։



ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հայ-Թուրքական ընդհարումների հէնց սկզբից, ինչպէս մենք տեսանք, ամեն տեղ կատարւում էին խաղաղարար թափօրներ, ժողովներ ու խորհրդակցութիւններ և նոյն իսկ միտինգներ երկու ժողովուրդների մէջ հաշտութիւն ձգելու նպատակով, սակայն ոչ մի տեղ կարելի չեղաւ տեղական խաղաղութիւն հաստատել. իւրաքանչիւր փորձ, որ տեղի էր ունենում այդ նպատակով, նոյն օրն էլ խախտւում էր։

Երկու ժողովուրդների մէջ հաշտութիւն կայացնելու այդ փորձերին մասնակցում էին նաև պաշտօնատար անձինք—այն է՝ ոստիկաններ, գաւառապետներ և նոյն իսկ նահանգապետներ։ Ցաճախ այդ նոյն պաշտօնեաները հանդիսանում էին ձեռնարկողներ յիշեալ փորձերին և վերցնում իրենց վրա միջնորդի ճարպիկ դերը տաղանդաւոր կերպով։ Բայց և այնպէս խաղաղութիւն չէր ընկնում, երկու ժողովուրդներ հաշտութեան չէին գալիս և ընդհակառակը դրութիւնը գնալով սրւում էր։

Այս տարօրինակ էր։ Այն ադմինիստրացիան, որն իր ձեռքում ունէր բաւական միջոց յանցաւոր կողմը զսպելու համար, թողնում էր այդ միջոցը և երկու կողմերի ներկայացուցիչներին ժողովելով միատեղ յայտարարում էր նրանց թշնամի կողմեր, և առաջարկում հաշտւել, ինքը ներկայանալով որպէս միջնորդ։

Խաղաղութեան այս ձևի փորձերից ամենամեծը տեղի ունեցաւ Թիֆլիսում փոխարքայի պալատի մէջ 1906 թ. փետրվար ամսին։

60 հայ և թուրք ներկայացուցիչներ—իւրաքանչիւր կողմից 30-ական մարդ՝ ընտրած Երևանի, Գանձակի, Թիֆլիսի և Բաքուի նահանգների հայ և թուրք ժողովուրդների կողմից, փետրվարի 20-ին դիմաւորեցին միմեանց փոխարքայի պալատի սպիտակ դահլիճում։ Փոխարքան անձամբ բացելով ժողովը, նախա-

գահութիւնը յանձնեց իր օգնական գեներալ Մալամային և հեռացաւ։

Ժողովները շարունակեցին ամբողջ 15 օր, որին մասնակցում էին նաև փոխարքայի դիւանի բարձր պաշտօնեաներ և Երեւանի ու Թիֆլիսի նահանգապետները։ Ժողովը փակեց մարտի 6-ին նոյն սպիտակ դահլիճում փոխարքայի հանդիսաւոր նախագահութեամբ և այն կարգով, ինչ կարգով որ նա բացուել էր։

Ահա այդ ժողովը կոչուեց հայ-թուրքական համագումար։

Ի՞նչ արեց արդեօք հայ-թուրքական համագումարը. . . Շատ բան և ոչինչ . . .

Շատ բան այն պատճառով, որ հայ ներկայացուցիչները, փոխարքայի պալատում, բարձր ադմինիստրացիայի ներկայութեամբ, հայ-թուրքական ընդհարումների և նրանից առաջացած կոտորածների ու աւերումների մէջ, որպէս յանցագործ, յայտարարեցին կառավարութիւնը, որը կարող էր այդ աղէտի առաջն առնել, բայց չէր առնում, թէև թուրք ներկայացուցիչները մի գլուխ մեղադրում էին հայերին և Դաշնակցութեանը։

Եւ ոչինչ այն պատճառով, որ համագումարը ստեղծած դրութիւնը մազաչափ անգամ փոխել չը կարողացաւ, և համագումարից ընդամենը երեք ամիս անց տեղի ունեցան նոր ընդհարումներ և նոր աղէտներ Շուշի քաղաքում, Շուշու, Ջիւանշիրի և Զանգեզուրի գաւառներում։

Հաշտութեան այդ բոլոր փորձերը ճիշտ այն նշանակութիւնն ունեցան, ինչ որ կատակերգութիւնը բեմի վրա։

ԴԱՌԸ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ ժողովուրդը Կովկասում համարեց որպէս յեղափոխական և անվստահելի մի տարր, որի յեղափոխական ձգտումները զսպելու և սանձահարելու համար Կովկասի ադմինիստրացիային օգնութեան հասաւ թուրք ժողովրդի արտօնեալ դասակարգը գիտակցօրէն թելադրւած իր շահերից և յետադիմական հայեացքներից. իսկ մասսան՝ անգիտակցօրէն, հակառակ նոյն իսկ իր շահերին, խաբւած այդ նոյն արտօնեալ դասակարգի և պաշտօնական շրջանների թելադրումներից։

Ահա, այս գալիս էին խոստովանելու յաճախ թուրք շրջանները բացարձակօրէն, որոնցից առաջ կը բերենք միմիայն բնորոշ չորս դէպքեր։ Դրանք նոյնքան դառն են, որքան պերճախօս և նոյնքան պերճախօս, որքան և դառր։

1905 թ. յունվարի սկզբներին, երբ Գանձակի երկաթուղու կայարանում ռուս զինուորները հրացանի կոթերով ցրում էին այդտեղ խմբւած թուրքերին, խաղաղարար յանձնաժողովի անդամ երդւեալ հաւատարմատար Ալակպար-բէկ Խասմամեդովը, որը այդտեղ գտնւելով ենթարկւել էր մի սւինի հարւածի, վրդովւած այդ բանից, դիմեց կայարանում եղող օֆիցերներին հետեւեալ ճառով։

«Պ. պ. ռուս օֆիցերներ *), այս ինչ են անում ձեր զինուորները, այս ինչպէս են վերաբերւում մեզ, թուրքերիս. ասում են, խփեցէք, կոտորեցէք թուրքերին, այն թուրքերին, որոնք ռուսաց թագաւորի գահի անսասանութեան համար իրենց կեանքն ու գոյքն են զոհում այսօր, որոնք, մեծից սկսած մինչև փոքրը, հաւատարիմ հպատակութեան զգացմունքով լցւած, առանց հասակի և սեռի խտրութեան, բռնկւած են բուռն սիրով դէպի թագաւորը,

*) Տես «Մշակ» № 7 1906 թ.

կատարում են նրա հրամանները, նրա կամքը, նրա բոլոր ցանկութիւնները և գիշեր ու ցերեկ աղօթում են նրա արեշատութեան և հզօրութեան համար»։

«Պարոնայք, հասկացրէք ձեր զինուորներին, որ մենք, թուրքերս, բազմաթիւ զոհեր տալով մեզանից, կուում ենք թագաւորի թշնամի հայերի դէմ, ոչնչացնում ենք նրանց, ջլատում ենք նրանց ուժերը, հալածում ենք նրանց իբրև յեղափոխականների ու այդպիսով անզօր ենք դարձնում նրանց թագաւորի իշխանութեան դէմ գնալու, նրա զօրքերի հետ կուելու. իսկ այդ զօրքերը մեզանից շատ շնորհակալ լինելու փոխարէն ուզում են մեզ կոտորել»։

«Հասկացրէք պ. պ. օֆիցերներ, ձեր զինուորներին, որ նրանք մեծ յանցանք են գործում, ձեռք բարձրացնելով թուրքերի վրա, հալածելով իրենց թագաւորի անձնուրաց բարեկամներին»։

«Հասկացրէք նրանց, որ եթէ Կովկասի հայաբնակ նահանգներում թուրքեր չը լինէին, հիմա հայերը, իբրև յեղափոխականներ, իբրև թագաւորի իշխանութեան դէմ կուողներ, գերազանցելիս կը լինէին թէ ռուս յեղափոխականներին, և թէ բոլոր միւս ապստամբ ազգերին։ Լեհացիները, հրէաները, ֆինլանդացիներն ու վրացիները նրանց հետևում կը մնային, նրանց հետ չէին կարող մրցել իբրև յեղափոխականներ . . . Երկար բացատրութիւնների կարօտ չէ, պարոններ, այդ բանը. հայերին ռուսաց յեղափոխութեան գործից, յեղափոխական կուից հեռացնողը, ձեր վըտանգաւոր թշնամիներից մեծի ձեռքերն ու ոտքերը կապողը, նրան անզօր դարձնողը մենք ենք, մենք, թուրքերս»։

«Մեծ պարտք ունէք մեզ տալու . . .»

«Հասկացրէք այդ ձեր զինուորներին, նրանց գլխները մտցրէք (вдолбите имъ), որ հայերը նրանց համար պատրաստած ունէին վաղուց հարիւրաւոր ռումբեր, դինամիտի պահեստներ, միլիոնաւոր փամփուշտներ։ Այդ բոլորը պէտք է նրանց գլխին թափուէր, նրանց արիւնով շաղախուէր, եթէ մենք, թուրքերս չը լինէինք»։

«Դրդուած անսահման սիրուց դէպի թագաւորը, դէպի նրա ինքնակալութիւնը, որը հայերն ուրիշ յեղափոխականների հետ միասին ոչնչացնել են ձգտում, մենք գնացինք ու գնում ենք հայերի դէմ, մեր կրծքերն ու մեր գլուխները դէմ ենք անում նրանց ռումբերին, հարիւրաւոր թանկագին զոհեր ենք տալիս մեզանից, հաւատացած լինելով, որ կառավարութիւնը մեր ան-

ձնուրաց ծառայութիւնը կը գնահատի և կը վարձատրի ըստ արժանւոյն»։

«Ահա թէ ինչպէս են վարձատրում մեզ ձեր զինուորները. երկու քայլ ձեզանից հեռու սւինով վերարկուս ծակեցին, մահից հրաշքով փրկւեցի. աֆերի՜մ ձեր քաջ զինուորներին»։

Սրանից աւելի բնորոշ խոստովանութիւն Թուրք շրջանների կողմից տեղի ունեցաւ 1906 թ. Շուշու յուլիսեան ընդհարումների առիթով։

Վլադիկավկազում ապրող շուշեցի Թուրքեր յուլիսի 25-ին հետևեալ հեռագիրն ուղարկեցին Կովկասի փոխարքային*)։

«Շուշուց մուսուլմանների մասին ստացւած լուրերը մեզ պատմելու անկարելիութեան չափ վիշտ պատճառեցին։ Երևում է, որ գեներալ Գալոշչապովն իր կօզակները հայերի խմբերին միացնելով, մեր մայրերին, քոյրերին ու եղբայրներին թնդանօթի ու հրացանի է բռնել»։

«Փոխարքայ, սրանից քիչ ժամանակ առաջ, երբ յեղափոխութեան հեղեղը Ռուսիային իր հոսանքի առաջն էր ձգել, եթէ մեր մուսուլմանների հաւատարմութիւնը և անկեղծութիւնը չը լինէր, հիմա Կովկասն ընդհարումների ու յեղափոխութեան կրակով հրդեհւել էր, բայց մենք, մեր այդ հաւատարմութեամբ ու անկեղծութեան մէջ հաստատ մնալով, պաշտպանեցինք Կովկասը»։

«Ափսոս, ափսոս, հիմա նոյն իսկ նոյն զօրքերը, նոյն կառավարութիւնն իրենց այդչափ հաւատարմութիւնը ցոյց տուող նոյն մուսուլմանների դէմ ուղղեցին իրենց թնդանօթները»։

Արդեօք մեզ համար կը լինէ՞ր սրանից դառն ու արհամարհական մի վարձատրութիւն»։

Այժմ տեսնենք որպիսի խոստովանութիւն զղջման մի ուժեղ թափով գալիս էր միւս կողմից։ Յունիս ամսի 10—12-ին (1906 թ.), երբ Գանձակի ընդհանուր նահանգապետ Ալֆտանը շրջագայելու էր դուրս եկել նահանգը, Ղազախ քաղաքի հրապարակում հաւաքւած հազարաւոր Թուրք բազմութեան միջից դուրս գալով մի բէկ, հետևեալ խօսքերով դիմեց Ալֆտանին, իբրև պատասխան նրա հարց ու փորձերին։

*) Տես «Ալիք» 1906 թ. № 74։

«Ահա տեսնում էք*) Ղազախ քաղաքը, որը 7—8 ամիս առաջ չէն էր, իսկ այժմ քանդված, աւերված. այդ բանը ոչ թէ մենք Թուրքերս ենք արել, այլ Ձեզ մօտ կանգնած Օրլովը հաշտարար միջնորդը, Ձերդ գերազանցութիւն, որը գիշեր ցերեկ հանգստութիւն չէր տալիս մեզ. անդադար դրդում, ստիպում էր մեզ ուղղակի կոտորել, ջնջել հայերին անխնայ, անողորմ, առանց սևի ու հասակի խտրութեան՝ ասելով, որ կառավարութեան ցանկութիւնն է այդ։ Մենք բէկերս Օրլովին, ի հարկէ, չէինք լսում, բայց երբ Գանձակում հայ-Թուրքական կռիւն սկսուեց, գիւղացի Թուրքերը Թափեցին Ղազախ ու Օրլովի դրդմամբ աւերեցին մեր խեղճ քաղաքը»։

Բէկից յետոյ առաջ եկաւ մի ծերունի Թուրք և դիմեց Ալիֆտանին հետևեալ խօսքերով։

«Ինչ որ մեր բէկն ասաց Օրլովի մասին, բոլորը հշմարտութիւն է։ Այդ Օրլովն ամեն օր Թուրք գիւղերն ընկած, դրդում էր գիւղացիներին կոտորել հայերին»։

«Բայց մեր յարգելի բէկը մի բան շատ սխալւում է, ասելով, որ Ղազախի աւերողը մենք, գիւղացիներս ենք եղել. այդ սուտ է, անխիղճ սուտ. Ղազախն աւերել ու կողոպտել են իրենք բէկերը, աղալարները և մեզ խեղճերիս թշնամացրել են ուժով մեր դրացի հայերի հետ, որոնց հետ հարիւրաւոր տարիներ, նոյն իսկ մեր խանների օրօք, հաշտ ենք ապրել»։

Աւելի դառն խոստովանութիւն այն ճառն էր, որ Թուրք պատգամաւոր Զիաթխանովը խօսեց Պետական Դումայի առաջ յունիսի 12-ի նիստում։ Ահա այդ ճառի մի կտորը։

«Հրաշագեղ Վրաստանը ազգմենախաբասարենք մահանցին զօրքերի աւերին, իսկ մուսուլմաններին ու հայերին իրար դէմ գրգռեցին ու կռուեցրին»։

«Այս ամբիոնից ես յայտարարում եմ, որ մենք ու հայերը մէջ անտեսական հողի վրա թշնամութիւն չի եղել, մենք ապրում էինք իրարի բարի դրացիներ և սիրում էինք միմեանց։ Զինուած ընդհարումներ երբէք մենք չենք ունեցել, եթէ եղել են մասնակի ապանութեան դէպքեր, նրանք չէ որ մինչև այժմ էլ անպէս անդին,

*) Տես «Ալիք» 1906 թ. № 44։

բայց երբէք այսպէս հսկայական չափեր չէին ստացել»։

«Մեր ադմինիստրատորներ.ու գէներալները երեան հանեցին իրենց լիակատար անանկութիւնը։ Արդէն երկու ամբողջ տարի է մենք լողում ենք արեան ծովում, մինչև ծունկներս քայլում ենք դիակների միջով։ Թող նրանք հեռանան, թող նրանք կորչեն։ Բաւական է որքան որ զմայլեցինք այդ հրդեհների բոցերով, բաւական է որքան հրճւեցինք ընկած դիակների տեսարաններով, հերիք է ինչքան որ լսեցինք թշւառ մայրերի ու քոյրերի ողբն ու հեծեծանքը»։

Ահա խոստովանութիւններ, որոնք գալիս էին արիւնոտ Կովկասի գաղտնիքները բացելու, կառավարութեան դաւերը հրապարակ հանելու թուրքական աղբիւրներից։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մեր ձեռնարկած աշխատանքը վերջացնելու համար մեզ մնում է մի երես էլ նուիրել Հ. Յ. Դաշնակցութեանը, որն իր վրա վերցրել էր հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը։

Հ. Յ. Դաշնակցութիւնը, որպէս յեղափոխական կուսակցութիւն, ծնունդ առնելով տաճկահայ ժողովրդի իրականութիւնից, նպատակ էր դրել արտակարգ բռնութիւնների և հալածանքների ենթակայ այդ կլասիկ ժողովրդի համար ստեղծել կեանքի ու գոյքի ապահովութիւն և մարդկային իրաւունքների անբռնաբարելիութիւն։

Նրա տակտիկան ընթանում էր ժողովրդային ապստամբութեան և պարտիզանական կռիւների ճանապարհով։ Եւ այդ ուղղութեամբ նա գործում էր ամբողջ տասն և երեք տարի յատկապէս տաճկական հողի վրա, պատրաստելով մարտիկ ուժեր։

1903 թուին, երբ կովկասահայ ժողովրդի դէմ գօլիցինեան ըէժիմի սկսած հալածանքը ծայրահեղ չափերի հասաւ, արտայայտուելով այդ եկեղեցական կալուածների վանդալական ձևի գրաւմամբ, երբ բռնի ռուսացման քաղաքականութիւնը այլանդակ կերպարանք ընդունեց, հալածուելով այն բոլորը, ինչ որ հայ անուան հետ էր կապուած, լինէր նա կրթական, գրական, բարեգործական, թէ նոյն իսկ տնտեսական. ահա այդ ժամանակ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որն այնքան ճիւղեր ունէր տարածած կովկասահայ ժողովրդի մէջ յօգուտ տաճկահայ դատի, հրապարակ եկաւ նաև Կովկասի իրականութեան մէջ, գործելով սկզբում ինքնապաշտպանութեան մի պասիւ շրջանակում։

Սկսուեց ռուս-եապօնական պատերազմն այնքան անյաջող հետևանքներով. դրա հետ միաժամանակ գլուխ բարձրացրեց կեղեքուած, հարստահարուած ռուս բազմամիլիոն ժողովրդի դժգո-

հութիւնը տարերային ուժով. ծայր տուեց ռուսական մեծ յեղափոխութիւնը. նա արձագանք գտաւ նաև Կովկասում։ Յեղափոխական կուսակցութիւնները լարեցին իրենց ուժերը մի ահաւոր կուի համար. այդ եռուն կեանքը եկաւ կլանեց նաև Հ. Յ. Դաշնակցութիւնը, որը Կովկասի շարժման մէջ տեղ գրաւելով՝ կազմակերպել սկսեց մարտիկ խմբեր իր փորձառու ուժերի ղեկավարութեան տակ։

Ահա, հայ ժողովրդի այդ կենսունակ քայլերի դէմ այդ պատմական մոմենտում ձգեց դիւանագիտական թոյնը, Թուրք մասսաները շարժեցին, տեղի ունեցան ջարդերը, կողոպուտները, աւերումներն ու հրդեհումները և սկսեց հակայեղափոխական այդ մեծ սկը։

Դարերով ճնշած ու հալածած և ինքնապաշտպանութեան ընազդը միանգամայն կորցրած հայ ժողովուրդն անկարող լինելով անգամ մտածել, որ կարելի է Թուրք խուժանին դիմադրել, փախչում էր սարսափահար՝ Թողնելով նրա քմահաճոյքին իր ունեցած չունեցածը, աւելի ևս խրախուսելով նրա կոպիտ ինստինկտները։

Այսպէս էր պատկերը Բագուում, Երևանում, Նախիջևանի և Շարուր-Դարալագեազի գաւառներում առաջին յարձակումների անակնկալների ժամանակ։

Ահա, այդ սարսափահար եղած, այդ փախչող, կոտրուող և կողոպտուող ժողովրդին դուրս եկաւ պաշտպանելու Հ. Յ. Դաշնակցութիւնն իր մարտիկ ուժերով, միևնոյն ժամանակ վարժեցնելով նրան կուի, դիմադրութեան և անձի ու գոյքի պաշտպանութեան—ադմինիստրացիայի ձեռքում գործիք դարձած անգիտակ մասսաների խուժման դէմ։

Կարճ ժամանակի ընթացքում հայ-Թուրքական ընդհարումների շրջաններում կազմակերպուեցին ինքնապաշտպանութեան խմբեր, որոնք յաջող կերպով յետ էին մղում յարձակումները և առնում գալիք աղէտների առաջը։

Եւ Հ. Յ. Դաշնակցութիւնն իր դերը կատարեց. նա հայ ժողովրդի մէջ մտցրեց վստահութեան, քաջութեան և ինքնապաշտպանութեան գիտակցութիւնը, իր մարտիկների անձնազոհութեան օրինակներով։

Այս կազմում է Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան առաջին շրջանը։

Ինչ էր երկրորդ շրջանը։

Հայ-թուրքական ընդհարումները չը դադարեցին. նրանք գնալով ընդհակառակը մեծ ծաւալ ստացան և մեծ չափեր ընդունեցին. ամբողջ շրջաններ ու գաւառներ դարձան խռովութիւնների լեռ, ժողովուրդը կլանուեց ինքնապաշտպանութեան հոգսերի մէջ։ Զէնքի և ռազմամթերքի կարիքը դրամական տուրքի խնդիր հրապարակ բերեց. ասպարէզ եկան այն բոլոր տարրերը, որոնք այսպէս կամ այնպէս կարող էին դեր խաղալ ինքնապաշտպանութեան գործի մէջ, առանց որևէ առնչութիւն ունենալու Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի ոգու և նպատակների հետ։

Եւ սկսուեցին մի կողմից դրամական տուրքերի, իսկ միւս կողմից ներքին խնդիրների ու դատավարութեան պրոցէսները։

Ահա, այս քաոս դրութեան մէջ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի և նպատակների հետ որևէ կապ չունեցող և իրերի դրութեան ուժով ասպարէզ եկած անհատներ գիտակցօրէն և անգիտակցօրէն գործեցին մի շարք ճնշումներ և բռնութիւններ ժողովրդի վերաբերմամբ։

Այն հանգամանքը, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը շարունակում էր մեծ ինքնապաշտպանութեան գործի ղեկավար, այդ եղաւ առիթ նրան մեղադրելու տեղի ունեցած ճնշումների ու բռնութիւնների մէջ։

Հ. Յ. Դաշնակցութիւնը, որը թուրքական յարձակումների առաջին անակնկալների ժամանակ ասպարէզ նետուելով և ինքնապաշտպանութեան օրինակը տալով պիտի հրաժարուէր ինքնապաշտպանութեան գործի ղեկավարութիւնից, այդ թողնելով իրեն ժողովրդին, յապաղեց։

Ահա, այդ յապաղումը մի տակտիկական սխալ էր, որը և դարձաւ նրա հակառակորդների ձեռքում որպէս մի ուժեղ զէնք։

ՀԵՏԵՒԱՆՔ

Մի համատարած թշւառութիւն . . . . Ահա այն հետեւանքը, որ ունեցաւ երկու տարի շարունակւող հայ-թուրքական ընդհարումը։

Աւերւեցին և խոշոր վնասներ կրեցին երկու կողմերից 252 գիւղեր և 7 քաղաքներ. զրկանքների ենթարկւեցին և քայքայւեցին 15,000 ի չափ ընտանիքներ, աւելի քան 100,000 ժողովուրդ գաւառներում և մի քանի հազար՝ քաղաքներում։ Մարդկային զոհերի թիւը, մեր հաշւով, հասնում է 10,000-ի, որից սրախողխող, գնդակահար և հրդեհների զոհ գնացել են 5,000 և գաղթումներից, ցրտից ու շոգից, սարսափներից ու սնունդի պակասութիւնից առաջացած հիւանդութիւններից մահացել են նոյնչափ։

Երկու տարի շարունակ 12 գաւառների աւելի քան մի միլիոն երեք հարիւր հազար ժողովուրդ երկու թշնամի բանակների բաժանւած և խաղաղ կուլտուրական աշխատանքը թողած, վարում էր անմիտ կռիւ, վառօդի և գնդակի վրա ծախսելով իր ունեցած չունեցածը, վատնելով, տեղեակ մարդկանց հաշւով, 3-4 միլիոնի գումար։

Կողոպուտներից, աւերումներից և հրդեհումներից 252 գիւղերի ժողովուրդը կրել է վնաս ոչ պակաս 10 միլիոնից, իսկ 7 քաղաքների վնասը աւելի ևս մեծ է. նա հասնում է 2-3 տասնեակ միլիոնների։

12 գաւառներում երկու տարի շարունակւող ընդհարումների և թշնամական գործողութիւնների շնորհիւ մեծ չափով նւազեցին դաշտային աշխատանքները։ Հաշտարար միջնորդների տեղեկութիւններով 1906 թւին հացահատիկների բերքը միմիայն Շուշու և Զանգեզուրի գաւառներում արդիւնք էր տւել 4 միլիոն փթով պակաս քան սովորական տարիները։ Գիւղատնտես Զաւարեանի տեղեկութիւններով, այդ երկու գաւառների շատ տեղերում ցանքերը նւազել էին 30, 40, նոյն իսկ 50 տոկոսով։ Նոյն

գիւղատնտես Զաւարեանի հաշուով Դանձակի նահանգի միմիայն Շուշու, Զանգեզուրի, Զիւանշիրի և Զիբրայիլի գաւառներում հացի պակասը արտայայտւում էր 6 միլիոն փթով, որը ներմուծելու համար այժմեան գներով հարկաւոր էր 10 միլիոնի գումար։

Եւ այժմ, երբ գրում ենք այս տողերը, հայ-թուրքական ընդհարումների շրջաններում, առանձնապէս մի քանի վայրերում, կանգ է առել կուլտուրան. չարատանջ ժողովրդի վրա տարածել է իր թեւերը սովի սև ուրուականը իրենից անբաժան տարափոխիկ ախտերի հետ միասին, տանելով զոհեր նրա շարքերից։ Շատ տեղերում մարդիկ տառապում են սովից, գիւղերը դատարկւում են, քաղաքները լցւում քաղցած, անգործ մարդկանցով, բազմանում են աւազակախմբերը և աւազակային գործողութիւնները։

Համատարած այս թշւառութեան հանդէպ, սակայն, մխիթարական է այն խորին հաւատը, որ հազարաւոր անմեղ զոհերի արիւնը, որպէս պատանդան ծագող լաւագոյն օրերի, գալիս է ամրապնդելու երկու ժողովուրդների մէջ փոխադարձ զոհերի գիտակցութիւնն ընդդէմ բռնակալութեան և կեղեքիչների, որոնք և ստեղծեցին Կովկասի դժոխքը, որ ներկայ արիւնոտ անցքը իր դառը և խրատական հետևանքներով դալիս է դարապլուխ կազմելու անգիտութեան մէջ պահւած թուրք մասսաների մտաւոր յեղաշրջման։

1905 թ. փետրվարի 6—9-ի բրդեայ կոնգրեսի փոխարեն սպասեալներ-ների ընտրեալների ցանկը *)

№№	Անուն, ազգանուն	Ո՞րտեղացի	Ո՞ր գաւառից	Տարիք
1	Արգարեան Պետրոս	գեօզալդարե.	Նոր-Բայազէտ.	28
2	Աբրահամեան Եղիա	գնդեվազցի	Դարալագեազ	25
3	Աբրահամեան Զհանգիր	խնածախցի	Շուշու	37
4	Ադամեան Աղէքսանդր	շուշեցի	—	50
5	» Մարիամ—կինը	»	—	34
6	» Նիկալայ—որդին	»		15
7	Ազգապետեան Բէրովբէ	բիթլիսցի	—	22
8	Աթանասեան Սուլէյման	աշանցի	Շուշու	16
9	Աթաբէգեան Հայրապետ	նախիջևանիկ.	»	19
10	Ադայեան Յովսէփ	բագուեցի	—	53
11	» Սիմէօն—որդին	»	—	20
12	Անանեան Արշակ	-	—	—
13	Ապրեսեան Ալէքսան	վանքցի	Գեօկչայ	-
14	Առստամեան Յովհաննէս	ալիղուլեցի	Զանգեզուր	35
15	Առաքելեան Յովհաննէս	շարքարանցի	Շամախու	45
16	Առաքելեան Մկրտիչ	անգեղակոթ.	Զանգեզուր	45
17	Առուշանեան Գրիգոր	կրկժանցի	Շուշու	23
18	Ասրիեան Սարգիս	շուշեցի		50
19	Աւանեան Նիկալայ	ալիլուեցի	Զանգեզուր	-
20	Աւանեան Կարապետ	գիւրջևանցի	Շամախու	28
21	Աւետիսեան Բախշի	շուշեցի	—	—
22	Աւետիսեան Բախշի	հաղորտեցի	Շուշու	25
23	Բալասանեան Արամ	շուշեցի	—	24
24	Բալասանեան Միրզա	ձորեցի	Ջիբրայիլ	22
25	» Սիմէօն—եղբայրը	»	»	18
26	Բաղդասարեան Զհանգիր	գիրք գիւղից	—	55
27	Բաղդասարեան Խանլար	խանձաձորցի	Ջիբրայիլ	19
28	Բաղդասարեան Տիգրան	միսարցի	Շամախու	15

*) Այստեղ առաջ բերած անունների ցանկերը բոլորը չեն, թէև նրանց մէջ մտածների թիւը հասնում է 1,200-ի։

29	Բարսեղեան Յովհաննէս	դահրազցի	Շուշու	29
30	Բաղալեան Բէգլար	շաղաթեցի	Զանգեզուր	35
31	Բարայեան Միրզաջան	տաթեւացի	»	—
32	Բարայեան Յարութիւն	վանքցի	Դէօկչայ	—
33	Բէջանեան Աբրահամ	—	—	55
34	Գասպարեան Սարգիս	շուշեցի	—	73
35	Գասպարեան Ներսէս	»	—	42
36	Գէորգեան Սամսոն	քարահունջ.	Զանգեզուր	27
37	Գէորգեան Խաչատուր	ղուշչիլարցի	Դարալագեազ	37
38	Գիւլաբչեան Ալէքսան	նուխեցի	—	12
39	Գրիգորեան Յարութիւն	աշանցի	Շուշու	22
40	Գրիգորեան Խաչատուր	շուշեցի	—	28
41	Գրիգորեան Սուլէյման	տրնաւարզցի	Շուշու	18
42	Գրիգորեան Սահակ	քարահունջ.	Զանգեզուր	—
43	Գրիգորեան Սահակ	նուխեցի	—	—
44	Գրիգորեան Յովհաննէս	վանեցի	—	28
45	Դանիէլեան Մարտիրոս	ուզեցի	Զանգեզուր	39
46	Դաւթեան Գրիգոր	նինգեցի	Շուշու	25
47	Դաւթեան Արգար	ագուլիսեցի	—	40
48	Դաւթեան Արա	ղէյլեցի	Զանգեզուր	49
49	Դաւթեան Սողոմոն	ձորեցի	Ջիբրայիլ	21
50	Դաղաշեան Ներսէս	շուքարջեցի	Դէօկչայ	40
51	Եղիազարեան Տիգրան	շամախեցի	—	19
52	Եսայեան Ներսէս	շուշեցի	—	31
53	Թադէոսեան Նիկալայ	»		29
54	» Մարիամ—կինը	»	—	25
55	» Եւգենիա—աղջիկը	»	—	1
56	Թաւաքալեան Արշակ	շուշեցի	—	18
57	Թարազդարեան Լեոն	շամախեցի	—	15
58	Թաթոսեան Սերգէյ	—	—	1
59	» Էլելինա—քոյրը	—	—	2
60	Թառայեան Սմբատ	չորքարանցի	Շամախու	54
61	Թալիշ	դանձակեցի	—	10
62	Թէոսեան Խաչանէս	նուխեցի	—	30
63	Թոլմասեան Արշակ	շաղաթեցի	Զանգեզուր	28

64	Թումանեան Արշակ	շուշեցի		35
65	Թումանեան Սիմէոն	ուրմեցի	—	10
66	Թումանեան Սիմէոն			18
67	Լազարեան Սեղրակ	բագուեցի		33
68	Մատուրեան Մանուչար	խնձորեսկցի	Զանգեզուր	—
69	» Բաղդասար	»	»	—
70	» Գրիգոր	»	»	19
71	Մատուրեան Ստեփան	շիկահողցի	»	—
72	Կարապետեան Գրիգոր	խնձորեսկցի	»	
73	Կարապետեան Յակոբ	ագուլիսեցի		23
74	Կիրակոսեան Մկրտիչ	ալէքսանդր.		
75	Կոլոբէկեան Եսայի	շուշեցի	—	45
76	Հայրումեան Վարդուհի	բագուեցի		60
77	Համբարձումեան Ալէքսան	շամախեցի	-	21
78	Համբարձումեան Եփրեմ			—
79	Ղազարեան Դաւիթ		Սուրմալու	20
80	Ղարիբեան Սմբատ	ագուլիսեցի	—	27
81	Ղարագեոզեան Միքայէլ	բագուեցի	—	55
82	Ղամբարեան Լևոն	նորբայազէ.		23
83	Ղորղանեան Սմբատ	շուշեցի		30
84	Մանուկեան Յարութիւն	շամախեցի		51
85	Մատինեան Միքայէլ	թիֆլիսեցի	—	53
86	Մարտիրոսեան Պօղոս	ղալագեցի	Գէօկչայ	13
87	Մարտիրոսեան Կարապետ	վանեցի	—	34
88	Մարտիրոսեան Սերգէյ	նինգեցի	Շուշու	20
89	Մարտիրոսեան Արշակ	նորաշէնցի	Զանգեզուր	
90	Մատթէոսեան Նիկոլայ	բագուեցի		32
91	Մատթէոս—բէալակա. աշ.	—	—	18
92	Մամալեան Խաչատուր	գիւրջեանցի	Շամախու	18
93	Մաղաքելեան Համբարձու.	քերքեջցի	»	20
94	Մարութեան Գասպար	շաղաթեցի	Զանգեզուր	32
95	Մէլիք-Ադամիրեան Գրիգոր	նորաշէնցի	Զանգեզուր	30
96	Միրզախանեան Յովհան.	գիւրջեանցի	Շամախու	18
97	Միրզայեան Յարութիւն	շամախեցի		52
98	Միրզայեան Նիկոլայ	աղնաթցի		19

99	Մկրտչեան Ներսէս	—	Զանգեզուր	44
100	» Յովհաննէս—որդին	—	»	22
101	» Մարութ	—	»	17
102	Մուսայէլեան Զումշուդ	շուշեցի	—	18
103	Մուրադեան Օվսաննա	մադրասեցի	Շամախու	40
104	Յարութիւնեան Յակովբ	—	—	—
105	Յարութիւնեան Ոսկան	ալադանլիցի	Գէօկչայ	22
106	Յովսէփեան Զաւադ	շուշեցի	—	30
107	Յովհաննիսեան Յովհաննէս	բանազուրցի	Ջիբրայիլ	14
108	Յովհաննիսեան Սեդրակ	գանձակեցի	—	18
109	Յովհաննիսեան Յարութ.	օրդակլուեցի	Նոր-Բայազ.	23
110	Նասիբեան Գրիգոր	քարահունջ.	Զանգեզուր	
111	Նիկողոսեան Թէոս	ղայբալեցի	Շուշու	18
112	Շահվերդեան Անդրէաս	մադրասեցի	—	49
113	» Պետրոս	»	—	38
114	Շամխալեան Սամսոն	միրիշանլու.	Շուշու	55
115	Շահնազարեան Շահրիման	թէհրանցի	—	25
116	Շահնազարեան Խաչատուր	—	—	—
117	Շահնազարեան Սէյրան	խոնաշէնցի	Շուշու	52
118	Շահրիմանեան Համբարձ.	բագուեցի	—	29
119	Շաղաթեան Մէլիքսէթ	բագուեցի	—	30
120	Շերմազանեան Մովսէս	փառակեցի	Նախիջևան	60
121	» Իսահակ—որդին	»	»	20
122	Շխեան Երեմիա	տոպուշէնցի	Գէօկչայ	24
123	Պետրոսեան Սամսոն	բռնակոթցի	Զանգեզուր	23
124	Պողոսեան Սարգիս	Գիրք գիւղից	—	19
125	Զանուլեան Բալաբէկ	ուզունթալե.	Ղազախի	—
126	Ռոստոմեան Աւետիս	հերհերցի	Դարալագեա.	30
127	Սահակեան Զաւադ	—	Շամախու	32
128	Սահակեան Վարդան	փահրաջուղ.	Շամախու	40
129	Սահակեան Ղուկաս	ալիլուեցի	Զանգեզուր	25
130	Սարգսեան Ռոստոմ	մազրեցի	Զանգեզուր	40
131	Սարգսեան Սարգիս	բանազուրցի	Ջիբրայիլ	14
132	Սարգսեան Գրիգոր	գէյբուլաղցի	Նուխու	18
133	Սանամեան Գրիգոր	գանձակեցի	—	17

134	Սարիեան Սիմէօն	ալիլուեցի	Զանգեզուր	10
135	Սիմէօնեան Կոստանդին	բագուեցի	—	50
136	Սիջանեան Լեւոն	շուշեցի		21
137	Ստեփանեան Ստեփան	տրնաւարզցի	Շուշու	60
138	Ստեփանեան Դաւիթ	ջիլանցի	Ջիրբայիլ	22
139	Վարդապետեան Մինաս	ճարտարեցի	Շուշու	
140	Վարդանեան Պետրոս	շամախեցի	—	45
141	Վարդանեան Նիկալայ	»	—	40
142	Վարդանեան Արտեմ	քարհատցի	Շուշու	27
143	Վարդանեան Համօ	մազրեցի	Զանգեզուր	40
144	Վարդանեան Մկրտիչ		—	—
145	Տէր-Գրիգորեան Յովհան.	—	Զանգեզուր	
146	Տէր-Թոմասեան Թոմաս	աշանցի	Շուշու	33
147	Տէր-Խաչատրեան Գասպար	—	—	22
148	Տէր-Մանուէլեան Առաքել	տրնաւարզցի	Շուշու	23
149	Տէր-Յարութիւնեան Մար.	—		—
150	Տէր-Պօղոսեան Տիգրան	քարուանսար.	Ղազախ	
151	Տէր-Ստեփանեան Նատալ.	—		26
152	» Սերգէյ որդին	—	—	11
153	Տէր-Ստեփանեան Սերգէյ	—	—	28
154	Փանեան Արմենակ	ագուլիսեցի	—	24
155	Քոչարեան Յովհաննէս	շամախեցի	—	18
156	Օրբելեան Յովհաննէս	վաչականցի	Զանգեզուր	30
157	Օհանեան Սողոմոն	ուզեցի	Զանգեզուր	25
158	Օհանեան Յարութիւն	կելարցի	Շամախու	17
159	Օհանեան Ահարոն	քեօհնեկցի	Շուշու	13

160—176-ը չը ճանաչուած դիակներ։

ՇՈՒՇՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ,

հանուած Շուշու նպաստամատոյց յանձնաժողովի գործերից

1	Արրահամեան Աղաջան . . .
2	Արրահամեան Վարդանոյշի ամուսինը .
3	Աչմազեան Թազայի ամուսինը .
4	Ալէքսանեան Սոփիայի ամուսինը .
5	Ալլահվերդեան Յակոբ . . .
6	Ալլահվերդեան Թազագիւլի ամուսինը .
7	Առաքելեան Մարգար . .
8	Արզումանեան Սոփիայի որդին . .
9	Արզումանեան Աղալար (շուշիքէնդցի) .
10	Արզանեան Նախշունի որդին . .
11	Աւանէսեան Եղիսաբէթի ամուսինը .
12	Աւանէսեան Հռիփսիմէի ամուսինը .
13	Բաբայեան Մինայի տղան . .
14	Բալայեան Սոփիայի ամուսինը (կորած) . .
15	Բաղալեան Սոփիայի ամուսինը . .
16	Բալայեան Գրիգորի կինը .
17	Բալայեան Միքայէլի որդին . .
18	Բաղդասարեան Քոթանի ամուսինը .
19	Բաղդասարեան Ներսէս . .
20	Բաղալեան Մարգարիտի ամուսինը .
21	Բաղիեան Մովսէս . . .
22	Բաբայեան Յովհաննէս .
23	Բէկեան Սաթենիկի ամուսինը . .
24	Գաբրիէլեան Մովսէս (Թաղավարդցի) .
25	Գաբրիէլեան Վարդանոյշի ամուսինը .
26	Գասպարեան Մինայի որդին . .
27	Գալստեան Նանագիւլի ամուսինը .
28	Գիւլստանեան Մկրտչի որդին . .
29	Գիւլնազարեան Աննա . .
30	Գրիգորեան Վարդան . . .
31	Դանիէլեան Մարիամի փեսան—Ղազարը . .
32	Դանիէլեան Սահրնազի որդին (կորած) .

33	Դանիէլեան Գեւոգալի ամուսինը .	.
34	Դաւթեան Մարիանգիւլի ամուսինը	.
35	Եսայեան Յովհաննէս . .	.
36	Եղիազարեան Աւետ	.
37	Եղիեան Բախշի .	.
38	Եղիեան Գալիլէի ամուսինը	.
39	Զալիեան Լեւոն .	.
40	Զաքարեան Թագուհու ամուսինը	.
41	Զէյնալեան Թոխիի որդին (շուշիքէնդցի) .	.
42	Թաթոսեան Աղաջան . .	.
43	Թառումեան Նիկալայ (դամդալուեցի)	.
44	Ժամհարեան Մարգար . .	.
45	Ժամհարեան Բալախանումի ամուսինը	.
46	Լալայեան Թագուհու որդին .	.
47	» » երկրորդ որդին	.
48	Լալայեան Անդրէաս . .	.
49	Խաչատրեան Բախշի	.
50	Խաչատրեան Ներսէս .	.
51	Խաչատրեան Նախշունի որդին .	.
52	Կարապետեան Մալաքի ամուսինը	.
53	Կարապետեան Ղումաշ . .	.
54	Կոլմանեան Մարգարիտի որդին . .	.
55	Համբարձումեան Անինկայի ամուսինը (կորած)	.
56	Հաղլաթեան Հայկ . . .	.
57	Հայրումեան Անուշկայի ամուսինը (մինքէնդցի)	.
58	Հայրապետեան Գեւոգալի ամուսինը .	.
59	Հայրապետեան ալիղուլեցի երկու եղբայրներ	.
60	Հայրապետեան Մարգարիտի որդին .	.
61	Հայրապետեան Սառայի որդին .	.
62	Ղազարեան Յովհաննէս	.
63	Մանգասարեան Աղէքսանդր	.
64	Մանասեան Թէոս	.
65	» Թէոսի կինը	.
66	» » աղջիկը	.
67	Մարութեան կարապետ	.

68	Մարգարեան Զաքարէ .	.
69	Մատթէոսեան Մէլիքսէթի կինը .	.
70	Մասումեան Յակովբ . .	.
71	Մելիք-Միրզախանեան Սարգիս	.
72	Մինասեան Նուբարի ամուսինը .	.
73	Միրզաքեխեան Սիրունայի որդին	.
74	Միրզայեան Սահակ . .	.
75	Մելքոնեան Անդրէաս	.
76	Մկրտչեան Մարգար	.
77	Մկրտումեան Աւագի որդին	.
78	» » երկրորդ որդին	.
79	Մկրտչեան Արտեմ . .	.
80	Մկրտումեան Մարիամի ամուսինը	.
81	Մուսայէլեան Նատալիայի ամուսինը	.
82	Մուսայէլեան Նիկալայ . .	.
83	Մուսայէլեան Սաթենիկի ամուսինը	.
84	Մուսայէլեան Սառայի ամուսինը	.
85	Մովսիսեան Սօնիչկայի ամուսինը	.
86	Յակոբջանեան Օլինկայի ամուսինը	.
87	Յարութիւնեան Միրզա .	.
88	Յակոբեան Յարութիւն .	.
89	Յարութիւնեան Սոփիայի որդին	.
90	» » երկրորդ որդին	.
91	Յարութիւնեան Կատինկայի ամուսինը	.
92	Յարութիւնեան Մնացական	.
93	Յարութիւնեան Գրիգոր	.
94	Յակոբեան Վարդիի ամուսինը .	.
95	Յովսէփեան Շուշանիկի ամուսինը	.
96	Յովսէփեան (Ճարտարեցի) .	.
97	Յովսէփեան Գայիանէի ամուսինը	.
98	Նասիբեան Թէլլուի ամուսինը (կորած)	.
99	Նաջարեան Խոսրով . .	.
100	Շահրազեան Մինայի ամուսինը .	.
101	Շահրիմանեան Մարիանգիւլի ամուսինը .	.
102	» » որդին	.

103	Շաքարեան Ղուկասի որդին	.
104	Պետրոսեան Սոփիայի որդին (կորած)	.
105	Պետրոսեան Սալբիի ամուսինը .	.
106	Պետրոսեան Նիկալայ (քարինտակցի)	.
107	Պետրոսեան Սոփիայի ամուսինը	.
108	Պետրոսեան Թագուհու ամուսինը	.
109	Պետրոսեան Ալէքսան .	.
110	Ջալալեան Մովսէս	.
111	Ջհանգիրեան Միրզա .	.
112	Սարգսեան Զաոիի որդին	.
113	Սարգսեան Սարգիս .	.
114	Սարգսեան Նուբարի ամուսինը .	.
115	Սարգսեան Աւանէսի որդին	.
116	Սարգսեան Դանէլ .	.
117	Սարգսեան Բաղա	.
118	Սողոմոնեան Մարտիի որդին	.
119	Ստեփանեան Աստուր .	.
120	Վարդազարեան Մարգարիտի ամուսինը	.
121	Տէր-Յովհաննիսեան Գէորգ	.
122	Տէր-Աստուածատրեան Համբարձում	.
123	Տէր-Ներսէս Դաշուշէն գիւղի	.
124	Տէր-Զաքարեան Գէորգի որդին .	.
125	Տէր-Իշխանեան Լիզայի ամուսինը	.
126	Փիրումեան Մարգարիտի ամուսինը	.

ՅՈՒՅՑԻ ԳԻՒՂԻ ՄԻ ՔԱՆԻ ԳԻՒՂԱՑԻ ՁԵՌՔԶԵՆ ՏԵՂԵՓՈՒՄ ՍԳՐԵՆԻՐԹՆԵՐԻ ԸՆԻՐՆԵՑՈՒՑԱԿԸ,

հանուած Շուշու նպաստամատոյց յանձնաժողովի գործերից։

1	Բարսեղեան Միքայէլ .	.
2	Բաղդասարեան Եղիսաբէթ	.
3	» Սևի ամուսինը .	.
4	Գալստեան Թագուհու ամուսինը	.
5	Գասպարեան . . .	.
6	Թութունջեան Ալէքսան	.

7	Ղարախանեան Սալաթինի որդին	.
8	» » փեսան	.
9	Մէլիքեան Մագթաղի ամուսինը	.
10	Միրզաբէկեան Աւագի հայրը	.
11	Մկրտումեան Սօնայի ամուսինը	.
12	» Սարգիս . .	.
13	Յակոբեան Սամսոն . .	.
14	Յարութիւնեան Թագուհու որդին	.
15	Շամխալեան Սոփիայի ամուսինը	.
16	Պետրոսեան Նանուխի ամուսինը	.
17	Պօղոսեան Բաղի . .	.
18	Սարգսեան Մայկոյի ամուսինը	.
19	Օհանեան Բաղդասար	.
20	» Մինայի ամուսինը .	.

ՃԱՐՏԱՐԵՑԻՆԵՐ

1	Բաբայեան Հայրապետ .	.
2	» Ղումաշի ամուսինը	.
3	Գալստեաններ—երեք հոգի	.
4	Դուլեան Մարգարիտի ամուսինը	.
5	Յովսէփեան Մարիամի » .	.
6	Պօղոսեան Շողիի »	.
7	Սահակեան Բալլուի »	.
8	Վանեան Սարուխան .	.

ՏՐՆԱՎԱՐՉՑԻՆԵՐ

1	Ադամեան Յարութիւն .	.
2	Գասպարեան Թարխան .	.
3	Կարապետեան Դանէլ	.
4	Յովհաննիսեան Առաքել	.
5	Ստեփանեան Գալուստ .	.

ՍՈՍԵՑԻՆԵՐ

1	Աւագեան Գիւլլիի որդին	.
2	Գաբրէլեան Գրիգոր .	.
3	Կարապետեան Արշակի հայրը	.
4	Յարութիւնեան Մինայի որդին .	.

	ԹԱՂԱՎԱՐԴՑԻՆԵՐ	
1	Ալլահվերդեան Անուշի ամուսինը	.
2	Համբարձումեան Նանագիւլի »	.
3	Շահրիմանեան Մարգարտի »	.
	ԱԻԵՏԱՐԱՆՈՑՑԻՆԵՐ	
1	Շահնազարեան Կոստանի կինը	.
2	» » որդին	.
	ՄԱՇԱԴԻՇԷՆՑԻՆԵՐ	
1	Բաղդիեան Մարտիրոս .	.
2	Պողոսեան Օհան	.
	ՍԽՏՈՐԱՇԷՆՑԻ	
1	Յակոբեան Սանթուր	.
	ԽԵՐԽԱՆՑԻ	
1	Ղազարեան Բախշի	.
	ԿՈՐՆՁՈՐՑԻ	
1	Աղաբաբեան Ասլան	.
	ԹԱՂԼԱՐՑԻ	
1	Յովհաննիսեան Հայրապետ	.
	ԳԻՇԵՑԻ	
1	Հայրիեան Զանազանի ամուսինը	.
	ՍԶՆԷՔՑԻ	
1	Աւանէսեան Եղիսաբէթի որդին .	.
	ՏՈՒՄԵՑԻ	
1	Մնացականեան Հայրապետի որդին	.
	ԱԶՈԽԵՑԻ	
1	Գրիգորեան Բաբա	.
	ՍԱՐԳՍԱՇԷՆՑԻ	
1	Հայրապետեան Սահակ .	.

ԽՐՆՋԻՆԳ ՐԻՐՆԻ (ՇԱՒՇԱՒ ԳՐԻՐՈՒ) ԳՈՐԾԱԿՑԱԼՈՒԹԵՐՆ 34 ԳԻՒՂԵՐԻ ՁՐՆԵՐԶՐՆ ՏԵՂԵՐԱՒՈՐ ԱԳՐՆԻՐԱՆՆԵՐԻ ԸՆԻՐՆԵՐՑՈՒԾԱԿԸ, ՀԱՅԻՐԱՊ ԳՈՐԾԱԿՑԱԼ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵՐՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՂԱՐԱՂՇԼԱՂ ԳԻՒՂՈՒՄ

1	Աւունց Յարութիւն	.
2	Բալասանեան Սահակ	.
3	Բոզունց Աբրահամ	.
4	» Սահակ	.
5	» Ղարա	.
6	Գէւունց Աստուածատուր	.
7	Գեօլունց Նէրսէս	.
8	Դանէլեան Յակոբ	.
9	Եախշունց Ղազար	.
10	Կոսունց Աբրահամ	.
11	» Սարուխան	.
12	Շըղբլանց Մանիա	.
13	Ոսկանեան Միրզա	.
14	Զորանանց Ալէքսան	
15	» Առստամ	.
16	Սարուխանեան Սահակ	.
17	Սահակեան Դանէլ	.
18	» Պետրոս	
19	» Յարութիւն	.
20	Սայունց Բախշի	.
21	Տէր-Գաբրէլեան Ասլան	.
22	Տէր-Թովմասեան Ալէքսան	.
23	Քոանց Բաբա	

ՀԱՐԱՒ ԳԻՒՂՈՒՄ

1	Ալէքսանեան Ուսմուղվար	.
2	» Յարութիւն	.
3	Անդրէասեան Արշակ	.
4	Բաբայեան Գրիգոր	.
5	» Աթա	.

6	Գեւոքեան Անդրէի որդին .	.
7	» » երկրորդ որդին	.
8	Գրիգորեան Ռումբրում .	
9	» Բախշի .	
10	Հայրապետեան Գրիգորի որդին .	
11	Ղահրամանեան Յարութիւն	.
12	Մանգասարեան Համբարձում	.
13	Մէլիքեան Հայրապետ .	.
14	Յակոբեան Սիմոն	.
15	» Բաբա	.
16	Նաւասարդեան Աւագ	.
17	Ստեփանեան Բախշի	.
18	Տօնեանց Ջաւադ	.

ԱԼԻՂՈՒԼԻ ԳԻՒՂՈՒՄ

1	Առստամեան Համբարձում	.
2	Ափիեան Դանէլ	.
3	» Ջիչակ—կինը.	.
4	Բաղդասարեան Ղեւոնդ .	.
5	Գէորգեան Գրիգոր	.
6	Խաչիեան Յարութիւն	.
7	Հայրապետեան Աւետիս	.
8	» Համբարձում	.
9	» Յարութիւն	.
10	» Եթար—կինը	.
11	Յարութիւնեան Միրզա	.
12	Յակոբեան Պետրոս	.
13	» Դաւիթ .	.
14	» Համբարձում	.
15	Պետրոսեան Ջալալ	.
16	Ջաւադեան Նիկողայոս .	.

ՇՕՇԻ ԳԻՒՂՈՒՄ

1	Ալէքսանեան Երեմիա	.
2	Աստուածատրեան Աղալալ	.
3	Աւագեան Դադա .	.

4	Դանէլեան Յարութիւն .	.
5	Էլիազեան Սարգիս	.
6	Ժամհարեան Ներսէս	.
7	Իսահակեան Գրիգոր .	.
8	Հայրապետ (Թաղլարեցի)	.
9	Մանասեան Ալէքսան .	.
10	Միրզաբէկեան Առաքել .	.
11	Յարութիւնեան Կարապետ	.
12	Յովհաննիսեան Աւագ .	.
13	Շահնազարեան Նազեժդա	.
14	Սարգսեան Գրիգոր .	.

ԲԱՂԼՈՒՋԱ ԳԻՒՂՈՒՄ

1	Ալուխանեան Իւան	.
2	Բեագունց Բախշի	.
3	» Թէոս .	.
4	» Բարիշկա—կինը	.
5	» Հէրիքնազ .	.
6	» Խոսրով	.
7	Գալստեան Մովսէս	.
8	Ճաղարեան Ամիրվար .	.
9	Նասիրեան Աւանէս	
10	» Արշակ	.
11	Պողոսեան Առստամ	.
12	Ջամալեան Աւանէս	.
13	» Ջումշուդ	.

ՎԱՐԱԶԱԲՈՅՆ ԳԻՒՂՈՒՄ

1	Արուշանեան Խոսրով	.
2	Աւանէսեան Խաչատուր	.
3	Աւդիեան Սարգիս	.
4	Բաբայեան Պետրոս	.
5	Բալայեան Յակոբ	.
6	Բեագունց Յարութիւն .	.
7	Գասպարեան Կարապետ	.
8	Ղուկասեան Արշակ	.

9	Ղուկասեան Ալէքսան	.
10	Թինասեան Բաջի	.
11	Միրզայեան Ջաւադ	.
12	Պետրոսեան Առաքել	.

ՄԻՐԻՇԱՆԼՈՒ ԳԻՒՂՈՒՄ

1	Ասրիեան Մարիամ	.
2	Դանէլեան Աւանէս	.
3	» Սիրանոյշ—աղջիկը	.
4	Դաւթեան Յովհաննէս .	.
5	Մէժլումեան Բախշի .	.
6	Միրզաբէկեան Միրզաբէկ	.
7	» Անուշ	.
8	Շամխալեան Սիմոն	.
9	Սարգսեան Շուշանիկ	.
10	» Դաւիթ	.
11	» Պարոն	.

ԽԱՆԳԷՆԴ ԱԻԱՆՈՒՄ

1	Գաբրիէլեան Ալէքսան .	.
2	Գրիգորեան Ալէքսան (գօրիսեցի)	.
3	» Մկրտիչ .	.
4	Հայրապետեան Թեան	.
5	Միրզայեան Սաշա-բէկ	.
6	Միքայէլեան Ալէքսան (շօշեցի) .	.
7	Յովհաննիսեան Թամամ	.
8	» Գարեգին	.
9	Օհանեան Բաբկէն . .	.

ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳԻՒՂՈՒՄ

1	Աւանէսեան Մկրտիչ	.
2	Բաղդասարեան Աւանէս	.
3	Գրիգորեան Յովհաննէս	.
4	Կարապետեան Սիմոն	.
5	Մկրտումեան Ալէքսան .	.
6	Յարութիւնեան Շամիր	.
7	Սարգսեան Մովսէս	.

8 Տէր-Իսրայէլեան Զումշուդ .

ՂԱՑԲԱԼԻ ԳԻՒՂՈՒՄ

1 Առստամեան Սարգիս . .
2 Աւանէսեան Յարութիւն .
3 » Աւանէս—որդին .
4 Դանիէլեան Մեսրոբ . .
5 Սարգսեան Մարտիրոս . .
6 » Դանիէլ—որդին .
7 Տէր-Ղուկասեան Մարգարիտ .

ՀԱՐԱՒ ԳԻՒՂՈՒՄ

1 Ալլահվերդեան Բէգլար .
2 Բախշեանց Աւագջան .
3 Գրիգորեան Շիրին .
4 Դանիէլեան Արշակ . .
5 Կարապետեան Համբարձում .
6 Օհանջանեան Թարխան .

ՀԻՒՆՈՏ ԳԻՒՂՈՒՄ

1 Աթարէկեան Բաղդասար .
2 Աւագեան Հայրապետ . .
3 Աստուածատրեան Խոսրով .
4 Բէգլարեան Ալէքսան . .
5 Ներսիսեան Առաքել . .
6 Սարուխանեան Հայրապետ .

ԽՆՁՈՐԵՍՏԱՆ ԳԻՒՂՈՒՄ

1 Աւետիսեան Յակոբջան .
2 Մէլիք-Միրզայեան Արսէն .
3 Տէր-Յակոբեան Գրիգոր .
4 » Միքայէլ .
5 » Մկրտիչ .
6 » Միրզաջան . .

ՓԻՐՋԱՄԱԼ ԳԻՒՂՈՒՄ

1 Առստամեան Շամիր .
2 Դովլաթեան Աստուածատուր .

3 Մարգարեան Անանէ
4 Միրզոյեան Ադամ
5 Սարգսեան Սանակ

ՊՏՐԵՑԻՍ ԳԻՒՂԻՍ

1 Առստամեան Սարգիս
2 Բէգլարեան Աբրահամ
3 Գրիգորեան Գաբրէլ
4 Յարութիւնեան Դանիէլ
5 » Գրիգոր

ԽՐԱՄՈՒՐԹ ԳԻՒՂԻՍ

1 Աղաբաբեան Մկրտիչ
2 » —սրա կինը
3 Առստամեան Բաղդասար
4 Խաչատրեան Գրիգոր
5 Ղահրամանեան Սայր

ԴԱՇՈՒՇԷՆ ԳԻՒՂԻՍ

1 Բախտամեան Տէր-Անդրէաս
2 Հարթամեան Մովսէս
3 Մանուչարեան Պասուսիան
4 Տարտուսեան Խաչատուր

ԱՆԱՊԱ ՉԱՐԵՑԻՆԵՐԻ ԳԻՒՂԻՍ

1 Ալիեան Մատթէոս
2 Դանիելեան Դաւիթ
3 Մանուկեան Սանակ
4 Փիլոսեան Գէորգ-թէմիր

ԴԱՇՏԱՐԵՆՑԻՆԵՐԻ ԳԻՒՂԻՍ

1 Աստուածատրեան Մովսէս
2 » Շիրակ
3 Մաղաքիայեան Հուսան
4 Պողոսեան Մովսէս

ԱԼԻՄԱՄԱՏԵՑԻՆԵՐԻ ԳԻՒՂԻՍ

1 Վասիլեան Հարութիւն

2 Շահրապեան Պօղոս
3 Սարումեան Արիզօն
4 » Արամ որդին

ՔԱՌԱՄՆԷ ԳԻՒՂՈՒՄ

1 Լալայեան Անդրէաս
2 Յարութիւնեան Խաչատուր
3 » Աղաջան—որդին

ԱՐԿԱԹԱԼԻ ԳԻՒՂՈՒՄ

1 Ասրիեան Գրիգոր
2 » Մարտիրոս
3 Գրիգորեան Ալէքսան

ՍՂՆԱԽ ԳԻՒՂՈՒՄ

1 Աւագեան Ներսէս
2 Եսայեան Աղալար
3 Սարգսեան Ներսէս

ՔԵԱԹՈՒԿ ԳԻՒՂՈՒՄ

1 Գրիգորեան Միքայէլ
2 Յարութիւնեան Դաւիթ

ՔԱՐԻՆՏԱԿ ԳԻՒՂՈՒՄ

1 Ասրիեան Նիկողայոս
2 Պետրոսեան Սարգիս

ԿՐԿԺԱՆ ԳԻՒՂՈՒՄ

1 Պողոսեան Ալէքսան
2 Ջհանգիրեան Մովսէս

ՋԱՄԲԼՈՒ ԳԻՒՂՈՒՄ

1 Բղիեան Իսահակ
2 Հայրապետեան Անդրէաս

ԽԱՆԱԾԱԽ ԳԻՒՂՈՒՄ

1 Մկրտչեան Աւանէս
2 Ջեալարեան Ջումշուդ

ԴԱՀՐԱՒ ԳԻՒՂՈՒՄ

1 Բալասանեան Յարութիւն
2 Վէրդիեան Թէոս

ԽԱՆՁԿ ԳԻՒՂՈՒՄ

1 Աւետիսեան Յակոբջան
2 Օհանջանեան Թէւան

ԽԱՆԱԲԱՏ ԳԻՒՂՈՒՄ

1 Մովսէսեան Ջումշուդ
2 Պողոսեան Պետրոս

ԴԱՀՐԱՋ ԳԻՒՂՈՒՄ

1 Գրիգորեան Կարապետ

ՄԷՀԴԻՇԷՆ ԳԻՒՂՈՒՄ

1 Յարութիւնեան Գրիգոր

ՂԱՋԱՆՁԻ ԳԻՒՂՈՒՄ

1 Սայիեանց Պողոս

Մինիէնդի սպանուածների անուանացուցակը ներկայացուած Լ. կառավարութեան՝ գիւղի խահանայի ձեռքով.

1	Ալէքսանեան	Շափաղաթ	35
2	»	Արսենակ — տղան	8
3	»	Արշակ »	6
4	»	Ռուբէն »	4
5	»	Բաջի-Շափաղաթի մայրը	60
6	Աղամեան	Գրիգոր	12
7	»	Խաչատուր — եղբայրը	8
8	»	Համբարձում »	6
9	»	Սառան — քոյրը	4
10	Աղաբէգեան	Գալուստ	6

11	Ասրիեան	Սիմոն	14
12	»	Խանում—քոյրը .	8
13	Արզումանեան	Թէոս .	25
14	Առստամեան	Բօխչի (կին) .	35
15	»	Միքայէլ—տղան	7
16	»	Շախի—աղջիկը	2
17	Բաղդասարեան	Սահակ .	52
18	»	Աննա—կինը .	44
19	»	Մանուշակ—աղջիկը	14
20	Բաղիեան	Մանուշակ	14
21	Բարխուդարեան	Սիմոն	28
22	Բաղդասարեան	Հերիքնազ	25
23	Բաղալեան	Առաքել	25
24	Բալասանեան	Սերգօ	2
25	Բարսեղեան	Հայրապետ	70
26	»	Յովակիմ—թոռը .	7
27	»	Սերգօ »	5
28	»	Աւետիս »	3
29	Բէգլարեան	Գրիգոր . .	55
30	»	Հերիքնազ—կինը .	50
31	»	Մէշի—սրանց աղջիկը .	8
32	»	Մանուշար—Գրիգորի որդին	24
33	»	Նանում—սրա կինը .	22
34	»	Արշակ — տղան	1
35	Բէգլարեան	Աղաջան . .	75
36	»	Մինաս—որդին	48
37	»	Թազա—սրա կինը . .	44
38	»	Մարիամ—սրանց աղջիկը .	8
39	»	Հայկանոյշ » »	2
40	»	Ղևոնդ—տղան. . .	5
41	»	Խոսրով Աղաջանի երկրորդ որդին	40
42	»	Սահրնազ — սրա կինը .	35
43	»	Նիկալայ » տղան .	10
44	»	Մաթէոս » » .	8
45	Բէգլարեան	Բարա .	72

46	»	Խանում—կինը . .	65
47	»	Սիմոն—սրանց որդին .	18
48	»	Ալէքսան » .	32
49	»	Լուսիկ—աղջիկը .	5
50	»	Լևոն—տղան .	3
51	»	Վարդան » » .	1
52	Բուդաղեան	Նիկալայ . .	50
53	»	Գալուստ—տղան .	8
54	Գաբրէլեան	Քալանթար . .	90
55	»	Մարիամ—կինը . .	80
56	»	Միրզա—Քալանթարի մեծ որդին.	65
57	»	Շամիր—սրա տղան . . .	28
58	»	Յակոբջան—Քալանթարի երկ. որդ.	60
59	»	Ղուժաշ—սրա կինը . .	55
60	»	Մանուշակ—սրանց աղջիկը .	8
61	»	Սահրնազ » » . .	6
62	»	Մէլիք » տղան .	4
63	»	Սողոմոն » » . .	2
64	»	Յարութիւն—Քալանթարի երկ. որդ.	45
65	»	Յամբարձում—տղան. .	12
66	»	Վարթի—աղջիկը . .	1
67	»	Շախի—Քալանթարի մի այլ թոռը	14
68	Գէորգեան	Թագուհի . . .	65
69	Գէորգեան	Հասրաթ . .	60
70	»	Գրիգոր—որդին . .	28
71	»	Մարիամ—սրա կինը .	25
72	»	Աննա—սրանց աղջիկը .	6
73	»	Գէորգ » տղան .	1
74	»	Օհանջան—Հասրաթի երկ. որդին	26
75	»	Անգրիաս » երրորդ »	24
76	»	Անդրանիկ—սրա տղան . . .	1
77	»	Սարգիսջան—Հասրաթի եղբայրը	54
78	»	Մինաս—սրա տղան . . .	24
79	»	Կարապետ » » .	8
80	Գրիգորեան	Գալուստ .	1

81	Դաւթեան	Սողոմոն	60
82	Դաւթեան	Դանիէլ	50
83	»	Խաչի—տղան.	20
84	»	Սէրգօ »	12
85	Զիլֆիեան	Շափաղաթ	20
86	»	Հայրապետ—եղբայրը	18
87	Թունեան	Շամամ . .	80
88	»	Բալասան—որդին	50
89	»	Աբգար » .	48
90	»	Գիւլնշան—սրա աղջիկը	6
91	Թուլեան	Ալէքսան	65
92	Կոլեան	Ներսէս	3
93	Հայրիեան	Մանուշակ	63
94	Հայրիեան	Թամամ	40
95	»	Անդրէաս—տղան	1
96	Հայրապետեան	Սարգիսջան .	45
97	»	Տիգրան—տղան	14
98	Հայրապետեան	Յովհաննէս	58
99	»	Ասլի—կինը .	50
100	»	Դաւիթ—սրանց տղան	6
101	»	Գէորգ— » »	4
102	»	Վարդանոյշ—աղջիկը.	2
103	»	Սողոմոն—Յովհաննիսի եղբայրը .	54
104	»	Գիւլլի—սրա կինը . .	45
105	»	Սեդրակ—սրանց տղան	16
106	»	Մարուսեա » աղջիկը	8
107	»	Հայրապետ » տղան .	6
108	»	Պողոս » »	2
109	Ղահրամանեան	Համբարձում	55
110	»	Թամամ—կինը	55
111	»	Մարիամ—աղջիկը .	10
112	»	Շամամ— »	8
113	»	Գիւլ— »	6
114	Ղուկասեան	Մարիամ	
115	Մատիեան	Ալում	45

116	»	Սարնգիլ—քոյրը	40
117	Մանուչարեան	Օլինկա .	1
118	Մեժլումեան	Թագուհի	80
119	»	Վարդի—հարսը . .	52
120	»	Նանում—սրա աղջիկը	8
121	»	Սառան—Վարդի թոռը	1
122	Մինասեան	Նիկալայ . .	13
123	»	Շախի—քոյրը	8
124	»	Պողոս—եղբայրը	6
125	Մկրտչեան	Շախի .	30
126	»	Գրիգոր—տղան	6
127	Յարութիւնեան	Աւանէս	75
128	»	Հայրապետ—որդին .	34
129	»	Շարմաղան—սրա կինը .	30
130	»	Վարդանոյշ—սրանց աղջիկը	8
131	»	Վարդան— » տղան .	6
132	»	Գալուստ— » »	1
133	Յակոբեան	Օսիկ	60
134	Յակոբեան	Գէորգ	70
135	»	Թագուհի—կինը .	60
136	»	Զաքար—սրանց տղան	15
137	»	Բախշի— » »	30
138	»	Համբարձում—սրա »	2
139	»	Նուբար— » աղջիկը	4
140	Յակոբեան	Սարգիս . .	80
141	»	Սիմոն—որդին	36
142	»	Ամիր— » .	40
143	»	Մանուշակ—սրա աղջիկը .	8
144	»	Սառա— » »	6
145	»	Հերիքնազ— » » .	4
146	»	Աստուր » տղան .	2
147	Յարութիւնեան	Գիւլլի	24
148	Յովակիմեան	Սաթենիկ .	11
149	Յովհաննիսեան	Գալուստ	14
150	Յովսէփեան	Մանաս	28

151	Ջաւադեան	Խաչա	35
152	Սարգսեան	Ալէքսան	65
153	»	Թաղա—կինը . .	60
154	»	Համբարձում—Ալէքսանի եղբայրը	60
155	»	Շուշանիկ—թոռը . .	1
156	Սահակեան	Սոֆիա	4
157	»	Սառա—քոյրը	2
158	Սարգսեան	Անդրիաս .	26
159	Սարգսեան	Սոֆիա .	18
160	Սաֆարեան	Յովհաննէս .	25
161	Սիմոնեան	Գրիգոր .	3
162	»	Սեդրակ . .	22
163	Վարդազարեան	Ջաւահիր .	70
164	»	Անուշ—թոռը	4
165	»	Շուքիր .	60
166	»	Մինա . .	60
167	Տէր-Մինասեան	Մինաս քահանայ . .	80
168	»	Համբարձում—թոռը .	22
169	Օհանեան	Հայրապետ .	70
170	»	Սաթենիկ—թոռը .	8
171	»	Ալէքսան— » .	6
172	Օհանեան	Դաւիթ .	75
173	»	Աննա—կինը	65
174	»	Յարութիւն—սրանց որդին	40
175	»	Վարդի—սրա կինը . . .	30
176	»	Սառա—սրանց աղջիկը	6
177	»	Նանումա— » » . .	4
178	»	Վարսենիկ— » » . .	2
170	»	Գրիգոր—Դաւիթ երկրորդ որդին .	32
180	»	Նախշուն—սրա կինը .	30
181	»	Անդրէաս—սրանց տղան .	4
182	»	Մանուշակ— » աղջիկը .	12
183	»	Գիւլնշան— » »	6
184	Օհանջանեան	Առաքէլ .	68
185	»	Նարաթ—կինը .	20

186	»	Մանուշակ—սրանց հարսը	20
187	»	Գաբրիէլ— » թոռը	7
188	»	Պետրոս— » »	5
189	»	Հայկանոյշ— » »	3
190	Օհանեան	Բաղդասար	85
191	»	Օհան—որդին	58
192	»	Վարսենիկ—աղջիկը	16
193	»	Դանա— »	16
194	»	Մասուր—տղան	14
195	»	Ցարութիւն— » .	12
196	»	Շախնանա—Օհանի հարսը .	25
197	»	Խանում—սրա աղջիկը	2

Գանձակի սպանուածների անուանացուցակը նանուած Գանձակի յաջորդարանի տեղեկագրներից

1	Աբրահամեան	Հայկազ	15
2	Ագուլեցեան	Սիմոն	
3	Ազարեան	Սարգիս .	60
4	»	Գրիգոր—որդին .	18
5	Ազարեան	Աւետիս (Փիրեցի) .	50
6	Ազարեան	Բարսեղ . .	50
7	»	Աւետիս—տղան	15
8	Աթտարեան	Իւան .	60
9	Աթայեան	Արտեմ	40
10	Աթայեան	Մելիք	45
11	Աղաջանեան	Մկրտիչ	68
12	Ամիրխանեան	Ղազարոս	35
13	Առաքելեան	Սիմոն . .	67
14	Առուշանեան	Շամիր . . .	
15	Առուշանեան	Գրիգոր (Բանանցեցի) .	
16	Աւագեան	Սարգիս . .	45
17	Աւետիսեան	Առստամ (Հաջիշէնցի)	40
18	Աւետիք	Թիֆլիսեցի . . .	75
19	Ափիեան	Համբարձում (Փիրեցի) .	20

20	Ափիեան	Վարդազար (»)	60
21	Բաղալեան	Արշակ . .	47
22	Բաղդասարեան	Սոկրատ (Արլահեցի)	19
23	Բաղդասարեան	Մաղաբել	
24	Բաբայեան	Լևոն . .	25
25	Բաղրամեան	Յակոբ	27
26	Բալայեան	Աւետիս (Փիրեցի) .	25
27	Բարսամեան	Համբարձում (») .	25
28	Բաբաջանեան	Լևոն . .	14
29	Բէգլարեան	Ղուլի (Բարաջուրցի)	38
30	Բէգնազարեան	Ալէքսանդր . .	57
31	Գազիկեան	Գրիգոր (Խաչակապցի) .	28
32	Գասպարեան	Միքայել (Քարհատցի)	27
33	Գէորգեան	Յարութիւն	57
34	Գէորգեան	Աթանաս	40
35	Դալոյեան	Յակոբ . .	60
36	Դադեան	Սիմոն (Բանանցեցի)	22
37	Դոլմեան	Գրիգոր .	40
38	Զանգեզուրցի	Սարուխան	60
39	»	Խաչատուր—տղան	30
40	Զանգիզարեան	Աթանաս .	40
41	Լահիջանեան	Լահիջան	
42	Խալաթեան	Լևոն	26
43	Խաչումեան	Աւետիս	57
44	Խալաթեան	Սիմոն	
45	»	Լևոն	
46	»	Յովսէփ .	
47	Խաչատուրեան	Մանուէլ . .	55
48	Կարօ	Տաճկաստանցի.	27
49	Կիրակոսեան	Միքայէլ . .	
50	Կոնջորեան	Խաչատուր (Փիրեցի) .	22
51	Հաթամեան	Սարքիս .	57
52	Ջիթաձախեան	Միխակ	48
53	Ղազարչեան	Յակոբ	38
54	Ղազարչեան	Սիմոն	60

55	Ղասարեան	Պետրոս	
56	Ղազարեան	Մինաս	50
57	Ղուլեան	Ղուլի (Բարաջուրցի)	24
58	Մանուէլեան	Սարգիս (Փիրեցի)	50
59	Մալխասեան	Արզուման (Խաչակապցի)	30
60	Մանուշակեան	Ստեփան (Բանանցեցի)	15
61	Մանուշակեան	Ստեփան (Բանանցեցի)	14
62	Մատթէոսեան	Վարդան (»)	70
63	»	Ալէքսան (»)	28
64	Մարկոսեան	Պաւլի	
65	Մարգարեան	Սողոմոն (Սեքարեցի)	
66	Մարգարեան	Սողոմոն (Բագուեցի)	22
67	Մամիկոնեան	Կարապետ (Փիրեցի)	50
68	Մալեան	Համբարձում	
69	Մելքոնեան	Վահան (Բարաջուրցի)	16
70	Մելիքեան	Յովհաննէս (Բանանցեցի)	26
71	Միսկարեան	Սիմոն	72
72	Մինասեան	Մկրտիչ (Ղազախեցի)	
73	Միրզոյեան	Յովհաննէս (Բանանցեցի)	50
74	Մնացականեան	Պատուական	85
75	Մնացականեան	Միքայել (Նորաշէնցի)	50
76	Մնացականեան	Միքայել	55
77	Մուրադեան	Լևոն (Գիւղացի)	33
78	»	Վաղարշակ—եղբայրը	16
79	Մրաւեան	Սէրգէյ	
80	Մրաւեան	Բէգլար	38
81	Յարութիւնեան	Մակի (Բանանցեցի)	62
82	»	Արմենակ—որդին	13
83	»	Արշակ— »	11
84	Յարութիւնեան	Երեմիա	20
85	Յարութիւնեան	Ալէքսան	45
86	Յարութիւնեան	Գերասիմ	
87	Յակոբեան	Աւետիս	16
88	»	Համբարձում—եղբայրը	12
89	Յովհաննիսեան	Թևան	60

90	Յովհաննիսեան	Սարգիս	57
91	Յովհաննիսեան	Աբգար . .	
92	Յովհաննիսեան	Սարգիս (Զովդարեցի) .	
93	Յովհաննիսեան	Մկրտիչ (Ալէքսանդրապոլցի)	25
94	Յովհաննիսեան	Մովսէս . .	52
95	Յովհաննիսեան	Եփրեմ (Միզրիկցի) .	34
96	Յովհաննիսեան	Շամիր	70
97	Յովհաննիսեան	Միքայել . .	62
98	Յովհաննիսեան	Եփրեմ (Բարաջուրցի)	38
99	Յովհաննիսեան	Եփրեմ . .	45
100	Յովհաննիսեան	Սարգիս . .	48
101	Յովսէփեան	Յարութիւն (Զովդարեցի) .	26
102	Նազարեան	Կոստանդին .	18
103	»	Հայկազ—եղբայրը .	10
104	Նադիրեան	Յովհաննէս (Բանանցեցի) .	
105	»	Գրիգոր (») .	
106	Ներսէսեան	Բալասան	18
107	Նիգեան	Մատուր	
108	Նիկողոսեան	Սողոմոն	
109	Շատուրեան	Գրիգոր .	46
110	Շուղուրեան	Կարապետ (Քարահատցի) . .	43
111	Զորանեան	Խաչատուր (Փիրեցի)	33
112	Պապեան	Յարութիւն	
113	Պողոսեան	Սամուէլ (Ոսկանապատցի).	19
114	Պողոսեան	Շամիր . .	45
115	Սահակեան	Կարապետ .	40
116	Սահակեան	Սարգիս .	30
117	Սարդարեան	Գրիգոր . .	78
118	Սարգսեան	Վասիլ (Զովդարեցի)	
119	Սարգսեան	Գալուստ . . .	
120	Սարուխանեան	Մկրտիչ (Աբլաճեցի)	50
121	»	Պետրի—եղբայրը .	24
122	Սարուազեան	Սողոմոն . . .	65
123	Վարդանեան	Պողոս (Սեբաբեցի) . .	
124	Վարդապետեան	Գէորգ . .	26

125	Տէր-Աբրահամեան	Գրիգոր	60
126	Տէր-Եզիազարեան	Եդգար	57
127	Տէր-Իսրայէլեան	Մկրտիչ	40
128	Տէր-Իսրայէլեան	Ալէքսան	40
129	Տէր-Կարապետեան	Ալէքսան	53
130	Տէր-Մակարեան	Յովհաննէս	50
131	Տ.-Մարտիրոսեան	Եսայի	57
132	Տ.-Մարտիրոսեան	Յովհաննէս	65
133	Տ.-Մարտիրոսեան	Աբէթնագով	50
134	Տ.-Մարտիրոսեան	Վասիլ	
135	Տ.-Յարութիւնեան	Բագրատ	
136	Տ.-Յարութիւնեան	Յակոբ	54
137	Փառաջեան	Բէգլար	56
138	Ջամալեան	Արտէմ (Սկքարեցի)	30

Ֆorերի «Լարաեր» կոչուած այգիներում սպանուած հայ մշակների անուանացուցակը

ԲԱՆԱՆՑ ԳԻՒՂԻՑ

1	Բաղեան	Զաքար	26
2	Բաղալեան	Յակովբ	23
3	Ականցեան	Ծատուր	
4	Նազեան	Յովհաննէս	
5	Տէր-Մկրտչեան	Աւետիս	42
6	»	Պօղոս	52
7	»	Յարութիւն	18
8	»	Աւետիս	19

ԳԱՌՆԱԿԵՐ ԳԻՒՂԻՑ

1	Ազաջանեան	Անին	18
2	Դալլաքեան	Յովհաննէս	46
3	»	Վիրապ	37
4	»	Պօղոս	35
5	Տէր-Յարութիւնեան	Ղազար	40
6	»	Ստեփան	38

7	Տէր-Սիմոնեանց	Ծատուր	40
8	Տէր-Եղիազարեանց	Յարութիւն	40

ԿԵՐԱՆՑ ԳԻՒՂԻՑ

1	Ղազարեանց	Բաղալ	23
2	Մանուչարեան	Գէորգ	28
3	Յարութիւնեանց	Աբրահամ	30
4	Յովհաննիսեանց	Սարգիս	27
5	Տէր-Զաքարեանց	Աղէքսանդր	28

ԽԱՉԱԿԱՊ ԳԻՒՂԻՑ

1	Եպիսկոպոսեան	Արսէն	25
2	Վռաչեան	Խաչատուր	

ՁՈՎԴԱՐ ԳԻՒՂԻՑ

1	Իւանեան	Գրիգոր	
2	Վանիան	Խաչատուր	

Բաղաքենդի ոպանուածների սնուանացուցակի միմասը ներկայացրած կառաւարութեանը՝ գիւղի քահանայի ձեռքով

1	Ազրիեան	Ալէքսան	55
2	Ալլահվերդեան	Կարապետ	20
3	Աղաջանեան	Հայկանոյշ-Պետրոսի աղջիկը	3
4	»	Աբգար սրա եղբայրը	1
5	Այվազեան	Ջաւահիր	60
6	Աննայեան	Գրիգոր	47
7	»	Արշակ—տղան	14
8	Աննաեան	Ղազար	23
9	Աւագեան	Առաքել	56
10	»	Ջաւահիր—կինը	47
11	»	Միխակ—սրանց տղան	20
12	»	Վառինկա -աղջիկը	18
13	»	Անինկա— »	16
14	»	Յարութիւն—տղան	14
15	»	Գարասիմ— »	12

16	»	Մարգարիտ—աղջիկը	6
17	»	Յովհաննէս — տղան	4
18	Աւետեան	Ցարութիւն	1
19	Աւագեան	Մարիամ	67
20	Աւագեան	Հուռի	13
21	»	Աւագ-եղբայրը	2
22	Աւալեան	Մարիամ	7
23	Բալակեան	Անայի	65
24	Բալլուեանց	Ալէքսան—Բաղալի տղան	2
25	Բրուտեան	Բաբի .	87
26	Գալստեան	Յակոբ	74
27	Գրիգորեան	Թելլու	6
28	»	Վարսենիկ—քոյրը	22
29	»	Վարդուհի— »	
30	Դաժրչեան	Հերիք . .	67
31	Դալլաքեան	Շարժաղ-Մկրտչի աղջիկը .	4
32	Դեղոնց	Հոռոմսիմ—Յովհաննէսի աղջ.	5
33	Եաւրիեան	Պօղոս .	67
34	Եղիեան	Թագուհի	67
35	Խեչովեան	Խաչլու	98
36	Ծիրաթեան	Դաւիթ .	38
37	»	Ջաւահիր—աղջիկը	2
38	Կալամանեան	Սարգիս . . .	77
39	Ղաւալեան	Հայրապետ—Յովհաննէսի տղ.	4
40	Ղուկասեան	Խաչատուր . . .	24
41	Ճիլոնց	Արսէն . .	12
42	Մէժոնց	Թագուհի—Արսէնի աղջ.	4
43	»	Թամամ » »	1
44	Միրզայեան	Վարդանոյշ-Կարապետի աղջ.	2
45	Միրզայեան	Լիզա-Համբարձումի աղջ. .	1
46	Միքայէլեան	Մելիք—Ցարութիւնի տղան.	4
47	Մինասեան	Մարմար » »	18
48	Մուրադեան	Աւետիս—Ցարութիւնի տղան.	5
49	»	Լևոն . . .	3
50	Ցարութիւնեան	Սարգիս	4

51	Յովսէփեան	Նուբար	77
52	Նիկողոսեան	Սարիբէգ	54
53	»	Թագուհի կինը .	40
54	»	Ղումաշ—սրա աղջիկը .	15
55	»	Սամուէլ.—տղան . .	2
56	»	Հափոյ.—Սարիբէգի եղբ. աղջ.	4
57	»	Սամսոն,—սրա եղբայրը .	2
58	Նիկողոսեան	Շամամ . .	31
59	Շափունց	Արժենակ—Յարութիւնի տղ.	1
60	Շահբազեանց	Սիրանոյշ . .	12
61	Շուշանեան	Յարութիւն	45
62	»	Քսթան	8
63	Զորանեան	Խալլու	26
64	»	Ջհան,—սրա տղան	4
65	Պապեան	Նիկալայ,—Խաչատրի տղ.	4
66	Պետրոսեան	Շաքար-Սարգսի աղջ.	5
67	»	Լևոն—տղան	3
68	Պետրոսեան	Մաղթաղ . .	59
69	Պետրոսեան	Աբգար,—Մկրտչի տղան	2
70	Պետրոսեան	Հերիք . .	90
71	»	Մարգարիտ—Խաչատր. աղջ.	1
72	Սանայեան	Ջաւահիր,—Ասլանի աղջիկը.	1
73	Ստեփանեան	Մովսէս .	91
74	Վարդանեան	Աւէտ . .	45
75	Վերդիեան	Ազիզ (կին) .	80
76	Տէր-Վարդանեան	Հռիփսիմէ .	70
77	Տօնէեան	Բաղալ .	20
78	Տունէեան	Սարգիս	8
79	Փանունց	Սարգիս,—Բաղալի տղան	1
80	Փարոնց	Մակի . .	48

Բաղիշեանդի սպանուածների անուանացուցակի երկրորդ մասը.
Ղազախի գաւառը փախած Բաղիշեանցիների կազմած *)

1	Առաքելեան	Մաթի	42
2	Ասլանեան	Վարդանոյշ	1
3	Արսենեան	Վարսենիկ	8
4	Աւետիսեան	Ջաւահիր	42
5	Բաբայեան	Գալուստ	90
6	Բաբայեան	Գրիգոր	69
7	Բաղալեան	Մարկոս	2
8	Բաղալեան	Աբգար	3
9	Բարսեղեան	Իւան	28
10	Գէորգեան	Անախանում	20
11	Գրիգորեան	Գալուստ	35
12	Գրիգորեան	Բարսեղ	38
13	Գրիգորեան	Ստեփան	48
14	Դաւթեան	Խաչատուր	32
15	Եղիեան	Յարութիւն	40
16	Թանանեան	Ջաւահիր	45
17	Խաչատրեան	Արշալոյս	12
18	»	Աւետ	20
19	Խէչովինց	Այվազ	40
20	Հաթամեան	Վիլիպում	80
21	Հաքիմեան	Պետրոս	26
22	Համբարձումեան	Անուշ	2
23	Համբարձումեան	Սիմոն	3
24	Ղաւազեան	Մուսի	65

*) Երկու ցուցակների մէջ կային կրկնուած անուններ, որոնց թէև դուրս ձգեցինք, բայց հաւանօրէն էլի մնացած լինեն։ Մեր գիւղերում ազգանուն տեղ գործ են անում հօր անունը, որը մեծ շփոթութիւն է առաջ բերում։

25	Ղահրամանեան	Վարսենիկ .	2
26	Ղահրաժանեան	Ֆաթի	18
27	Մարգարեան	Սողոմոն	23
28	Մկրտչեան	Օհան	35
29	Մկրտումեան	Կարապետ	45
30	Յարութիւնեան	Ղազար	60
31	Յարութիւնեան	Օհան	52
32	»	Մարիամ—սրա մայրը	75
33	Յարութիւնեան	Տիգրան .	7
34	Յարութիւնեան	Գիրի .	70
35	»	Մագթաղ—աղջիկը	12
36	Յովհաննիսեան	Բնիշակ .	3
37	Յովհաննիսեան	Բալաբէգ	73
38	Յովհաննիսեան	Վարդան	10
39	»	Աբգար	6
40	»	Վարինկա	4
41	Յովհաննիսեան	Մաթոս	1
42	»	Նանագիլ . .	
43	»	Ահարոն—սրա տղան .	12
44	»	Մարգարիտ,—սրա աղջիկը.	8
45	»	Հռոմսիմ » » .	6
46	Շահրազեան	Բոզիկ	10
47	Պապիկեան	Մայա	80
48	Պետրոսեան	Մաթի	50
49	»	Սրա թոռը	3
50	Պետրոսեան	Առուշան .	35
51	»	Խաչատուր—եղբայր .	18
52	Սարգսեան	Մայա . . .	55
53	»	Անուշ—թոռը	15
54	Սարգսեան	Մայա	55
55	Սարգսեան	Գարեգին	1
56	Սարգսեան	Թէլլու	65
57	Ստեփանեան	Յարութիւն	4
58	»	Վարդանոյշ—քոյրը .	6
59	Վարդազարեան	Խաչատուր . .	45

62	Վարդանեան	Հոռի .	48
63	Վիրաբեան	Պետրոս .	25
64	Տէր-Աբրահամեան	Սողոմոն .	45
65	Օհանեան	Ղևոնդ .	52

Գեսաբեկի սպանուածների անուանացուցակը.

Այս ցուցակը, որ կազմեցին Գանձակում դետաբէկցիները, լրիւ չէ.

1	Ամիրեան	Սարգիս Թիֆլիսեցի .	75
2	Անտոնեան	Լևոն Զարդախլեցի .	17
3	Առաքելեան	Պետրոս » .	45
4	Բաղդասարեան	Բաղդասար Ագուլեցի . .	85
5	»	Գիւլիզար » .	76
6	»	Գասպար » .	45
7	»	Թագուհի » .	35
8	»	Նիկոլա » .	30
9	»	Նինո » .	18
10	Բաղալեան	Սարգիս Գանձակեցի .	72
11	»	Շախի » .	64
12	»	Միքայել » .	23
13	»	Արշակ » .	21
14	»	Վարսենիկ » .	18
15	»	Վաղարշակ » .	6
16	»	Արաժայիս » . .	2
17	Բաղդիեան	Համբարձում Թիֆլիսեցի .	55
18	Բերչեան	Գրիշա Գանձակեցի . .	25
19	Բելախեան	Ալեքսան Թիֆլիզեցի .	70
20	Գրիգորեան	Արսէն Զարդախլեցի .	25
21	Գրիգորեան	Մաղաքել » .	18
22	»	Վաղարշակ » .	14
23	Դանէլեան	Յովսէփ Գանձակեցի .	65
24	»	Խորէն »	7
25	Խաչատրեան	Սոսի Զարդախլեցի	45

26	Հաթամեան	Խաչատուր Բիւրեցի .	32
27	Հաթամեան	Մայա Զարդախլեցի . .	38
28	»	Հաթամ » .	18
29	»	Անուշ »	15
30	Միրզայեան	Հոռոմսիմ »	70
31	»	Պետրոս »	23
32	»	Սէրգի »	17
33	Շահնազարեան	Սիմոն »	70
34	»	Սանիկ »	18
35	Պապիեան	Աւետիս Գանձակեցի	60
36	Պետրոսեան	Աւագ »	65
37	»	Մարգարիտ »	16
38	»	Անահիտ »	12
39	»	Գեղեցիկ »	7
40	Պետրոսեան	Յարութիւն »	32
41	Սարգսեան	Յակոբ Զարդախլեցի	16
42	»	Սաթենիկ »	18
43	»	Մամիկոն »	14
44	»	Լեան »	8
45	Սահակեան	Սայի Ղազախեցի	70
46	»	Վարդանոյշ » .	45
47	»	Սմբատ » .	22
48	»	Մատթէոս » .	17
49	»	Սարգիս » .	6
50	Սահակեան	Գրիգոր » .	46
51	Ստեփանեան	Նախշուն » .	35
52	»	Մամիկոն » .	10
53	Տէր-Ստեփանեան	Սամսոն Դիլիջանցի . .	22

Նախիջեւանի գաւառի սպանուածների անուանացուցակը, ըստ բոլոր գիւղերինը.
Նախիջեւան քաղաքում. Յաջորդաբանի ցուցակով.

1	Ադամեան	Ստեփան	
2	Ադամեան	Կարապետ	60
3	Անդրէասեան	Մամօ	70
4	Աւագեան	Աւագ—տիրացու	45
5	Գասպարեան	Ստեփան	
6	Գէորգեան	Ծաղիկ Զիդամլեցի	?
7	Գիւլգիւլեան	Նիկալայ	45
8	»	Ստեփան—որդին	18
9	Գրիգորեան	Քրիստափոր Օրդուբաղցի	17
10	Գրիգորեան	Պետրոս	35
11	Դաւթեան	Ալէքսան	40
12	Դաւթեան	Յարութիւն	
13	Թովմասեան	Յովակիմ Փարատատցի	
14	Խալաթեան	Մկրտիչ	60
15	»	Յովհաննէս	55
16	»	Տիգրան	19
17	Մերուժի	այգեպան	70
18	Կարապետեան	Ղազար	25
19	Հախվերդեան	Աբրահամ	34
20	Ղարաբաղցի	Յովհաննէսի տղան	
21	Մահտեսի Աստուածատր.	Հղլաթ	
22	Մանուկեան	Մահտեսի Սիրքաս	65
23	Մանուկեան	Մանուկ	30
24	Մարաղացի	մի կին	
25	Մելիք Յարութիւնեան	Մեսրոբ	70
26	Մելիքեան	Կարապետ	52
27	Մելիք-Թանգեան	Յովսէփ	40
28	Մխիթարեան	Մկրտիչ	55
29	Յարութիւնեան	Միքայէլ	
30	Յարութիւնեան	Մեսրոբ	35

31	Յովսէփեան	Հովիկ .	70
32	Յովսէփեան	Կարապետ	50
33	»	Միքայէլ . .	45
34	»	Արմենակ—սրա քրոջ որդին	14
35	Յովհաննէս	այգեպան .	60
36	Յովհաննէսեան	Առաքել	
37	Նազարեան	Նազար	75
38	Շահպազեան	Յովհաննէս . .	75
39	Պետրոսեան	Վարդան Սալմաստեցի	
40	Պոլիբէգեան	Յակոբ . .	58
41	Պողոսեան	Մահտեսի Պողոս .	60
42	Սահակեան	Յակոբ .	50
43	Սարգիս	Ալահի գիւղից	
44	Սիմոնեան	Վարդան	35
45	Սիմոնեան	Մակար	35
46	Սրապեան	Նոյ	45
47	Տ.-Յովսէփեան	Միրզաջան	40
48		Անյայտ	
49		»	
50		»	

Չահրի գիւղում, (Այսուհետեւ մենք ենք ցուցակագրել).

1	Աբէլեան	Պետրոս	45
2	Բաբայեան	Պետրոս	28
3	Բաբայեան	Հայրապետ	35
4	»	Նանասի—կինը	25
5	Բաբայեան	Խաչատուր .	60
6	»	Կոմո—հարսը .	25
7	»	Արա—սրա տղան	1
8	Բաղալեան	Թամար . . .	65
9	»	Ջաքար—եղբայրը	60
10	Գալստեան	Յովհաննէս .	40
11	Գասպարեան	Սարգիս .	35
12	Գէրոգեան	Թարվերդի	65
13	Եղգարեան	Սահակ	50

14	Եղիազն	Ղազար	70
15	Երամեան	Աղաջան	25
16	Զաքարեան	Մաթոս	35
17	Զնապերդցի	տղամարդ	
18	»	դարձեալ	
19	»	դարձեալ	
20	Թադէոսեան	Արգար	45
21	Խաչատրեան	Առաքել	50
22	»	Միսակ—տղան	18
23	»	—աղջիկը .	8
24	»	»	6
25	Մաղաթեան	Դաւիթ	60
26	»	Կարապետ—տղան	25
27	Մարգարեան	Յարութիւն	45
28	Մահտեսի-Մարգարեան	Աննա . . .	70
29	»	Խաչան—մեծ տղան	50
30	»	Զաքար—երկր. » .	45
31	»	Երանոս—Խաչանի տղան	25
32	Միրզայեան	Միքայէլ	100
33	Մկրտչեան	Գրիգոր	35
34	Մուրադեան	Սիմոն	70
35	Յովհաննէսեան	Մարգար	45
36	»	Վարսենիկ—հարսը .	20
37	Յակոբեան	Առաքել . .	35
38	Յարութիւնեան	Ստեփան .	35
39	Յովհաննէսեան	Մկտիչ .	50
40	Յովհաննէսեան	Բահաթ (կին)	70
41	Պարսկաստանցի	սզգականը	
42	»	դարձեալ	
43	Պետրոս	գաղթական	
44	Զոլոյեան	Մկտիչ .	55
45	Սիմոնեան	Ուստիան	35
46	Սողոմոնեան	Հայրիկ	25
47	Ստեփանեան	Սարգիս	28
48	Տէր-Գէորգեան	Կարապետ . .	60

49	Տէր-Առաքելեան	Զաքօ	60
50	»	Միսակ	25
51	Քոչոյեան	Սարգիս	60

ԹՄԲՈՒԼ ԴԻՒՂՈՒՄ.

1	Ազիզեան	Զաքար	
2	Այվազեան	Աւետիս	
3	Ասլանեան	Մկրտիչ	
4	Զաքարեան	Իսրայէլ	
5	»	Ալմաստ	
6	Թաթոսեան	Գիւլէ	
7	Խաչատրեան	Աբրահամ	.
8	Խալաթեան	Մկրտիչ	.
9	Մխիթարեան	Յովհաննէս	
10	Մաթոսեան	Գիւլլի	.
11	Մուսայեան	Յովսէփ	.
12	Հասրաթեան	Յարութիւն	.
13	Յովհաննէսեան	Ռոստոմ	
14	Պէտրոսեան	Դանէլ	
15	»	Սահակ .	.
16	»	Կատիա—սրա կինը	.
17	Տաճկահայ	Բայբուրեցի .	
18	Ֆուրգունչի	Երևանի գաւառից	.
19	»	Դարձեալ	.

ՆՈՐՍ-ՄԱԶՐԱ ԳԻՒՂՈՒՄ.

1	Գէորգեան	Դաւիթ	.	30
2	»	Միքայէլ—տղան	.	2
3	Իսրայէլեան	Ասատուր	.	36
4	Խաչիկեան	Հոռոմ	.	50
5	Խաչատրեան	Սօնա .	.	50
6	»	Ռուբէն—տղան	.	15
7	Հախվերդեան	Հոռոմ	.	40
8	Մարտիրոսեան	Խաչատուր	.	40
9	Մարգարեան	Մանուկ	.	47

10	»	Նիկողոս—տղան .	25
11	Յարութիւնեան	Նահապետ	35
12	Յարութիւնեան	Նաղլու	90
13	Յովհաննիսեան	Հաժբաբձում	40
14	»	Ոսկան—եղբայրը	35
15	Յովսէփեան	Աւագ .	40
16	Ներսէսեան	Ստեփան	50
17	»	Մելիտոն—տղան	30
18	Սարգսեան	Ստեփան .	
19	Վարդանեան	Հայրապետ .	17

ՆՈՐՍ ԳԻՒՂՈՒՄ

1	Ալէքսանեան	Մկտիչ	70
2	Գալստեան	Ներսէս	45
3	Թոթոյեան	Առաքէլի—ինը	25
4	Թորոսեան	Յակոբ .	35
5	«	Սրա—տղան	1
6	Նոդոյեանի	Երեխան	1
7	Յովհաննէսեան	Նիկողոս	45
8	Պետրոսեան	Կարապետ .	55
9	Պօղոսեանների	պառաւը .	80
10	»	սրա—թոռները տղա .	6
11	»	» » .	5
12	»	» աղջիկ	4
13	»	» »	2
14	»	» »	1
15	Սիրունեան	Մկրտչի տղան	16

ԱՂԱՀԻ ԳԻՒՂՈՒՄ.

1	Արզումանեան	Հայրիկ	25
2	Գասպարեան	Կարապետ	65
3	Մարտիրոսեան	Արամ	40
4	Մանասերեան	Աւետիս	40
5	Մելքոնեան	Կարապետ	55
6	Մելքոնեան	Յարութիւն	65

7	Մինասեան	Սամուել	25
8	Վարդանեան	Խաչատուր	27

ԱՌԻՆՋ ԳԻՒՂՈՒՄ.

1	Բաղդասարեան	Սարգիս	2
2	Ենգոյեան	Նուբար	60
3	Թարվերդեան	Յակոբի կինը	45
4	Խուդավերդեան	Աբրահամ	40
5	Թարվերդեան	Վարդան	50
6	Յակոբեան Թարվերդեան	Մակար	35
7	Ոհբաղեան	Մխիթար	50
8	Սարգսեան	Նիկողոս	21

ՅԱՋԻՎԱՐ ԳԻՒՂՈՒՄ.

1	Թորոսեան	Թադէոս	25
2	Պետրոսեան	Վարդան	50
3	Պօղոսեան	Ստեփան	25
4	Վարդանեան	Խաչատուր	6
5	Տէր-Յովհաննէս	գիւղի քահանան	70

ԳԺԱՁՈՐ ԳԻՒՂՈՒՄ

1	Ալլահվերդեան	Եթար	60
2	Գրիգորեան	Մնացական	30
3	Մաթէոսեան	Աւագի կինը	35
4	Սարգսեան	Սարդար	40

ՂԱՐԱԲԱԲԱ ԳԻՒՂՈՒՄ.

1	Մարտիրոսեան	Աւագ	45
2	»	Դաւիթ	50
3	»	Յովակիմ	1